

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԿԱՆԴԻԵՍ
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

3

2018

ՀՀ ԳԽՄՆԻՔ ՅՆԱՆՏԵՐԻ ԵՎ ԳՆԶՐԻ ԿԵՆՏՐՈՆ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ՊԱՏՄԱԲՆԱՍԻՐԱԿԱՆ
ՀԱՆԴԵՍ
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2018, 3 (209)

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Գ լ խ ա Վ ը ր խ մ ք ա գ ի ր ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱԶԱՐՅԱՆ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ն ր հ ն ի ր ղ

ՄԵԼԿՈՆՅԱՆ ԱՇՈՏ (Եսախագահ), ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ,
ԴՈՒՆԻԽԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ, ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱԶԵ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԼԱՎՐԵՆՏԻ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ

Г л а в н ы й р е д а к т о р АНУШАВАН ЗАКАРЯН

Р е д а к ц и о н н а я к о л л е г и я

МЕЛКОНЯН АШОТ (председатель), АБРАМЯН ЛЕВОН, АВETИСЯН ПАВЕЛ, АСРАТЯН
МУРАД, ДОЛУХАНИЯН АЭЛИТА, ИОАННИСЯН ГЕНРИК, МУРАДЯН САМВЕЛ,
ОВАКИМЯН ВАЧЕ, ОВАНЕСЯН ЛАВРЕНТИЙ, САФРАСТЯН РУБЕН

© Պատմարանագիտական հանդես, 2018
Историко-филологический журнал, 2018

Հասցավումը՝ ՊԲՀ
Аббревиатура — ИФЖ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 75-ԱՄՅԱԿԻՆ
ՆԿԻՐՎԱԾ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հոկտեմբերի 17-ին մեկնարկեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակին նվիրված հորելյանական միջոցառումները:

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կայացավ հանդիսավոր նիստ: Նիստի ժամանակ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային շնորհավորեցին Բելառուսի, Մոլդովայի, Ղրղզստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Տաջիկիստանի, Սլովենիայի, Չեխիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի, Ուկրաինայի պատվիրակությունների ղեկավարները, Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) փոխնախագահ Գրեհամ Քեյլը, ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ Ազիբայ Սմագուլովը, Եվրոպական ակադեմիայի փոխնախագահ Օլե Պետերսոնը:

«Պատահական չէ, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային շնորհավորելու են եկել գիտնականներ տարբեր երկրներից՝ ԱՊՀ երկրներից, Բալթյան երկրներից, Եվրամիությունից: Դա խոսում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի միջազգային ճանաչման մասին:

Ամբողջ աշխարհը գիտի, թե որքան ուժեղ է Հայաստանի գիտությունների ակադեմիան: Եղել է ուժեղ և հիմա էլ է ուժեղ: Այն ակադեմիայի ոչ միայն կառուցվածքի պահպանման լավ օրինակ է, այլև՝ գիտության և մշակույթի էլիտար հանրության պահպանման օրինակ...», – այսպիսի գնահատական տվեցին ՀՀ ԳԱԱ-ին հյուրերը:

ՀՀ ԳԱԱ 75-ամյակի առթիվ, գիտական նվաճումների և գիտության զարգացման համար ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն արժանացավ Մոլդովայի և Ուկրաինայի գիտությունների ակադեմիաների ոսկե մեդալների, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանն արժանացավ Բելառուսի գիտությունների ակադեմիայի ոսկե մեդալի:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Սլովենիայի գիտությունների և արվեստի ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Տադեյ Բայդը ստորագրեցին համագործակցության համաձայնագիր:

Մեծ հետաքրքրություն առաջացրեց ՀՀ ԳԱԱ 75-ամյակին նվիրված ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական կազմակերպությունների նվաճումները, գիտական հետազոտությունների կիրառական նշանակության արդյունքները և ՀՀ

ԳԱԱ-ի ինովացիոն պոտենցիալը արտացոլող գիտատեխնիկական նախանմուշները:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ստեղծվել է 1943 թ. նոյեմբերին՝ որպես Հայաստանի բարձրագույն գիտական հաստատություն, որը կոչված է՝ միավորելու գիտնականների ջանքերը հիմնարար հետազոտություններ իրականացնելու, հայ ժողովրդի հարուստ հոգևոր ժառանգությունը երևան հանելու և վերախմաստավորելու, տնտեսական, սոցիալական և մշակութային հիմնախնդիրների տեսական և գործնական լուծման և երկրի ազգային անվտանգության ապահովմանն ուղղված աշխատանքների կատարման համար:

ՀՀ ՎԱՐՁԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է
ԳԱԱ 75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

Վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 18-ին մասնակցել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջոցառմանը, որին ներկա էին ԳԱԱ 75-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում Հայաստան ժամանած ավելի քան մեկ տասնյակ երկրների գիտությունների ակադեմիաների նախագահներ, միջազգային գիտական կառույցների ղեկավարներ:

Շնորհավորելով ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-րդ տարեդարձի առթիվ՝ վարչապետի պաշտոնակատարը նշել է. «Այսօր մեր պարտքն է հարգանքի և երախտիքի մեծ զգացումով հիշել նրանց, ովքեր հեռավոր 1943 թ. հիմնեցին այս հաստատությունը: Պատերազմի ծանր տարիներին իրականացնել նման ձեռնարկ նշանակում էր ոչ միայն անվերապահորեն հավատալ հաղթանակին և խաղաղության հաստատմանը, այլև անվերապահորեն հավատալ Հայաստանին, նրա ժողովրդին, մեր գիտության մեծ ներուժին ու ապագային: Սա սխրանք էր, որ գործել են հայ գիտության մեծ երախտավորները, և մենք շնորհակալ ենք նրանց այս հարուստ ժառանգության համար»:

Նիկոլ Փաշինյանն ընդգծել է, որ ԽՍՀՄ տարիներին ՀՀ ԳԱԱ-ն նաև ազգային ինքնություն և ինքնագիտակցության կարևոր մաս էր. «Բոլորը գիտեք, որ Խորհրդային Միությունում ազգային ինքնությունը շատ մեծ տեղ չէր տրվում, և ավելի շատ ընդունված էր ընդգծել ինտերնացիոնալիզմի տրամաբանությունը: Այս առումով մեր ԳԱԱ-ն ազգային ինքնություն և ինքնագիտակցության, ազգային հպարտության կարևոր ինստիտուտ էր: Սովետական Հայաստանը ԽՍՀՄ-ում ուներ այնպիսի տեխնոլոգիական և գիտական ղերակատարում, ինչպիսին ժամանակակից աշխարհում ունի Սիլիկոնային հովիտը: Այս իրավիճակը ստեղծված էր նաև ԳԱԱ համակարգի գործունեության շնորհիվ»:

Վարչապետի պաշտոնակատարի խոսքով՝ ԽՍՀՄ փլուզումից հետո մեծ ջանքեր գործադրվեցին, որպեսզի Հայաստանի ԳԱԱ համակարգը հարմարվի նոր իրողություններին և արդյունավետ գործելու հնարավորություն ստանա, բայց անցումային շրջանի բարդությունները հնարավորություն չտվեցին, որպեսզի Հայաստանի տնտեսությունը, նաև սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով, կարողանա շարունակել այն դերակատարումը, որն ուներ Խորհրդային Միության տարիներին: «Ես այս ամենը հիշում և ընդգծում եմ ոչ միայն ուղղակի որպես հուշ, այլ ուզում եմ սրանով ընդգծել այն ծրագրերը, այն ամբիցիան, որ ունի ՀՀ կառավարությունը, որը ձևավորվել է ոչ բռնի, թավշյա ժողովրդական հեղափոխության արդյունքում. մենք ուզում ենք Հայաստանը դարձնել նույնպիսի տեխնոլոգիական առաջատար երկիր, ինչպիսին նա էր ԽՍՀՄ տարիներին և պայմաններում: Դրա համար մենք ունենք ամենակարևորը՝ մարդկային ներուժը. մարդիկ, ովքեր իրենց մեջ կրում են այդ գիտելիքը, կարող են փոխանցել այն և, կարևորը, ավանդույթներ, որոնք կապված են ԳԱԱ գործունեության հետ: Մեծ հույս ունենք, որ Հայաստանի գիտությունը, կառավարությունը և հանրությունն այս հարցի շուրջ յուրօրինակ կոնսենսուս են ձևավորելու և ՀՀ-ում նոր տեխնոլոգիական առաջընթաց, նոր տեխնոլոգիական հեղափոխություն իրականացնելու հնարավորություն կստեղծեն», - իր ելույթում ընդգծել է կառավարության ղեկավարի պաշտոնակատարը՝ հավելելով, որ քաղաքական վերջին փոփոխությունների արդյունքում Հայաստանում գիտական, տեխնոլոգիական, ինտելեկտուալ գործունեության համար նոր հեռանկարներ են բացվում: «Հայաստանը պետք է լինի ինտելեկտուալ, զարգացած, տեխնոլոգիական երկիր, որովհետև մենք հավատում ենք, որ բացարձակապես բոլոր խնդիրների լուծման ամենակարևոր գործիքը մարդկային միտքն է, որն անսահման է: Դա նշանակում է, որ մեզնից յուրաքանչյուրի, յուրաքանչյուր պետություն, յուրաքանչյուր ոլորտի առջև բացված են անսահման հնարավորություններ, և հույս ունենք, որ կկարողանանք օգտագործել այդ անսահման հնարավորությունները», - շեշտել է Նիկոլ Փաշինյանը:

Իր գնահատանքը հղելով բոլոր գիտնականներին, ովքեր ստեղծել են Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան, աշխատել են այնտեղ և իրենց աշխատանքով կարողացել են բարձրացնել կառույցի հեղինակությունը՝ Նիկոլ Փաշինյանը վստահություն է հայտնել, որ հայ գիտնականները մեր ժողովրդին հպարտանալու նորանոր առիթներ կտան: Վարչապետի պաշտոնակատարը նաև շնորհակալություն է հայտնել արտերկրից ժամանած գիտնականներին՝ ԳԱԱ 75-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու և միջազգային համագործակցության ամենաարդյունավետ օրինակներից մեկը ցույց տալու համար:

Հանդիպմանը մասնակից երկրների և միջազգային գիտական կառույցների ղեկավարները շնորհակալություն են հայտնել Նիկոլ

Փաշինյանին հանդիպման համար և բարձր գնահատել Հայաստանում գիտություն ոլորտի նկատմամբ ցուցաբերվող պետական հոգածությունը: Նրանք ողջունել են ՀՀ վարչապետի պաշտոնակատարի հնչեցրած ուղենիշները գիտության զարգացման, ՀՀ-ն առաջատար տեխնոլոգիական երկիր դարձնելու գործում և արդյունավետ գնահատել ԳԱԱ հետ համագործակցությունը:

Նիկոլ Փաշինյանը նաև շրջայց է կատարել ՀՀ ԳԱԱ 75-ամյակին նվիրված ցուցահանդեսի տաղավարներով, ծանոթացել ակադեմիայի գիտահետազոտական կազմակերպությունների ձեռքբերումներին, գիտական հետազոտությունների կիրառական նշանակության արդյունքներին և նորարարական ներուժն արտացոլող գիտատեխնիկական նախանմուշներին:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Զեկոն-ՅՈՒՄԸ*

Հայաստանի Հանրապետության Մեծարգո Նախագահ

Վեհափառ Տեր

Հարգելի հյուրեր

Սիրելի հայրենակիցներ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյա հոբելյանական միջոցառումներին մասնակցում են՝ Զինաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Վրաստանի, Մոլդովայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Չեխիայի, էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի ակադեմիաների պատվիրակությունները, ինչպես նաև եվրոպական միջազգային ակադեմիական կառույցների ղեկավարները: Հոբելյանական միջոցառումներին մասնակցում են նաև ԳԱԱ-ի արտասահմանյան անդամներ:

Հայաստանի Հանրապետության գիտական հանրությունը տոնում է գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյա հոբելյանը:

75-տարիների ընթացքում հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնը դժվարին և բովանդակաչափ ուղի է անցել, մեծ գիտական նվաճումներ ձեռք բերել, արժանացել համաշխարհային ճանաչման:

Հայաստանում Սովետական կարգերի առաջին տարիներին հիմնականում Երևանում հիմնվում են գիտական տարբեր կառույցներ, սակայն անհրաժեշտ բարձր գիտական մակարդակով հետազոտություններ մինչև 1930 թվականը կատարվում էր Երևանի պետական համալսարանում, հայագիտության տարբեր բնագավառներում: 1935 թվականին Երևանում բացվեց ԽՍՀՄ գիտությունների ակադե-

* Զեկուցում՝ 2018 թ. հոկտեմբերի 18-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ ՀՀ ԳԱԱ 75-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

միայն հայկական մասնաճյուղը (Արմֆան), որը ղեկավարում էր անվանի երկրաբան ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսսինգը:

1943 թվականի նոյեմբերին, երբ շարունակվում էր Հայրենական մեծ պատերազմը, ՀԽՍՀ կառավարության որոշմամբ հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Նորաստեղծ գիտությունների ակադեմիայի նախագահ է ընտրվում հանրահայտ արևելագետ ակադեմիկոս Հ. Օրբելին: Ակադեմիայի հիմնադիր կազմում ընդգրկվեց գիտության տարբեր բնագավառների 23 անվանի գիտնական: Հ. Օրբելին միաժամանակ աշխարհասօրհան թանգարան էր-միտաժի տնօրենն էր և 1947 թ. վերադարձավ Պետերբուրգ:

Ակադեմիայի պրեզիդենտ (նախագահ) ընտրվեց երիտասարդ համաշխարհային ճանաչման արժանացած, կազմակերպչական փայլուն ունակությունների տեր Վիկտոր Համբարձումյանը: Այս ընտրությունը Հայաստանի համար ունեցավ շատ կարևոր նշանակություն գիտության հետագա զարգացման համար:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի 46-ամյա ղեկավարման ժամանակահատվածում Հայաստանի գիտությունների ակադեմիան կայացավ, ունեցավ ծանրակշիռ ձեռքբերումներ, առաջատար դեր ստանձնեց Խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների շարքում, ճանաչելի դարձավ արտասահմանում:

2009 թվականին սահմանվեց Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ, որը յուրաքանչյուր երկու տարին մեկ շնորհվում է աստղաֆիզիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում գիտական խոշոր ձեռքբերումներ ունեցած ականավոր գիտնականներին: Մրցանակաբաշխության նպատակն է հավերժացնել Վ. Համբարձումյանի հիշատակը, աշխարհին ներկայացնել Հայաստանի գիտությունը և նպաստել նշված գիտական ուղղությունների զարգացմանը:

1993 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ է ընտրվում ճանաչված պետական գործիչ, գիտության և գիտական արտադրության անվանի կազմակերպիչ Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: Նախագահի պաշտոնը նա ստանձնեց բարդ` Հայաստանի երրորդ հանրապետության կազմավորման դժվարին ժամանակաշրջանում: 1991 թ. Խորհրդային Միության փլուզումը, ծայրահեղ ծանր իրավիճակ ստեղծեց ինչպես տնտեսության, այնպես էլ գիտության ու մշակույթի բնագավառներում: Սկսվեց տնտեսության անկումը, խզվեցին միջպետական սերտ կապերը, դադարեց ԽՍՀՄ հանրապետությունների ակադեմիաների համագործակցությունը: Համընդհանուր քաոսի պայմաններում առավել խառնակ ու օրհասական էր իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում` դարաբաղյան պատերազմի, շրջափակման, ավերիչ երկրաշարժի պատճառով:

Տնտեսական վերափոխումներին զուգահեռ հույժ կարևոր էր հոգածությունը գիտության հանդեպ` պահպանել գիտական հիմնա-

կան ուղղութիւնները, գիտական ներուժը, նախկին գիտական կապերն ու համագործակցութիւնը:

2006 թ. ՀՀ ԳԱԱ նախագահ ընտրվեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:

Գիտութիւնների ակադեմիայի առաջ ծառայել էին ղեկավարութիւնում ձեռք բերված հաջողութիւններն ամրապնդելու, խորացնելու, գիտութիւնը զարգացման արդի մարտահրավերների ոգով ձեռնարկումներ կատարելու հիմնահարցերը: Նշված ղեկավարին ու բարդ խնդիրների լուծումը պահանջում էր գիտութիւնը բնագավառում իրականացնել բազմակողմանի վերափոխումներ, որոնք կնպաստեին գիտութիւնը զարգացմանը:

Արդյո՞ք բարեփոխումների իրականացումը գիտութիւնը առաջընթացին նպաստող անհրաժեշտութիւն էր, թե երկրում ընթացող բարեփոխումների շարքի միջոցառում: Այդ պատճառով անդրադառնանք գիտութիւնը ոլորտում առկա օբյեկտիվ իրողութիւններին:

– ԽՍՀՄ կազմում տասնամյակների ընթացքում ԳԱԱ-ն եղել է վիթխարի հզոր գիտական համակարգի մի մասը, ինչով էլ պայմանավորված էր գիտական ու գիտատեխնիկական մեծաքանակ կազմակերպութիւնների առկայութիւնը երկրում:

– Անկախութիւնը տարիներին գիտութիւնը անընդհատ թերֆինանսավորումը բացասաբար է ազդել նրա վերելքի վրա: Մասնագիտական ուսումնասիրութիւնները ցույց են տվել, որ եթե գիտութիւնը ֆինանսավորման չափը փոքր է ՀՆԱ-ի 1%-ից, ապա տվյալ երկրի գիտութիւնը չի կարող դրական ազդեցութիւն ունենալ նրա տնտեսութիւնը զարգացման վրա, իսկ ինքը՝ գիտութիւնը, աստիճանաբար կմահանա:

– Կադրերի թվաքանակը էական ու կտրուկ կրճատվեց: Եթե մինչև 1990 թ. հունվարի 1-ի դրութիւնում ԳԱԱ համակարգում աշխատում էր 7500 մարդ, ապա առ 01.01.2018 թ. այն կիսով չափ նվազեց՝ 3750:

– Գիտական ինֆրակառուցվածքը ֆիզիկապես և բարոյապես մաշվել էր: Անկախութիւնը շրջանում համակարգի կառուցները հնարավորութիւն չեն ունեցել ժամանակակից սարքավորումներ ձեռք բերել: Հասարակութիւնը մեջ գիտական աշխատանքը և գիտաշխատողը ծայրահեղ ցածր վարկանիշ ունեին:

– Կառավարման համակարգն անհրաժեշտ էր դեմոկրատացնել՝ ղեկավար մարմինների ընտրութիւններին մասնակից դարձնելով նաև գիտաշխատողներին: Ընդհանուր առմամբ, գիտութիւնը հանդիպել է մեծ ղեկավարութիւնների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ էին վերափոխումներ՝ ոչ թե նոր ղեկավարութիւններ հարուցող, այլ նրա զարգացմանը նպաստող: Համակարգի գիտաշխատողները, այնուամենայնիվ, անկախութիւնը տարիներին, գիտութիւնը տարբեր բնագավառներում ունեցել են լուրջ գիտական արդյունքներ, որոնք ճանաչվել են համաշխարհային գիտական հանրութիւնը կողմից:

2006 թ. սկսված բարեփոխումների առաջին փուլը պետք է նպաստեր գիտությունների զարգացմանը: Անհրաժեշտ էր ունեցած մարդկային, նյութական և մնացյալ ռեսուրսները կենտրոնացնել գիտական այն ուղղությունների շուրջը, որոնք ունենին ավանդույթներ, ապահովված էին կադրերով և ուրվագծված էին մոտ ապագայում կատարվելիք աշխատանքները: Այս առումով կարևորվում էր գիտությունների գերակա ուղղությունների հաստատումը, որոնք պետք է դառնային պարտադիր բոլոր գիտատեխնիկական կառույցների համար: Միաժամանակ, կարևորագույն ուղղությունների ընտրության հարցում, ինչպես, օրինակ, հայագիտության դեպքում, անհրաժեշտ էր հաշվի առնել Հայաստանի Հանրապետությանը վերապահված դերակատարումը՝ որպես աշխարհում գիտություն այդ ուղղության լիարժեք զարգացման եզակի ու հիմնական օջախի:

Բարեփոխումների կարևոր մասը համակարգի օպտիմալացումն էր, որի նպատակը մանր, ոչ արդյունավետ գործող փոքր ստորաբաժանումներից ազատվելն է, որոնք ժամանակին ստեղծվել էին ոչ թե գիտական անհրաժեշտությունից, այլ բնույթի հիմնավորումներով: Արդյունքում, նախկինում առանձին-առանձին գործող 18 գիտական կազմակերպությունների հենքի վրա կազմակերպվեցին երեք գիտական կենտրոն և երեք ինստիտուտ ընդլայնված ուղղություններով:

Հասարակության զարգացման գործընթացում գիտության, որպես առաջընթացի հիմնական գործոնի դերը բարձրացնելու նպատակով պետք է վերանայվեն գիտական կազմակերպությունների, պետություն և հասարակության փոխհարաբերությունները: Անկախության տարիների ընթացքում ոչ միայն գիտության վարկի խիստ անկում է նկատվում, այլև հանրային գիտակցության մեջ համառոտ են ներդրվում է այն տեսակետը, թե Հայաստանում գիտական հետազոտությունները արդյունավետ են, չափից անց մեծ են, որ պետությունն իզոտու է չէ պահել և զարգացնել այն:

ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների իրավական կարգավիճակը, նորարարական ու գիտական արդյունքների առևտրայնացման հետ կապված արդիական պահանջների իրականացումը հակասության մեջ էին հայտնվել ավելի ուշ ընդունված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների, ինչպես նաև այլ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ:

Գիտության ոլորտի առջև ծառայած առաջնահերթ խնդիրներից է գիտական կադրերի երիտասարդացման հարցը: Չնայած պետական տարբեր մակարդակներում ընդունված որոշումներին ու ծրագրերին՝ երիտասարդ կադրերի համար գիտությունը այնուամենայնիվ, մնում է պակաս գրավիչ, շարունակվում է երիտասարդ կադրերի արտահոսքը գիտությունից այլ ոլորտներ, նաև արտերկիր: ԳԱԱ բաժանմունքների և ինստիտուտների գործունեության հիմնական ուղղություններից մեկը երիտասարդ կադրերով հետազոտական աշխատանքների ապահովվածությունն է: Վերականգնվել է ԳԱԱ երի-

տասարդ մասնագետների խորհուրդը, որն ակտիվ գործունեություն է զարգացնում և ներդրում է օգտակար գիտնականների մասնակցությունում անց են կացվում բազմաթիվ գիտաժողովներ, հանդիպումներ, այլ միջոցառումներ և՛ Հայաստանում, և՛ արտերկրում: Լուծվել է երիտասարդ գիտնականների որոշ սոցիալական պրոբլեմներ: Մասնակիորեն լուծվել է երիտասարդների բնակարանային հարցը: Վերջերս նրանց համար շահագործման է հանձնվել 200 բնակարան բնակելի շենքեր: Տարաբնույթ միջոցառումների շնորհիվ աճել է երիտասարդ կադրերի թիվը հետազոտական աշխատանքներում, այժմ այն կազմում է ընդհանուր թվի 25–30%-ը:

Համակարգի հիմնական կադրային պոտենցիալը ձևավորվում է բուհերի և ԳԱԱ-ի ուսումնագիտական կենտրոնի շրջանավարտների հաշվին: Ակադեմիան, որպես շահագրգիռ կողմ, ակտիվ համագործակցում է հանրապետության առաջատար բուհերի հետ: Կատարվում են համատեղ գիտական հետազոտություններ, որոնք իրականացվում են համատեղ ստեղծված գիտական և ուսումնական կառույցների օգնությամբ:

Գիտության և կրթության ինտեգրման ոլորտում նոր ենթակառուցվածքների ձևավորումը դարձել է անհրաժեշտություն՝ կապված տնտեսական համակարգի ձևավորման, գիտության և տեխնիկայի բնագավառում պետության դերի բարձրացման և բարձրագույն կրթության վերակառուցման հետ:

Վերջին տարիներին էապես բարելավվել է միջազգային գիտակրթական կենտրոնի գործունեությունը: Կենտրոնը, որպես կրթական հաստատություն, բարձր վարկանիշ ունի ոչ միայն հանրապետությունում, այլև ողջ տարածաշրջանում, որտեղ ուսանել են ցանկանում դիմորդներ տարածաշրջանի երկրներից: Կենտրոնը ուսուցումը իրականացնում է ասպիրանտական և մագիստրոսական ծրագրերով: Մագիստրոսական ուսուցումն իրականացվում է համապատասխան մասնագիտությունում հետազոտական ինստիտուտներում, որը ապահովում է ուսուցման գիտական բազմազանությունը: Կենտրոնի՝ թեմատիկ և բազային ֆինանսավորմամբ գիտական հետազոտությունների արդյունքները տպագրվում են հեղինակավոր միջազգային ամսագրերում: Այն իր ուսումնական և գիտական ծրագրերով կարող է դառնալ հետազոտական համալսարան:

ՀՀ ԳԱԱ միջազգային գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու ակադեմիայի գիտնականների առավել ակտիվ մասնակցությունը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: Վերջին տարիների ընթացքում մեծապես ակտիվացել է ակադեմիայի միջազգային համագործակցությունը: Նոր պայմանագրեր են ստորագրվել Ռուսաստանի Դաշնության, Լիտվայի, Ռումինիայի, Չինաստանի Հասարակական գիտությունների, Հնդկաստանի գիտությունների ակադեմիաների հետ: Երկարատև համագործակցության արդյունքում համատեղ գիտական կառույցներ են ստեղծվել ֆրանսիական մի քանի

Համալսարանների և մեր՝ Ֆիզիկական հետազոտությունների, Երկրաբանական, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների հետ: Վերջին տարիներին ՀՀ ԳԱԱ ինստիտուտները իրականացրել են 70–80 մեծ ու փոքր զբամաշնորհային ծրագիր: Դրամաշնորհները ոչ միայն բարելավում են կառուցյի ֆինանսական վիճակը, այլև անմիջական կապ հաստատում գիտնականների միջև, նպաստում մեր գիտության՝ համաշխարհային գիտական գործընթացների ինտեգրմանը:

Խիստ կարևորելով մայր հայրենիքի և սփյուռքահայ գիտնականների հզոր ներուժի համախմբումը, հայ գիտական միտքը Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտության և տնտեսության զարգացմանն ուղղորդելը, դրանով իսկ խթանելով հայ գիտնականների համագործակցությունն ամբողջ աշխարհում՝ ԳԱԱ-ն 2007 թ. որոշում ընդունվեց՝ ստեղծել ԳԱԱ սփյուռքի բաժին, որը պետք է իրականացներ սփյուռքահայ գիտնականներին ԳԱԱ արտասահմանյան անդամներ ընտրելու կազմակերպական և ապագա համագործակցության աշխատանքներ վարելու գործընթացը: Սփյուռքի բաժինը կորդինացնում և անմիջական կապ է հաստատում ԳԱԱ նախագահության և ԳԱԱ հայագրի արտասահմանյան անդամների, համակարգի ինստիտուտների և առանձին գիտաշխատողների միջև, հետևում է բոլոր պայմանավորվածությունների կատարմանը:

2018 թվականի սկզբին ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ են ընտրվել 135 հայագրի հանրահայտ գիտնականներ 23 երկրներից: Սփյուռքահայ գիտնականների հետ մեր գիտնականների համագործակցությունը բազմազան է ու բազմաբնույթ: Նրանց օգնությամբ իրականացվում է երիտասարդ կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, մեր գիտնականների մասնակցությունը միջազգային գիտական, գիտակրթական ծրագրերին, կատարվում են համատեղ գիտական հետազոտություններ, արդյունքները տպագրվում են հեղինակավոր միջազգային գիտական հանդեսներում:

Նախագահության կազմում ստեղծվել է միջազգային դրամաշնորհների և ծրագրերի բաժին, որը համակարգում և տեղեկատվություն է տարածում, աշխատանքներ է տանում մեր հետազոտողներին եվրոպական ծրագրերում ներառելու համար, դրամաշնորհների մասին համապատասխան հայտեր կազմում:

ՀՀ ԳԱԱ կարևոր խնդիրներից է գիտատեխնիկական առաջընթացի և սկզբունքորեն նոր ուղիների բացահայտումը, մասնակցությունը հայրենական և համաշխարհային գիտության նվաճումների գործնական, կիրառական առաջարկությունների մշակմանը: Այդ խնդիրը լուծելու համար ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական ինստիտուտները կարևորելով պետության տնտեսական և սոցիալական կարիքներին նպաստումը և գիտելիքի հիմքի վրա կառուցվող տնտեսության մեջ ներդրումների կատարումը առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կառավարության:

Այդ բնույթի աշխատանքների համակարգումը իրականացնելու նպատակով, նախագահության կազմում 2018 թվականին ստեղծվել է առանձին կառույց: Նոր բաժնի հիմնական խնդիրը ՀՀ ԳԱԱ համակարգում ստացված կիրառական բնույթի գիտատեխնիկական արդյունքների ներկայացումն է հանրապետական և միջազգային շահագրգիռ կազմակերպություններին:

Համաշխարհային ընկերակցության զարգացման նոր միտումները կապվում են տարբեր երկրների միջև համագործակցության ընդլայնման հետ և ուղղված են մարդկության առջև ծառայած գլոբալ խնդիրների լուծմանը: Գիտության զարգացման նոր ռազմավարությունը առաջնությունը տալիս է այնպիսի հետազոտություններին, որոնք արժեւորում են համաշխարհային ընկերակցության գոյությունը նրա կայուն և անվտանգ զարգացման հեռանկարը:

Նշված խնդիրները լուծելու, ԳԱԱ համակարգի առկա վիճակի վերլուծության անցկացման, ինչպես նաև ունեցած ձեռքբերումները պահպանելու և զարգացնելու համար ԳԱԱ նախագահության որոշմամբ 2017 թ. իրականացվել է համակարգի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատումը:

Արդյունավետության գնահատման նպատակը ԳԱԱ համակարգում բարեփոխումների և կառավարման իրատեսական որոշումների մշակման և կայացման համար հիմնավորումների ձևավորում է, հետևյալ թիրախային ուղղություններով.

- բարձրացնել գիտական ներուժի օգտագործման արդյունավետությունը՝ ավելացնելով ԳԱԱ ներդրումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում,
- ավելացնել համաշխարհային գիտության մեջ ԳԱԱ գիտական կազմակերպությունների ներդրումը և ապահովել նրանց մրցունակությունը հետազոտությունների ու մշակումների համապատասխան ուղղություններով,
- բարձրացնել ԳԱԱ դերն ու հեղինակությունը հասարակության շրջանում,
- նպաստել ԳԱԱ ամբողջական ու արդյունավետ համակարգի ձևավորումը:

ԳԱԱ յուրաքանչյուր գիտական կազմակերպության գործունեության գնահատման արդյունքների որակական ու քանակական վերլուծությունների ուսումնասիրությունը նախ հիմնավորում է համապատասխան թիրախային ուղղություններով բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, երկրորդը դրա հիման վրա ձևակերպվել են մի շարք խնդիրներ և մշակվել են բարեփոխումների իրականացման միջոցառումների ծրագրեր վերը նշված թիրախային ուղղություններով:

ԳԱԱ-ում արդեն իսկ իրականացվող բարեփոխումների ծրագրերում ներառված են բազմաթիվ միջոցառումներ ինչպիսիք են՝ ներքին կառուցվածքային բարեփոխումները և օպտիմալացումը, գիտա-

կան ուղղութիւնների և թեմաների արդիականացումը, լաբորատոր սարքերի և տեխնիկական միջոցառումների ձեռքբերումը, կիրառական ուղղվածությունների աշխատանքների և գիտական արդյունքների առևտրայինացման ավելացումը, միջազգային գիտատեխնիկական համագործակցության էլ ավելի ընդլայնումը, երիտասարդ մասնագետներին աջակցումը, գիտություն և կրթության ինտեգրման խորացումը և բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստումը և այլն:

Պետք է նշել, որ ԳԱԱ կադրային ներուժը ունակ է նաև գիտականորեն հետազոտելու և լուծումներ առաջարկելու հանրապետության տնտեսության և ռազմական արդյունաբերության առջև ծառայած շատ-շատ խնդիրների ուղղությամբ, եթե այդպիսի պատվերներ տրվեն:

Իր գոյություն 75 տարիների ընթացքում ակադեմիան կուտակել է գիտագործնական հսկայական փորձ, արժանացել է միջազգային գիտական հանրության բարձր գնահատականին, վայելում է հարգանք և հեղինակություն: Ակադեմիայի համակարգում ձևավորվել են բազմաթիվ գիտական դպրոցներ, որոնք միշտ էլ պատվով են ներկայացրել Հայաստանը միջազգային ասպարեզում: Ակադեմիայի համակարգի բազմաթիվ գիտական կազմակերպություններ մշտապես գիտական իրենց ձեռքբերումները անհատույց ծառայացրել են պետությանն ու ժողովրդին:

Հատկապես մեծ է ակադեմիայի համակարգող դերը հայագիտության, հասարակական այլ հիմնարար ու կիրառական, բնական գիտությունների բնագավառում:

Այսօր էլ ակադեմիան իր կազմակերպություններով հանդերձ, գիտական մեծ ուժ է, ճիշտ կազմակերպման և օգտագործման դեպքում այն կարող է հապես նպաստել Հայաստանի Հանրապետության կայուն զարգացմանը պետության և հասարակության բոլոր բնագավառներում:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ*

Հարգելի գործընկերներ, ինձ համար իսկապես մեծ պատիվ է մասնակցել այս հոբելյանին, որովհետև ես նախ և առաջ ինձ համարում եմ հայկական գիտական համայնքի անդամներից մեկը, այսինքն՝ ձեզնից մեկը:

XX դարում Խորհրդային Միությունում շատ լավ հասկանում էին, թե ինչ են հայկական միտքը, հայկական մտավոր ներուժը, և դա է պատճառը, որ պատերազմի տարիներին Հայաստանում ստեղծվեց գիտությունների ակադեմիա, որը դարձավ մեր գիտական մտքի շարժիչ ուժը:

* Ելույթ 2018 թ. հոկտեմբերի 18-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ ՀՀ ԳԱԱ 75-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Ես հպարտությամբ եմ ուզում հիշատակել Հայաստանի գիտութ-
յունների ակադեմիայի բոլոր նախագահներին՝ առաջին և հիմնադիր
նախագահ ակադեմիկոս Հովսեփ Օրբելուն, ակադեմիան իրական
գիտական բարձունքի հասցրած ակադեմիկոս Վիկտոր Համբարձում-
յանին, անկախության առաջին տարիներին ակադեմիան պահպա-
նած Ֆադեյ Սարգսյանին և, իհարկե, նշել ակադեմիայի ներկայիս
նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին:

Գիտությունների ազգային ակադեմիայի հոբելյանը լավագույն
առիթմն է խոսելու գիտության մասին:

Սիրելի՛ գործընկերներ,

Ցանկանում եմ անդրադառնալ մի քանի կետերի, որոնք, կարծում
եմ, կարևոր են ազգային ակադեմիայի համար: Դրանք վերաբերում
են թե՛ ժամանակակից գիտության զարգացման միտումներին և թե՛
նախկին ավանդույթների զարգացմանը:

1. Կապեր նախկին խորհրդային գիտական կենտրոնների հետ:

Մենք պետք է ոչ միայն պահպանենք, այլև խորացնենք 75 տար-
վա գիտական ավանդույթներն ու կապերը նախկին ԽՍՀՄ տարած-
քի գիտնականների ու գիտահետազոտական կենտրոնների հետ:
Անհրաժեշտ է զարգացնել այդ ամենը, որովհետև մեր գիտական
ներդրումը խորհրդային գիտության մեջ չափազանց ծանրակշիռ է
եղել:

2. Կարիք ունենք և պարտավոր ենք ընդլայնել ակադեմիայի կա-
պերը միջազգային գիտահետազոտական բոլոր կենտրոնների հետ:

Մենք պետք է լինենք միջազգային գիտական գործընթացների
մասը, համահունչ լինենք ժամանակի պահանջներին: Համագործակ-
ցությունը պետք է լինի իրական ծրագրերի շուրջ, համաշխարհային
բոլոր կենտրոնների հետ՝ Ամերիկայից մինչև Չինաստան, Ռուսաս-
տանից մինչև Հնդկաստան: Եվ այն պետք է ուղղված լինի կոնկրետ
թիրախների և նպատակների:

3. Մենք պետք է համախմբենք աշխարհով մեկ տարածված մեր
հայկական ակադեմիական գիտական ուժը:

Դա պետք է լինի գործնական և արդյունավետ հարաբերություն-
ների տեսքով: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան
պետք է լինի գիտությունների համահայկական ակադեմիա, համա-
հայկական գիտական համախմբող մարմին:

4. Փունդամենտալ և կիրառական գիտություններն աստիճանա-
բար մերձենում են:

Դրա թարմ օրինակն իմ անձնական կյանքում հետևյալն է. ընդա-
մենը մի քանի շաբաթ առաջ Nature ամսագրում մեծ հետաքրքրութ-
յամբ ընթերցում էի հոդված՝ նվիրված Զեյմա էլիսոնին և Տասուկու
Հոնձյոյին, ովքեր քաղցկեղի թերապիայի բնագավառում բացահայ-
տումների համար այս տարի Նոբելյան մրցանակի են արժանացել:
Սա հիասքանչ հայտնագործություն է, բայց երբ դիտարկում ես այդ
հայտնագործության պատմությունը, իրականում խոսքը երկու ան-
հատի մասին չէ, այլ վերջին 50 տարիների ընթացքում կատարված

Հսկայական, ֆունդամենտալ աշխատանքի մասին, որի արդյունքում բազմաթիվ հայտնագործություններ են կատարվել՝ սկսած T բլիթների բացահայտումից մինչև իմունոսային համակարգի աշխատանքի մեխանիզմներ: Եվ արդյունքում ունենք նոր դեղամիջոց, որը, կարծում եմ, ապագա մի քանի տարիների ընթացքում հասանելի կլինի աշխարհով մեկ: Սա կրկին մեկ օրինակ է, թե ֆունդամենտալ գիտությունն ինչպիսի կարևոր նշանակություն ունի:

Եվ ընդհանրապես, գիտությունը ստեղծագործական գործընթաց է: Եվ այսօրվա աշխատանքի արդյունքը կարող է տեսանելի լինել և գնահատվել տարիներ անց: Պարզապես գիտությունից կիրառություն ընկած ժամանակահատվածը, կրկնեմ, աստիճանաբար, տարեց-տարի ավելի է կարճանում: Եվ ես կարծում եմ, որ ամեն ինչ պետք է արվի, որ մեր ֆունդամենտալ գիտությունը հնարավորություն ղեկավարում ուղղված լինի կիրառական արդյունք ստեղծելուն:

5. Քսանմեկերորդ դարում ամեն ինչ շատ արագ ընթացք ունի՝ թե՛ փոփոխությունները, թե՛ գործողությունները, թե՛ մտածողությունը:

Մոտենում են գիտության, տեխնիկայի ազատ և անկախ գործունեությունը սահմանները: Գիտությունը նաև տնտեսություն է և բիզնես: Եվ ժամանակակից աշխարհում գիտության մեջ ներգրված կատարվում է նաև եկամուտ ստանալու նպատակով: Հետևաբար, երբ մենք խոսում ենք տնտեսության կամ բիզնես միջավայրը գրավիչ դարձնելու մասին, պետք է նաև խոսենք համապատասխան գիտական միջավայրը գրավիչ դարձնելու մասին:

Այս առումով Հայաստանում տնտեսագիտական մտքի զարգացումը: Մենք ունենք տնտեսագիտական մտքի փայլուն օրինակներ, անհրաժեշտ է, որ դրանք կիրառվեն տնտեսության մեջ և հնարավորության դեպքում հայտնի դառնան նաև դրսում:

6. Գիտության հանդեպ վերաբերմունքը պետք է սկսվի կրթական օջախից:

Կրթական համակարգը, բացի դասական կրթություն տալուց, պետք է ծառայի երիտասարդների կարողությունների բացահայտմանը և նրանց կապի իրենց ապագա գիտական գործունեության հետ: Կարծում եմ, որ ակադեմիան ինքը պետք է վաղ շրջանից նպաստի այն երիտասարդ գիտնական կադրերի պատրաստմանը, որոնք ապագայում դառնալու են ակադեմիական համակարգի մասը: Եվ ընդհանրապես, գիտակրթական համակարգը մեզանում օպտիմալացման և ինտեգրացման կարիք ունի:

7. Պետք է շատ ուշադիր և նվիրումով զարգացնենք ու խորացնենք ուսումնասիրությունները և հետազոտությունները հումանիտար գիտությունների, արվեստի, փիլիսոփայության, պատմագիտության ու հատկապես հայագիտության ոլորտում:

Այսօր անհրաժեշտություն կա առավել խորությամբ անդրադառնալ մեր ինքնությունը, մեր տեսակին, մեր լեզվին, մեր ճանաչե-

լիության հարցին, մեր քաղաքակրթական տեղին և դերին աշխարհում:

Հնարավոր չէ կառուցել հասուն, ամուր և մրցունակ հասարակություն ու երկիր՝ առանց արժեքներու մեր ողջ քաղաքակրթական անցյալը և ըստ այդմ նախագծելու մեր ապագան:

8. Գիտնականը նաև քաղաքացի է:

Գիտնականը նաև քաղաքացի է, մտավորական՝ իր մտածողությամբ, տեսակով, մշակույթով, կենսակերպով, ակտիվությամբ և տեսակետներով: Անմոռանալի են մեծանուն գիտնական, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի քաղաքացիական բարձր ու խիզախ պահվածքը մեր ազգային գարթոնքի առաջին իսկ օրերին, նրա հզոր ելույթները Խորհրդային Միության Գերագույն խորհրդում:

Մեծագույն հարգանքի է արժանի Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, Հայաստանի ազգային հերոս, հռչակավոր գիտնական Վիկտոր Համբարձումյանի հավատարմությունը քաղաքացու և հայի բարձր կոչմանը: Բոլորս ենք հիշում նրա՝ Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի հացադուլը Մոսկվայում՝ որպես աջակցություն արցախյան ազատամարտին:

Գիտնականը, մտավորականը պետք է ակտիվ լինի ոչ միայն գիտական և ստեղծագործական միջավայրում, այլև դրսևորվի որպես սկզբունքային քաղաքացի, անպայման ունենա բարոյական ու քաղաքացիական պարտքի հստակ գիտակցում:

Սրանք են այն մի քանի կետերը, որոնց մասին կուզեի ձեզ հետ խոսել:

Եկել է ժամանակը, որ Հայաստանը, հայ ժողովուրդը ծնեն իրենց նորեկյան մրցանակակիրներին:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», ՀՈԿՏԵՄԲԵՐ,
№ 10, 2018 թ.

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Ճիշտ 40 տարի առաջ՝ 1978 թ. մայիսի 1-ին՝ հենց ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 20-ամյակի օրը, ողջ աշխարհը ցնցվեց հայ և սովետական երաժշտության դասական, Սոցիալիստական աշխատանքի հերոս (1973), ՍՍՀՄ ժողովրդական արտիստ (1954), Լենինյան (1959) և ՍՍՀՄ Պետական մրցանակների (1940, 1943, 1946, 1949, 1968, 1971) դափնեկիր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1963), արվեստագիտության դոկտոր (1965), աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ Արամ Խաչատրյանի (1903–1978) մահվան գույժից: Նույն օրը ևեթ Առնո Բաբաջանյանը ստեղծում է «Էլեգիա» դաշնամուրային պիեսը, որը պիեսի դառնար երաժիշտների ու երաժշտասերների ամենասիրված ստեղծագործություններից մեկը:

Այդ պահին Ա. Բաբաջանյանի հիշողության մեջ արթնանում է Ա. Խաչատրյանի հետ բազմաթիվ հանդիպումներից առավել նվիրականն ու տպավորիչը, որը տեղի էր ունեցել երգչուհի Թուշիկ Խաչատրյանի տանը: Այդ հիշարժան ու ճակատագրական օրը դուրուկահար Մարգար Մարգարյանը, ով դեռևս 1935-ին «Պեպո» ֆիլմում հանդես էր եկել դուրուկի նվագամասի կատարմամբ, կատարում է Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգի մեղեդին: Ա. Խաչատրյանն ունկնդրում է ինքնամոռաց: «Երբ երաժշտությունը մարեց, Արամ Իլիչը հուզված բացականչեց՝ «Ինչպե՞ս է կարողացել մարդն այսպիսի երաժշտություն ստեղծել»¹:

Եվ իր «Էլեգիայում» Ա. Բաբաջանյանն օգտագործեց Սայաթ-Նովայի հենց «Քանի վուր ջան իմ» երգի մեղեդին, թեև հայտնի է, որ Ա. Խաչատրյանը շատ բարձր էր գնահատում Սայաթ-Նովայի արվեստն ու չէր դադարում հիանալ դրանով: ««Էլեգիան» հարգանքի տուրք է Ա. Խաչատրյանին, – խոստովանել է Ա. Բաբաջանյանը, – որտեղ ես ու Սայաթ-Նովան հանդես ենք գալիս միասին»²:

¹ М. Тероганян. Арно Бабаджанян. М., 2001, с. 129.

² С. Амагунян. Арно Бабаджанян. Инструментальное творчество. Исследование. Ереван, 1985, с. 99.

Իրերի տրամաբանությունը հուշում էր, որ հետագայում ևս հայ կոմպոզիտորները կստեղծեն Ա. Խաչատրյանի հիշատակին նվիրված ստեղծագործություններ, իսկ տարիներ անց՝ 1984-ին, Հայաստանի կոմպոզիտորների միությունը կհիմնի Արամ Խաչատրյանի անվան մրցանակ, որը պիտի շնորհվեր երկու տարին մեկ լավագույն ստեղծագործության համար³: 1988-ին այդ մրցանակը շնորհվեց Էդվարդ Միրզոյանին՝ Ա. Խաչատրյանի հիշատակին նվիրված «Պոեմ-էպիտաֆիայի» համար:

Հայկական առաջին սիմֆոնիայի, գործիքային կոնցերտի, բալետի, կինոերաժշտության հեղինակ Ա. Խաչատրյանի երաժշտությունը նոր էջ բացեց համաշխարհային երաժշտության պատմության մեջ: Ստեղծագործաբար ընդհանրացնելով մի կողմից իր նախորդներին՝ ականավոր հայ կոմպոզիտորներ, հայ երաժշտության դասականներ Տ. Չուխաճյանի, Կոմիտասի և Ալ. Սպենդիարյանի, մյուս կողմից՝ ուսու առևտաեվրոպական կոմպոզիտորների գեղարվեստական փորձը, նա հայ կոմպոզիտորական դպրոցը բարձրացրեց որակապես նոր մակարդակի՝ այն դարձնելով համաշխարհային մշակույթի անբաժանելի մասը:

Իր տաղանդի ուժով և մեծ ստեղծագործողին հատուկ վարպետությամբ իրականացնելով արևելյան ու արևմտաեվրոպական երաժշտական ավանդույթների օրգանական սինթեզը, ինչի անհրաժեշտությունը դեռևս XIX դ. երկրորդ կեսին գիտակցել էր Տ. Չուխաճյանն ու որոշակի քայլեր արել այդ ուղղությամբ, Ա. Խաչատրյանը նորովի բացահայտեց արևելյան ժողովրդական երաժշտության հարստագույն հնարավորությունները: Նրա հայտնագործություններն անմիջական ազդեցություն ունեցան արևելյան երաժշտության ու, հատկապես, Անդրկովկասի և Միջին Ասիայի հանրապետությունների կոմպոզիտորական դպրոցների զարգացման վրա: «Սա արևելյան ժողովուրդների երաժշտական մշակույթի զարգացման մեջ նոր փուլ էր, — նկատում է ՄՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՄՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության նախագահ Տիխոն Խրեննիկովը, — Խաչատրյանի վառ տաղանդավոր պարտիտուրները ... ապացուցեցին Արևելքի երկրների ժողովրդական երաժշտության գեղարվեստական կիրառման միանգամայն նոր մոտեցման հնարավորությունը»⁴:

Ա. Խաչատրյանը համարձակ նորարար էր: Լայնորեն օգտագործելով գեղջկական ու քաղաքային ֆոլկլորի նմուշները, աշուղական արվեստն ու մուղամաթի ավանդույթները՝ կոմպոզիտորը վարպետորեն բացահայտեց արևելյան մոնոդիկ թեմատիզմի հնարավորությունները, համադրեց սոնատային-սիմֆոնիկ մտածողության մասը-

³ Արամ Խաչատրյանի անվան մրցանակի առաջին դափնեկիրը դարձավ Էդգար Հովհաննիսյանը: 1986-ին մրցանակը շնորհվել է Ալեքսանդր Հարությունյանին՝ Ֆլեյտայի և լարային նվագախմբի կոնցերտի համար:

⁴ А. Хачатурян. Собрание сочинений в двадцати четырех томах, т. 1. М., 1984, с. 8.

տաբներն ու երաժշտական նյութի ազատ-իմպրովիզացիոն շարադրանքը:

Կոմպոզիտորի երաժշտական ուրույն ոճն առանձնանում է վառ ու գունեղ նվագախմբային ներկայակով, օրիգինալ ու թարմ հարմոնիկ լեզվով: Նրա երաժշտությունը ճանաչվում է առաջին իսկ մի քանի տակտերից: Համաշխարհային երաժշտական պրակտիկայում շատ չեն այն կոմպոզիտորները, որոնք ոչ միայն ունեն սեփական երաժշտական լեզու, այլև ողջ երաժշտության միջով անցնող և միայն իրենց բնորոշ լայթակորդ՝ խոսքը «խաչատրյանական օկտակորդ» անվանված ակորդի մասին է:

Նկատենք, որ բարձր գնահատելով Ա. Խաչատրյանի ստեղծագործության դերն ու նշանակությունը համաշխարհային երաժշտության համայնապատկերում՝ Դ. Շոստակովիչը խոստովանել է. «Եթե չլիներ Խաչատրյանի երաժշտությունը, ես, երևի թե, այլ կերպ կգրեի»⁵:

Ա. Խաչատրյանի մահից օրեր անց լույս է տեսնում «Սովետական արվեստ» հանդեսի 1978 թ. 7-րդ համարը, որի առաջին ութ էջերը նվիրված էին մեծ կոմպոզիտորի հիշատակին: Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի ասպիրանտուրայում Ա. Խաչատրյանի դասարանում ուսանած էդ. Հովհաննիսյանի «Նրա երաժշտության արևով...» հիշատակի խոսքին և «Սովետական արվեստի» խմբագրականին հաջորդում են երաժշտագետների՝ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, երաժշտության բաժնի վարիչ Գևորգ Գյողակյանի «Նոր աշխարհի շեփորահարը» և երաժշտության բաժնի գիտաշխատող Մարգարիտա Ռուխկյանի «Հանճարի խորհուրդը» հոդվածները:

Պատահական չէր այդ հոդվածների հեղինակների ընտրությունը: Բանն այն է, որ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան ու նրա Արվեստի ինստիտուտը, դեռևս Խաչատրյանի կյանքի օրոք ոչ միայն մեծ կոմպոզիտորի լավ բարեկամներն էին, այլև այստեղ նրա ստեղծագործության ուսումնասիրությամբ զբաղվել են հենց նշված երաժշտագետները, և նկատելի է վերջիններիս վաստակը խաչատրյանագիտության գործում: Իսկ Լենինգրադում նույն՝ 1978 թվականին, լույս է տեսնում Գեորգի Տիգրանովի «Арам Ильич Хачатурян. Очерк жизни и творчества» աշխատությունը:

Ու թեև Ա. Խաչատրյանը՝ Հայոց գիտության կաճառի 75-ամյա պատմության ընթացքում միակ երաժիշտ ակադեմիկոսն է, սակայն մինչ օրս հայ երաժշտագիտության մեջ առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել ՀԽՍՀ ԳԱ-ի հետ աշխարհահռչակ կոմպոզիտորի համագործակցության հարցը:

Ուստի սույն հոդվածում փորձ է արվում լրացնել խաչատրյանագիտության մեջ տեղ գտած այդ բացը, քննության առնել ու իմաստավորել Ա. Խաչատրյանի և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի,

⁵ Նույն տեղում:

ի մասնավորի՝ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտաստեղծագործական փոխառնչությունները: Իսկ մարդկային ու գիտական համագործակցությունը հայ մեծ կոմպոզիտորի և Հայոց գիտությունների կառուցման միջև սկիզբ էր առել 1960-ականներին: Ուստի մի պահ տեղափոխվենք 1963 թվական՝ լսելու Արվեստի ինստիտուտի առաջին տնօրեն Ռուբեն Զարյանին: «1963 թվականն էր: Հայկական ակադեմիայի պրեզիդենտը՝ Վիկտոր Համբարձումյանը, ծրագրել էր ակադեմիկոսություն մի տեղ բացել արվեստաբանության բնագավառի համար: Կամենում էր իմանալ, թե մեր ինստիտուտը ու՞մ թեկնածությունը կառաջարկի: Ես երկու թեկնածություն առաջարկեցի՝ Արամ Խաչատրյան և Վահրամ Փափազյան: Նա հակվեց դեպի Արամ Խաչատրյանը: Հետո ես այնպես հասկացա, որ մինչև ինձ հանդիպելը նրա մտքով անցել է Արամ Խաչատրյանը, ինձ հարցնելով, պարզապես կամեցել է իմանալ, թե ինչ կարծիքի կլինի արվեստը հետագոտող գիտնականների միջավայրը»⁶:

Ակադեմիայում շուտով տեղի են ունենում ընտրություններ, և Ա. Խաչատրյանն ընտրվում է ակադեմիկոս: «Ու ես հաջորդ օրն իսկ շտապեցի մի հեռագրով հայտնել ընտրությունների արդյունքը իրեն՝ Արամ Խաչատրյանին և սրտագին շնորհավորանքներ հղել նրան: Հեռագիրս տեղ էր հասել այն պահին, երբ նա մեկնելիս է եղել արտասահման, թե ու՞ր, հիմա չեմ հիշում: Օդանավակայանից ուղարկեց մի շնորհակալական հեռագիր: Ի՞նչ եղավ այդ հեռագիրը՝ չգիտեմ: Վերջերս աչքի անցկացրեցի նրանից ստացված նամակներն ու հեռագրերը, կարծես բոլորը կա, բացի այդ մեկից: Ցավում եմ, որ կորել է այդ փաստաթուղթը (գուցե մի օր գտնվի), բայց միտս է մնացել, թե ինչպիսի հրճվանքով էր իր ընտրվելու լուրն առել և անսահման շնորհակալ էր ինստիտուտից, որ գլուխ բերինք այդ գործը: Նա իր գինը շատ լավ գիտեր, բայց կարծում էր, որ եթե չլիներ ինստիտուտը, ինքը ակադեմիկոս չէր դառնա: Հեռագրում չկար մի այնպիսի տող, թե այդ ընտրությունն իր արժանիքների չափազանցված գնահատությունն է: Չկար համեստության խաղ: Կար երեխայի ուրախություն: Եվ դա այն դեպքում, երբ նրա ամբողջ կյանքը հաջողությունների անվերջանալի շարան էր...»⁷:

ՀԿԿ Կենտկոմի և Մինիստրների սովետի 1963 թ. հունիսի 12-ի №22/278 որոշման համաձայն, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանի ու ՀԽՍՀ կուլտուրայի մինիստր Հր. Մարգարյանի գրավոր կարգադրությունների հիման վրա՝ Արվեստի ինստիտուտը նույն թվականի հուլիսի 1-ից դուրս է բերվում Հայկական ՍՍՀ ԳԱ կազմից և հանձնվում ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրությանը՝ այդ կարգավիճակում մնալով մինչև 1966 թ. ապրիլը: Որոշման նպատակն էր՝ գիտությունն ավելի մոտեցնել արտագրությունը: Այն առաջ է բերում ինստիտուտի աշխատակիցների և դեկավարություն անհամաձայնությունը: Ա. Խաչատրյանը ևս վրդովվում է. «Սխալ որո-

⁶ Ռ. Զարյան. Հուշապատում, Երևան, 1981, էջ 291:

⁷ Նույն տեղում, էջ 292:

չու՞մ է, թյուրիմացություն է երևի: Պետք է դիմել, բողոքել: Ես պատրաստ եմ իմ ուժերը միացնել ձեր ուժերին: Հենց որ պետք եղավ ասեք»⁸:

Արվեստի ինստիտուտի աշխատակից Գ. Տիգրանովը շտապ պատրաստում է մի գրություն, որը ներկայացվելու էր Ա. Խաչատրյանին, և դրա հիման վրա նա կազմելու էր Հանրապետության ղեկավարներին ուղղված նամակ կամ էլ պարզապես այդ շարադրանքի տակ դնելու էր իր անունն ու առաքելու էր նրանց հասցեով: «Քննության առանք ամեն տեսակետից, — գրում է Ռ. Զարյանը, — ծանր ու թեթև արեցինք, և Տիգրանովն ու Մաթևոս Մուրադյանը մեկնեցին Մոսկվա: Կոմպոզիտորին հանդիպել էին կոնսերվատորիայում և նամակը տվել իրեն: 1966-ին վերանայվեց որոշումը, մեր ինստիտուտը վերադարձավ գիտությունների ակադեմիա: Այդպես էլ չիմացանք, թե ինչ դեր խաղաց Ա. Խաչատրյանի միջամտությունը, քանի որ նույնը կատարվեց Բաքվում և Թբիլիսիում, բայց լավ միտս է, որ նա էլ մեզ նման այն համոզման էր, թե հայ արվեստի պատմության հարցերի հետազոտությունը չի կարելի անջատել գիտությունների ակադեմիայում մշակվող հայագիտության մյուս ճյուղերից»⁹:

Ա. Խաչատրյանը խորապես համոզված էր, որ ինքը, որպես Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պարտավոր է գիտական հասարակայնության առջև հանդես գալ ինքնահաշվետվությամբ: 1971-ի վերջերին որոշում է սկզբում ինքը հանդես կգա երաժշտական որևէ հարցի շուրջ համառոտ ելույթով, այնուհետև սիմֆոնիկ նվագախումբն իր իսկ ղեկավարությամբ կկատարի սեփական ստեղծագործություններից մի քանիսը: Ակադեմիայի ղեկավարությունը, բնականաբար, ողջունում է կոմպոզիտորի նախաձեռնությունը, և որոշվում է Ակադեմիայի տարեկան ժողովի ժամանակ՝ 1972 թ. մարտի 24-ին, կազմակերպել ակադեմիկոս-կոմպոզիտորի ինքնահաշվետվությունը: Կազմակերպական հարցերի լուծումն իր վրա է վերցնում Արվեստի ինստիտուտը: «Հետաքրքրությունը շատ մեծ էր: Դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: Կոմպոզիտորը շոյված էր, և նկատեմ, որ բավական հուզված, առաջին անգամ իր կյանքում հանդես էր գալու գիտական հասարակայնության առաջ:

Մինչև հանդեսը կսկսվեր՝ տեղի ունեցավ հարցազրույց հեռուստատեսության համար: Զրույցը վարում էր երաժշտագետ Մարգարիտ Հարությունյանը: Հեռուստատեսությունից եկել էր ռեժիսոր Մարտին Ավետիսյանը: Կոմպոզիտորը դիմեց նրան.

— Այսպիսի հանդես՝ գեղարվեստական է և ակադեմիական, առաջին և վերջին անգամն է իմ կյանքում: Նկարահանեք ոչ միայն ինձ, ոչ միայն բեմը, նվագախումբը, մենակատարներին: Եվ ոչ էլ դահլիճը ընդհանրապես, այլ առանձին ակադեմիկոսներին, մանավանդ հուշակվածներին, մորուքավորներին, հատկապես, նրանց, որ

⁸ Նույն տեղում, էջ 293–294:

⁹ Նույն տեղում:

տպավորիչ դեմք ունեն: Մի խոսքով այնպես, որ քսան տարի հետո, երբ ես չեմ լինի, մարդիկ տեսնեն և տպավորութուն ստանան:

Ռեժիսորն ասաց.

– Ինչպես որ ուզում եք, հարգելի Արամ Իլյիչ, կարվի այնպես, որ քսան տարի հետո նայեք դուք ու հաճույքով հիշեք այս օրը:

Կոմպոզիտորը զգացվեց:

– Շնորհակալ եմ:

Եվ համբուրեց ռեժիսորին¹⁰:

Բացման խոսքով հանդես է գալիս Ակադեմիայի փոխնախագահ, սկանավոր գիտնական Սերգեյ Մերգելյանը: Նա իրավացիորեն նկատում է, որ երջանիկ է Ա. Խաչատրյանը, որովհետև բոլորը նրան ճանաչում են որպես մեծ արվեստագետի:

Ապա Ա. Խաչատրյանը հուզմունքով պատմում է իր ստեղծագործական ուղու մասին, ինչպես է Թիֆլիսից Մոսկվա գնացել, ընդգծում, թե իր ստեղծագործական ճակատագրում ինչ դեր է խաղացել Ալ. Սպենդիարյանը, կարևորում ժողովրդական երգի անգնահատելի արժեքը, կիսվում իր մանկավարժական փորձով, «այդ դժվար հատկութան, որ պետք է ունենա ուսուցիչը՝ и терпение и терпимость, և՛ համբերություն և՛ հանդուրժողականություն»¹¹:

Այնուհետև կոմպոզիտորի ղեկավարութամբ նվագախումբը կատարում է Սպարտակի և Ֆրիդայի Adagio-ն «Սպարտակ» բալետից, երկու հատված «Գայանեից», դաշնամուրային կոնցերտն ու թավջութակի կոնցերտը՝ Նիկոլայ Պետրովի և Կարինե Գեորգիանի մենակատարմամբ: «Անվերջանալի կանչեր ու ծափեր էին: Արվեստի տոնախմբություն էր դա, հրեկյանական հանդես»¹²: Կոմպոզիտորը նվագախմբի բոլոր արտիստներին հրավիրում է ճաշկերույթի, հյուրասիրում և գովեստի համապատասխան խոսքեր գտնում նրանց համար:

«Հաջորդ օրը հանդիպեցինք և ասաց, թե ինքը չէր սպասում այդպիսի խանդավառ ընդունելություն, մանավանդ, ինչպես իրեն ասել էին, դահլիճը լի էր ֆիզիկոսներով և մաթեմատիկոսներով:

– Արվեստի իսկական սիրահարները նրանք են, – նկատեցի ես:

– Երևի, երևի:

Համաձայնեց նա, բայց ես հասկացա, որ նրա միտքը երեկ տեղի ունեցածի հետ էր...»¹³, – իր հուշերում գրում է Ռ. Զարյանը:

1972 թ. ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը հրատարակում է «Арам Хачатурян» վերնագրով հոդվածների ժողովածու, որը կազմել էր Գևորգ Գյոդակյանը, խմբագիրներն էին Գ. Գյոդակյանն ու Ռաֆայել Ստեփանյանը¹⁴: «Իրեն նվիրված ժողովածուն լույս տե-

¹⁰ Նույն տեղում, էջ 299:

¹¹ Նույն տեղում, էջ 300:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս Хачатурян Арам (Сост. Г. Геодакян, ред. Г. Геодакян, Р. Степанян). Ереван, 1972.

սավ այն օրը, երբ նա Մոսկվա էր մեկնելու: Գրքի առաջին օրինակը տարանք Հյուսիսային:

– Այս բոլորը իմ մասին է:

Ասում էր նա կամացուկ, ու ես այդպես էլ չհասկացա՝ մե՞զ էր ասում, թե՞ ինքն իր հետ էր խոսում:

– Ներող եղեք, որ այս օրինակը պետք է տանեմ հետս: Կարծում եմ, որ գրքից չբաժանվելու ցանկությունս հարգելի կհամարեք: Եվ, բացի այդ գիրքը մի հատ է, դուք երեքն եք, որի՞դ նվիրեմ:

Մենք նրան հանգստացրինք, ասելով, թե գիրքը բերված է հատկապես իր համար:

Բերեց կոնյակ, բաժակ բարձրացրինք և մեր ուրախությունը Հայտնեցինք, որ գիրքը լույս է տեսել:

– Ձեզ եմ պարտական այս գրքի համար:

Նա աչքի առաջ ուներ երեքիս՝ երաժշտագետ Գևորգ Գյոզակյանին, հրատարակչության գիրքակտոր Սոս Գևորգյանին և ինձ:

Ես ասացի, թե մեզանում ընդունված սովորության համաձայն, առաջին օրինակը գինով կամ կոնյակով թրջվում է և պահվում արխիվում:

– Գեղեցիկ սովորություն է, ոչինչ չունեմ, բայց ի սեր ասածո այս անգամ հրաժարվեք այդ հեթանոսությունից: Այդ օրինակը տանելու եմ Մոսկվա և ցույց եմ տալու ընկերներին:

Մի-մի լուսանկար նվիրեց մեզ՝ սրտագին ընծայագրերով»¹⁵:

Նկատենք, որ ժողովածուի ստեղծման ուղղությամբ աշխատանքները սկսվել էին տարիներ առաջ: «Ես Արամ Իլյիչին Հայտնեցի, որ ինստիտուտը որոշել է իրեն նվիրված հոդվածների ժողովածու հրատարակել: Ինչպես պետք էր սպասել, ուրախացավ: Ենթադրվում էր, որ լինելու է հետազոտական մի ժողովածու: Խելք-խելքի տալուց հետո, մեր երաժշտագետները շեղվեցին նախնական ծրագրից և որոշվեց գիմել, օրինակ, կինոարվեստի մի քանի դեմքերի, ինչպես նաև կատարող երաժիշտների և խնդրել, որ արտահայտվեն Խաչատրյանի մասին: Այսինքն՝ ունենալ ասույթների բաժին: Այս առաջարկները պատկանում էին ժողովածու կազմող Գևորգ Գյոզակյանին, որն այն կարծիքի էր, թե պետք է խնդրել իրեն՝ Արամ Խաչատրյանին, որ ինքն էլ մի երկու խոսք գրի:

Իրեն՝ Արամ Խաչատրյանին, այդ հարցերի շուրջ խորհրդակցելու նպատակով ուղարկեցի ժողովածուի ծրագիրը»¹⁶:

1966 թ. օգոստոսին Ռ. Զարյանին հասցեագրված նամակում Ա. Խաչատրյանը գրում է. «Թանկագին Ռուբեն Վարոսովիչ

Ներեցեք՝ ուշ եմ պատասխանում:

Շատ ուրախ եմ, որ Դուք ժողովածուին մասնակցելու եք ներգրավում Միխայիլ Իլյիչ Ռոմին, Սերգեյ Օսիպովիչ Յուսկևիչին, Յուրի Ալեքսանդրովիչ Զավադսկուն, Մարտիրոս Սերգեևիչ Սարյանին: Բայց ես ուզում եմ մի քանի անուն ևս ավելացնել:

¹⁵ Ռ. Զարյան. նշվ. աշխ., էջ 301–302:

¹⁶ Նույն տեղում, էջ 300–301:

Բալետից կուզեի ներգրավել Գալինա Սերգեևնա Ուլանովային, բալետմայստերներից Գրիգորովիչին և Յակոբսոնին, կուզեի նաև Սերգեյ Միխալկովին: Մոսկվայում հրատարակված երկհատորյակում, որը կարծեմ «Բարեկամություն» է կոչվում (այդ ժողովածուի կազմողը, կարծեմ, Աշոտ Արզումանյանն է), կա Ֆադեևի նամակն՝ ուղղված ինձ: Այդ նամակը ևս պետք է տպագրել:

Ճիշտ կլինե՞ր դիմել մի քանի անձանց՝ Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի ներկայացուցիչներին:

Պետք է որ կարծիքներ հայտնեն նաև ոչ մասնագետ-երաժիշտները: Օրինակ՝ գրող Վերա Կետլինսկայան (Լենինգրադ): Ես կառաջարկեի, որ կոմպոզիտորի մասին իրենց կարծիքն արտահայտեն երկու-երեք բանվոր և գյուղի աշխատավոր: Ես նամակագրության մեջ եմ տարբեր մարդկանց հետ»: Ապա՝ շարունակում է. «Ինձ թվում է, եթե գիտական լուրջ հոդվածների կողքին կարճ կարծիքներ լինեն, դա ոչ թե կաղքատացնի, այլ կհարստացնի ժողովածուն: Հետազոտության նոր ձև կլինի:

Թող իմ խնդիրքը Ձեզ անհեթեթ չթվա: Եթե ես սխալվում եմ, հրաժարվեք այդ առաջարկութունից: Այդ պարզ մարդկանց առաջ կարելի է մի քանի հարց դնել ու խնդրել, որ պատասխանեն:

Ես իմ հերթին համաձայն եմ ինչ-որ բան ասել, բայց պիտի մտածել, թե դա ինչպես անել: Ձէ որ գրքույկն իմ մասին է, ինչպե՞ս պիտի ինքս հանդես գամ այնտեղ»¹⁷:

Եվ ահա Երևանի ու Մոսկվայի երաժշտագետների համագործակցության արդյունքում ծնվում է ժողովածուն, որի առաջին բաժնում ներկայացված են կոմպոզիտորի «Как я понимаю народность в музыке» և «Волнующие проблемы» հոդվածներն ու ասույթներ, որոնցում արտացոլվում են երաժշտական արվեստի, արդի աշխարհում արվեստագետի տեղի ու դերի վերաբերյալ նրա հայացքները¹⁸: Երկրորդ բաժնում տեղ են գտել Ա. Խաչատրյանի մասին ժամանակակիցների, մասնավորապես՝ սովետական երաժշտագիտության հիմնադիրներից մեկի, երաժշտագետ և կոմպոզիտոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՍՍՀՄ պետական մրցանակի կրկնակի դափնեկիր Բորիս Ասաֆևի, կոմպոզիտոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ պետական մրցանակի վեցակի դափնեկիր, Լենինյան մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր Դմիտրի Շոստակովիչի, ջութակահար, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան և Ստալինյան մրցանակների դափնեկիր, Ա. Խաչատրյանի Ջութակի կոնցերտի առաջին կատարող (ի դեպ, հենց նրան է նվիրված Կոնցերտը) Դավիդ Օյստրախի, դաշնակահար, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի դափնեկիր, Ա. Խաչատրյանի Դաշնամուրային կոնցերտի առաջին կատարող (նրան է նվիրված Կոնցերտը) Լև Օբորի-

¹⁷ Ա. Խաչատրյան. Նամականի, Երևան, 2017, էջ 261–262:

¹⁸ Տե՛ս Գ. Գեոդակյան. От составителя — Хачатурян Арам, с. 6.

նի, բրազիլացի կոմպոզիտոր, դիրիժոր և երաժշտական-հասարակական գործիչ Կլաուդիո Սանտորուի¹⁹, ամերիկացի կոմպոզիտոր, երգիչ և դիրիժոր Սամյուել Բարբերի, բուլղար կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր և երաժշտական մանկավարժ Պանչո Վլադիգերովի, ռումին դիրիժոր, Ռումինիայի ժողովրդական արտիստ, Ռումինիայի պետական մրցանակի կրկնակի դափնեկիր Ջորջե Ջորջեսկուի, երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր Վալենտինա Կոնենի, ինչպես նաև Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, Գեորգի Տիգրանովի, Էդվարդ Միրզոյանի, Էդգար Հովհաննիսյանի և այլոց կարծիքները:

Ժողովածուի երրորդ բաժնում ներառված են Ա. Խաչատրյանի ստեղծագործությունների վերաբերյալ Բորիս Յարոստովսկու, Գայանե Ջեբոտարյանի, Դեյլ Հարոլթյունովի, Ռաֆայել Ստեփանյանի, Էռա Կարաբուլայանի, Իրինա Տիգրանովայի և Գրիգորի Շնեբրսոնի գիտական արժեքավոր ուսումնասիրությունները:

1974 թ. Արվեստի ինստիտուտը որոշում է գիտական նստաշրջան նվիրել Ա. Խաչատրյանի ստեղծագործությունների քննությունը: «Հայտնեցի նրան այդ մասին: Պատասխանը՝ խանդավառ մի նամակ»²⁰, - գրում է Ռ. Ջարյանը:

Ա. Խաչատրյանի՝ Ռ. Ջարյանին 1974 թ. ապրիլի 19-ին հասցեագրված նամակում կարդում ենք՝ «Թանկագին Ռուբեն Վարոսովիչ

Շատ շնորհակալ եմ Ձեր նամակի, իմ ստեղծագործությունները նվիրված Ձեր ինստիտուտում գիտական նստաշրջան գումարելու Ձեր նախաձեռնությունից համար: Իհարկե, ես ողջունում եմ և ըստ ամենայնի կնպաստեմ այդ միջոցառմանը:

Նստաշրջանի անցկացումը նախատեսել եք հոկտեմբերին՝ դա ճիշտ է: Բա՞յց: Իմ արտասահմանյան գործերը դեռևս ստույգ լուծված չեն: Ես կկողմնորոշվեմ նստաշրջանի Ձեր նախատեսած ժամկետներով:

Ես կարծում եմ, որ այդ նստաշրջանի կազմակերպման Ձեր նախաձեռնությունը օգտակար է ոչ միայն ինձ, այլև մեր ամբողջ սովետահայ երաժշտությանը: Այստեղ կարող են պարզորոշվել մեր ժամանակակից սովետահայ երաժշտության սկզբունքներն ու զարգացման ուղիները:

Նշված թեմաների վերաբերյալ լուրջ առարկություններ չունեմ, թեև Գ. Մ. Շնեբրսոնը կարող էր պատմել իր երաժշտության մասին արտասահմանում: Կամ ինչո՞ւ միայն «Սպարտակը» և նրա բեմական կյանքը, հապա «Գայանե՞ն»: 21 տարի «Գայանեն» գնացել է Լենինգրադում Կիրովի անվան թատրոնի բեմում: Ինձ թվում է, իմ վեց կոնցերտների կյանքը մի քանի տասնամյակ շարունակ նույնպես արժանի թեմա է քննարկման համար: Ինձ նաև թվում է, որ ա-

¹⁹ Ի դեպ, իր կենդանության օրոք Ա. Խաչատրյանը Բրազիլիայում ամենահայտնի և սիրված սովետական կոմպոզիտորն էր:

²⁰ Ռ. Ջարյան. նշվ. աշխ., էջ 302:

վելի շատ անուններ պիտի լինեն Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Մինսկից, Մերձբալթիկայից, Միջին Ասիայից և հատկապես Բաքվից և Թբիլիսիից, թեկուզև երկուական մարդ: Մեզ համար շատ կարևոր է, որ մեր երաժշտութայն մասին ավելի շատ խոսեն ոչ հայերը, այսինքն՝ ռուսները, վրացիները, ադրբեջանցիները՝ առաջին հերթին:

Մտածեք իմ արտահայտած մտքերի շուրջ: Դրանք պարտադիր չեն: Բայց եթե նոր որևէ բան մտածեք, գրեք:

Ամենայն բարիք եմ ցանկանում:

Մշտապես Ձեզ հարգող՝ Արամ Խաչատրյան»²¹:

Նստաշրջանի ծրագիրը ճշտելիս հաշվի են առնվում կոմպոզիտորի ցանկությունները. «Թող իր սրտովը լինի»²², – այսպես էին մտածում ինստիտուտում:

Մոտենում են գիտական նստաշրջանի օրերը՝ ժամանում են գեկուցողները՝ երկրի տարբեր ծայրերից: Ժամանում է նաև Ա. Խաչատրյանը: «Նախօրյակին հանդիպեցինք: Աչքիս հուզված էր երևում: Հետաքրքրվում էր, թե ամեն ինչ արվա՞ծ է: Ես հանգստացրի նրան»²³, – վերհիշում է Ռ. Զարյանը:

Եվ ահա 1974 թ. հոկտեմբերի 22-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան և ՍՍՀՄ Պետական մրցանակների դափնեկիր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ա. Խաչատրյանի ստեղծագործությունն ու գործունեությանը:

«Ըստ մեր նախնական ծրագրի՝ նստաշրջանը բացելու էր Վիկտոր Համբարձումյանը: Մեր պրեզիդենտը սիրում էր կոմպոզիտորին: Դա միայն տաղանդի գնահատությունն չէր, այլ նաև անձնական վերաբերմունք:

Ամեն անգամ, երբ առիթ էր ներկայանում նրա մասին խոսք ասելու, սիրով համաձայնում էր: Այս անգամ էլ չմերժեց: Չմերժեց, բայց չեկավ: Երկու ժամ էր մնացել առաջին նիստի սկսվելուն, Բյուրականից լուր եկավ, թե պրեզիդենտը հիվանդացել է և չի կարող գալ: Արամ Խաչատրյանի տրամադրությունն ընկավ: Նա հասկանում էր, որ պրեզիդենտի մասնակցությունը մի առանձին փայլ էր տալու նստաշրջանին: Պրեզիդենտին փոխարինեց նախագահության գլխավոր գիտական քարտուղար Սևադա Բակունցը»²⁴:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում են համամիութենական երաժշտագիտական մտքի առաջատար ուժերը: Գիտական բարձր մակարդակով անցած նստաշրջանի առավոտյան և երեկոյան նիստերում հանդես են գալիս արվեստագիտության թեկնածու Գ.

²¹ Ա. Խաչատրյան. Նամականի, էջ 350–351:

²² Ռ. Զարյան. նշվ. աշխ., էջ 303:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

Գյոզակյանը՝ «Ա. Խաչատրյանը՝ սովետահայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր», արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Տամարա Վիզգոն (Տաշքենդ)՝ «Ա. Խաչատրյանի ստեղծագործական ուրու սկզբունքները և նրանց մարմնավորումը Սովետական Ուղղակատանի կոմպոզիտորների պրակտիկայում», արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գեորգի Տիգրանովը՝ «Ա. Խաչատրյանի բալետների գեղագիտական սկզբունքները», արվեստագիտության թեկնածու Ն. Ալիևան (Բաքու)՝ «Ա. Խաչատրյանը և ազրբեջանական երաժշտությունը», արվեստագիտության թեկնածու Մարգարիտ Տեր-Սիմոնյանը՝ «Ա. Խաչատրյանը երաժշտության մասին», արվեստագիտության թեկնածու, Վրաստանի կոմպոզիտորների միության վարչության առաջին քարտուղար Գիվի Օրջոնիկիձեն՝ «Ա. Խաչատրյանի երաժշտական ոճի մի քանի հարցերի մասին», Ա. Խաչատրյանի մասին Մոսկվայում հրատարակված գրքի (1956) հեղինակ, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, երաժշտագետ Իվան Մարտինովը (Մոսկվա)՝ «Ա. Խաչատրյանը և համաշխարհային երաժշտությունը», Լենինականում ծնված՝ սովետական խոշոր երաժշտագետ և երաժշտական սոցիոլոգ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Առնոլդ Սոխորը (Լենինգրադ)՝ «Ազգային և միջազգային փոխհարաբերությունը Ա. Խաչատրյանի ստեղծագործության մեջ», արվեստագիտության թեկնածու Տատյանա Կուրիչևան (Ռիգա)՝ «Ա. Խաչատրյանը և նրա երաժշտությունը Սովետական Լատվիայում», Վրաստանի կոմպոզիտորների միության վարչության քարտուղար, Վրացական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, Ա. Խաչատրյանի սան Նոգար Գաբունիան՝ «Ա. Խաչատրյան-մանկավարժի մասին», երաժշտագետ Նամի Միկոյանը (Մոսկվա)՝ «Ա. Խաչատրյանի կինոերաժշտությունը», փիլիսոփայական գիտությունների թեկնածու Նոննա Շախնազարովան (Մոսկվա)՝ «Հայաստանը Ա. Խաչատրյանի ստեղծագործություններում» և երաժշտագետ Ե. Կուրիլենկոն (Մոսկվա)՝ ««Սպարտակը» որպես բալետ-ողբերգության ժանր» գեկուցումներով:

Այսպիսով՝ «Ձեկուցողները Ա. Խաչատրյանի ստեղծագործություններն ու գործունեությունը լուսաբանեցին ու արժեքավորեցին պատմական, գեղագիտական, սոցիոլոգիայի և տեսական երաժշտագիտության տեսանկյուններից, ինչպես նաև տարբեր առումներով թե՛ որպես ազգային երաժշտության ու մշակույթի երևույթ և թե՛ որպես Անդրկովկասի, Արևելքի սովետական և համամարդկային երաժշտական մշակույթի երևույթ:

Թեմայի բազմազանությունը և խորությունը գեկուցողներին առիթ ընձեռեց առաջադրել նոր մտքեր ու մոտեցման սկզբունքներ՝ ձևի ու բովանդակության, ազգային ու միջազգային, ավանդականի ու արդիականի, ոճի առանձնահատկությունների ու վարպետության մակարդակի հարցերի վերաբերյալ»²⁵:

²⁵ Տե՛ս Մ. Մ ան ու կ յ ան. Գիտական նստաշրջաններ. – ՊԲՀ, 1974, № 4, էջ 254:

Վերջում ելույթ է ունենում ինքը՝ Ա. Խաչատրյանը. «Ձեռներում ինձ, ոչ էլ ընկերներին, որ տեխնիկայի ներկա դարում գրի չառանք կոմպոզիտորի խոսքը մագնիտոֆոնային ժապավենի վրա: Հիշում եմ, նա խոսեց ժողովրդի հանդեպ արվեստագետի վսեմ պարտքի մասին, շնորհակալություն հայտնեց ինստիտուտին գիտական նստաշրջանը կազմակերպելու համար, խոսեց զեկուցողների մասին, կանգ առավ ամեն մեկի վրա առանձին-առանձին, նշելով, թե ինչն էր ամենաէականը յուրաքանչյուրի խոսքի մեջ»²⁶, - գրում է Ռ. Զարյանը:

Ա. Խաչատրյանի խորհուրդները կարևոր նշանակություն են ունեցել Արվեստի ինստիտուտի երաժշտագիտական հոտազոտությունների համար: «Լավ կլինի, եթե արևելյան երաժշտության մասնագետներ պատրաստեք: Ռուսականը գիտենք, եվրոպականը՝ նույնպես: Արևելյանը չգիտենք: Լավ կլինի, եթե արաբական, թուրքական, պարսկական երաժշտության մասնագետներ ունենանք: Գուցե այն ժամանակ հայ երաժշտության մեջ այնպիսի կողմեր պարզվեն, որոնց գոյությունը չի ենթադրվել անգամ: Ես խոստացա մտածել այդ մասին ու երբ մեր հաջորդ հանդիպումներից մեկին ասացի, թե առաջին քայլն արված է՝ ունենք պարսկական երաժշտության գծով խորացող ասպիրանտ, շատ ուրախացավ»²⁷:

Նկատենք, որ խոսքը, ամենայն հավանականությամբ, ներկայումս արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանի մասին է, ով 1982-ին Տաշքենդի Համգայի անվան արվեստագիտության ինստիտուտում, Ուզբեկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Բ. Ասաֆևի մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր Տամարա Վիզգոյի գիտական ղեկավարությամբ պաշտպանեց թեկնածուական ատենախոսությունը՝ «Մուղամաթի արվեստը հայիրանական երաժշտական կապերի տեսանկյունից» թեմայով և ստացավ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Բոլորելով իր հիմնադրման 15-ամյակը՝ 1973-ին, Արվեստի ինստիտուտը մշակում է իր հետագա զարգացման կարևորագույն փաստաթուղթը՝ «Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկարային ծրագիրը», որտեղ մի կողմից ամփոփվում է արվեստի տարբեր ասպարեզներում արվեստագիտական ուժերի կատարած աշխատանքը, մյուս կողմից՝ ըստ բնագավառների ուրվագծվում գիտական այն ճանապարհը, որով ընթանալու էր Արվեստի ինստիտուտն իր գործունեության հետագա քսանամյակում: Ծրագրում կարևորվում է հայ ժողովրդական, գուսանաշուրական և հոգևոր երաժշտության ու Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի երկրների ժողովրդական երաժշտության փոխազդեցությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը²⁸:

²⁶ Ռ. Զարյան. նշվ. աշխ., էջ 303–304:

²⁷ Նույն տեղում, էջ 298:

²⁸ Տե՛ս Ա. Ասատրյան. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ – 50, Երևան, 2010, էջ 72:

Փաստորեն, հենց Ա. Խաչատրյանի խորհրդով երաժշտական արևելագիտությունը դարձավ և այսօր էլ հանդիսանում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագիտական կարևոր ուղղություններից մեկը:

«Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկարային ծրագիրը» հայ երաժշտագիտության խնդիրներից էր համարում՝ շարունակել և ավարտել Կոմիտասի երկերի ժողովածուի գիտական հրատարակությունը 12 հատորով, ձեռնամուխ լինել Տիգրան Չուխաճյանի և Արամ Խաչատրյանի երկերի ժողովածուների հրատարակությանը²⁹:

Ու թեև Ա. Խաչատրյանի երկերի ժողովածուն 24 հատորով հրատարակվեց Մոսկվայում, սակայն Արվեստի ինստիտուտի երաժշտագետների ջանքերով կոմպոզիտորի մահից երկու տարի անց հրատարակվեց Ա. Խաչատրյանի հոգվածների ժողովածուն, որը կազմել և խմբագրել էին Մարգարիտ Տեր-Սիմոնյանը և Յակով Խաչիկյանը³⁰:

Արվեստի ինստիտուտի երաժշտագետներն իրենց կարևոր խոսքն են ասել խաչատրյանագիտության ասպարեզում: Այսպես՝ 1980-ին ՀԽՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս ընծայեց հայ երաժշտագիտության մեջ դեռևս առաջին քայլերը կատարող Մարգարիտա Ռուխկյանի անդրանիկ՝ «Հայկական սիմֆոնիա: Հետազոտական ակնարկներ»³¹ գիրքը (ռուսերեն), որտեղ տրված է հայ սիմֆոնիկ երաժշտության զարգացման ուղին, բուն վերելքն ապահովող ակունքներն ու արմատները: Հեղինակն առանձին ակնարկով ներկայացրել է Ա. Խաչատրյանի Առաջին սիմֆոնիան՝ հայկական սիմֆոնիզմի հիմնաքարը: Մ. Ռուխկյանը նկատում է. «Առաջին սիմֆոնիայի հիմնական նշանակությունն այն է, որ Խաչատրյանն այս ստեղծագործության մեջ հստակորեն սահմանում է ազգային-ինքնատիպ սիմֆոնիզմի առավել բնորոշ գծերը»³²:

Ի դեպ, Ա. Խաչատրյանի մասին Մ. Ռուխկյանի առաջին հոգվածը լույս էր տեսել 1969 թվականին՝ «Սովետական արվեստի» 11-րդ համարում՝ «Արամ Խաչատրյան. իմ աշակերտները՝ իմ երկրորդ կյանքը» վերնագրով: Հոգվածին, որը լուսաբանում էր կոմպոզիտորի մանկավարժական գործունեությունը, արձագանքում է Ա. Խաչատրյանը: Երիտասարդ երաժշտագետին 1969 թ. հունիսի 20-ին հասցեագրած նամակում կոմպոզիտորը գրում է. «Սիրելի Ռիտա,

Ներեցեք, պատասխանն ուղարկում եմ:

Ամեն ինչ հրաշալի էք գրել: Աննշան դիտողություններ ունեմ: Ես նույնիսկ չէի սպասում Ձեզնից այդպիսի գեղեցիկ լեզու և նուրբ

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ А. Хачатурян. О музыке, музыкантах, о себе. Сборник статей (сост.-ред. М. П. Тер-Симонян, Я. И. Хачикян). Ереван, 1980.

³¹ М. Рухкян. Армянская симфония. Исследовательские очерки (отв. ред. К. Э. Худабашян). Ереван, 1980.

³² նույն տեղում, էջ 28:

դիտողություններ»³³: Այնուհետև կոմպոզիտորը խորհուրդ է տալիս. ««Խաչատրյանի գործ» թղթապանակ սարքեք, այնտեղ դրեք այս ծանրակշիռ աշխատանքը: Գուցեև աստիճանաբար գիրք կազմեք իմ մասին: Ես այն աշխատանքն եմ համարում լավ, որտեղ նոր, մինչ այժմ իմ մասին անհայտ բաներ եմ իմանում: Այդպես ընթերցեցի Ձեր այս աշխատանքը»³⁴:

Ու թեև Մ. Ռուխկյանն այդպես էլ ամբողջական գիրք չգրեց մեծ կոմպոզիտորի մասին, սակայն շուտով «Սովետական արվեստի» 1973 թ. 5-րդ համարում լույս է տեսնում նրա «Երրորդը...» վերնագրով հոդվածը՝ նվիրված կոմպոզիտորի մեկմասանի Երրորդ սիմֆոնիային (1947, Սիմֆոնիա-պոեմ, C-dur)՝ գրված նվագախմբի եռակի կազմի, 15 մենակատար շեփորների և երգեհոնի համար:

Հետագայում ևս Ա. Խաչատրյանի ստեղծագործութայն ուսումնասիրությունը շարունակեց գտնվել արդի հայ երաժշտության հետազոտողի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Եվ մի շարք արժեքավոր հոդվածներից³⁵ ու զեկուցումներից հետո 2003-ին հենց Մ. Ռուխկյանը պիտի կազմեր ու գրեր Արամ Խաչատրյանի նամակների ժողովածուի առաջաբանը³⁶, հեղինակեր «Արամ Խաչատրյանի կինոերաժշտությունը» խտասալիկի բուկլետը³⁷ և Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի բուկլետը³⁸:

Խաչատրյանագիտության մեջ կարևոր հանգրվան դարձան Գ. Գյոդակյանի «Традиционное и новаторское в музыке А. Хачатуряна» և «Արամ Խաչատրյանը և XX դարի երաժշտությունը» հոդվածները: Քննություն առնելով կոմպոզիտորի հարմոնիկ լեզվի առանձնահատկությունները՝ Գ. Գյոդակյանը եզրակացնում է. «Արևելյան լադային կառուցվածքների ու քրոմատիկ տոնայնութայն միաձուլումը Ա. Խաչատրյանի ստեղծագործության մեջ գտնում է ինքնատիպ և զարմանալիորեն վառ մարմնավորում: Եվ միշտ այն հանդես է գալիս որպես օրգանական սինթեզ, անքակտելի ամբողջ

³³ Ա. Խաչատրյան. Նամականի, էջ 301:

³⁴ Նույն տեղում, էջ 302:

³⁵ М. Рухкян. Идея формы или миф армянского симфонизма (к 100-летию Арама Хачатуряна). — «Вестник общественных наук» АН АрмССР, 2003, № 3, с. 143—149; Նույնի՝ Идея формы или миф армянского симфонизма. — Третий международный симпозиум и фестиваль СК Армении «Арам Хачатурян и музыка XX века». Сб. докладов. Ереван, 2003, с. 85—91; Նույնի՝ Арам Хачатурян открывает новое видение. — Арам Хачатурян и современный мир. Сб. статей. Ереван, 2014, с. 59—65 և այլն:

³⁶ Ա. Խաչատրյան. Նամականի (կազմ.՝ Գ. Ա. Հարությունյան, Մ. Ա. Ռուխկյան, Ա. Ա. Փաշլեանյան, խմբ.՝ Ա. Ա. Փաշլեանյան, ծանոթ. և մեկնաբ.՝ Մ. Ռուխկյան, Ա. Փաշլեանյան), Երևան, 2003, 152 էջ:

³⁷ CD. Арам Хачатурян. Киномузыка. 2005, 50 с. (Текст на русском и армянском яз.).

³⁸ Буклет «Дом-музей имени Арама Хачатуряна». Ереван, 2002.

ջուլթյուն, որտեղ մեղեդու արևելյան կերտվածքը բացահայտում է քրոմատիկ տոնայնությունը և ինքն էլ բացահայտվում նրա միջոցով»³⁹:

Խաչատրյանագիտության մեջ իրենց ուրույն խոսքն են ասել Կարինե Խուդաբաշյանը, Մարգարիտ Տեր-Սիմոնյանը, Աննա Արևշատյանը, Անահիտ Գրիգորյանը, Նազենիկ Սարգսյանը և տողերիս հեղինակը:

* * *

Հայաստանում 1984 թ. լայնորեն նշվեց Ա. Խաչատրյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը: Տարվա ընթացքում հանրապետության ողջ տարածքում տեղի են ունենում նշանակալի իրադարձություններ և վերականգնողական գործունեություններ, հանդիսավոր նիստեր և տոնական այլ միջոցառումներ: Հանդիսությունների շարքում կարևոր ու նշանակալի հանգրվան դարձավ երաժշտական արվեստի տոնը, որը կայացավ Երևանում 1984 թ. հունվարի 23–25-ը:

Հունվարի 23-ին ՀԽՍՀ ԳԱ դահլիճում գումարվում է գիտական նստաշրջան, որը կազմակերպել էին Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը, ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Նստաշրջանը բացում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ղեկավար, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռ. Զարյանը, գեկուցումներով հանդես են գալիս Մ. Հարությունյանը («Ա. Խաչատրյանն իր նամակների լույսի ներքո»), Գեորգի Տիգրանովը («Ա. Խաչատրյանը և արդիականությունը»), Նիկողոս Թահմիզյանը («Ա. Խաչատրյանի երաժշտական աշխարհի ազգային տարրերը»), Գայանե Չեբոտարյանը («Ա. Խաչատրյանը և ժամանակակից պոլիֆոնիայի պրոբլեմները»), Անահիտ Գրիգորյանը («Ա. Խաչատրյանի կոմպոզիտորական դպրոցը»), Մարգարիտա Ռուխկյանը («Ա. Խաչատրյանի մանկավարժական սկզբունքները»), Ռաֆֆի Խարաջանյանը («Արամ Խաչատրյանը և լատվիական երաժշտությունը») և Վիկտոր Յուզեֆովիչը («Ա. Խաչատրյանը և սովետական կոմպոզիտորական ստեղծագործությունը»):

Հունվարի 24-ին Երևանում բացվում է Ա. Խաչատրյանի տուն-թանգարանը, որի ստեղծումը հարգանքի տուրք էր ականավոր կոմպոզիտորի հիշատակին: «Այս թանգարանը, – նշեց ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության նախագահ Տ. Ն. Խրեննիկովը, – ստեղծվել է այնպիսի խնամքով և սիրով, որ անհնար է առանց արցունքն աչքերին քայլել նրա սրահներով ու ծանոթանալ նրա ցուցանմուշներին: Թույլ տվեք մեր երկրի երաժշտական հասարակայնության անունից խորին երախտագիտություն հայտնել հանրապե-

³⁹ Г. Геодакян. Пути формирования армянской музыкальной классики. Традиционное и новаторское в музыке А. Хачатуряна. Ереван, 2006, с. 242.

տուլթյան կուսակցական և խորհրդային ղեկավարութեանը՝ նման թանգարանի ստեղծման համար: Այստեղ երկյուղածութեամբ կայցեւելեն ոչ միայն երաժիշտները, այլև, անկասկած, բոլոր նրանք, ում համար թանկ է և ում ուրախութիւնն է պարզեցում ականավոր կոմպոզիտորի՝ Արամ Խաչատրյանի ստեղծագործութիւնը»⁴⁰:

Այսօր քչերին է հայտնի, որ Ա. Խաչատրյանը ցանկանում էր, որպէսզի իր թանգարանն ստեղծվի ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտին կից: Այսպէս՝ 1977 թ. հուլիսի 25-ին Մոսկվայից Ռ. Զարյանին հասցեագրված նամակում կարդում ենք. «... ինձ թվում է, որ այդ տուն-թանգարանը պիտի լինի Գիտութիւնների ակադեմիայի արվեստի ինստիտուտին կից: Կա կարծիք, որ տուն-թանգարանը պիտի Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրութեանը կամ Հայաստանի կոմպոզիտորների միութեանը կից գոյութիւն ունենա:

Ես կարծում եմ, որ տուն-թանգարանը ոչ միայն թանգարան պիտի լինի, այլ նաև մի տեղ, ուր գիտական աշխատանք կատարվի, այն էլ ոչ միայն իմ ստեղծագործութեան վերաբերյալ, այլ՝ ընդհանրապես: Իսկ «ընդհանրապես» իր մեջ շատ բան կարող է ներառել իմ պատկերացումով դա տարողունակ ըմբռնում է»⁴¹:

Ու թեև կոմպոզիտոր-ակադեմիկոսի տուն-թանգարանը չստեղծվեց Արվեստի ինստիտուտին կից ու չդարձավ գիտական ուսումնասիրութիւնների կենտրոն, ինչպէս պատկերացնում էր Ա. Խաչատրյանը, սակայն խիստ խորհրդանշական է, որ այսօր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի www.arts.sci.am ինտերնետային կայքի այցելուին ողջունում է կոմպոզիտորի հանրահայտ Վալսը՝ 21-ամյա Մ. Յու. Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի համար գրված երաժշտութիւնից, որը դարձավ դրամատիկական թատրոնում Խաչատրյանի ստեղծագործական գագաթնակետը: Այս առիթով նշենք, որ «Դիմակահանդեսի» պրեմիերան տեղի ունեցավ 1941-ի հունիսի 21-ին, Մոսկվայի Ե. Վախթանգովի անվան թատրոնում: Ու թեև պրեմիերայի հաջորդ օրն սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը, սակայն Վալսը, այդուամենայնիվ, ապրեց ու տարածվեց աշխարհով մեկ:

Հիշենք նաև, որ Ա. Խաչատրյանի քաղաքացիական հոգեհանգստի ժամանակ Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում ՍՍՀՄ պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ Եվգենի Սվետլանովի ղեկավարութեամբ, նվագում էր հենց այդ Վալսը՝ ներկաներից «յուրաքանչյուրին իրականում զգացնել տալով, թե ինչ Մեծ երաժիշտ ենք մենք կորցրել»⁴²:

Վալսը, որպէս Ա. Խաչատրյանի երաժշտական հարուստ ժառանգութեան յուրահատուկ խորհրդանիշ, հնչեց ՀՀ ԳԱԱ հիմնադրման

⁴⁰ «Вестник Союза композиторов Армении», 1984, № 1, январь-июнь, с. 5—6.

⁴¹ Ա. Խաչատրյան. Նամականի, էջ 378:

⁴² В. Ю з е ф о в и ч. Арам Хачатурян. М., 1990, с. 73.

75-ամյա հոբելյանական հանդիսավոր նիստի ժամանակ՝ 2018 թ. հոկտեմբերի 18-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, օպերային թատրոնի նվազախմբի կատարմամբ՝ դեռևս Հայաստանում իր կատարողական գործունեության արշալույսին Ա. Խաչատրյանի բարձր գնահատականին արժանացած Մաստրոյի՝ ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ:

Իր ողջ կյանքն ապրելով Մոսկվայում՝ Ա. Խաչատրյանը մշտական սերտ կապի մեջ էր Հայրենիքի և հայ երաժիշտների հետ: Նա իր ջերմ ու հոգատար վերաբերմունքով հապես նպաստել է հայ կոմպոզիտորների մասնագիտական ներուժի դրսևորմանը և զարգացմանը, երիտասարդ տաղանդների բացահայտմանը, օժտված ու հեռանկարային երիտասարդների մասնագիտական աճին: Չափազանց ություն չի լինի ասել, որ սովետահայ երաժշտության պատրիարքի ազդեցությունը կրել և նրա քաջալերող ու հովանավորող հզոր ձեռքը զգացել են այդ տասնամյակներում ստեղծագործական ուղի ոտք դրած բոլոր հայ կոմպոզիտորները:

Միևնույն ժամանակ՝ Ա. Խաչատրյանը մեծապես կարևորել է երաժշտագիտության դերը, մեծ ուշադրություն ցուցաբերել երաժշտագետների հանդեպ, արժևորել ու գնահատել նրանց կատարած գործը, նամականեր գրել, հայտնել իր տեսակետը, վիճել և ոգևորել նրանց: Առհասարակ՝ նա հետևել է երաժշտագիտության զարգացմանը և համոզված եղել, որ պետք է հովանավորել ու առաջ մղել արվեստագիտության այդ ուրույն ճյուղը: Նա իր արժեքավոր խորհուրդներով ոչ միայն ուղղորդել է Արվեստի ինստիտուտի երաժշտագիտական հետազոտությունները (ինչպես տեսանք, մասնավորապես, երաժշտական արևելագիտության օրինակով) և որոշակիորեն պայմանավորել դրանց հետագա ծավալումը, այլև նպաստել ակադեմիական խաչատրյանագիտության կայացմանն ու զարգացմանը, ստեղծել բեղմնավոր համագործակցություն Արվեստի ինստիտուտի և մոսկովյան երաժշտագետների միջև:

Ա. Խաչատրյանը շատ բարձր է գնահատել երաժշտական քննադատությունը՝ գտնելով, որ հայ երաժշտական քննադատությունը գիջում է երաժշտագիտությանը կամ պարզապես գոյություն չունի: Մինչդեռ, նրա կարծիքով, երաժշտական քննադատությունը երաժշտական մշակույթի անբաժանելի մասն է և պատասխանատու է ապագայի առաջ այսօրվա համար: Եվ գուցե դա է պատճառներից մեկը, որ Արվեստի ինստիտուտի երաժշտագետները սկսեցին ակտիվորեն զբաղվել նաև երաժշտական քննադատությամբ՝ նկատի ունենալով Մ. Ռուխկյանի, Կ. Խոուբաբաջյանի, Ա. Գրիգորյանի, Ա. Արևշատյանի, Ն. Սարգսյանի, տողերիս հեղինակի և մյուս երաժշտագետների թերթային բազմաթիվ հրապարակումները:

Ա. Խաչատրյանն այն ստեղծագործողներից էր, ով խորապես գի-

տակցել ու կարևորել է, առհասարակ, արվեստագետ-հետազոտողի դերն ու նշանակությունն արվեստում: Այսօր ՀՀ ԳԱԱ-ն ունի արվեստագիտություն մասնագիտությունը չորս թղթակից անդամ չորսն էլ արվեստի ինստիտուտի աշխատակիցներն են. տնօրեն՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանն ու գիտական ստորաբաժանումների ղեկավարները՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանը, արվեստագիտության դոկտորներ, պրոֆեսորներ Հենրիկ Հովհաննիսյանն ու Վիգեն Ղազարյանը: Սակայն քչերին է հայտնի այն փաստը, որ ԳԱ կազմում արվեստագետ-հետազոտող թղթակից-անդամ ընտրելու գաղափարը հենց Ա. Խաչատրյանինն է. հենց նա է ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանին հուշել այդ մասին: «Իմ անկեղծ ուրախությունն եմ հայտնում արվեստագիտության բնագավառում Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամի ազատ տեղի մրցույթի հայտարարման կապակցությամբ, մի բնագավառ, որը երկար տարիներ չի ունեցել իր ներկայացուցիչը՝ արվեստագետ-հետազոտողը»⁴³: Եվ պատահական չէ, որ հենց Ա. Խաչատրյանն է առաջարկել Ռ. Զարյանի թեկնածությունը՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ընտրելու համար:

... 1944-ին՝ ՀՍՍՀ ԳԱ հիմնադրումից մեկ տարի անց, արդեն համաշխարհային հռչակ ձեռք բերած Ա. Խաչատրյանն ստեղծեց Հայկական ՍՍՀ պետական հիմնը՝ երգչախմբի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը (բանաստեղծական տեքստը՝ Սարմենի, ռուսերեն թարգմանությունը՝ Ա. Տեր-Հակոբյանի)⁴⁴, որի հնչյունների ուղեկցությամբ է անցել հայ ժողովրդի մի քանի սերունդների կյանքը: Կոմպոզիտորի պայծառ ու կենսասահաստատ երաժշտությամբ է հայ աշխատավորը տարիներ շարունակ կառուցել ու շենացրել հայրենիքը, կերտվել է մեր ժողովրդի ապահով ու բարեկեցիկ կյանքը. աննախընթաց թռիչք են ապրել հայոց գիտությունն ու մշակույթը:

Եվ ամենևին էլ պատահական չէ, որ Ա. Խաչատրյանի հեղինակած հիմնը վերականգնելու հիմնավոր ու համոզիչ առաջարկությամբ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին 2006 թ. բաց նամակ հղած հայ անվանի գործիչների թվում էին հայրենական գիտության երևելի ներկայացուցիչները՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռազիկ Մարտիրոսյանը, ակադեմիկոսներ Վլադիմիր Բարխուդարյանը, Սեն Արևշատյանը, Սիլվա Կապուտիկյանը: Նկատենք, որ հայ նշանավոր մտավորականների կարծիքն են կիսում ոչ միայն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետները, ովքեր բազմիցս հանդես են եկել հարցի լուծման անհրաժեշտության և հրատապության հիմ-

⁴³ Տե՛ս Ա. Խաչատրյան. Նամականի, էջ 351:

⁴⁴ Մեկ տարի անց՝ 1945-ին, Երևանում լույս է տեսնում հիմնի Փոխադրությունը երգչախմբի և դաշնամուրի համար, իսկ Պարտիտուրը և Փոխադրությունը փողային նվագախմբի համար հրատարակվում է 1947-ին:

նավորմամբ, այլև Հայաստանի շարքային քաղաքացիները, յուրաքանչյուր կիրթ ու հայրենասեր հայ:

Հանրապետության ղեկավարությունն անսաց հայ մտավորականության ձայնին. վարչապետ Անդրանիկ Մարգարյանի՝ 2006 թ. մայիսի 4-ի № 299-Ա որոշմամբ ստեղծվեց հանձնաժողով՝ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի գլխավորությամբ: Հայտարարվեց մրցույթ, և 5–6 ամիս տևած թեժ քննարկումներից հետո՝ հոկտեմբերի 21-ին, հեղինակավոր հանձնաժողովը, որի կազմում էին նաև Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանն ու տողերիս հեղինակը, փակ (գաղտնի) քվեարկությամբ կայացրեց պատմական որոշում՝ մրցույթի 2-րդ փուլ անցած օրհներգի հինգ տարբերակներից 15 կողմ ձայներով, գրեթե միաձայն ՀՀ օրհներգի մրցույթում հաղթող ճանաչվեց Ա. Խաչատրյանի երաժշտությունը և առաջարկվեց ՀՀ կառավարությանը՝ հայտարարել նոր մրցույթ՝ Խաչատրյանի երաժշտության բանաստեղծական տեքստի համար:

Բայց մասնագետների կարծիքն այս անգամ էլ մերժվեց: Եվ մերժվեց Ազգային ժողովում. պատգամավորները նախընտրեցին «Մեր հայրենիքը»՝ տարակուսանքի մեջ թողնելով մի ամբողջ ժողովուրդ, որն արգեն մտովի տոնում էր խաչատրյանական հիմնի «վերադարձը»: Սակայն ուզում եմ հավատալ, որ ոչ հեռու ապագայում Հայաստանի Հանրապետությունն աշխարհին կներկայանա հայ ժողովրդի հանճարեղ զավակ Արամ Խաչատրյանի՝ լուսնային մատնված գլուխգործոցի երաժշտությամբ:

АРАМ ХАЧАТУРЯН И НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АННА АСАТРЯН

Резюме

Научно-творческое сотрудничество и личное, человеческое общение между Академией наук Армянской ССР, в частности — Институтом искусств АН АрмССР, и всемирно известным композитором, дирижером, педагогом, общественным деятелем, Героем Социалистического труда (1973), Народным артистом СССР (1954), лауреатом Ленинской (1959) и Государственных (1940, 1943, 1946, 1949, 1968, 1971) премий, академиком АН АрмССР (1963), доктором искусствоведения (1965) Арамом Ильичом Хачатуряном начались еще в 1960-е годы.

Будучи первым и единственным музыкантом-академиком АН Армении, композитор придавал важное значение музыкознанию и уделял большое внимание музыковедам, ценил их работу, переписывался с ними, заводил творческие дискуссии, вдохновлял

и поощрял их. Он внимательно следил за развитием армянского музыкознания и был убежден, что нужно постоянно развивать эту самобытную ветвь искусствознания. Своими ценными советами он не только намечал те или иные направления музыковедческих исследований Института искусств (музыкальное востоковедение, музыкальная критика), но и во многом способствовал становлению и развитию академического хачатуряноведения, плодотворному сотрудничеству между Институтом искусств и московскими музыковедами.

Институт искусств АН Армении издал сборник статей «Арам Хачатурян» (1972) и сборник статей композитора «О музыке, музыкантах, о себе» (1980), организовал две научные сессии (1974, 1984), посвященные творчеству композитора, внес весомый вклад в область хачатуряноведения благодаря исследованиям Геворга Геодакяна, Маргариты Рухкян, Карине Худабашян, Маргариты Тер-Симонян, Анны Аревшатян, Анаит Григорян, Назеник Саргсян и автора этих строк.

А. Хачатуряну очень хотелось, чтобы его дом-музей был организован и действовал при Институте искусств АН Армении: об этом свидетельствует, в частности, письмо композитора от 25 июля 1977 года, адресованное директору института Рубену Заряну.

ARAM KHACHATURIAN AND THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ANNA ASATRYAN

Summary

The scientific-creative cooperation and personal contact between the Academy of Sciences of Armenian SSR, in particular the Institute of Arts of the NAS of Armenian SSR and the world-famous composer, conductor, pedagogue, public figure, the Hero of Socialist Labor (1973), the People's Artist of USSR (1954), the laureate of Lenin (1959) and State Prizes (1940, 1943, 1946, 1949, 1968, 1971), the Academician of the NAS of Armenian SSR (1963), the Doctor of Arts (1965) Aram Khachaturian, began still in the 1960s.

Being the first and the only musician-academician of the NAS of Armenia, the composer gave a lot of importance to the musicology and paid much attention to musicologists, appreciated their work, conducted correspondence with them, organized creative discussions, inspired and encouraged them. He attentively observed the development of Armenian musicology and was sure, that it was a must to constantly develop this

original branch of art studies. Thanks to his valuable advice not only did he outline the directions of musicological research of the Institute of Arts (music orientology, musical criticism), but in many ways fostered the formation and development of academic Khachaturian studies, fruitful cooperation between the Institute of Arts and Moscow musicologists.

The Institute of Arts of the NAS of Armenia published a compilation of articles “Aram Khachaturian” (1972) and a compilation of composer’s articles “About music, musicians, about myself” (1980), organized two scientific sessions (1974, 1984), dedicated to the composer’s oeuvre, had a weighty contribution to khachaturianology thanks to the research of Gevorg Gyodakyan, Margarita Rukhkyan, Karine Khudabashyan, Margarita Ter-Simonyan, Anna Arevshatyan, Anahit Grigoryan, Nazenik Sargsyan and the author of this article.

Aram Khachaturian was eager to see his house-museum founded and working under the Institute of Arts of the NAS of Armenia, in particular the composer’s letter from 25th of July 1977, addressed to the director of the Institute Ruben Zaryan, provides the evidence.

ԵՐԵՐՈՒՆԻ ԱՄՐՈՑԸ

ԵՐՎԱՆԻ ԳՐԵԿՑԱՆ

1879 թ. Չոլմաքչի գյուղի (ներկայիս Հին Նորքի տարածքում) բնակիչ Պ. Տեր-Ավետիսովն Արին-բերդ կոչվող բլրի ստորոտին հայտնաբերեց բազալտե սրբատաշ քար՝ սեպածև նշաններով: Մոսկովյան կայսերական հնագիտական ընկերության անդամ Ա. Ա. Իվանովսկին, ով ընկերության հանձնարարությամբ ուսումնասիրում էր հայաստանյան հուշարձանները, 1894 թ. գնեց արձանագիր քարը և այդ նույն թվականին հետախուզական շրջայց կատարեց արձանագրության հայտնաբերման վայրում՝ Արին-բերդում՝ փաստագրելով երևացող կառույցները¹: Արձանագրությունն ուղարկվեց Մոսկվա և 1896 թ. հրատարակվեց Հայաստանի սեպագրական շրջանի ժառանգությունն ուսումնասիրող Մ. Վ. Նիկոլսկու կողմից: Արձանագրության մեջ նշվում էր Բիայնիլի արքա Արգիշթի Մենուայրդու կողմից (Ք. ա. 791–770 թթ.)² ինչ-որ շինություն կառուցելու մասին³: Դրանից շուրջ կես դար անց՝ 1947–1948 թթ., Կ. Հովհաննիսյանը իրականացրեց հետախուզական նոր աշխատանքներ: Այդ նույն ժամանակ այստեղ կարճատև պեղումներ կատարեց Վ. Վ. Շլենդը⁴: Արին-բերդի կանոնավոր պեղումները սկսվեցին 1951 թ.:

¹ А. А. И в а н о в с к и й. По Закавказью. Археологические наблюдения и исследования 1893, 1894 и 1896 гг. — «Материалы по археологии Кавказа», вып. VI. М., 1911, с. 59–61, рис. 43.

² Արգիշթի Մենուայրդու գահակալության տարիների վերաթվագրության համար տե՛ս Y. H. G r e k y a n. The Regnal Years of the Urartian Kings Argišti Menuaḫi and Sarduri Argištihi.— “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, vol. 9.1, 2015, p. 97, 99; ն ու յ ն ի՝ Արգիշթի I արքայի գահակալության տարիների վերաթվագրության հարցի շուրջ.— ՊԲՀ, 2016, թիվ 3, էջ 187, 190:

³ М. В. Н и к о л ь с к и й. Клинообразная надпись из Ганли-Тапа около Эривани. — «Древности восточные. Труды Восточной Комиссии Императорского Московского Археологического Общества», т. II, вып. 1. М., 1896, с. 24–26, табл. I/1; ն ու յ ն ի՝ Клинообразные надписи Закавказья. — «Материалы по археологии Кавказа», вып. V. М., 1896, с. 97–100, табл. XXIII.

⁴ В. В. Ш л е е в. К истории Ванского царства (Урарту) второй половины VIII — первой половины VII вв. до н. э. — «Вестник древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1958, № 1, с. 25, прим. 29.

Դրա համար ազդակ հանդիսացավ նաև դեռևս 1950 թ. սեպտեմբերի 25-ին երկու նոր սեպագիր արձանագրությունների հայտնաբերումը⁵, որոնցից մեկը հայտնում էր Արգիշթի Մենուայորդու կողմից փառահեղ ամրոց կառուցելու և այն Էրեբունի անվանելու մասին (^Dhaldinini alsuisini ^margištiše ^mmenuahiniše ini É.GAL badusi šidištuni terubi ^{URU}erbuni tini)⁶:

Էրեբունիի միջնաբերդի պեղումները խորհրդային տարիներին շարունակվեցին մինչև 1975 թ.: Դրանք իրականացնում էին մի քանի արշավախմբեր. նախ՝ Կարմիր-բլուրի արշավախմբի ուժերով, ապա՝ ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Պատմության ինստիտուտի և ՀԽՍՀ պետչինի հուշարձանների պահպանության բաժնի արշավախմբերի կողմից: 1952 թ. պեղումներին ներգրավվեց Մոսկվայի Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանի արշավախումբը՝ Ի. Մ. Լոսևայի, այնուհետև՝ Ս. Ի. Խոջաչի ղեկավարությամբ: Աշխատանքների ընդհանուր ղեկավարը Կ. Լ. Հովհաննիսյանն էր՝ այդ նույն տարիներին Կարմիր-բլուրի պեղումները գլխավորող Բ. Բ. Պիտարովսկու գիտական խորհրդատվությամբ⁷: 1968 թ. հանդիսավորությամբ նշված Էրեբունի-Երևանի հիմնադրման 2750-ամյակի կապակցությամբ միջնաբերդում իրականացվեցին պահպանման և վերականգնման լայնածավալ աշխատանքներ՝ նպատակ ունենալով ստեղծելու բացօթյա թանգարան՝ ուրարտական շրջանի կանգուն կառույցներով⁸: Ցավոք, առանց լուրջ նախապատրաստական աշխատանքների և գիտական հիմնավորումների, հապտապ ու նոր շինարարական նյութերով իրականացված միջնաբերդի վերականգնումն անգնահատելի վնաս հասցրեց հուշարձանին՝ էսպես աղճատելով նաև նրա իրական տեսքը և սահմանափակելով հետագա ուսումնասիրությունների հնարավորությունները:

Էրեբունիի հնագիտական ուսումնասիրությունների նոր փուլը սկսվեց 1998 թ.՝ Ֆ. Տեր-Մարտիրոսովի ղեկավարությամբ գործող

⁵ К. Л. О г а н е с я н. Арин-берд (Ганли-тапа) — урартская крепость города Ирпуни.— «Известия» АН АрмССР, общественные науки, 1951, № 8, с. 75—77.

⁶ Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей (*այսուհետև՝* КУКН). Ереван, 2001, № 173 П₃₂₋₃₄, 174 А₂¹⁴⁻¹⁷, 197—198, 200—201; М. S a l v i n i. Corpus die testi urartei, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi (*այսուհետև՝* СТU I).— “Documenta Asiana”, Roma, 2008 VIII/1. А 8-3 П₃₂₋₃₄, А 8-1 V₀¹⁴⁻¹⁷, А 8-17 А-В, А 8-18, А 8-19.

⁷ К. Л. О г а н е с я н. Арин-берд I. Архитектура Эребуни по материалам раскопок 1950—1959 гг.— «Археологические раскопки в Армении», 9. Ереван, 1961, с. 14.

⁸ Կ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Ծարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում, Երևան, 1978, էջ 84—88, ն ու յ ն ի՝ Крепость Эребуни. Ереван, 1980, с. 131—140.

արչավախմբի կողմից⁹: Սկսած 2007 թ. մինչև 2010 թ. այստեղ աշխատեց Հայ-ամերիկյան արչավախումբը՝ Դ. Ստրոնախի և Ֆ. Տեր-Մարտիրոսովի, ապա՝ Ա. Փիլիպոսյանի համադրեկավարությամբ¹⁰: 2008–2011 թթ. էրեբունիում նաև աշխատել է հայկական առանձին արչավախումբ՝ Ա. Փիլիպոսյանի գլխավորությամբ¹¹: 2008 թ. մինչև 2016 թ. մեկամյա ընդմիջումով (2015), պեղումներն իրականացվել են Հայ-Ֆրանսիական համատեղ արչավախմբի ուժերով (Ֆրանսիական կողմի ղեկավարն է եղել Ս. Դեշանը, հայկական կողմը տարբեր տարիներին գլխավորել են Ա. Փիլիպոսյանը, Ա. Հայրապետյանը, Ա. Մեշինյանը, Ա. Ազիզյանը և Մ. Բադալյանը)¹²: էրեբունիում վերջին

⁹ Ф. Тер-Мартirosов. Результаты археологических раскопок 2000–2001 гг. в Эребуни. — «Культура древней Армении», т. XII. Материалы республиканской научной сессии. Ереван, 2002, с. 54–57; *Ն ու լ յ ն ի*՝ Новые археологические данные по памятникам Армении Ахеменидского периода. — Археология, этнология и фольклористика Кавказа. Материалы международной конференции. Ереван, 17–18 ноября, 2003. Эчмиадзин, 2003, с. 122–125; *Ն ու լ յ ն ի*՝ Раскопки на северном склоне крепости Эребуни. — «Культура древней Армении», т. XIII. Материалы республиканской научной сессии. Ереван, 2005, с. 147–153; *Ն ու լ յ ն ի*՝ Раскопки крепости Эребуни. — «Ушардзан (Памятник)», т. 4–5. Ереван, 2008, с. 152–159; *Ն ու լ յ ն ի*՝ Новые данные о культуре Урарту. — «Ушардзан (Памятник)», т. 6, 2010, с. 131–136. D. Stronach, F. Ter-Martirosov, A. Avazian, W. Collins, C. Demos, S. Ghanimati. Erebuni 2007.– “Iranica Antiqua” 44, 2009, pp. 181–206.

¹⁰ D. Stronach, H. Thranе, C. Goff, A. Farahani, Y. Grekyan. Erebuni 2008–2010.– Urartu and Its Neighbors. Festschrift in Honor of Nicolay Harutyunyan in Occasion of His 90th Birthday (22–24 September, 2009, Yerevan).– “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” V/1–2, Yerevan, 2010, pp. 99–133.

¹¹ Ա. Փիլիպոսյան, Մ. Բադալյան, Ա. Զաքյան, Տ. Զաքյան, Գ. Թումանյան. էրեբունի բերդաքաղաքի 2007–2011 թթ. պեղումների նախնական արդյունքները. — Պատմամշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրները, միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2013, էջ 26–27:

¹² S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, D. Stronach. Erebuni: The Environs of the Temple of Haldi during the 7th and 6th Centuries BC.– “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 6/2, 2011, pp. 121–140; S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, J. Traina, V. Mutarelli, G. Davtian. The Surroundings of the Khaldi Temple: Preliminary Results of a New Program of Research on the Urartian Fortress of Erebuni.– Archaeology of Armenia in Regional Context. Proceedings of the International Conference Dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15–17, 2009 in Yerevan. Yerevan, 2012, pp. 148–162; S. Deschamps, F. Fichet de Clairfontaine. La forteresse d’Erebuni (Erevan, Arménie): une nou-

պեղումները կատարվել են 2017 թ. հայկական արշավախմբի կողմից (ղեկավար՝ Մ. Բաղայան)¹³:

Էրեբունի՝ «Ազատ քաղաք»

Ուրարտական պետության կենսագործունեությունը կենտրոնացված էր լեռնաշխարհի ցածրագիր և, գերազանցապես, հարթավայրային ու հովտային գոտիներում: Յուրաքանչյուր նման գոտի կազմում էր առանձին վարչական միավոր կամ նահանգ՝ կենտրոնական ամրոցով, որը նահանգի վարչատնտեսական կենտրոնն էր, և երկրագործական տարածքն ու տեղի հարյուրավոր գյուղատիպ բնակավայրերը վերահսկող տասնյակ փոքր ամրոց-ամրություններով: Արարատյան դաշտավայրը, որն ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդես է գալիս «Վազա(յի) երկիր» անվանումով (^mwazaini KUR-ni)¹⁴, տերության մեծաթիվ նահանգներից մեկն էր, իսկ վարչական կենտրոնն էր նորակառույց Էրեբունի ամրոցը:

Որպես կանոն՝ ուրարտական արքաների կողմից կառուցված ամրոցները կրում էին կամ արքաների, կամ էլ տերության պետական զինքարանի գլխավոր աստվածների անունները, ինչպես, օրինակ, «Խալդիի քաղաք» (^Dhaldini URU), Թեյշեբայի քաղաք (^DIM-i URU), Սարգուրիխինիլի (^{mD}sardurihinili), Արգիշթիխինիլի Արտարապչակայի (^margištehinili ^{KUR}artarapšakai) և այլն¹⁵: Հետաքրքիր է, որ Արգիշթի Մենուայորդու կողմից կառուցված ամրոցի անվանակոչումը չէր հետևում այդ ավանդույթին, և հայտնի չէ, թե ինչու էր արքան ընտրել Էրեբունի անունը:

Դեռևս 1951 թ. Մ. Իսրայելյանը Էրեբունի անունը համադրել է Երևանի հետ¹⁶: Որոշակի վերապահումներով այն ընդունելություն գտավ ոչ միայն հայաստանյան և հայագիտական, այլև՝ արևելագի-

velle lecture de la fin du royaume d’Ourartou? – “Comptes rendus de l’Académie des inscriptions et belles-lettres” 4, 2013, pp. 1649–1682.

¹³ Մեր շնորհակալությունն ենք հայտնում Մ. Բաղայանին՝ Էրեբունիում իրականացված վերջին շրջանի պեղումների արդյունքներին մեզ հաղորդակից դարձնելու համար:

¹⁴ I. M. D i a k o n o f f, S. M. K a s h k a i. Geographical Names According to Urartian Texts. – “Répertoire géographique des textes cunéiformes” 9. Wiesbaden, 1981, p. 99; H. B. A p y t y o n y a n. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 13–14.

¹⁵ Մանրամասն և հղումներով հանդերձ տե՛ս Ե. Հ. Գրեկյան. Քաղաքաշինությունը և քաղաքաշինական միտքը Բիայնիլի-Ուրարտուում. – ՊՐՀ, 2018, № 1, էջ 225–227:

¹⁶ Մ. Ի սր ա յ ե լ յ ա ն. Ուրարտական երկու նոր արձանագրություն. – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1951, № 8, էջ 97, ծնթ. 2:

տական շրջանակների կողմից¹⁷: Չնայած դրան՝ անվան ստուգաբանությունը մնում էր անհայտ՝ տեղիք տալով տարբեր մեկնաբանությունների¹⁸:

Ինչպես հայտնի է, ուրարտական տեքստերը գերեվարությունները թվարկելիս երբեմն նաև հայտնում են գերի տարված ռազմիկների մասին (LU^(MEŠ) gunušini): Նման վկայություն է պահպանվել նաև Արգիշթի Մենուայորդու տարեգրության մեջ, ուր նշվում է Խաթե և Ծուփա երկրներից 6600 ռազմիկների գերեվարելու ու նրանց էրեբունիում բնակեցնելու (°) մասին¹⁹: Ենթադրվում է, որ վերաբնակեցված ռազմիկների հետ են եղել նրանց ընտանիքները²⁰: Դրանով վերաբնակեցվածների թիվը բավական մեծ էր լինելու և կարող էր էպես ներառել Արարատյան դաշտավայրի բնակչության էթնիկական կազմի վրա:

Այս համատեքստում է առաջարկվում էրեբունի անվան նոր ստուգաբանությունը: Հաշվի առնելով, որ «խեթական» երկրներից այստեղ վերաբնակեցված ռազմիկները, ամենայն հավանականությունով, լուվիախոս էին՝ առաջարկվում է լուվիերենով ստուգաբանել նաև ամրոցին տրված անվանումը: Ըստ Ա. Պետրոսյանի՝ էրեբունի անունը հնարավոր է ստուգաբանել լուվիերեն *arawa- «ազատ, ազատ(վ)ել» բառով, որի գուգահեռները պահպանվել են լուվիերենին մերձավոր անատոլիական այլ լեզուներում: Ըստ այդմ, էրեբունի անունը կարող է նշանակել «ազատ քաղաք»՝ վկայելով այստեղ վերաբնակեցված զինվորականությունը շնորհիվ հարկային և աշխատ-

¹⁷ Տե՛ս, օրինակ, J. R. Russell. Armeno-Iranica.— Papers in Honour of Professor Mary Boyce. Leiden, 1985, p. 454; P. Zimansky. Urartian and the Urartians.— The Oxford Handbook of Ancient Anatolia, 10,000–323 B.C.E. Oxford, 2011, p. 557 և այլն:

¹⁸ Տարբեր համադրումների ու ստուգաբանության համար տե՛ս և համատ., մասնավորապես, М. В. Никольский. Клинообразные надписи Закавказья, с. 97; И. М. Дьяконов. Г. А. Меликишвили. Древневосточные материалы по истории народов Закавказья, I. Наири-Урарту. Тбилиси.— ВДИ, 1956, № 2, с. 62; Ն. Վ. Հարությունյան. Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը.— ՊՐՀ, 1959, № 2–3, էջ 78–81, Մ. Իսրայելյան. Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական ու հնագիտական տվյալների), Երևան, 1971, էջ 6, 12–15, Յ. Կարապետյան. Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. I, գիրք I, Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում), Երևան, 1998, էջ 79–81, Ա. Փիլիպոսյան. Կրկին էրեբունի քաղաքանվան ստուգաբանության շուրջը.— «Երևան 2» հոդվածների ժողովածու, Երևան, 2009, էջ 147–156 և այլք: Մանրամասն տե՛ս Ա. Պետրոսյան. Հայոց ազգածագման հարցեր, Երևան, 2006, էջ 29–30 (տե՛ս հարցի պատմությունը):

¹⁹ КУКН, № 173 П₃₆₋₃₇, 174 А₂₁₋₂₂; СТU I, А 8–3 П₃₆₋₃₇, А 8–1 V₀₂₁₋₂₂.

²⁰ Г. А. Меликишвили. К вопросу о хето-цупанийских переселенцах в Урарту.— ВДИ, 1958, № 2, с. 46; Յ. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 79–80.

տանքային պարհակներից մասնակի կամ միառժամանակյա ազատված լինելու մասին²¹: Ուրարտուում մինչև այդ անհայտ Իուբջա աստվածությունից պաշտամունքի ի հայտ գալն էրեբունիում (տե՛ս ստորև) նույնպես կարող է վկայել այստեղ հաստատված լուվիախոս գինվորականության ունեցած պաշտամունքային ազատության մասին՝ նկատի ունենալով, որ նա օտար և, ամենայն հավանականությամբ, լուվիական ծագման աստվածություն է²²: Առավել ևս, այդ աստվածությունը չի հիշատակվում «Մհերի դռան» դիցապանկում, սակայն, Արարատյան դաշտավայրում գցել է արմատներ՝ հիշատակվելու համար էրեբունիից շուրջ մեկ դար հետո կառուցված Թեյշեբայի քաղաքի (Կարմիր-բլուր) «սուսի»-տաճարի արձանագրության մեջ՝ զոհաբերություն ստացող աստվածների շարքում²³:

Միջնաբերդը

Ամրոցաշինությունն Ուրարտուում իրականացվում էր պետության կողմից՝ կիրառելով միասնական շինարարական չափորոշիչներ, խնամքով մշակված հատակագիծ և շինարարական միջոցներ²⁴: Շինարարության ժամանակ հաշվի էին առնում երկու կարևոր հանգամանք՝ լեռնաշխարհի կլիմայական պայմանները, ինչպես նաև ուելիեֆն ամրաշինությանը ծառայեցնելու հնարավորությունը՝ հետևելով վաղերկաթեդարյան ավանդույթներին²⁵:

²¹ Ա. Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 31–37:

²² Տե՛ս Г. А. Меликишвили. նշվ. աշխ., էջ 42–47; N. Tiratsyan. Luwian Gods in Urartu? – “Aramazd: Armenian Journal of Near eastern Studies” 3/1, 2008, pp. 79–82; նույնի՝ Տեղեկություններ Ուրարտուի հարևան և ծայրամասային տարածքների աստվածների վերաբերյալ. – Ե. Գրեկյան, Մ. Բադալյան, Ն. Տիրացյան, Ա. Պետրոսյան. Բիսյնիլի-Ուրարտու. Աստվածներ, տաճարներ, պաշտամունք, Երևան, 2018, էջ 152–158:

²³ КҮКН, 424₈; CTU I, A 12–2 I₈.

²⁴ Ուրարտական ամրաշինության համար ամփոփ տե՛ս, մասնավորապես, Կ. Կ. Ղաֆադարյան. Դիտողություններ ուրարտական ամրաշինության վերաբերյալ. – ՊԲՀ, 1972, № 2, էջ 151–162, Հ. Գ. Ավետիսյան, Ա. Ա. Բոբոխյան. Ուրարտուի հնագիտություն (Ամրոցքնակավայրեր և դամբանային համալիրներ), Երևան, 2010, էջ 113–146 (նշվ. գրականությամբ), W. K l e i s s. Aspekte urartäischer Architektur. – “Iranica Antiqua”, 23, 1988, S. 181–215; նույնի՝ Notes on the Chronology of Urartian Defensive Architecture. – Anatolian Iron Ages 3, The Proceedings of the Third Anatolian Iron Ages Colloquium held at Van, 6–12 August, 1990 (British Institute of Archaeology at Ankara Monograph No. 16). Ankara, S. 131–137; T. B. F o r b e s. Urartian Architecture. – “British Archaeological Reports. International Series” 170. Oxford, 1983, pp. 8–39 և այլուր:

²⁵ Տե՛ս, օրինակ, A. T. S m i t h, K. K a f a d a r i a n. New Plans of Early Iron Age and Urartian Fortresses in Armenia: A Preliminary Report on the Ancient Landscapes Project. – “Iran” 34, 1996: 36; Գ. Արեշյան, Կ. Ղա-

Էրեբունի քաղաքի միջնաբերդը ևս կառուցվել է նույն սկզբունքներով: Երևանի Էրեբունու վարչական շրջանի Նոր Արեշ ու Վարդաշեն թաղամասերի միջև բարձրացող և շրջակայքի վրա իշխող դիրք ունեցող բլրի վրա կառուցված միջնաբերդն իրենից ներկայացնում է եռանկյունաձև հատակագիծ ունեցող խոշոր համալիր՝ շուրջ 1.5 հա տարածքով²⁶: Պարսպապատերն ունեն ուրարտական ամրաշինությունը բնորոշ անկյունային աշտարակներ և որմնահեցեր: Դրանք դուրս են գալիս պատից 1.05–1.1 մ, միջինում ունեն 5 մ լայնություն և գտնվում են միմյանցից հավասարաչափ՝ 8 մ հեռավորություն վրա²⁷: Ապահովելու համար պարիսպների ամրությունը բիսյնացի շինարարները ձգտում էին պատերի հիմքերը դնել մայր ժայռի վրա՝ աստիճանաձև հարթեցնելով ժայռը պարսպի հաստությունը համապատասխան՝ հաճախ ամրություն համար տալով որոշակի թեքություն դեպի ներս²⁸: Հարթեցված «աստիճաններ»-ի վրա դրվում էր պարսպի քարե հիմքը, որը շարվել է բազալտ և տուֆ քարերով: Էրեբունիում քարե հիմնապատի բարձրությունը կազմում է առնվազն 3 մ²⁹, որի վրա բարձրացվել է հում աղյուսի պատը³⁰ պարսպապատի ընդհանուր բարձրությունը հասցնելով 10–12 մ: Առավել լավ են պահպանվել միջնաբերդի հարավարևմտյան հատվածում շուրջ 50 և հարավային հատվածում շուրջ 60 մ երկարությամբ ձգվող պարսպապատերը³¹:

Էրեբունիում պատերը բարձրացնելու համար կիրառել են երկու տիպի աղյուսներ՝ քառակուսի և ուղղանկյունաձև, համապատաս-

Ֆ ա դ ա ր յ ա ն. Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը նախնադարյան-համայնական հասարակարգի և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում. – Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 80:

²⁶ Ամրոցի միջնաբերդի զբաղեցրած տարածքի տարբեր չափեր է նշում Կ. Լ. Հովհաննիսյանը՝ նախ՝ 6 հա [К. Л. Оганесян. Арин-берд (Ганли-тапа), с. 80], ապա՝ 2 հա (նույնի՝ Арин-берд I, с. 16), այնուհետև՝ 8 հա (նույնի՝ Крепость Эребуни, с. 43): Տես և հմմտ. նաև՝ А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 236 (մինչև 3 հա); К. Јакуביак. The Development of Defence System of Eastern Anatolia (The Armenian Upland): From the Beginning of the Kingdom of Urartu to the End of Antiquity. Warszawa, 2003, p. 17 (2 հա):

²⁷ К. Л. Оганесян. Арин-берд I, с. 17; նույնի՝ Крепость Эребуни, с. 40.

²⁸ Էրեբունիի համար տե՛ս, մասնավորապես, Մ. Իսրայելյան. նշվ. աշխ., էջ 29:

²⁹ К. Л. Оганесян. Крепость Эребуни, с. 120.

³⁰ Մանրամասն տե՛ս Կ. Լ. Հովհաննիսյան. Ուրարտական ճարտարապետություն. – Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 190–197:

³¹ К. Л. Оганесян. Арин-берд I, с. 17.

խանարար՝ $47.4 \times 47.4 \times 12.5$ և $32.3 \times 47.4 \times 12.5$ սմ չափերով³²: Պատերը սվաղվել են հարդախառը կավաշաղախով, որի վրա խորագիրը գծերով վերարտադրվել է աղյուսի շարվածքը: Ընդհանուր առմամբ, միայն էրեբունու պարսպապատերը բարձրացնելու համար օգտագործվել է շուրջ 520 հազ. հոսմ աղյուս: Ամրոցի կառույցների տանիքը ծածկելու համար օգտագործվել են բարդու, թեղու ու սոճու ծառեր: Ընդ որում, եթե բարդին և թեղին աճում են Արարատյան դաշտավայրի գետահովտային շրջաններում, ապա սոճին բնորոշ է այս տարածքին. ամենայն հավանականությամբ, դրա փայտը բերվել է Կաղզվանի կամ Կարսի տարածքից³³:

Ամրոցի ելումուտն ապահովվել է երկու մուտքերի միջոցով: Դրանցից առաջինը բացվել է 1958 թ. և երկար ժամանակ համարվում էր ամրոցի միակ մուտքը: Այն գտնվում է միջնաբերդի հարավարևելյան կողմում, բլրի առավել դյուրամատչ հատվածում³⁴: Ունեցել է միևնույն առանցքով հաջորդաբար տեղադրված զույգ դարպասներ³⁵:

Երկրորդ մուտքը հայտնաբերվել է ամրոցում իրականացված նոր պեղումների ընթացքում³⁶: Այն բացվել է արևմտյան պարսպապատի մեջ, լայնությունը կազմում է մոտ 4 մ, իսկ այստեղից սկիզբ առնող «փողոց»-ը տանում է դեպի Խալդի աստծո տաճար: Այդ դարպասը, միջնաբերդի գոյություն ինչ-որ մի փուլում, փակվել է քարե շարվածքով³⁷. Հետաքրքիր մի երևույթ, որը նկատվում է Ք. ա. VII դարում ուրարտական այլ ամրոցներում ևս³⁸ ու կապված էր պետությունների ստեղծման անկախությունների հետ³⁹:

³² Նույն տեղում, էջ 103, նույնի՝ Крепость Эребуни, с. 118–119.

³³ В. А. П а л а н д ж я н. Древесные остатки из раскопок Аринберда. — «Известия» АН АрмССР, биологические науки, 1964, т. XVII, № 11, с. 49–53.

³⁴ К. Л. О г а н е с я н. Арин-берд I, с. 17, рис. 3; նույնի՝ Крепость Эребуни, с. 42, рис. 22.

³⁵ К. Л. О г а н е с я н. Крепость Эребуни, с. 42.

³⁶ S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, D. Stronach. Նշվ. աշխ., էջ 124–126, նկ. 3, 7; S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, J. Traina, V. Mutarelli, G. Davtian. The Surroundings of the Khaldi, Temple, p. 150, Fig. 6, S. Deschamps. Erebuni in the context of Urartean Fortresses in the Ararat Plain: Sources and Problems. — “Quaternary International” 395, 2016, p. 212.

³⁷ S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, D. Stronach. Նշվ. աշխ., էջ 127–128, 132:

³⁸ Տե՛ս, օրինակ, Ch. A. Burney. A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalidere. — “Anatolian Studies” 16, 1966, pp. 66–67, pl. III/b; O. Belli. 1994 Yılı Aşağı ve Yukarı Anzaf Urartu Kaleleri Kazısı. — “Kazı Sonuçları Toplantısı” 17/1, 1996, s. 386–388, Res. 6–9.

³⁹ Y. H. Grekryan. When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire). — “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”

Միջնաբերդի ներքին տարածքը կառուցապատելու համար բլրի խորդուբորդ գագաթը նախապես խնամքով հարթեցվել է մի քանի մակարդակի, որոնց վրա բարձրացված կառույցները միմյանց հետ հաղորդակցվել են քարե աստիճաններով: Քառակուսի և ուղղանկյունաձև հատակագծով կառույցները դասավորված էին կենտրոնական «հրապարակ»-ի կամ ներքին բակի շուրջը (14 × 17 մ): Ընդհանուր առմամբ, միջնաբերդում բացվել է շուրջ իննսուն սենյակ և սրահ⁴⁰:

Միջնաբերդի առավել բարձրադիր հատվածում՝ «հրապարակ»-ի հարավարևմտյան անկյան մոտ է կառուցվել ամրոցի գլխավոր պաշտամունքային կառույցը, որի արևելյան պատին պահպանված ութ տողանի արձանագրություն մեջ այն հանդես է գալիս իբրև խալդի աստուծ համար կառուցված «տուն»⁴¹: Վերջինս իր հատակագծով պետք է մոտ լիներ ուրարտական պաշտամունքային «ստանդարտ» կառույցներին՝ աշտարակատիպ «սուսի»-տաճարներին, թեև, իր չափերով զգալիորեն գերազանցում է մեզ հայտնի «սուսի»-տաճարներին: Նախկինում «Խալդիի տուն»-ը պատկերացվել է որպես քառակող աշտարակաձև կառույց՝ նման միջագետքյան «զիկկուրատներ»-ին՝ կից 12-սյունանի կիսաբաց սրահով⁴²: Սակայն վերջին տարիներին էրեբունիում իրականացված պեղումներն աստիճանաբար ուրվագծում են ամրոցի նախնական ճարտարապետության այլ պատկեր, քան վերականգնվել է խորհրդային ժամանակներում⁴³: Դա վերաբերում է ինչպես աշտարակաձև տաճարին, այնպես էլ՝ նրան հյուսիսային կողմից կցված կառույցներին, որոնց շարքում է նաև վերը նշված սյունասրահը⁴⁴: Հետագա պեղումները, պետք է հուսալ, հնարավորություն կտան էլ ավելի հստակեցնելու մեր պատկերացումները «Խալդիի տան» ճարտարապետական տեսքի մասին: Համենայն դեպս, արտահայտված կարծիքը «Խալդիի տան» և «սուսի»-

4/2, 2009, pp. 98–126; Ե. Հ. Գրեկյան. Վանի թագավորության անկման խնդրի շուրջ. – Հայկագունիներ. առասպել և պատմություն, Երևան, 2013, էջ 64–82:

⁴⁰ К. Л. Оганесян. Крепость Эребуни, с. 43.

⁴¹ КУКН, 202; СТU I, А 8–24.

⁴² К. Л. Оганесян. Арин-берд I, с. 51–57, рис. 25а-б, 27; Ն ու յ ն ի՝ Крепость Эребуни, с. 59–65, рис. 45–46.

⁴³ Այս մասին տե՛ս, օրինակ, D. Stronach, H. Thraane, C. Goff, A. Farahani, Y. Grekyan. Նշվ. աշխ., էջ 125–126, S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, D. Stronach. Նշվ. աշխ., էջ 121–122, 125:

⁴⁴ Ф. Тер-Мартиросов. Новые археологические данные по памятникам Армении Ахеменидского периода, с. 124–125; Ն ու յ ն ի՝ Раскопки крепости Эребуни, с. 154; Ն ու յ ն ի՝ Фрески Эребуни урартского и ахеменидского времени. – «Вестник общественных наук» НАН РА, 2005, № 1, с. 50–51; D. Stronach, H. Thraane, C. Goff, A. Farahani, Y. Grekyan. Նշվ. աշխ., էջ 112–115, նկ. 9.

տաճարի նույնականություն մասին⁴⁵, նաև ճարտարապետական հորինվածքի առումով⁴⁶, չպետք է բացառել: Այստեղ հետաքրքիր է նաև, որ Էրեբունիի «Խալդիի տան»՝ վերը նշված կառույցն ունեցել է որմնախորշ՝ խորհրդանշական դռան տեսքով⁴⁷:

Միջնաբերդի մի զգալի մասը զբաղեցնում էր, այսպես կոչված, «պալատական հատված»-ը: Որպես այդպիսին էր դիտարկվում միջնաբերդի հյուսիս-կենտրոնական հատվածը՝ հիմք ընդունելով կենտրոնական «հրապարակ»-ից այստեղ տանող մուտքի երկու պատերին թողնված և ձախ պատին *in situ* հայտնաբերված արձանագրությունը⁴⁸: Դրանում ասվում էր Արգիշթի Մինուայորդու կողմից É.GAL կառուցելու մասին⁴⁹: Պալատական համալիրի պատերը պահպանվել են 3–5 մ բարձրությամբ և հատակ ուրվագծում են կառույցների հատակագիծը: Համալիրի համար կենտրոն է ծառայել սյունազարդ, այսպես կոչված, «պերիստիլ» բակը, որի շուրջը համախմբված էին մյուս սենյակները⁵⁰: Համալիրի հանդիսավոր հատվածը բաղկացած է երեք սենյակից և կից սրահից, որը, մինչև հետագա վերականգնումները, ծառայել է որպես կառավարչի հարկաբաժին: Սենյակների պատերը, նաև տանիքը պահող հորիզոնական զցված գերանները ներկված են եղել վառ կարմիր կամ կապույտ գույներով, իսկ հանդիսավոր սրահների պատերը զարդարվել են հարուստ որմնանկարներով⁵¹:

Մյուս կողմից, որպես կանոն, ուրարտական ճարտարապետության մեջ «պալատական հատված»-ի առանցքը կազմել է սյունազարդ կամ մույթերով ուղղանկյունաձև հանդիսավոր սրահը⁵²: «Պե-

⁴⁵ Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Էրեբունի քաղաքը.– ՊԲՀ, 1968, № 3, էջ 11, КУКН, 200, прим. 1.

⁴⁶ Ф. Т е р - М а р т и р о с о в. Новые археологические данные по памятникам Армении Ахеменидского периода, с. 124; Ն ու յ ն ի՝ Раскопки крепости Эребуни, с. 154; D. S t r o n a c h, H. T h r a n e, C. G o f f, A. F a r a h a n i, Y. G r e k y a n. Նշվ. աշխ., էջ 104, նկ. 6:

⁴⁷ D. S t r o n a c h, H. T h r a n e, C. G o f f, A. F a r a h a n i, Y. G r e k y a n. Նշվ. աշխ., էջ 110–112, 127, նկ. 6, 8–9, աղ. 18/1:

⁴⁸ К. Л. О г а н е с я н. Крепость Эребуни, с. 43–44.

⁴⁹ КУКН, 199; СТУ I, А 8–20.

⁵⁰ Մանրամասն նկարագրությունը տե՛ս К. Л. О г а н е с я н. Аринберд I, с. 24–32, рис. 4–10; Ն ու յ ն ի՝ Крепость Эребуни, с. 44–48; Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 30–35:

⁵¹ Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Էրեբունիի որմնանկարները, Երևան, 1973:

⁵² Y. H. G r e k y a n. The Settlement Size and Population Estimation of the Urartian Cities.– Bridging Times and Spaces. Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies Honouring Gregory E. Areshian on the Occasion of His Sixty-Fifth Birthday. Oxford, 2017, pp. 107–110, Figs. 3.1–3.2, 4.1–4.2; Ն ու յ ն ի՝ Քաղաքաշինությունը և քաղաքաշինական միտքը Բիայնիլի-Ուրարտում, էջ 228–231:

րիստիլ» բակի շուրջ կառուցված համալիրը, այստեղ «սուսի»-տաճարի գոյությունը չի տեղավորվում այդ մտածողութայն մեջ և մղում է «պալատական հատված»-ը որոնելու այլ վայրում: Այդպիսին կարող էր լինել «հրապարակ»-ից հյուսիս-արևելք ընկած խոշոր սրահը՝ մոտ 500 մ² մակերեսով (37.8 × 13.2 մ): Վերջինս ծառայում էր իբրև մառան՝ շուրջ 100 խոշոր կարասներով: Սակայն այստեղից գտնված սրբատաշ խոշոր խարխիսները՝ «տան» կառուցման մասին հաղորդող Արգիշթի արձանագրություններով⁵³, ինչպես նաև հարուստ պատկերազարդված որմնանկարների հայտնաբերման փաստը խոսում է կառույցի՝ նախկինում ունեցած այլ նշանակութայն մասին: Ամենայն հավանականությամբ, սկզբնապես կառույցը ծառայել է որպես հանդիսավոր սրահ և հետագայում է միայն, առայժմ անհայտ պատճառներով, կորցրել իր գործառույթն ու վերափոխվել մառանի⁵⁴:

Ուշագրավ է, որ նախնական հատակագծում «պալատական հատված»-ը փոքր տարածք է զբաղեցրել, բայց հետագայում, հնարավոր է՝ դեռևս Արգիշթի Մենուայորդու գահակալութայն շրջանում, ընդարձակվել է հարավարևելյան ուղղությամբ: Դրա արդյունքում արտաքին պարսպապատը և որմնահեցերը մնացել են նորակառույց սենյակների ներսում՝ կազմելով յուրատեսակ երևույթներ⁵⁵: Այդ նոր կառուցապատումը, միգուցե, կապված էր «պալատական հատված»-ում նոր՝ Իուբշա աստծուն ընծայված «սուսի»-տաճարի կառուցման հետ⁵⁶: Վերջինս գտնվում է ոչ թե «պերիստիլ» բակի կենտրոնական առանցքի ուղղությամբ, այլ կառուցվել է զգալի շեղումով՝ հարավային կողմից դեպի բակ բացվող հինգ սենյակներով կառույցի ճակատին զուգահեռ՝ այդ կառույցի և «սուսի»-տաճարի միջև թողնելով մի նեղ միջանցք (0.8 մ): Դա բնորոշ է ներարտական կառույցներին և ակնհայտորեն խանգարելու էր այդ սենյակներ մուտք գործելուն⁵⁷: Հետևաբար, չի բացառվում, որ Իուբշայի տաճարը կառուց-

⁵³ КУКН, 203–206; СТU I, А 8–23 А-D.

⁵⁴ К. Л. Оганесян. Эребуни. К 2750-летию основания Еревана. Ереван, 1968, с. 37–39; Ն ու յ ն ի՝ Крепость Эребуни, с. 48–49, рис. 37; Ա. Փ ի լ ի պ ո ս յ ա ն, Մ. Բ ա դ ա լ յ ա ն, Ա. Զ ա ք յ ա ն, Տ. Զ ա ք յ ա ն, Գ. Թ ու մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 26:

⁵⁵ К. Л. Оганесян. Крепость Эребуни, с. 44. Այդ նույն երևույթը նկատվում է նաև ամրոցի հարավային հատվածում (տե՛ս К. Л. Оганесян. Նույն տեղում, էջ 65):

⁵⁶ КУКН, 195–196; СТU I, А 8–21А-В. Մանրամասն նկարագրությունը տե՛ս К. Л. Оганесян. Арин-берд I, с. 32–37, рис. 11–14; Ն ու յ ն ի՝ Крепость Эребуни, с. 50–56, рис. 39–40.

⁵⁷ Նկատենք, որ սենյակների դռների լայնությունը 95 սմ է և բացվել են դեպի միջանցք: Մինչդեռ միջանցքի լայնությունը ցույց է տալիս, որ այդ դռները չէին կարող ամբողջությամբ բացվել: Հմմտ. Մ. Բ ա դ ա լ յ ա ն. էրեբունու susi տաճարի որոշ խնդիրների շուրջ.– Պատմամշակու-

վել է «պերիստիլ» բակի շուրջը համախմբված համալիրի կառուցապատումից ավելի ուշ: Ինչպես երևում է, համալիրը, տաճարի կառուցումից հետո, փոխել է իր նշանակությունը, դրա սենյակներն ու մթերանոցները հատկացվել են տաճարը սպասարկող անձնակազմին, ինչով էլ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել էսպես ընդարձակելու միջնաբերդի «պալատական հատված»-ը նոր կառույցներով:

Արմատական վերակառուցումների է ենթարկվել նաև միջնաբերդի հարավային հատվածը⁵⁸: Այստեղ է գտնվում, այսպես կոչված, դիտակետ-«պորտիկ»-ը՝ վեց սյուներով կառույցը⁵⁹: Նախկինում այն համարվում էր ուրարտական դարաշրջանի կառույց⁶⁰: Սակայն, ամենայն հավանականությամբ, այդ կառույցը և այս հատվածում իրականացված վերակառուցումներն ընդհանրապես պետք է թվագրվեն հետուրարտական շրջանով⁶¹:

Միջնաբերդի հյուսիսային հատվածում բացված հիմնականում տնտեսական նշանակության սենյակները կառուցվել են բլրի թեք լանջն ի վար: Դրանց առաստաղները, կարելի է մտածել, գտնվել են տարբեր բարձրության վրա, ինչն էլ հնարավորություն է տվել լուծելու սենյակների լուսավորության հարցը: Լույսը սենյակ է թափանցել առաստաղի տակ գտնվող պատուհաններից, իսկ նույն հարթության վրա գտնվող կից սենյակները, հնարավոր է, լուսավորվել են երդիկից կամ ընդհանրապես զուրկ են եղել արտաքին լուսավորությունից: Էրեբունիի որոշ սենյակներում հայտնաբերված ճրագամանները կարող են լինել դրա վկայությունը⁶²:

Ամրոցում բացված բազմաթիվ սենյակներ նախատեսված են եղել մի քանի հարյուրի հասնող կայազորի և սպասարկող անձնակազմի համար: Դրանց թվում են «պալատական հատված»-ի մուտքից դեպի ձախ բացված հինգ, ինչպես նաև երբեմնի կենտրոնական սյունա-

թային ժառանգության պահպանման հիմնախնդիրները, միջազգային գիտաժողովի նյութեր, 2013 թ. սեպտեմբերի 28–27, Երևան, 2013, էջ 9:

⁵⁸ К. Л. Оганесян. Крепость Эребуни, с. 65.

⁵⁹ Նույն տեղում, էջ 42:

⁶⁰ С. Е с а я н, Л. А б а д ж я н, Г. А в е т и с я н. Колонные залы и портики Урарту. — «История и культура: Арменоведческий журнал (сборник научных статей)», т. 3, 2014, с. 420–421.

⁶¹ Ф. Т е р - М а р т и р о с о в. Фрески Эребуни урартского и ахеменидского времени, с. 50; R. D a n, R. L a F a r i n a. Arin-Berd: Una fortezza dell'età del ferro nella valle dell'Arasse.— “L'Unione; Bollettino della Unione storia ed arte” 6, 2011, 231. Հմմտ. R. D a n. A New Interpretation of the ‘External Portico’ of Arin-Berd/Erebuni, Armenia.— “Ash-Sharq” 1/2, 2017, p. 221.

⁶² С. И. Х о д ж а ш, Н. С. Т р у х т а н о в а, К. Л. О г а н е с я н. Эребуни. Памятник урартского зодчества VIII—VI в. до н. э. М., 1979, с. 16.

զարդ սրահին արևելքից կցված վեց միանման սենյակները և սրահին հյուսիսից հարող բաժանմունքները⁶³:

Լեռնաշխարհի կլիմայական պայմանները, ինչպես նաև երկարատև պաշարման հավանականությունը մղում էր ամրոցները կառուցել ջրի աղբյուրների մոտ: Էրեբունիի պեղումների ժամանակ հայտնաբերվել է տուֆակերտ խողովակաշար, որով, ինչպես ենթադրվում է, խմելու ջուր է հասցվել ամրոց⁶⁴: Բացի դա, ամրոցն ունեցել է ջրահեռացման համակարգ: Քարե սալերով ծածկված, մոտ 0.7 մ խորությունամբ տուֆաշար համակարգի մի հատվածն անցնում էր վերը նշված «պերիստիլ» բակի տակով, երկրորդ ճյուղն ամրոցի կենտրոնական «հրապարակ»-ից ձգվում էր հարավարևմտյան ուղղությամբ՝ անցնելով 12-սյունանի կառույցի տակով, ու անձրևաջրերը տանում էր դուրս⁶⁵: Շատ ավելի փոքր տրամաչափի մեկ այլ ճյուղ է բացվել ամրոցի երկրորդ մուտքից սկիզբ առնող և դեպի կենտրոնական «հրապարակ» տանող փողոցի տակ: Ընդ որում, փոքր խճաքարերով սալարկված փողոցը կենտրոնական հատվածում խորանում էր՝ դրանով իսկ անձրևաջրերն ուղղելով դեպի շրջանաձև ջրահավաք ավազանը, որի կենտրոնում բացված անցքով դրանք թափվում էին համակարգի մեջ և դուրս հոսում ամրոցից⁶⁶:

«Արտաքին քաղաք»-ը

Դեռևս 1947 թ. Կ. Հովհաննիսյանի իրականացրած առաջին հետախուզական աշխատանքների ընթացքում պարզվեց, որ ուրարտական շինություններով է կառուցապատվել ոչ միայն բլրի գագաթը, այլև՝ դրա շրջակայքը⁶⁷: Կառույցների հետքեր և ուրարտական պալատական խեցեղենի բեկորներ են հայտնաբերվել միջնաբերդից դեպի հյուսիս, արևելք ու հարավ ընկած ողջ գոտու վրա⁶⁸: Այստեղ էին գտնվում բնակելի թաղամասերը կամ, այսպես կոչված, «արտաքին քաղաք»-ը՝ զբաղեցնելով մոտ 50 հա տարածք⁶⁹:

⁶³ К. Л. Оганесян. Крепость Эребуни, с. 47–48.

⁶⁴ К. Л. Оганесян. Арин-берд I, с. 18–19, рис. 62–63; *Ն ու լ յ ն ի՝* Крепость Эребуни, с. 47.

⁶⁵ К. Л. Оганесян. Арин-берд I, с. 29, 53; *Ն ու լ յ ն ի՝* Крепость Эребуни, с. 46, 61.

⁶⁶ S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, D. Stornach. *Նշվ. աշխ., էջ 128–129, աղ. XIV1–2, XV1*; S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, J. Traina, V. Mutarelli, G. Davtian. *Նշվ. աշխ., էջ 151–152, նկ. 9, 15–16.*

⁶⁷ К. Л. Оганесян. Арин-берд (Ганли-тапа), с. 76.

⁶⁸ И. М. Лосева. Раскопки цитадели урартского города Ирпуни. — «Краткие сообщения о докладах и полевых исследованиях института истории материальной культуры», 1955, № 58, с. 46; К. Л. Оганесян. Арин-берд (Ганли-тапа), с. 76; *Ն ու լ յ ն ի՝* Крепость Эребуни, с. 33.

⁶⁹ К. Л. Оганесян. Арин-берд I, с. 15. *Սակայն, հետագա հրատարակություններում Կ. Հովհաննիսյանը մի դեպքում նշում է 100*

«Արտաքին քաղաք»-ի կառուցապատման մասին, ցավոք, քիչ բան է հայտնի: Խորհրդային շրջանում այստեղ իրականացված պեղումները կարճատև էին⁷⁰ և առայժմ միայն հաստատագրվել են ընդարձակ առանձնատների ու մի քանի սենյակից բաղկացած անկանոն և խիտ կառուցված տների հիմնապատեր⁷¹: Բնակելի տների պատեր փաստագրվել են նաև 1998 թ. իրականացված կարճատև պեղումների ժամանակ: Մասնավորապես, ամրոցի հարավային լանջի դիմաց բարձրացող փոքր բլրի վրա բացված հիմքում քարաշեն, հում աղյուսի պատերով «առանձնատուն»-ը, դատելով հայտնաբերված գուլքից (հողի մեջ թաղված կարասներ, բրոնզե գոտու հատված, ուրարտական պալատական խեցեղենի բեկորներ), պատկանել է վերնախավի ներկայացուցչի⁷²:

Երեբունու 2007 թ. պեղումների ընթացքում միջնաբերդից մոտ 150 մ հարավ-արևելք ընկած բլրի վրա բացվեց ուղղանկյունաձև ընդարձակ կառույց՝ բազմաթիվ բաժանմունքներով, սենյակներից մեկը պարունակում էր հողի մեջ թաղված խոշոր կարասների բեկորներ⁷³: Առկա գուլքահեռները հուշում են, որ այդ շինությունը նույնպես պատկանել է վերնախավի ներկայացուցչի: 2009 թ. բլրից դեպի հարավ-արևելք մոտ 200 մ հեռավորությամբ գտնվող բարձունքների գեոմագնիսական ուսումնասիրությունները ցույց տվեցին այստեղ երկու խոշոր ուղղանկյունաձև կառույցների գոյությունը: Դրանք կարող էին լինել պետական պատվերով կառուցված շինություններ⁷⁴. Հնարավոր է, որ դրանք արքունի ախոռներ էին⁷⁵: Կառու-

հա թիվը (К. Л. Оганесян. Эребуни, с. 26), մեկ այլ դեպքում՝ 200 հա (նույնի՝ Крепость Эребуни, с. 33): Այդ թվերը հավաստի փաստարկել ոչ մի կերպ հնարավոր չէ և, ինչպես մեզ է թվում, խիստ չափազանցված է (տե՛ս Y. H. G r e k y a n. The Settlement Size and Population Estimation of the Urartian Cities, pp. 120–121 and n. 157.

⁷⁰ К. Л. Оганесян. Эребуни, с. 59.

⁷¹ С. И. Ходжаш, Н. С. Трухтанова, К. Л. Оганесян. *Նշվ. աշխ.*, էջ 17–18, S. H o d j a s c h. Das Leben in der urartäischen Stadt Erebuni.– Vorträge gehalten auf der 28. Rencontre Assyriologique Internationale in Wien 6.-10. Juli 1981.– “Archiv für Orientforschung”, Beiheft 19, 1982, S. 271.

⁷² Ф. Тер-Мартиросов. Раскопки крепости Эребуни, с. 153.

⁷³ D. Stronach, F. Ter-Martirosov, A. Ayvazian, W. Collins, C. Demos, S. Ghaniati. *Նշվ. աշխ.*, էջ 181–206, նկ. 2, աղ. 1–8:

⁷⁴ M. Herles, J. W. E. Fassbinder. Magnetic Prospecting on Basaltic Geology: the Lower City of Erebuni (Armenia).– “Archaeologia Polona” 53, 2015, pp. 292–296, fig. 2.

⁷⁵ Կ. Լ. Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն. Ուրարտական ճարտարապետություն. – Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 115:

ցապատված են եղել նաև միջնաբերդի պարսպապատերից դուրս՝ բլրի՝ Հյուսիս և Հյուսիսարևմտյան լանջերին բացված դարավանդները⁷⁶:

Այսպիսով, առկա սուղ տվյալները թույլ են տալիս կազմելու «արտաքին քաղաք»-ի խիստ ընդհանուր պատկեր: Կարելի է մտածել, որ, ինչպես ուրարտական մյուս քաղաքները, էրեբունիում ևս քաղաքային թաղամասերը զուրկ էին պաշտպանական պարիսպներից, կառուցապատված էին ազատ տեղաբաշխված ընդարձակ առանձնատներով, այսպես կոչված, ուրարտական վերնախավի տներով: Քարե հիմքերի վրա բարձրացվել է հում աղյուսի պատը, որը տեղ-տեղ պահպանվել էր մինչև 1 մ բարձրությամբ, տներում հայտնաբերվել են բավական խոշոր՝ մինչև 120 սմ տրամագծով կարասների բեկորներ⁷⁷: Բնակչության մյուս հատվածը բնակվում էր համեմատաբար փոքր, մի քանի սենյակից կազմված տներում: Նման տներով թաղամասերն ուրարտական վերնախավի թաղամասի համեմատությամբ առավել խիտ են կառուցապատված⁷⁸:

էրեբունու դամբարանադաշտը տարածվել է քաղաքից դեպի Հյուսիս-արևմուտք⁷⁹: Այստեղ բացվել են վերնախավի ներկայացուցիչների դամբարաններ, որոնք առանձնանում են թաղման հարուստ գույքով⁸⁰:

էրեբունու տաճարային-պալատական տնտեսությունը

Արարատյան դաշտավայրը՝ երկրագործության համար պիտանի շուրջ 200 հազ. հա հողերով, ուրարտական տերությունից առավել ընդարձակ երկրագործական գոտին էր և երկրի տնտեսության համար ուներ չափազանց կարևոր նշանակություն: Ուրարտուի ծնունդը՝ իբրև երկրագործության վրա հիմնված հին առաջավորասիական

⁷⁶ Ф. Тер - Мартинрозов. Раскопки крепости Эребуни, с. 156; Ն ու յ ն ի՝ Раскопки на северном склоне крепости Эребуни, с. 148; Ն ու յ ն ի՝ Stamps and Images on the Ceramics of the Urartian Period from Erebuni, pp. 135–136; Ա. Փ ի լ ի պ ո ս յ ա ն, Մ. Բ ա դ ա լ յ ա ն, Ա. Ջ ա ք յ ա ն, Տ. Ջ ա ք յ ա ն, Գ. Թ ու մ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 26–27:

⁷⁷ S. H o d j a s c h. Նշվ. աշխ., էջ 271–272; R. D a n, R. L a F a r i n a. Նշվ. աշխ., էջ 238:

⁷⁸ Y. H. G r e k y a n. The Settlement Size and Population Estimation of the Urartian Cities, pp. 114–120, Fig. 9.1–9.8, 10.1–10.7 (հղված գրականությամբ), Ն ու յ ն ի՝ Քաղաքաշինությունը և քաղաքաշինական միտքը Բիայնիլի-Ուրարտուում, էջ 238:

⁷⁹ К. Л. О г а н е с я н. Крепость Эребуни, с. 34.

⁸⁰ Հ. Մ ա Ր տ ի Ր ո ս յ ա ն, Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Նոր-Արեշի ուրարտական կոլումբարին.— ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1958, №10, էջ 63–84, նկ. 1–2, 4, աղ. 1–6; А. А. М а р - т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа, с. 242–251, табл. XXIV–XXV.

տիպի պետություն, անհրաժեշտություն էր առաջ բերում ամբողջությամբ վերածնունդ լանդշաֆտը՝ հատկապես բերրի հողեր ունեցող, սակայն, անջրգի հովտային ու հարթավայրային շրջաններում: Այդ առումով ուրարտական արձանագրությունների պնդումը՝ տարածքի ամառի լինելու, ինչպես նաև ջրանցքների, արտերի, խաղողի այգիների ու պտղատու ծառերի բացակայություն մասին, ըստ երևույթին, իրականության պարզ արտացոլում էր⁸¹: Արարատյան դաշտավայրում հնարավոր է գրավել անջրգի երկրագործությամբ, ուստի և ուրարտական իշխանությունները ձեռնամուխ են լինում հսկայածավալ հիդրոշինարարական աշխատանքների իրականացմանը: Դա են վկայում Արգիշթի Մենուայորդու երկու արձանագրություններ: Դրանցից առաջինը հայտնում է մայր ջրանցքի, երկրորդը՝ Արգիշթիխինիլի քաղաքի կառուցման հետ չորս այլ ջրանցքներ անցկացնելու մասին⁸²: Հնագիտորեն վկայված այդ ջրանցքների ընդհանուր երկարությունը կազմել է շուրջ 50 կմ⁸³: Էրեբունու հիմնադրման կապակցությամբ խոշորածավալ ջրանցքաշինական աշխատանքներ են իրականացվել Հրազդան գետի ստորին հոսանքի շրջանում՝ ապահովելու քաղաքի մերձակա հողերի ոռոգումը⁸⁴:

Էրեբունի ամրոցն ուրարտական տերության ռազմական գլխավոր հանգրվանն էր Արարատյան դաշտավայրում⁸⁵: Տեղի վարչակազմի, սպասարկող անձնակազմի, կայազորի և, ընդհանրապես, պալատական-տաճարային համակարգի հետ կապված բնակչության խավերի կարիքները հոգալու համար ամրոցում կառուցվել են հացահատիկի մի քանի խոշոր շտեմարաններ (Ewari):

Էրեբունու շտեմարանները գտնվել են միջնաբերդի հյուսիսարևելյան հատվածում: Դրանք խուլ պատերով կառույցներ էին, ուր մուտքն ապահովվում էր վերևից, թերևս, փայտե աստիճանների միջոցով⁸⁶: Ամրոցի շտեմարանների կարևորության մասին է վկայում այն փաստը, որ դրանց կառուցմանն են վերաբերում միջնաբերդից հայտնաբերված 23 արձանագրություններից 11-ը: Շտեմարանների ընդհանուր տարողությունը, ըստ պահպանված տեքստերի,

⁸¹ КУКН, 197–198; СТУ I, А 8–17 А–В.

⁸² КУКН, 187–188; СТУ I, А 8–15 – 8–16.

⁸³ А. А. М а р т и р о с я н. Аргиштихинили. — «Археологические памятники Армении», 8: Урартские памятники I. Ереван, 1974, с. 24, рис. 7, 37.

⁸⁴ Г. А. А г а х а н я н, Р. С. М а р т и р о с я н. Водохозяйственное строительство в связи с основанием города Эребуни. — ИФЖ, 1984, № 4, с. 194–198.

⁸⁵ Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики. Ереван, 1970, с. 210–211.

⁸⁶ К. Л. О г а н е с я н. Арин-берд (Ганли-тапа), с. 86; Ն ու յ ն ի՝ Арин-берд I, с. 18; Ն ու յ ն ի՝ Крепость Эребуни, с. 59.

կազմել է 106 հազ. 748 *kari*⁸⁷: Դա մոտավորապես 2 հազ. տ է կամ մոտ 2670 հազ. լ: Նման խոշոր շտեմարանների առկայությունն էրեբունիում (պահպանված տվյալներով՝ պետական շտեմարանների ընդհանուր տարողություն 1/4-ից ավելին) պայմանավորված էր այն հանգամանքով, որ ամրոցը զորքերի կենտրոնացման վայր էր և ծառայում էր որպես ռազմական հենարան արքաների հետագա արշավանքների համար:

Շուրջ 2 հազ. տ հացահատիկ ստանալու համար, հաշվի առնելով Արարատյան դաշտավայրի միջին բերքատվությունն ուրարտական շրջանում⁸⁸, անհրաժեշտ կլինեք մշակել մոտավորապես 2.8 – 3.2 հազ. հա հողատարածք: Դրան գումարելով ցելը, որը կարող էր կազմել հողերի մինչև կեսը, էրեբունու մառանները լցնելու համար անհրաժեշտ խաղողի, ինչպես նաև մրգատու այգիների ու տեխնիկական մշակաբույսերի զբաղեցրած տարածքը, լծկաններին կերով ապահովելու համար անհրաժեշտ ցանքսը (մոտ 300 զույգ լծկան կենդանու հաշվարկով), ապա կարելի է ենթադրել, որ էրեբունու երկրագործական գոտին կազմել է շուրջ 6 հազ. հա կամ 60 կմ²: Նման տարածք մշակելու համար անհրաժեշտ կլինեք մոտավորապես 1.7 հազ. աշխատող:

Վերաբաշխման ենթակա ամրոցի հացահատիկի պաշարները կազմել են ողջ քանակության 60 տոկոսը: Եթե ընդունենք՝ էրեբունու կայազորը բաղկացած էր լինելու ոչ պակաս, քան 300 զինվորից, իսկ յուրաքանչյուր զինվորի համար նախատեսված էր 1 լ գարի որպես օրապահիկ, հաշվի առնելով նաև այն քանակությունը, որն անհրաժեշտ կլինեք ամրոցի արքունի ախոռի ձիերին կերակրելու համար (60–70 ձիու հաշվարկով⁸⁹), ապա մնացյալ քանակությունը կբավարարեր 4–5 հոգուց կազմված շուրջ 1550 ընտանիքի կամ 6200-ից 7750 բնակչի ողջ տարվա սնունդը հոգալու համար: Ընդհանուր առմամբ, էրեբունու հացահատիկի պաշարները, եթե ամբողջությամբ օգտագործվեին մարդկանց համար որպես սնունդ, ապա

⁸⁷ Իհարկե, թեև քիչ հավանական է, բայց, այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ հիշյալ տեքստերի մի մասը կարող են լինել կրկնօրինակներ և վերաբերեն միևնույն շինությունը: Ցավոք, արձանագրությունների հայտնաբերման հնագիտական համատեքստը հնարավորություն չի տալիս ճշտելու այդ հարցը. դրանցից ոչ մեկը չի գտնվել *in situ* (տե՛ս Շ. Ի. Х о д ж а ш, Н. С. Т р у х т а н о в а, К. А. О г а н е с я н. Նշվ. աշխ., էջ 16):

⁸⁸ Ենթադրվում է, որ ուրարտական շրջանում մեկ հա-ից ստացվող հացահատիկի բերքն Արարատյան դաշտավայրում կարող էր կազմել 500–1000 կգ (տե՛ս Մ. Ա. Ե ս ա յ ա ն. Կարմիր բլուր, Երևան, 1982, էջ 19):

⁸⁹ Հաշվարկը պայմանական է: Որպես հիմք վերցնում ենք ուրարտական խոշոր կենտրոններում առնվազն մեկ արքունի ախոռի գոյություն հնարավորությունը: Բաստամի (ուրարտական «Ռուսայի փոքր քաղաք»-ը) արքունի ախոռներից մեկում, օրինակ, կարող էր պահվել մինչև 70 ձի (տե՛ս W. K l e i s s. Bastam, an Urartian Citadel Complex of the Seventh Century B.C.– “American Journal of Archaeology” 84/3, 1980, pp. 299–300).

բավարար կլինեին ապահովելու 2800 ընտանիքի կամ 11–14 հազ. մարդու մեկ տարի շարունակ:

Միջնաբերդի պեղումների ընթացքում նաև բացվել է 6 մառան: Դրանցից հինգում եղել է համապատասխանաբար 4, 7, 11, 12 և 18 կարաս: Վեցերորդ՝ խոշորագույն մառանում, պահպանվել էին 60 կարասի ստորին հատվածները և, ինչպես ենթադրվում է, կարող էր տեղավորել մոտ 100 կարաս⁹⁰: Ընդհանուր առմամբ, ամրոցի մառանները կարող էին տեղավորել մինչև 120–150 հազ. 1 գինի և յուղ:

Էրեբունիում բացված կարասների վրա տարողութայան չափը մատնանշել են հիմնականում սեպագրով: Պահպանված նշումները վերաբերում են 12 կարասների, որոնց տարողութայան չափը տատանվում էր 3 aqarqi-ից մինչև 7 aqarqi 4 țerusi⁹¹: 2008–2009 թթ. ընթացքում Էրեբունու միջնաբերդում իրականացված պեղումներից հայտնաբերվեցին կարասների երկու նոր արձանագիր բեկորներ, որոնցից առաջինի վրա նշված էր 7 a-qar-qi [x țé-ru-si (?)], իսկ երկրորդի վրա՝ [x a-qa]r-qi 5 țé-ru-si բառերը⁹²:

Հետաքրքիր է, որ Էրեբունու կարասների տարողութայան չափերը նշված են միմիայն ամբողջական բառերով: Դրանց կրճատ ձևերն այստեղ չեն հանդիպում: Ինչ վերաբերում է տարողութայան արտահայտման հիերոգլիֆային գրություններին, ապա հնարավոր չէ միանշանակ պնդել, թե կարասների շուրթերին փորագրված փոքր շրջանաձև նշաններն անպայման վարպետի թողած նշաններ են: Դրանց մի մասը, անկասկած, տարողութայան նշումներ են⁹³:

Ուրարտուում մեծ թիվ են կազմել պետական բրուտագործական արհեստանոցները, խեցեղենը պատրաստվել է բրուտի անիվի վրա,

⁹⁰ А. А. Д е м с к а я. Кладовые Эребуни. — «Сообщения Государственного музея изобразительных искусств имени А. С. Пушкина», IV. К сорокалетию археологической деятельности музея. М., 1968, с. 176; Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 80–82:

⁹¹ КУКН, 586–597; M. S a l v i n i. Corpus die testi urartei, vol. IV. Iscrizioni su bronzi, argilla e altri supporti nuove iscrizioni su pietra paleografia generale.— “Documenta Asiana” VIII/IV. Roma, CT Kb-10₁₋₂ (այսուհետև՝ CTU IV), p. 242–243.

⁹² D. S t r o n a c h, H. T h r a n e, C. G o f f, A. F a r a h a n i, Y. G r e k - y a n. Նշվ. աշխ., էջ 129–130 (այստեղ տե՛ս ուրարտական ծավալի միավորների մասին ամփոփ ակնարկը՝ համապատասխան գրականության հղումներով):

⁹³ К. Л. О г а н е с я н. Раскопки урартского города Эребуни. — «Советская археология», 1960, № 3, с. 291, рис. 5; А. А. Д е м с к а я. Նշվ. աշխ., էջ 180, նկ. 4–7, С. И. Х о д ж а ш. Знаки на урартской керамике Эребуни. — Древний Восток и мировая культура. Юбилейный сборник, посвященный 70-летию со дня рождения Б. Б. Пиотровского. М., 1981, с. 88–89, рис. 71–72, 75; Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 81:

ինչպիսին հայտնի է նաև Էրեբունուց⁹⁴։ Նման արհեստանոցների արտադրանքը մականշվում էր խեցեղենի վրա արված վարպետի նշաններով և պահեստավորվում հետագա օգտագործման նպատակով։ Էրեբունու խեցեղենի վրա պահպանվել են 5 վարպետի նշաններ⁹⁵։ Մեծ թիվ են կազմում տարբեր դրոշմները⁹⁶։

Միջնաբերդում բացված կառույցներից մի քանիսը պահեստներ են։ Դրանցից մեկում պահվել է խեցեղեն⁹⁷։ Պահեստավորված խեցեղենի քանակի մասին կարելի է դատել այն փաստից, որ, օրինակ, Կարմիր-բլուրի պահեստներից մեկում հայտնաբերվել է ավելի քան 1036 սափոր և տարբեր նշանակութային 70 խեցանոթ⁹⁸։ Այանցի (Ռուսաստանի Հիդրոլուրական քաղաքը Տուլյայից հյուսիս) երկու պահեստներից մեկը պարունակել է միայն ուրարտական «պալատական» խեցեղեն՝ գրեթե բոլորը՝ վարպետի և տարողութային նշաններով⁹⁹։ Պահեստում պահվող տարբեր մեծութային անոթների թիվը կազմել է մոտ 8 հազ.¹⁰⁰։

Ուրարտական խոշոր քաղաքներում էին կենտրոնացված երկրագործական արտադրանքը վերամշակող պետական արհեստանոցները։ Այդպիսիք լինելու էին նաև Էրեբունիում, թեև դրանց գոյութային հետքեր, հնարավոր է՝ հետագա վերակառուցումներով պայմանավորված, մեզ չեն հասել։ Քանի որ Ուրարտուում պետութունն էր հոգում մեծաթիվ զինվորների և այլ ծառայողների հագուստը, ապա հաստատապես Էրեբունիում գործել է նաև կարի արհեստանոց։ Հետաքրքիր է, որ 66 կին դերձակներ են հիշատակվում Թոփրաքքալեի պալատական-տաճարային համալիրի անձնակազմում¹⁰¹։ Վերին Անձավից գտնված սեպագիր աղյուսակներից մեկում հիշատակվում է ոմն Գուլիլի, ով նույնպես դերձակ էր¹⁰²։

⁹⁴ Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 80, աղ. XV, С. И. Х о д ж а ш, Н. С. Т р у х т а н о в а, К. Л. О г а н е с я н. նշվ. աշխ., էջ 100–101.

⁹⁵ Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 85, նկ. 8:

⁹⁶ С. И. Х о д ж а ш, Н. С. Т р у х т а н о в а, К. Л. О г а н е с я н. նշվ. աշխ., էջ 101, 108–109, նկ. 123, Ф. Т е р - М а р т и р о с о в. Новые данные о культуре Урарту, с. 131 – 136; F. T e r – M a r t i r o s o v. Stamps and Images on the Ceramics of the Urartian Period from Erebuni.– “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 4/2, 2009, pp. 127–145.

⁹⁷ Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 84:

⁹⁸ Б. Б. П и о т р о в с к и й. Кармир-блур. Альбом. Л., 1970, рис. 15.

⁹⁹ A. Ü. E r d e m. Potters' Marks in Urartu on the Basis of New Evidence from Ayanis Fortress.– “Iranica Antiqua” 48, 2013, 195.

¹⁰⁰ A. Ü. E r d e m. Urartu Kalelerinde Çanak Çömleğin Depolanmasıyla İlgili Uygulamalar.– SCRIPTA. Arkeolojiyle Geçen Bir Yaşam İçin Yazılar. Veli Sevin'e Armağan / Essays in Honour of Veli Sevin. A Life Immersed in Archaeology. İstanbul, 2014, 149, Res. 1-7.

¹⁰¹ CTU IV, CT Tk-1 R013.

¹⁰² CTU IV, CB An-11.

Էրեբունուց հայտնաբերված ուրարտական դարաշրջանի նյութական մշակույթի նմուշները, ցավոք, սակավաթիվ են և գերազանցապես պակասավոր¹⁰³: Արժեքների մի մասը դեռևս ուրարտական շրջանում տեղափոխվել է Կարմիր-բլուր և հայտնաբերվել այստեղից: Դրանց թվում են Էրեբունու հիմնադրման կապակցությամբ Արգիշթի Մենուայորդու կողմից Խալդի աստծուն ընծայված վեց արձանագիր վահաններն ու բրոնզե այլ բարձրարվեստ իրեր¹⁰⁴:

Թեև ամրոցում գործել է բրուտագործական արհեստանոց, սակայն, մեզ հասած ուրարտական դարաշրջանի խեցեղենը մեծաքանակ չէ, եզակի են պահպանված ամբողջական անոթները¹⁰⁵: Դա հիմնականում պայմանավորված էր ամրոցում հետուրարտական դարաշրջանում կատարված վերակառուցումներով: Այսպես, ուրարտական խեցանոթների բեկորները հայտնվել են տանիքների արված հողի լիցքի մեջ և գտնվել գետնին թափված այրված եղեգների ու տանիքի ծածկի գերանների հետ միասին¹⁰⁶: Գտնվել են մի քանի կնիքներ¹⁰⁷, մետաղական գտածոների քանակը նույնպես չնչին է¹⁰⁸ հայտնաբերված քարե և կավե հալոցների առկայությամբ հակառակ, ինչը կարող է վկայել այստեղ մետաղագործական արհեստանոցի գոյությունը մասին¹⁰⁹: Էրեբունիում նաև գործել է նկարչի արհեստանոց¹¹⁰:

¹⁰³ К. Л. Оганесян. Эребуни, с. 59–60; *Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 88–89*:

¹⁰⁴ КУКН, 214–220, 235; СТУ IV, В 8-2 – 8-8, 8-21. Չի բացառվում, որ Թեյշեբայի քաղաքից գտնված Արգիշթի Մենուայորդու և Սարգուրի Արգիշթորդու արձանագրություններով իրերը նույնպես այստեղ են տեղափոխվել Էրեբունուց (տե՛ս, օրինակ, КУКН, 213, 221–225, 226, 230, 279–283; СТУ IV, В 8-8 – 8-12, 8-14 – 8-16, 8-28, 9-1 – 9-3, 9-8A-B և այլն: Տե՛ս նաև D. Stronach, H. Thrane, C. Goff, A. Farahani, Y. Grekyan. *Նշվ. աշխ., էջ 115*):

¹⁰⁵ С. И. Ходжаши. Керамика Эребуни. — «Сообщения Государственного музея изобразительных искусств имени А. С. Пушкина», IV. К сорокалетию археологической деятельности музея, с. 134–163.

¹⁰⁶ К. Л. Оганесян. Эребуни, с. 60.

¹⁰⁷ С. И. Ходжаши, Н. С. Труханова, К. Л. Оганесян. *Նշվ. աշխ., էջ 106–108, նկ. 114–121, Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 95–99, նկ. 12*:

¹⁰⁸ *Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 89–95, նկ. 9–10*:

¹⁰⁹ С. И. Ходжаши, Н. С. Труханова, К. Л. Оганесян. *Նշվ. աշխ., էջ 103*:

¹¹⁰ Ф. Тер-Мартirosов. Раскопки на северном склоне крепости Эребуни, с. 148–149.

Էրեբունին Ք.ա. VII դարում

Գիտություն մեջ երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը, որ Ռուսա Արգիշթորդու կողմից իրականացված ենթադրյալ վարչական բարեփոխումներն ու Վազա երկրում ուրարտական նոր կենտրոնի՝ Թեյշեբայի քաղաքի կառուցումը, Էրեբունուց ընդամենը մոտ 7 կմ հեռավորությամբ, պատճառ է դառնում, որ վերջինս կորցնի իր նշանակությունը և լքվի¹¹¹: Այն հանգամանքը, որ Կարմիր-բլուրից հայտնաբերվել են Էրեբունիից այստեղ տեղափոխված ոչ քիչ թվով բրոնզե բարձրարվեստ իրեր, կարծես հաստատում էր այդ իրողությունը:

Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս Էրեբունիի վերջին շրջանի պեղումները, Թեյշեբայի քաղաքի կառուցմամբ կյանքն այստեղ ամենևին էլ կանգ չի առել: Ավելին, նոր տվյալները, կարծես թե, հուշում են Էրեբունիում Ռուսա Արգիշթորդու կողմից անգամ նոր «սուսի»-տաճարի կառուցման մասին¹¹²: Դա են փաստում «ռուստիկ» մշակմամբ բազալտե քարերը, որոնք հանդիպում են Էրեբունիում և հետագայում կիրառվել են աքեմենյան վերակառուցումներում: Քարի նման մշակումն ուրարտական շինարվեստում ի հայտ է գալիս Ք. ա. VIII դարի վերջերից ու լայն տարածում գտնում հատկապես Ռուսայի գահակալության շրջանի կառույցներում¹¹³:

Էրեբունիում նոր պեղումները փաստագրեցին հզոր երկրաշարժի հետքեր: Ուրարտական կառույցների կրած փլուզումների ու ճաքճքված պատերի հետքերը հատկապես տեսանելի են ամրոցի հարավարևմտյան հատվածում՝ Խալդի աստծո տաճարի պատին, դեպի երկրորդ մուտքը տանող փողոցի խճաքարերի շարվածքում և հանդիպակաց պատերին¹¹⁴: Միաժամանակ, նկատելի է նաև, որ ուրար-

¹¹¹ Տե՛ս, օրինակ, Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 24; А. Т. S m i t h. The Making of an Urartian Landscape in Southern Transcaucasia: A Study of Political Architectonics.– “American Journal of Archaeology” 103/1, 1999, pp. 57–59 և այլուր:

¹¹² Ձեռք բերված տվյալները վերաբերում են 2016 թ. պեղումներին: Տե՛ս S. D e s c h a m p s, F. F i c h e t d e C l a i r f o n t a i n e, M. K a r a p e t y a n. Nouvelles réflexions relatives à la fin du royaume d’Ourartou – la forteresse d’Erebuni vers la fin du VIIe siècle av. J.-C.– Over the Mountains and Far Away. Studies on Archaeology and History of the Ancient Near East Presented to Mirjo Salvini on the Occasion of His 80th Birthday, Oxford (forthcoming).

¹¹³ R. D a n. Some Remarks on Urartian Rusticated Masonary.– Metsamor. The Chronicle of Fifty Years of Excavations, Collection of Papers, Yerevan, 2015, pp. 142–144:

¹¹⁴ S. D e s c h a m p s, F. F i c h e t d e C l a i r f o n t a i n e, D. S t r o n a c h. Նշվ. աշխ., էջ 128; S. D e s c h a m p s. Նշվ. աշխ., էջ 213–214, M. B a d a l y a n. The Urartian Weather God Teišeba (Based on Archaeological and Philological Data).– “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 9/1,

տական վարչակազմը ջանքեր է գործադրել ավերված կառույցները վերականգնելու համար. խարխլված պատերն ամրացվել են հուսալից հենապատերով կամ որմնահեցերով¹¹⁵, Խալդի աստծո տաճարի ներսում բարձրացվել է հզոր մույթ¹¹⁶, որով այն կորցրել է իր գործառույթը, ինչն էլ, թերևս, պատճառ է դարձել նոր տաճար կառուցելու համար: Հնարավոր է, ամրոցի հարավային մուտքին արևելքից հարող պարսպապատի խարխլվելու հետևանք է դրանից դեպի հարավ նոր պարսպաշարի կառուցումը¹¹⁷: Վերջինս իր կառուցման տեխնիկայով, աշտարակների ու որմնահեցերի չափերով առավել մոտ է կանգնած Կարմիր-բլուրի պարսպապատերին¹¹⁸: Այդ նույնը կարելի է ասել ամրոցի հարավարևմտյան հատվածում նոր պարսպապատի համար, որով ընդարձակվել է ամրոցի ներքին տարածքը: Այս երևույթը նկատվում է Ք. ա. VII դարի առաջին կեսի ուրարտական, ըստ էության, բոլոր խոշոր կենտրոններում¹¹⁹: Եվ, վերջապես, այդ նույն շրջանին է վերաբերում բլրի հյուսիսային լանջին բացված որմնահեցերով ամրացված պարիսպը¹²⁰:

Այս ամենը չի ենթադրում, որ Էրեբունիում գրանցված երկրաշարժն ունեցել է ճակատագրական հետևանքներ և հանգեցրել քաղաքի լքմանը¹²¹: Ինչպես երևում է, այստեղ կյանքը շարունակվել է

2015, p. 133, Tab. XXXII/1–2. Ձի բացառվում, որ այդ ժամանակ են Թեյ-չեբայի ամրոց փոխադրել Էրեբունու հարստությունները՝ թերևս, հնարավոր ոտնձգություններից ապահովագրելու նպատակով:

¹¹⁵ S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, D. Stronach. Նշվ. աշխ., էջ 128, S. Deschamps. Նշվ. աշխ., էջ 213–214, նկ. 7, 10:

¹¹⁶ Ф. Тер - Мартиросов. Раскопки крепости Эребуни, с. 154; D. Stronach, H. Thraane, C. Goff, A. Farahani, Y. Grekyan. Նշվ. աշխ., էջ 127:

¹¹⁷ Հմմտ. Ф. Тер - Мартиросов. Фрески Эребуни урартского и ахеменидского времени, с. 50.

¹¹⁸ Նշված հատվածում պարսպապատի որմնահեցերը պատից դուրս են գալիս 110–120 սմ, լայնությունը տատանվում է 520–530 սմ միջև, որմնահեցերի միջև հեռավորությունը 640–650 սմ է: Կարմիր-բլուրում որմնահեցերը պարսպապատից դուրս են գալիս միջինը 100–110 սմ, որմնահեցերի լայնությունը տատանվում է 510–520 սմ միջև, միմյանցից հեռավորությունը կազմում է մոտ 550 սմ:

¹¹⁹ Y. H. Grekyan. When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire), p. 98; Ն ու յ ն ի՝ Վանի թագավորության անկման խնդրի շուրջ, էջ 64:

¹²⁰ Տե՛ս Ф. Тер - Мартиросов. Новые данные о культуре Урарту, с. 132. Պարսպապատի պեղումների համար տե՛ս նաև Ն ու յ ն ի՝ Новые археологические данные по памятникам Армении ахеменидского периода, с. 123; Ն ու յ ն ի՝ Раскопки крепости Эребуни, с. 157; Ն ու յ ն ի՝ Раскопки на северном склоне крепости Эребуни, с. 150–151.

¹²¹ Տե՛ս նաև S. Deschamps. Նշվ. աշխ., էջ 215:

Թեյշեբայի քաղաքի հիմնադրումից կամ այստեղ գրանցված երկրաչարժից հետո էլ: Փոխարենը, մեզ համար ուրվագծվում է ուրարտական քաղաքի գոյություն վերջին շրջանի բոլորովին այլ պատկեր:

Ռուսա Արգիշթորգու օրոք կամ նրա կառավարմանը մոտ ընկած ինչ-որ շրջանում ուրարտական տերություններում ակնատես ենք լինում մի գործընթացի, որն ամբողջությամբ խարխլում է երկրի բնականոն կենսագործունեությունը, ապա և հանգեցնում գործող պետական համակարգի ամբողջական փլուզմանը: Այդ երևույթն անվանում ենք «Ք. ա. VII դարի ճգնաժամ» և պայմանավորում կլիմայական փոփոխություններով, մասնավորապես՝ կլիմայի չորացմամբ ու տեղական երաշտով¹²²:

Ճգնաժամի նախանշանները երևում են դեռևս Ք. ա. VIII դարի վերջերին, երբ ուրարտական պետությունը կանգնում է ջրի պակասի հարուցած խնդիրների առջև: Դրա հաղթահարմանն ուղղված հախուռն հիդրոշինարարությունն են վերաբերում այդ շրջանում թողնված ուրարտական սեպագիր աղբյուրների տեղեկությունները ջրամբարներ կառուցելու մասին (հնագիտորեն վկայված ջրամբարների առնվազն 4/5-րդ մասը կառուցվել է Ք. ա. VIII դարի վերջ – VII դարի առաջին կեսին) ու մի քանի հարյուր կմ ձգվող նոր ջրանցքների անցկացումը, քաղաքային նոր կենտրոնների հիմնադրումը ջրի աղբյուրներին մոտ ընկած տարածքներում կամ դրանց անմիջական մերձավորությամբ (ինչպես, օրինակ, այդ նույն Թեյշեբայի քաղաքը, որը կառուցվեց Հրազդանի անմիջական ափին), անցումը երաշտադիմացկուն մշակաբույսեր աճեցնելուն (ինչպիսին է, մասնավորապես, կորեկը) և այլն:

Արդեն Ք. ա. VII դարի կեսերին Ուրարտում տիրող իրավիճակը կարելի է բնութագրել քաղաքական անկայունությամբ և քաղաքական/ուսման հաջողությունների աղոտ հեռանկարով: Քաղաքական անկայունության առաջին նշանները Ք. ա. մոտ 640 թ. սահմաններում տեղ գտած քաղաքացիական պատերազմի սուղ վկայություններն են, որոնցից առավել ակնառուն «Ռուսայի փոքր քաղաք»-ի կործանումն էր (Բաստամի ուրարտական ամրոցը Կարա Ջիա էդ-դինի հովտում), ինչպես կարծում են, դեռևս Ռուսա Արգիշթորգու կենդանության օրոք¹²³:

Ուրարտական իշխանության թուլություն ակնհայտ վկայություն են այս շրջանում ձեռնարկված պաշտպանական հապշտապ միջոցառումները՝ քաղաքների պարիսպների լրացուցիչ ամրացումներն ու

¹²² Y. H. G r e k y a n. When the Gods Leave People (The climatological hypothesis of the collapse of the Urartian state).– The Black & the White. Studies on History, Archaeology, Mythology and Philology in Honor of Armen Petrosyan in Occasion of His 65th Birthday.– “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 8/1–2, 2013–2014, p. 77.

¹²³ W. K l e i s s. Azerbaijan, II – Archaeology.– “Encyclopaedia Iranica” III. London – New York, 1989, p. 217.

ամրոցներին կից ձևավորված «արտաքին քաղաքներ»-ը պարսպապատելու անավարտ մնացած ջանքերը, փակվում կամ փոքրացվում են դարպասները՝ թողնելով միայն մեկ մուտք, ամրոցներում կուտակվում են մթերքի հավելյալ պաշարներ, դիտարկվում է մեծաքանակ բնակչության և ընտանի կենդանիների հարկադրված տեղաշարժ դեպի ամրոցներ (Վերին Անձավ, Կարմիր-բլուր, Արգիշթիխինիլի և այլուր): Այդ ամենին հաջորդում է ուրարտական, ըստ էության, բոլոր խոշոր կենտրոնների կործանումը¹²⁴:

Ուրարտուում տեղ գտած ճգնաժամի դրսևորումները, որոնք առավել լավ են փաստագրվել Կարմիր-բլուրում, ինչ-որ չափով նկատվում են նաև Էրեբունիում:

Նախևառաջ, ակնհայտ է, որ Էրեբունիում խնդիրներ են ծագել ջրամատակարարման հետ կապված, և քաղաքի բնակչությունն ինչ-որ մի պահից ստիպված է եղել խմելու համար օգտագործել ոչ պիտանի ջուր՝ այն փորձելով մաքրել ֆիլտրացնող քարե չանների միջոցով¹²⁵: Ինչ խոսք, տեկտոնական անկայունությունը կարող էր հանգեցնել ջրի աղբյուրների ցամաքելուն¹²⁶ կամ դրանց որակի փոփոխմանը¹²⁷: Սակայն, Էրեբունիում այդ խնդիրը չէր կարող փոխկապակցված չլինել ուրարտական տերություն մեջ և, ընդհանրապես, ողջ Առաջավոր Ասիայում դիտարկված տեղական երաշտի և ջրի սակավության հետ¹²⁸:

Ինչպես ուրարտական մյուս կենտրոններում՝ Էրեբունիում ևս ստիպված են եղել ավանդական գարու փոխարեն անցնել երաշտադիմացկուն մշակաբույսեր աճեցնելուն, ինչպիսին կորեկն էր, որի

¹²⁴ Մանրամասն տե՛ս Y. H. G r e k y a n. When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire).– “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 4/2, 2009, pp. 98–126.

¹²⁵ К. А. О г а н е с я н. Крепость Эребуни, с. 125, рис. 93.

¹²⁶ M. B a d a l y a n. Նշվ. աշխ., էջ 133:

¹²⁷ Տե՛ս և հմմտ. նաև A. B a t m a z. Experiences of the Urartian Kingdom with Seismic Activities: An Attempt to Reconstruct the Earthquakes’ Effects.– Studies on the Archaeology of the Ancient Near East in Honour of Antonio Sagona.– “Orientalia Lovaniensia Analecta” 267. Leuven – Paris – Bristol, CT, 2018, pp. 335–337. Ստորգետնյա ջրերի մակարդակի վրա երկրաշարժերի ունեցած ազդեցության օրինակների համար տե՛ս Y. G o r o k h o v i c h, L. U l l m a n n. Ground Water Resources and Earthquake Hazards: Ancient and Modern Perspectives.– Ancient Water Technologies. Dordrecht – Heidelberg – London – New York, 2010, pp. 201–215.

¹²⁸ Y. H. G r e k y a n. When the Gods Leave People (The climatological hypothesis of the collapse of the Urartian state), pp. 78–79. A. W. S c h n e i d e r, S. F. A d a l i. Further Evidence for a “Late Assyrian Dry Phase” in the Near East During the Mid-to Late Seventh Century B.C.?– “Iraq” 78, 2016, pp. 159–174.

մնացորդներ են հայտնաբերվել միջնաբերդից¹²⁹: Հետաքրքիր է, որ էրեբունիում գինու մառանների կարասները ևս ծառայել են հացահատիկ պահելու համար (ընդ որում, դարձյալ ամբարվել է կորեկ¹³⁰), մի երևույթ, որը նկատվում է ճգնաժամի շրջանում ուրարտական մյուս ամրոցներում ևս¹³¹:

էրեբունու «արտաքին քաղաք»-ում բացված անկանոն կառուցապատված կացարանները¹³² նույնպես հիշեցնում են Կարմիր-բլուրում, Արմավիրում, Այանցում և Բաստամում փաստագրված իրավիճակը: Այն է՝ ամրոցների բնակչության կտրուկ աճ ի հաշիվ շրջակա բնակչության, որոնց համար ժամանակավոր կացարաններ են կառուցվում քաղաքի թե՛ ուրարտական վերնախավի թաղամասում և թե՛ հենց միջնաբերդում՝ շենքերը կառուցապատելով կցակառույցներով կամ մասնատելով դրանց ներքին տարածքը: Այդ կացարանները փոքր էին, հապճեպ կառուցված¹³³: էրեբունու միջնաբերդի տարբեր հատվածներում նույնպես փաստագրվել է նման իրավիճակ: Օրինակ, ժամանակավոր կացարանի հետքեր են հայտնաբերվել Խալդի աստծո տաճարի մերձավորութամբ, այսպես կոչված, «ապադանա»-յի տարածքում¹³⁴, նաև՝ միջնաբերդի հյուսիսարևելյան հատվածում բացված սենյակում: Հետաքրքիր է նաև, որ այստեղ փաստագրվել են հրդեհի հետքեր¹³⁵: Հրդեհի զոհ են դարձել նաև էրեբունու «արտաքին քաղաք»-ում բացված կառույցները¹³⁶:

Առկա սուղ վկայությունները պայմանավորված են էրեբունիում հետուրարտական շրջանում իրականացված լայնածավալ վերակառուցումներով, մինչդեռ Կարմիր-բլուրը կործանվել էր և լքվել՝ աղյուսաչեն պատերի փլատակների տակ թաղելով ճգնաժամի ծանր հետքերը:

¹²⁹ Н. В. А р у т ю н я н. Земледелие и скотоводство Урарту. Ереван, 1964, с. 80.

¹³⁰ А. А. Д е м с к а я. Նշվ. աշխ., էջ 182:

¹³¹ Y. H. G r e k y a n. When the Arrows are Depleted..., p. 102, Ն ու յ ն ի՝ When the Gods Leave People (The climatological hypothesis of the collapse of the Urartian state), p. 64.

¹³² С. И. Х о д ж а ш, Н. С. Т р у х т а н о в а, К. Л. О г а н е с я н. Նշվ. աշխ., էջ 17:

¹³³ Y. H. G r e k y a n. When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire), pp. 102–105.

¹³⁴ S. D e s c h a m p s. Նշվ. աշխ., էջ 214, նկ. 11:

¹³⁵ И. М. Л о с е в а. Новые археологические исследования отряда ГМИИ им. А. С. Пушкина на холме Арин-берд, — «Советская археология», 1958, № 2, с. 191 — 193.

¹³⁶ D. S t r o n a c h, F. T e r – M a r t i r o s o v, A. A y v a z i a n, W. C o l l i n s, С. D e m o s, S. G h a n i m a t i. Նշվ. աշխ., էջ 187:

Էրեբունիի հետուրարտական շրջանում

Դեռևս խորհրդային տարիներին իրականացված պեղումների ընթացքում ակնհայտ դարձավ, որ ուրարտական տերութային անկումից հետո ինչ-որ շրջանում Էրեբունիի միջնաբերդը ենթարկվել է արմատական վերակառուցումների, որը պայմանավորված է եղել Հայաստանում աքեմենյան գերիշխանութային հաստատմամբ: Օրինակ՝ աքեմենյան շրջանով էր թվագրվում Խալդի աստծո տաճարին կից 12 սյունանի սրահի ընդարձակումն ու վերածումը 30 սյունանի խոշոր դահլիճի՝ «ապադանա»-յի, Պերսեպոլիսի սյունազարդ դահլիճների օրինակով: Ընդ որում, նախապես այն համարվում էր ուրարտական (ուչ ուրարտական) շրջանի կառույց¹³⁷, հետագայում արդեն գերիշխում էր սյունասրահի աքեմենյան թվագրությունը¹³⁸:

Էրեբունիում վերջին տարիների պեղումների արդյունքները, սակայն, ստիպում են հապես փոխելու նախկին պատկերացումներն ամրոցի թե՛ ուրարտական և թե՛ հետուրարտական/աքեմենյան դարաշրջանի ճարտարապետութային մասին: Ասվածը վերաբերում է

¹³⁷ И. М. Л о с е в а. Раскопки урартской крепости города Ирпуни (Эребуни) на холме Арин-Берд. — «Советское востоковедение», 1955, № 3, с. 144—150; *Ն ու լ յ ն ի՝* Новые археологические исследования отряда ГМИИ им. А. С. Пушкина на холме Арин-берд, с. 179, 194—195; A. G. K a n e s j a n. Beziehungen zwischen urartäischer und achaimenidischer Baukunst in Armenien. — “ Archäologische Mitteilungen aus Iran und Turan” 32, 2000 [2001], S. 108. *Տե՛ս և համտ. նաև* D. S t r o n a c h, H. T h r a n e, C. G o f f, A. F a r a h a n i, Y. G r e k y a n. *Նշվ. աշխ., էջ 120—125, 127—128, Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Էրեբունիի միջնաբերդի բազմասյուն դահլիճի թվագրման հարցի շուրջ.* — «Հուշարձան», 6, 2010, էջ 121—130, С. Е с а я н, Л. А б а д ж я н, Г. А в е т и с я н, *Նշվ. աշխ., էջ 421—422: Հմտ.,* D. S t r o n a c h. Architectural and Other Observations Related to Erebuni in the Late Seventh/Early Sixth Centuries B.C.— The Adventure of the Illustrious Scholar. Papers Presented to Oscar White Muscarella. Leiden — Boston, 2018, p. 275.

¹³⁸ К. Л. О г а н е с я н. Арин-берд I, с. 78—85; *Ն ու լ յ ն ի՝* Крепость Эребуни, с. 95—101; *Գ. Ա. Տ ի ր ա ց յ ա ն. Արին-բերդի սյունազարդ դահլիճը և սատրապական կենտրոնների հարցը Հայկական լեռնաշխարհում.* — ՀՄՄՌ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1960, № 7—8, էջ 99—108, *Ն ու լ յ ն ի՝* Культура Древней Армении. Ереван, 1988, с. 23—27; Ф. Т е р - М а р т и р о с о в. К стратиграфии Армавирского холма. — «Вестник общественных наук» АН АрмССР, 1974, № 1, с. 62; *Ն ու լ յ ն ի՝* Результаты археологических раскопок 2000—2001 гг. в Эребуни, с. 55—56; *Ն ու լ յ ն ի՝* Новые археологические данные по памятникам Армении Ахеменидского периода, с. 125; *Ի. Ա. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI—IV դդ. (Ըստ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված հնագիտական պեղումների).* — «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հ. 19, Երևան, 2003, էջ 10—11, 21—22:

նաև վերը նշված «ապաղանա»-յին: Մարական սյունազարդ դահլիճների հետ ունեցած զուգահեռները, շինարարական տեխնիկան, ինչպես նաև աքեմենյան ճարտարապետությանը բնորոշ սյունախարիսխների բացակայությունը հուշում են, որ սյունասրահը կառուցվել է ուրարտական տերություն անկումից հետո՝ մինչև Հայաստանում աքեմենյան գերիշխանության հաստատումը: Վերակառուցումների առաջին փուլը, ըստ այդմ, թվագրվում է Ք. ա. մոտ 600 թ.¹³⁹, այլ կերպ ասած՝ մարական կամ, այսպես կոչված, «վաղ հետուրարտական» շրջանով¹⁴⁰:

Ինչ խոսք, այս մոտեցումը նոր հիմնավորումների կարիք ունի: Դեռևս անհայտ է, թե ովքեր էին ամրոցի նոր (°) տերերը, ինչու էին նոր կառուցապատումները կրում մարական ճարտարապետության ազդեցությունն այն դեպքում, երբ բուն Մարաստանում այդ շրջանում, ըստ էության, այլևս չկար մարական որևէ կանգուն հուշարձան: Մարաստանի պատմությունը, պետք է նկատել, մոլթ դարաշրջան է, իսկ նոր մոտեցումները կասկածի տակ են առնում մարական տերության գոյությունն ընդհանրապես¹⁴¹:

Ինչ վերաբերում է էրեբունու աքեմենյան շրջանի պատմությանը, ապա վերը նշված 30 սյունանի «ապաղանա»-յից բացի աքեմենյան դարաշրջանով էր թվագրվում նաև միջնաբերդում երկու նոր, այսպես կոչված, «Հրո մեծ և փոքր» տաճարների կառուցումը: Դրանցից առաջինը կառուցվել էր Իուբջա աստծո «սուսի»-տաճարի առջև, երկրորդը՝ «կենտրոնական» հրապարակի հյուսիսարևելյան հատվածում¹⁴²: Աքեմենյան դարաշրջանի կառուցապատումների հետքեր են հայտնաբերվել նաև միջնաբերդից դուրս՝ բլրի հյուսիսային լանջին արված պեղումների ընթացքում¹⁴³: Էրեբունու որմնակարների մի մասը ևս առաջարկվում է թվագրել աքեմենյան շրջանով¹⁴⁴: Էրեբունիում Ք. ա. V դարի միլեթյան երկու դրամների հայտնաբերումը¹⁴⁵, միջնաբերդի մերձավորությամբ գտնված և

¹³⁹ S. Deschamps, F. Fichet de Clairfontaine, D. Stronach. Նշվ. աշխ., էջ 129–132, S. Deschamps. Նշվ. աշխ., էջ 214–215, D. Stronach. Նշվ. աշխ., էջ 275:

¹⁴⁰ D. Stronach. Նշվ. աշխ., էջ 274–275:

¹⁴¹ Ե. Գրեկյան. Մարաստան. – Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I, Հին շրջան. Երևան, 2013, էջ 275–278:

¹⁴² К. Л. Оганесян. Арин-берд I, с. 88–102; Նույնի՝ Крепость Эребуни, с. 101–114.

¹⁴³ Ф. Тер-Мартиросов. Раскопки крепости Эребуни, с. 158.

¹⁴⁴ Ф. Тер-Мартиросов. Фрески из Армении Ахеменидского времени. – Երևանի գեղարվեստի ակադեմիայի «Տարեգիրք», Երևան, 2004, էջ 158–174; Նույնի՝ Фрески Эребуни урартского и ахеменидского времени, с. 49–65.

¹⁴⁵ Մ. Իսրայելյան. Նշվ. աշխ., էջ 104–105:

Ք. ա. V–IV դարերով թվագրվող արծաթյա պոյակները¹⁴⁶ վկայում են աքեմենյան շրջանում ամրոցի վերնախավի կենցաղի, աքեմենյան գերիշխանության տակ հայտնված այլ երկրների հետ ունեցած փոխշփումների մասին:

Ամրոցի նոր կառուցապատումները և աքեմենյան դարաշրջանով թվագրվող իրերի առկայությունը նկատի ունենալով՝ ենթադրվում է, որ այդ շրջանում էրեբունին եղել է հայկական XVIII սատրապության կենտրոնը¹⁴⁷: Այն շարունակել է իր գոյությունն առնվազն մինչև ուշաքեմենյան կամ անգամ հետաքեմենյան/վաղհելլենիստական դարաշրջան¹⁴⁸:

Էրեբունու պեղումների դեռևս նախնական հաղորդումներում նշվում էր, որ ամրոցը, ինչպես ժամանակին Կարմիր-բլուրը, հրդեհի զոհ է դարձել: Դրա մասին էր վկայում սենյակների ներսում ածխացած գերանների մնացորդների առկայությունը¹⁴⁹: Բացի դա, հրդեհից կործանվել է ամրոցից դուրս սփռված «արտաքին քաղաք»-ը, ընդ որում, հայտնաբերված «սկյութական» տիպի նետասլաքները կարող են հուշել ամրոցը գրոհած թշնամու ինքնության մասին¹⁵⁰: Երբեմնի «պալատական հատված»-ի տարածքից հայտնաբերված շուրջ 100 նետասլաքները նույնպես «սկյութական» տիպի էին¹⁵¹: Ըստ Կ. Հովհաննիսյանի՝ դրանք նախապես եղել են պարսպապատերի աղյուսների մեջ մխրձված վիճակում և հայտնաբերվել են սենյակների ներսում փլված պատերի հողակույտերի մեջ: Մյուս կողմից, ըստ նրա, այդ նետասլաքները տարբերվում են Կարմիր-բլուրից հայտնաբերված «սկյութական» տիպի նետասլաքներից, ինչը և հիմք է տվել ենթադրելու, որ էրեբունին գրոհել են այլ թշնամական

¹⁴⁶ Б. Н. А р а к е л я н. Клад серебряных изделий из Эребуни. — «Советская археология», 1971, № 1, с. 143—158.

¹⁴⁷ Գ. Տ ի ր ա ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 108–114, ն ու յ ն ի՝ Культура Древней Армении, с. 69.

¹⁴⁸ Ж. Х а ч а т р я н, А. М а р г а р я н. Ритон со скульптурной протомой в виде всадника. — ВДИ, 2003, № 4, 121—122; Գ. Ս ա ր ր - ն ա խ. Էրեբունու արծաթյա պոյակները նոր լույսի ներքո. — ՊԲՀ, 2010, № 3, էջ 195, М. Y u. T r e i s t e r. A Hoard of Silver Rhyta of the Achaemenid Circle from Erebuni. — “Ancient Civilizations from Scythia to Siberia” 21, 2015, pp. 92–93. Հ մ մ տ. ն ա և L. K h a t c h a d o u r i a n. նշվ. աշխ., էջ 141 և ծ ն թ. 38:

¹⁴⁹ К. Л. О г а н е с я н. Арин-берд (Ганли-тапа), с. 80.

¹⁵⁰ Փ. Т е р - М а р т и р о с о в. Раскопки крепости Эребуни, с. 153; ն ու յ ն ի՝ Раскопки на северном склоне крепости Эребуни, с. 149: Հրդեհի հետքեր են հաստատագրվել նաև բլրի հյուսիսարևմտյան լանջին բացված դարավանդների կառուցապատումներում. տե՛ս Ա. Փ ի - լի պ ո ս յ ա ն, Մ. Բ ա դ ա լ յ ա ն, Ա. Զ ա ք յ ա ն, Տ. Զ ա ք յ ա ն, Գ. Թ ու մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 27:

¹⁵¹ И. М. Л о с е в а. Раскопки цитадели урартского города Ирпуни, с. 50, рис. 15.

ուժեր¹⁵²: Արդյո՞ք նրանց մեջ կարելի է տեսնել «էթիոնցիներ»-ին, ովքեր ուրարտական տերության կործանման գործում ունեցել են կարևոր դերակատարություն¹⁵³: Յավոք, խորհրդային շրջանում կատարված պեղումների ընթացքում հնավայրի շերտագրությունը չի պահպանվել, և առայժմ անհայտ է մնում, թե ե՞րբ և ովքե՞ր էին գրոհել էրեբունին:

Էրեբունին բացառիկ հուշարձան է: Նրա հետագա ուսումնասիրությունը չափազանց կարևոր է թե՛ Ուրարտուի, թե՛ հայ ժողովրդի վաղ պատմության, և թե՛ հին Առաջավոր Ասիայի Ք. ա. VII–VI դարերի պատմությանը հասկանալու ու վերագնահատելու համար:

Չափազանց կարևոր է նաև հուշարձանի պահպանումն ու հնարավոր վերականգնումը գիտության նոր տվյալների հենքի վրա՝ վերականգնման մեթոդների ճիշտ ընտրությամբ և առանց որևէ շտապողականության:

КРЕПОСТЬ ЭРЕБУНИ

ЕРВАНД ГРЕКЯН

Резюме

Холм Арин-берд находится в юго-восточной части города Еревана. Еще в 1879 г. у подножия холма была обнаружена клинописная надпись, которая побудила к проведению краткосрочных исследовательских работ в конце XIX в. Спустя полвека, в 1950 г., во время исследовательских работ на Арин-бердском холме были обнаружены две новые клинообразные надписи. Одна из них рассказывала о том, что царь Урарту Аргишти, сын Менуа, построил «величавую крепость» и назвал ее Эребуни. За предварительными исследованиями последовали широкомасштабные раскопки Эребуни, которые продолжились вплоть до 1970-х гг. Во время раскопок была открыта цитадель крепости с многочисленными монументальными строениями, в числе которых — культовые сооружения («дом» бога Халди, храм «суси» бога Иубша и др.), некоторые «дворцовые» постройки, а также крупные амбары, кладовые и другие сооружения хозяйственного значения. В Эребуни также обнаружен неукрепленный жилой квартал, так называемый «внешний город», который занимал территорию площадью 50 га. Последний мало изучен, а имеющиеся результаты свидетельствуют о том, что во «внешнем городе» су-

¹⁵² К. Л. Оганесян. Арин-берд I, с. 8; Ն ու լ յ ն ի՝ Էրեբունի, с. 60. Հ մ մ տ. Մ. Ի ս ու յ ե լ յ ա ն. ն շ վ. ա շ խ., է ջ 106–108:

¹⁵³ Ե. Հ. Գրեկյան. Էթիոնցիները ուրարտական պատկերագրության մեջ. — «Հին Արևելք» 1, 2014, էջ 39–45:

ществовали групповые застройки жилых домов и просторные особняки урартской знати.

В 1968 г. должны были пройти торжественные мероприятия, посвященные празднованию 2750-летия основания Эребуни-Еревана. В связи с этим в цитадели были проведены широкомасштабные работы по сохранению и реконструкции, с целью создать музей под открытым небом со стоящими постройками урартского периода. К сожалению, реконструкция цитадели нанесла непоправимый урон памятнику, существенно исказив его реальный облик и ограничив возможности дальнейших исследований.

С 1998-го г. начался новый период археологических исследований Эребуни. Важные научные результаты были получены особенно в 2008–2016 гг., в результате работ совместной армяно-французской экспедиции, уточнившей хронологические рамки крепости и совершившей важные открытия.

Эребуни — исключительный памятник. Его дальнейшее изучение чрезвычайно важно как для истории Урарту, так и для ранней истории армянского народа, для понимания и переосмысления истории древней Передней Азии VII–VI вв. до н.э.

THE FORTRESS OF EREBUNI

YERVAND GREKYAN

Summary

The hill of Arin-Berd is located in the south-eastern outskirts of the city of Yerevan. The cuneiform inscription found on the slope of the hill in 1879 caused for undertaking the first short-term survey at the end of the 19th century. Half a century later, in 1950, two new cuneiform inscriptions were discovered during the surveys of the hill of Arin-Berd. One of the inscriptions informs about the construction of Erebuni, a “magnificent fortress” by Argishti, son of Menua, king of Urartu.

The initial surveys were followed by large-scale excavations, which were continued till 1970’s. During the excavations, the citadel of the fortress with monumental buildings was unearthed including cultic structures (the “house” of the god Իալձի, the “susi” temple of the god Իւբժա etc.), some “palatial” buildings, as well as large granaries, cellars and other structures of economic significance.

Erebuni also had an unfortified dwelling quarter – the so-called “outer town”, which covered a territory of about 50 ha. The area was investigated briefly, but the obtained data refer to the existence of densely built agglomerated houses, as well as large apartments belonging to the Urartian ruling elite.

In connection with celebrations of the 2750th anniversary of the foundation of Erebuni-Yerevan, large-scale conservation and restoration works were conducted in the citadel aiming to create an open-air museum with standing buildings of the Urartian period. Unfortunately, the restoration of the citadel made inestimable damage to the site distorting its original situation and limiting the possibility of the future investigations.

A new phase of archaeological investigations of Erebuni started from 1998 onwards. Significant scientific results were obtained especially in 2008-2016 after the excavations of the Armenian-French joint team, clarifying in some degree the chronological phases of the site and making important discoveries.

Erebuni is a unique site. Its further investigation is very important for understanding and reconsideration both the history of the Urartian empire and the early history of the Armenian people, as well as the history of the ancient Near East in the 7-6th centuries BC.

ԷՐԵՐՈՒՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՆԻՆԱ ԱՏԵՓԱՆՅԱՆ-ՂԱՆԴԻԼՅԱՆ

Էրեբունի պետական արգելոցը գտնվում է Երևանից մոտ 10–12 կմ հեռավորության վրա՝ Կոտայքի մարզում, կիսաանապատային և ամայի տեղանքում: Իր անվանումը ստացել է ուրարտական Էրեբունի (Արին-բերդ) բերդաքաղաքի անվանումից¹: Էրեբունի պետական արգելոցի տարածքում աճում են հացազգի մշակաբույսերի վայրի ազգակիցներ:

Արգելոցը հիմնադրվել է 1981 թ.: Ստեղծման հիմնական նպատակը եղել է վայրի հացաբույսերի պահպանությունը և ուսումնասիրումը դրանց աճման բնական պայմաններում: Աշխարհում հանդիպող վայրի ցորենների չորս տեսակներից՝ ուրարտական (լատ. *Triticum ururu*), երկհատիկ կամ արարատյան (լատ. *T. araraticum*), վայրի միահատիկ կամ բեռտական (լատ. *T. boeoticum*) և վայրի հաճար (լատ. *T. dicoccoides*). առաջին երեքն աճում են Էրեբունի արգելոցում²: Կոտայքի մարզի Գեղադիր, Հացավան, Ողջաբերդ և Մուշավան (նախկինում՝ Շորբուլաղ) գյուղերի միջև գտնվող այս արգելոցում հանդիպում են նաև մի շարք այլ արժեքավոր բուսատեսակներ³: Էրեբունի պետական արգելոցն իր զբաղեցրած տարածքով շատ ավելի փոքր է Հայաստանի Հանրապետության մյուս երկու խոսրովի և Շիրակողի արգելոցներից. ունի ընդամենը 120 հա տարածք: Այնուամենայնիվ, իր տեսակով բնութիան այս հատուկ պահպանվող տարածքը համարվում է միակը ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում⁴: Անշուշտ, բնապահպանական ու կենսա-

¹ П. А. Гандилян, В. А. Авакян. Эребунийский заповедник. Ереван, 2001.

² П. А. Гандилян. Определитель пшеницы, эгилопса, ржи и ячменя. Ереван, 1980; П. А. Гандилян, В. А. Авакян. Նշվ. աշխ., էջ 27–30, E. A. Nazarova. Wheat and its wild relatives in Armenia (in Arm., Rus., Eng.). Yerevan, 2002.

³ Մ. Գ. Հարությունյան, Ա. Ա. Հունանյան. Էրեբունի արգելանքի օգտակար բույսերը. — «Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր», Երևան, 1983, № 3, էջ 76–80, В. Е. Восканян, И. Г. Арешатян, А. С. Арутюнян, М. Г. Арутюнян, И. Г. Авакян. Флора цветковых растений Эребунийского заповедника. — «Биологический журнал Армении», 1983, № 6, с. 531.

⁴ Э. Ц. Габриэлян, Ж. А. Агаронян. Эребунийский заповедник. — Заповедники Кавказа. М., 1990, с. 357–359; N. S. Khanjyan. Specially Protected Nature Areas of Armenia. Yerevan, 2004.

բանական նշանակությունից զատ, արգելոցը հետաքրքրություն է ներկայացնում նաև պատմական տեսանկյունից, քանի որ հացաբույսերի, ինչպես և այլ վայրած բույսերի ընտանեացման, դրանց մշակության սկզբնավորման ու երկրագործության հետագա զարգացման հարցերը՝ քաղաքակրթության պատմության կարևոր և հետաքրքրազույն մասն են կազմում⁵: Այդ խնդիրների քննությունն իրապես միջմասնագիտական բնույթ է կրում և շարժում է ինչպես կենսաբանների, այնպես էլ՝ պատմաբանների, հնագետների, մշակութաբանների ու լեզվաբանների գիտական հետաքրքրասիրությունը:

Որտե՞ղ է մարդ առաջին անգամ նկատել ցորենի արժեքավոր հատկությունները, որտե՞ղ է սկսել հացազգիներ մշակել և հաց պատրաստել: Տրամաբանական է ենթադրել, որ ցորենի մշակության սկզբնավորումը հնարավոր էր միայն այնտեղ, որտեղ աճում էր վայրի ցորենը՝ ճիշտ այնպես, ինչպես և ներկայումս լայնորեն տարածված ուրիշ մշակաբույսերի պարագայում է՝ դրանց նախահայրենիքը կարող էր լինել այն շրջաններում, որտեղ աճում էին դրանց վայրի նախնիները: Միայն այդպիսի տարածքներում հնարավոր էր վայրած բույսերի սկզբնական հավաքը, օգտագործումը, մշակութային առաջին փորձերը և երկրագործական մշակույթի նախնական զարգացումը:

Բայց արդյո՞ք մշակովի բույսերի վայրի ազգակիցները և նախնիները հիմա աճում են այդ նույն տեղանքներում: Չէ՞ որ բույսերի ընտանեացման առաջին փորձերից ու երկրագործության հիմնավորումից հազարամյակներ են անցել: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունների արդյունքները⁶, այդպիսի շատ բույսեր պահպանվել են և աճում են երկրագնդի որոշ շրջաններում:

⁵ D. R. Harris. The origins and spread of agriculture and pastoralism in Eurasia: an overview.— The origins and spread of agriculture and pastoralism in Eurasia. London, 1996, pp. 552–575; А. В. Ефименко, И. К. Захаров. Концепции о происхождении культурных растений в исторических исследованиях.— «Вестник Вавиловского общества генетиков и селекционеров» (Новосибирск), 2008, № 4, с. 726—733.

⁶ А. De Candolle. Rigine de plantes cultivees. Paris, 1882; А. Декандоль. Местопроисхождение возделываемых растений. СПб., 1885, с. 490; Н. И. Вавилов. Центры происхождения культурных растений.— В сб.: Происхождение и география культурных растений. Л., 1987, с. 33—127; Е. Н. Синская. Историческая география культурной флоры (на заре земледелия). Л., 1969, с. 479; Ф. Х. Батхеев. Очерки по истории и географии важнейших культурных растений. М., 1960, с. 371; J. R. Harlan. Distribution of Agricultural Origins: A Global Perspective.— The Origins of Agriculture and Crop Domestication. Aleppo, 1998, pp. 1–5; А. В. Дамания. Diversity of Major Cultivated Plants Domesticated in the Near East.— The origin of Agriculture and crop domestication. Aleppo, 1998, pp. 51-65; N. P. Stepanyan. On Centers of Origin of Cultivated Plants: Case Study of Armenian Highland.—

Հայկական լեռնաշխարհն այն սակավաթիվ տարածքներից է, որտեղ շարունակում են աճել մշակաբույսերի բազմաթիվ վայրի ազգակիցներ և նախատեսակներ: Այդ պատճառով այս տարածքը համարվում է մշակաբույսերի առաջացման Առաջավորասիական կենտրոնի կարևորագույն օջախներից մեկը⁷: Հայաստանի Հանրապետության տարածքում, որը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի փոքր՝ Հյուսիսարևելյան հատվածը, աճում են այնպիսի կարևորագույն մշակաբույսերի վայրի ազգակիցներ, ինչպիսիք են՝ հացաբույսեր (ցորեն, գարի և այլն), հատիկաընդեղեններ (ոսպ, ոլոռ և այլն), անասնակեր ընդավոր բույսեր, պտղատուներ, բանջարանոցային բույսեր, ինչպես նաև բազմաթիվ յուղատու, համեմունքային, դեղատու և դեկորատիվ բույսերի վայրի ազգակիցներ⁸:

Մշակովի բույսերի վայրի ազգակիցների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում վայրի հատիկավորների և, հատկապես, մշակովի ցորենի վայրի ազգակիցներն ու նախատեսակները: Մշակովի ցորենն այսօր աճեցվում է ամբողջ աշխարհում, և առանց դրա գրեթե անհնար է պատկերացնել մարդու կյանքը: Այն մարդկության հիմնական հացն է (եգիպտացորենի և բրինձի հետ) և շարունակում է ճակատագրական դեր խաղալ քաղաքակրթության պատմության ընթացքում: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ էրեբունի արգելոցի վայրի հացաբույսերը, հավանաբար, մասնակցություն են ունեցել ցորենի ընտելացման գործընթացին, ապա կարող ենք ասել, որ այդ բույսերը հնարավոր արտեֆակտներ են, իսկ վայրի ցորենի

Takhtajania. Issue 1. Yerevan, 2011, pp. 156 – 161. P. Gepts. Domestication of plants. – Encyclopedia of Agriculture and Food Systems, vol. 2, San Diego, 2014. pp. 474–486 և այլն:

⁷ Н. И. Вавилов. Растительные ресурсы земного шара и овладение ими. – В сб.: Происхождение и география культурных растений, с. 283–289.

⁸ П. А. Гандилян. Дикие сородичи культурных растений. – Красная книга Армении. Ереван, 1988, с. 246–256; П. А. Гандилян. Генофонд растений Армении. – Бюллетень Всероссийского института растениеводства (այսուհետև՝ ВИР), вып. 216. СПб., 1991, с. 18–21; P. A. Ghandilian. Archaeobotanical Evidence for Evolution of Cultivated Wheat and Barley in Armenia. – The origins of Agriculture and Crop Domestication. Aleppo, 1998, 1997, pp. 280–285; P. Ghandilyan, A. Avagyan, E. Nazarova. Diversity of wild relatives of cultivated plants in Armenia. – IPGRI, Newsletter for Europe, № 17, 2000, p. 9; E. Gabrielian, D. Zohary. Wild relatives of food crops to Armenia and Nakhichevan. – «Flora Mediterranea», 2004, № 14. pp. 5–80. Н. П. Степанян, Э. А. Назарова. Армянское нагорье – один из Переднеазиатских очагов происхождения культурных растений. – Материалы конференции «Проблемы эволюции и систематики культурных растений». СПб., 2009, с. 375–379.

պահպանությունը կոչված էրեբունի արգելոցը՝ հնագույն մշակութային լանդշաֆտի մի մաս:

Էրեբունի արգելոցի հիմնադրմանը նախորդել է երկար և դժվարին ճանապարհ:

Առաջին անգամ վայրի ցորենը հավաքվել է 1855 թ. Սիրիայում՝ ավստրիացի բուսաբան Թ. Կոչիի կողմից: Սակայն այդ գտածոն չհրատարակվեց և երկար ժամանակ աննկատ մնաց: Ավելի ուշ՝ 1906–1908 թթ., Ա. Ահարոնսոնը վայրի ցորեններ է հավաքել Պաղեստինից և Սիրիայից: Այս հայտնագործությունն արդեն մեծ հետաքրքրություն է առաջացրել գիտական աշխարհում, և այդ ժամանակվանից սկսեցին համարել, որ Սիրիան և Պաղեստինը հանդիսանում են ցորենի հայրենիքը⁹:

Եվ ահա 1925–1930 թթ. Խորհրդային Հայաստանում՝ Երևանից հարավ-արևելք ընկած տարածքում, պրոֆեսոր Մ. Թումանյանը, այնուհետև Ա. Արարատյանը, վայրի ցորենների բավականաչափ մեծ բուսուտներ են հայտնաբերում¹⁰: Մ. Թումանյանի նկարագրությունն շնորհիվ Հայաստանի վայրի ցորենների աճման տեղավայրի նկատմամբ մեծ հետաքրքրություն է առաջանում: Հետագա տարիներին վայրի ցորեններ հայտնաբերվեցին Հայաստանի նաև այլ շրջաններում:

Մ. Թումանյանի հրատարակած հոդվածը մեծապես զբաղեցրեց ՍՍՀՄ գյուղատնտեսական գիտությունների համամիութենական ակադեմիայի պրեզիդենտ Ն. Վավիլովի ուշադրությունը: Վերջինիս հանձնարարությունը Ն. Տրոյցկին հետազոտեց Հայաստանի վայրի ցորենների բուսուտները¹¹: Իսկ 1934 թ. Ն. Վավիլովն ինքը Լենինգրադից եկավ Հայաստան, որպեսզի անձամբ ուսումնասիրի վայրի ցորենների աճման տեղավայրերը: Ահա թե ինչպես է իր նամակում նկարագրում այդ ուղևորությունն արշավախմբի մասնակիցներից մեկը՝ ակադեմիկոս Լ. Դեկապրիլևիչը. «Լավ հիշում եմ ուղևորությունը՝ դեպի երկրագնդի հետաքրքրազույն անկյուններից մեկը՝ Երևանին մոտիկ գտնվող Շորբուլաղ գյուղի շրջակայքը, որտեղ դեռևս պահպանվել են մշակովի ցորենների ազգակիցներ համարվող վայրի ցորենները՝ երկհատիկներն ու միահատիկները: Մենք Շորբուլաղում եղանք գրեթե ամբողջ օրը: Նիկոլայ Իվանովիչը տառացիորեն վազքով չափչփեց մի քանի քառակուսի կիլոմետր՝ իջնելով ձորակների խորքը և նորից բարձրանալով բլուրների գագաթը: Ես արդեն ի վիճակի չէի ուղեկցելու: Միքայել Գալուստի Թումանյանը

⁹ К. А. Фляксбергер. Пшеница. — Хлебные злаки, т. 1. М. — Л., 1935.

¹⁰ М. Г. Туманян. Дикие однозернянки и двузернянки Армении. — Труды по прикладной ботанике, генетике и селекции, сер. 24, № 2. Л., 1930, с. 1–14.

¹¹ Н. А. Троицкий. Ботаническая характеристика местообитаний диких пшениц в Армении (Эривань). — Труды по прикладной ботанике, генетике и селекции, сер. 5, № 1. Л., 1932, с. 53–68.

ինձանից երկար դիմացավ, բայց նա նույնպես հոգնեց, իսկ Նիկոլայ Իվանովիչը դեռևս հավաքում ու հավաքում էր «վայրիներին» և ուղեկից բույսերի նմուշները»¹²:

Ն. Վավիլովը նույնպես իր հարցազրույցներից մեկում պատմում է ուղևորութունից ստացած իր տպավորությունների մասին: «...Պրոֆեսորներ Թումանյանի, Տրոիցկու և մի շարք այլ գիտական աշխատողների հետ մենք այցելեցինք Երևանին բավականին մոտիկ գտնվող Շորբուլաղ կոչված վայրը, — գրում է նա. — Այստեղ մենք տեսանք խիտ աճած վայրի ցորենի ու տարեկանի տարածությունները: Բոլորովին չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ այդ ոչ մեծ տարածությունը կառաջացնի համաշխարհային հետաքրքրություն: Այստեղ կարելի է դիտել ու ուսումնասիրել հացաբույսերի և ընդհանրապես երկրագնդի բուսականության աստիճանական զարգացումը... Ես համոզված եմ, որ երբ այդ վայրի մասին իմանա գիտական աշխարհը, ապա երկրագնդի զանազան մասերից անընդհատ գիտական արշավախմբեր են գալու դեպի Շորբուլաղ՝ այդ չափազանց հետաքրքիր վայրն ուսումնասիրելու համար: Կասկածից վեր է, որ տեսակների բազմազանությամբ այն ամենից հետաքրքիր տեղն է ողջ աշխարհում: Ինձ վիճակվել է ուսումնասիրել բազմաթիվ երկրներ, որոնք ընդունված է համարել հնադարյան երկրագործական երկրներ, սակայն, կրկնում եմ, ավելի հարուստ, ավելի հետաքրքիր վայր, քան Շորբուլաղն է, դժվար է գտնել: Ես կառաջարկեի անպայման առանձնացնել այդ հողամասից 50–100 հեկտարի չափ տարածք, հատուկ խնամք տանել, որպեսզի պահպանվի բույսերի զարգացման համաշխարհային նշանակություն ունեցող դոկումենտը: Դա այնքան էլ դժվար գործ չէ, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ տվյալ հողամասն այնքան էլ պիտանի չէ ցանքի համար իր քարքարոտության պատճառով»¹³:

Ն. Վավիլովի այս պատգամը, սակայն, երկար տարիներ մնաց չիրագործված. Խորհրդային միութիւնում ստալինյան բարքեր էին: Զրպարտություն և շինծու փաստերի միջոցով մեծագույն վաստակ ունեցող գիտնականը՝ Բուսաբուծության համամիութենական ինստիտուտի հիմնադիրն ու տնօրենը, աշխարհի բազմաթիվ ակադեմիաների պատվավոր անդամը, 1940 թ. կալանավորվեց և մի քանի տարի անց՝ 1943 թ., վախճանվեց բանտում: Այսպես է բնութագրել Ն. Վավիլովի կալանավորումն ու հետագա ճակատագիրն ակադեմիկոս Ա. Թախթաճյանը. «Վավիլովի ողբերգությունը միայն անձնական չէր, այն դարաշրջանի ողբերգության մի մաս էր ...»¹⁴:

¹² Տե՛ս Պ. Ա. Ղանդելյան. Նիկոլայ Վավիլով.— Հայաստանը հետաքրքրագույն վայրերից է.— «Հայրենիքի ձայն», 27. I. 1988, էջ 3:

¹³ Ակադեմիկոս Վավիլովը Հայաստանի վայրի հացաբույսերի մասին.— «Խորհրդային Հայաստան», 26. VII. 1934:

¹⁴ А. Л. Тахтаджян. Континенты Вавилова. — «Литературная газета», 21. XI. 1987, с. 12.

Ինչևէ, երկար տարիներ գրեթե դադարեցվել էին Ն. Վավիլովի ստեղծած ինստիտուտի աշխատանքները, ոչնչացվել էին նրա որոշ ձեռագրեր, մոռացության էին մատնվել նրա կողմից զարգացրած շատ գաղափարներ: Միայն 1955 թ. Վավիլովի բարի անուշը վերահանգնվեց, իսկ ավելի ուշ՝ մեծ գիտնականի ծննդյան հարյուրամյակի կապակցությամբ, ՅՈՒՆԵՍԿՕ-ն 1987 թ. հայտարարեց «Վավիլովի տարի»:

Ի թիվս Ն. Վավիլովի կողմից զարգացրած և երկար տարիներ մոռացության մատնված այլ գաղափարների, մոռացվել էր նաև վայրի ցորենների արգելոց ստեղծելու մտահղացումը: Բայց 1950-ականներին Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի շրջանավարտ Պապին Ղանդիլյանը, ով ծագումով Սևանա լճի մոտակայքում գտնվող Հացառատ գյուղից էր (անգամ նրա ծննդավայրի անունն է հացի հետ կապված), սկսում է խանդավառությամբ զբաղվել մշակովի հացաբույսերով: Մի քանի տարի համառ պրպտումների արդյունքում նա բխվում է մշակովի ցորենների առաջացման խնդրին ու սկսում մանրագնին ուսումնասիրել վայրի հացաբույսերը, բացահայտում ցորենների մասին Մ. Թումանյանի, Բ. Գարասեֆերյանի¹⁵ և այլոց աշխատությունները: Երևանի և Լենինգրադի գրադարաններում ու արխիվներում նա գտնում է Ն. Վավիլովի տարբեր թվականներին հրատարակած հոդվածները, խորհրդային և հանրապետական թերթերին 1930-ականներին տված հարցազրույցները, վայրի ցորեններին վերաբերող չհրատարակված նամակագրությունը: Պ. Ղանդիլյանը շրջում է Հայաստանով և մի քանի տարի անց նրան հաջողվում է նշել այն վայրը, որի մասին գրել էին Մ. Թումանյանը, Ա. Արարատյանն ու Ն. Վավիլովը: Ակնհայտ է դառնում Ն. Վավիլովի պատգամի կարևորությունը. այդ տարածքը անհրաժեշտ է պահպանել, այստեղ հարկավոր է արգելոց հիմնել¹⁶: Բայց ինչպե՞ս. սակավահող Հայաստանում ամեն մի հողակտորը «ոսկուց էլ թանկ է», թեկուզև «քարքարոտ» ու մշակման համար «ոչ պիտանի» (ինչպես վերը մեջբերված հարցազրույցում այդ վայրը բնութագրել էր Ն. Վավիլովը):

Սկսվում է ինտենսիվ հետազոտությունների ու նաև պայքարի շրջան՝ արգելոցի ստեղծման ու վայրի հասկավորների այս ունիկալ համակեցությունների պահպանման նպատակով: Վայրի հացաբույսերի արգելոցի ստեղծման անհրաժեշտությունը վերաբերյալ միայն սեփական համոզմունքը չափազանց քիչ էր. անհրաժեշտ էր նաև

¹⁵ Б. М. Гарасеферян. Дикие пшеницы Даралагеца. — Труды Биологического института, вып. 1. Ереван, 1939, с. 85— 98.

¹⁶ Ն. Պ. Ստեփանյան-Ղանդիլյան. Էրեբունի արգելոց.— GIZ, Կենսաբազմազանության կայուն կառավարում, Հարավային Կովկաս, ծրագիր № 11. 2197.9–002.00 (հաշվետվություն), Երևան, 2012, Н. П. Степанян-Гандилян. Вавилов в Армении. К истории создания Эребунийского заповедника. — Материалы конференции «Идеи Н. И. Вавилова в современном мире». СПб., 2012, с. 15— 16.

մյուսներին դրանում համոզել կարողանալ: Քսան տարիների ընթացքում 1961–1981 թթ., գիտական և հանրամատչելի հրատարակություններում Պ. Ղանդեղյանը տպագրեց արգելոց հիմնելու խնդրին նվիրված մի քանի տասնյակ հոդվածներ¹⁷, հանրապետական ու համամիութենական կոնֆերանսներում հանդես եկավ գիտականորեն հիմնավորված բազմաթիվ ելույթներով¹⁸:

Չափազանց կարևոր էր նաև այլ գիտնականների սատարումը, որոնք նույնպես գրում ու դիմում էին վերադաս ատյաններին, աջակցում խնդրի լուծմանը: Նրանցից էին՝ Բուսաբուծության համամիութենական ինստիտուտի տնօրեն Վ. Դորոֆեևը, Լենինգրադի բուսաբանության ինստիտուտի տնօրեն Ա. Թախթաջյանը, Հայաստանի բնության պահպանության բաժնի տնօրեն Վ. Ավագյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր Ա. Բարսեղյանը և շատ ուրիշներ: Մեծ էր նաև Հայաստանի բուսաբանական ընկերության նախագահ Էլեոնորա Գաբրիելյանի վաստակը՝ հատկապես այն ժամանակ, երբ արդեն կատարվում էին չափազանց աշխատանքները և նախատեսվում էր արգելոցին հատկացնել ընդամենը 50 հա տարածք (ինչին համեստորեն համաձայնում էր Պ. Ղանդեղյանը): Է. Գաբրիելյանը, հիմնավորելով մոտակայքում աճող այլ հազվագյուտ բույսերի պահպանման անհրաժեշտությունը, կարողանում է պնդել, որպեսզի արգելոցին հատկացվի ոչ թե 50, այլ 89 հա տարածք¹⁹:

Այսպես, համատեղ ջանքերի, անխոնջ աշխատանքի և մի քանի սերունդ գիտնականների ուսումնասիրությունների շնորհիվ ստեղծ-

¹⁷ Պ. Ա. Ղանդեղյան. Հասկավոր հացաբույսերի և նրանց վայրի ազգակիցների գենոֆոնդի պահպանման վիճակը ՀՍՍՀ-ում. – «Գյուղատնտես», 14. XII. 1977, էջ 2–3, նույնի Հայաստանի հասկավոր հացաբույսերի և նրանց վայրի ազգակիցների մասին. – «Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր», Երևան, 1980, № 9, էջ 37–38, П. А. Гандилян. О необходимости охраны генофонда дикорастущих пшениц Армянской ССР. – Материалы I сессии горного комитета Международного союза охраны природы и научной конференции по охране горных ландшафтов. Ереван, 1972, с. 133–136; P. A. Gandilian, A. Avagyan. Conservation of wild relatives of wheat in Armenia. – Proceeding of the European Symp., Braunschweig, Germany, 1998, pp. 53–55 և այլն:

¹⁸ Յ. Մ. Գալստյան. Ճանաչված գիտնականն ու մանկավարժը. պրոֆեսոր Պ. Ա. Ղանդեղյանի ծննդյան 60-ամյակի առթիվ. – «Գյուղատնտես», 24. V. 1989, էջ 4, Э. А. Африкян. Папин Арташесович Гандилян (к 60-летию со дня рождения). – «Биологический журнал Армении», 1989, № 7, с. 700–701; Э. А. Назарова, А. Г. Гукасян. Папин Арташесович Гандилян. Библиографический указатель. Государственный научный центр РФ ВИР. СПб., 2004, с. 27.

¹⁹ 2015 թ. արգելոցի տարածքն ընդլայնվեց նախկին Ողջաբերդ համայնքի տարածքների հաշվին՝ զբաղեցնելով շուրջ 120 հա (<http://ecolur.org/hy/news/officials/erebuni-state-reserve-area-expanded-by-315134-ha/7690/>):

վեց էրեբունի պետական արգելոցը. 1981 թ. մայիսի 27-ին կայացավ դրա հիմնադրումը²⁰:

Անդրադառնալով արգելոցի նշանակության հարցին՝ մեջբերենք պրոֆ. Ն. Խանջյանի խոսքերը. «Լինելով Հայաստանի երեք արգելոցներից ամենափոքրը, [էրեբունի պետական արգելոցը] ունի, թերևս, միջազգային մեծագույն նշանակություն՝ որպես մարդկության հանապազօրյա հացի գենետիկական ֆոնդ: Հիրավի, այն ազգային խորհրդանիշ է՝ աստվածաշնչյան Արարատ սարի և Սևանա լճի հետ մեկտեղ»²¹:

ИЗ ИСТОРИИ СОЗДАНИЯ ЭРЕБУНИЙСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ЗАПОВЕДНИКА

НИНА СТЕПАНИЯН-ГАНДИЛЯН

Резюме

Эребунийский государственный заповедник находится в Котайской области Армении, примерно в 10–12 км от г. Еревана. Это единственный в мире заповедник дикорастущих колосовых (пшеница, ячмень, рожь и др.). Произрастание здесь дикорастущих пшениц еще в 1920 – 1930-х годах было отмечено профессором М. Туманяном. Тогда же академик Н. Вавилов предложил создать на этой территории заповедник. Эта идея, однако, на долгие годы была забыта и лишь спустя четверть века возрождена молодым ученым П. Гандилян. Последовали десятилетия работы по изучению и распространению знаний об этом уникальном растительном сообществе. 27 мая 1981 года благодаря многолетнему кропотливому труду и помощи научного сообщества был основан Эребунийский заповедник.

FROM THE HISTORY OF THE ESTABLISHMENT OF EREBUNI STATE RESERVE

NINA STEPANYAN-GANDILYAN

Summary

Erebuni state reserve is situated in the Kotayk region of Armenia, approximately 10–12 km far from Yerevan city. It is a unique reserve of wild cereals (wheat, barley, rye, etc.) in the world. The growing of the wild

²⁰ «Վայրի ցորենների և այլ հացաբույսերի էրեբունի արգելոց»-ի հիմնադրման մասին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի թիվ 324 (27. 05. 1981 թ.) որոշում:

²¹ N. S. Khanjyan. Նշվ. աշխ., էջ 14:

wheat on that territory was revealed already in 1920–1930s by professor M. Tumanyan. At that time N. Vavilov suggested creating a reserve on that territory. However, that idea for long years fell into oblivion, and only a quarter of a century later was revived by young scientist P. Gandilyan. Many decades of hardworking on the investigation and spreading of the knowledge about that unique plant community succeeded. On May 27, 1981, due to the years of the assiduous work and to the support of the scientific community, the Erebuni reserve was established.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆ «ԲԱԶՄԱՎԵՊ» ՀԱՆԴԵՍԻ ԷԶԵՐՈՒՄ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

Հայկական մամուլում Հովհաննես Այվազովսկուն նվիրված առաջին հրապարակումներն ի հայտ են եկել դեռ 1840-ական թվականներին: Նկատի ունենք Զմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս Արարատյան» շաբաթաթերթում 1841, 1843 և 1845 թթ. զետեղված տեղեկատվական կարճառոտ, անստորագիր հաղորդումները, որոնք օրագրի ընթերցողներին տեղեկացնում են հայ երիտասարդ ծովանկարչի՝ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի ծախսով Վենետիկ, Միլան, Ֆլորենցիա, Հռոմ, Նեապոլ, եվրոպական այլ քաղաքներ կատարած ճամփորդությունների ու այնտեղ ունեցած աննախադեպ հաջողությունների մասին¹:

Անցան տարիներ, և Փարիզում Հովհաննես Այվազովսկու ավագ եղբոր Գաբրիել Այվազովսկու խմբագրությունում լույս տեսնող «Մասնաց աղավնի» երկչեղու (հայերեն և ֆրանսերեն) հանդեսի 1857 թ. դեկտեմբերյան ու 1858 թ. նոյեմբերյան համարներում տպագրվեց արդեն միջազգային լայն ճանաչում ձեռք բերած գեղանկարչի կյանքն ու արվեստը հայերեն լեզվով առաջին անգամ մանրամասնորեն լուսաբանող անստորագիր հոդվածը, որն ուղեկցվում էր արվեստագետի գրաֆիկական դիմանկարով և «Մովափնյա սրճարան Ռոդոսում» («Օսմանյան սրճարանը լուսնի լույսի տակ», 1857) կոչվող նրա յուղանկարի վերատպույթումը²: Հոդվածը գրված էր Հ. Այվազովսկու Փարիզ կատարած հերթական այցի, 1857 թ. փարիզյան ամենամյա հանդիսարանում (Salon de Paris) նրա ունեցած աննախադեպ հաջողության³, ֆրանսիացի մեծանուն արվեստագետ-

¹ Նույն օրագիրը Հովհաննես Այվազովսկու մասին բավական հանգամանալից հաղորդում է տվել նաև 1844 թ. 196 համարի «Բանասիրականք» բաժնում (տե՛ս «Արշալույս Արարատեան» (Զմիւռնիա), 1845, թիվ 235, 16 հունիսի, էջ 1), սակայն Հայաստանի գրադարաններում մեզ չհաջողվեց գտնել այդ համարը: Ի դեպ, Հ. Այվազովսկու վերջերս լույս տեսած կենսամատենագիտություն կազմողները ևս տեղյակ չեն եղել այդ հրապարակման մասին (տե՛ս Հովհաննես Այվազովսկի (Այվազեան). 1817–1900: Կենսամատենագիտություն, Երևան, 2017, էջ 69):

² Տե՛ս Յովհաննէս աղա Այվազովսքի.– «Մասնաց աղավնի» (Փարիզ), 1857, № 12, դեկտեմբեր, էջ 274–280, 1858, № 11, նոյեմբեր, էջ 254–258:

³ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 40-ամյա տարեդարձի կապակցությամբ և կերպարվեստին մատուցած ծառայությունների համար Ֆրան-

ների ու գրողներին՝ արևելապաշտ գեղանկարիչ, մարտանկարի վարպետ Օրաս Վերնեի, ռոմանտիզմի ներկայացուցիչ, ականավոր բանաստեղծ Ալֆոնս դը Լամարթինի և այլոց հետ նրա հաստատած բարեկամական կապերի առթիվ: Բայց, ըստ էության, հոգվածի անանուն հեղինակն ընթերցողներին ծանոթացնում է նաև Այվազովսկու ստեղծագործական կենսագրության կարևոր իրադարձություններին, համառոտ ներկայացնում նրա արվեստի ժանրաթեմատիկ ու կերպարային բովանդակությունը: Հոգվածի վերջում թարգմանաբար մեջբերված են ֆրանսիական և բելգիական մամուլից քաղված Փարիզի վերոհիշյալ հանդիսարանում Այվազովսկու ցուցադրած ծովանկարներին, դաշտանկարներին ու ձմեռային տեսարաններին վերաբերող կարծիքները:

Երկարատև դադարից հետո հայկական մամուլում եղան նկարչի կյանքին ու ստեղծագործությունը նվիրված նոր հրատարակումներ, որոնց թիվը կտրուկ աճեց 1870-ական թվականներից ի վեր: Այվազովսկու կենդանություն օրոք նրա մասին բազում (չուրջ 150) կարճ ու ընդարձակ տեղեկություններ, հոգվածներ և խոհադրություններ տպագրեցին ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ թերթերն ու հանդեսները, այդ թվում՝ մեր ամենաներկարակյաց պարբերականը՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» հանդեսը⁴, որի հիմնադիր-խմբագիրը ևս Գաբրիել Այվազովսկին էր: Հանդեսի էջերում այդ տարիներին գետեղվել են նկարչի մասին մի շարք կենսագրական հոգվածներ ու տարատեսակ նյութեր:

«Հովհաննէս Այվազովսքի հայկազն նկարիչ» վերնագրով առաջին հոգվածը լույս է տեսել 1874 թվականին⁵: Դա Յլորենցիայի Գեղարվեստի ակադեմիայում իտալացի անվանի ճարտարապետ Վինչենցո Միկելլիի 1873 թ. մայիսի 1-ից նոյեմբերի 2-ը Վիեննայում բացված Համաշխարհային ցուցահանդեսին վերաբերող երկարաշունչ ճառից հայ ընթերցողներին թարգմանաբար մատուցված մի հատված է, որտեղ խոսվում է Վիեննայի աշխարհահանդեսի գեղեցիկ արվեստներին հատկացված բաժնում Այվազովսկու ցուցադրած, մեծ հետաքրքրություն առաջացրած և չափազանց բարձր գնահատված կտավների մասին: Միկելլիի ճառը նախաբանող կարճ ներածականի անանուն հեղինակը հպարտությամբ նշում է, որ հայ ծովանկարիչն «իր ճարտարագործ նկարներովը» միջազգային համբավի

սիայի կառավարությունը նրան պարգևատրել է Պատվո լեգեոնի շքանշանով, իսկ Փարիզի Գեղարվեստի ակադեմիան՝ ոսկե մեդալով: Ըստ որում հատուկ նշվել է, որ հայ արվեստագետը 1857 թ. այդ ցուցահանդեսի «ոչ միայն զարդն էր, հապա նաև տեսլանկարաց վեհագոյն նկարիչը» (տե՛ս Յովհաննէս աղա Այվազովսքի. – «Մասեաց աղավնի», 1858, № 11, նոյեմբեր, էջ 255):

⁴ Տե՛ս Հովհաննէս Այվազովսկի (Այվազեան). 1817–1900: Կենսամատենագիտություն, էջ 69–90:

⁵ Տե՛ս Հովհաննէս Այվազովսքի հայկազն նկարիչ. – «Բազմավեպ» (Վենետիկ), 1874, հ. ԼԲ, Դ պր., էջ 330–334:

Հասավ և «ի պարծանս ազգիս» յուր օրինակով ապացուցեց, որ հայերն էլ զուրկ չեն գեղարվեստական հանճարից⁶: Անանուն նույն հեղինակի կարծիքով Այվազովսկու «գլխաւոր ճարտարութիւնն այն եղաւ՝ որ նրբագնին և յարատեակ հետազօտութեամբ գիտցաւ բնութեան գաղտնեաց խորը թափանցել, և ի բնութենէ հրահանգուելով իբրև ի քաջ ուսուցչէ՛ կրցաւ այնպիսի նկարներ ի լոյս ընծայել, մինչև գրաւեց գեղարուեստից աշխարհին արդարացի զարմանքը»⁷:

Բայց դառնանք Միկելլիի զեկուցմանը: Իտալացի բանախոսը հենց սկզբից հայտարարում է, որ ծովային հանդարտ կամ հուզումնալից տեսարանները, ջրի տարերքը պատկերելու մեջ Այվազովսկու հետ կարող են մրցել միայն անցյալի սակավ և ժամանակակից սակավագույն նկարիչները⁸: Փոխ առ փոխ, հերթով, մանրամասնորեն նկարագրելով ու բնութագրելով հայ արվեստագետի ցուցադրած՝ հիմնականում 1872–1873 թթ. ստեղծված ծովանկարները («Սև ծով», «Փոթորիկ Սև ծովում», «Կապրի», «Ամալֆիի ծովածոցը», «Իսկրայի ծովախորշը», «Ջիբրալթարի նեղուցը», «Նեապոլի ծովածոցը միգապատ առավոտյան»⁹) և ձմեռային պեյզաժներից մեկը («Մոսկվան ձմռանը: Տեսարան Վորոբյովյան սարերից»)¹⁰, Միկելլին հատուկ մատնանշում է Հ. Այվազովսկու՝ տարբեր երկրների կլիմայական պայմաններին, տարվա տարբեր եղանակներին ու օրվա տարբեր ժամերին բնորոշ լուսաօդային մթնոլորտը, լույսի ցուլացումը, ներդաշնակ գույների թափանցիկությունն ու բազմերանգությունը, «հոսանաց շարժումները, լայն և մեծատարած ալեաց երթևեկը», սպիտակափրփուրը ջրերի գոլորտում, նույնիսկ դրանց ձայնն ու տոպահամ հոտն ամենայն ճշտությամբ վերարտադրելու «անհամեմատ ճարտարութիւնը» և ապշեցուցիչ վարպետությունը¹¹: Ավարտելով իր ճառը՝ Միկելլին եզրակացնում է, որ հայ ծովանկարիչը բնության հավատարիմ մեկնաբանն ու պատգամաբերն է, որի ներկայությունը կարծես քողարկվում, աներևութանում է նրա վրձնած կտավներում: Սակայն, ինչպես նկատում է բանախոսը, Այվազովսկին նաև նրբազգաց բանաստեղծ է, «վասն զի կ'ազդէ ի մեզ գծից և գունոց միաբանութեամբ..., վասն զի իր սիրտը շարժած, իր սրտին յատուկ զգացմունքները, նուագարանի մը ձայնին նման... կը հաղորդէ դի-

⁶ Նույն տեղում, էջ 330:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 333:

⁹ Վիեննայի Համաշխարհային ցուցահանդեսից մեկ տարի անց՝ 1874 թվականին, Այվազովսկին վրձնել է «Նեապոլի ծովածոցը միգապատ առավոտյան» վերնագրով մեծաչափ (148 x 214 սմ) մի կտավ ևս, որն այժմ պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում: Դատելով ամենից՝ սա վերոհիշյալ համանուն ծովանկարի հեղինակային կրկնությունն է:

¹⁰ Այվազովսկու նույն նկարների հետ արդեն հասցրել էին ծանոթանալ Նիսում, Ֆլորենցիայում և Հռոմում մինչ այդ նկարչի բացած անհատական ցուցահանդեսների:

¹¹ Տես Հովհաննէս Այվազովսքի հայկազն նկարիչ. «Բազմավէպ», 1874, հ. ԼԲ, Դ պր., էջ 331–333:

տողին»¹²:

Ծովանկարչին նվիրված հաջորդ հրապարակումը «Բազմավեպում» երևաց ութ տարի անց՝ 1882 թ. առաջին համարում¹³: «Յովհաննէս Այվազովսքի պատկերահան» վերնագիրը կրող հոդվածի հեղինակն էր Ղրիմի Ղարասուբազար (այժմ՝ Բելոգորսկ) քաղաքում ծնված, Վենետիկի Մխիթարյան հայրերի մոտ ուսանած, ապա Ղրիմի կաթոլիկ եկեղեցիների (այդ թվում՝ Թեոդոսիայի Սուրբ Գևորգ եկեղեցու) դեկանի պաշտոնը ստանձնած հայագետ-պատմաբան, Օդեսայի Պատմության և հնությունների ընկերության թղթակից անդամ, Այվազովսկու մտերիմ բարեկամ Քերովբե Քուչներյանը, որը շուրջ քսան տարի թղթակցել է «Բազմավեպ» ամսագրին:

Հոդվածում մանրամասնորեն նկարագրված են 1882-ի հունվարին Թեոդոսիայում կայացած՝ ծովանկարչի հերթական ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը և Պետերբուրգ նրա մեկնելու կապակցությամբ քաղաքի ընչաչառ մարդկանց նախաձեռնությամբ Թեոդոսիայի արական գիմնազիայի¹⁴ մեծ սրահում կազմակերպված ճաշկերույթը, որոնց մասնակցել է նաև Ք. Քուչներյանը: Հոդվածից տեղեկանում ենք, որ ցուցահանդեսի բացումը տեղի է ունեցել հունվարի 14-ին՝ ուշ երեկոյան, Այվազովսկու՝ Իտալիա, Կոստանդնուպոլիս և Հունաստան ձեռնարկած ձմեռային ուղևորություններից անմիջապես հետո, ծովանկարչի նախագծով և անձնական միջոցներով 1880 թ. նրա առանձնատանը կից կառուցված, այսօր ծովանկարչի անունը կրող պատկերասրահի դահլիճում¹⁵: Յայգահանդեսի շքեղ սրահը զարդարված էր ծաղիկներով և ծաղկեփնջերով, բազմաճրագ ջահերով, գուլյնզգուլյն դրոշներով ու դրոշակներով, տարատեսակ այլ պաճուճանքներով: Սրահի խորքում, թատերական ներկայացումների ու համերգների համար նախատեսված բեմի ներքնապատը ծածկված էր Վենետիկի ընդհանուր տեսարանը պատկերող, ծովանկարչի ձեռքով կատարված բնանկարով: Մինչև առավոտյան ժամը հինգը տեղած բազմամարդ խնջույքի ընթացքում ներկաները հնարավորություն ունեին նաև մասնակցելու զինվորական նվագախմբի երաժշտությամբ ուղեկցվող պարահանդեսին ու

¹² Նույն տեղում, էջ 334:

¹³ Տե՛ս Ք. Քուչներյան. Յովհաննէս Այվազովսքի պատկերահան. – «Բազմավեպ», 1882, հ. և, Ա պր., էջ 38–44:

¹⁴ Հ. Այվազովսկին ակտիվ մասնակցություն է ունեցել այդ գիմնազիայի՝ 1873-ին իր դռները բացած նոր շենքի կառուցման գործում: Ավելին՝ դարձել է սույն դասական կրթարանի պատվավոր խնամակալը:

¹⁵ Թեոդոսիայի պատկերասրահը Ռուսաստանում հանրային հանրամատչելի երրորդ գեղարվեստական թանգարանն էր՝ Սանկտ Պետերբուրգի էրմիտաժից և Մոսկվայի Ռուսական թանգարանից հետո: Նկատենք նաև, որ մինչ այդ Ռուսական կայսրության տարածքում որևէ նկարիչ սեփական թանգարան կամ անհատական պատկերասրահ չի ունեցել: Նույնիսկ արվեստի այնպիսի խոշոր գանձարանները, ինչպիսիք են Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահը կամ Սանկտ Պետերբուրգի Ռուսական թանգարանը, ժողովրդական լայն խավերի համար մատչելի են դարձել միայն 1890-ական թվականներին:

լսելու օրիորդներ Աննա Նալբանդյանի և Կատարինե Միրզայանի դաշնամուրային գեղեցիկ կատարումները:

Իրանից տասն օր անց՝ հունվարի 24-ին, կայացած հրաժեշտի ճաշին ներկա էին Թեոդոսիայի շուրջ 50 «զանազան ազգաց» նշանավոր քաղաքացիներ՝ բարձրաստիճան գինվորականներ, ոստիկաններ, դատավորներ, եկեղեցական գործիչներ, դպրանոցի և արական գիմնազիայի տեսուչներ՝ քաղաքապետ Վլադիմիր Ալտուխովի գլխավորությամբ, ով առաջինը բաժակ բարձրացրեց ու մեծարանքի խոսքեր հղեց 1880 թ. Թեոդոսիայի պատվավոր քաղաքացի ընտրված նկարչին: Սրահում երաժշտություն էր հնչում, իսկ պատից «կախուռած կը փայլէր» ուսու մեծ նկարիչ Իվան Կրամսկոյի՝ հայ ծովանկարչին պատկերող, դափնեպսակ ճոխ շրջանակի մեջ դրված հայտնի դիմանկարը:

Հողվածի վերջում Ք. Քուչներյանը ընթերցողներին տեղեկացնում է, որ ճաշկերույթից երկու օր հետո՝ հունվարի 26-ին, Հ. Այվազովսկին «ցամաքով Սիմֆերոպոլի վրայէն դեպի Պետրպոլը մեկնեցաւ, Հետը տանելով այս ձմեռս նկարած հիանալու նոր տեսարաններէն ոմանք»¹⁶:

1889 թ. նույն հեղինակը «Բազմավեպի» համար մի ամբողջ հոդվածաշար է գրել՝ Թեոդոսիայում նոր ջրմուղի բացման և այդ գործում նկարչի ու նրա երիտասարդ տիկնոջ՝ Աննա Բուռնազյանի ունեցած վճռորոշ դերակատարություն մասին¹⁷: Նշելով, որ միջին դարերում Կաֆա կոչված ներկայիս Թեոդոսիան «հին ժամանակաց մինչև մեր օրերը միշտ ըմպելի ջրոյն նուազութիւնը կրած է»¹⁸՝ Ք. Քուչներյանը հիշեցնում է, որ հայաշատ «Կաֆայի միջնադարեան աղբիւրները, շնորհիվ մեր տնաչէն Անեցուց, գոյութիւն ունեցել են քաղաքիս մէջ»¹⁹, ինչի մասին են վկայում XV–XVI դարերում կառուցված, դեռևս կանգուն և գործող Մելեքյան, Քափանակյան և Կուսիկյան (կամ Կուսական) հայաշեն ու հայագիր աղբյուրները, որոնցից առաջին երկուսի մարմարե ճակատների վրա պահպանվել են հայերեն երկաթագիր հիշատակարաններ ու մակագրություններ: Սակայն ոչ այդ վերջինները, ոչ էլ ժամանակին Կաֆայում ջենովացիների կառուցած արհեստական ջրաչեղջերը, ջրմուղները և աղբյուրները, որոնք XIX դարում ևս չարունակում էին Թեոդոսիային ըմպելի ջուր մատակարարել, այլևս ի վիճակի չէին բավարարելու քաղաքի՝ օրեցօր աճող բնակչության բնական պահանջները: Եվ ինչպես նկատում է Ք. Քուչներյանը՝ «... եթէ մեր օրեր գերահուշակ նկարչապետն Յովհաննէս Այվազեան չչնորհէր ձրի 50.000 չափ

¹⁶ Ք. Քուչներյան. Յովհաննէս Այվազովսքի պատկերահան.– «Բազմավեպ», 1882, հ. 10, Ա պր., էջ 43:

¹⁷ Տես Ք. Քուչներյան. Թեոդոսիոյ նորաչէն ջրմուղին բացման առթիւ.– «Բազմավեպ», 1889, հ. 10է, Ա պր., էջ 43–47, հ. 10է, ապրիլ, էջ 113–116, հ. 10է, յունիս, էջ 181–185:

¹⁸ Նույն տեղում, Ա պր., էջ 43:

¹⁹ Նույն տեղում, էջ 44:

կամ դոյլ համեղ ջուր անջրդին Թէոդոսիոյ, շատ վատ և տակաւ անտանելի պիտի լինէր քաղաքիս բնակչաց վիճակը»²⁰: Այվազովսկուն և Աննա Բուռնազյանին պատկանող, Թեոդոսիայից 26 վերստ հեռավորութեան վրա գտնվող Սուբաշ գյուղակի ինքնաբուխ լճից թուջե խողովակներով Թեոդոսիա բերված անապակ ջուրը 1888 թ. սեպտեմբերի 18-ին «երկու ձիւնեղէն սիւներու ձևով ... վերջապես ցայտեց մեծ քանակութեամբ ... քաղաքի փոշոտեալ հրապարակաց վերայ»²¹:

Այվազովսկու նախագծով ու նրա ծախսերով տեղական ծովափերից կառուցված՝ բավական մեծաչափ, ճարտարապետական յուրակերպ տեսք ստացած այդ ցայտաղբյուրի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ նույն թվականի հոկտեմբերի 1-ին: Դրանից մի քանի օր առաջ Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Երրորդի հրամանագրով այն պաշտոնապես կոչվեց հայ ծովանկարչի անունով: Ջրմուղի և աղբյուրի բացման առիթով քաղաքի հանրային պարտեզում տոնական մարդաշատ ճաշկերույթ կազմակերպվեց, որի ընթացքում Այվազովսկուն ուղղված բազմաթիվ կենացներ ասվեցին:

Ք. Քուչներյանի հոդվածաշարը եզրափակող երրորդ բաժնում ամբողջութեամբ ներկայացված է Հայ առաքելական եկեղեցու վանքերից մեկին՝ Ղրիմի Սուրբ Խաչ վանքի վանահայր, Հ. Այվազովսկու արվեստի գիտակ Խորեն Ստեփանեի՝ ուսուցիչ արտասանված և ապա բանախոսի կողմից հայերեն թարգմանված մեծարման ճառը²²: Հենց սկզբից նշելով, որ Թեոդոսիայի համար նոր ջրմուղ կառուցած ծովանկարիչն «այնպիսի սէր ցոյց տուեց առ իւր հայրենի քաղաքը, որ միայն սա կարող էր անմահացնել նորան»²³, ապա խոսելով ջրի ոչ միայն կենցաղային անհրաժեշտութեան, այլև հոգևոր իմաստի, եկեղեցական խորհրդի ու կրոնական նշանակութեան մասին, ծայրագույն վարդապետը վերջում շեշտում է. «Որքան մեծ պատիւ է Թէոդոսիայի համար, նոյնքան մեծ պատիւ է հայ ազգի համար ծնել Յովհաննէս Այվազովսկուն ... Մենք՝ հայերս, արդարև կատարեալ իրաւունք ունինք մեզ պարծանք համարել Յովհաննէս Այվազովսկուն՝ իբրև հային, որին խորին կերպով յարգում և գնահատում է հայկական ազգը»²⁴:

Ամփոփելով իր հոդվածաշարը՝ Ք. Քուչներյանն ընթերցողներին

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 45 և նույն տեղում, հ. 105, ապրիլ, 114–115:

²² Նույն տեղում, էջ 181–184: Ինչպես վկայում է Այվազովսկու կենսագիրներից մեկը՝ արվեստաբան Մինաս Սարգսյանը, Խ. Ստեփանեի ոչ միայն լավ գիտեր ծովանկարչի արվեստը, այլև պատրաստվում էր նրա կյանքին ու ստեղծագործութեանը նվիրված մենագրութուն գրել, բայց նրա այդ մտադրութունն ինչ-ինչ պատճառներով չի իրագործվել (տես Մ. Սարգսյան. Հովհաննէս Այվազովսկի, Երևան, 1976, էջ 270): Նկատենք նաև, որ իր կյանքի վերջում՝ 1899 թ., Հ. Այվազովսկին ստեղծել է Խ. Ստեփանեի դիմանկարը, որն այսօր գտնվում է Թեոդոսիայի Ի. Կ. Այվազովսկու անվան պատկերասրահում:

²³ Ք. Քուչնէրեան. Թէոդոսիոյ նորաչէն ջրմուղին բացման առթիւ. – «Բագմավեպ», 1889, հ. 105, յունիս, էջ 182:

²⁴ Նույն տեղում, էջ 184:

մի հետաքրքիր և, ինչպես կտեսնենք, առեղծվածային տեղեկությունն է հաղորդում: Պարզվում է, որ հանդիսությունն «մի թէոգոսիացի ազգային» հայերեն լեզվով նկարչապետին նվիրված բանաստեղծությունն է կարդացել²⁵: Քուչներյանը չի նշում ոչ տվյալ անձնավորությունն անունը, ոչ էլ ոտանավորի վերնագիրը, բայց ընթերցողներին հուշում է, որ այդ բանաստեղծությունը նրանք կգտնեն «Բազմավեպի» հաջորդ համարում: Եվ, իսկապես, ամսաթերթի նույն թվականի հուլիսյան պրակում տպագրվում է «Հանդես բացման ջրմուղին թէոգոսիոյ և աղբիւրին Այվազեան առ նկարչապետ Յովհաննէս Այվազեան երգ» երկարաչունչ վերտառությունը ու բավական ընդարձակ հանգավոր, քառատող 12 տներից բաղկացած հետևյալ ոտանավորը²⁶.

²⁵ Նույն տեղում, էջ 185:

²⁶ Տե՛ս «Բազմավեպ», 1889, հ. ԽԷ, յուրիս, էջ 215: Հ. Այվազովսկուն նվիրված իր վերջին աշխատությունն մեջ արվեստաբան Մ. Սարգսյանը, հատվածաբար և որոշ անճշտություններով մեջբերելով այդ բանաստեղծությունը, նշում է, որ շուտով այն երգի է վերածվել ու դեռ երկար ժամանակ յավել թեոգոսիայի հայ բնակիչների շուրթերից (տե՛ս Մ. Սարգսյան. Մեծ ծովանկարչի կյանքը, Երևան, 1990, էջ 323–324): Հայ գրականության մեջ սա Հ. Այվազովսկուն նվիրված երկրորդ բանաստեղծությունն էր՝ 1885 թ. դերասան Պետրոս Ադամյանի հեղինակած «Առ Այվազովսքի» բանաստեղծությունից հետո (տե՛ս Պ. Ադամյան. Երկեր, Երևան, 1956, էջ 217–219): Ծովանկարչին մեծարող մյուս գրվածքները՝ Հովհաննես Թումանյանի «Այվազովսկու ծովանկարի առջև» [տե՛ս «Մուրճ» (Թիֆլիս), 1893, № 9, սեպտեմբեր, էջ 1348] և «Մի հառաչանք (Այվազովսկու «Սև ծովի ափերը» նկարի առջև)» [տե՛ս «Հորիզոն. գրականական հանդես» (Թիֆլիզ), 1894, գիրք առաջին, էջ 99] հանրահայտ բանաստեղծությունները, ինչպես նաև Ալեքսանդր Ծատուրյանի «Ծովի կախարհը (Այվազովսկու յիշատակին)» արձակ բանաստեղծությունը [տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 1900, № 79, մայիսի 2, էջ 1] և Տիրան Զրաքյանի (Ինտրա) «Սև Ծով, Այվազովսքի, Աստուած» ոգեչունչ խոհադրությունը [տե՛ս Տ. Զրաքյան (Ինտրա), Երկեր, Երևան, 1981, էջ 243–246] գրվել են քիչ ավելի ուշ՝ 1893-ից մինչև 1900 թվականները: Վերջերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր, երաժշտագետ Աննա Ասատրյանը բացահայտել է, որ ուսուցիչ-պրոֆեսոր, «Հգոր խմբակի» անդամ Յեզար Կյուլի «Памяти И. К. Айвазовского» ձայնի և դաշնամուրի համար 1902 թ. գրված ուրվիեմի բանաստեղծական տեքստի հեղինակը երաժշտագետ, երաժշտական-հասարակական գործիչ, հրապարակախոս Վասիլի Կորգանովն էր, նույն ինքը Բարսեղ Դորդանյանը (տե՛ս Ա. Ասատրյան. Հովհաննես Այվազովսկին և հայ երաժիշտները. — Հովհաննես Այվազովսկի — 200: Գիտական նստաշրջանի նյութեր (3 նոյեմբերի, 2017), Երևան, 2018, էջ 159): Վեցտողյա այդ գողտրիկ բանաստեղծությունը («Кисть вдохновенная упала ...») որպես բնաբան հրատարակվել է Թիֆլիսում լույս տեսնող «Кавказский вестник» գիտական-գեղարվեստական ամսագրի համար ծովանկարչի մահվան առիթով Վ. Կորգանովի գրած հոդվածի սկզբում (տե՛ս В. Д. К [о р г а н о в]. Иван Константинович Айвазовский. — «Кавказский вестник» (Тифлис), 1900, № 5, май, с. 124).

Երբոր Աստուած մե՛ծ Հանճար
 Քեզ պարգևեց երկնածիր,
 Դուն եռանդով ի նկար
 Պարգևն ի գործ վարեցիր:
 Լեռնակուտակ ծովուն ջուր՝
 Քոյ վրճիւնիդ հրպաւոր,
 Ի կըտաւի ճիգ մաքուր
 Պատկերացաւ այլէխոր:
 Տաք, ցուրտ օդին՝ գոյն հարմար
 Հանճարեցիր խընամով.
 Զգեստաւորի անգոյն տարր
 Քոյին ճարտար մատներով:
 Առաւօտուն լուսափառ,
 Նրսեմաստուեր գիշերոյն,
 Տըւիր իրենց ճիշդ տիպար
 Քո հանճարով գերագոյն:
 Այլ Քո ազգիդ՝ քաղաքիդ
 Այսօր տըւիր մե՛ծ նըշան,
 Քըրխստոնեայ Քո սըրտիդ
 Եղբայրասէր գըթութեան:
 Քանգի ինչպէս հին Մովսէս,
 Ի յանջրդին յանապատ,
 Բըղխեցուցեր Դու առ մեզ՝
 Համեղ պայծառ ջուր առատ:

Կաֆա քաղաք վաղեմի,
 Փոշիներու մէջ թողեալ,
 Խընդաց այսօր ջըրալի
 Յիշեց իրեն փառքն անցեալ:
 Նրսեմացան յուշն և փառք
 Հին բարեպաշտ հայուհեաց.
 Մէլէք, Կուսին, Քափանակ
 Հանդէպ տիկնոջն Այվազեանց:
 Զեր շնորհիւ, այո՛ Տէր,
 Քաղաքացիք ամենայն
 Վայլեցին ջուր կենսաբեր.
 – Նախնեաց շիրիմք դող ելան.–
 Յիսո՛ւս Փըրկիչ աշխարհի
 Որոշ կերպով խոստացաւ
 Վարձք՝ մի բաժակ պաղ ջըրի.
 Անչափ է վարձքդ և անբաւ:
 Երախտապարտ Քեզ Կաֆա
 Մարմարիոն թէ արձան
 Կանգնէ, դարձեալ քիչ կու գայ
 Առատ տուրքիդ ի փոխան:
 Այլ Քեզ արձան կենդանի
 Դուն կանգնեցիր աննըման
 Զըրիկդ անոյ՛ ը որ հոսի
 Նոր աղբիւրէն Այվազեան:

Հետաքրքիրն ու միաժամանակ տարօրինակն այն է, որ այստեղ ևս բացակայում է Ք. Քուչներյանին տպագրության համար բանաստեղծության բնագիրը տրամադրած հեղինակի անունը: Սակայն ամեն ինչ կպարզաբանվի ու տեղը կընկնի, եթե ենթադրենք, որ ոտանավորի հեղինակը ոչ այլ ոք է, եթե ոչ համեստաբար սեփական անունը «քողարկած» Ք. Քուչներյանը, ով ոչ միայն հայտնի հոգևոր գործիչ ու հայագետ-պատմաբան էր, այլև պոետական արվեստին վարժ տիրապետող, հմուտ թարգմանիչ, որը ռուսերենից հայերեն է թարգմանել Ալեքսանդր Պուշկինի, Միխայիլ Լերմոնտովի, Տարաս Շևչենկոյի և այլոց չափածո երկերն ու ինքն էլ բանաստեղծություններ է գրել²⁷:

Անցավ մեկ տարի, և «Բազմավեպի» մայիսյան համարում հրատարակվեց «Նկարչապետ Այվազովսքիի պատկերահանդէսն ի Փա-

²⁷ Մեր ենթադրությունը մասնակիորեն հաստատում է նաև հետևյալ հանգամանքը. Ք. Քուչներյանը հայ ծովանկարչի մասին վերջինիս կենդանության օրոք գրած այն բացառիկ հեղինակներից է, ով արվեստագետի ազգանվան՝ այդ ժամանակ ամենուրեք ընդունված ռուսական ձևը (Այվազովսկի) մշտապես հայացրել, փոխարինել է հայկական ձևով (Այվազյան): Եվ պատահաբար է արդյոք այդպես վարվել նաև «Բազմավեպում» գետեղված ոտանավորի անանուն հեղինակը:

րիզ» անստորագիր հոդվածը²⁸, որի հեղինակը տողատակում տեղեկացնում է, որ հռչակավոր ծովանկարչի հետ նրան ծանոթացրել է նույն Ք. Քուչներյանը՝ Փարիզում 1889 թ. մայիսին մեկնարկած Համաշխարհային ցուցահանդեսի ժամանակ²⁹: Հոդվածում հանգամանորեն լուսաբանվում է Ֆրանսիացի անվանի նկարահավաք ու մեկենաս Պոլ Դյուրան-Ռյուելի փարիզյան նշանավոր պատկերասրահում 1890 թ. ապրիլի 1-ին հանդիսավորութամբ բացված և մինչև մայիսի 15-ը տևած՝ Հովհաննես Այվազովսկու անհատական ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին հիմնականում 1887–1889 թթ. Ատլանտյան օվկիանոսի, Միջերկրական ծովի ու Սև ծովի մերձակա տարբեր վայրերում վարպետի վրձնած շուրջ երեք տասնյակ ստեղծագործություններ՝ ծովային և ծովափնյա 26 տեսարան («Ալիք: Վերջին պահն օվկիանոսում»³⁰, «Մայրամուտ: Իսպանիայի փերը», «Բիարիցի ծովափը գիշերով», «Մարմարա ծովը և Յոթ Աշտարակաց դղյակը», «Կաննի մերձակայքը», «Ալեկոծված Սև ծովը» և այլն), ձմեռային մեկ բնանկար («Սուրբ Իսահակ Մայր եկեղեցին Պետերբուրգում: Սառնամանիք օր») և այսօր Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրվող «Ջրհեղեղից հետո, Արարատի մոտ» («Նոյն իջնում է Արարատից») հայտնի կտավը:

Հոդվածում վերջին նկարին վերաբերող, հայերիս համար հատկապես հետաքրքիր մի դրվագ է բերված: Հանդեսի բացման նախընթաց օրը, ցուցադրության հետ կապված վերջին հրահանգները պատկերասրահի աշխատողներին տալուց հետո, ծովանկարիչը մոտեցել է հոդվածագրին և ասել. «Անշուշտ, հայկական նիւթ մի կը փնտռես իմ նկարուցս մէջ», ապա նրան հարակից սրահ տանելով՝ հեռվից ցույց է տվել այդ մեծադիր կտավն ու բացականչել. «Ահա՛ մեր Հայաստանը»³¹:

Ցուցահանդեսի բացման առաջին օրը՝ ապրիլի 1-ին, Դյուրան-Ռյուելի ուղեկցութամբ պատկերասրահ այցելեց Ֆրանսիայում Ռուսաստանի դեսպան Արթուր Մորենգեյմը, իսկ հաջորդ օրը նկարահանդեսն իր ներկայութամբ հարգեց Ֆրանսիայի Երրորդ հանրապետության նախագահ Մարի-Ֆրանսուա Կարնոն, ով նկարները դիտելուց և Ֆրանսերենին վարժ տիրապետող ծովանկարչի բացատ-

²⁸ Տե՛ս Նկարչապետ Այվազովսքիի պատկերահանդեսն ի Փարիզ.– «Բազմավէպ», 1890, հ. ԽԸ, մայիս, էջ 175–178:

²⁹ Նույն տեղում, էջ 176:

³⁰ 1889-ին ավարտված, այժմ Սանկտ Պետերբուրգի Ռուսական թանգարանին պատկանող, ավելի քան հինգ մետր երկարություն ու երեք մետր բարձրություն ունեցող այս կտավը Հ. Այվազովսկու երբևէ ստեղծած ամենախոշոր նկարն է: 1890 թ. փետրվարի 22-ին ռուս անվանի լրագրող, հրատարակիչ, թատերագետ ու թատերագիր Ալեքսեյ Սուվորինին ուղղված նամակում արվեստագետը խոստովանում է, որ այդ կտավն իր «լավագույն փոթորիկն է» (տե՛ս Айвазовский. Документы и материалы. Ереван, 1967, с. 253):

³¹ Տե՛ս Նկարչապետ Այվազովսքիի պատկերահանդեսն ի Փարիզ.– «Բազմավէպ», 1890, հ. ԽԸ, մայիս, էջ 176:

րությունները լսելուց հետո նրան ջերմորեն շնորհավորեց ու շնորհակալություն հայտնեց:

Հոգվածի վերջում բերված է ցուցահանդեսի կատալոգում ընդգրկված և համարակալված ստեղծագործությունների ամբողջական ցանկը³²:

«Բազմավեպի» 1898 թ. հունվարյան համարում Հ. Այվազովսկու ծննդյան 80-ամյակի առթիվ տպագրվեց Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր և ազգագրագետ Վարդան Հացունու «Այվագեան Հովհաննէս ծովանկարիչ» խորագրով հոգվածը³³, որտեղ բերված է նկարակալի առջև աթոռին նստած, գունապնակով ու վրձնով զինված ծովանկարչի 1893 թ. Թեոդոսիայում արված լուսանկարը³⁴: Արձանագրելով, որ Այվազովսկին «գեղարուեստի մէջ եւ նկարչական բովանդակ աշխարհում հայ հանճարոյն մեծութիւնն ու վեհութիւնն է»³⁵, Հացունին չի բավարարվում այսքանով և է՛լ ավելի փառաբանելով նկարչին՝ նրան անվանում է Տեր Աստուծուց հետո «Ջրոց երկրորդ արարիչը»³⁶:

Հոգվածի հեղինակը հայ ընթերցողներին համառոտակի ծանոթացնում է Այվազովսկու արվեստի մասին ոուս և ֆրանսիացի արվեստագետների, մասնավորապես՝ Օրաս Վերների գովասանական կարծիքների հետ³⁷, ապա նկարագրում սեփական աչքով երբևէ տեսած ու իր հիշողության մեջ վառ տպավորված՝ տարբեր ժանրերում ծովանկարչի վրձնած հանրահայտ կտավները՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության թանգարանում պահվող «Քաոս: Աշխարհի արարումը» (1841), «Նեպոլի փարոսը» (1842), «Նավաբեկությունն Նյուսիսային ծովում» (1875) և «Արարատ սարը» (1885), ինչպես

³² Նույն տեղում, էջ 178: Հ. Այվազովսկուն նվիրված իր վերջին մենագրության մեջ անդրադառնալով ծովանկարչի փարիզյան այդ ցուցահանդեսին Մ. Սարգսյանը թույլ է տվել փաստական մի շարք սխալներ, որոնք վերաբերում են ցուցագրված նկարների թվաքանակին, ինչպես նաև ցուցահանդեսի բացման ու փակման ամսաթվերին: Բացի այդ, նա Ֆրանսիայի Հանրապետության այն ժամանակվա գործող նախագահ Մարի-Ֆրանսուա Կարնոյին շփոթել է դրանից տասնյակ տարիներ առաջ երկրի իշխանությունը ստանձնած ու դեռ 1873-ին կյանքից հեռացած Ֆրանսիայի առաջին պրեզիդենտ Նապոլեոն Երրորդի՝ Շառլ Լուի Նապոլեոն Բոնապարտի հետ, որն իբր Դյուրան-Ռյուեյի պատկերասրահ է ժամանել «ցուցահանդեսի վերջին օրերին» (տե՛ս Մ. Սարգսյան. Մեծ ծովանկարչի կյանքը, էջ 336–337): Հետևաբար՝ մնում է եզրակացնել, որ Մ. Սարգսյանը ծանոթ չի եղել «Բազմավեպի» այս անստորագիր հոգվածին:

³³ Տե՛ս Հացունի [Վարդան]. Այվագեան Յովհաննէս ծովանկարիչ. – «Բազմավեպ», 1898, հ. ԾԶ, յունուար, էջ 17–22:

³⁴ Նույն տեղում, էջ 18:

³⁵ Նույն տեղում, էջ 17:

³⁶ Նույն տեղում, էջ 18:

³⁷ Տեսնելով Հովհաննէս Այվազովսկու ծովանկարներն ու մարտանկարները՝ Օ. Վերենն դրանք համեմատել է ֆրանսիացի անվանի մարինիստ և մարտանկարիչ Թեոդոր Գյուլդենի նմանատիպ կտավների հետ ու գտել, որ վերջիններս ակնհայտորեն զիջում են հայ արվեստագետի աշխատանքներին (տե՛ս նույն տեղում, էջ 19):

նակ Ֆլորենցիայի Պիտտի պատկերասրահում ցուցադրվող «Ինքնանկարը» (1874) և այլն:

Հոգվածի վերջում Հացունին հատվածաբար մեջբերում է 1897 թ. սեպտեմբերի 26-ին և 27-ին Թեոդոսիայի քաղաքապետարանի դահլիճում կայացած՝ Հ. Այվազովսկու 80-ամյակին ու նրա ստեղծագործական գործունեության 60-ամյակին նվիրված պաշտոնական տոնակատարության և դրան հաջորդած հանդիսավոր այլ միջոցառումների մասնակից, բանագնաց պատգամավոր, Վենետիկի Մխիթարյան միաբանության անունից ծովանկարչին հասցեագրված շնորհավորական հեռագիրն ընթերցած, ապա «մի փոքր ոտանալուր» կարդացած հայր Համագասպ Սափարյանի հաշվետու գրությունը³⁸: Սափարյանի նամակից տեղեկանում ենք, որ հանդեսին ներկա էին Տավրիայի նահանգապետ Պյոտր Լազարևը և Թեոդոսիայի քաղաքային ժողովի բոլոր անդամները՝ քաղաքապետ Լեոնարդ Դուրանտեի գլխավորությամբ: Բացելով հանդիսավոր նիստը՝ վերջինս կարդացել է Ռուսաստանի կայսր Նիկոլայ Երկրորդի ծովանկարչին ուղղված շնորհավորական հեռագիրը, որին կցված էր ինքնակալ միապետի հրամանագիրը Հովհաննես Այվազովսկուն կայսրության բարձրագույն պարգևներից մեկին՝ Սուրբ Ալեքսանդր Նևսկու աղամանակուռ շքանշանին արժանացնելու մասին: Ապա Դուրանտեն հրապարակել է քաղաքապետարանի որոշումը՝ Թեոդոսիայում նախակրթական վարժատուն բացելու և այն աշխարհահռչակ ծովանկարչի անունով կոչելու մասին: Դրան հետևել են նահանգապետի, կայսերական Գեղարվեստի ակադեմիայի, Լուսավորության նախարարության, Ծովային նախարարության, Յալթայի քաղաքային ժողովի, Ռուս նկարիչների հարավային ընկերության, Պետերբուրգի հայ հասարակության, Թեոդոսիայի հայ ծխականների լիազոր ներկայացուցիչների ողջույնի խոսքերն ու շնորհավորական ուղերձները, որոնք ընդմիջվել են հոբելյարին թանկարժեք նվերների մա-

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 21–22: Մ. Սարգսյանի վերոհիշյալ աշխատության մեջ հոբելյանական այդ տոնախմբությանը «Աղամանդյա հոբելյանը» վերտառությամբ մի փոքրիկ գլուխ է հատկացված (տե՛ս Մ. Սարգսյան. Մեծ ծովանկարչի կյանքը, էջ 393–396), որտեղ, ինչպես և Այվազովսկու՝ 1890-ին Փարիզում բացված անհատական ցուցահանդեսի մասին պատմող գլխում, փաստացի սխալներ ու անճշտություններ կան: Այսպես՝ գրված է, որ հոբելյարի մեծարման հանդիսավոր նիստը տեղի է ունեցել ոչ թե քաղաքապետարանի դահլիճում, այլ ծովանկարչի առանձնատանը կից պատկերասրահում, իսկ Վենետիկի Մխիթարյան միաբանության անունից ելույթ են ունեցել ու ողջույնի խոսք ասել Վարդան Հացունին և ոմն Մ. Սարինյանը (նույն տեղում, էջ 395): Ինչպես տեսանք, Հացունին ծովանկարչի հոբելյանական հանդեսին չի մասնակցել և այդ օրերին Ս. Լազար կղզուց չի բացակայել: Ինչ վերաբերում է մեզ անհայտ Մ. Սարինյանին, ապա հարգարժան արվեստաբանը վերջինիս պարզապես չփոթել է Համագասպ Սափարյանի հետ: Այստեղից երևում է, որ «Բազմավեպում» տպագրված Հացունու այս հոգվածը ևս վրիպել է Հ. Այվազովսկու կենսագրի ուղադրությունից:

տուցման արարողությունը: Նույն օրը նույն դահլիճում կազմակերպված հանդիսավոր բազմամարդ ճաշկերույթի ժամանակ նահանգապետ Պյոտր Լազարևի, քաղաքագլուխ Լեոնարդ Դուրանտեի և Թեոդոսիայում ֆրանսիական հյուպատոսի արտասանած կենաց ճառերից հետո ընթերցվել են Ամենայն հայոց կաթողիկոսից, կայսերական ընտանիքից ու նախարարներից ստացված հեռագրերը:

Վ. Հացունու հոգվածը Այվազովսկու մասին ծովանկարչի կենդանություն օրոք «Բազմավեպում» զետեղված վերջին հրապարակումն էր: Դրանից երկու տարի անց՝ 1900 թ. ապրիլի 19-ին (նոր տոմարով մայիսի 2-ին) հանճարեղ արվեստագետը հեռացավ կյանքից: Այդ տխուր լուրը արձագանք գտավ ինչպես ռուսական ու եվրոպական, այնպես էլ հայկական մամուլում: Իր մեծահամբավ հայրենակցի հիշատակը հարգեց նաև «Բազմավեպը»: Ամսագրի՝ նույն թվականի հուլիսյան պրակում տեղ գտավ Հովհաննես Այվազովսկու մահախոսականը, որի հեղինակն էր Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, այն ժամանակ դեռ տակավին երիտասարդ բանասեր, վանական ճեմարանի հայոց լեզվի, գրականության և պատմության դասատու, հետագայում՝ «Բազմավեպի» խմբագիր, ապա միաբանության արքայապարտ Հովհաննես (Հովհան) Ավգերյանը³⁹:

Խոր կսկիծով արձանագրելով, որ «հայ հորիզոնի ամենապայծառ աստեղաց մէկի»՝ Հովհաննես Այվազովսկու վախճանից հետո «գեղեցկագիտական բովանդակ աշխարհը մեծ կորուստ կրեց», և որ նկարիչը նոր ժամանակների առաջին հայ հանճարն էր, ում հաջողվեց «պսակ մը կորզել կոյր բաղդի ձեռքէն»⁴⁰, մահախոսականի հեղինակը դրվատանքի խոսքեր է ասում նաև փառապանծ վարպետի մարդասիրության, բարերարական ու հայանպաստ անշահախնդիր գործունեության մասին և վերջում կրկին խոնարհվում նրա հիշատակի առաջ⁴¹:

Անցավ 37 տարի, և «Բազմավեպի» էջերում երևաց ծովանկարչին նվիրված ևս մի հոդված, որի հեղինակն անվանի երաժշտագետ, Մխիթարյան միաբանության անդամ, հանդեսի նախկին խմբագիր Ղևոնդ Տայանն էր⁴²: Հոգվածագիրն ընթերցողներին նախապես զգուշացնում է, որ նպատակ չունի անդրադառնալու հայ ծովանկարչի ստեղծագործական կենսագրությանն ու նրա կերտած կտավներին, քանզի «անոնք արդէն վայելչօրէն պատկերացուած են հայ մամուլին մէջ ձեռնհաս գանազան գրիչներէ»⁴³: Այդ գրիչներից նա առանձնացնում և հատկապես բարձր է գնահատում Մխիթարյան միաբան Անդրեաս Խրլազյանին, ով 1933–1934 թթ. Հ. Այվազովսկու

³⁹ Տե՛ս Ա. Լ. Գ. Ե. Ե. Ե. Ե. Յ. [Ով հաննէս]. Յովհաննէս Այվազովսքի. – «Բազմավեպ», 1900, յուլիս, թիւ 7, էջ 334–335:

⁴⁰ Նույն տեղում, էջ 334:

⁴¹ Նույն տեղում, էջ 335:

⁴² Տե՛ս Ղ. Տայանն. Սուրբ Ղազարու Մխիթարեան Դիւանը ծովանկարիչ Յ. Այվազովսկիի յաղթանակներու մասին. – «Բազմավեպ», 1937, դեկտեմբեր, թիւ 12, էջ 305–316:

⁴³ Նույն տեղում, էջ 305:

մասին ընդարձակ, բազմաթիվ փաստերով ու հետաքրքիր դիտարկումներով հագեցած հոդվածաշար է հրատարակել Վիեննայում լույս տեսնող «Հանդես ամսօրյա» հայագիտական ուսումնաթերթում⁴⁴:

Նշենք, որ 2017 թ. նոյեմբերին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած, Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին նվիրված գիտաժողովում կարգացած իր զեկուցման մեջ ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրության թեկնածու Անահիտ Բեքարյանն անդրադարձել է Ղ. Տայանի վերոհիշյալ հոդվածին, որտեղից մի շարք մեջբերումներ է արել, անհրաժեշտ տեղեկություններ քաղել, որոնք նրան հիմք են տվել շտկելու ծովանկարչի մասին արվեստաբաններ Մինաս Սարգսյանի ու Շահեն Խաչատրյանի աշխատություններում և նրանց կազմած ժողովածուներում տեղ գտած փաստական սխալներն ու անճշտությունները⁴⁵: Այդ իսկ պատճառով չենք ծանրանա «Բազմավեպի» այդ հրապարակման վրա: Միայն նկատենք, որ Ղ. Տայանի հոդվածի հիմնական նորությունն այն է, որ նա ընթերցողներին առաջին անգամ ծանոթացնում է Վենետիկի Մխիթարյան միաբանության արխիվում եղած փաստաթղթերի ու օրագրային գրառումների, ինչպես նաև միաբանության աբբահայր Սուքիաս Սոմալյանի՝ 1842 թ. սեպտեմբերի 3-ին ծովանկարչին հղած գրույթյան հետ, որով վերջինիս շնորհակալություն է հայտնում Ս. Ղազար վանքին իր կտավներից մեկը՝ «Նեապոլի փարոսը» (1842) նվիրաբերելու համար: Ղ. Տայանը հատվածաբար մեջբերում է 1840–1843 թթ. միաբանության անդամներ Մինաս Բժշկյանին, Գևորգ և Էդուարդ Հյուրմյուզյաններին, Հովսեփ Խարամիրզայանին, Եղիշե և Միքայել Ալյանաքյաններին աբբահոր ուղղած ու նրանցից ստացած նամակները, որոնք լրացուցիչ նոր ու կարևոր տեղեկություններ են տալիս այդ տարիներին Հ. Այվազովսկու Իտալիա կատարած ուղևորությունների, Հռոմում, Նեապոլում և Վենետիկում նրա կազմակերպած ցուցահանդեսների, Մխիթարյան հայրերի հետ Ս. Ղազար կղզում նկարչի ունեցած հանդիպումների մասին:

Ղ. Տայանի հոդվածն ուղեկցվում է Այվազովսկու ստեղծագոր-

⁴⁴ Տե՛ս Ա. Խըրլագեան. Յովհաննես Այվազովսկի ծովանկարիչ. իր կեանքն ու գործունեությունը. – «Հանդես ամսօրեայ» (Վիեննա), 1933, մարտ-յունիս, թիւ 3–6, էջ 342–361, յուլիս-օգոստոս, թիւ 7–8, էջ 495–508, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 9–10, էջ 621–632, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 11–12, էջ 713–729, 1934, յունուար-փետրուար, թիւ 1–2, էջ 77–89, մարտ-ապրիլ, թիւ 3–4, էջ 168–183, մայիս-յուլիս, թիւ 5–7, էջ 316–324: Նկատենք, որ եթե Ա. Խըրլագյանի՝ այս բովանդակալից հոդվածաշարը հրատարակվեր առանձին գրքուկով՝ այն կդառնար հայերեն լեզվով Հ. Այվազովսկու մասին գրված առաջին մենագրությունը:

⁴⁵ Տե՛ս Ա. Բեքարյան. Հովհաննես Այվազովսկին և Մխիթարյանները. – Հովհաննես Այվազովսկի – 200: Գիտական նստաշրջանի նյութեր (3 նոյեմբերի, 2017), էջ 99–116:

ծովթյունները՝ «Քառս: Աշխարհի արարումը» (1841), «Նեապոլի փա-
րոսը» (1842) և «Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար
կղզում» (1899) հայտնի կտավների, ինչպես նաև ծովանկարչի՝ մեզ
անհայտ մի դիմանկարի սև-սպիտակ լուսանկարներով: Դիմանկարի
տակ բացակայում են արվեստագետի այդ կենդանագիրը վրձնած
նկարչի անունն ու դրա ստեղծման տարեթիվը, որոնք, դատելով լու-
սանկարից, առկա են վերատպված կտավի ստորին աջ անկյունում,
բայց լուսանկարի փոքր չափերի և ցածր որակի պատճառով, ցավոք,
անընթեռնելի են: Ասենք, որ ծովանկարչի մասին երբևէ զբոված ու
հրատարակված հայերեն, ռուսերեն և այլալեզու գրքերում ու հոդ-
վածներում մեզ չի հանդիպել Այվազովսկու սույն դիմանկարը կամ
դրան վերաբերող որևէ տվյալ: Պարզ չէ՝ արդյո՞ք սա ծովանկարչի
ինքնանկարն է, թե՞ այլ վարպետի ստեղծագործություն: Բայց հա-
մոզված ենք, որ այդ կտավի վրա աշխատելիս հեղինակն օգտագոր-
ծել է Այվազովսկու հայտնի լուսանկարներից մեկը:

Երկարատև ընդմիջումից հետո՝ արդեն XXI դ. թևակոխած «Բազ-
մավեպը» հրատարակեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ
գիտաշխատակից, արվեստագիտության թեկնածու Գարեգին Քո-
թանջյանի «Իտալիան եւ Այվազովսկու արուեստը» վերնագրով
հոդվածը, որն ամբողջապես նվիրված է 1840–1843 թթ. Իտալիայում
ապրած ու ստեղծագործած, այնտեղ կատարելագործված հայ երի-
տասարդ ծովանկարչի ակադեմիական գործուղման շրջանին⁴⁶: Հոդ-
վածագիրը գտնում է, որ «հենց Իտալիայում անցկացրած տարիներն
են նպաստել նրա գեղարուեստական լեզուի անկրկնելի գծերի վերջ-
նական ձևաւորմանը»⁴⁷: Գ. Քոթանջյանի կարծիքով, իտալական
թանգարաններում հայ արվեստագետին առաջին հերթին պետք է
հետաքրքրեին վենետիկյան Վերածննդի գունապաշտ վարպետների,
մասնավորաբար՝ Ջովաննի Բելլինիի, Ջորջոնեի ու Տիցիանի, ինչպես
նաև XVII դ. Ֆրանսիական կլասիցիզմի հիմնադիրներ Նիկոլա Պու-
սենի և Կլոդ Լորենի կտավները, առավելապես՝ նրանց բնանկարներն
ու ծովային պատկերները⁴⁸: Իտալական բնութային վառ ու լուս-
առատ տեսարանները նույնպես տպավորվեցին գեղանկարչի հիշո-
ղություն մեջ, հղկեցին ու բյուրեղացրեցին նրա գունային՝ առանց
այդ էլ նուրբ ընկալումները: Հոդվածագրի խոսքերով՝ գալով Իտա-
լիա «Այվազովսկին յայտնաբերեց մանկութիւնից իրեն ծանօթ բնա-
կան միջավայր՝ լոյսի առատութիւն, վառ գոյներ, ծովափնեայ հիա-
սքանչ քաղաքներ...»⁴⁹:

Նշելով, որ իր քառամյա գործուղման ընթացքում արվեստագե-

⁴⁶ Տե՛ս Գ. Քոթանջեան. Իտալիան եւ Այվազովսկու արուեստը. – «Բազմավեպ», 2007, № 1–4, էջ 538–555: Գ. Քոթանջյանի այս հոդվածը վրիպել է ծովանկարչի վերոհիշյալ «Կենսամատենագիտության» կազմող-
ների ուղագրությունից:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում էջ 542:

⁴⁸ Նույն տեղում, էջ 542–543:

⁴⁹ Նույն տեղում, էջ 547:

տը հասցրել է վրձնել շուրջ 80 մեծադիր կտավ, հիմնականում ծովանկարներ ու դաշտանկարներ, հողվածի հեղինակը դրանք պայմանականորեն բաժանում է երկու խմբի, որոնցից մեկն անվանում է «ռոմանտիկ բանաստեղծական», իսկ մյուսը բնութագրում որպես «ռոմանտիկ դրամատիկական»⁵⁰: Առաջին խմբում ընդգրկված կտավները («Նեապոլի ծովածոցը լուսնյակ գիշերով», 1842, «Գոնդոլավարը ծովում գիշերով», 1843, «Ծովափ», 1843 և այլն) «վերարտադրում են բնութեան խաղաղ անդորրը, բացայայտելով նրա բանաստեղծական էությունը, բազմակողմանիորեն տարակերպելով միեւնոյն գեղարուեստական թեման»⁵¹, այնինչ երկրորդ խմբին պատկանող նկարներում («Քառս: Աշխարհի արարումը», «Նեապոլի փարոսը», «Նավաբեկություն», 1843 և այլն) «արտայայտուած են ծովային տարերքի ահեղ ու դրամատիկ կողմերը, նրա անհանգիստ ալեկոծութեան պահերը, սարսափելի փոթորիկները, աւերիչ ուժերի ողբերգությունը եւ այդ ամէնին հակառակ մարդկանց խիզախ դիմադրությունը»⁵²: Մեկ առ մեկ գննելով ու քննարկելով Այվազովսկու այդ շրջանի լավագույն ստեղծագործությունները՝ Գ. Քոթանջյանը նկատում է, որ դրանք «վկայում են նրա զարմանալի տաղանդի արտասովոր վաղ հասունությունը»⁵³:

Հողվածի վերջում հեղինակը հատուկ շեշտում է, որ հայ երիտասարդ ծովանկարչի կյանքում բախտորոշ դեր կատարեցին Վենետիկի Մխիթարյան միաբանության արքայապետ Գրիգոր Կոնյալյանի հետ ունեցած հանդիպումները և մտերիմ զրույցները, որոնց շնորհիվ «ապագայ հանճարը առաջին անգամ խորապէս գիտակցեց իր ազգային պատկանելութեան նշանակությունը եւ կարեւորությունը»⁵⁴:

«Բազմավեպում» Հովհաննես Այվազովսկուն նվիրված մեզ հայտնի վերջին հրատարակումը Փրանսահայ պատմաբան Անահիտ Տեր-Մինասյանի «Այվազովսկի (1817–1900) հայ նկարիչ մը ռուսական Մեծ դարուն մէջ» Փրանսերենով շարադրված հոդվածն է⁵⁵: Ներկայացնելով վարպետի ստեղծագործական կենսագրությունը, հողվածագիրը հանգամանորեն խոսում է XIX դ. ռուսական իրականություն մեջ տեղ գտած և Այվազովսկու աշխարհընկալման, նրա գեղագիտական հայացքների ու գեղարվեստական սկզբունքների ձևավորմանը նպաստած, նրա արվեստի գաղափարական բովանդակություն, արտահայտվելու կերպի և ոճի վրա խոր ազդեցություն

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում, էջ 553:

⁵⁴ Նույն տեղում, էջ 554:

⁵⁵ Տե՛ս A. Ter Minassian. Aivazovski (1817–1900) un peintre arménien dans Grand siècle russe.– «Բազմավեպ», 2009, № 1–4, էջ 485–516: Ա. Տեր-Մինասյանի սույն հողվածը ևս չի արտացոլվել Այվազովսկու «Կենսամատենագիտություն» էջերում:

Թողած պատմական իրադարձությունների, մշակութային երևույթների ու ականավոր դեմքերի մասին: Առանձնացվում ու կարևորվում է նաև հայ հասարակական ու մշակութային կյանքի հետ արվեստագետի ունեցած հարատև կապը, որի հաստատման և ամրապնդման համար իր դերն է խաղացել նաև Գաբրիել Այվազովսկին, ում կենսագրությունը ևս ներկայացված է այդ նույն հոդվածում⁵⁶:

Այսպիսով մնում է փաստել, որ իր վերոհիշյալ հոդվածներով ու հաղորդումներով «Բազմավեպ» հանդեսը նկատելի ներդրում է բերել մեծանուն ծովանկարչի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության և գնահատման շնորհակալ գործին:

ИВАН (ОВАННЕС) АЙВАЗОВСКИЙ НА СТРАНИЦАХ
ЖУРНАЛА «БАЗМАВЕП»

АРАРАТ АГАСЯН

Р е з ю м е

В армянской периодической печати первые публикации об И. К. Айвазовском появились еще в 40-х годах XIX века. Еще при жизни великого мариниста в армянских газетах и журналах было опубликовано множество (около 150-ти) коротких сообщений и развернутых статей о художнике. В числе этих изданий был и основанный в 1843 году, выходящий поныне журнал «Базмавеп» — официальный орган Конгрегации армянских монахов-мхитаристов в Венеции, учредителем и первым редактором которого был старший брат прославленного живописца Габриэл Айвазовский. В эти годы на страницах издания был помещен целый ряд материалов о великом мастере, авторами которых были итальянский архитектор Винченцо Микелли, уроженец крымского городка Карасубазар (ныне — Белогорск), декан католических церквей Крыма, историк-арменовед Керовбе Кушнерян, член Конгрегации венецианских мхитаристов, филолог и этнограф Вардан Ацун, редактор «Базмавепа», духовный глава Конгрегации аббат Ованнес Авгерян и другие. Журнал и впоследствии несколько раз обращался к жизни и творчеству И. К. Айвазовского. Среди этих публикаций выделяются статьи известного музыковеда, члена все той же Конгрегации монахов-мхитаристов, редактора того же журнала Гевонда Таяна, а также искусствоведа Гарегина Котанджяна и армянского историка Анаид Тер-Минасян, живущей во Франции.

⁵⁶ Նույն տեղում, էջ 505–510:

IVAN (HOVHANNES) AIVAZOVSKY ON THE PAGES OF
“BAZMAVEP” JOURNAL

ARARAT AGHASYAN

S u m m a r y

In Armenian periodical press the first publications about Ivan Aivazovsky appeared as far back as the 40s of the 19th century. During the great marine painter's lifetime a large number (around 150) of short reports and extensive articles about the painter were published in Armenian newspapers and journals. Among those publications was “Bazmavep” – the official journal of the Congregation of Armenian monks-Mekhitarists in Venice, which has been issued since 1843, the founder and first editor of which was the elder brother of the celebrated painter – Gabriel Aivazovsky. In those years a whole series of materials about the great master was put in the periodical, the authors of which were Italian architect Vincenzo Micelli, the native of Crimean town Karasubazar (now – Belogorsk), the dean of catholic churches of Crimea, historian-armenologist Kerovbe Kushnerian, the member of Mekhitarist Congregation of Venice, philologist and ethnographer Vardan Hatsuni, the editor of “Bazmavep”, the spiritual leader of the Congregation abbot Hovhannes Avgeryan and others. The journal subsequently has turned to the life and oeuvre of I. Aivazovsky for a number of times. Among those publications the articles of a well-known musicologist, the member of the Congregation of Mekhitarists, the editor of the above-mentioned journal Ghevond Tayan, as well as art historian Garegin Kotanjyan and French-Armenian historian Anahide Ter-Minassian are notable.

ԿՈՉՄԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՍ

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտական պարբերականը՝ «Պատմաբանասիրական հանդես»-ը, բոլորեց իր գոյությունից վեցերորդ տասնամյակը:

Հանդեսը հիմնադրվել է 1958 թվականին՝ ԽՍՀՄ-ում 50-ական թվականների կեսերին սկսված քաղաքական «ձնհալի», խորհրդային տնտեսություն, կրթության ու գիտության բուռն զարգացման և հայ ազգային ինքնագիտակցության զարթոնքի ժամանակաշրջանում:

«Հանդես»-ը սկսեց տպագրվել, երբ Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիան արդեն ուներ հասարակագիտական պարբերական՝ 1940 թ. հիմնադրված «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր: Հասարակական գիտություններ» ամսագիրը [1940–1943 թթ. այն կոչվել է հասարակական ու բնական գիտությունների «Տեղեկագիր» (ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի), իսկ 1966-ից՝ «Լրաբեր հասարակական գիտությունների»]: Այդ պատճառով առավել կարևոր էր հանդեսի ծրագրային նպատակների ու խնդիրների հստակ սահմանումը: Նոր պարբերականի առաջին համարում տպագրված «Խմբագրության կողմից» ներածական հոդվածում նշված է, որ «Հանդես»-ն իր առջև նպատակ է դրել օժանդակել պատմաբանասիրական գիտությունների բնագավառում առկա չլուսաբանված հիմնախնդիրների, գիտական մանրագնին ուսումնասիրության և արդիականության գիրքերից վերագնահատման կարոտ բազմաթիվ հարցերի քննարկմանն ու լուծմանը: Ապա, մասնավորեցնելով, թվարկված են այն բնագավառները, որոնց ուսումնասիրությունն առաջնային պետք է լիներ հանդեսի համար. ««Պատմաբանասիրական հանդես»-ի էջերում կլուսաբանվեն հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, փիլիսոփայության, արվեստի և կուլտուրայի այլ բնագավառների հարցերը և ընդհանրապես հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կապերը մյուս ժողովուրդների հետ: Հանդեսը լայնորեն կլուսաբանի Սովետական Հայաստանի գիտական և կուլտուրական նվաճումները: Գիտական պրոբլեմների քննարկմանը... նպաստելու նպատակով Հանդեսը կունենա գիտական քննարկումների բաժին, որը կօժանդակի ստեղծագործական բանավեճերի ծավալմանը: Նա կունենա նաև բնագրերի հրատարակ-

ման, գրախոսությունների, գիտական լուրերի ու տեղեկությունների բաժիններ» (1958, №1, էջ 3-4): Հանդեսի կարևորագույն խնդիրներից է համարվել արտասահմանի հայ ընթերցողներին Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների աշխատանքներին ծանոթացնելը, ինչպես նաև Հայաստանյան ընթերցողներին արտասահմանյան հայագետների աշխատանքների վերաբերյալ տեղեկություն հաղորդելը: Պարբերականի գլխավոր նպատակն է՝ հանդեսի շուրջ համախմբել Հայաստանյան ու արտասահմանյան հայագետներին և միացյալ ուժերով նպաստել հայագիտության հետագա զարգացմանը: Կարևորելով Գիտությունների ակադեմիայի հայագիտական հանդեսի ստեղծումն ու գործունեությունը՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին 1960 թ. հուլիսի 28-ին խմբագրությունը հղած նամակում «Պատմաբանասիրական հանդես»-ը գնահատում է որպես «լրջագույն ակադեմիական ամսագիր», որի ասպարեզ իջնելը պայմանավորվում էր հասարակական նախադրյալներով՝ համընդհանուր առաջընթացով և իր անցյալն արժևորելով՝ հայ ժողովրդի ձգտմամբ:

Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ ստեղծված նոր պարբերականի խմբագրական կոլեգիայի կազմում ընդգրկվեցին անվանի պատմաբաններ ու բանասերներ Բաբեկեն Առաքելյանը, Սեն Արևշատյանը (պատասխանատու քարտուղար), Հ. Գ. Գրիգորյանը (գլխավոր խմբագրի տեղակալ), Սուրեն Երեմյանը, Լևոն Խաչիկյանը, Արտաշես Կարինյանը, Վ. Ե. Համագասպյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Գուրգեն Հովնանը, Արարատ Ղարիբյանը, Վաչե Նալբանդյանը: Հանդեսի գլխավոր խմբագիր նշանակվեց նրա հիմնադիր, ականավոր պատմաբան, ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, ով շուրջ 40 տարի անընդմեջ, անմնացորդ նվիրումով ղեկավարեց հանդեսի աշխատանքները: Նրա եռանդուն ջանքերով հանդեսը դարձավ միջազգային ճանաչում ունեցող հայագիտական ամենահեղինակավոր պարբերականը: 1999 թ. Մ. Ներսիսյանի մահից հետո հանդեսի գլխավոր խմբագրի պաշտոնը վստահվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, անվանի պատմաբան Վարդգես Միքայելյանին: Վերջինիս մահից հետո՝ 2005 թ., հանդեսի մեկ համար լույս տեսավ պատմական գիտությունների դոկտոր Պարույր Մուրադյանի, մեկն էլ՝ հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ, պատասխանատու քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանի խմբագրությամբ: 2006 թ. հանդեսի գլխավոր խմբագիր ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայտնի բանագետ-բանասեր Սարգիս Հարությունյանը: 2018 թ. հունիսի 13-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր նշանակեց Անուշավան Զաքարյանին, իսկ խմբագրական խորհրդի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանին:

Անցած տարիները ընթացքում հանդեսի խմբագրական կոլեգիայի կազմում են եղել այնպիսի անվանի հայագետներ և արևելագետներ, ինչպիսիք են՝ Բորիս Պրոտրովսկին, Իլիա Աբուլաձեն, Վլադ Բընըց-

յանուն, Արամ Ղանալանյանը, Կարո Ղաֆադարյանը, Գևորգ Զահուկյանը, Էդվարդ Զրբաշյանը, Գագիկ Սարգսյանը, Գևորգ Բրուտյանը, Էմանուել Պրվազյանը, Հրաչ Բարթիկյանը: Ներկայումս խմբագրական խորհրդի կազմում են՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ՝ Աշոտ Մելքոնյանը (նախագահ), Ռուբեն Սաֆրաստյանը, թղթակից անդամներ՝ Լավրենտի Հովհաննիսյանը, Պավել Ավետիսյանը, Աելիտա Դուրախանյանը, Լևոն Աբրահամյանը, Հենրիկ Հովհաննիսյանը, Մուրադ Հասրաթյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը, պատմական գիտությունների թեկնածու Վահե Հովակիմյանը:

Գոյություն ուղ ընթացքում «Հանդես»-ն անշեղորեն լույս է տեսել իր ծրագրային նպատակներին ու խնդիրներին համահունչ: Պարբերականի առաջին համարից նաև ձևավորվել ու տարիներ ի վեր նույնությամբ պահպանվել է նրա բովանդակային կառուցվածքը: Հանդեսի բաժիններն ու ենթաբաժինները («Հոդվածներ», «Հաղորդումներ», «Բանավեճեր», «Պատմամշակութային ակնարկներ», «Հրապարակումներ», «Քննարկումներ», «Գրախոսություններ», «Սփյուռքահայ կյանք», «Մեր երախտավորները», «Գիտական լրատու», «Գիտական կյանք», «Մեր հոբելյարները», «Նամակ խմբագրությանը») հետագայում միայն ենթարկվել են որոշ լրացումների ու ճշգրտումների: Հոդվածների, հաղորդումների, հրապարակումների ու քննարկումների (նախկինում՝ բանավեճերի) բաժիններում ընդգրկվում են հայ և օտարազգի մասնագետների աշխատություններ, որոնցում վերլուծված են հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների պատմության, գրականության, լեզվի, բանահյուսության, ազգագրության, հնագիտության, վիճակագրության, փիլիսոփայության, իրավունքի, արվեստների, ճարտարապետության այլևայլ խնդիրները, ինչպես նաև Հայաստանում, Սփյուռքում ու արտասահմանում տեղի ունեցած գիտական, մշակութային կարևոր իրադարձությունները, ներկայացվում են ականավոր հայագետների կյանքն ու գործունեությունը, գիտություն և մշակույթի ականավոր դեմքերի անտիպ նամակները, արխիվային տարբեր բնույթի վավերագրերը: Հանդեսը ծանրակշիռ ներդրում ունի կովկասագիտական, արևելագիտական, բյուզանդագիտական ուսումնասիրությունների ասպարեզում: Ընդհանուր մշակութաբանական և պատմաբանասիրական հետաքրքրություն ներկայացնող խնդիրները ևս մշտապես «Հանդես»-ի ուղղորդության կենտրոնում են՝ դրանով իսկ առավել ընդլայնելով նրա գիտական տեսադաշտը՝ իբրև գիտական լայն ընդգրկումների պարբերական: Նշենք, որ «Պատմաբանասիրական հանդես»-ում տպագրված նյութերն առանձնանում են աղբյուրագիտական և պատմագիտական հարուստ հենքով:

Պարբերականի «Գրախոսություններ», «Մեր հոբելյարները», «Գիտական կյանք» կամ «Լրատու» (նախկինում՝ «Գիտական ինֆորմացիա») բաժիններում պարբերաբար ներկայացվում են հայագիտական, արևելագիտական ու ընդհանուր մշակութաբանական

արժեք ներկայացնող կարևոր հրատարակություններ, համակողմանիորեն լուսաբանվում է հայկական գաղթավայրերի պատմամշակութային կյանքը, տեղեկություն է տրվում կարևոր հոբելյանների, հայաստանյան և միջազգային գիտաժողովների վերաբերյալ:

«Հանդես»-ի խմբագրությունը հետևողական է նաև աղբյուրագիտական նորությունների, հնագիտական պեղումների արդյունքներն ամփոփող նյութերի, նորահայտ մատենագրական փաստաթղթերի հրատարակման գործում:

Պարբերականի խմբագրությունը, դրսևորելով բարձր պրոֆեսիոնալիզմ և նվիրվածություն իր աշխատանքին, կարողացել է «Հանդես»-ի շուրջ համախմբել Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Եվրոպայի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, Ամերիկայի հայ ու այլազգի բազմաթիվ գիտնականների: Դրա շնորհիվ պարբերականը ոչ միայն հաջողությամբ կատարել է իր առջև դրված խնդիրներն, այլև նպաստել է ստեղծագործական բանավեճերի ծավալմանը, գիտական կապերի ու համագործակցության կայացմանը հայոց պատմության և մշակույթի ուսումնասիրության ասպարեզում: Օտարազգի գիտնականներից հանդեսին աշխատակցել են. Բուլղարիայից՝ Դ. Անգելովը, Վ. Գյուզելևը, Չեխոսլովակիայից՝ Լ. Մոտալովան, Ռումինիայից՝ Վ. Բընըցյանուն, Իտալիայից՝ Ջ. Բոնֆանտեն, Վ. Պիզանին, Պ. Կունեոն, Ա. Ալպագո-Նովելլոն, Ջ. Լոնգոն, Ալ. Օրենգոն, Ֆրանսիայից՝ Ֆ. Ֆեյդին, Ժ.-Պ. Մահեն, Շ. Ռենուն, ԱՄՆ-ից՝ Ռ. Թոմսոնը, Ջ. Գրեպինը, Ռ. Յակոբսոնը, Դ. Ստրոնախը, Է. Ռ. Անդերսոնը, Հոլանդիայից՝ Ս. Մալքը, Մ. Սթոունը, Բելգիայից՝ Ջ. Վալտենբերգը, Հունգարիայից՝ Է. Շյուցը, Ժ. Տրոչանին, Է. Կիբչանը, Գերմանիայից՝ Հ. Վալտեր Պոլը, Ռուսաստանից՝ Վ. Տոպորովը, Օ. Շիրոկովը, Տ. Իզմայլովան, Ա. Տերեչչենկոն, Յու. Բարանովը, Ուկրաինայից՝ Ի. Կրիպյակևիչը, Ն. Ռաչբան, Ս. Ավերբուխը, Ա. Զինչենկոն, Ս. Յա. Դաչկևիչը, Ա. Բոժկոն, Ի. Հայուկը, Վրաստանից՝ Ի. Աբուլաձեն, Դ. Չիկիլիզվիլին, Գ. Մելիքիշվիլին, Հյուսիսային Օսեթիա-Ալանիայի Հանրապետությունից՝ Վլ. Բեստովը, Իրանից՝ Մ. Մալեք Մոհամեդին, Ա. Յահյամասիհին, Թուրքիայից՝ Բ. Բիլմեզը և շատ ուրիշներ: Հեղինակների նման մեծ ընդգրկումը վկայում է, որ պարբերականը հասել է միջազգային լայն ճանաչման և վայելում է գիտական մեծ հեղինակություն: Միջազգային գիտական շրջանակներում հանդեսի նկատմամբ բարձր վստահություն ու հարգանքի վերաբերմունքն իր արտացոլումն է գտել տարբեր երկրներից անվանի գիտնականների՝ պարբերականի խմբագրությունը հղած բազմաթիվ նամակներում, խորհրդային և արտասահմանյան թերթերի ու ամսագրերի տպագրած դրվատական հոդվածներում:

1997–2009 թթ. «Պատմաբանասիրական հանդես»-ի հրատարակմանը մեծապես նպաստել է «Գալուստ Գյուլբենկյան Հիմնադրամ»-ի օժանդակությունը (հայկական բաժանմունքի ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Զավեն Եկավյան):

«Պատմաբանասիրական հանդես»-ը հիմնադրման օրվանից ընթերցողին ներկայացել է որպես 1500–2400 տպաքանակով երկլեզու պարբերական, որում նյութերը սկզբնական շրջանում հրատարակվել են հայերեն և ռուսերեն՝ համապատասխան լեզուներով ամփոփումներով: Ներկայումս դրանց կցված են նաև անգլերեն լեզվով ամփոփումներ, ինչի շնորհիվ պարբերականում հրատարակված նյութերի ընդհանուր բովանդակությունը մատչելի է դարձել շատ ավելի մեծ թվով օտարալեզու ընթերցողների: Գիտնականների ավագ և միջին, ինչպես նաև երիտասարդ սերնդի ներկայացուցիչների համար միշտ էլ պատիվ է եղել «Հանդես»-ում տպագրվելը: Ցավոք, վերջին երկու և կես տասնամյակում հանրապետության գիտական հանդեսները հայտնվել են բազմաբնույթ ու ղեկար հաղթահարելի խոչընդոտների առջև՝ սկսած Ֆինանսական սղությունից մինչև հրատարակություն պարբերականության պահպանում, տպաքանակի նվազում և այլն: Անկախ այդ հանգամանքներից՝ «Պատմաբանասիրական հանդես»-ն աշխատել է բարձր պահել իր գիտական հեղինակությունը, ինչն ամենադժվարն է մեր իրականության մեջ: Դա ենթադրում է թե՛ հանդեսի գիտական մակարդակի պահպանում ու բարձրացում, թե՛ երիտասարդ ուժերի ներգրավում խմբագրական խորհրդի կազմի մեջ և թե՛ առավել համարձակ վերաբերմունք պատմագիտության ու բանասիրության մեջ տեղ գտած հին ու կարծրացած տեսակետների և պատկերացումների վերանայման հարցում՝ զարգացնելով բանավեճի ու քննարկման ուղղությունները:

Այսօր, թեև նվազել է հանդեսի տպաքանակը (250 օրինակ), սակայն, ինչպես և անցյալում, այն հասնում է իր ընթերցողներին աշխարհի տարբեր ծագերում: Ուշագրավ մի փաստ ևս. մինչև 1990 թ. տարեկան հրատարակվել է հանդեսի 4 համար, 1991–1997 թթ.՝ 1 կամ 2, մինչև 2000 թ. եղել են միացյալ համարներ, իսկ 2000 թ. «Պատմաբանասիրական հանդես»-ը եռամսյալից վերածվեց քառամսյա հանդեսի, և առ այսօր տարեկան հրատարակվում է 3 համար:

Անցած 60 տարիների ընթացքում լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդես»-ի 208 մեծադիր համար՝ յուրաքանչյուրը 15–20 մամուլ ծավալով, միջին հաշվով յուրաքանչյուր համարում գետեզվել է 25 անուն նյութ, այսինքն՝ իր գոյություն ընթացքում հանդեսն ընթերցողին ներկայացրել է շուրջ 5700 տպագիր միավոր:

1983 թ. հայերեն ու ռուսերեն, իսկ 2009 թ. հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուներով լույս են տեսել «Պատմաբանասիրական հանդես»-ի 1958–1982 և 1983–2007 թթ. մատենագիտական ցանկերը: Ցանկերում թվարկված հրատարակումների քանակը՝ համապատասխանաբար 2828 և 1909 միավոր, ներկայացնում է կես դարի ընթացքում հայագիտական ու դրան աղերսվող գիտական այլ բնագավառների զարգացման ուղղությունները և գիտահետազոտական գործընթացները: Ի դեպ, «Հանդես»-ի 1983–2007 թթ. մատենագիտական

ցանկը տպագրվել է «Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ»-ի միջոցներով:

«Պատմաբանասիրական հանդես»-ը առանձնահատուկ տեղ է գրավում հայ պարբերական մամուլի բազմադարյա պատմության մեջ: Այն նաև առանձնանում է Հայաստանի Հանրապետության գիտական հրատարակությունների շարքում՝ որպես միջազգային հայագիտական հեղինակավոր պարբերական: Աշխատակիցների բազմամյա փորձառությունը, հաստատուն ավանդույթները, հայագիտության նվաճումներն ընթերցող հասարակությանը հավուր պատշաճի ներկայացնելու կարողությունը պարտավորեցնում են խմբագրությունը մշտապես բարձր պահել հրատարակության գիտական վարկանիշը:

Շնորհավորելով «Հանդես»-ի խմբագրության աշխատակիցներին, խմբագրական խորհրդի անդամներին, հեղինակային ողջ կազմին ու գիտական հանրությանը պարբերականի լույս ընծայման 60-ամյա հոբելյանի կապակցությամբ և մաղթելով նորանոր հաջողություններ՝ լիահույս ենք, որ «Պատմաբանասիրական հանդես»-ը ապագայում ևս նշանակալի ավանդ կունենա հայագիտության զարգացման գործում: Իսկ հայագիտության զարգացումը դժվար է պատկերացնել առանց «Պատմաբանասիրական հանդես»-ի:

ПРЕДАННЫЙ ПРИЗВАНИЮ

ЛИЛИТ ОГАНИСЯН

Резюме

В многовековой истории армянской периодической печати особое место занимает «Историко-филологический журнал» Национальной академии наук Республики Армения. На протяжении шести десятилетий, пройдя трудный и сложный научно-исследовательский, научно-организационный и научно-издательский путь, журнал стал одним из авторитетных арменоведческих изданий, успешно выполняющим свои программные задачи, также — известной школой подготовки научных кадров.

Первый номер журнала, созданного решением Президиума Академии наук АрмССР, вышел в 1958 г. Он открывался вступительной статьей «От редакции», в которой были представлены программные цели и задачи нового арменоведческого издания. В редколлегию журнала вошли видные историки и филологи. Главным редактором был назначен выдающийся историк, вице-президент Академии наук, академик Мкртыч Нерсисян, который свыше сорока лет руководил журналом. После кончины М. Нер-

сисяна в 1999 г. эта должность была доверена академику НАН РА, видному историку Вардгесу Микаеляну. С уходом В. Микаеляна из жизни в 2005 г. один номер журнала вышел под редакцией доктора исторических наук Паруйра Мурадяна, а следующий — под редакцией заместителя главного редактора, ответственного секретаря, доктора филологических наук Анушавана Закаряна. В 2006 г. главным редактором журнала был избран известный филолог-фольклорист, член-корреспондент НАН РА Саргис Арутюнян. С 13 июня 2018 г. главным редактором периодического издания является А. Закарян: он назначен Президиумом НАН РА. Редакционный совет «Историко-филологического журнала» возглавляет академик НАН РА Ашот Мелконян.

Принятая с первого номера журнала и сохранявшаяся на протяжении последующих лет структура — разделы и подразделы — впоследствии подверглась некоторым дополнениям и уточнениям. Материалы публикуются на армянском и русском языках, с приложением резюме на русском, армянском и английском языках. Ныне журнал выходит раз в четыре месяца. Вышло 208 номеров, каждый из которых имеет объем 15 — 20 печатных листов. В каждом номере помещено в среднем по 25 материалов, т. е., со дня основания было опубликовано почти 5700 материалов. Журнал распространялся в количестве 1500 — 2400 экземпляров (ныне — 250) не только в Армении, но и за рубежом.

За 60 лет своего существования «Историко-филологический журнал» НАН РА сплотил вокруг себя многих арменоведов со всего мира, проводя плодотворную работу по изучению важных вопросов истории армянского народа, литературы, языка, искусства, философии и других областей науки. На страницах издания освещались также проблемы востоковедения, кавказоведения, историографии и филологии, вопросы истории экономических, политических и культурных связей и взаимоотношений Армении с соседними странами, научной, общественно-политической и культурной жизни армянской диаспоры. В 1997—2009 гг. «Историко-филологический журнал» выходил в свет при финансовой поддержке фонда «Галуст Гюльбенкян» (руководитель армянского филиала — почетный доктор НАН РА Завен Екавян). Отметим, что издание второй библиографии журнала на армянском, русском и английском языках (первая охватывала 1958—1982 гг. и вышла в свет в 1983 г. на армянском и русском языках), включающей 1983—2007 гг., также было финансировано этим фондом.

Сегодня невозможно представить арменоведение без «Историко-филологического журнала» — весомого периодического из-

дания, получившего широкое признание научной общественности нашей страны и за рубежом.

FAITHFUL TO ITS VOCATION

LILIT HOVHANNISYAN

Summary

The “Historical-Philological Journal” of the National Academy of Sciences of the Republic of Armenia has its specific role in the centuries-old history of the Armenian scientific periodicals. For six decades, having passed through a difficult and complicated scientific-research, scientific-organizational and scientific-publishing way, the journal has become not only one of the Armenological authoritative publications, successfully fulfilling its program tasks, but also a well-known school for the preparation of scientific specialists.

The first issue of the journal established by the decision of the Presidium of the Academy of Sciences of Arm. SSR was published in 1958. It was opened with the introductory article “From the Editorial”, where the program goals and objectives of the new Armenological edition were presented. In the editorial board of the journal well-known historians and philologists were included. A prominent historian, vice-president of the Academy of Sciences, Academician Mkrtich Nersisyan was appointed the editor-in-chief and supervised the journal for over forty years. After his death in 1999, this post was entrusted to Academician of NAS RA, prominent historian Vardges Mikaelyan. In 2005, after his decease, one issue of the journal was edited by the doctor of historical sciences Paruyr Muradyan; the next was edited by the deputy editor – executive editor of the journal, doctor of philological sciences Anushavan Zakaryan. In 2006 the well-known philologist-folklorist, corresponding member of the NAS RA Sargis Harutyunyan was elected editor-in-chief of the journal. Since 13 June, 2018, the periodical has been headed by A. Zakaryan appointed by the Presidium of NAS RA. The Editorial board of the “Historical-Philological Journal” is headed by Academician of NAS RA Ashot Melkonyan.

The structure adopted from the first issue of the journal and preserved over the following years – sections and subsections subsequently underwent some additions and clarifications. The materials are being published up today in Armenian and Russian, together with a summary in Russian, Armenian and English. At present the journal has been published once for every four months. 208 issues of the journal have been published. Each of them has a content of 15–20 printed sheets with about 25 materials on average, that is, almost 5700 materials have been published since the

founding of the periodical. The journal was circulated in the amount of 1500–2400 copies (now – 250) not only in Armenia but also abroad.

During the 60 years of its existence the “Historical-Philological Journal” of the National Academy of Sciences of Armenia unified under itself many Armenologists from all over the world, carrying out productive work on the study of the important problems of the history of Armenians, literature, language, art, philosophy and other fields of science. The problems of Oriental and Caucasian studies, historiography and philology, issues of the history of economic, political and cultural relations and relations between Armenia and neighboring countries, as well as the scientific, social, political and cultural life of the Armenian Diaspora have also been elucidated on the pages of the journal. During 1997–2009 the “Historical-Philological Journal” was published with the financial support of the “Galouste Gulbenkian” Foundation (Head of its Armenian branch, honorary doctor of the NAS RA Zaven Yekavyan). It should be noted that the publication of the second bibliography of the journal in Armenian, Russian and English (the first covers 1958–1982 and was published in 1983 in Armenian and Russian), including 1983–2007, was also financed by this foundation.

Today it is impossible to imagine Armenology without the “Historical-Philological Journal” – a weighty periodical widely accepted by the scientific community both in our country and abroad.

К 100-ЛЕТИЮ ПЕРВОЙ
МИРОВОЙ ВОЙНЫ

АРМЕНИЯ И ЕЕ ТЕРРИТОРИАЛЬНЫЙ ВОПРОС
НА ПАРИЖСКОЙ МИРНОЙ КОНФЕРЕНЦИИ
(18 января — 28 июня 1919 г.)

ГАЯНЭ МАХМУРЯН

100 лет тому назад, 30 октября и 11 ноября 1918 г., были подписаны Мудросское (между Англией и Турцией) и Компьенское (между Францией, Англией и Германией) перемирия, завершившие сражения Первой мировой войны. Эта война охватила 3 континента и 38 стран, где проживало свыше 1,5 млрд чел. или три четверти населения земного шара¹. Причем в этот раз военное планирование отличалось взаимодействием огромных армейских масс, расположенных на большом отдалении: Восточный фронт помогал Западному, Кавказский наступал, чтобы оттянуть противника из Месопотамии, и так далее.

В операции Первой мировой было втянуто 68,2 млн солдат. В их числе 250 тыс. армян принимали участие в боевых действиях на Восточном, Западном, Балканском и Кавказском фронтах², и

¹ См.: А. О. Арутюнян. Кавказский фронт 1914–1917 гг. Ереван, 1971, с. 121; История Первой мировой войны в 2-х т., т. 1. М., 1975, с. 5; Р. Нилланс. Генералы Великой войны. М., 2005, с. 55–63; Collin Nicolson. Longman Companion to the First World War, Europe 1914–1918. L. and NY, 2013, p. 18 и т. д.

² О призыве армян в царскую армию см.: Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Հայաստանը 1870-1917 թվականներին, Երևան, 1981, էջ 547, Ա. Երզնկյան. Աշխատավորության դատարանին, Թիֆլիս, 1927, էջ 62, Ջ. Ս. Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914–1916 թթ.), Երևան, 1965, էջ 228, А. О. Арутюнян. Указ. соч., с. 296 (называет цифру около 300 тыс.); 160 тыс. указывалось в: The Republic of Armenia. A Memorandum on the Recognition of the Government of the Republic of Armenia, Submitted by the Special Mission of the Republic of Armenia to the United States. Senate, 66th Congress, 1st Session, Document № 151, Presented by Mr. Lodge, November 10, 1919. Wash., 1919, p. 14; Национальный архив Армении (далее — НАА), ф. 200, оп. 1, д. 498, л. 65 об. и во многих других документах. О 60 тыс. военнослужащих, проживавших в Республике Армения, и более 1 тыс. офице-

еще 50 тыс. служили в армиях Франции, Англии и США.

В целом, за четыре года было убито 9 млн солдат и 20 млн гражданских лиц³, не считая жертв «испанки» — катастрофического гриппа 1918 г., унесшего жизни от 50 до 100 млн человек. При этом можно с уверенностью утверждать, что армянский народ понес пропорционально самые большие территориальные, экономические, культурные, религиозные и человеческие потери. Была опустошена и обезлюжена вся Западная Армения, османский поход 1918 г. разорил Восточную Армению и Закавказье вплоть до Баку, а прямые гражданские потери от геноцида, осуществленного турецким кабинетом, составили более 1,5 млн человек. Этот бесспорный факт признавало османское правительство, создавшее 16 декабря 1918 г. особый военный трибунал над его зачинщиками⁴.

Очень верную оценку роли и положения армянского народа в Первой мировой войне содержат два архивных документа. Так, 30 сентября 1918 г. бывший посол Великобритании в США и член палаты лордов виконт Дж. Брайс направил письмо министру иностранных дел своей страны А. Бальфуру. В нем извещалось, что находившийся в Париже председатель Армянской национальной делегации Погос Нубар не только ознакомился с посланием Верховного военного совета Союзников к министру, но и направил тому запрос о необходимости признать армян воюющей стороной, считать Брестский и Батумский договоры незаконными, а также не порицать участие армянских частей в обороне советского Баку⁵.

«Могу заметить, — писал Дж. Брайс Бальфуру, — что за все время войны армянский народ столько сделал и выстрадал, что это дает ему полное право на наше сочувствие и внимание. Около 700 тыс. или более человек были вырезаны, потому что турки и немцы сочли, что они сочувствуют Союзникам. Они массово записывались в армии во Франции и Америке, многие из них бросились на службу, когда мы однажды задумались о высадке в Александретте, где неподалеку было огромное армянское население, ныне почти истребленное.

Они отличились во французских армиях своей исключительной доблестью. В первые годы войны они были лучшими бойца-

ров царской выучки в ее армии в августе 1919 г. см.: НАА, д. 362, л. 21 об.; ф. 430, оп. 1, д. 5561, л. 151.

³ Gerarg J. de Groot. The First World War. NY, 2001, p. 1.

⁴ R. Kévorkian. Le génocide des Arméniens. Paris, 2006, p. 865.

⁵ Данные требования оформлены в письме Погоса Нубара премьер-министру Франции Ж. Клемансо от 12. 07. 1918. — НАА, ф. 200, оп. 1, д. 357, л. 269.

ми в российской Кавказской армии и внесли главный вклад в захват Эрзерума. Когда большевики оставили кавказские провинции, они героически держались в одиночку, брошенные русскими войсками⁶, и защищали себя и свои районы, пока превосходящие вражеские силы не заставили их принять условия в Ереване, где они были без всякой поддержки. Кажется, там и в Баку у них почти или совсем не было артиллерии. Было бы огромным разочарованием для армян как во Франции, так и в европейской России, делающих все, что в их силах для дела Союзников, что мы умаляем их роль»⁷.

3 октября замминистра иностранных дел Великобритании Р. Сесиль ответил Дж. Брайсу по поручению Бальфура: «Национальная делегация, уполномоченная католикосом в 1913 г.⁸ добиться от цивилизованного мира правосудия для Армении, задержавшегося с такими ужасными последствиями, дала под выдающимся председательством его превосходительства Погоса Нубара-паши много доказательств ее преданности делу Союзников как делу всех народов, стремящихся освободить мир от угнетения.

Ереванский совет бросился заполнять брешь, оставленную в Азии русским развалом, и, организовав сопротивление туркам на Кавказе с февраля до июня этого года⁹, был наконец принужден главными силами прервать боевые действия. Великобритания и ее Союзники понимают жесткую необходимость, заставившую армян пойти на этот шаг, мы ждем того, может быть, скорого времени, когда победы Союзников сметут их незаслуженную беду. Услуги армян общему делу, конечно же, не забы-

⁶ В декабре 1917 г. русская армия полностью ушла с Кавказского фронта, а 28. 02. 1918 г. ее последний эшелон выехал из Сарикамышы (см.: *Papers Relating to the Foreign Relations of the United States. 1918 Russia*, vol. II, Wash., 1932, pp. 594–595; *United States National Archives* (далее — US NA), Record Group 59 General Records of the Department of State, class 7763.72/doc. 8861).

⁷ НАА, ф. 200, оп. 1, д. 357, л. 273–273 об.

⁸ 10 ноября 1912 г. католикос Геворг V назначил видного общественного деятеля Погоса Нубара своим представителем по защите Армянского вопроса на будущей Лондонской конференции послов, чтобы тот составил меморандум и вел переговоры в Европе, где ему помогали Армянские комитеты в Лондоне и Париже.

⁹ 12. 02. 1918 г. командующий турецкими войсками на Кавказском фронте Вехиб Мехмед-паша направил русскому командованию известную ноту, что две его армии пересекают демаркационную линию, поскольку та «с отходом русских войск сама собою теряет свое значение» (см.: *Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлис, 1919, с. 49*).

ты; и я осмеливаюсь упомянуть четыре пункта, которые, как я думаю, армяне могут рассматривать как суть их права на близкое освобождение Союзниками.

1) Осенью 1914 г. турки направили эмиссаров национальному Съезду османских армян, заседавшему тогда в Эрзеруме¹⁰, и предложили им автономию, если бы они активно поддержали Турцию на войне. Армяне ответили, что выполняют свой долг индивидуально как османские подданные, но как нация они не могут работать на дело Турции и ее союзников.

2) Поэтому, отчасти в ответ на этот смелый отказ, турецкое правительство систематически убивало османских армян в 1915 г. Две трети населения – более 700 тыс. человек, мужчин, женщин и детей, было истреблено без разбора самыми хладнокровными и жестокими методами.

3) С самого начала войны та часть армянской нации, которая состояла под владычеством России, организовала добровольческие силы, которые, под руководством их героического командира Андраника вынесли основное бремя ряда тяжелейших боев Кавказской кампании.

4) После развала русской армии в конце прошлого года эти армянские войска приняли на себя Кавказский фронт и на пять месяцев оттянули турецкое наступление, оказав тем самым важную услугу британской армии в Месопотамии. Эти операции в районе Александрополя и Еревана были, конечно, не связаны с действиями в Баку.

Могу добавить, что армянские солдаты все еще сражаются в рядах союзнических армий в Сирии. Их можно точно так же встретить на службе в британской, французской и американской армиях, и они внесли свой вклад в великую победу генерала Э. Алленби в Палестине.

Нужно ли говорить после этого, что союзническая политика в отношении армян остается неизменной? Если ваше письмо и письмо Нубара-паши делают это необходимым для британского правительства, то я вполне готов подтвердить нашу решимость положить конец тем несправедливостям, от которых пострадали

¹⁰ Речь идет о VIII съезде Армянской революционной федерации Дашнакцутюн, собранном в конце июля – 2 августа 1914 г. в Эрзеруме. Автор подготавливавшегося геноцида Бехагдин Шакир, Омер Наджи и Хильми-бей предложили 30-ти его делегатам облегчить османам захват Закавказья. Это предполагало участие армян в персидско-курдско-татаро-грузинской войне против Антанты, а затем подчинение Восточной, Западной и Персидской Армений турецкому владычеству (см.: War, European – Turkish Campaign. The Encyclopedia Americana, in 30 vols. NY and Chicago, 1920, vol. XXVIII, p. 412).

армяне, и сделать их повторение невозможным»¹¹.

Между тем кровавый турецкий поход в Закавказье представлял собой тотальную, истребительную войну, начатую 12 февраля и не вполне закончившуюся даже 30 октября 1918 г., после подписания Мудросского перемирия между Турцией и Великобританией как представителем Антанты¹². Первая мировая война официально завершилась Компьенским перемирием. Его текст, подписанный главнокомандующим союзными войсками маршалом Ф. Фошем, адмиралом Р. Уимиссом и немецким генералом Д. фон Винтерфельдтом предусматривал денонсацию Брестского мира от 3 марта 1918 г.

Возвращаясь к Мудросу, отметим три обстоятельства. Во-первых, командир размещенной в Карсе IX османской армии Якуб Шевки-паша сразу отказался выполнять требования пп. XI и XV о выводе войск с части Закавказья и о полном его контроле со стороны Антанты, включая управление захваченными участками закавказской железной дороги, а также союзническую оккупацию Батума и Баку. 26 ноября 1918 г. он прямо приказал оборонять Карс, Ардаган и Батум, и только постоянное наращивание британских войск заставило его принять 7 января 1919 г. инструкции командующего этими силами в Западном Закавказье Дж. Т. Форестье-Уокера о полной эвакуации к 25 января до русской границы 1914 г.¹³. Хотя и далее следовали повсеместная раздача оружия населению и создание мусульманских администраций, пока это не кончилось их арестом.

Во-вторых, 13 ноября 42 военных судна Великобритании, Франции, Италии и Греции во главе с «Агамемноном» встали в Босфоре. Над ними пролетела эскадрилья аэропланов, адмирал С. А. Гаф-Келторп сошел на берег, а солдаты четырех стран прошли по улицам с военными оркестрами¹⁴.

И в-третьих, 2, 4, 18 ноября, 9 и 11–12 декабря 1918 г. в османском межджисе, а также в турецкой прессе с яростью и отк-

¹¹ НАА, ф. 200, оп. 1, д. 357, л. 270.

¹² Текст перемирия см.: Р. Г. Саакян. Франко-турецкие отношения и Киликия в 1918–1923 гг. Ереван, 1986, с. 25–27. О несоответствии между заявлениями победителей о праве занять любую часть шести западноармянских вилайетов (п. XXIV) и их военными возможностями в регионе см.: Leonard V. Smith. Sovereignty at the Paris Peace Conference of 1919. NY, 2018, pp. 18–19.

¹³ R. Kévorjian. Указ. соч., с. 880–881, 883; инструкции от 7. 01. 1919 см.: НАА, ф. 200, оп. 1, д. 92, л. 454 об. – 457; оп. 2, д. 39, л. 8–13 и US NA, RG 256 Records of the American Commission to Negotiate Peace, 184.021/2.

¹⁴ Eugene Rogan. The Fall of the Ottomans, The Great War in the Middle East. NY, 2015, pp. 385, 387.

рыто признавали, что в результате правительственных действий военного времени было убито от 800 тыс. до 1,5 млн гражданских лиц-армян¹⁵. Всем было ясно, что «геноцид надолго омрачит мирные переговоры с победившими державами Антанты»¹⁶. Те же «открыто осуждали османское правительство за резню армян. Америка и Британия особенно откровенно призывали к правосудию воздаяния за турецкие военные преступления против человечества»¹⁷.

Чтобы избежать суровых условий мира, 23 ноября 1918 г. султан Мехмед VI учредил Комиссию по расследованию преступлений младотурецкого кабинета военного времени, а 16 декабря 1918 г. издал фирман о создании военного трибунала, дополненный декретами от 25 декабря и 8 января 1919 г.¹⁸ Задачей трибунала и местных судов было ограничить международное осуждение исключительно лидерами младотурок — особенно их сбегавшим триумvirатом как авторами геноцида. В то же время, все ясно понимали, что кабинету «было не по силам смягчить те условия, которые Союзники могли ему навязать на Парижской мирной конференции»¹⁹. Между тем, даже без революционной России, Британия, Франция, Италия и Греция были готовы предъявить османам свои территориальные требования.

В итоге, для урегулирования всех территориальных, материальных и правовых вопросов, 18 января 1919 г. лидеры стран-победительниц собрались в Париже на мирную конференцию²⁰. Туда же направилась и делегация молодой Республики Армения — уже более пяти месяцев независимой, но еще не признанной странами Антанты. Она исходила из парижской телеграммы Погоса Нубара, отправленной еще 20 ноября 1918 г. премьер-министру Республики Армения О. Качазнуни, и решения парламента от 12 декабря того же года. Парижская депеша извещала: «Нас просят немедленно послать делегатов, полномочных совещаться с нами и совершать необходимые для мирных перегово-

¹⁵ Подробный анализ дебатов см.: R. Kévorkian. Указ. соч., с. 885—890.

¹⁶ E. Rogan. Указ. соч., с. 387.

¹⁷ Там же.

¹⁸ V. Dadrian. *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*. Providence RI and Oxford, 1995, p. 321; R. Kévorkian. Указ. соч., с. 900, 904.

¹⁹ R. Kévorkian. Указ. соч., с. 390.

²⁰ Leonard V. Smith. Указ. соч., с. 26. Ход конференции освещается, исходя из 12 томов ее официальных протоколов: *Papers Relating to the Foreign Relations of the United States: The Paris Peace Conference, 1919, 12 vols.* Wash., 1942–1947.

ров действия. Если будет невозможно послать делегатов вовремя, необходимо, чтобы вы срочно назначили до их приезда конкретных лиц, пользующихся вашим доверием и находящихся сейчас в Европе, и дали им инструкции по телеграфу»²¹.

Занимаясь данным вопросом, О. Качазнуни и министр иностранных дел РА С. Тигранян подписали 7 декабря 1918 г. верительные грамоты для республиканской делегации в составе А. Агароняна, М. Пападжаняна и А. Оганджаняна, включая их советников и секретарей. Кабинет направлял эту делегацию «как официального представителя Армении для вступления в переговоры с державами Антанты и Соединенных Штатов Америки или их представителями, и для рассмотрения всех вопросов, относящихся к Армении и армянам. Делегации также даны полномочия представлять правительство Республики и участвовать, как таковой, во всех переговорах или конференциях, которые могут состояться в Европе и Америке. Она имеет власть для подписания от имени Республики Армения всех договоров, конвенций или других официальных документов, касающихся вопросов, для которых ей выдан нынешний мандат»²². В случае необходимости, А. Агаронян мог передавать на время обязанности председателя одному из членов делегации.

Затем, 12 декабря 1918 г., генерал-майор А. Багратуни известил дипломатического представителя РА в Грузии А. Джамаляна о полученном из Лозанны письме от А. Оганджаняна: «Будущее Армении еще не вырешено, вероятно независимость и соединение Турецкой Армении и Русской. Телеграфируйте Ереван, поспешите посылкой делегации к мирной конференции, начало в декабре»²³.

С такой информацией А. Агаронян как руководитель республиканской делегации прибыл 4 февраля 1919 г. в Париж. Тут он встретился с Погосом Нубаром, который уже нотой от 30 ноября 1918 г. изложил Верховному военному совету Антанты свое мнение о том, что единственным осуществимым решением будет объединение шести вилайетов Турецкой Армении, Киликии и Марашского санджака «в независимое армянское государство под защитой союзнических Великих держав и Соединенных Штатов, чтобы одно из них действовало как мандатарий, годами организуя и управляя новым государством»²⁴. А новосозданная «Араратская республика с готовностью присоединится к новому армянскому государству»²⁵, что и станет объединенной Арме-

²¹ НАА, ф. 275, оп. 5, д. 97, л. 2.

²² НАА, ф. 200, оп. 1, д. 183, л. 3.

²³ НАА, ф. 275, оп. 5, д. 97, л. 5.

²⁴ НАА, ф. 200, оп. 1, д. 31, л. 9.

²⁵ Там же, л. 9 об.

нией.

Конечно, подобный территориальный охват был не по силам РА, которую сразу поставили в подчиненное положение присоединяющейся к будущему государству. Зато он был выгоден лидерам Антанты и США, получавшим свободу рук для очень широких территориальных обменов. И второе: подобная масштабность не была исключительным мнением Погоса Нубара. Его поддержала еще более широкая резолюция № 378 Сената США от 10 декабря 1918 г. В этом документе было «решено, что, по мнению Сената, Армения, включая шесть вилайетов Турецкой Армении и Киликию, Российскую Армению и северную часть провинции Азербайджан, Персидскую Армению должна быть независимой; и что Сенат надеется, что Мирная конференция распорядится, чтобы помочь Армении учредить независимую республику»²⁶.

Дальнейший совместный меморандум Армянской объединенной делегации для секретариата конференции от 12 февраля 1919 г., подписанный Агароняном и Погосом Нубаром и представленный ими руководящему Совету десяти парижского форума к 26 февраля, плавно вписался в русло широких требований. Этот документ, озаглавленный «Армянский вопрос перед Мирной конференцией», гласил: «В независимое армянское государство должны быть включены следующие области:

1) Семь вилайетов — Ван, Битлис, Диарбекир, Харберд, Сивас, Эрзерум и Трапезунд согласно акту о реформах от 1914 г., включая все области, расположенные к югу от Тигра и западу от линии Орду — Сивас.

2) Четыре киликийских санджака, т. е. Мараш, Козан, Джебел-Берекет и Адана с Александреттой.

3) Вся территория кавказской республики, включая всю Ериванскую область, южную часть бывшей тифлисской губернии, Карсскую область, за исключением местности, расположенной севернее Ардагана»²⁷.

В заключительном разделе было перечислено: «Мы требуем: 1) Признания независимости армянского государства, составленного путем объединения 7 вилайетов и Киликии с армянской кавказской республикой. ...

2) Чтобы образованное таким образом армянское государство

²⁶ Congressional Record, 65th Congress, 3rd Session. Wash., 1919, vol. LVII, pt. 1, p. 237; ее перевод на русский язык, сделанный автором данной статьи, см.: Р. Ованнисян. Международные отношения Республики Армения 1918—1920 гг. Ереван, 2007, с. 14.

²⁷ НАА, ф. 1021, оп. 2, д. 1005, л. 5—6; ф. 200, оп. 1, д. 557, л. 394—408.

было поставлено под общую защиту Союзных держав и Соединенных Штатов или Лиги Наций, в число членов которой она просит включить и себя.

3) Чтобы Мирная конференция передала специальный мандат какой-либо державе для оказания помощи Армении в ее переходный период. Относительно выбора этой державы должно быть испрошено мнение армянской конференции, заседающей в настоящее время в Париже и представляющей всю армянскую нацию²⁸. Мандат должен быть дан максимум на 20 лет.

4) Установления Мирной конференцией системы возмещения убытков, понесенных всей армянской нацией во время избиений, изгнаний, грабежа и опустошений. Со своей стороны Армения соглашается взять на себя часть турецкого национального довоенного долга.

5) Держава, получающая мандат, должна прежде всего: а) принудить к эвакуации территорий все турецкие, татарские и другие власти, которые еще остались там; б) приступить к общему разоружению населения; в) изгнать и покарать всех принимавших участие в избиениях, насилиях, грабежах и завладевших имуществом погибших; г) изгнать из страны все элементы, нарушающие порядок и изменнические кочевые народы; д) изгнать мусульманских колонистов, переселенных при младотурецком режиме; е) и, наконец, повсюду принять необходимые меры, ... для возвращения к своей первоначальной религии всех женщин, девушек, детей и др., насильно обращенных в мусульманство или взятых в гарем.

Турция должна также обязаться выплатить всю стоимость реквизиций и возратить, возместив все убытки, всю недвижимую собственность, находящуюся на ее территории, а также церкви и монастыри со всеми их строениями, землями и имуществом, которые когда-либо были отняты у армян»²⁹.

Вот с такой исходной программой начинались армянские переговоры. Уже в ходе официальных заседаний, начавшихся 18 января 1919 г.³⁰, Погос Нубар обратился к президенту США В. Вильсону с вопросом о формальном представительстве армянс-

²⁸ Речь идет о I Национальном съезде западных армян, проходившем в Париже 24 февраля — 22 апреля 1919 г. Почти в это же время, 19—26 февраля, в Ереване состоялся II съезд западных армян.

²⁹ НАА, ф. 1021, оп. 2, д. 1005, л. 9—10.

³⁰ О Парижской мирной конференции см.: R. Hovannisian. The Republic of Armenia, vol. I The First Year, 1918–1919. Berkeley & LA, 1971, pp. 250–291; Р. Ованнисян. Указ. соч., с. 29–77. С рядом существенных погрешностей см.: Գ. Ա. Պալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 85–107.

кой делегации на официальных заседаниях конференции. Вильсон промолчал об отсутствии делегатов из Еревана, но заметил, что РА еще не принята в общую семью наций. Тем не менее он заверял, что интересы армян будут защищаться делегатами так же прилежно, как если бы они это делали сами³¹. Интересно, что, во-первых, его ответ был направлен 23 января, в день, когда Вильсон вступил в спор с англичанами и настаивал, что нужно заняться Европой, а территориальные вопросы и Восток могут подождать. И во-вторых, он попросил изолировать финансовые дискуссии от территориальных. Британский премьер-министр Д. Ллойд Джордж откликнулся, что Турецкая империя должна быть раздроблена, значит им следует определиться с мандатарием и разделением оттоманского долга на освобождающиеся страны, включая армян и народы Кавказа. На это его собеседник невнятно ответил предложением о подготовке резолюций как инструкции для дальнейших действий³².

Вскоре конференция обратилась к вопросам мандатов и Лиги Наций. Американская сторона объяснила, что все члены Лиги получают равный доступ к экономическим ресурсам подмандатных земель, будут платить одинаковые пошлины и лишатся преференций. Этим содержание мандата отличалось от колониального правления. Однако подмандатная территория не была полноценно независимым государством, а значит не могла защищать свой рынок или ограничивать к нему доступ собственными решениями. Лиге Наций следовало возместить часть расходов мандатария, и президент США называл себя «последним, кто станет возражать»³³, если подопечная зона захочет объединиться с опекуном. Вильсон сравнивал подмандатную территорию с доминионами, которых уже достаточно эксплуатировали, а теперь они были вполне готовыми к независимости. Параллельно он соглашался сузить выплаты Лиги Наций расходами мандатария по обороне опекаемой стороны.

28 января Ллойд Джордж, премьер-министр Франции Ж. Клемансо и ее министр по делам колоний А. Симон уточнили, что американская система не уничтожит уже имевшиеся колонии, хотя в них и задействуют принцип «открытых дверей» вместе с запретом на продажу оружия. Европейцы были готовы предъ-

³¹ Ответ Вильсона от 23 января 1919 г. на письмо Погоса Нубара от 20-го числа см.: НАА, ф. 430, оп. 1, д. 1214, л. 14.

³² US NA, RG 256, 180.03101/15. Заседания Парижской конференции подробно изложены в: Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг. (далее — Армения в документах). Сост. и пер. с англ. Г. Г. Махмуриян. Ереван, 2012, с. 43–140.

³³ US NA, RG 256, 180.03101/19.

явить все тайные договоры военного времени, особенно учитывая тот факт, что большевики уже опубликовали их на весь мир в декабре 1917 г. Заметим, что, в отличие от глав кабинетов колониальной Европы, лидер США настаивал на создании государств и установлении политической независимости как на главном направлении дальнейшего международного развития.

Через день, 30 января, Совет десяти принял «Резолюцию о мандатариях», составленную Ллойд Джорджем. В ней Армения полностью отделялась от Турецкой империи, так как ее жители «достигли уровня развития, когда их существование как [независимой нации] может быть предварительно признано подлежащим предоставлению административных советов и поддержке державой-мандатарием»³⁴. Однако главный претендент на роль опекуна Вильсон откликнулся, что народ Америки еще нужно привести к согласию, поскольку «предполагалось, что американские войска должны оккупировать Константинополь или Месопотамию»³⁵. Официальные документы конференции не объясняют: кем, когда и на каких условиях могли быть задействованы дивизии США. Для нас существенно, что Армению связывали с важными регионами, чреватые конфликтом с Великобританией, Францией или Россией. К тому же, президент Соединенных Штатов опять откладывал всю восточную тему на второй план, пока не будут обсуждены проблемы Европы и Лиги Наций. Затем он добавил, что его страна не приведет сотни тысяч солдат в османские границы, и Антанта вольна уводить или заменять свои контингенты так, как сочтет это нужным.

31 января, в ответ на идею Ллойд Джорджа присоединить к Республике Армения весь Кавказ с его нефтью, Вильсон оценил мандат как очень серьезное бремя: потребуется большая работа с избирателем, чтобы его народ согласился на военное присутствие в Азии. Применив общепринятый прием, он отослал проблему в Верховный военный совет Парижской конференции: пусть военные советники доложат «о лучшем и наиболее целесообразном расположении войск, чтобы позаботиться о турецких территориях, находящихся ныне вне Европы и занятых сейчас армией»³⁶. Европейцы добавили, что речь пойдет о наиболее экономичном распределении среди партнеров «бремени выделения военных сил для поддержания порядка в Турецкой империи и

³⁴ Армения в документах, с. 53; см. также: НАА, ф. 200, оп. 2, д. 51, л. 7.

³⁵ US NA, RG 256, 180.03101/24.

³⁶ Papers Relating to the Foreign Relations of the United States, The Paris Peace Conference (далее — The Paris Peace Conference), in 12 vols., vol. III. Wash., 1944, p. 816.

Закавказье»³⁷.

Выполняя приказ, военные эксперты подробно расписали: где, кому и какими родами войск следовало охранять порядок. Более того, 4 февраля, когда премьер-министр Греции Э. Венизелос указал на Совете десяти о возможности армянских границ, включавших «шесть армянских вилайетов с Российской Арменией, а также с вилайетами Трапезунда и Аданы»³⁸, Вильсон попытался уравнивать османские преследования армян со страданиями турецких слоев населения, и получил резкий отпор от грека.

20 марта 1919 г. более узкий и влиятельный Совет четырех Парижской конференции вновь обратился к Кавказу, где (как и на Ближнем Востоке в целом) ни один политический вопрос не решается, когда он не подкреплён военной силой. Американцы же использовали сплав идеализма с прагматизмом. Англо-французский тандем напомнил о принятой им декларации от 9 ноября 1918 г., по которой эти страны взяли на себя обязательство «полностью и окончательно освободить так долго угнетавшиеся турками народы», а также учредить для них «национальные правительства и администрации, получающие свою власть от изначального и свободного выбора местных жителей»³⁹.

Было очевидно, что без России Вильсон, Ллойд Джордж, Клемансо и премьер-министр Италии В. Орландо видели Закавказье и Кавказ как часть ближневосточного региона, где раздел и обмен сферами влияния производился от Сирии и Месопотамии до Каспийского моря. Американцы тянулись к уже закрепленным за Францией Сирии с Киликией и мандату на всю Османскую империю. И хотя США ничего не хотели в Турции, их президент намеревался повести долгую кампанию в пользу мандата, так как его страна считала себя обязанной принять ответственность, а также все выгоды от членства в Лиге Наций. Вильсон хотел, чтобы межсоюзническая комиссия выяснила настроения сирийцев и прощупала почву, поскольку «у единого исследования турецких мандатов есть преимущества»⁴⁰. Всех настораживала решимость президента США оспаривать российские права в Западной

³⁷ Там же, с. 817.

³⁸ Там же, с. 873.

³⁹ US NA, RG 256, 180.03401/101; цитату см.: The Paris Peace Conference, vol. V. Wash., 1946, p. 3.

⁴⁰ The Paris Peace Conference, vol. V, с. 10, 13. О сторонниках единого мандата на всю империю и защитниках независимой Армении в рамках американского протектората см.: W. G. Smith, *Journal of a Journey to the Near East.*— “The Armenian Review”. Boston, 1971, vol. 24, № 3, p. 73; J. A. De Novo. *American Interests and Policies in the Middle East, 1900–1939.* Minneapolis, 1968, p. 124.

Армении, хотя Америка не склонялась к ее опеке.

Показательно также, что в инструкциях Конференции для членов международной комиссии по мандатам в Турции, которые поручили написать Вильсону, говорилось о полном отделении Армении и Киликии «в силу извечно плохого управления турок подчиненными народами, а также ужасной резни армян и других в последние годы»⁴¹. Правда, когда президент назначил в комиссию Г. Кинга и Ч. Крейна, он предпочел лиц, которые ничего не знали о Сирии, а Западную Армению вообще не включили в их маршрут.

6 апреля Агаронян подал в секретариат Парижской конференции меморандум о национальном составе населения, железных и шоссейных дорогах Республики и западных провинциях. Он писал о 350 тыс. беженцах в РА, где «ежедневно умирали тысячи людей и совершенно не было продовольствия и посевного зерна»⁴². Еще 150 тыс. изгнанников собрались в Киликии и до 100 тыс. лиц сгрудились вокруг Эрзерума, Вана, Ерзнки и Битлиса. А провинции Диарбекир, Харберд, Себастья и Трапезунд потеряли не только армянское население, но и не менее половины проживавших в них мусульман⁴³. В развитие обращений к Конгрессу и общей политики США, 8 апреля 1919 г. Американская администрация помощи в лице Г. Гувера и председатели двух армянских делегаций подписали в Париже Соглашение о продовольственных поставках⁴⁴. Вслед за этим, Агаронян, Погос Нубар и секретарь делегации А. Тер-Акопян 17 апреля встретились с Вильсоном. «Если Америка вообще когда-либо примет мандат на какую-либо страну, — заметил президент, — то это, безусловно, будет Армения. [Помощь ей] является единственной причиной, способной вывести Америку из ее состояния нейтральности и вмешать ее в дела Азии. Американскому народу можно предлагать мандат только на Армению. Что же касается ваших границ, то я стараюсь обеспечить армянскому народу территорию в желаемых вами размерах; и хотя имеются и другие, посторонние аппетиты, я надеюсь добиться успеха. Вы можете испытывать удовлетворение, что ваш вопрос развивается очень удачно»⁴⁵.

Вскоре после встречи лидеры Антанты спросили делегацию

⁴¹ The Paris Peace Conference, vol. XII, Wash., 1947, p. 745.

⁴² НАА, ф. 200, оп. 1, д. 193. ч. 2, л. 343.

⁴³ Там же, л. 339.

⁴⁴ Текст соглашения см.: там же, д. 303, л. 13; *Մ. Վրացյանի Հայաստանի Հանրապետության, Երևան, 1993, էջ 637–638*, Армения в документах, с. 82–84.

⁴⁵ НАА, ф. 200, оп. 2, д. 51, л. 6; оп. 1, д. 35, л. 118–119; оп. 2, д. 49, л. 1; ф. 275, оп. 5, д. 97, л. 72.

США о возможности итальянского мандата рядом с Арменией и о строительстве в их зоне новых железных дорог. Президент США не приветствовал такой перспективы и провел частное совещание с англичанами без протокола. Так же без протокола обсуждалась военная программа с армянами, включавшая в себя переформирование и поставки для армии. Обсуждение этого вопроса продлилось три месяца, и 24 июня был подписан проект соглашения с Американскими экспедиционными силами о передаче обмундирования, медикаментов и небоевого снаряжения на 4 млн долл., с отсрочкой выплат до 1922 г. Позднее делегацию РА известят о неудаче с оформлением контракта, а склады передадут французской стороне⁴⁶.

В апреле 1919 г. Агаронян излишне оптимистично думал, что: 1) Америке оставалось лишь формально оформить мандат на Армению и получить санкцию ее Сената; 2) в споре Франции с Соединенными Штатами о Киликии вопрос решался в пользу Армении, поскольку США выдвигали присоединение Киликии к Армении как предварительное условие для приема армянского мандата; 3) в целом дипломатическое положение армян оценивалось как удовлетворительное, и «до середины мая наш вопрос будет урегулирован»⁴⁷.

В начале мая 1919 г. состоялся самый яростный раунд по армянскому вопросу. Уже 5-го числа европейские партнеры предложили Вильсону направить войска в Армению и одну дивизию на Босфор. Его предупредили, что итальянцы тянутся к нефти Кавказа, а англичане предвидят проблемы, если американских солдат разместят между Черным и Каспийским морями. Президент назвал «это слишком важным делом, чтобы решать его в спешке. Сначала ему нужно было обсудить его со своими военными советниками», ведь «он был совсем не уверен — какими военными силами он мог бы располагать»⁴⁸. Лидеры Совета четырех были убеждены, что уход англичан из Армении и Кавказа в целом, с последующим вакуумом силы, чреватой новой резней в регионе. Тем не менее глава администрации США был категорически против прихода итальянских солдат на Кавказ, назвав такой шаг угрозой миру на всей планете.

Более того, «применительно к Турции для него невозможно было вынести сейчас решение, смогут ли Соединенные Штаты взять мандат»⁴⁹. Фразу Вильсона, произнесенную 5 мая, можно

⁴⁶ R. Novannisian. Указ. соч., vol. II, Berkeley & LA, 1982, с. 96.

⁴⁷ Объемное письмо Агароняна министру иностранных дел Тиграняну от 24. 04. 1919 г. см.: НАА, ф. 200, оп. 2, д. 51, л. 6.

⁴⁸ US NA, RG 256, 180.03401/144.

⁴⁹ Там же.

назвать ключевой. Ллойд Джордж и Клемансо подняли вопрос Западной и Восточной Армении комплексно, но США не могли принять решения. На следующий день Вильсон добавил, что не имеет полномочий посылать войска в Турцию. Его страна не состояла в войне с османами, поэтому ему придется уехать домой и подать Конгрессу законопроект, причем после представления законодателям всего Мирного договора. При этом он не допускал Италию на Кавказ и грозился лишить ее жизненно важных кредитов.

6 мая президент США снова выдвинул претензии на обширный Ближний Восток. По его словам, «один авторитетный турок выразил мнение, что вся Турция должна быть под одним мандатом». Правда это превышало намерения его страны, в которой «единственной основой для принятия мандата в Турции была бы защита от турок подданных им рас»⁵⁰. 13 мая стороны сели за карту, и американцам предложили вместе с разоренной Арменией дополнительный мандат на богатый и выгодный Константинополь, а Франция, Италия и Греция поделили Анатолию. Это означало, что между двумя мандатными зонами внедрялись три мощных конкурента. Вильсон запросил тайм-аут для консультации у себя в стране, но настаивал: «Должен быть единый мандат на все. Мандат не должен быть разделенным. Не думаю, — возразил Ллойд Джордж, — что это можно осуществить на деле»⁵¹. Что же касается Армении, то глава американской администрации признал: оттуда приходили доклады «столь ужасного характера, что ему трудно было их читать»⁵². В итоге, члены Совета четырех договорились начертить новые границы, а президент США предложил послать комиссию в Турцию. Причем его государство, как «беспорный» член Лиги Наций, «должно гарантировать соглашение»⁵³ в Константинополе. Хотя от его страны ждали много большего, то есть опекуна, а не просто подписи и гарантий будущего мира.

14 мая на стол переговоров положили I резолюцию британца Г. Никольсона об американском мандате на провинцию Армения и Константинополь с проливами — европейцы делали уступку исторического значения⁵⁴. Вильсон давал согласие. Затем его коллеги выложили карту ко II резолюции того же дипломата. В

⁵⁰ Там же, док. 145.

⁵¹ Там же, док. 10½.

⁵² The Paris Peace Conference, vol. V, p. 585.

⁵³ Там же, с. 588. Как известно, 19 ноября 1919 г. Сенат США не ратифицировал Версальский договор, и США не вступили в созданную их президентом Лигу Наций.

⁵⁴ The Paris Peace Conference, vol. V, p. 622.

ней Турцию рассматривали как анатолийское государство без европейских земель, Смирны и Армении. А поскольку «турецкое правительство не показало себя способным защищать интересы находящегося под его суверенитетом христианского населения, и оно сейчас не в состоянии развивать природные ресурсы страны»⁵⁵, будущему государству назначали трех европейских мандатариев: Грецию, Италию и Францию. Англичане удовлетворились Месопотамией.

На этот раз президент США возразил, что не видит «независимой от мандата отдельной»⁵⁶ Турции. Поэтому он предложил свою карту с границами армянского мандата и получил в обмен британский вариант. Вильсон настаивал на единстве Анатолии и вытеснении оттуда итальянцев, подчеркивая общие экономические правила для всех стран в зоне контроля Лиги Наций, и заверяя, что его страна не намерена «ринуться во все пункты»⁵⁷ или вести бизнес в анатолийской глубинке. Последнее вызывало большие сомнения. При этом он давал понять, что османам лучше перейти от султаната к республике.

Добавим, что секретные споры Совета четырех о едином мандате не были тайной в Константинополе. Даже находившийся там военный советник делегации РА Г. Корганян 9 мая 1919 г. извещал главу дипломатической миссии его республики в Тифлисе Л. Евангуляна, что англичане выводят войска из Закавказья, а «вопрос о протекторате Америки над Арменией далеко не решен»⁵⁸. Он отмечал, что в американских политических кругах возникло течение в пользу «идеи взять всю Турцию под один протекторат, без расчленения ее на части»⁵⁹. Информацию Корганяна переправили в Ереван Тиграняну, где 10 мая получили официальное уведомление командующего британскими войсками в Закавказье генерала В. Томсона об отзыве его войска. Так что парижские споры шли на фоне общеизвестного для сторон факта, что Армения остается без внешней защиты.

Между тем 17 мая англичане вместе с индийской делегацией поддержали приход США в зону черноморских проливов, но просили сохранить Турцию в Малой Азии⁶⁰. Они взывали к 12-му из 14 пунктов мирной программы Вильсона, который гарантировал турецкой части Османской империи надежный суверенитет. Оппоненты также предложили, чтобы все народы южнее

⁵⁵ Там же, с. 615, 622.

⁵⁶ US NA, RG 256, 180.03401/13½.

⁵⁷ Там же.

⁵⁸ НАА, ф. 200, оп. 1, д. 92, л. 279.

⁵⁹ Там же.

⁶⁰ Армения в документах, с. 107.

Кавказа получили систему управления аналогичную той, которую применяют в Армении. Они сделали опасное заявление, что все довоенные границы южнее Кавказа не были национальными или географическими. А раз они были чисто политическими, значит их можно изменять по политическим соображениям. Между тем Парижская конференция принимала приоритет национальных факторов. Поэтому президент США заявил, что он потребует согласия жителей Малой Азии на присутствие там Италии. При этом для всех сторон переговоров Армянское нагорье и Малая Азия были четкими географическими понятиями. Как Армянское нагорье, так и Каппадокия были очень конкретными регионами для дипломатов и политиков с классическим образованием.

После небольшой паузы, 19 мая Вильсон напомнил европейским делегатам о России. Через день он услышал от Ллойд Джорджа, что турки потеряли право на управление армянами и другими чуждыми им расами, но единство Анатолии сохранится. Поэтому ее мандат вручат опекуну Константинополя. Однако Арменией, Месопотамией и Сирией «могли править иные державы»⁶¹. В еще одном варианте решения, обсуждавшегося 21 мая 1919 г., США могли получить три мандата: включая Киликию, или только два из них — на Западную Армению с проливами. И даже, «пока в России не установится порядок»⁶², подключить к ним Восточную Армению и весь Кавказ. Вильсон вполне соглашался с услышанным и особенно интересовался проливами как выгодным дополнением к разоренным армянским провинциям.

При этом европейцы держали президента поближе к российской зоне влияния и вдали от нефтяной Месопотамии, а он создал временный англо-американский союз против французов в Сирии. Англичане и французы напомнили о своем согласии на присутствие Соединенных Штатов в части Киликии, но восстали против них в Анатолии. Они не хотели единого массива опеки от Босфора до Кавказа. Вильсон не стал настаивать, поскольку для США было «трудно принять мандат даже на Армению, где они издавна имеют постоянные интересы, и где американцы потратили немалые деньги в помощь армянскому народу»⁶³. По проливам у «общественных деятелей, противостоявших ему политически»⁶⁴, возражений не было. Правда, президент промолчал о своем отношении к предложенной англичанами Киликии, а так-

⁶¹ US NA, RG 256, 180.03401/20½.

⁶² Там же.

⁶³ The Paris Peace Conference, vol. V, p. 765.

⁶⁴ Там же.

же к временному контролю над Российской Арменией и всем Кавказом, включая Азербайджан⁶⁵.

В свою очередь, Ж. Клемансо, обмолвившийся 21 мая об уступке американцам Киликии, уже 31 мая сообщил, что посылает туда войска. В. Вильсону разъяснили: «Вы, кажется, находитесь под впечатлением, что будущее различных турецких территорий будет решаться [американской по составу комиссией Кинга-Крейна], но это не так. ... Окончательное решение примут руководители главных Союзных держав»⁶⁶. В ответ на это, 6 июня Вильсон сообщил своим партнерам, что отдает предпочтение Турции перед Россией и уверен: эта страна окажется закупоренной, потому что «какая-то другая держава будет владеть проливами Босфор и Дарданеллы»⁶⁷.

За три дня до подписания Версальского договора и отъезда Вильсона домой, 25 июня лидеры Парижской конференции захотели прояснить вопрос об Османской империи. Президент США напомнил об обязательном освобождении Армении, Сирии и Месопотамии. Союзники должны охранять там правопорядок вплоть до окончательно урегулирования проблемы. Ллойд Джордж ему заметил, что в Западной Армении не было войск Антанты. Вильсон среагировал, что мандат на Турцию был бы ошибкой, но кто-то «должен крепко держать ее в руках»⁶⁸. Соединенные Штаты предпочитали нейтральные проливы и свободный от турок Константинополь, хотя европейцы уже оккупировали эту зону.

Конференция выслушала также великого визиря Османской империи Дамада Фериды. Оказалось, что его правительство признавало границы 1914 г., и после признания Антантой Республики Армения соглашалось обсудить, с последующим референдумом, новое пограничное размежевание. Высокая порта обещала помочь переселению армян и позаботиться о тех, кто не уедет. Затем оккупационные войска следовало быстро отозвать по домам. Османский народ «не примет расчленения империи или ее раздела под различными мандатами, — говорилось в ноте-меморандуме "О новой организации Османской империи", представленной великим визирем. — Ни одно из правительств не может противостоять воле народа, насчитывающего [столько] жителей»⁶⁹. Без единства государства и его независимости разбитая империя не обещала «столь сильно необходимого длительного

⁶⁵ US NA, RG 256, 180.03401/20½/App. III.

⁶⁶ Там же, док. 43/App. III/Encl. II.

⁶⁷ Там же, док. 49½.

⁶⁸ Там же, док. 92.

⁶⁹ The Paris Peace Conference, vol. VI. Wash., 1946, p. 694.

мира на Востоке»⁷⁰. Заявления ноты-меморандума свидетельствовали о тесной и опасной политической координации между султанским кабинетом, младотурками и новым течением кемалистов.

На следующий день Вильсон предложил игнорировать ноту, поскольку турецкие делегаты «вообразили, что конференция не знает истории и готова проглотить ужасную ложь»⁷¹. По его мнению, следовало начертить общие границы, указать османские потери, а затем Антанта и США могли заняться их распределением. Глава американской администрации сразу упомянул проливы, но услышал от Ж. Клемансо, что точные границы без военного присутствия приведут к плачевным результатам. Между тем у победителей «ничего [не было] готово, чтобы принудить [турок] к немедленному выполнению»⁷². Франция уже уступила Константинополь Соединенным Штатам, напомнил премьер-министр, однако их президент «кажется, не беспокоился о том, чтобы его принять»⁷³. В этой простой и ясной ситуации В. Вильсон не принял весомой и выгодной уступки, делавшей армянский мандат реализуемым проектом. Вместо этого он помешал итальянской высадке в Малой Азии, так как их войска не спешили с демобилизацией и тянулись к Кавказу. Угрожая Риму долгами, новой вспышкой войны и падением кабинета, президент США напомнил о хлебе, посылаемом в Закавказье через Атлантику. Он предсказывал голод и немедленный приток населения на Кавказ после ухода отсюда британской дивизии.

Весь ход переговоров от 26 июня свидетельствует: в конце июня 1919 г. лидеры Европы и США всецело понимали и признавали номинальность Мудросского перемирия и восстановление османского милитаризма. Тем не менее 27-го числа партнеры согласились, что В. Вильсон покинет Париж без конкретных восточных договоренностей, а «дальнейшее рассмотрение Мирного договора с Турцией будет отложено до того времени, когда правительство США сможет заявить, может ли оно принять мандат на часть территории бывшей Турецкой империи»⁷⁴. Чтобы смягчить ситуацию, председатель Верховного экономического совета Конференции Г. Гувер предложил В. Вильсону назначить в Армению проживающего на месте комиссара как полномочного представителя держав-победительниц «во всех их отношениях с де-факто правительством» РА. В его обя-

⁷⁰ Там же.

⁷¹ Армения в документах, с. 132.

⁷² Там же, с. 132–133.

⁷³ Там же, с. 133.

⁷⁴ The Paris Peace Conference, vol. VI, p. 729.

занности включали: «В той степени, насколько он найдет необходимым, надзор и советы по различным государственным делам во всей российской и турецкой Армении, а также контроль за помощью и вопросами репатриации вплоть до определения политической участи этого пространства»⁷⁵.

На следующий день президент США изложил Совету четырех свою инициативу о совместно назначаемом представителе Парижской конференции. Контроль такого комиссара за правительством в Ереване и репатриацией на американские деньги был заметным практическим шагом, однако в 11 часов утра Вильсон получил урезанное согласие европейцев. Из последнего удалили турецкую Армению и вопросы возвращения ее жителей к родным очагам⁷⁶.

Так закончилась основная фаза Парижской конференции, которую увенчало подписание 28 июня Версальского договора, включавшего в себя Устав Лиги Наций и понятие мандата, а глава американской администрации отбыл домой. Для Армянского вопроса эта фаза содержала много обещаний и проработку технических вопросов, но полное отсутствие конкретных решений.

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ՆՐԱ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ
ՓԱՐԻՉԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ
(1919 թ. հունվարի 18 – հունիսի 28)**

ԳԱՅԱՆԵ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ

Ա մ փ ո փ ու մ

Առաջին համաշխարհային պատերազմի (1914–1918 թթ.) ռազմաճակատներում հայ ժողովրդի զավակներն ակտիվ մասնակցություն են ունեցել մարտական գործողություններին. ցարական բանակի կազմում կռվել են 250 հազար հայեր, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի զինված ուժերում՝ 50 հազար:

Փարիզի հաշտության կոնֆերանսի աշխատանքների առաջին փուլում (1919 թ. հունվարի 18 – հունիսի 28) Անտանտի ղեկավարները բանակցելիս կիրառում էին զինվորականների գործելաոճ՝ նրանք ևս աշխարհի մասշտաբով փոխանակում էին տարածքներ ու ազդեցություն գոտիներ: 1919 թ. հունվարի 28-ին և 30–31-ին, մարտի 20-ին, մայիսի 5–6-ին, 14-ին, 17-ին, 21-ին ու 31-ին, ինչպես նաև հունիսի 25–28-ին կայացած բանակցությունների ընթացքում հանգամանորեն անդրադարձ է եղել նաև Հայկական հարցին: Կոնֆերանսում հայ ժողովրդին

⁷⁵ Там же, с. 744.

⁷⁶ Там же, с. 741.

որպես պատերազմում տուժած կողմ ներկայացնում էին Պողոս Նուբարի Հայ ազգային և Ավետիս Ահարոնյանի ղեկավարած Հայաստանի Հանրապետության պատվիրակությունները: 1919 թ. փետրվարի 12-ին նրանք ստորագրում են «Հայկական հարցը Հաշտության կոնֆերանսի առջև» խորագրով հուշագիր, որը փետրվարի 26-ին ներկայացնում են Տասի խորհրդի նիստում: Վեհաժողովի աշխատանքները սուր հակասություններ են ի հայտ բերում Անգլիայի և Ֆրանսիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի, ԱՄՆ-ի ու Իտալիայի միջև: Նրա մասնակիցները խոստումներ էին շռայլում և մանդատի հետ առնչվող բազմաթիվ տեխնիկական հարցեր էին մշակում, միաժամանակ ջանում էին հասկանալ՝ արդյո՞ք ԱՄՆ-ը պատրաստ է ստանձնել հայկական մանդատը: Հանրագումարում՝ Փարիզի հաշտության կոնֆերանսի առաջին փուլում այդպես էլ չընդունվեց հայերի քաղաքական հեռանկարին վերաբերող որևէ վճիռ:

ARMENIA AND ITS TERRITORIAL ISSUE
AT THE PARIS PEACE CONFERENCE
(1919 JANUARY 18 – JUNE 28)

GAYANE MAKHMOURIAN

Summary

The Armenian people actively participated in the military operations on the fronts of the World War I (of 1914-1918): 250 thousand men waged battles in the Tsar's Army and 50 thousands more fought in the Armies of France, Great Britain and the USA.

During the first stage of the Paris Peace Conference (January 18 – June 28, 1919) state leaders of the Entente interacted in the same way, just as the military used to do. They exchanged territories and zones of influence all around the world. On January 28, 30-31, on March 20, May 5-6, 14, 17, 21, 31, as well as on June 25-28, 1919, they had also discussed in detail the Armenian Question. Our nation, as a victimized side, was represented by the Armenian National Delegation of Boghos Nubar together with the Delegation of the Republic of Armenia, led by A. Aharonian. On February 12, 1919, they signed a memorandum on “The Armenian Question Before the Peace Conference” which they stated on February 26 at the meeting of the Council of Ten. The Peace Conference brought to light sharp contradictions between the Great Britain and France, France and the USA, Italy and the USA. Its member politicians gave a great deal of promises and worked up a lot of technical matters, endeavoring at the same time to find out if the USA was ready to accept the Armenian mandate. To sum up, the first stage of the Paris Peace Conference had completed without any specific decisions concerning the future of Armenians.

ԴՐՎԱԳԼԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

XX դարի առաջին տասնամյակների պայծառ անուններից են Հովհաննես Քաջազնունին (1868–1938) և Հովհաննես Թումանյանը (1869–1923): Ազգային երկու մեծություններ, որոնց դերը նշանակալից ու անփոխարինելի է ինչպես հայ մշակույթի, այնպես էլ ազգային-քաղաքական մտքի պատմության մեջ՝ այն էլ հայ ժողովրդի կյանքի ամենաողբերգական ու պատմական վայրիվերումներով լի գերբարդ շրջանում, ապագայի անորոշության պայմաններում, երբ նույնիսկ տաղանդավոր անհատների ու գործիչների համար շատ ավելի դյուրին էր սխալվելը, քան ճիշտ կողմնորոշվելը: Սակայն թե՛ Քաջազնունին և թե՛ Թումանյանը ժամանակի նվիրյալների մեծ բանակի մեջ առանձնացան և միացան այն փոքրաթիվ ազգային գործիչներին, ովքեր կարողացան գնահատել պատմական պահն ու վահան դառնալ մեր ժողովրդի ամենամեծ գոյամարտում: Գրեթե տարեկից գործիչները (Քաջազնունին մեկ տարով էր մեծ Թումանյանից), դուրս գալով Ջավախքից ու Լոռուց, մշտապես բարիկազի միևնույն կողմում էին թե՛ գրական-մշակութային, թե՛ հասարակական-քաղաքական կյանքի զարգացման պայքարում: Բնականաբար, մշտապես մարտնչելով միևնույն նպատակների համար՝ նրանց հանդիպումներն անխուսափելի էին, իսկ եթե նկատի ունենանք ազգային երկու գործիչների մարդկային բնավորության լուսավոր նկարագիրը, ապա նույնքան անխուսափելի ու օրինաչափ էր նրանց բարեկամությունը: Հասարակական, մասնավորապես գրական-մշակութային կյանքի բազմաթիվ խաչմերուկներում Ամենայն հայոց բանաստեղծ Թումանյանն ու ՀՀ առաջին վարչապետ Քաջազնունին գործեցին համատեղ, անցան նույն ուղով, ձգտեցին միևնույն բաղձալի նպատակներին՝ ինչպես հայ ժողովրդի ազատագրությանը, պետականության կերտմանը, այնպես էլ նրա մշակույթի ու գրականության զարգացմանը, գրողների նյութական ապահովության ու նրանց հեղինակային իրավունքի պահպանման խնդիրների լուծմանը: Նրանք միասին էին հայ գրական կյանքը, հրատարակչական և նույնիսկ կրթական-դպրոցական գործը կազմակերպելիս:

Անվանի երկու ազգային գործիչների մշակութային-քաղաքական առնչակցություն պատմության վավերագրերն են Քաջագնու-նու հուշերը Թումանյանի մասին, բանաստեղծի և ժամանակի ազգային մշակութային գործիչների նամակագրությունը, նրանց գրական ժառանգությունն և այլն:

Հովհ. Քաջագնունին Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտը գերազանցության դիպլոմով 1893-ին ավարտելուց հետո գալիս է Թիֆլիս: Դեռևս ուսանողական տարիներից նա հարել է ՀՅ Դաշնակցությանը՝ դառնալով նրա հիմնադիր անդամներից մեկը: 1890-ականների կեսերին նա, որպես ինժեներ, աշխատել է Անդրկովկասի տարբեր քաղաքներում (Բաքու, Բաթում, Թիֆլիս), միաժամանակ զբաղվել կուսակցական գործունեությամբ: Հենց ՀՅԴ գործունեության համատեքստում ու Թիֆլիսի դաշնակցական միջավայրում է կայացել Թումանյանի և Քաջագնունու ծանոթությունը: Սակայն նրանք մտերմացել են իշխանուհի Մարիամ Թումանյանի տանը 1897-ից կազմակերպվող «Հինգչաբթիներին»¹: Ինչպես հավաստում է իշխանուհին, բոլոր անդամներն «անբաժան հոգի» էին²: «Հինգչաբթիներին» ընթացքում ծավալվում էին գրական բանավեճեր, քննարկվում էին հատկապես հիմնական անդամների՝ գրական դեռևս անտիպ գործերը: «Հիշում եմ, – գրում է իշխանուհին, – Շանթի առաջին դրաման մենք այնքան խիստ քննադատեցինք, որ նա պատռեց ձեռագիրը»³: Բացի գրական ընթերցումներից և քննարկումներից, «Հինգչաբթիներում» Թումանյանը, Շանթը, Քաջագնունին և այլք արծարծում էին նաև ազգային-քաղաքական, հասարակական-մշակութային զանազան հարցեր, այդ թվում՝ Թիֆլիսում Գրողների ընկերություն հիմնելու խնդիրը:

Սկզբից Քաջագնունին բարձր է գնահատել բանաստեղծի տաղանդը և փորձել է օգտակար լինել որտեղ եղել է, ինչպես կարողացել է: Թումանյանի նյութական վիճակը միշտ էլ ծանր է եղել, բայց նա ձգտել է այդ իրողությունը թաքցնել ամենքից, սակայն մտերիմների աչքից երբեք չի վրիպել բազմանդամ ընտանիքի հոգսերի բեռի տակ կթած բանաստեղծի վերջ չունեցող տնտեսական դժվարու-

¹ 1897 թ. վերջերին իշխանուհին հինգչաբթի օրերին իր տանը կազմակերպում է գրական երեկոներ, որոնք ստացել էին «Հինգչաբթիներ» (երբեմն նաև «Չորեքշաբթիներ») անվանումը: Կազմավորված գրական այդ խմբակի մշտական անդամները վեցն էին՝ տանտիրուհին՝ Մարիամ Թումանյանը, Հովհ. Թումանյանը, Հովհ. Քաջագնունին, Լ. Շանթը, Փիլ. Վարդազարյանը, բժիշկ Ար. Զարգարյանը: Քաջագնունին, սակայն, «Հինգչաբթիներին» մշտական անդամն էր մինչև Բաքու տեղափոխվելը: Դրանից հետո Քաջագնունին մշտապես այցելում և գրական երեկոներին մասնակցում էր արդեն իբրև հյուր: «Հինգչաբթիներում» նույնպես, ինչպես «Վերնատանը», անպակաս էին հյուրերը՝ նրանց թվում Դ. Դեմիրճյանը, Ղ. Աղայանը, Ավ. Իսահակյանը, Շիրվանզադեն: Հինգչաբթի երեկոյթները տևել են մինչև 1902–1903 թթ.:

² Մ. Թումանյան. Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Երևան, 2003, էջ 107:

³ Նույն տեղում:

յունները: Պատահական չէ, որ նրա երեք մեկենասները, որոնք հատկապես դարասկզբին կարողացան նեցուկ դառնալ մեծ բանաստեղծին, մտերիմ բարեկամներն էին՝ «Հինգշաբթիների» անդամներ՝ իշխանուհի Մարիամ Թումանյանը⁴, բժիշկ Արիստակես Զարգարյանը⁵ և Փիլիպոս Վարդազարյանը⁶ (Ֆիլիպը): Քաջագունուն նույնպես փորձեց իր հնարավորությունների սահմաններում աջակցել Թումանյան-մարդուն և սատար կանգնել Թումանյան-ազգային գործչին: 1900 թ. Քաջագունուն և Արսեն Ղլտճյանը⁷ Բաքվում միջոցներ էին հայթայթում Թումանյանին արտասահման ուղարկելու համար: Այդ նպատակով Քաջագունուն բանաստեղծին տրամադրում է 80 ռուբլի. Թումանյանը հրաժարվում է՝ ասելով. «Շուայլ բախտ կլիներ ինձ համար, եթե կարողանայի պարտքերս վճարել, այս կամ այն փողոցով անցնելու ազատությունը ձեռք բերել... Ես չեմ կարողանում այս սահմանում ապրել, դու արտասահման ես ղրկում»⁸: 1901 թ. Բաքվի Շահգեղյան գրասենյակը, որը բարեգործական աշխատանք էր ծավալում, դադարեցնում է Թումանյանին թոշակ տալ պատճառաբանելով, թե նա այլևս չի ստեղծագործում: Քաջագունուն միջամտությունից հետո փորձում են վերականգնել թոշակը, սակայն պայմանը բանաստեղծին Բաքվում տեսնելն էր: Քաջագունուն չի հաջողվում Թումանյանին համոզել Բաքու գալ, բանաստեղծը հրաժարվում է այդ առաջարկից՝ այն համարելով «անվայել» և գեղարվեստագետի արժանապատվությունը դեմ. «Գրողի հետ չպետք է պայմաններ կապել, գրողին պետք է ընթացք տալ, հնար տալ»⁹:

Թումանյանն ու Քաջագունուն հաճախակի էին հանդիպում 1905–1906 թթ.: 1905 թ. ապրիլի 3–15-ը նրանք միասին էին Թիֆլիսի Հայկական առաջին համազգային համագումարում, ինչպես նաև 1906 թ. հուլիսի սկզբին՝ Խրիմյան Հայրիկի կոնդակով հաստատված Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունից 12 անձանցից բաղկացած նոր կազմում էին¹⁰: 1900-ականների սկզբին Քաջագունուն Թումանյանի տանը ձևավորված «Վերնատան» մշտական հյուրերից էր և, բազմիցս ականատես լինելով ու մասնակցելով այնտեղ ծա-

⁴ Թումանյան (Դոլուխանյան) Մարիամ Մարկոսի [21. 07. 1870 (Թիֆլիս) – 23. 07. 1946 (Երևան)] – բարեգործ, Թիֆլիսի Հայոց Դրամատիկական ընկերությունից նախագահ (1903–1907), մշակութային, հասարակական գործիչ:

⁵ Զարգարյան Արիստակես (Ռուստեմ) Հայրապետի [23. 12. 1864 (Գողթան գավառ՝ Ներքին Ագուլիս) – 13. 02. 1935 (Թիֆլիս)] – բժիշկ, հասարակական գործիչ:

⁶ Վարդազարյան Փիլիպոս Հակոբի [1858 (Գողթան գավառ՝ Ներքին Ագուլիս) – 01. 09. 1935 (Թիֆլիս)] – հրատարակիչ, մշակութային գործիչ, Թումանյանի և Քաջագունուն մտերիմ բարեկամներից:

⁷ Ա. (Սիմեոն) Ղլտճյան արքեպ. [28. 03. 1868 (Ալեքսանդրապոլ) – 1943 (Էջմիածին)] – իրավաբան, բանասեր:

⁸ Հովհ. Թումանյան. Երկերի լրակատար ժողովածու տասը հատորով (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 10, Երևան, 1999, էջ 53:

⁹ Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 9, Երևան, 1997, էջ 248:

¹⁰ Տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 10. VII. 1906:

վալվող բանավեճերին, հավաստիացնում էր, որ դրանք մնում էին սկզբունքային բարձրություն վրա և «Թումանյանի նուրբ ու զգայուն խառնվածքը ազնվացնում էին «Վերնատունը»»¹¹:

1906-ից Հովհ. Քաջազնունին Բաքվի Հայոց հրատարակչական ընկերության գրահրատարակչական հանձնաժողովի անդամ էր: Դեռ 1907 թ. հունիսի 27-ին Թումանյանը դիմում է Քաջազնունուն՝ խնդրելով՝ իրեն անձամբ ֆինանսապես օժանդակելու փոխարեն ֆինանսավորել «Լուսաբեր» դասագրքի հրատարակությունը, որի հեղինակներն էին Հովհ. Թումանյանը, Լ. Շանթը և Ստ. Լիսիցյանը: Քաջազնունին ստիպված էր օգոստոսի 1-ին մերժել բանաստեղծին՝ արդարանալով. «Մեզ հանձնված է փողը պատրաստի գրքեր տպագրելու համար և ուրիշ ոչինչ»¹²: Նրան ավելի հուզում և հետաքրքրում էր ոչ թե «Լուսաբերի», այլ անձամբ բանաստեղծի նյութական վիճակը: Գիտակցելով, որ հայ գրողի «անել դրությունն» ընդունակ է սպանելու ամեն մի պոետական եռանդ, և գրականության շահերը պահանջում են գրողին ամեն կերպ աջակցել ու հնարավորություն ստեղծել՝ «բեղմնավոր անելու իրանց տաղանդը», Քաջազնունին գրում է. «Ինչ վերաբերում է քեզ, ավելորդ եմ համարում հավաստիացնելու, որ համարում եմ քեզ իսկական բանաստեղծ և համոզված եմ, որ ինչ էլ անելու լինի հայ հասարակությունը, դարձյալ պարտավոր և երախտագետը կմնա նա և ոչ դու (ընդգծումը մերն է. – Ս. Հ.)»¹³:

Քաջազնունու մտահոգություն կենտրոնում շարունակում էր մնալ Թումանյանի նյութական ապահովության խնդիրը: Այդ նպատակով Քաջազնունին 1907 թ. օգոստոսին Թումանյանին առաջարկում է ավարտել «Սասունցի Դավիթը», որպեսզի հնարավոր լինի նոր ժողովածու հրատարակել: Սակայն պոետի երկրորդ մասը չգրելու գրողի պատճառաբանությունը հարգելի է համարում. Քաջազնունին գրում է. «Բայց դու անիրագործելի գտար, – մի այնպիսի պատճառով, որի դեմ չի կարելի վիճաբանել. ասում ես, տրամադրություն չկա «Դավիթը» շարունակելու: Առանձնապես ես շատ ափսոսում եմ, որ այդպես է... Զուռով հո չի՞ կարելի բանաստեղծություն գրել»¹⁴:

Հովհ. Քաջազնունին ու Մ. Տեր-Անդրեասյանը, շարունակելով իրենց հորդորներն ու բարձր հոնորարի գրավիչ առաջարկները Թումանյանին, որևէ արդյունք չեն տալիս: «Սասունցի Դավիթն» առանձին գրքով հրատարակելու և բանաստեղծին նյութապես աջակցելու անկեղծ ցանկությունից է ծնվում Բաքվում 1908թ. ժողովածուն հրատարակելու մտահղացումը:

¹¹ «Հայրենիք» (Բոստոն), 1960, № 4, էջ 24:

¹² Թումանյան. Ուսումնասիրություններ և հրատարակումներ (այսուհետև՝ ՈւՀ), հ. 5, Երևան, 1998, էջ 308:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

Թեև Բաքվի Հայոց հրատարակչական ընկերության միջոցները նախատեսվում էին միայն պատրաստի գրքեր տպագրելու համար, Քաջագունուն հաջողվում է համոզել վարչությունը հեղինակին ժողովածուի համար անմիջապես կանխավճար ուղարկել 200 ռուբլի և անձամբ երաշխավորում, որ բանաստեղծի հետ համաձայնություն չգալու դեպքում կանխավճարը ետ կվերադարձնի իր սեփական միջոցներից¹⁵։ Քաջագունին աշխատում և ձգտում էր Թումանյանի համար «այնպիսի պայմաններ» ապահովել, որ նա «զրկված չլինի»¹⁶։ Եվ պոետն իբրև իր շահերի պաշտպան Հովհ. Քաջագունուն է լիազորում Ֆինանսական հարցերով բանակցել Բաքվի Հայոց հրատարակչական ընկերության վարչության հետ։ Ի վերջո, հեղինակի առաջարկած պայմանները համարվում են «արդարացի և ընդունելի»¹⁷։

Իհարկե, ողջ գումարը բավարար չէր գրողին պարտքերից ազատելու. այդ մասին քաջատեղյակ էր նաև Քաջագունին, և նա որոնում է պոետի պարտքերը մարելու այլ ուղիներ¹⁸։ Ժողովածուն կազմելու աշխատանքները հանձնարարվում է Հովհ. Քաջագունունուն։ Հենց նրա շնորհիվ 1908 թ. հունվարի 25-ին Բաքվի Հայոց հրատարակչական ընկերության մասնաժողովի հերթական նիստը որոշում է ավելացնել բանաստեղծի հոնորարը¹⁹։ Ծանոթ լինելով Թումանյանի առօրյա հոգսերին և զբաղվածությանը, գրական երկերը մշտապես մշակելու սովորությունը՝ Քաջագունին 1908 թ. ապրիլի 17-ին իր կազմած ցանկը հեղինակին ուղարկելով՝ գրում է. «Արդ՝ աչքի անցկացրու գրվածքներդ այդ ցուցակի կարգով և, եթե փոփոխություններ անելու ես, արա, միայն մի՛ ուշացնիր, որովհետև մենք տպագրությունը չենք կանգնեցնի»²⁰։ Օգոստոսի վերջին ժողովածուի տպագրությունը գրեթե ավարտվում է։

1908 թ. օգոստոսի 1-ին կամ 2-ին Թումանյանը Քաջագունուն և ռուս բանաստեղծ, ազգագրագետ, լրագրող Բոգորազ Տանի հետ «դիլիթանսով» Թիֆլիսից ուղևորվում են Բաքու։ Քաջագունին պնդում է, որ բանաստեղծին Թիֆլիսից տեղաշարժել է նրա կամքին հակառակ. «Զոռով եմ պոկել տեղից, հասցրել Վլադիկավկազ ու այնտեղից էլ քաշել-տարել Բաքու, որ գոնե ծովը տեսնի, նավթա-

¹⁵ Նույն տեղում, էջ 309: Քաջագունին համոզում է մասնաժողովի անդամներին, որ հեղինակին անմիջապես ուղարկվի ոչ թե 200, այլ 300 ռուբլի կանխավճար: Հոնորարը պետք է Թիֆլիս ուղարկվեր յոթ ամիս շարունակ, պարբերաբար, սկսած դեկտեմբերի 1-ից՝ «ամեն ամսի 1-ին» (նույն տեղում, էջ 312): Նախատեսվում էր, որ 3000 տպաքանակով հրատարակված ժողովածուից ստացված եկամուտը բանաստեղծի համար կազմելու է 1200 ռուբլի: Այնուհետև դրա ծավալը մեծանում է, և եկամուտն էլ դառնում է 1725 ռուբլի (նույն տեղում, էջ 319):

¹⁶ Նույն տեղում, էջ 309:

¹⁷ Նույն տեղում, էջ 310:

¹⁸ Նույն տեղում, էջ 318:

¹⁹ Խոստացած 50 ռուբլու փոխարեն ընկերությունն առաջարկում է յուրաքանչյուր մամուլի համար վճարել 75 ռուբլի (նույն տեղում):

²⁰ Նույն տեղում, էջ 322:

հեղինակը, արժանի էր համարում հրապարակման: Թերևս շատ զարմանաք, եթե ասեմ, որ սրանց թվում էր այնպիսի գոհար, ինչպիսին է «Հայոց լեռներումը»²⁵: Գուցե այս է պատճառը, որ «Հայոց լեռներումը» գետեղվում է Քաջագունու հրատարակած, Բաքվում լույս տեսած 1908 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուի «Երգեր» բաժնի վերջում:

Նշված աշխատությունը 1906–1914 թթ. Թումանյանի երկերի ամենակարևոր և ծանրակշիռ հրատարակությունն էր: Այն պարունակում էր գրողի քսանամյա գրական-ստեղծագործական ուղու լավագույն էջերը: Ժողովածուն Թումանյանի ձեռք բերած գեղարվեստական բարձունքի նոր նվաճումն էր և դարձավ ինչպես նրա նյութական, տնտեսական վիճակի բարելավման, այնպես էլ հասարակական ճանաչման նոր նշանաձող:

Քաջագունուն օգնություն էր հասել Թումանյանին նաև այն պահերին, երբ բանաստեղծը նյութական դժվարությունների էր հանդիպում հայ դատին առնչվող հարցերում: Պահպանվել է Թումանյանին ուղղված Քաջագունու երկտողը. «Ձեզ պարտք տված Քննիչ բյուրոյի համար քսան հազար ռուբլին, այսօր Ձեզանից ետ ստացա»²⁶:

Երբեմն Թումանյանը դիմում էր Քաջագունու օգնությանը հայ գրողներին օգնելու խնդրանքով և դա անում էր թե՛ սեփական նախաձեռնությամբ, թե՛ մտերիմների հորդորով: Շատերն էին համոզված, որ հենց Թումանյանի խոսքը կարող է Քաջագունուն մղել գործնական քայլերի: Այսպես, Լ. Շանթը 1910 թ. Լոզանից խնդրում է Թումանյանին Քաջագունու միջոցով օգնության հասնել Դ. Դեմիրճյանին: Շանթը գրում է. «Ես գիտեմ քու պայմաններդ, բայց ուրիշ որուն գրեմ, որ սրտին մոտ առնե ու բան մը ընե: Նորեն դուն գուցե կարող ըլլաս, ասդին-անդին դիմելով բան մը գլուխ բերես: Բագու Քաջագունուն Դերենիկի մասնավոր հարգողներեն է, ան ալ կրնար օգնություն մը հասցնել: Կը գրեի ինքս ալ, բայց մտածեցի, որ քու խոսքդ կրնա ավելի ազդեցություն ըներ վրան: Անո՛ր ալ գրե»²⁷:

Քաջագունուն մասնակից էր նաև Թումանյանի նախագահած Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությանը, ոչ միայն գրական ասուլիսներին իր ներկայությամբ, այլև կարգացած դասախոսություններով: 1917 թ. հունվարի 13-ին գրական ընկերության 16-րդ երեկույթում ինժեներ Հովհ. Քաջագունուն դասախոսում է «Ինչ է գեղարվեստը» թեմայով: Նա դրսևորում է արվեստի հարցերը գիտականորեն առաջադրելու և վերլուծելու գրականագետի հմտություններ, կարևորում է ազգային գեղարվեստի դերը

²⁵ Հովհ. Քաջագունունի. նշվ. հոդվ.:

²⁶ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, № 2339 (482):

²⁷ Լ. Շանթ. Երկերի ժողովածու ինը հատորով, հ. 9, Երևան, 2017, էջ 158:

Համաշխարհային մշակույթի ու ազգերի պատմության համատեքստում: Քաջագնունու խոսքերով՝ «գեղարվեստի միջոցով են գնահատվում ազգերը, և այսօր, երբ օտարը կանգնում է հայկական ավերակների առաջ, տեսնում է մեր արվեստն ու ճաշակը, նա իր հիացմունքի խոսքերն է հանում հրապարակ և տալիս իր արժանի գնահատությունը: Ահա գեղարվեստականի էական դերը»²⁸: Համաշխարհային գրականության մեջ թե՛ Թումանյանի, թե՛ Քաջագնունու ամենասիրելի գրողը Շեքսպիրն էր: Թումանյանը «Վերնատան» Շեքսպիրն էր և հայ գրական միջավայրում հայտնի է իբրև ամենաշեքսպիրասեր հայ գրողը: Շեքսպիրի մասին բանաստեղծն ասում էր. «Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, ուրեմն տկար է»²⁹: Անգլիացի հանճարին համարում էր «մի չափ» ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Քաջագնունու համար նույնպես համաշխարհային գրականության մեջ առանձնանում էր Շեքսպիրը, որի կյանքի ու ստեղծագործության առեղծվածները դարձան նրա գրական, գիտական ուսումնասիրության առարկան: Քաջագնունին «Շեքսպիրի հետ մեն-մենակ» հողածաչարի հեղինակն է, որը լուրջ ներգրում է հայ շեքսպիրագիտության մեջ:

1911-ին Թումանյանն ու Քաջագնունին մեղադրվում էին հայտնի «Դաշնակցական գործով»: Երեք տարով ընդհատվում են բանաստեղծի և Քաջագնունու հանդիպումներն ու նամակագրությունը, քանի որ Քաջագնունը հաջողվել էր խուսափել դատավարությունից և սպասվող անխուսափելի հաշվեհարդարից: Նա մեկնել էր արտասահման, որտեղից Թիֆլիս էր վերադարձել միայն 1914-ին: Եվրոպայից վերադառնալուց հետո Քաջագնունին Թիֆլիսում առաջինն այցելում է Թումանյանին, ով նրա ու Ավ. Ահարոնյանի արտասահմանից վերադարձի համար բազմիցս դիմել էր ռուսական իշխանություններին, անձամբ՝ փոխարքային³⁰: 1914 թ. սեպտեմբերին բանաստեղծը Փիլ. Վարդազարյանին գրում է. «Հովհաննեսը (Քաջագնունին) մոտս է: Թեև գալու է (երևի վաղը) քեզ տեսության, բայց ա՛յժմ չի խանգարիլ, որ դաս ա՛յժմ խոսենք. Եվրոպայից է գալիս»³¹:

1918 թ. մայիսին Վրաստանի և Ադրբեջանի անկախություն հայտարարելուց հետո Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց Հայաստանի անկախությունը: Հունիսի 7-ին ստանձնելով Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետի պաշտոնը (1918–1919թթ.)՝

²⁸ «Մշակ», 18. I. 1917, էջ 2:

²⁹ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 6, Երևան, 1994, էջ 54:

³⁰ Այդ մասին տես՝ Ս. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Ավետիս Ահարոնյանի և Հովհաննես Թումանյանի գրական և ազգային գործունեության պատմությունից. — Ավետիս Ահարոնյան 150, միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2017, էջ 212:

³¹ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 10, էջ 217:

Քաջագունունին Թումանյանի ընկեր-բարեկամներից առաջինն էր, ով կարևոր և առանցքային դեր խաղաց հայ ժողովրդի պետականութ-
յան հռչակման, Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման
գործում: Նրան պետք է հետևեին նաև Թումանյանի մյուս մտերիմ-
ները՝ Ավ. Ահարոնյանը, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը և այլք: ՀՀ
անկումից հետո Քաջագունունին առաջին Հանրապետության շատ
ղեկավարների հետ մեկնեց արտասահման: Սակայն նա, անկախ
պատմական անբարենպաստ հանգամանքներից, իր կյանքին
սպառնացող վտանգից, չէր պատկերացնում օտար ավերում:
Քաջագունունին 1921–1924 թթ. ապրեց Բուխարեստում իբրև վտա-
րանդի, սակայն 1925-ին վերադարձավ Խորհրդային Հայաստան՝
Երևան. «Եթե կարողանամ անձնագիր ստանալ, անպատճառ կերթամ
Հայաստան: Թող անեն, ինչ որ անելու են», – խորհում էր նա³², ով
դարձավ 1937-ի գոհերից մեկը: Բայց մինչ այդ, հասցրեց շարադրել
իր «Անդարձ ճամփորդը» խորագրով հուշերը և հանձնել Թուման-
յանի դստերը՝ Նվարդին, որտեղ գրում է. «Անկարելի բան էր, –
գրում է նա, – մի քիչ ճանաչել նրան ու չսիրել... դեռ էն գլխից շատ
բարձր եմ դասել նրա տաղանդը, հիացել եմ նրա երկերով... Բայց
միաժամանակ ու հավասարապես սիրել եմ նրա մեջ մարդը: Մարդն
ու բանաստեղծը ես չեմ կարողացել բաժանել միմյանցից»³³: Ըստ
Քաջագունունու, Ամենայն հայոց բանաստեղծը հրաշալի ինտուիցիա-
յով օժտված մի պոետ էր, ով «դատող ու փաստարկող» էր, բայց
արևելյան մեծ բանաստեղծների նման իմաստուն էր. «Կարծես
ճշմարտությունը – իսկական խորքերում թաքնված ճշմարտությունը
– տրվում էր նրան ինքն իրեն, առանց մտքի երկար ու բարակ սպե-
կուլյացիաների»³⁴:

Քաջագունունին Թումանյանի բնավորության ազնիվ գծերից էր
համարում այն, որ նա «միանգամայն ազատ էր պրոֆեսիոնալ նա-
խանձից: Նրա լայն սրտից շատ հեռու էր այն վախը, այն չարհի-
կան հաշիվը, թե ահա երևան է գալիս մի նոր ու փայլուն տաղանդ,
որը կարող է նսեմացնել իր սեփական արժեքը»³⁵: Սիրով էր հիշում
իրենց զրույցները փիլիսոփայական հարցերի շուրջ, որոնց ընթաց-

³² Քաջագունունին մինչև բանտարկվելը իր մասնագիտությամբ պաշ-
տոնավարել է տարբեր հիմնարկություններում, եղել է Երևանի պետական
համալսարանի և Շինարարական ինստիտուտի դասախոս՝ դասավանդելով
«Շինարարական արվեստ», «Ճարտարապետական պլանավորում» առար-
կաները: Նրա նախագծով է Լենինականում կառուցվել նավի նմանվող
բնակելի շենքը: 1930-ին ստացել է պրոֆեսորի կոչում: Եղել է «Շինարա-
րական կառույցների ուսուցանողներին» հեղինակներից: Գրել է
նաև «СТО ДЕСЯТЬ ДНЕЙ В ЕВРОПЕ» ուղեգրությունը (Բաքու, 1911), «Դաշ-
նակցությունն այլևս անելիք չունի» (Բուխարեստ, 1923), «Բաց նամակ՝
Թուրքիա՞ թե Ռուսիա» (Բուխարեստ, 1924, որը վերահրատարակվել է
Բեյրութում Անդրանիկ Ծառուկյանի հիացական առաջաբանով 1965 թ.)
գրքերը, «Հետմահու» ժողովածուն (Բեյրութ, 1965):

³³ Հ ո վ հ. Ք ա ջ ա գ ու ն ու ն ի. նշվ. հոդվ.:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

քում նկատել էր. «Անսկիզբ ու անվերջ ժամանակը, անհուն տարածությունը, տիեզերքի անհայտ ու անթափանցելի խորքերը, հեռավոր աստղերն ու մեզ համար անմատչելի ուրիշ աշխարհները, ապա մարդը՝ նրա տեղը բնության մեջ, գոյության իմաստն ու նպատակը – այս խնդիրները հանգիստ չէին տալիս նրան»³⁶:

Հովհ. Քաջազնունին եղել և մնում է Հովհ. Թումանյանի ազնիվ, լավագույն բարեկամներից ու նրա մարդկային և ստեղծագործական տաղանդի երկրպագուներից մեկը:

ФРАГМЕНТЫ ДРУЖБЫ ОВАНЕСА КАДЖАЗНУНИ И ОВАНЕСА ТУМАНЯНА

СУСАННА ОВАНЕСЯН

Резюме

Великий армянский поэт Ованес Туманян (1863—1923) и первый премьер-министр Первой Республики Армения Ованес Каджазнуни (1868—1938) жили и творили в самый трагический, наполненный национально-политическими катаклизмами, сложный период жизни армянского народа. В условиях неопределенного будущего, даже для таких выдающихся личностей и деятелей было нелегко избежать ошибок, однако и Каджазнуни, и Туманян сумели правильно оценить исторический момент и стать щитом в борьбе армянского народа за существование. Каджазнуни и Туманян всегда боролись за одни и те же цели, были единомышленниками, и поэтому между ними сложились теплые дружеские и партнерские отношения. Они многократно встречались и сотрудничали на перекрестках литературной, культурной и национально-политической жизни. Каджазнуни были одним из активных участников армянской литературной жизни как в Тифлисе, так и в Баку. Первоначально он сблизился с Туманяном на знаменитых «Четвергах» — литературных вечерах, организуемых в доме княгини М. Туманян, затем стал членом руководимого Туманяном Армянского общества армянских писателей, часто выступая с докладами. Благодаря усилиям Каджазнуни в 1908 г. в Баку была издана книга Туманяна «Стихотворения».

В 1937 г., незадолго до своего ареста, Каджазнуни написал воспоминания о Туманяне под названием «Безвозвратный путник» и передал их дочери поэта Нвард Туманян. В своих мемуарах он выразил восхищение творчеством поэта и всячески под-

³⁶ Նույն տեղում:

черкивал гармоничное единство Туманяна-человека, поэта и национального деятеля.

FRAGMENTS FROM THE FRIENDSHIP BETWEEN HOVHANNES
KAJAZNUNI AND HOVHANNES TUMANYAN

SUSANNA HOVHANNISYAN

S u m m a r y

Great Armenian poet Hovhannes Tumanyan (1863–1923) and the first Prime Minister of the First Republic of Armenia, Hovhannes Kajaznuni (1868–1938) lived and worked in the most tragic time of national-political upheaval in the life of the Armenian people. In the conditions of uncertain future even for such talented individuals and figures it was not easy to evade errors, however, both Kajaznuni and Tumanyan were able to properly assess the historical moment and become a shield in the battle of Armenian people for survival. Fighting always for the same purpose, Kajaznuni and Tumanyan were like-minded people and that is why warm friendly and partner relations formed between them. They met and collaborated numerous times on the crossroads of literary, cultural and national-political life. Kajaznuni was one of the active participants in the Armenian literary life of Tiflis and Baku. He first met Tumanyan at the literary evenings called “Thursdays” in the house of countess M. Tumanyan. Subsequently he became one of the members of the “Caucasian Society of Armenian Writers” headed by Tumanyan and often had reports. Thanks to the efforts of Kajaznuni, Tumanyan’s “Poems” collection was published in Baku in 1908.

In 1937, not long before his arrest, Kajaznuni wrote his memoirs “The Irreversible Traveller” about Tumanyan and passed it to the poet’s daughter Nvard Tumanyan. In his memoirs he expressed his admiration for the poet’s art and highlighted the harmonic unity of a man, poet and national figure in Tumanyan.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՅԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՁ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Հովհաննես Թումանյանը դարավոր քրիստոնեական հայ գրականության և իր ազգի կյանքի հետ սերտորեն առնչվող խնդիրների գեղարվեստական հանճարեղ վերարտադրողն է՝ XIX դարավերջին և XX դարի առաջին քառորդում:

Դեռ առաջին բանաստեղծություններում տեսնում ենք նրա ծանոթությունը քրիստոնեական սրբազան գրքերին՝ Հին ու Նոր կտակարաններին: 1887 թ. գրված «Աղոթք» քերթվածում, դիմելով Աստծուն, բանաստեղծն ակնարկում է միջնադարում բազմիցս կրկնված այն միտքը, թե Սողոմոնի նման իմաստուն խելք ունենալը կյանքի դաժան օրենքների կողքին նսեմանում է, դրա համար էլ մարդն Աստծուց խնդրում է հետևյալը.

Սողոմոնի պես, տե՛ր,
Ես խելք չեմ ուզում,
Ինձ երկար օրեր
Եվ փող տուր բազում¹:

Աստված և մարդ փոխհարաբերությունը դառնում է առանցքային Թումանյան գրողի, հրապարակախոսի ստեղծագործության գրեթե բոլոր բազմաժանր դրսևորումներում: Օրհնանքն ու անեծքը, աղոթքն ու հոգեհանգիստը, քրիստոնեական ծիսական դրսևորումներ տալն ու շարականը հաճախ հիշատակվում են նրա գրվածքներում՝ հենց քրիստոնեական մարդասիրության կտրվածքով: Սա շատ կարևոր թեմա է և արժանի է հատուկ ծավալուն հետազոտության: Այդ թեմային առանձին ընդարձակ հետազոտություն է նվիրել նշանավոր Թումանյանագետ Էդվարդ Ջրբաչյանը, որն իրավացիորեն եզրակացրել է, թե աստվածաշնչային թեմաներին անդրադարձը խիստ տարողունակ հետազոտություն է պահանջում. «Դրանք ամենայն

¹ Հովհ. Թումանյան. Երկերի լրակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 1, Երևան, 2018, էջ 33:

լրիվությամբ հավաքելու, դասակարգելու և գնահատելու գործը մի առանձին ուսումնասիրություն խնդիր է»²:

Գյուղական աշխատանքը, աշխարհն իր ազնիվ աշխատանքով պահող-պահպանող շինականը դառնում են բանաստեղծի յուրօրինակ ներբողի աղբյուրը, որում որպես ապավեն շարունակ հիշվում է Աստված, որը գոհունակություն է հիտում է աշխատանքից հոգնած գյուղական ընտանիքի գիշերային անդորրը.

Երկրնքի դիմաց
Գըրկված են քընած,
Վերևիցն, ասես,
Ժրպտում է Աստված³:

Երիտասարդ Թուճանյանին գրավել են քրիստոնեական լեզենդները, որոնցով շատ հարուստ են և՛ Հին, և՛ Նոր կտակարանները, ինչպես նաև հայ միջնադարյան դասական մատենագիրների երկերը, և դրանց կողքին՝ հայկական ձեռագրերում պահպանված բազմաքանակ սրբախոսական նյութերը:

Միջնադարի մարդը հավատում էր աստվածային երազին և այն տարբերակում էր սովորական երազից: V դ. մեծ փիլիսոփա և քրիստոնյա աստվածաբան Եզնիկ Կողբացին աստվածային երազի մասին գրում է. «Կամ Աստծու շնորհների ազդեցությամբ որևէ հաստատուն բան տեսնում են որպես հայելու մեջ, օրինակով և ոչ թե բացահայտ ճշմարտությամբ, (դա լինում է) մարդուն լավ բաների մղելու համար, ինչպես Հովսեփին ու Դանիելին. մեծամեծ երևույթների տեսիլներ երևացին»⁴:

Ահա այսօրինակ մի հրաշք է պատմում Թուճանյանը 1888-ին գրված «Նահատակ» քերթվածում, որում աստվածային երազով հայտնվում է քրիստոնյա նահատակի գերեզմանի տեղը, դրա միջոցով մարդիկ փրկվել են հիվանդություններից:

Քսանամյա Թուճանյանը խորհում էր իրական կյանքի բերած դժվարությունների և խոստացյալ հավերժ կյանքի փոխհարաբերության շուրջ՝ ձգտելով պարզել աստվածային անմեկին գաղտնիքները:

Հայտնի է, որ Վարդան Մամիկոնյանը քրիստոնեական հայ եկեղեցու համար ազգային ինքնագիտակցության խորհրդանիշ ու սրբություն է, և նրան վկայակոչելու իրավունքը գրողը վերապահում էր հոգու մաքրություն ունեցող մարդկանց.

² Էդ. Զրբաշյան. Թուճանյանի գրական ժառանգությունը, Երևան, 2000, էջ 249:

³ Հովհ. Թուճանյան. ԵԼԺ, հ. I, էջ 35:

⁴ Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 117:

Հեռացրեք նրան Աստծո սեղանից,
Որ չապականե մեր սրբությունը,
Ազատ պահեցեք անսուրբ բերանից
Վարդանի պաշտած Աստծո անունը⁵:

Երիտասարդ Թումանյանն իր քնարական բանաստեղծություններում հաճախ է անդրադառնում Հիսուսի կերպարին ու նրա պատգամներին՝ Աստծուն ապավինելու խորհրդում տեսնելով կյանքի հարուցած դժվարությունները հաղթահարելու ճշմարիտ ճանապարհը: Սակայն կյանքի բարդություններն այնքան շատ են, որ անպատում նստած միայնակ Հիսուսը մտածում է, թե ինչպես կարելի է կանխել «արյունով խուժադուժ ազգերի» գործողությունները, որ աշխարհում չլինեն աղքատներ, այրիներ ու անտեր որբեր⁶:

Եթե միկրոկոսմը և մակրոկոսմը Թումանյանի ստեղծագործության հիմնական առանցքն են, ապա բանաստեղծություններում ու քառյակներում հաճախ է քննվում բանաստեղծի և Արարչի փոխհարաբերության խնդիրը, որովհետև անտիկ ժամանակներից եկող այն դրույթը, թե իսկական բանաստեղծն աստվածային ներշնչմամբ է ստեղծագործում, ամենատարբեր օրինակներով փաստարկվում է Թումանյանի մոտ: Ցավալին այն է, որ Աստծու պատգամները մարդկանց հաղորդող բանաստեղծը մեծ մասամբ անկար է մարդկանց չար գործերը կանխելու խնդրում:

Քրիստոս հարյավ... երկինք գնաց,
Երկրում թողեց պատվերներ.
Բայց պատվերը գրքում մնաց
Եվ աշխարհքը հեծում է դեռ⁷:

Աստծուն դիմելու ձևը Թումանյանի մոտ դառնում է կանոնիկ, երբ բանաստեղծը խոսում է հայ ժողովրդի տառապանքների մասին, որոնց մեծագույն մասը կապվում է 1895–1896 թթ. կոտորածների և 1915 թ. հայերի ահասարսուռ Եղեռնի հետ:

Տե՛ր, մինչև ե՞րբ մեր աչքերը քեզ մընան.
Մեր գույթն հասավ հեռո՛ւ-հեռու ազգերին,
Աշխարհ լրցվեց մեր աղաղակ, մեր կական,
Ու չի անցել մեր տանջանքը տակավին⁸:

1902-ին գրված «Հայոց լեռներում» հանճարեղ բանաստեղծությունը, որը սեղմ տողերով ներկայացնում է հայ ժողովրդի պատմական ուղին, վերջին վեցնյակում հեղինակը տիեզերական ոգուց

⁵ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ե Լ Ժ, հ. I, էջ 79:

⁶ Տ ե ս ն ու լ յ ն տ եղ ու մ, էջ 121:

⁷ Ն ու լ յ ն տ եղ ու մ, էջ 170:

⁸ Ն ու լ յ ն տ եղ ու մ, էջ 183:

սպասում է հայի համար բացվելիք պայծառ առավոտը: Նույն լավատեսությունը վերստին ճառագում է հայ ժողովրդի մեծագույն ողբերգություն՝ 1915 թ. Եղեռնի օրերին: Բանաստեղծի միտքն Անհայտի հետ է, և նա համոզված է, որ նոր պոետներ կգան, որոնք չեն պղծի իրենց շուրթերն անեծքով ու խանդավառ կերպեն հայի նոր ու հզոր հայրենիքը⁹:

Անեծքն ու օրհնանքը, որպես մարդուն հատուկ հզոր իրողություններ, կան բոլոր հիմնական կրոններում: Զրադաշտական կրոնի սրբազան մատյանում Ավեստայում, երկար էջերով կարդում ենք տեղադրված անեծքների շարանը: Նույնը կա նաև քրիստոնեական վարդապետություն մեջ:

«Նոր բառերիք հայկազեան լեզուի» հեղինակներն «անեծք» բառը բացատրում են հետևյալ կերպ. «Անէծք – Հակառակն օրհնութեան, չարիս մաղթելն, չարաբանութիւն առ ի վնաս և ի պատիժ, տարագրութիւն յօրնութենէ»¹⁰:

Ծննդոց գրքում Արարիչն առաջին մարդկանց ստեղծելիս չի մոռանում նրանց ուղղել իր օրհնանքը. «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց և ասաց. «Աճեցէք, բազմացէք, լցրէք երկիրը, տիրեցէք դրան, իշխեցէք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»¹¹:

Մարդու արարման հետ Աստված օրհնել է նրան՝ կյանքը վայելելու և ստեղծագործ աշխատանքի հաճույքը ստանալու համար: Մարդկային կյանքի համար սա է նաև աշխարհի բոլոր մեծ գրողների ցանկությունը, և նրանց հետ է նաև Հովհ. Թումանյանը, որը շարունակ օրհնում է մարդու բարի գործերն ու անիծում՝ չարիքը.

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անե՛ծք նրա չար գործքին,
Որդիդ լինի, թե հերն ու մեր,
Թե մուրազով սիրած կին¹²:

Քրիստոնեական վարդապետության պատգամներն առկա են Թումանյանի գրեթե բոլոր պոեմներում: 1887-ին գրված «Մարո» պոեմի հենց առաջին հատվածում հեղինակը հավաստիացնում է, թե լեռների մեջ ծվարած իրենց գյուղում բոլորը պահպանում են քրիստոնեական կրոնի պահանջները, սակայն նորանոր ցավեր են գալիս գյուղացու գլխին:

⁹ Նույն տեղում, էջ 289:

¹⁰ Նոր բառերիք հայկազեան լեզուի, հ. I, Ա–Կ, Երևան, 1979, էջ 146–147:

¹¹ Ծննդոց, 1, 27–28:

¹² Հովհ. Թումանյան. Ընտրանի, Հրանտ Մաթևոսյանի ընտրությունամբ, Երևան, 2001, էջ 224:

Թումանյանն ունի հոգևոր գործչի իր իդեալը. գյուղական քահանայից մինչև բարձրաստիճան հոգևորականը չպետք է ունենան խոսքի ու գործի հակասություն: «Անուշ» պոեմում գյուղական քահանան միակն է, որ փորձում է հասկանալ ու օգնել դժբախտ Անուշին.

Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր
Սիրու՞մ ես նըրան, քո կամքո՞վ փախար...
Եթե սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...¹³

Խորապես ընդունելով քրիստոնեական վարդապետություն խաղաղասիրությունը՝ Թումանյանը որդեգրվում է Հին Կտակարանի այն սկզբունքին, թե չարը պետք է պատժվի լիովին. դրան համաձայն են թե միջնադարի հայ մեծ մտածողները և թե բանաստեղծը:

Հայտնի է, որ Եզնիկ Կողբացին, որը Հագկերտ Երկրորդի դավանափոխություն պահանջող «Թղթի» պատասխանը գրող հեղինակներին էր, իր «Եղծ աղանդոցում» պատգամում է թշնամուն և երկրի վրա հարձակում գործողին պատասխան տալ նույն ձևով. «Եվ կամ երբ ավազակախումբը արշավում է երկիրը՝ մարդկանց կողոպտելու և կոտորելու համար, թող զորք չհավաքեն ու իրար ետևից գնդեր չկազմեն՝ երկրից ավազակներին դուրս քշելու համար, այլ թող պատճառաբանեն, թե՛ «երկրի ճակատագիրն է ավազակից կոտորվել, մենք ինչու՞ պիտի դեմ գնանք ճակատագրին»: Բայց զորքեր գումարելով և երկրից թշնամուն դուրս վռնդելով՝ ցույց են տալիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ՝ ավազակի բռնությունը, որը գալով անհագաբար կոտորում է ժողովրդին, զրկում ունեցվածքից»¹⁴:

Նույն կերպ թշնամուց արդար վրեժ է լուծում Թումանյանի Ալեքը՝ համանուն պոեմում: Թուրքերը շարունակ կողոպտում, ահաբեկում ու սպանում են հայ գյուղացուն. Ալին ծեծեց, Ալին տարավ, Ալին անմեղ հային սպանեց, կրակ տվեց դեզը, նորահարսին առևանգեց և նման գազանություններ: Ի պատասխան այդ բոլորին՝ քրիստոնյա ու արդար Ալեքը հարց է տալիս.

«Ո՞վ է Ալին, այդ լիրբ թուրքը,
Հարցրեց մի օր քաջ Ալեքը,
Ի՞նչ է շինում մեր սարում նա,
Որ սպանի կամ գողանա», –
Եվ սնարից կախ արած
Հրացանն առավ ու գնաց¹⁵:

¹³ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ե Լ Ժ, հ. III, Երևան, 1989, էջ 108:

¹⁴ Ե զ ն ի կ Կ ող բ ա գ ի. նշվ. աշխ., էջ 109:

¹⁵ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ե Լ Ժ, հ. III, էջ 28–29:

Ալեքը, արդար վրեժով լցված, սպանում է Ալիին ու ճանապարհին հանդիպում է փառահեղ տեսք ունեցող բարի հոգևոր հորը, որը շարական երգելով քշում էր իր ձին: Երբ վերջինս իմանում է, թե ինչ է արել Ալեքը, օրհնում է նրան ու որպես պարգև նրան է նվիրում ծոցի նշխարը:

Անիրավ մարդու դիմաց
 Վրեժխնդիր է և Աստված
 Վրեժխնդի՛ր է և Աստվա՛ծ,—
 Ծեր անտառը որոտաց¹⁶:

Պատահական չէ, որ Թումանյանը հատվածներ է թարգմանել սերբական էպոսից, որի գլխավոր հերոսը՝ Մարկոն, վրեժ է լուծում թուրքերից՝ իր հայրենակիցների դաժան հալածանքների դիմաց: Նա ծեր պատրիարքի խորհրդով Մոսկովի ցարին թուրքի սուլթանի նվերների փոխարեն ուղարկում է Սերբիայի հերոս Լազար արքայի ռազմի խաչանիշ դրոշը:

Կոստանդին կայսեր թագն եմ ուղարկել,
 Ոսկեբերանի շուրջառն եմ ղըրկել,
 Սերբիայի հերոս Լազար արքայի
 Ռազմի խաչանիշ դրոշն եմ ղըրկել¹⁷:

Սերբական էպոսում կա այն ճշմարտությունը, թե բյուզանդական կայսրությունից կործանումից հետո թուրքական բռնապետության տակ ընկած քրիստոնյա ժողովուրդները ոչ միայն ֆիզիկական կորուստներ կրեցին, այլ քաղաքացիական իրավունքներից հետընթաց ապրեցին:

Թումանյանի «Մերժված օրենք» պոեմը կրում է Յու. Լերմոնտովի «Մծիրի» պոեմի ազդեցությունը: Այդ հեշտ դիտարկելի աղերսը նկատել է Լեոն և ապա իր ծանոթագրություններում հիմնավորել է էդ. Ջրբաշյանը: Եթե համեմատում ենք «Մծիրի» թումանյանական թարգմանությունը և «Մերժված օրենքը», տեսնում ենք լեզվամտածողական խոր ընդհանրություններ: Երկու պոեմներում էլ կա այն միտքը, թե հոգևորականը կոչում է, և ամեն մարդ չի կարող հոգևորական դառնալ: Դրա մասին իր դիպուկ նկատումն ունի Գրիգոր Նարեկացին «Մատեան ողբերգութեան» երկում, որում արդարացիորեն բողոքում է.

Բեմական ստորնքարչ, քահանա անկնդրուկ,
 Աւրինական աննուէր, դպիր կշտամբեալ...¹⁸

¹⁶ Նույն տեղում, էջ 34:

¹⁷ Հո վ հ. Թումանյան. Երկեր, հ. II, Երևան, 1958, էջ 301:

¹⁸ Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան, Աշխատասիրությունամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 468:

Ավետարանի վարդապետության օրինակով Հայ միջնադարի մատենագիրները շարունակ զգուշացնում են, թե չի կարելի դրամն ավելի սիրել, քան Աստծուն: XI դ. պատմիչ Արիստակես Լաստիվերցին այս պատգամի մեջ թերանալու պատճառով է բացատրում Բագրատունիների թագավորության անկումն ու Անիի կործանումը. «... արդարության օրենքը փոխվեց անիրավության, արծաթախրությունը ավելի հարգի դարձավ, քան աստվածասիրությունը, և մամոնան ավելի՛ քան Քրիստոսը»¹⁹:

Այս նույն իրողության քննադատությունն ենք տեսնում Թումանյանի 1900–1901 թթ. գրված «Պոետն ու մուսան» պոեմում: Մուսան բանաստեղծին ներշնչում է, որ նա գրի իր թշվառ եղբայրների, վհատված մարդկանց, որբերի, պանդուխտների և նման կարոտյալների ցավերի ու հոգսերի մասին: Սակայն բանաստեղծը սթափեցման խոսք է ուղղում մուսային, որը թվում է, թե չի ճանաչում կյանքի դաժան օրենքները, որոնցում հետ են մղված աստվածային պատվիրանները, և իշխում է փողի քսակը.

Փողի քրսակը, Փողի քրսակը,
Բարձրացրնում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հրեշ տրգեղին,
Սրբագործում է գարշն ու աղտեղին:
...Պրճնում ճակատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքի:
Նա է միշտ շարժում դատողի լեզուն,
Նա է հասցրնում աղոթքն Աստծուն,
Նրա վրրա է աշխարհքը կանգնած²⁰....:

«Գրականության ազգային պաշտպանություն պետք է լինի» իմաստուն հոգվածում Թումանյանը, ելնելով Ավետարանից, հիշեցնում է, թե ազգը կարող է ապրել առանց գրքի և գիտության, սակայն գիտնականն ու գրողն այդ հասարակության մեջ չեն կարող ապրել: Նա հիշեցնում է ավետարանական պատվիրանը. «Բայց մենք արդեն լավ գիտենք, որ չի կարելի միաժամանակ և՛ Աստծուն ծառայել, և՛ մամոնային: Դրանից լավ բան չի դուրս գալ»²¹:

Կյանքի ու մահվան փոխհարաբերությունն է քննում բանաստեղծի «Դեպի անհունը» պոեմը, որի վրա հեղինակն աշխատել է երկար՝ 1894–1903 թթ.: Երիտասարդ աղջկա մահը ցնցում է բանաստեղծին և նրան սփոփող ծերունին բացատրում է, թե «անցավոր» աշխարհում բոլորը մահվան գերին են: Մահվան հետ հաշտեցնում է քրիստոնեական կրոնի վարդապետությունը՝ հավատացնելով, թե անմեղ մարդկանց հոգիները հայտնվում են դրախտում և արժանանում հա-

¹⁹ Արիստակես Լաստիվերցի. Պատմություն, Թարգմանությունը վ. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 47: Տե՛ս նաև Մատթեոս, 9, 24:

²⁰ Հոգվ. Թումանյան. ԵԼԺ, հ. III, էջ 235:

²¹ Հոգվ. Թումանյան. ԵԼԺ, հ. VII, Երևան, 1995, էջ 235:

վերժական կյանքի: Հայ միջնադարյան գրքերում հատկապես ձեռագիր մատյաններում, բազմաթիվ անհայտ հեղինակներ փորձում են մարդկանց նկարագրել, թե ինչպիսին է դժոխքը և ինչպիսին՝ դրախտը: Իհարկե, այդ բոլոր պատկերները գալիս են Աստվածաշնչից: Վերջինիս խոստացած դրախտն է նկարագրում նաև Թումանյանը «Դեպի անհունը» պոեմում: Սիրելի էակի ձայնը նրան կանչում է մի ուրիշ աշխարհ.

«Արի՛ ինձ հետ, իմ թըշվա՛ռ,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,
Ուր չըկա մահ, անջատում,
Ու սերն անվե՛րջ, անհատնո՛ւմ...»²²:

Դերենիկ Դեմիրճյանը Թումանյանի մասին հուշերում գրում է. «...Ինձ մի օր էլ հասկացրեց, որ «Դեպի անհունը» պոեմի մեռած կինը նրա համար արտաքին, հնարովի պատկեր է միայն, որ նա այդ կնոջ մեջ դրել է իր որդիական սերը դեպի հայրը»²³: Ինչպես բոլոր զգայուն ու հարազատասեր մարդիկ՝ Թումանյանն էլ չի հաշտվել հոր մահվան մտքի հետ և համոզված է, թե իր առաքինի հայրը հաստատ լինելու է դրախտում, և իրենք այնտեղ կհանդիպեն ու հավերժորեն միասին կլինեն:

«Սասունցի Դավիթ» էպոսի մշակման մեջ Թումանյանը խիստ հարազատ է մնացել հայ ժողովրդի քրիստոնեական հոգեբանությանը: Ըստ քրիստոնեական վարդապետության՝ Աստված լույս է. այս հասկացությունն առկա է նաև էպոսում: Երբ Դավիթը հորեղբայր Օհանի հետ գնում է որսասար, այնտեղ տեսնում է մարմար քարից բխող պարզ լույսը և ուզում է իմանալ, թե ինչ է այդ, հորեղբայրը բացատրում է, թե այդ տեղում եղել է Մարութա վանքը՝ նվիրված Տիրամորը: Վանքը «Չարխափան» էր, և Մեծ Մհերը կոբիվ գնալիս այնտեղ էր աղոթում, վանքը հայ ժողովրդի պահպանն էր: Դավիթի հոր մահից հետո Մսրա Մելիքը քանդում է վանքը, սակայն դեռ վանքի սեղանից լույս է բարձրանում: Էպոսում կա այն ճշմարիտ միտքը, թե որևէ ժողովուրդ առաջընթաց ունենալու համար պետք է ունենա հավատ և համախմբվի դրա շուրջը: Ու երբ Մսրա Մելիքն իմանում է, թե Դավիթը վերաշինել է հոր վանքը, խիստ զայրանում է.

– Հապա՛ չես ասիլ՝ Դավիթը կըրկին
Հոր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարվան խարջը չես առել:
Մելիք գայրացավ...²⁴

²² Հո վ հ. Թումանյան. ԵԼԺ, հ. III, էջ 125:

²³ Հո վ հ. Թումանյան. Ընտրանի, էջ 892:

²⁴ Հո վ հ. Թումանյան. ԵԼԺ, հ. IV, Երևան, 1991, էջ 19:

Սասնա բոլոր դյուցազուններն իրենց աջ թևին ունեն քրիստոնեական խաչը: Նույնն առկա է նաև Թումանյանի մշակման մեջ: Արտատեր պառավը Դավթին բացատրում է, թե ինչ զրահավորմամբ է նրա հայրը գնում կռվի.

Քուհերն ուներ կռուվի համար
 Հըրեղեն ձի, ոսկի քամար,
 Ծալ-ծալ կապեն, գուռզը պողպատ,
 Թամբ սաղափեն, կուռ սաղավարտ,
 Խաչ պատրաստին իր աջ բազկին,
 Զըրահ շապիկ, Թուր-Կեծակին²⁵:

Քրիստոնեական մեծահոգությունը երևում է «Սասունցի Դավիթ» պոեմի այն դրվագում, որում Դավիթն արթնացնում է Մսրա զորքին և հորդորում պատրաստ լինել կռվի:

«Սասունցի Դավիթ» էպոսի Փրանսերեն թարգմանության հարուստ ծանոթագրություններում Ֆրեդերիկ Ֆեյդին ունի հետևյալ ուղադրավ բացատրությունը.

Էդտեղ Աստծու հրամանով
 Խաչ պատերազմին իջավ վեր աջ թևին:

Որպես ծանոթագրություն Ֆեյդին մեջբերում է. «Սասնա ծուր» ժողովածուից մի հետաքրքիր հատված, որում Դավիթը գնում է Սուրբ Նշան եկեղեցին, ներս է մտնում, լաց լինելով և յոթ անգամ աղոթելով, ասում է իր խնդրանքը:

Աստծու հրամանով մսե խաչ է առաջանում Դավթի աջ թևին: Նա դուրս է գալիս և հայտնում հորեղբորը, թե իր աջ թևին մսե խաչ է առաջացել: Ձենով Հովհանն նրան ասում է, թե Մարութա Բարձր Աստվածածինն է, որ նրա թևի վրա է, և այսուհետև նա ոչնչից չպետք է վախենա»²⁶:

Քրիստոնեական վարդապետությունը տեսնում ենք Թումանյանի հանճարեղ քառյակներում, որոնք իրավամբ կարող են դասվել համաշխարհային գրականության գլուխգործոցների շարքում: Քառյակներում երևում են մտքեր, որոնք կան Հին կտակարանի «ժողովողում», «Սիրաքի իմաստություն» մեջ, Դավթի սաղմոսներում և այլուր: Թումանյանի քառյակները ներբող են առաքինի մարդու հոգեկան նուրբ ապրումները պատկերող:

«Խորհրդանիշների բառարանում» առաքինի մարդը բնութագրվում է հետևյալ ձևով. «Առաքինի մարդն իրեն պաշտպանում է երեք բաներից: Պատանեկական տարիներին, երբ կենսական ուժերը դեռ չեն հանդարտվել, նա իրեն հեռու է պահում սեռական ավելորդ

²⁵ Նույն տեղում, էջ 27 (ընդգծումը մերն է.— Ա. Դ.):

²⁶ Ա. Դուլիսանյան. Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 48:

դուլթյուններից, հասուն տարիքում, երբ նրա անհատականութունը նոր է ձևավորվել, նա իրեն հեռու է պահում ավելորդ վեճերից, ծեղրության ժամանակ, երբ կենսական ուժերը սկսում են մարել, նա իրեն հեռու է պահում կուտակելու մղումներից»²⁷:

Թումանյանի քառյակներն ուշագրավ ձևով պատկերում են մարդ և Աստված փոխհարաբերությունը: Սա մի թեմա է, որ գալիս է խոր անցյալից և դեռ երկար շարունակվելու է քանի երկիր մոլորակի վրա մարդն ապրելու է իր երկրային կյանքով:

Տիեզերքի և մարդու կապն ամենից շատ քննվում է հենց քառյակների մեծ մասում: Բանաստեղծը կարծես թե չի ընդունում «Ժողովողի» ունայնության հոռատեսությունը, նա հավատում է ավետարանական այն խոստմանը, թե ազնիվ հոգիները կլինեն Աստծու մոտ ու կապրեն հավերժական կյանքով: Հատկապես 1921 թ. գրված քառյակներում, կարծես զգալով իր երկրային կյանքի մոտալուտ ավարտը, բանաստեղծն իրեն տեսնում է Աստծու կողքին: Թվում է, թե Գրիգոր Նարեկացու նման նա էլ անհատականը միացնում է ընդհանուրին, եսականը մարդու համընդհանուր ճակատագրին և համոզվում, թե բանական կյանքը շարունակ մեռնող ու վերածնվող երևույթի հերթականությունն է:

*Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ.
Ես եղել եմ, կա՛մ, կըլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ*²⁸:

Մարդու համար մեծագույն ողբերգությունն է, որ իրական կյանքում չի հասցնում իրագործել իր ծրագրերն ու երազանքները, որովհետև մարդու «միտքը երկար է, կյանքը՝ կարճ»: Այս իրողությունը բանաստեղծը կրկնում է մի շարք քառյակներում: Քրիստոնյա բոլոր առաջադեմ մտածողների նման Թումանյանը հիշեցնում է աստվածային պատվիրանը՝ չլինել ազահ:

Ավետարանում Հիսուսը բազմիցս զգուշացնում է ազահ չլինելու պատվիրանը և դրան ձայնակցում են հայ միջնադարի մատենագիրներն ու բանաստեղծները: Դրանց թվում է նաև XV դ. հայ հոգևոր առաջնորդներից մեկը՝ Մկրտիչ Նաղաշը, որ պատվիրում է ապրել խիստ չափավոր կյանքով:

*Մալի հասրաթ մի լինիր, մեծութիւն քեզ չի պիտի,
Ունիս կերակուր, հանդերձ, աւելին քեզ ցաւ կու լինի*²⁹:

²⁷ Энциклопедия символов. М. – СПб., 2005, с. 583 – 584.

²⁸ Հ ո վ ճ . Թ ու մ ա ն յ ա ն . Ե Լ ժ , հ . II , Երևան , 1990 , էջ 51 :

²⁹ Մկրտիչ Նաղաշ, Աշխատասիրությունս էդ. Խոնդկարյանի, Երևան, 1965, էջ 126:

Մկրտիչ Նաղաշը հիշեցնում է, որ հզոր թագավորները, իշխանները, պարոնները, սուլթաններն ու խաներն իրենց հետ ոչինչ չեն տարել հանդերձյալ աշխարհ: Նույնը կրկնում է Թումանյանը.

Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ
կարճ,

Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ի՛նչ են տարել նըրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ³⁰:

Քառյակներից մեկում Թումանյանն իրեն՝ այսինքն բանաստեղծին, համեմատում է Աստծու հետ. Աստված մենակ է, մենակ է նաև բանաստեղծը, և նրանք երկուսով նայում են «ամեն մեկին և կյանքին»³¹:

Հովհ. Թումանյանի մարդկային կատարելատիպն իր հայրն էր, որը գյուղի քահանան էր: Ինքնակենսագրականում Թումանյանը հոր մասին խոսում է անսահման հիացմունքով. «Չափազանց մարդասեր ու առատաձեռն, առակախոս ու զվարճաբան, սակայն ունեւր մի խոր լըջություն»³²:

Թումանյանի բոլոր սիրելի հերոսներն ու հենց ինքը՝ գրողը, կյանքում քրիստոնեական մարդասիրության կրողներն են: Եվ պատահական չէ, որ հայ գրողների ընկերության առաջին երեկուլթի եզրափակման խոսքում նա ասում է. «Եվ էս տեսակի հասարակության մեջ գլխավորը բարոյական մեծությունն ու հարստությունն է լինելու, մյուսը՝ նյութականը, նրանից հետո»³³:

Նման մոտեցումը կյանքի առաջնահերթություն է ոչ միայն հայ գրողների, այլև համայն մարդկության համար:

ХРИСТИАНСКОЕ УЧЕНИЕ В ТВОРЧЕСТВЕ ОВАНЕСА ТУМАНЯНА

АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Резюме

Ованес Туманян является гениальным художественным создателем вековой армянской христианской литературы и вопросов, тесно связанных с жизнью его народа в конце XIX и в первой черверти XX веков.

³⁰ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ե Լ Ժ, հ. II, էջ 38:

³¹ Ն ու յ ն տ ե դ ու մ, էջ 43:

³² Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տր ա ն ի, էջ 429:

³³ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ե Լ Ժ, հ. VI, Երևան, 1994, էջ 391:

Уже в первых его стихотворениях мы видим, что поэт знаком со священными книгами христианства — с Ветхим и Новым Заветами. Взаимоотношения между человеком и Богом становятся основными почти во всех многожанровых проявлениях творчества Туманяна — писателя и публициста. Если микрокосм и макрокосм являются основным стержнем творчества Туманяна, то в его стихотворениях и четверостишиях часто анализируется вопрос взаимоотношения поэта и Творца.

Глубоко воспринимая миролюбие христианского учения, Туманян предан тому принципу Ветхого Завета, что зло должно быть полностью наказано, с чем согласны и великие армянские средневековые мыслители. Все любимые герои Туманяна, как и сам писатель в жизни, являются носителями христианского гуманизма.

THE CHRISTIAN DOCTRINE IN THE WORKS OF HOVNANNES TUMANYAN

AELITA DOLUKHANYAN

Summary

At the end of the 19th and in the first quarter of the 20th centuries Hovhannes Tumanyan was the genial artistic re-creator of the Armenian century-old Christian literature and the issues tightly related with the life of his people. Already in his first compositions we can see that he is well acquainted with the Holy Scriptures of Christianity – the Old and the New Testaments. Interrelations between human being and God became the most important in almost all of multi-genre manifestations of the work of writer and publicist Tumanyan. If the microcosm and the macrocosm are the principal axe of Tumanyan's works, then in his compositions and quatrains the issue of the interrelation between the Creator and the poet is often analyzed.

Profoundly sensing the pacifism of the Christian doctrine, Tumanyan is devoted to the principle of the Old Testament according to which the evil must be totally punished, with which Armenian medieval great thinkers also agree. All beloved heroes of Tumanyan and the writer himself in life are the bearers of Christian humanism.

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ
ՀԱՐԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԳՈՒՄԱՆԱԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ

Հայ մոնոդիկ երաժշտության երկու գլխավոր՝ եկեղեցական և ժողովրդական ճյուղերի ուսումնասիրությանը Կոմիտասը, ըստ էության, լուծում էր հայ երաժշտության ինքնատիպ նկարագիրը հիմնավորելու և ինքնուրույնությունն ապացուցելու սկզբունքային խնդիրը: Առաջնային հարցերից էր եկեղեցական երգարվեստի կատարողական ոճի անաղարտ պահպանումն ու հետագա զարգացումն ազգային գեղագիտական ընկալումներին հարազատ հունով: Պատահական չէ, որ նրա տեսադաշտից դուրս էր հայ քաղաքային, գուսանաաշուղական երաժշտությունը՝ իբրև գեղագիտական արժեքների այլ համակարգով բնութագրվող և մերձավորաբնույթի ավանդույթին հարող երևույթ: Հատկապես աշուղական երաժշտարվեստի նկատմամբ Կոմիտասի ունեցած հակասական վերաբերմունքն առիթ է տվել տարածայնությունների, մերժողական գնահատականներին սկզբնավորելով «հայկական» և «արևելյան» ըմբռնումների խնդրահարույց քննարկումները: Հարցի սոցիոլոգիական ասպեկտն առնչվում է հայ ժողովրդի տարբեր հատվածների, տարբեր խավերի գեղագիտական պատկերացումների տարբերություններին՝ «հայկական» և «արևելյան» հակադրությանը հավելելով «բարձր» և «ցածր» գեղարվեստական ճաշակի երանգներ¹:

¹ Հայ իրականության մեջ խորհրդային անցյալում ձևավորվել էր հասարակական մի պատկերացում, համաձայն որի ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության բարձրարժեք գրսևորումները՝ աշուղական երգը, արևելյան երաժշտաբանաստեղծական սիրավեպը և, հատկապես, մուղամաթի արվեստն առավելապես մահմեդական՝ պարսկաթուրքական նկարագիր ունեն, անհարիր են ազգային մշակույթին, ազգի ինքնությունը հավաստող գեղագիտական ու կրոնամշակութային խորհրդանիշներին: Նման պատկերացումներն ու թերագնահատումն իրենց արմատներն ունեին նաև այն տեսություններում, որոնք այդ ժանրերը որակավորել են իբրև ցածրարժեք և անճաշակ, թեև ժողովրդական լայն զանգվածները իրենց գեղագիտական հաճույքը ստացել են այդ արվեստի միջոցով (տե՛ս Լ. Երնջակյան. Աշուղական արվեստը և մշակութային ժառանգության պահպանման խնդիրները. — Հայ աշուղագիտությունը և արդի հիմնախնդիրները, Գիտական գեղուցումների ժողովածու, Երևան, 2005, էջ 3–13:

Վերջին տարիներին որոշ ամերիկահայ հեղինակների աշխատանքներում տեղ են գտել այս մշակութաբանական դիսկուրսին արձագանքող դրույթներ: Դրանց առնչումը հայկական սփյուռքում ձևավորված երաժշտական իրողություններին ընդլայնում է ազգային երաժշտական ինքնութայն սահմանների պատկերացումները և նպաստավոր դիտակետ տրամադրում մասնավորապես արևմտահայտության մշակութային կենտրոնի՝ «Հայկական Պոլիսի» երաժշտական արվեստի ու կենցաղի առանձնահատկությունները լուսաբանելու համար²: Սփյուռքահայ էթնոերաժշտագետներին հայ երաժշտական մշակույթի կոմիտասյան «նարրատիվը» թույլ է տվել այն հարաբերել XIX դարավերջին ու XX դարասկզբին տարածված ազգայնական տեսությունների հետ, անդրադառնալ ֆոլկլորին տրված առանձնահատուկ կարգավիճակին՝ որպես կուլեկտիվ ինքնութայն և ազգային ոգու դրսևորման պատճառներին, որոնց արդյունքում հատկապես Եղեռնին հաջորդող տարիներին խորացել է հայկական ինքնութայն տարանջատումն ու օտարումը Օսմանյան կայսրության մշակութային ավանդույթներից³:

Ազգային երաժշտական ինքնութայն խնդիրների քննությունը Եղեռնին նախորդող ու հաջորդող սոցիալ-քաղաքական և մշակութային համատեքստերում լույս է սփռում նաև Կոմիտասի երաժշտական դատողություններում տեղ գտած իրարամերժ մտքերի և գեղջկական երգի նկատմամբ ունեցած անվերապահ, գրեթե սրբազան վերաբերմունքի վրա: Գիտակցելով և կարևորելով Կոմիտասի լուսավոր գործունեությունը, որ նրան մշակութային հերոս է դարձրել համայն հայտության գեղագիտական ու հայրենասիրական ընկալումներում՝ հարկ է ըմբռնել նաև արևմտահայերի «հայկականություն» չափանիշները՝ իբրև Անատոլիայի բազմազգ երաժշտական մշակույթի հավասարազոր անդամի և կրողի: Սփյուռքի ամենատարբեր խավերի ներկայացուցիչները նոստալգիկ զգացումներով են հիշում արևելյան գործիքային նվագներն ու ավանդական մեղեդիները՝ մականները, սեմայիները, թյուրքի և շարքի կոչվող քաղաքային ժանրերը, որոնցից շատերի հեղինակները հայերն են եղել: Նրանք ամի-

² Տե՛ս Armenian Constantinople, edited by Richard G. Hovhannisian and Simon Payaslian, Costa Mesa, California, 2010, pp. 1–19.

³ Տե՛ս S. A. Alajaji. Music and the Armenian Diaspora: searching for home in exile, 2015, Indiana University Press, Bloomington and Indianapolis, pp. 25–56, M. Bilal. The Oud: Armenian Music as a Means of Identity Preservation Construction and Formation in Armenian American Diaspora Communities of the Eastern United States, 2010, Columbia University. Ազգայնական տեսությունները մշակութային-քաղաքական լայն ենթախորքի վրա մեկնաբանված են նաև Հունգարացի կոմպոզիտոր, էթնոերաժշտագետ Բելա Բարտոկի պատկերացրած «Հունգարականությունը», էթնիկ ինքնութայնն ու գեղջկական երաժշտությանն առնչվող հարցերի և իր ստեղծագործական սկզբունքների կապակցությամբ (տե՛ս J. Frigyesi. Béla Bartók and Turn-of-the-Century Budapest, Berkeley, 1998):

սոսանք են հայտնում հարյուրավոր թուրքալեզու աշուղների ու գործիքահարների չթարգմանված և չուսումնասիրված ժառանգութ-
յան համար⁴:

Ինքնության խնդրի դիտարկումը Կոմիտասի սկզբունքային դա-
տողությունների լույսի ներքո ինքնանպատակ չէ և բնավ չի են-
թադրում նրա ասույթներում տեղ գտած որոշ հակասական մտքերի
քննադատությունը: Մտահոգող են այդ մտքերի միակողմանի և
մակերեսային մեկնաբանությունները, որոնք մեջ են բերվում
Արևմուտքի երաժշտագիտական հետազոտություններում խեղաթ-
յուրելով հայ երաժշտության էթնոմշակութային ինքնությունը:

Կոմիտասի իրավացի հարցադրումները մշակութային փոխազդե-
ցությունների և ընդհանուր հատկանիշների, հայ ու արևելյան ե-
րաժշտական հնչյունակարգերի հարաբերության համեմատական
տախտակների վերաբերյալ նշվում են որպես թուրքական ազդե-
ցությունը լուսաբանող փաստարկներ: Խնդիրն ավելի է սրվում ա-
շուղական արվեստի պարագայում՝ հայ աշուղների բազմալեզու,
հատկապես, թուրքալեզու ստեղծագործության կապակցությամբ:

Տարբեր լեզուներով երգելու և ստեղծագործելու երևույթը պայ-
մանավորված էր պատմաքաղաքական հանգամանքների բերումով
Մերձավոր Արևելքի բազմազգ մշակութային կենտրոններում ապ-
րող հայ երաժիշտների լեզվական կողմնորոշումներով, տվյալ ա-
վանդական միջավայրում տարածված և, առանձնապես իշխող լեզվի
տիրապետումով, ստիպողաբար այլախոս ու այլադավան դառնալու
ցավալի իրողությունը: Սակայն նշված գործոնները հիմնականում
ազդել են այլախոս հայ աշուղների ստեղծագործության արտաքին
չերտի վրա՝ որպես տուրք համընդհանուր կողմից ընդունված լեզ-
վին և քաղաքական-հասարակական միջավայրին⁵: Հայ աշուղները
քաջատեղյակ են եղել ազգային երաժշտարվեստին, թեպետ օգտա-
գործել են տաղաչափական ընդհանուր օրենքներ, գրել պարսկերեն,
վրացերեն, թուրքերեն, «մկրտավել» օտար կեղծանուններով:

Որ ոլորտում էլ փնտրենք հայ գուսանաշուղական երաժշտութ-
յան բարձրագույն փուլը նշանավորող Սայաթ-Նովայի գիտելիքի և
իմաստության աղբյուրը, որ քնարերգությանն էլ առնչենք նրա
պատկերավոր խոսքը, աստվածաշնչյան գրությունների, քրիստո-
նեական աշխարհընկալման կամ թե սուֆիական միստիցիզմի կրո-

⁴ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Լ. Երնջակյան. Կոմիտասը և
ազգային երաժշտական ինքնության խնդիրները. – Կոմիտասը և միջնա-
դարյան երաժշտական մշակույթը, Երևան, 2016, էջ 141–152:

⁵ Լեզվափոխության և կրոնափոխության քաղաքականության պայ-
մաններում զարգացել է նաև թուրքալեզու հայ բանահյուսական ավան-
դույթն Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում՝ ներառելով բազ-
մաթիվ թուրքալեզու օրորոցայիններ, սիրային, ծիսական, հարսանեկան և
այլ հայկական երաժշտաբանահյուսական ժանրեր (տե՛ս Վ. Սվազլյան.
Հայ-թուրքական էթնոմշակութային և լեզվական առնչություններն ըստ
ժողովրդական վկայությունների. – Հայագիտական միջազգային հանդես,
Երևան, 2018, № 1, էջ 15–34:

նագեղագիտական դիրքերից մեկնենք «վա՛նք սիրե, անապա՛տ սիրե, քա՛ր սիրե» խորհրդանշական խրատը, Սայաթ-Նովան անկրկնելի է իր մեղեդիներով և աշուղական ինքնությամբ⁶: Որքան էլ նրա մեղեդիները հարստացած և համեմված լինեն օտար արևելյան մշակույթներից սերող տարրերով՝ իրենց ամբողջական հանդերձանքով ազգային աշուղական են⁷: Ինչպես հարյուրավոր բազմալեզու հայ աշուղները, Սայաթ-Նովան նույնպես իր հովանավոր և երաժշտաբանաստեղծական ձիրքով օժտող սրբություն է ճանաչել Մշո Սուլթան Սուրբ Կարապետին, ով ազգային կրոնամշակութային պատկերացումների վերաիմաստավորման և գուսանաաշուղական ավանդույթի շարունակական գոյության վկայողներից է⁸:

Կոմիտասի գիտաստեղծագործական գործունեության տարիներին ազգային աշուղական դպրոցը զարթոնք էր ապրում և մեծ ժողովրդականություն վայելում: Սակայն նա նպատակ չի ունեցել զբաղվելու տվյալ ճյուղի ուսումնասիրությամբ⁹: «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» հոգվածում Կոմիտասը վրդովված գրում է՝ ոչ ոք իրավունք չունի իրենից ակնկալել հայ երաժշտության բոլոր ճյուղերի հավասար իմացությունը, որ նրա գիտական խստապահանջության բարձր վկայությունն է¹⁰:

Ցավոք, քաղաքական հանգամանքներով և ազգի ինքնաճանաչման հրատապ խնդիրներով պայմանավորված Կոմիտասի գիտահետազոտական կողմնորոշումները, որոնք չեն տարածվել աշուղական արվեստի վրա, նպաստել են դրա անտեսմանը հայ երաժշտագիտության որոշակի փուլում: Այս հարցում իր դերն է կատարել նաև երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը, որի իրարամերժ մտքերն ու

⁶ Լ. Երնջահյան. Սայաթ-Նովայի խաղերի երաժշտագեղագիտական հիմքերը. – Սայաթ-Նովա–300, Երևան, 2012, էջ 7–22:

⁷ Տե՛ս Ն. Թահմիզյան. Սայաթ-Նովան և հայ գուսանա-աշուղական երգ-երաժշտությունը, 1995, Փասադենա, Կալիֆոռնիա, էջ 178:

⁸ Գիտնական, բանասեր, հայ աշուղագիտության հիմնադիր Գ. Ախվերդյանը Թիֆլիսի համալսարանների և դրանցում ընդունված տերմինաբանության ձևավորումը վերագրում է քաղաքի հայ արհեստավորական շրջաններին: Ուշագրավ է նաև, որ աշուղ-վարպետի օժման արարողությունը, անկախ դավանական պատկանելությունից, իրագործվել է հայ քահանայի կողմից (տե՛ս Н. Геворков. Истоки армянской ашугской поэзии и ее социальная среда. – Автореферат дисс. на соискание уч. ст. канд. филол. н. Ереван, 1985, с. 10.

⁹ Սակայն հայտնի է, որ Կոմիտասը ոչ միայն սիրելի, գնահատել ու մշակել է իր ժամանակակից հայ աշուղների՝ Շիրինի, Ջիվանու, Շերամի արվեստը, այլև ինքն է վարպետորեն կատարել աշուղական երգեր: Նման հակասություն կա նաև քաղաքային երգարվեստի լեզվաոճական ու մեղեդային ակունքների բազմազանությամբ բնութագրվող ստեղծագործության վերաբերյալ Կոմիտասի արտահայտած մտքերի և նրա գիտահավաքչական ու կատարողական գործունեության միջև:

¹⁰ Կոմիտաս. Հոգվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 49:

վիճելի հետևություններն էլ ավելի են խորացրել աշուղական երաժշտությունը հայ մշակույթից օտարելու միտումները¹¹:

Աշուղական արվեստին առնչվող Կոմիտասի դիտարկումները հիմնականում շարադրված են 1907 թ. հրատարակված «Հայ գեղջուկ երաժշտություն»¹² հոդվածում և «Մի թռուցիկ ակնարկ հայ ժողովրդական երաժշտության վերա»¹³ անավարտ, սակայն նշանակալից աշխատության մեջ: Դրանք առավելապես նրա գիտահավաքչական աշխատանքի ընթացքում կուտակված տպավորություններն են աշուղական երգերի բովանդակության, կատարողական ոճի, արտասանության ու ինտոնացիայի, պատրաստի՝ ավանդական կամ այլ հեղինակի ստեղծած եղանակներից օգտվելու սովորության, կիրառած երաժշտական գործիքների և մի շարք այլ հարցերի մասին: Տարբեր մեկնաբանություն կարելի է տալ, օրինակ, նրա նշած «արաբ և պարսիկ ծանր եղանակներին», որոնցից խուսափում էին հայ աշուղները համարելով անհարմար վիպական ոճին: Հստակ է, դասական մուղամների, հանկարծաբանական թաքսիմների, թե ժողովրդաքաղաքային այլևայլ ժանրերի՝ թուրքիների և շարքիների երաժշտաճական առանձնահատկությունները նկատի ունի Կոմիտասը: Մեկ այլ դեպքում նա նշում է արաբ-պարսիկ-թուրքական ոճով կատարվող և երգվող եղանակների փաստը հայ աշուղների պրակտիկայում¹⁴: Երբեմն Կոմիտասը չափազանցնում է պարսկաթուրքական ազդեցություններն աշուղական երգերի օրինակները վերլուծելիս: 1914 թ. Փարիզում Միջազգային երաժշտական ընկերության համագումարին ներկայացրած իր զեկուցման վերջում գուսան Շերամի՝ աշուղ Գոգորի «Ալ ու ալվան» երգը կատարելով և՛ հայկական, և՛ արևելյան երանգներով՝ հիմնավորել է կատարողական ոճի առաջնային նշանակությունն ազգային մտածողության դիրքերից, սակայն, ի վերջո, այն բնութագրել է որպես թուրքական ոճի մեղեդի՝ ստեղծված արաբան կամ քարջիհար ձայնակարգում: «Ալ ու ալվանը» ազգային ժողովրդական գծերով վառ արտահայտված մեղեդի է,

¹¹ Տե՛ս Ս. Մելիքյան. Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Երևան, 1935, էջ 17–21:

¹² Տե՛ս Կոմիտաս. Հայ գեղջուկ երաժշտություն.– «Անահիտ» (Փարիզ), 1907, էջ 70–73 և 127–130, նույնի. Հոդվածներ և ուսումնասիրություններ, էջ 15–44:

¹³ Տե՛ս Կոմիտաս. Մի թռուցիկ ակնարկ հայ ժողովրդական երաժշտության վերա.– «Սովետական արվեստ» (Երևան), 1955, № 5, էջ 44–50:

¹⁴ Հետաքրքիր է նշել, որ Կոմիտասը տարբեր առիթներով հիացմունքով է խոսել «պոլսական շարքիների»՝ ժողովրդական-քաղաքային եղանակների մասին գտնելով, որ դրանց ստեղծողները հանճարներ են (տե՛ս Հր. Աճառյան. Հուշեր Կոմիտասի մասին.– Ժամանակակիցները Կոմիտասի մասին, կազմող՝ Գ. Գասպարյան, Երևան, 1960, էջ 78): Կոմիտասի և աշուղական երաժշտության հարաբերության խնդիրներն այլ դիտարկետից են մեկնաբանված Մ. Մանուկյանի «Կոմիտասը և հայ աշուղական-գուսանական երգարվեստի հարազատության հարցը» հոդվածում (տե՛ս Կոմիտասական, հ. 2, Երևան, 1981, էջ 227–241):

Ք. Քուչնարյանի տերմինաբանությունում՝ գրված կվարտային հիմքով էոլական մինորում, լայնորեն կիրառվող հայկական մոնոդիայի տարբեր ժանրերում¹⁵: Կոմիտասն ազգային կատարողական ոճը դիտարկում է նաև գենդերային տարբերությունների դիրքերից՝ տգեղ արտասանությունը բնորոշ է գյուղական արական սեռին, իսկ իգականը՝ պահպանել է զուտ ազգային հնչերանգը¹⁶:

Ըստ ամենայնի, Կոմիտասի քննադատական խոսքն ուղղված է եղել ոչ թե ավանդական ժողովրդապարոֆեսիոնալ երաժշտությունը, այլ դրանում տեղ գտած կատարողական արատավոր ոճին, ազգային պատկերացումներին ու երաժշտամտածողությունը օտար երևույթներին՝ ավելորդ գեղգեղանքներին, քիմքային կամ ռնգային անճաշակ ձայնարտաբերումներին ու անհարկի ձգձգված վանկարկումներին:

Ձխորանալով «օտար ոճերում խճողված» հայ աշուղներին առնչվող կոմիտասյան մտքերի մեջ՝ անհրաժեշտ է երևույթը մեկնաբանել նաև հակառակ կողմից: Այդ բազմաոճ և բազմալեզու աշուղների ստեղծագործությունում է մերձավորարևելյան մշակույթը հարստացել հայ երաժշտության մեղեդային հարստություններով: Հատկապես Կ. Պոլսում, Փոքր Ասիայի և Իրանի տարբեր քաղաքներում ապրած շուրջ 600 հայ աշուղներ, հաճախ թաքցնելով իրենց ազգությունը, առավելագույնս նպաստել են Արևելքի ավանդական երաժշտության կատարողական երկացանկի ձևավորմանը¹⁷: XVIII–XIX դդ. գրի առնված բազմաթիվ թուրքական երգերի, այսպես կոչված, շարքինների հեղինակները հայեր են եղել¹⁸: Այս բնագավառում իրենց ներդրումն ունեն նշանավոր երաժիշտներ Համբարձում Լիմոնջյանը, Համբարձում Չերչյանը, Հակոբոս Այվազյանը և այլք, որոնք, հեղինակելով, նոտագրելով ու հրատարակելով Արևելքի մոնոդիկ երաժշտության նմուշները, գործնականում լուծել են ավանդական երկացանկի հաստատագրման և պահպանման խնդիրը: Այսօր թուրքական երաժշտության հետազոտողների համար անժխտելի փաստ է, որ «համարաբեկյան գործիքային երկացանկը» մեզ է հասել Օսմանյան կայսրության առաջատար երաժիշտ թամբուրի Իսակի, նրա աշակերտ Օսկիյանի միջոցով և Համբարձում Լիմոնջյանի նոտագրության համակարգի տարածման շնորհիվ¹⁹: Հայկական միջնադարյան մեղեդիների ու տաղերի, «հավա արմանի» (հայկական մե-

¹⁵ X. Кушнарев. Вопросы истории и теории армянской монодической музыки. Л., 1958, с. 448.

¹⁶ Կոմիտաս. Հայ գեղջուկ երաժշտություն, էջ 16:

¹⁷ Խ. Ամիրեան. Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանեան կայսրություն. 16–20-րդ դարեր. J. Kasparian, Aulnay-sus-Bois, Paris, 1989, p. 4.

¹⁸ Н. Тагмизян. Музыкальная культура Армении и ее связи с Востоком. — Музыка народов Азии и Африки. Сб. статей, вып. 5. М., 1987, с. 87.

¹⁹ W. Feldman. Cultural Authority and Authenticity in the Turkish Repertoire.— Asian Music, 1990, vol. 22, p. 101.

ղեղի) կոչվող եղանակների մի ստվար քանակ տարրալուծվել է Մերձավոր Արևելքի աշուղական արվեստում, դարձել չափանմուշ, կանոնական, բայց անհեղինակ երգ²⁰: Հետազոտություն արդյունքում ակնհայտ է դառնում, որ թուրքական երգերի բազմաթիվ ժողովածուներում ընդգրկված նմուշների մի մասն էլ հայկական միջնադարյան հոգևոր մեղեդիների, գանձերի ու տաղերի թուրքերենի վերածված տարբերակներն են՝ գրեթե անփոփոխ ձայնակարգային հիմքով և մեղեդային գծագրերով: Ցայտուն օրինակներից նշենք միայն «Vardar ovasi» (դաշտի մեղեղի) թյուրքին, որը Մխիթար Այրիվանեսցու «Միրտ իմ սասանի» միջնադարյան գանձի նմանակն է²¹: Տարբեր անվանումներով հայտնի այս եղանակը սուլթան Աբդուլ Ազիզի նախասիրած մական հիջազն է եղել, որը նրա համար ջութակով կատարել է Քեմանի Սեպուհը²²:

Բանավոր ավանդույթի պայմաններում կանոնավորված զանազան եղանակների ու մոտիվային դարձվածքների փոխառության և ստեղծագործական իրացման մեթոդը միջնադարյան Արևելքին բնորոշ գեղագիտական սկզբունքներից է: Ավանդույթով սրբագործված կանոնի և անհատական իմպրովիզացիայի փոխհարաբերությունը ենթադրել է ոչ այնքան նորի ստեղծում, որքան դասական օրինակի պահպանում՝ ազգային երաժշտամտածողության դիրքերից: Այլ խնդիր է կոնկրետ ազգային մշակութային արժեքների հեղինակային պատկանելության միտումնավոր անտեսման երևույթը, որին պարբերաբար ակնատես ենք, այսպես կոչված, հայ-թուրքական երաժշտական առնչություններում:

Աշուղական արվեստին ուղղված Կոմիտասի ասույթներում և մտքերում հնչող բացասական երանգները նրանց հիբրիդային լեզվածի՝ լեզվական կողի փոփոխությունների և երաժշտամտածողության մասին, որոնք այդքան թյուրըմբռնումների առիթ են տվել, բավարար չեն հստակ եզրակացություններ անելու համար: Այսուհանդերձ, դրանցում առկա է մշակութաբանական մի ելակետ, որ մասամբ ստվերում է մնացել Կոմիտասի արտահայտած հակասական մտքերի շուրջը ծավալված քննարկումներում: Խոսքը վերաբերում է «հայ գուսան» ու «հայ գուսանական դպրոց» հասկացություն-տերմիններին, որոնցով նա բնութագրել է նստակյաց և շրջիկ հայ երաժիշտների այս դասը՝ ասես ուղղորդելով նրանց արվեստի ծագումնաբանական ակունքները դեպի հայ մշակույթի հեռավոր շերտերը՝ գուսանների, գովասանների ու վիպասանների արվեստը: Կարևոր է նաև նշել, որ առաջին էպիկական երգիչների՝ գուսանների անվանումն իր հստակ բացատրությունն ունի հայերենում. «գովա-

²⁰ Լ. Երնջակյան. Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում, Երևան, 2009, էջ 38–41, 94–96:

²¹ Halk Turkuleri, Istanbul, 1929.

²² Տե՛ս L. Agbabian Hubbard. The Musical World of Armenians in Constantinople.– Armenian Constantinople, pp. 287–308.

սան» բառը հին պարսկերենում տառադարձվել ու դարձել է «գուսան», չի ստուգաբանվում պարսկերենով և ընդգրկված չէ ստուգաբանական բառարաններում²³: Այս անվանումը հայերը հնուց ի վեր կիրառել են մասնագիտացված բանաստեղծ-երգիչ-գործիքահարի իմաստով, որին հետագայում դուրս է մղել «աշուղը»: Անշուշտ, սա սոսկ ձևական փոխարինում չէր, այլ կապված էր ժողովրդական բանաստեղծության խորքում բյուրեղացած սուֆիական պոեզիայի անմիջական ազդեցությունը կրող գրական նոր ժանրի ասպարեզ գալու հետ²⁴:

Գիտնական արվեստագետի բնագրով, երաժշտաբանաստեղծական ու պատմողական արվեստի ժառանգորդության գործոնի կարևորումով, թե պարզապես օտար տերմինից խուսափելու նկատառումով է Կոմիտասը օգտագործել «գուսան» բառը՝ դժվար է ասել: Սակայն ակնհայտ է, որ նա գիտակցաբար և հետևողականորեն է այն կիրառել. օրինակ՝ աշուղ Ֆիզահի (Գրիգոր Կարապետյան) «Վարդ կոչիկ» երգի իր նոտագրած ձեռագիր նմուշում Կոմիտասը գրել է հեղինակի անունը՝ Ալեքսանդրապուլցի Ֆիզահ՝ գուսան: Դասակարգելով հայ գուսաններին ըստ սոցիալական՝ քաղաքային/գյուղական, մասնագիտական՝ կրթված/անուսում, լեզվական՝ հայախոս/թրքախոս հատկանիշների ու տարբերությունների, Կոմիտասը, ըստ էության, բնութագրել է նրանց ընդհանուր արևելյան ավանդույթում կամրջելով հայ միջնադարյան երաժշտարվեստին²⁵:

Հնարավոր էր արդյոք պահպանել և առաջնորդվել Կոմիտասի ընտրած «գուսանական» տերմինով և այդպիսով խուսափել հայ աշուղական արվեստի ծագումնաբանության կեղծարարությունից ու օտար եզրաբանության շահարկման փորձերից թուրքական երաժշտությունը նվիրված արևմտյան հրապարակումներում: Թերևս, ոչ. անհնար է անտեսել ժամանակափոփոխություն հատուկ հասարակական, մշակութային, քաղաքական պայմանների տարբերությունները, մասնագիտական աշուղության ծագման ու ձևավորման, լեզվական, թեմատիկ և տաղաչափական հարցերի ողջ բարդույթը, ինչպես նաև գեղագիտական, կրոնադավանաբանական հոսանքների ազդեցությունը ոլորտները՝ հստակեցնելու ու գնահատելու համար հայ աշուղների խոշոր ներդրումը մերձավորարևելյան երաժշտաբանաստեղծական ավանդույթում: Գուսան-աշուղ հարաբերությունը վերապահություն է ենթադրում: Խորհրդային տարիներին արդիականացած ազգային խնդիրների համատեքստում «աշուղ» բառի բացասական մտազուգորդումները՝ որպես մահմեդական երևույթի, հանգեցրին դրա ժամանակավոր փոխարինմանն ազգային «գուսան»-ով: Մեր օրերում պայմանականորեն համադրելի գուսանաաշուղական միակցված տերմինը՝ որպես կոմպրոմիսային տարբերակ, թույլ է տալիս՝

²³ Հր. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 619-630:

²⁴ Տե՛ս Н. Геворкян. Նշվ. աշխ., էջ 7:

²⁵ Կոմիտաս. Հայ գեղջուկ երաժշտություն, էջ 16:

Հարաբերելով երևույթի անցյալն ու ներկան, գնահատել հայ աշուղների անընդհատ ժառանգությունն Արևելքի գեղարվեստական կանոնում:

Երաժշտաբանաստեղծական սինկրետիկ ժանրերի զարգացմանը զուգահեռ մերձավորարևելյան շատ մշակույթներում ձևավորվել է տերմինաբանական համակարգ, որն իր համարժեքներն ունենալով ամեն մի ազգային ավանդույթում՝ ընդունվել և կիրառելի է դարձել տարբեր ազգերի ժողովրդապրոֆեսիոնալ երաժիշտների համար: Գուսաններին, օզաններին և մթրուբներին պատմամշակութային նոր փուլում փոխարինելու եկած աշուղների, աշիկների ու սազանդարների արվեստի ուսումնասիրությունը որևէ մշակույթում չի բացահայտում նրանց միջև եղած բացարձակ նույնություն, ոչ էլ վերտուլալ ինվարիանտի առկայություն և դրա մեխանիկական ընդօրինակում:

Հետաքրքիր է նշել, որ նույնիսկ ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի ստեղծագործությունները նվիրված հետազոտություններում՝ անդրադառնալով նրա երկերում կոմիտասյան սկզբունքների կիրառության խնդրին, աղավաղված խմբագրումներով մեջ են բերվում Կոմիտասի համոզմունքները²⁶: Օրինակ՝ հայ երաժշտությունը, ինչպես թուրքականն ու քրդականը, պատկանում են միևնույն ճյուղին, օգտագործում են միևնույն վոկալ տեխնիկան, ռիթմերը և միկրոտոնալ ձայնեղանակները²⁷: Կամ էլ՝ «Աշուղները թուրքիայում և Ազրբեջանում հայտնի իբրև աշիկներ տրոբադուրներ են, որոնք պատկանում են Ալեիների հավատին...: Այս լայնասփյուռ և կարևոր վոկալ արվեստն ընդունվել է Հայաստանում...: Աշիկներն իրենց նվագակցում են սազով, սակայն Հայաստանում աշուղական ձայնագրություններն արված են քամանչայի, քանոնի, թաուի և դուդուկի անսամբլների կատարմամբ: Այս բոլոր նվագարանները պատկանում են թուրքական և պարսկական ավանդույթներին և Հայաստանը՝ իբրև քրիստոնյա երկիր, կից դրանց սահմաններին, եղակի է իր մշակույթում այդ ավանդույթները օրգանապես ներծծելու ունակությունը»²⁸: Նման հակադրական պատկերացումներն ու անհիմն դատողությունները, որոնց հանդիպում ենք ակադեմիական և գիտահանրամատչելի հրատարակություններում, բացատրելի են թե՛ հայ երաժշտությունը ներկայացնող սակավաթիվ օտարալեզու գրականությունը, թե՛ մատչելի աղբյուրների կողմնակալ մեկնաբանությունը և թե՛ թուրքական երաժշտությունը նվիրված աշխատանքներում կուտակված ապակողմնորոշող տեղեկատվությունը:

²⁶ Լ. Երնջակյան. Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք-Արևմուտք մշակութային խաչուղիներում, Երևան, 2015, էջ 108–111:

²⁷ D. Winnard. The Ethnomusicological Influences in the Performance and Teaching of Selected Piano Works of Alan Hovhanness, Master's thesis, San Diego University, 1997, pp. 31–32.

²⁸ Տե՛ս S. Broughton and others. World Music: The Rough Guide, London, 1994, p. 114.

Այս հարցում մեծ է նաև կառավարական պատվերներով ստեղծված աշխատությունների բացասական դերը՝ իրականացված ճանաչված երաժիշտ-գիտնականների միջոցով: Դրանցից մեկն է անվանի հունգարացի կոմպոզիտոր Բելա Բարտոկի «Թուրքական ժողովրդական երգեր Փոքր Ասիայից» էթնոերաժշտագիտական աշխատանքը՝ Արևմուտքի գրականության մեջ ամենաբարձր հղման ցուցանիշ ունեցողը, որում ամփոփված թուրքամետ գաղափարներն ու փաստարկները, ցավոք, դարձել են հայ ավանդական և կոմպոզիտորական արվեստին վերաբերող ուսումնասիրությունների պատմատեսական ուղեցույցը²⁹: 1934 թ. Աթաթուրքի ձեռնարկած ազգային մշակույթի զարգացման ծրագրի հիմքում դրված էր թուրքական մշակույթի ներկայացումը օտարազգի գիտնականների ու երաժիշտների միջոցով, որն այսօր էլ, ցավոք, տարածված երևույթ է: Ազգային կարգախոսներով ու ձևաչափերով կողմնորոշվող թուրքական հանրապետությունը պատվիրում էր հետազոտություններ նախանշված եզրակացություններով³⁰: Օսմանյան կայսրության բազմազգ և բազմադեմ մշակույթը վերածվում էր միադեմի և օտարվում բոլոր «համահեղինակներից» հույն, հրեա, հայ³¹: Բարտոկի ժողովածուի երաժշտատեսական ու գաղափարական հիմքը թուրքական երաժշտության վաղեմի ծագման և ինքնատիպության դրույթներն են, որտեղ, բնականաբար, հայերի անունը նույնիսկ չի հիշատակվում: Անկասկած, բազմազգ մշակույթային ավանդույթների ժառանգորդ արևմտահայերի «բազմաչերտ և բաղադրյալ» ազգային ինքնության հիմնավորումները, որ չեն տեղավորվում կոմիտասյան «հնչյունային կառույցում», կարևոր փաստարկներ են մերձավորարևելյան երաժշտական խառնարանում հայկական ավանդույթի դերն ու նշանակությունը գիտակցելու համար: Նորահայտ նյութերն ու վկայությունները հիմք են տալիս նաև վերանայելու և վերաարժեքորելու «Թուրքական երգեր» խորագրի ներքո XIX–XX դդ. ձայնագրված ու հրատարակված ժողովածուներում ընդգրկված նմուշների ազգային ակունքների հարցը՝ հայ երաժշտության հետ ունեցած առնչությունների գիտակետից՝ չսահմանափակվելով զուտ ազգային երևույթների քննությամբ³²: Այս առումով առանձնապես քննելի է կոմիտասի «Արևելյան-թրքական եղանակներ» ժողովածուն, որում ամփոփված երգերը նա գրի է առել իր հայրենի քաղաք Քյոթահիա-

²⁹ B. Bartók. Turkish Folk Music from Asia Minor, Princeton University Press, 1976.

³⁰ Տե՛ս O. Tekelyoglu. The Rise of Spontaneous Synthesis: The Historical Background of Turkish Popular Music.– Middle Eastern Studies, 1996, vol. 32, № 2, pp. 197–205.

³¹ Լ. Երնջակյան. Հայ-թուրքական երաժշտական կապերի օրինակներից.– Հայ արվեստի հարցեր, Երևան, 2010, էջ 61–70:

³² Այդ ժողովածուներից մի քանիսի ընդհանուր բնութագրի մասին տե՛ս Լ. Երնջակյան. Կոմիտասը և ազգային երաժշտական ինքնության խնդիրները, էջ 141–153:

յում՝ հարազատների ու ազգականների երգածից: Այն արևելյան երաժշտութեանը բնորոշ ճայնակարգային մտածողութեամբ ծավալվող մեղեդիների հարուստ հավաքածու է, ուր տեղ են գտել և՛ հայկական, և՛ թուրքական, և թե՛ եվրոպական երաժշտության բնութագրական երևույթներ, որոնք անվանի կոմիտասագետ Ռոբերտ Աթայանի բնորոշմամբ՝ «թուրքիայի հայաբնակ թրքախոս գավառական քաղաքի երաժշտական կենցաղում առկա փոխադարձ ներթափանցումների արտացոլումն է»³³: Հասկանալի է, որ Օսմանյան կայսրության մշակութային քաղաքականության պայմաններում հարկադրաբար գործածվող, թուրքերենով երգվող արևելյան ավանդական երաժշտության այս նմուշները Կոմիտասը չէր կարող այլ կերպ անվանել՝ թեկուզ ելնելով քաղաքային երգարվեստին տրված իր բնութագրերից: Ժամանակափոփոխ միտումներն արտացոլող «ազգային երաժշտական մոդելը» ստեղծված ազգերի ինքնաճանաչման տրամաբանութեամբ, հնարավորություն էր տալիս մեծ կամ փոքր ազգերին ազգային լեզվով հնչեցնելու իրենց ճայնը: Այդ մոդելով է առաջնորդվել Կոմիտասն իր գիտահավաքչական գործունեության առաջնային հարցերում:

Ազգային երաժշտական ինքնության հարատևող արժեքների կոմիտասյան հարացույցը չի բացառում դրա բաղադրիչների համալրումը՝ «մեր ազգային ամբողջական երաժշտության մասին ստույգ գաղափար ունենալու համար»³⁴: Արևելք-Արևմուտք, հայկական-արևելյան դիխոտոմիան հայ մշակույթի ձևավորման ընթացքով պայմանավորված իրողություն է, և, բնականաբար, արևելյան հիմքեր ունեցող երևույթների օտարումն ազգային ինքնության տիպաբանության ընդհանուր դաշտից, խաթարում է այդ ինքնության ամբողջական համալիրը:

КОМИТАСОВСКАЯ ПАРАДИГМА НАЦИОНАЛЬНОЙ МУЗЫКАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ И ГУСАНО-АШУГСКАЯ ТРАДИЦИЯ

ЛИЛИТ ЕРНՃԱԽՅԱՆ

Резюме

В комитасоведении истолкованы и по достоинству оценены сформулированные в его статьях и исследованиях концептуальные положения, касающиеся двух главных ветвей армянской монодической музыки — церковной и народной — как репрезентативных проявлениях музыкальной идентичности нации. Остав-

³³ Տե՛ս Կոմիտաս. Երկերի ժողովածու, հ. 14, Երևան, 2006, էջ 22:

³⁴ Կոմիտաս. Հայն ունի ինքնուրույն երաժշտություն, էջ 46:

шееся за рамками научных интересов Комитаса городское, гусано-ашугское музыкальное искусство воспринималось как явление, характеризующееся иной системой художественно-эстетических ценностей и примыкающее к ближневосточной традиции. Подобное восприятие препятствовало исследованию этой области на определенном этапе армянского музыкознания и породило противопоставляемые друг другу понятия «армянское» и «восточное».

Разночтения, вытекающие из «поляризованных» точек зрения Комитаса Вардапета, дают повод пересмотреть и дополнить элементы парадигмы музыкальной идентичности, для того чтобы «...иметь точное представление о нашей целостной национальной музыке».

Дихотомия Восток-Запад, армянское-восточное — это данность, обусловленная процессом формирования армянской культуры. Отчуждение тяготеющих к Востоку явлений из комплекса типологических составляющих национальной идентичности, естественно, искажает целостную картину ее структуры.

KOMITAS'S NATIONAL MUSICAL IDENTITY PARADIGM AND ARMENIAN GUSAN-ASHUGH TRADITION

LILIT YERNJAKYAN

Summary

In Komitas studies the basic concepts formulated in his articles and essays have been interpreted and estimated regarding the two main branches of Armenian monodic music – religious and folk as paramount representations of the nation's musical identity. Armenian urban and gusan-ashugh music were beyond Komitas Vardapet's scholarly interests as they were considered a phenomenon characterized by a different aesthetic system typical to Near East musical tradition. Such perception hindered the study of the sphere in a certain stage of Armenian musicology and gave rise to opposing concepts of “Armenian” and “Eastern”.

Some of Komitas Vardapet's polarized statements and approaches, resulting in diverse interpretations, allow to rethink and refine musical identity paradigm “... to have a complete idea of our national music”.

The dichotomy East-West, Armenian-Eastern, is a realia determined by the process of the formation of Armenian culture. The alienation of Eastern-biased phenomena from the complex of typological components of national identity distort the holistic vision of Armenian musical culture.

II

«ЛЕТОПИСЬ ИСТОРИЧЕСКИХ СУДЕБ АРМЯНСКОГО НАРОДА» В. БРЮСОВА (К 100-летию издания)

АНУШАВАН ЗАКАРЯН

Деятельность выдающегося русского ученого и историка Валерия Яковлевича Брюсова (1873–1924) в области армянской поэзии и истории давно является предметом пристального изучения литературоведов и историков. Он занимался этими вопросами в самый трагический период в жизни армянского народа. Это были годы Первой мировой войны, когда турецкое правительство осуществило Геноцид армян в Западной Армении.

Итак, ровно сто лет тому назад, в 1918 году, вышло в свет исследование В. Брюсова «Летопись исторических судеб армянского народа (от VI в. до Р. Хр. по наше время)». Этот труд Брюсов написал в ноябре 1916 г., но, как пишет автор в феврале 1918 года, «Обстоятельства нашего времени замедлили издание этой книжки более, чем на год ...»¹. Издателем был Московский армянский комитет.

В заметках «Miscellanea. Замечания, мысли о искусстве, о литературе, о критиках, о самом себе», написанных еще до того, как Брюсов стал заниматься армянской литературой и историей, он писал о своих научных интересах: «В чем я считаю себя специалистом. В наши дни нельзя быть энциклопедистом. Но я готов жалеть, когда думаю о том, чего я не знаю. По образованию я историк. В университете работал специально над Ливием, над Великой французской революцией, над Салической правдой, над русскими начальными летописями, частью над эпохой царя Алексея Михайловича. ... Сейчас я чувствую себя сведущим, как никто, в вопросах русской метрики и метрики вообще. Прекрасно знаю историю русской поэзии, особенно XVIII век ... Я хорошо знаю также историю французской поэзии, особенно эпоху романтизма и движение символическое. Вообще осведомлен во

¹ В. Брюсов. Летопись исторических судеб армянского народа (от VI в. до Р. Хр. по наше время) (далее – В. Брюсов. Летопись...). М., 1918, с. 16.

всеобщей истории литературы»². Далее Брюсов продолжает этот перечень, но мы ограничимся сказанным.

Через два года, в 1916 г., в историко-литературном исследовании «Поэзия Армении и ее единство на протяжении веков» (предисловие к антологии «Поэзия Армении») В. Брюсов пишет: «... в изучении Армении я нашел неиссякаемый источник высших, духовных радостей, ... как историк, как человек науки я увидел в истории Армении – целый, самобытный мир, в котором тысячи интереснейших, сложнейших вопросов будили научное любопытство ...»³.

Теперь, о предыстории создания «Летописи ...».

После «эпохальных»⁴ лекций об армянской поэзии в городах Закавказья – Баку, Тифлисе, Ереване, Эчмиадзине⁵ – В. Брюсов, по просьбе общественности Тифлиса, 22 января 1916 г. в зале Артистического общества выступил с лекцией на тему «Очерк исторических судеб Армении в связи с развитием ее поэзии»⁶. Брюсов взялся за очень трудную задачу. Развивая мысль о том, что армянская литература синтезировала начала Запада и Востока, он на этот раз пытался проиллюстрировать свою мысль на литературных явлениях следующих друг за другом исторических эпох.

Из сведений печати о теме лекции обстоятельным было сообщение корреспондента бакинской газеты «Арев» («Солнце») (можно предположить, что автор статьи – ее сотрудник Ц. Ханзаян). Приведем некоторые выдержки из этого сообщения: «Первый доклад В. Брюсова (имеется в виду «Поэзия Армении» – А. З.), несомненно, был более удачным, чем второй. По нашему мнению, при характеристике «исторических этапов Армении» не были упомянуты многие важные явления, пристального внимания удостоились обстоятельства, имеющие более чем второстепенное значение. Ничего не было сказано о высокой урартской культуре.

² В. Я. Брюсов. Сочинения в двух томах, т. II. М., 1987, с. 372–373.

³ Поэзия Армении с древнейших времен до наших дней. В переводе русских поэтов ..., под ред., со вступ. очерком и примеч. В. Брюсова (далее – Поэзия Армении ...). М., 1916, с. 6.

⁴ Это оценка известного литературоведа, академика А. Тертеряна. См.: А. Тертерян. Валерий Брюсов и армянская культура. Ереван, 1944, с. 5 (на арм. яз.).

⁵ Об этом подробно см.: А. Закарян. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван, 2016, с. 14–47.

⁶ См.: «Кавказское слово» (Тифлис), 24. I. 1916. В книге «Переписка семьи Туманяна» (Сост. и комм. И. Сафразбекян. Ереван, 2002, на арм. яз.) читаем: «Прочитанный в Баку 22 января доклад повторен в Тифлисе» (с. 75), что не соответствует действительности.

Сочетание истоков Запада и Востока было подчеркнуто, но непримиримая борьба между ними, которая вспыхнула в IV и V веках и оставила большой след на дальнейшем развитии армянского народа, почти не отмечалась. Не были упомянуты и духовные ценности VII–X веков, архитектурные памятники, Ани, который сам по себе является ... синтезом принципов культуры»⁷. Как и следовало ожидать, лекция Брюсова не увенчалась успехом.

Не распространяясь по этому поводу, скажем, что в предисловии к «Поэзии Армении» свое «маленькое путешествие» по Закавказью, прочитанные лекции Брюсов считал как бы увенчивающим первый период его работы «по Армении», позволивший подтвердить «живыми впечатлениями» свои «кабинетные сообщения и проверить по критике или по одобрению авторитетных лиц» те выводы, к которым он пришел, работая «самостоятельно ...»⁸. Абсолютно прав академик А. Тертерян, когда пишет: «Известно, что Брюсов не только хорошо говорил, но и *хорошо слушал* ... Обладая этой способностью, Брюсов впитывал в себя все то, что слышал от наших известных поэтов о задачах армянской литературы, истории, мифологии. А все услышанное им, не только от Туманяна и Иоаннисиана, но и от других деятелей, не прошло даром для Брюсова. В его критических оценках есть многие моменты, которые показывают, что русский поэт синтезировал взгляды, некоторые оценки, которые были господствующими среди передовой армянской общественности»⁹.

Работая над антологией «Поэзия Армении», В. Брюсов, как известно, ставил перед собой задачу ознакомить русского читателя с поэтическим миром Армении. В процессе изучения армянской поэзии, как он сам заявляет, убедился, «что в судьбы армян включены одни из примечательнейших страниц всеобщей истории, озаряющие новым светом целый ряд вопросов исторической науки»¹⁰.

После выхода в свет в августе 1916 года «Поэзии Армении» В. Брюсов 20 ноября 1916 года писал известному армянскому поэту И. Иоаннисиану: «С чистой совестью могу сказать, что я сделал, что мог. Постараюсь позже сделать лучшее и более достойное Вашей прекрасной родины, с которой сживаюсь все теснее, ибо, продолжаю работать по истории Армении (готовлю особую книгу, которую уже начал *печатать*)»¹¹.

В мае 1917 г. арменовед Г. Овсепян посетил В. Брюсова в

⁷ «Арев» (Баку), 30. I. 1916 (на арм. яз.).

⁸ Поэзия Армении ..., с. 5.

⁹ А. Тертерян. Указ. раб., с. 34.

¹⁰ В. Брюсов. Летопись ..., с. 7.

¹¹ В. Брюсов. Об Армении и армянской культуре. Стихи. Статьи. Письма. Ереван, 1963, с. 192.

Москве, имел с ним интересную беседу, в частности, о работе русского поэта в области армянской истории. В одном из своих писем архимандриту Тирайру Г. Овсепян пишет: «Он (В. Брюсов. — А. З.) намерен начать новое дело, составить хрестоматию из избранных отрывков армянских летописцев и таким образом ознакомить русское общество с другими сокровищами армянской летописи»¹². Это исследование — «Летопись исторических судеб армянского народа (от VI в. до Р. Хр. по наше время)»¹³ — своеобразный итог арменоведческих исследований ученого.

Напомним, что Брюсов кроме «Летописи ...» написал по истории Армении ряд других трудов — «Царства Араратские» (рецензия на книгу А. В. Амфитеатрова «Армения и Рим»), «Сфинксы и вишапы», «Эмиль Верхарн об Армении», «Моление царя (историческая сцена)». Как справедливо пишет историк М. Арзуманян, «Весь смысл его арменоведческих работ, их историко-философская концепция и познавательное значение заключаются в том, чтобы показать достойное место армянского народа в развитии человеческого общества и подчеркнуть, что этот народ со своей многовековой культурой должен жить и творить со всеми народами мира»¹⁴.

В. Брюсов изложил «Летопись ...» на 124-х страницах. Книга состоит из «Предисловия» — «От автора», 9-ти глав, «Примечаний» и «Библиографии». Небольшая книга не дала возможности автору обстоятельно остановиться (как он сам того хотел) на всех затронутых в ней вопросах. В предисловии к своей книге Брюсов замечает: «Немыслимо обозреть в пределах небольшой книжки, хотя бы и кратко, и внешние политические события от VII в. (VI в. — А. З.) до Р. Х. до XX в. по Р. Х., и различные изменения государственного строя в разных стадиях бытия армянских царств, и культурное развитие народа за этот период, включая сюда религию, науку, литературу, искусство, и экономические явления, тем более, если касаться еще вопросов этнографии, филологии, археологии, историографии и т. под.»¹⁵.

Подчеркнув, что русским и всем образованным людям нужно

¹² Научно-исследовательский институт древних рукописей им. М. Маштоца (Матенадаран), архивный фонд архимандрита Тирайра, папка 134, док. 32; А. З а к а р я н. Из переписки Гарегина Овсепяна и Тирайра Тер-Ованесяна. — «Вестник общественных наук» АН АрмССР, 1985, № 5, с. 84 (на арм. яз.).

¹³ Во 2-й книге «Брюсов и Армения» (Ереван, 1989, с. 297, 299, 300, 331) допущены ошибки: в заглавии «Летописи ...» вместо «... (от VI в. до Р. Хр. ...)» читаем — «... от IV в. до Р. Х. ... ».

¹⁴ М. В. А р з у м а н я н. История армянского народа в освещении В. Я. Брюсова. — Брюсовские чтения 1966 года. Ереван, 1968, с. 61.

¹⁵ В. Б р ю с о в. Летопись ..., с. 14.

знать историю армянского народа и Армению, Брюсов приходит к выводу о необходимости «без всякого промедления», хотя бы минимально, исправить положение, пока появятся капитальные труды по истории армянского народа». Этот пробел дополнил сам Брюсов, написав и издав научно-популярный труд «Летопись исторических судеб армянского народа», по его словам, «надежный обзор всей армянской истории», в котором получили отражение почти все важнейшие события истории Армении, начиная с древних времен до 1915 г. «Назначение моего очерка predeterminedo уже его заглавием, — пишет В. Брюсов. — Вполне понятно, что нет никакой возможности объять, хотя бы суммарным образом, все стороны исторической жизни народа, заполняющей *двадцать пять* веков от походов ассирийского царя Тиглат-Палассара на страну Наири, как тогда называлась область Ванского озера, до военных действий мусульманских союзников императора Вильгельма II, на берегах того же древнего Вана»¹⁶. Далее он прибавляет: «Я ограничил себя ролью бесхитростного *летописца*, пересказывающего год за годом, век за веком, ход внешних событий, насколько они могут быть точно установлены, лишь попутно делая обзор духовной жизни народа и касаясь исторического смысла фактов»¹⁷.

Приведем заглавия глав «Летописи ...», чтобы иметь более полное представление о книге:

«Глава I. Древнейшая история Армении. Эпоха персидского владычества. Македонское завоевание. Образование древне армянского царства и его возвышение. Империя Тиграна В. и его преемников. Первая стадия борьбы с Римом (521 г. — 6 г. до Р. Х.).

Глава II. Армянская культура в эпохи персидского господства, македонского завоевания и первой борьбы с Римом. Иранизм и Эллинизм. Начало романизма. Строй общества. Зачатки литературы (VI—I в. до Р. Х.).

Глава III. Пареское влияние. Вторая стадия борьбы с Римом, Тиридат I. Армения при Антонинах. Борьба за Армению между римлянами и ново-персами. Принятие христианства. Разделение Армении между Римом и Персией (6 г. до Р. Х. — 422 г. по Р. Х.).

Глава IV. Культура Армении первых 4 веков нашей эры. Быт и нравы. Христианство. Первые писатели. Изобретение алфавита (I—IV в. по Р. Х.).

Глава V. Армения византийская и Армения персидская. Юстиниан. Арабское завоевание. Багратиды и Мамикониды. Восста-

¹⁶ Там же.

¹⁷ Там же, с. 15.

ния армян. Достижение Багратидами царской власти (422 г. — 885 г.).

Глава VI. Царство Багратидов. Его судьба. Царство Арцрунидов, Ванандское и др. Междоусобицы и захват армянских областей Византией. Тюрки-сельджуки. Состояние Армении в конце XI в. (885 г. — 1077 г.).

Глава VII. Внутренняя жизнь Армении в эпохи византийскую, персидскую, арабскую. Анти-халкедонизм. Перевод св. Писания. Золотой век литературы. Искусство. Культура Багратидского царства. Ани. Литература при Багратидах (V—XI в.).

Глава VIII. Киликийское царство. Его возникновение, расширение, расцвет и падение (1080 г. — 1375 г.). Культура и литература Киликийского царства. Его значение в истории армян (XI—XIV в.).

Глава IX. Грузинский период. Княжество Захаридов. Монголы и турки-османы. Армения под властью турок и персов (1065 г. — 1515 г.). Литература армянского средневековья; монастырская лирика. Роль колоний в деле армянского возрождения; новоармянская литература (XIII—XX в.). Посольства армян к христианским народам. Переход армянских областей к России. События последнего времени (1515 г. — 1915 г.).».

Как видим, ни один существенный исторический факт не ускользнул от В. Брюсова.

Книга ценна еще и тем, что в «Библиографии» ко всем первоисточникам, какими пользовался Брюсов — «Русские исследования», «Иностранные исследования», «Армянские писатели», «Античные авторы» — он относился строго критически.

В «Летописи ...» В. Брюсов дает высокую оценку истории армянского народа во всемирной истории, в развитии мировой цивилизации. Исходя из этих позиций он пишет: «... история Армении заслуживает внимания в той же мере, как история самых значительных народов, сделавших свой самостоятельный вклад в культуру человечества, не исключая ни египтян, ни эллинов, ни римлян, ни народы современной Европы»¹⁸.

На основании исследования богатого фактического материала и духовных ценностей Брюсов показывает значение и перспективы изучения истории армянского народа: «И для ученого специалиста, и для дилетанта — любителя исторического чтения, и для каждого образованного читателя, интересующегося великими событиями и великими людьми минувших веков, история Армении является своего рода сокровищницей, из которой можно почерпнуть много, пока как бы таимых во тьме драгоценностей. Одних привлекут новые научные проблемы, выдвигаемые этой историей,

¹⁸ Там же, с. 7.

других — поразительность самих судеб народа, игравшего столь видную роль на мировой сцене, третьих — драматические моменты прошлого Армении и величавые образы ее политических и общественных деятелей»¹⁹. В. Брюсов считал, что история армянского народа и Армении «как отдельная отрасль исторического знания, представляет для ученого немало совершенно незаменимого»²⁰, потому что «армянские древности» позволили ставить по-новому многие вопросы, как, например, вопрос о «древнейшей культуре Кавказского мира».

Общеизвестно, что блестящий знаток древней культуры человечества, Брюсов параллельно с историей и поэзией армянского народа изучал историю Кавказа. Об этом свидетельствует письмо, адресованное армянскому литературоведу Т. Иоаннисяну 23 февраля 1917 г., где сообщает, что для бакинского журнала «Горц» («Дело») посылает переработанную часть о Кавказе и яфедитах из доклада «Учители учителей», который он прочитал 24 января 1917 г. в Тагиевском театре в Баку²¹. По просьбе В. Брюсова перевод с рукописи сделан Т. Иоаннисяном. Статья под заглавием «Сфинксы и вишапы (некоторые черты культуры древнейшего Кавказа)» была напечатана в 1917 г., в 5–6 номере журнала. «Может быть, в библейском рассказе о ноевом ковчеге, остановившемся на Арарате, скрыто зерно исторической истины: это — воспоминание о той исключительной роли, какую играли «царства Араратские» (тоже библейский термин) в культурной жизни прежних тысячелетий (2-го и 3-го до Р. Х.), — резюмируя статью пишет В. Брюсов. — По представлению Библии весь род человеческий вновь разошелся по земле с Арарата и, следовательно, оттуда разлилась вся земная цивилизация. Еврейские повествователи, так видоизменявшие халдейское предание о всемирном потопе, должны были вспоминать, что когда-то с Арарата лился к ним свет знаний, что оттуда ждали они откровений науки и искусства и уроков утонченной жизни. Народы, основавшиеся вокруг Арарата, представлялись древнейшим евреям, как самые просвещенные среди всех других»²².

... В «Летописи ...» В. Брюсов также считал необходимым для русского общества «сознательно отнестись к современным событиям». Излагая историю Армянского вопроса, обращаясь к западноармянским погромам и резне в 90-х гг. XIX в., он отмечал, что тяжкий гнет турецких правителей вынудил армян восстать против них, при этом называл политику истребления армян политикой

¹⁹ Там же, с. 10.

²⁰ Там же, с. 9.

²¹ Об этой лекции см.: А. Закарян. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова, с. 113–116.

²² В. Брюсов. Об Армении и армянской культуре, с. 179–180.

государственной. Турецкое правительство не останавливалось «перед такими грандиозными избиениями, на которые не отважился и Ленгтимур», пишет Брюсов. Одним из первых он дал отпор фальсификаторам Геноцида армян: «Что бы ни говорили защитники турок, как бы ни ссылались на доводы «государственной необходимости», ничто не может оправдать массовых избиений, опустошения целых провинций, обречения на голодную смерть изгоняемого населения деревень и городов и т. под. Вовсе не фантастичен подсчет, указывающий, что в начале современной войны в турецких областях, от казней, от убийств, от голода, от истощения, в пожарах, на пути в ссылку, в пустынях, назначенных для жительства и т. под, погибло *свыше миллиона душ* армянского населения (другие источники указывают до 2 000 000 человек). Уже близкое будущее должно показать, чем будут вознаграждены Армении эти непомерные испытания: возрождением политической независимости? созданием из армянских областей федеративной единицы? их автономией? или, наконец, только новым дроблением национального организма?»²³.

Здесь уместно отметить, что в книге «Как прекратить войну» Брюсов, говоря о необходимости заключения мира, считал, что одним из важнейших вопросов, подлежащих обсуждению и справедливому решению, является судьба Западной Армении, находя при этом нецелесообразным пока проведение там плебисцита, т. к. армянские вилайеты «предупредительно лишены своего коренного населения»²⁴.

... Таким образом, В. Брюсов стремился в «Летописи ...» всесторонне изложить историю армянского народа и, естественно, акцентировать те ее стороны, которые он считал более важными для уяснения ее места во всемирной истории, показав значение истории Армении во всемирном масштабе. В этом его главная заслуга²⁵.

В Музее литературы и искусства им. Е. Чаренца (далее — МЛИ) в Ереване хранится интереснейший документ (расписка) такого содержания:

«В Комиссариат по армянским делам

²³ В. Брюсов. Летопись ..., с. 115.

²⁴ В. Брюсов. Как прекратить войну. М., 1917, с. 29.

²⁵ Об этом также см.: П. Н. Берков. Проблемы истории мировой культуры в литературно-художественном и научном творчестве Валерия Брюсова. — Брюсовские чтения 1962 года. Ереван, 1963, с. 20—52; Г. Д. Вардумян. История и культура Армении в восприятии В. Я. Брюсова. — Брюсовские чтения 2016 года. Сборник статей. Ереван, 2017, с. 24—38; Л. В. Овсебян. История армянского народа в оценке Валерия Брюсова. — Там же, с. 63—73.

Гонорар, следующий мне, как автору, на составление книги «Летопись исторических судеб армянского народа с VI века до Р. Х. по наше время» и на наблюдение за ее печатанием (чтения корректур), всего тысяча двести (1200) рубл., мною получено от Герасима Сергеевича Микаеляна, в чем и даю эту расписку. 11 ноября 1918 г. Валерий Брюсов»²⁶.

Интересно, что лидер большевиков В. И. Ленин был знаком с этой книгой, один экземпляр которой находился в его личной библиотеке в Кремле.

... «Летопись ...» была переведена на армянский членом Конгрегации Мхитаристов Овсепом Маргаряном и опубликована в журнале «Базмавеп» (№ 7–8, 9–10 за 1930 г. и № 4, 6, 11 за 1931 г.), а в 1931 г. издана отдельной книгой. Как пишет Л. Овсепян, «Из примечаний к переводу предисловия мы узнаем, что сам В. Брюсов очень хотел увидеть очерк переведенным на армянский язык и даже оставил автограф переводчику, выразив желание как можно скорее увидеть армянский перевод»²⁷.

В «Предисловии» изданной в 1989 г. «Летописи исторических судеб армянского народа» литературовед Оганнес Ганалаян пишет: «Особо хочется подчеркнуть еще одно из многочисленных достоинств «Летописи ...» — ее образный и безукоризненный язык. Можно только поражаться, как сжато пишет В. Брюсов. Ему удалось в столь небольшой по объему работе изложить богатую многовековую историю Армении. Действительно, Брюсов писал так, чтобы «словам было тесно, а мыслям просторно». Он, как это характерно для настоящих ученых, во всех тех случаях, когда не хватало достоверных источников и фактов, избегал категорических заявлений, проявляя известную осторожность. Однако предположения его по тем или иным вопросам и ныне представляют большой интерес»²⁸.

С этой мыслью трудно не согласиться.

Резюмируя вышеизложенное, можно сказать: деятельность В. Брюсова по изучению и популяризации истории Армении была настоящим политическим и общественным подвигом. Он внес значительный вклад в дело сближения и укрепления дружбы русского и армянского народов. Вот почему в 1923 г., в день 50-летия В. Брюсова, ему первому было присвоено почетное звание народного поэта Армении.

Имя В. Брюсова армянский народ всегда произносит с искренней любовью, глубоким уважением и признательностью.

²⁶ МЛИ, ф. К. Микаеляна, № 251.

²⁷ Л. В. Овсепян. Указ. раб., с. 65.

²⁸ В. Брюсов. Летопись исторических судеб армянского народа. Ереван, 1989, с. 15.

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ»
(Տպագրութեան 100-ամյակի առթիվ)

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Ա մ փ ո փ ու մ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Օսմանյան թուրքիայում իրականացվում էր Հայոց ցեղասպանությունը, ռուս գիտնական ու պատմաբան Վալերի Բրյուսովը (1873–1924), «Հայաստանի պոեզիան» ժողովածուն կազմելու և խմբագրելու աշխատանքներին գուզընթաց, զբաղվել է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ: Գրել է հայագիտական մի շարք աշխատանքներ, որոնց հանրագումարը «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը (սկսած VI դ. Ք. Ա. մինչև մեր ժամանակները)» վերնագրով գիրքն էր: Այս ուսումնասիրությունը Բրյուսովը գրել է 1916 թ. նոյեմբերին, սակայն տպագրվել է 1918 թ.: Հրատարակիչը Մոսկվայի Հայկական կոմիտեն էր:

«Տարեգրությունը» բաղկացած է 124 էջից, ունի «Հեղինակի կողմից» ներածական հանգամանակից խոսք, 9 գլուխ, «Ծանոթագրություններ» և «Մատենագիտություն»: Առաջաբանում հեղինակը գրում է. «Ես ինձ սահմանափակեցի անկողմնակալ տարեգրի դերով, վերապատմելով տարեցտարի, դարեդար, արտաքին իրադարձությունների ընթացքը, որչափ որ դրանք կարող են ստույգ հաստատված լինել, միայն անցողակի ակնարկ ձգելով ժողովրդի հոգևոր կյանքի վրա՝ շոշափելով իրողությունների պատմական նշանակությունը»:

Գրքի տպագրությամբ Վ. Բրյուսովը հետապնդում էր մի քանի նպատակ, այն է՝ գիտական անկողմնակալ հայացքով ռուս ընթերցողին ծանոթացնել հայ ժողովրդի հարուստ հերոսական պատմությանը, ցույց տալ նրա տեղն ու դերը մարդկության պատմության մեջ, պատմությունը ներկայացնել մշակութային գործընթացի հետ փոխկապակցված՝ դրանով իսկ շեշտելով հայ ժողովրդի պատմությունը լայն սպեկտրով ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

«Տարեգրությունը» հայերեն է թարգմանել Մխիթարյան միաբանությունից անդամ Հ. Հովսեփ վարդապետ Մարգարյանը և տպագրել «Բազմավեպ»-ում (1930, № 7–8, 9–10, 1931, № 4, 6, 11), իսկ 1931 թ. հրատարակել է առանձին գրքով:

V. BRUSOV'S "CHRONICLE OF THE HISTORICAL FATE OF THE
ARMENIAN PEOPLE"

(To the Centennial of publication)

ANUSHAVAN ZAKARYAN

S u m m a r y

During the years of the World War I, when the Armenian Genocide was being perpetrated in the Ottoman Turkey, Russian scholar and historian V. Y. Brusov (1873–1924) in parallel to his work of compiling and editing the collection of "The Poetry of Armenia", also studied the history of the Armenian people. He penned a series of Armenological works which crystallization was to be the book entitled "Chronicle of the Historical Fate of the Armenian People (from the VI c. BC up to our times)". Brusov authored this study in November 1916, yet it was published in 1918. The publisher was the Armenian Committee of Moscow.

The "Chronicle" is composed of 124 pages, has also segments of "From the Author" detailed introduction, 9 chapters, "Notes" and "Bibliography". The author writes in the prologue: "I restrained myself with the role of an ingenuous *chronicler* retelling the course of external events year by year, century by century, as far as they can be exactly stated just incidentally reviewing the spiritual life of the nation and touching the essence of the historical facts".

Through the publication of this book Brusov pursued a series of goals, that is with his unbiased scientific approach to introduce the rich heroic history of the Armenian people to the Russian readers, to show its place and role in the human history, to present it interrelated to the cultural process, thus highlighting the importance of studying the history of the Armenian people with a broad perspective.

The "Chronicle" was translated into Armenian and was printed first in "Bazmavep" by a member of the Mkhitarist Congregation, Archimandrite Hovsep Margaryan (1930, № 7–8, 9–10, 1931, № 4, 6, 11) and later in 1931, it was published in a separate book.

ԶԱՎԱԽՔՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՇՆՈՐՀԵԼՈՒ
ԽՆԴԻՐԸ ՎՐԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ
(2001–2009 թթ.)

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Վրաստանի հարավային Սամցխե-Ջավախք նահանգում և վերջինիս հարակից Ծալկայի շրջանում հայերենին իրավական կարգավիճակ չնորհելու անհրաժեշտություն մասին, որպես գերազանցապես հայաբնակ տարածաշրջանի զարգացման առաջնային նախապայման, բազմիցս է խոսվել: Վրաստանի անկախացումից ի վեր խնդրո առարկա հարցի պահանջով հանդես են եկել Սամցխե-Ջավախք-Ծալկա (այսուհետ՝ Ջավախք) տարածաշրջանի հասարակական-քաղաքական մի շարք կազմակերպություններ և ազդեցիկ գործիչներ¹: Ցավոք, Վրաստանի բոլոր ժամանակների իշխանությունները որևէ կերպ չեն արձագանքել Ջավախահայության այս պահանջին: Վրաստանն անգամ չի վավերացրել «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիան» (Ստրասբուրգ, 05. XI. 1992), որի պարտավորությունն ստանձնել է եվրոկառույցներին անդամակցելիս (1999 թվականից): Արդյունքում՝ ներկայումս Վրաստանում վրացերենի (պետական լեզվի)² կողքին այդ երկրի սահմանադրությամբ ամրագրված (Ծրդ հոդված) իրավական կարգավիճակ ունի միայն արևազերենը³:

ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի՝ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու անհրաժեշտություն մասին 2009 թ. սեպտեմբերյան հայտարարությունը

¹ Տե՛ս Վ. Սարգսյան. *Ջավախքում հայերենի իրավական կարգավիճակի հարցի շուրջ*. – «21-րդ ԴԱՐ», 2013, թիվ 3, էջ 63–74:

² Վրացերենի պահպանման և զարգացման իրավաբանական երաշխիքներ ստեղծելու նպատակով Վրաստանի խորհրդարանը 2015 թ. հունիսի 22-ին ընդունեց օրենք «Պետական լեզվի մասին», որտեղ սահմանվեց նաև «ազգային փոքրամասնությունների լեզու» հասկացությունը, հստակեցվեցին երկրի ոչ վրացի ազգաբնակչության կողմից մայրենի կիրառման ինչ-ինչ սկզբունքներ:

³ Վրաստանի սահմանադրության Ծրդ հոդվածը սահմանում է. «Վրաստանի պետական լեզուն հանդիսանում է վրացերենը, Արևազխայի Ինքնավար Հանրապետությունում՝ նաև արևազերենը». տե՛ս Նախարարության կոնստիտուցցիոն, միջոցառում 1995 թվականի 24 ապրիլի, միջոցառում 8, Նախարարության 2002 թվականի 10 օգոստոսի կոնստիտուցցիոն կանոն 1689–ՆԵՄԻ, № 28, 28. 10. 2002 թ., միջոցառում 128.

Հայաստանի Հանրապետության իշխանությունները, հետխորհրդային ողջ ժամանակահատվածում հայեցակարգային մոտեցումներ չցուցաբերելով Ջավախքի հիմնահարցի նկատմամբ, առանձնակի չէին արձագանքում նաև հայերենին իրավական կարգավիճակ շնորհելու մասին Ջավախահայության պահանջներին: Այդ իմաստով աննախադեպ էր 2009 թ. ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի՝ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի իրավական գրանցման և Վրաստանում հայկական հուշարձանների պահպանության վերաբերյալ արած հայտարարությունը: 2009 թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանում դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ Նախագահը, անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին, նշեց. «Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը, բովանդակային առումով, պետք է բխի «Ինտեգրում առանց ձուլման» սկզբունքից: Ինտեգրումը, այս դեպքում, պետք է ենթադրի վիրահայերի՝ Վրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի ամրագրումը: Կարծում եմ, որ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու (ընդգծումը մերն է.՝ Վ. Ս.), Հայ Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի՝ հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Վրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության միջնորդի խորացմանը: Այս բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային»⁴:

ՀՀ Նախագահի վերոնշյալ աննախադեպ հայտարարությունը հայկական և վրացական շրջանակները տարբեր կերպ արձագանքեցին: Ջավախահայությունը, բնականաբար, ողջունեց Ս. Սարգսյանի այս քայլը, վրացական մամուլը և հասարակական-քաղաքական միտքը, ընդհակառակը, հուժկու քննադատության ենթարկեցին այն: Մինչ վրացական կողմի նշված արձագանքներին անդրադառնալը՝ փաստենք, որ վրացական մամուլը հասարակական-քաղաքական տարբեր գործիչների շուրթերով մշտապես անդրադարձել է ինչպես Ջավախքում հայերենին իրավական կարգավիճակ տալու խնդրին, այնպես էլ փոխկապակցված երկու այլ՝ Ջավախահայության կողմից վրացերենի յուրացմանը և դպրոցներում վրացերենի ուսուցմանն առնչվող հարցերին:

Անդրադարձ՝ Ջավախքում հայերենին իրավական կարգավիճակ տալու խնդրին՝ մինչ ՀՀ Նախագահի 2009 թ. սեպտեմբերյան հայտարարությունը

⁴ «Հայաստանի Հանրապետություն», 2. IX. 2009:

Վրացալեզու «Ռեզոնանսի» թերթը, 2001 թ. ծավալուն անդրադարձ կատարելով Զավախքում վրացերենի տարածման ու ուսուցման խնդիրներին, խիստ մտահոգություն է հայտնում, որ տարածաշրջանը գրեթե կտրված է վրացական իրականությունից, այստեղ չի հասնում վրացալեզու մամուլը, չեն հեռարձակվում վրացական հեռուստատվիչները, ոչ վրացալեզու դպրոցներում չատ թույլ հիմքերի վրա է վրացերենի, Վրաստանի պատմության և աշխարհագրության ուսուցումը և այլն: Խնդիրը ներկայացնելիս հողվածագիր թինաթին Մոսիաշվիլին մեղադրում է Սամցխե-Ջավախքի նահանգապետ, հայագետ Գիգլա Բարամիձեին, ում, ըստ հեղինակի, բացարձակապես չի հուզում այս ամենը: Թերթը մեծ կարևորություն է տալիս վրացերենի, որպես սահմանադրորեն ամրագրված պետական լեզվի տիրապետմանը Զավախքում, ինչի համար էլ հարկավոր են իրականացնել համապատասխան կրթական և այլ ծրագրեր: «Եթե այսպես շարունակվի, ապա Զավախքում կարող է ստեղծվել Աբխազիայից ավելի վատթար վիճակ»⁵, – եզրափակում է հողվածագիրը:

Գրեթե նույն հարցադրումներով է հանդես գալիս նաև վրացալեզու մեկ այլ թերթ՝ «Ախալի թառեան»: Հողվածագիր Մակա Զանիանին ցավով է խոսում այն մասին, որ երկրի ոչ վրացի ազգաբնակչությունը (հայեր, ռուսներ, ադրբեջանցիներ) գրեթե չի տիրապետում վրացերենին, ինչը լուրջ խնդիր է առաջացնում: Թերթը հիշեցնում է, որ ԽՍՀՄ-ն արդեն վաղուց գոյություն չունի, և Վրաստանի հայերն ու ադրբեջանցիները վրացիների հետ պետք է խոսեն ոչ թե նախկինի նման ռուսերեն, այլ՝ վրացերեն: Ըստ հեղինակի, վրացերենին չտիրապետելը վրաց պետության հանդեպ ոչ հարգալից, արհամարհական վերաբերմունք է, և վրացերեն չիմացողները չեն կարող համարվել երկրի լիարժեք քաղաքացիներ⁶: Դարձյալ ոչ մի խոսք երկրի ոչ վրացի ժողովուրդների լեզվական իրավունքների մասին:

Անդրադառնալով Զավախքում հայերենի կարգավիճակի խնդրին՝ «Ասավալ-դասավալի» թերթի հողվածագիրը քննարկում է Ախալքալաքում դատավարությունը հայերենով անցկացնելու հարցը: Խոսելով շրջանի դատավոր Սուսաննա Մանուկյանի՝ դատավորի որակավորման քննությունները վրացերենով հանձնելու առթիվ արտահայտած դժգոհության մասին՝ թերթը մեղադրում է նրան և՛ վրացերենին չտիրապետելու, և՛ այն պահանջի համար, ըստ որի՝ հայաբնակ Զավախքում դատավարությունը պետք է իրականացվի հայերենով: Թերթը, մեջբերելով Ս. Մանուկյանի հետևյալ խոսքերը՝ «Բարի եղեք և նկատի ունեցեք, որ Զավախքը Վրաստանի հայալեզու տարածաշրջան է», բարկություն մը նշում է, որ եթե նախկինում վրացերենի դեմ բողոքում էին շարքային դաշնակցականները, ապա այսօր դա անում են նաև պաշտոնյաները: Թերթը կրկին հիշեցնում է, որ Վրաստանի ողջ տարածքում պետական լեզուն վրացերենն է,

⁵ “ՇյՖՈՆԵՆՏԻ” («Ռեզոնանսի»), 2001, № 163.

⁶ “ՆԵՃԼԻ ՕՊՈՅ” [«Ախալի թառեան» («Նոր սերունդ»)], 2001, № 285.

իսկ սահմանադրությամբ երկրում գոյություն չունի հայալեզու տարածաշրջան, և, քանի դեռ հայազգի խորհրդարանականներին չի հաջողվել հայերենին կարգավիճակ շնորհել, Ս. Մանուկյանը պարտավոր է որակավորման քննությունները հանձնել ու դատավարությունն իրականացնել վրացերենով⁷:

2005 թ. համարներից մեկում ծավալուն անդրադարձ կատարելով Ջավախքում տիրող իրավիճակին՝ հայերենին կարգավիճակ շնորհելու ջանքերը հայտարարելով պահանջներն է ներկայացնում «Ախալքի թաղամաս»։ Հոգևածագիրը մանրամասն նկարագրում է «Վարդերի հեղափոխությունից» հետո Ջավախքում ստեղծված վիճակը և փաստում, որ Ախալքայաքի ու Նինոծմինդայի շրջաններում համարյա չի գործում Վրաստանի օրենսդրությունը, տեղում չեն օգտագործում վրացերենը և դրա հետ մեկտեղ հանդես են գալիս փաստաթղթերը վրացերենով կազմելու դեմ⁸։ Թերթը նաև մեջ է բերում ՀՀ ԱԺ փոխխոսնակ Վահան Հովհաննիսյանի արտահայտած մի միտքը, ըստ որի՝ Ջավախաստանի իրավունքները պաշտպանված չեն։ Հաջորդիվ հոգևածագիրը վրաց հասարակական-քաղաքական մտքին բնորոշ առողջանությունը Հ. Յ. Դաշնակցություն կուսակցությանը մեղադրում է անջատողականություն հրահրելու մեջ և ավելացնում իրականում գոյություն չունեցող մի շարք երևույթներ, գործիքակ, Ջավախքում ազգաբնակչությունը լրջորեն զինված է, այստեղ ոստիկանությունը չի վերահսկում իրավիճակը, որից ելնելով էլ Ջավախքում, իբր, անհնար է քաղաքացիների ազատ տեղաշարժը և այլն։

Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի՝ համապատասխանաբար հայերով ու ադրբեջանցիներով հոծ բնակեցված նահանգներում իրականացվող պետական լեզվի (վրացերենի) ուսուցման ծրագրին է անդրադառնում «Մեոթխե» թերթը։ Հոգևածագիրը նշում է, որ Զ. Գամսախուրդիայի ժամանակներից կարևորված և հետագայում բարձրիթողի վիճակում գտնվող այդ հարցը նորովի վերանայվեց Մ. Սահակաչվիլու իշխանության կողմից, քանի որ, ինչպես նշում է թերթը, նոր իշխանությունները գայրույթով լցվեցին այլազգիներով (ոչ վրացիներով) բնակեցված շրջանների այն պաշտոնյաների նկատմամբ, ովքեր չէին տիրապետում վրացերենին, միաժամանակ խստորեն պահանջվեց ողջ գրագրությունն իրականացնել վրացերենով։ Թերթը ներկայացնում է Վրաստանի կրթության և գիտության նախարարության «Ապագան սկսվում է այսօր» ծրագիրը, որի շրջանակներում մի շարք մասնագետներ են գործուղվել Ջավախքի ու Քվեմո Քարթլիի շրջաններ՝ վրացերենը մասսայականացնելու նպատակով⁹։ Ռուս-վրացական հարաբերությունների հերթական սրման

⁷ “სხვადავლ-დასხვადავლი” [«Ասավալ-դասավալի» (թարգմ.՝ «Ոչ ոք չգիտի՝ որտեղ է նա, ինչ է պատահել նրան»)], 2003, № 30.

⁸ “სხადლი თათბა”, 2005, № 353.

⁹ “მეოთხე” [«Մեոթխե» («Չորրորդ»)], 2006, № 5.

չըջանում՝ 2006 թ., «Ախալի թառա» թերթին տված ծավալուն հարցազրույցի մեջ անդրադառնալով տարածաշրջանային զարգացումներին, Վրաստանի հայկական եկեղեցիների հանդեպ հայոց պահանջներին, Զավախքի հիմնահարցին՝ քաղաքագետ Սոսո Յինցաձեն շոշափում է նաև Զավախքում վրացերենի կիրարկման խնդիրը և եզրակացնում. «Մենք այսօր չպետք է թույլ տանք, որ Վրաստանում ապրող ցանկացած էթնիկական ներկայացուցիչ ավելորդ համարի իմանալ վրացերենը: Նման արդյունք արդեն ունենք Ախալքալաքում, որտեղ ոչ ոք չի տիրապետում վրացերենին, իսկ դա կոմունիստական քաղաքականությունների արդյունքն է: Ոչ ոք չպետք է մոռանա, որ Վրաստանում կա միայն մի պետական լեզու՝ վրացերենը»¹⁰:

Արձագանք՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2009 թ. սեպտեմբերյան հայտարարությունը

Վիրահայություն (հատկապես՝ ջավախահայություն) ու Հայաստանի Հանրապետության վերաբերյալ քննադատական բնույթի բազմաթիվ հոդվածների և հրապարակումների հերթական առիթը, ինչպես նշեցինք, ՀՀ Նախագահի կողմից 2009 թ. սեպտեմբերյան աննախադեպ հայտարարությունն էր, որին անմիջապես արձագանքեցին վրացական գրեթե բոլոր թերթերը¹¹: Առանց այն էլ շիկացած մթնոլորտն էլ ավելի բորբոքվեց, երբ Վրաստանի ՆԳ նախարարության ներկայացուցիչ Շոթա Նիզանիշվիլին 2009 թ. սեպտեմբերի 3-ին թյուրիմացաբար հայտարարեց, որ Սամցխե-Զավախքի Ադիգենի շրջանում վրաց-հայկական պետական սահմանի մոտ, հայտնաբերվել են երեք վրացի սահմանապահների դիակներ: Իրականում Ադիգենի շրջանը սահմանակցում է ոչ թե Հայաստանի Հանրապետությանը, այլ ներկայիս Թուրքիային: Չնայած Վրաստանի և ՀՀ պատկան մարմինների կողմից շուտով պաշտոնապես տեղեկացվեց տեղի ունեցած թյուրիմացության մասին՝ այդուհանդերձ, այս տեղեկատվությունն առավել խորացրեց ՀՀ Նախագահի կողմից մեկ օր առաջ տարածված նշյալ հայտարարությամբ վրացական շրջանակներում առաջացած հակահայկական տրամադրությունները: Անգամ լուրեր տարածվեցին հայ-վրացական սպասվելիք պատերազմի մասին, հայ-

¹⁰ «ՆՆՏԸՈ ժՈՌՆ», 2006, №190.

¹¹ Շնորհակալ աշխատանք է կատարել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի աշխատակից Վահրամ Հովյանը, ով վրացական ուղևորագու էլեկտրոնային կայքէջերի նյութերի հիման վրա է մի է բերել ՀՀ Նախագահի հայտարարությանն ի պատասխան վրացական կողմի արձագանքները. տես Վրացական արձագանքը հայ-վրացական հարաբերությունների վերջին զարգացումներին. — http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=429&sphrase_id=66862: Սույն աշխատանքում մենք ներկայացնում ենք խնդրո առարկա հարցի վերաբերյալ վրացալեզու տպագիր մամուլում տեղ գտած դիրքորոշումները, կարծիքներն ու արձագանքները:

կական ագրեսիայից պաշտպանվելու համար հնչեցին համընդհանուր մոբիլիզացիայի կոչեր և այլն: «Ախալի թաոբա» թերթն այս աղմուկի խորացման մեղքը բարդելով աշխարհագրությունն չիմացող ՆԳՆ պաշտոնյայի վրա՝ գրում է. «... փաստը մնում է փաստ, որ վրացիները լրջորեն անհանգստացած են հարևան Հայաստանի քաղաքականությունից, սկսած ՀՀ Նախագահի «խորհուրդներից», ավարտած հայ գիտնականների և փորձագետների հակավրացական տրամադրություններով»¹²:

Իր հերթին Կովկասի հարցերով փորձագետ Մամուկա Արեշիձեն ՀՀ Նախագահի նշյալ հայտարարության առիթով «Ռեզոնանսի» թերթին ասել էր հետևյալը. «Կուլիսային խաղեր են, ուրիշ ոչինչ: Հայաստանը, եթե նույն հարցը դներ Ռուսաստանի, ԱՄՆ-ի կամ այլ պետությունների առջև, որտեղ հավաք կերպով ապրում են հայերը, ապա ամեն ինչ պարզ կլիներ: Ստացվում է, որ ՀՀ Նախագահն այդ հարցը բարձրացնում է այնտեղ, որտեղ ստացվում է»¹³:

ՀՀ Նախագահի Ձավախքում հայերենը մարզային լեզու շնորհելու անհրաժեշտություն մասին հայտարարությունը խիստ ուշագրավ է համարում նաև «Ղվելա սիախլե» թերթը: Հայտարարությունն առիթ է դառնում, որ թերթն անդրադառնա նաև տարածաշրջանային զարգացումներում ՀՀ-ի աճող դերակատարմանը, հայ-թուրքական սահմանի հնարավոր բացմանը, Բաքու–Թիֆլիս–Կարս երկաթուղու կարևորությունը, տվյալ ժամանակաշրջանում կրկին սրված Հայաստան–Վրաստան սահմանային խնդրին և այլն: Հայտնի է, որ Բավրա գյուղի հատվածում վրաց սահմանապահները 3 կմ սահմանային երկարությամբ շուրջ 400 մ առաջ էին շարժվել, ինչի պատճառով Բավրայի բնակիչները զրկվել էին սեփականության վկայականով իրենց պատկանող արոտավայրերը շահագործելու հնարավորությունից: Այդուհանդերձ, «Ղվելա սիախլե» թերթը թերահավատորեն է վերաբերվում հայկական կողմի տարածած այս տեղեկատվությանը և քաղաքագետ Ռամազ Սաղվարեղիձեի շուրթերով մտահոգություն հայտնում, որ Վրաստանը, փաստորեն, լուրջ սահմանային խնդրներ ունի ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի ու Ադրբեյջանի հետ¹⁴:

Հաջորդիվ ներկայացնենք «Սաքարթվելոս ռեսպուբլիկա» թերթի արձագանքը: Ծավալուն հրապարակման մեջ հոդվածագիրը նախապես հիշատակում է վրացական «ավանդական» տեսակետները հայերի՝ Վրաստանում հյուր լինելու, պատմության ընթացքում հայերի՝ վրացիներին մշտապես դավաճանելու, Մ. Բաղրամյանի անվան աբխազահայկական գումարտակի վերաբերյալ և անցնում Ս. Սարգսյանի վերոնշյալ հայտարարության քննարկմանը: Հոդվածա-

¹² “ახალი თაობა”, 2009, № 233.

¹³ “რეზონანსი”, 2009, № 210.

¹⁴ “ყველა სიახლე” [«Ղվելա սիախլե» («Ամեն նորություն»)], 2009, № 35.

գիրը, «հիմարություն», «սադրանք» որակելով հայտարարությունը, նշում է, որ ՀՀ Նախագահը ծանոթ է Վրաստանի սահմանադրութ-
յանը, որով ամրագրված են երկու պետական լեզուներ՝ վրացերենը և
աբխազերենը: Հրապարակագիրն իր խոսքում մեղադրում է Վրաս-
տանի իշխանութիւններին, որոնց ապաշնորհ և անհեռատես քաղա-
քականութեան արդյունքում է նման, հեղինակի վառ բնորոշմամբ,
«դաշնակցական պահանջներով» հանդես եկել Ս. Սարգսյանը¹⁵:

ՀՀ Նախագահի նշյալ հայտարարութիւնը մեկ այլ դիտանկյու-
նից է քննում «Ասավալ-դասավալի» թերթը: Հոդվածագիրը, սուր
քննադատութեան ենթարկելով երկրի նախագահ Մ. Սահակաչվիլուն
և նրա վարած տարածաշրջանային քաղաքականութիւնը, նկարագ-
րում է 2009 թ. ամռանը Երևան կատարած նրա պաշտոնական այցը
և ՀՀ-ում բարձրագույն պարգևների ու կոչումների արժանանալու
հանգամանքը: Հեղինակը, ի վերջո, հանգում է այն եզրակացութե-
յան, որ հայերն անտեղի ոչինչ չեն անում, և Մ. Սահակաչվիլուն հետ
զրկախառնվելու արդյունքում ՀՀ Նախագահը շուտով հանդես ե-
կավ հայերենը Վրաստանի մարզային լեզու ճանաչելու մասին պա-
հանջով¹⁶: Շարունակելով Մ. Սահակաչվիլուն ներկայացվող մեղադ-
րանքների տարափը՝ թերթն Աջարիայով անցնող Ախալցխա-Բաթու-
մի ավտոմայրուղու վերականգնման ծրագիրը ևս կապում է Մ. Սա-
հակաչվիլուն հայամետ քաղաքականութեան հետ և անգամ կասկած-
ներ հայտնում, որ Աբխազիան ու Ցխինվալի տարածաշրջանը (Հա-
րավային Օսեթիան – Վ. Ս.) Ռուսաստանին հանձնած Մ. Սահակաչ-
վիլին տվյալ փուլում էլ աշխատել է Ջավախքը Հայաստանին հանձ-
նելու ուղղութեամբ:

Ջավախքում հայերենը մարզային լեզու հռչակելու մասին հայ-
տարարութեանն է անդրադարձել նաև փորձագետ Գիա Խուխաչվի-
լին: 2009 թ. սեպտեմբերի 9-ին «Ախալի թառա» թերթին տված
հարցազրույցում վերջինս, անդրադառնալով Վրաստանի շուրջ տե-
ղի ունեցող մի շարք ոչ նպաստավոր զարգացումներին, պոտենցիալ
փտանգներ է մատնանշում նաև Ջավախքում: Ըստ փորձագետի՝ քա-
նի դեռ Վրաստանը չի դարձել կայուն երկիր, հայերենին կարգավի-
ճակի շնորհման մասին հայտարարութիւնը վատ նախանշանների
տեղիք կարող է տալ¹⁷:

Նույն օրերին (2009 թ. սեպտեմբերի 10) «Սաքարթվելոս ռես-
պուբլիկա» թերթում ծավալուն հրապարակմամբ է հանդես գալիս
նաև ոչ անհայտ Բոնդո Արվելաձեն: Համակողմանիորեն վերլուծե-
լով խնդրո առարկա հայտարարութիւնը՝ նա հիմնադուրկ է համա-
րում Վրաստանի՝ հայկական պատմաճարտարապետական հուշար-
ձանների հանդեպ հայկական պահանջները, քանի որ, ըստ նրա, այդ

¹⁵ “საქართველოს რესპუბლიკა” [«Սաքարթվելոս ռեսպուբլիկա»
(«Վրաստանի հանրապետութիւն»)], 2009, № 175.

¹⁶ “სხვადა-დასვადალი”, 2009, № 36.

¹⁷ “სხვალი თაობა”, 2009, № 238.

քանակը (շուրջ 653 հուշարձան) հայ գիտնականների կողմից արհեստականորեն ուժեղացված է, իսկ իրական թիվը պարզելու համար հարկավոր է ստեղծել հատուկ հանձնաժողով¹⁸:

Բ. Արվելաձեն նույն կերպ դեմ է հանդես գալիս նաև Հայկական Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմին իրավական կարգավիճակ շնորհելուն: Վերջինս ՀԱԵ-ի հոգևոր գործունեությունը համար չի տեսնում որևէ խոչընդոտ, հետևաբար, ըստ նրա, կարիք չկա այդպիսի քայլի: Բ. Արվելաձեն շատ է զարմացրել նաև Ս. Սարգսյանի հայտարարության՝ հայերենին մարզային լեզվի կարգավիճակ շնորհելուն վերաբերող հատվածը, որի քննություն է նվիրել իր հրապարակախոսական ակնարկի կեսից ավելին: «Եթե այսօր պահանջում են հայերենը տարածաշրջանային լեզու հայտարարել, հավանական է, որ շատ շուտով էլ կպահանջեն Ջավախքի ինքնավարությունը և ապա վրացական հինավուրց այդ հողը Հայաստանին միացնելը՝ հայկական սահմանը տեղափոխելով Տաշխկարի: Դա հայերի դարավոր երազանքն է», – նշում է Բ. Արվելաձեն ու բերում վիճակագրական տվյալներ աշխարհի մի շարք երկրներում ապրող հայերի թվակազմի վերաբերյալ, այն է՝ Ռուսաստանում՝ 1 մլն 13 հազ. (ոչ պաշտոնական՝ 2 մլն), ԱՄՆ-ում՝ 1 մլն, Ֆրանսիայում՝ 0,5 մլն, Իրանում՝ 150 հազ., Լիբանանում՝ 120 հազ., Սիրիայում՝ 126 հազ., Վրաստանում՝ 300 հազ.¹⁹: Այստեղ Բ. Արվելաձեն հուշարձանական հարց է տալիս, թե ինչո՞ւ պարոն Ս. Սարգսյանը նույն կերպ չի դիմում իր բարեկամ Ռուսաստանին և հանդես գալիս Մոսկվայում, Կրասնոդարում ու այլ վայրերում դպրոցներ բացելու, հայերենը տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու հավանություններով: Ըստ նրա՝ ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքին հաճախ անվանում են Լոս-Արմենոս, քանի որ այնտեղ բազմաթիվ հայեր են ապրում, հետաքրքիր է՝ ինչո՞ւ ԱՄՆ-ի ղեկավարությունից չեն պահանջում հայերենի կարգավիճակ: «Նրանց տրամաբանությունը՝ Վրաստանը Բաբելոնի աշտարակ է»²⁰, – իր միտքը եզրափակում է հոգևածագիրը: Բ. Արվելաձեն իր ծավալուն անդրադարձի ավարտին եզրակացնում է, որ Ս. Սարգսյանն իր նշյալ հայտարարությունն արել է Կրեմլի թեկադրանքով, քանի որ, ըստ նրա, Վ. Պուտինը ձգտել է Ս. Սարգսյանի միջոցով ապակայունացնել տարածաշրջանը, բախումներ հրահրել հայերի ու վրացիների միջև: Դրանով՝ անկայուն երկրի համբավ ձեռք կբերի նաև Վրաստանը, ներդրողները կհրաժարվեն գալ երկիր, կվտանգվի նաև ապագայում ՆԱՏՕ մտնելու ճանապարհը:

ՀՀ Նախագահի՝ խնդրո առարկա հայտարարությունը ծավալուն անդրադարձ կատարեց նաև «Ջեորջիան թայմս» պարբերականը: Առիթը մի քանի օր անց՝ սեպտեմբերի 9-ին, Նյու Յորքում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում արխագական և օսական փախստականների

¹⁸ “Նախարարության Գեոքոլոգիա”, 2009, №179.

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

վերաբերյալ Վրաստանի ներկայացրած բանաձևին Հայաստանի ցուցաբերած բացասական դիրքորոշումն էր: Հոգվածագիրը, խստորեն դատապարտելով հայկական կողմի այս քայլը, դարձյալ հիշատակում է «Վրաստանի օրհասական պահին հայերի դավաճանության», «Վրաստանին ներկայացվող տարածքային պահանջների» մասին հին ու չարչրկված թեզերը՝ հավելելով այն «Թարմ օրինակով» և փաստելով, թե, իբր, 2008 թ. օգոստոսյան պատերազմի օրերին Գյումրիի ուղևորական ռազմաբազայից ինքնաթիռները մի քանի անգամ ուժեղացրել են վրացական խաղաղ բնակչությանը²¹: Անդրադառնալով Ս. Սարգսյանի սեպտեմբերյան հայտարարությունը՝ թերթը փաստում է, որ Ջավախքում պայթյունավտանգ իրադրություն ստեղծման գործում ներգրավվել է նաև ՀՀ Նախագահը, քանզի «վերջինս պահանջել է հայերենը Ջավախքում հայտարարել տարածաշրջանային լեզու»²²: Շարունակելով խնդրի քննարկումը՝ «Ձեռքը չիան թայմսը» ներկայացրել է վրաց որոշ քաղաքագետների տեսակետները: Ս. Յինցաձեն, օրինակ, Հայաստան-Վրաստան հարաբերությունները բնականոն չի համարել: Ըստ քաղաքագետի՝ Հայաստանը Վրաստանի հանդեպ վարում է սխալ քաղաքականություն, որն անմիջականորեն կապված է հայ-թուրքական սահմանի բացման մասին փոխպայմանավորվածությունների հետ: Խոսելով Ջավախքի հիմնահարցի մասին՝ Ս. Յինցաձեն դարձյալ հիշեցնում է, որ դա վրացական հինավուրց տարածք է, և հայերն այստեղ են վերաբնակեցվել գեներալ Պասկևիչի օրոք: Քաղաքագետը դրանով նորից մեջտեղ է բերում Ջավախահայերի՝ Վրաստանում «հյուր» լինելու մասին վրացական կարծրացած տեսակետը, և այս պարագայում խոսք անգամ չի կարող լինել հայերենին կարգավիճակ շնորհելու մասին:

Վերոհիշյալ տեսակետներից գրեթե չի տարբերվում նաև Վրաստանի լեյբորիստների կուսակցության առաջնորդ Շալվա Նաթելաշվիլու մոտեցումը: «Ձեռքը չիան թայմսի» նույն համարում քաղաքական գործիչն ուղղակիորեն դիմում է Ս. Սարգսյանին. «Տարածաշրջանային լեզու հայտարարելու հարցը նախ Բուենոս-Այրեսում պետք է կարգավորել, ուր 100 հազ. հայ է ապրում, Ավստրալիայում, որտեղ կա հայերի մեծ քանակություն, ինչպես նաև Կալիֆորնիայում, որտեղ ապրում է 300 հազարից ավելի հայություն: Նման նախաձեռնությունները դիմեք թվարկածս երկրների ղեկավարությունը և, եթե ստանաք իրավունք, նոր միայն դիմեք մեզ, և մենք կմտածենք, թե ինչպես վարվենք»²³: Ձգտելով առավել ընդգծել ՀՀ-ի և հայություն վերաբերյալ արտահայտած նեգատիվ տրամադրությունները՝ վրացի հոգվածագիրը մեջբերում է նաև ազրբեջանցի քաղաքագետ Արիֆ Յուսուֆի տեսակետը, ըստ որի՝ ներկայիս Հայաստանը ստեղծված է Վրաստանի և Ադրբեջանի հինավուրց հողերի

²¹ “ԾՊՐՃՕԾԾ ԺՈՑԾԽԵ” («Ձեռքը չիան թայմս»), 2009, № 34.

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

վրա, իսկ հայ քաղաքական ընտրանին, իր թերհասուլթյունից ելնելով, մշտապես տարածքային հավակնուլթյուններ է ունեցել հարևանների նկատմամբ²⁴:

Նույն օրերին (2009 թ. սեպտեմբերի 22) «Սաքարթվելոս ուսուլթյունի» թերթում քաղաքագետ Սոսո Յինցաձեի՝ ծավալուն հարցազրույցում հայտնած տեսակետներից մեկի համաձայն՝ Վրաստանի հանդեպ Հայաստանի իբր բացահայտ թշնամական և էքսպանսիոնիստական քաղաքականուլթյունը կապված է հայ-թուրքական սահմանի բացման մասին քննարկումների հետ: Այս համատեքստում էլ, ըստ քաղաքագետի, գնալով ակտուալ է դառնում Ջավախքի անեքսիայի հարցը, որի բաղադրիչներից մեկն էլ Ս. Յինցաձեն համարում է ՀՀ Նախագահի՝ հայերենը տարածաշրջանային լեզու հռչակելու անհրաժեշտուլթյան մասին հայտարարուլթյունը²⁵: «Ողջ աշխարհն է պահանջում, որ պահպանեն ազգային փոքրամասնուլթյունների իրավունքները, բայց ոչ մի տեղ չի գրված, որ նրանց լեզուն պետական պետք է հայտարարվի», – նշում է Ս. Յինցաձեն և կարծիք հայտնում, որ հայ երիտասարդները, հավանաբար, դիտավորյալ չեն սովորում վրացերեն²⁶:

Նույն օրերին գրեթե նույնաբովանդակ հրապարակում ի հայտ եկավ այս անգամ ընդդիմադիր «Ասավալ-դասավալի» թերթում: Իր ծավալուն հոդվածում Գեորգի Գիգաուրին, նկարագրելով 2008 թ. ուս-վրացական օգոստոսյան պատերազմից հետ ստեղծված իրավիճակը, նշում է, որ, սկիզբ է առել Վրաստանի քայքայման ու մասնատման գործընթացը, և ՀՀ-ն ևս անմասն չէ այդ գործում: «Ջավախքի արմենիկացիայի (ընդգծումը մերն է. – Վ. Ս.) ծրագրերի մասին բազմիցս է խոսվել և գրվել: Երևանը բացահայտ կերպով հարմար առիթ է փնտրում, որպեսզի Վրաստանից էլ առավել հեռացնի այդ հինավուրց վրացական հողը և վերջնականապես այն միացնի Հայաստանին», – ավելացնում է հոդվածագիրը և փաստում, որ իբր հենց այդ նպատակին է ծառայել ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի՝ Ջավախքում հայերենը մարզային լեզու հռչակելու անհրաժեշտուլթյան մասին հայտարարուլթյունը²⁷: Գ. Գիգաուրին ևս կրկնում է նախորդների այն թեզը, թե ինչու Ս. Սարգսյանը նման կոչով չի դիմում աշխարհի մի շարք երկրների ղեկավարներին: Հեղինակի կարծիքով՝ հայերը 2009 թ. ամռանը Երևանում գտնվող Մ. Սահակաչվիլուն դիտավորյալ շնորհեցին Պատվո շքանշան, որպեսզի նրանից պահանջեն և՛ հայերենին մարզային լեզվի կարգավիճակի շնորհում, և՛ Աջարիայի վրայով դեպի Սև ծով տանող ճանապարհի կառուցում և այլն:

Ամփոփենք.

²⁴ Նույն տեղում:

²⁵ “საქართველოს რესპუბლიკა”, 2009, №188.

²⁶ Նույն տեղում:

²⁷ “საბავლ-დასავალი”, 2009, №39.

- **Ձավախքում հայերենին մարզային լեզվի կարգավիճակի տրամադրումն առանցքային նշանակություն ունի Ձավախահայություն կյանքի բարեփոխման համար:**

- **Ձավախքում հայերենը մարզային լեզու հռչակելու անհրաժեշտությունն ամրագրված է միջազգային օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիայով»:** Նշյալ պահանջով մշտապես հանդես են եկել ինչպես Ձավախահայ հասարակական-քաղաքական մի շարք կազմակերպություններ և ազդեցիկ գործիչներ, այնպես էլ ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը, ով 2009 թ. սեպտեմբերի 1-ին հանդես եկավ աննախադեպ հայտարարությամբ:

- **Վրաստանը, 1999 թ. ընդգրկվելով Եվրոպայի խորհրդի կազմում ու ստանձնելով մի շարք պարտավորություններ, այդուհանդերձ, դեռևս չի շտապում վավերացնել «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիան» և քննարկումներ ծավալել Ձավախքում հայերենին իրավական կարգավիճակի շնորհման ուղղությամբ:** Արդյունքում՝ Վրաստանի սահմանադրության ծրագրի հոդվածով ներկայումս ամրագրված լեզուները երկուսն են. վրացերենը՝ որպես համընդհանուր պետական և աբխազերենը՝ որպես Աբխազիայի ինքնավար Հանրապետության տարածաշրջանային լեզուներ:

- **Վրացալեզու տպագիր մամուլի շուրջ տասնամյա ժամանակահատվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ վրաց հասարակական-քաղաքական միտքը գրեթե առանց բացառության պաշտպանում է Վրաստանի պետական քաղաքական այն գիծը, ըստ որի Ձավախահայության կյանքի որակի բարելավման հիմնական նախապայմանը վրացերենի յուրացումն է:**

- **Վրաց պետական քաղաքականությանը համահունչ՝ երկրի հասարակական-քաղաքական միտքը ևս դեմ է հանդես գալիս հայերենը մարզային լեզու հռչակելուն՝ համարելով այն իրենց պետականության դեմ ուղղված քայլ, անջատողականություն, «դաշնակցական» վարքագիծ, Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ ուղղված արկածախնդրություն, Ձավախքի՝ Հայաստանի Հանրապետությանը միացնելուն ուղղված գործընթացի առաջին փուլ և այլն:**

- **ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի՝ Ձավախքում հայերենին մարզային լեզվի կարգավիճակի շնորհման անհրաժեշտության մասին 2009 թ. սեպտեմբերի 1-ի հայտարարությունը ևս ծայրահեղ քննադատության արժանացավ վրացական միջավայրում:** Վրաց հասարակական-քաղաքական շրջանակները միանշանակորեն մերժեցին տվյալ հարցի քննարկման ցանկացած ձևաչափ, իսկ թե՛ իշխանամետ, թե՛ ընդդիմադիր մամուլը և հասարակական միտքը շտապեցին ամեն կերպ սևացնել այդ հայտարարությունը: ՀՀ Նախագահի հայտարարությունը վրաց որոշ շրջանակներ կապեցին հայ-թուրքական սահ-

մանի բացման մասին փոխադամնավորվածությունների հետ՝ ինչից ելնելով ՀՀ-ն, ըստ տվյալ տեսակետի, ձգտում է Վրաստանի առջև դնել կոշտ պահանջներ, ինչը մինչ այդ, ելնելով տարանցիկ կախվածությունից, տեղի չէր ունեցել: Իրենց հերթին, Մ. Սահակաշվիլուն ընդդիմադիր շրջանակները շտապեցին Ս. Սարգսյանի հայտարարությունը կապել Կրեմլի քաղաքականության հետ, ըստ որի՝ Ռուսաստանն այդպիսով փորձում է կրկին ապակայունացնել տարածաշրջանը և շարունակել 2008 թ. ուսուցողական պատերազմից հետո լայնորեն սկզբնավորված Վրաստանի մասնատումը:

Հավելենք. որ լեզվի հարցը բնավ կապ չունի վրացիների ենթադրած տարածքային պահանջների հետ:

ПРОБЛЕМА ПРЕДОСТАВЛЕНИЯ ПРАВОВОГО СТАТУСА
АРМЯНСКОМУ ЯЗЫКУ В ДЖАВАХКЕ В ПОНИМАНИИ
ГРУЗИНСКОЙ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ
(2001 – 2009 гг.)

ВАЭ САРКИСЯН

Резюме

Армянский язык в Джавахке (армянонаселенном южном регионе Грузии) как родной для местного населения до сих пор не имеет правового статуса. Несмотря на то, что необходимость предоставления армянскому языку статуса регионального зафиксирована как в требованиях джавахских армян к грузинским властям, так и в международном (европейском) праве, тем не менее грузинское правительство по этому вопросу занимает позицию отрицания. Грузия не ратифицировала «Хартию региональных языков или языков меньшинств» (Страсбург, 05. 11. 1992). Представители грузинской общественно-политической мысли, полностью поддерживая негативную позицию грузинского руководства, подвергли резкой критике заявление Президента Республики Армения С. Саргсяна 1 сентября 2009 г. о необходимости признания армянского в качестве регионального языка в Грузии.

Добавим, что вопрос о языке не имеет никакого отношения к предполагаемым грузинами территориальным требованиям.

THE ISSUE OF DELIVERING LEGAL STATUS TO THE ARMENIAN
LANGUAGE IN JAVAKHK ACCORDING TO THE PERCEPTION OF THE
GEORGIAN SOCIAL-POLITICAL THOUGHT
(2001–2009)

VAHE SARKISYAN

S u m m a r y

The Armenian language in Javakhk (the Armenian-populated southern region of Georgia) as native (mother tongue) for the local population still has no legal status.

Despite the fact that the necessity of delivering a regional status to the Armenian language is fixed both in the requirements to the Georgian authorities by the Armenians of Javakhk and in the International European Laws, nevertheless, the Georgian government adheres to the position of denial on this issue.

Georgia has not ratified the “Charter of Regional or Minority Languages” (Strasbourg 05.11.1992). Representatives of Georgian social and political thought having fully supported this negative position of the Georgian leadership, also strictly criticized the statement of the President of the Republic of Armenia Serzh Sargsyan on September 1, 2009, on the need of recognition of the Armenian as a regional language in Georgia.

It should be added that the issue of language has no relation with territorial claims as suggested by Georgians.

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ
ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՇՈՒՐՋ
(1919–1922 թթ.)

ՍԵՂԱ ՊԱՐՄԱՄՅԱՆ

Հայոց ցեղասպանության տարիներին ֆիզիկական բնաջնջումն ուղեկցվեց հայկական պատմամշակութային արժեքների զանգվածային յուրացման և ոչնչացման հետևողական քաղաքականությունով, որը, մեր խորին համոզմամբ, հայերի բնաջնջման երիտթուրքական ծրագրի մաս է կազմել: 1915–1916 թթ. Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերից տեղահանության հիմնական գործընթացն ավարտելուց և Արևմտյան Հայաստանը հայաթափելուց հետո հրատապ դարձավ հայերի՝ այդ տարածքներում երբեմնի գոյության հետքերը վերացնելը: Որպես խոսուհի վկաներ՝ ոչնչացման թիրախ դարձան հայկական պատմամշակութային հուշարձանները, մասնավորապես հնագույն և միջնադարյան վանքերը, եկեղեցիները, մատուռները, հուշակոթողները, գերեզմանոցները, խաչքար-տապանաքարերը՝ վիմագիր արձանագրություններով ու որմնանկարներով:

1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովում հայկական պատվիրակության ներկայացրած պաշտոնական տեղեկագրի համաձայն՝ Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրությունում ամբողջությամբ կամ մասամբ ավերվել են հայկական 83 առաջնորդարան, 1860 եկեղեցի ու մատուռ, 229 վանք, 26 բարձրագույն վարժարան, 1439 դպրոց, 42 որբանոց¹: Նշված թվերը համեմատելով մինչև ցեղասպանությունը Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի պատրաստած տվյալների հետ՝ այն է՝ 1913–1914 թթ. դրությամբ Օսմանյան կայսրությունում գործել են հայկական 2538 եկեղեցի, 451 վանք, 1996 դպրոց, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի տարած-

¹ Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացվել է երկու հուշագիր՝ մեկում հայ ժողովուրդն առաջ էր քաշում իր քաղաքական (տարածքային) պահանջները, մյուսը նվիրված էր Առաջին աշխարհամարտի ընթացքում հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստների համար դրամական փոխհատուցման խնդիրներին (ռեպարացիաներ): Վերջինիս վերաբերող հուշագիրը կրում է “Tableau approximatif des réparations et indemnités pour les dommages subis par la nation arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase (Paris, 1919)” վերնագիրը (հուշագրի արևմտահայերեն թարգմանությունը տե՛ս Գ. Ահարոնյան. Յուզամատեան Մեծ եղեռնի 1915–1965, Պէյրութ, 1965, էջ 1020–1028):

քում՝ 1961 եկեղեցի, 413 վանք, 1251 դպրոց², կարելի է ենթադրել, որ չնայած զանգվածային ոչնչացումներին՝ 1919 թ. դրուժյամբ հազարավոր հուշարձաններ դեռևս կանգուն կամ կիսավեր էին: Գեորգ Մեսրոպի տվյալների համաձայն՝ Հայոց ցեղասպանության ընթացքում նախկինում գործած Հայ առաքելական թվով 1849 եկեղեցիներից ու վանքերից 1727-ն ամբողջովին կողոպտվել են թուրք ազգաբնակչության և իշխանությունների կողմից, ավելի քան 1000-ը՝ հիմնահատակ ավերվել, իսկ 691-ը կիսավեր վիճակում են գտնվել³: Հայ բողոքական համայնքին պատկանող նախկինում գործած թվով 310 ժողովարաններից Հայոց ցեղասպանությունից հետո 23-ն են կանգուն եղել, մյուսներն ավերվել կամ այլ նպատակների են ծառայել⁴:

Հայկական պատմաճարտարապետական հուշարձանների չեզոքացման երիտթուրքական քաղաքականության անմիջական շարունակողը դարձան թուրք ազգայնականները՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ: Նոր ազգային ինքնություն ստեղծելու ճանապարհին քեմալական-հանրապետական վարչակարգի խոչընդոտներից մեկը բնաջնջված Հայոց մնացորդներն ու նրանց թողած ահռելի ժառանգությունն էր, որ հատկապես կանգուն կամ կիսավեր հուշարձանների տեսքով սփռված էր ողջ կայսրությունով մեկ: Քեմալականները մշակեցին ու գործի դրեցին հայերի ինքնության, մշակույթի և, առհասարակ, հիշողության հետ առնչվող ցանկացած փաստի ոչնչացման պետական ծրագիրը, որի իրագործումով ամբողջացվեց Հայոց ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը: Այսպիսով, մշակութային ցեղասպանությունը⁵ դարձավ Հայոց ցեղա-

² R. H. Kévorkian, P. B. Paboudjian. Les Arméniens Dans L'Empire Ottoman Ala Veille Du Genocide, Paris, 1992, pp. 57-60.

³ Հաշվումները կատարված են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների հիման վրա, որոնք վերաբերում են միայն Հայ առաքելական և բողոքական համայնքներին պատկանող կրոնական հաստատություններին [տե՛ս Գ. Մեսրոպ. Թուրքիոյ Հայոց կորուստները 1915–1922-ին ազգապատկան գոյքերու տեսակէտով. – «Հայաստանի կոչնակ» (Նիւ Եորք), ԼԱ տարի, թիւ 26, յունիս 27, 1931, էջ 809]:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ 1944 թ. իրավագետ Ռաֆայել Լեմկինը, շրջանառության մեջ դնելով Genocide (գենոցիդ, ցեղասպանություն) եզրույթը, առանձնացրեց նրա ութ բաղադրիչներ՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, տնտեսական, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական: Մշակութային ցեղասպանության (Cultural Genocide) մեջ նա ներառեց խմբի ազգային ավանդույթների, լեզվի արգելքը, մշակութային արժեքներին հուշարձանների, արխիվների, գրադարանների ոչնչացումը, ինչպես նաև խմբի մշակույթն ու արվեստը ներկայացնող մարդկանց բնաջնջումը: «Ցեղասպանություն» եզրույթը ստեղծողի համար ֆիզիկական ոչնչացումը ցեղասպանության գործընթացի մեկ բաղադրիչն էր միայն, քանի որ այն շարժապարհ և տեղական գործընթացի հետևանք է: Չնայած քննարկումներին, մշակութային ցեղասպանությունը բնորոշող և դատապարտող սահմանումները չեն բաժանվել ՄԱԿ-ի «Ցեղասպանություն հանցագործութ-

սպանությունների ավարտական փուլը, որի իրագործումը քեմալականները դարձրին պետության օրակարգային խնդիր, և որը քեմալականների միջոցով հետագայում վերջնակետին հասցրեց հանրապետական վարչակարգը:

Գալով իշխանության քեմալականները, գոնե ձևականորեն, փորձեցին սահմանել կայսրության քրիստոնյա փոքամասնությունների իրավունքները, այդ թվում՝ ապահովել նրանց պատկանող ունեցվածքի պաշտպանությունը: 1919 թ. հունիսի 23-ից օգոստոսի 7-ը էրզրումում կայացած համագումարում⁶ ազգայնականները Մ. Քեմալի գլխավորությամբ սահմանեցին կայսրության քրիստոնյաների իրավունքները, նրանց պատկանող ունեցվածքի «բացարձակ անվտանգությունը»⁷: Համագումարում միաձայն ընդունված հռչակագրի 2-րդ կետով մասնավորապես ասվում է. «Մենք ամբողջապես հաստատում ենք քրիստոնյա տարրերի ձեռք բերված իրավունքները»:

յունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի վերջնական տեքստում: Սակայն ժամանակակից միջազգային իրավունքում այդ դրույթները հաստատագրվեցին որպես միջազգային իրավական պարտավորություններ՝ մշակութային ժառանգության պահպանման ու դրանց ոչնչացման համար պատասխանատվության ենթարկելու համար: Առավել մանրամասն տես Ս. Պարսամյան. Մշակութային ժառանգության ոչնչացումը որպես ցեղասպանության բաղկացուցիչ մաս. – «Մերձավոր Արևելք», 6, Երևան, 2009, էջ 224–230, նույնի Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համատեքստում. տեսական հիմնադրույթներ. – «Ցեղասպանագիտական հանդես», 2, Երևան, 2014, էջ 164–175: Մշակութային ցեղասպանության տարբեր դրսևորումների մասին տես նաև Ս. Քոլանջյան. Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները. – «Էջմիածին», ԻԲ տարի, փետրուար–մարտ–ապրիլ, Բ–Գ–Դ, մայիս–յունիս–յուլիս, Ե–Զ–Է, 1965, ԻԳ տարի, օգոստոս, 1966, Ը, Տ. վրդ. Եարտրմեան. Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894–1896 և 1915–1925 թթ տարիներուն, Բ տպագրություն, Վենետիկ–Սուրբ Ղազար, 2001, Մ. Քեչիշյան. Հայկական մշակութային եղեռնը Օսմանյան Թուրքիայի տարածքում. – «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 7, Երևան, 2003, Ա. Հովհաննիսյան. Թուրքիա. մշակութային ցեղասպանություն, Երևան, 2005, D. Kouymjian. The Destruction of Armenian Historical Monuments as a Continuation of the Turkish Policy of Genocide. – “A Crime of Silence: The Armenian Genocide: The Permanent People’s Tribunal”, Zed Books, London, 1985.

⁶ Այն կրել է «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերակցություն» խորագիրը: 1919 թ. հունիս–սեպտեմբերին Կարին (Էրզրում), ապա նաև Սեբաստիա (Սիսի) քաղաքներում կայացած համագումարներում քեմալականների գաղափարախոսությունն ու ծրագրային դրույթներն ստացան պաշտոնական ձևակերպումներ, որոնք ավելի ուշ բանաձևվեցին 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի Պատգամավորների պալատի կողմից ընդունված «Թուրքական Ազգային Ուխտ» կոչված ծայրահեղ ազգայնական փաստաթղթում:

⁷ Տես Մ. Կեմալ. Путь новой Турции 1919–1927, т. I. Первые шаги национально-освободительного движения, 1919. М., 1929, с. 63–73, 374.

րը, որոնց հետ արդեն երկար տարիներ համատեղ ապրում ենք մեր հայրենի հողում, ընդգծելով, որ այդ իրավունքներն արդեն իսկ հաստատված են եղել Օսմանյան կայսրության օրենսդրությամբ: Այդ անձանց ունեցվածքը, պատիվը և կյանքը ներկայումս նույնպես գտնվում է բացարձակ անվտանգության մեջ՝ համապատասխանաբար մեր կրոնական ուսմունքին և ավանդույթներին»⁸:

Էրզրումի համագումարից մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 4–11-ը, կայացած Սեբաստիայի համագումարի ավարտին հռչակված բանաձևի 4-րդ կետը գրեթե կրկնությունն է Էրզրումի համագումարի հռչակագրի⁹: Կայսրության փոքրամասնությունների իրավունքները սահմանվեցին նաև «Թուրքական Ազգային Ուխտ»-ի 5-րդ հոդվածով¹⁰: Համաձայն դրա՝ Օսմանյան կայսրությունում փոքրամասնությունների իրավունքները պետք է վավերացվեին ճիշտ այն հիմունքներով, որպիսիներով դրանք մյուս երկրներում հօգուտ փոքրամասնությունների սահմանված են Անտանտի տերությունների, հակառակորդների և նրանց միացած մի քանի տերությունների միջև հատուկ սրա համար կնքված կոնվենցիաներով¹¹:

Վերոնշյալ ձևակերպումները հստակ ենթադրում են կայսրության փոքրամասնությունների լիարժեք պաշտպանություն: Սակայն նույն փաստաթղթերում տեղ գտած ծայրահեղ ազգայնական, հակաքրիստոնեական բազմաթիվ կոչերն ու ձևակերպումները լիովին բացահայտում են դրանց ձևական բնույթը: Այսպես, օրինակ՝ հռչակագրերում հանդիպում են նման կոչեր. «... երբեք չպետք է թույլ տալ հայերին կամ հույներին¹² վտանգ ստեղծելու մեր գոյությունը, մահմեդականների իրավունքներին և օսմանյան գերիշխանությունը», «... մեր (Թուրք. – Ս. Պ.) ազգն իրավասու և ի զորու է պաշտպանվել (հայերից կամ հույներից. – Ս. Պ.) իր տրամադրության տակ եղած բոլոր հնարավոր եղանակներով», «... մենք ոչ մի դեպքում չենք հանդուրժի այդ տարրերին (օսմանահպատակ բոլոր ոչ մահմեդականներին. – Ս. Պ.) տրված որևէ արտոնություն, ինչը վնաս կարող է հասցնել մեր գերիշխանությանը կամ խախտել մեր երկրի սոցիալական հավասարակշռությունը», «Շարիաթի իրավունքի համա-

⁸ Նույն տեղում, էջ 374:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 418–420:

¹⁰ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 606–607:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Արևմտահայության բնաջնջումից հետո հույների դեմ տարվող քաղաքականությունը միտված էր կայսրության քրիստոնյա բնակչության նվազեցմանը, որը երկրի իսլամացման և լիակատար թրքացմանն ուղղված ընդհանուր քաղաքականության մաս էր կազմում: Առավել մանրամասն տե՛ս Գ. Վարդանյան. Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914–1923 թթ.), Երևան, 2012:

ձայն դարեր ի վեր իսլամական երկրներում (դարուլիսլամ) միայն մահմեդականներն են համարվել լիիրավ քաղաքացիներ» և այլն¹³:

Այսպիսով, իշխանություն գալու հենց սկզբում ուրվագծվեցին քեմալականների ծայրահեղ ազգայնական մտադրությունները, որոնք անմիջականորեն դրսևորվեցին, մասնավորապես, կայսրությունում մնացած փոքրաթիվ հայությունն ու նրանց հետքերը վերացնելու քաղաքականության մեջ:

Հայաթափված նահանգներում հայերի գոյությունն անընդհատ փաստող հուշարձանների ներկայությունը մեծ անհանգստություն էր առաջացնում որոշ թուրք պաշտոնյաների շրջանում: Վերջիններս կողմից պարբերաբար բողոքագրեր էին հղվում Օսմանյան կառավարությանը՝ ընդգծելով կանգուն այդ հուշարձանների ոչ պակաս վտանգավոր լինելը: Այս առումով բացառիկ կարևորություն է ներկայացնում դեռևս 1919 թ. հունիսի 4-ի 15-րդ բանակի ընդհանուր հրամանատար Քյազըմ Կարաբեքիրի ստորագրությամբ և Մ. Քեմալի հավանությամբ Օսմանյան կայսրության Մեծ վեզիրությունն ուղղված բողոքագրերը¹⁴, որում մասնավորապես ասվում է. «Երկարատև պատմության ընթացքում այս վայրերն արյան, կյանքի և բարոյական կապերով ուղղակիորեն զոդված են մեր ժողովրդին: Այս վայրերի նկատմամբ մեր ժողովրդի գերիշխանությունը միայն ռազմական բնույթ չէ, որ կրում է, դրա մասին են փաստում անգամ մինչև այսօր կանգուն հուշարձանները: Այս առումով, հայերին պատկանող մի քանի ազդեցություններից բացի այլ գիտական հաստատություն կամ քաղաքակրթության որևէ նմուշ գոյություն չունի»¹⁵: Բողոքագրի հեղինակները, ըստ էության, վտանգ դիտելով դեռևս կանգուն հայկական հուշարձանները՝ փորձում են ուղղորդել գործող կառավարությանը լուծել նաև մշակութային այդ հաստատությունների անհետացման խնդիրը:

Հատկանշական է, որ նույնիսկ բազմադարյան հուշարձանների ավերակները և դրանց գիտական ուսումնասիրությունների հետ կապված յուրաքանչյուր հարց կամ անդրադարձ դիտարկվել է որպես քաղաքական խնդիր և լուրջ անհանգստություն պատճառել թուրք պաշտոնյաներին: Խոսքը Բագրատունյաց միջնադարյան թագավորության մայրաքաղաք Անիի ավերակների մասին է որպես հայերի պատմական հայրենիքի երբեմնի հիշողության վկաներ: Այս առումով ուշագրավ է Ռեզա Նուրի բեյի¹⁶ 1921 թ. մայիսի 25-ի նամակն¹⁷ ուղղված Օսմանյան բանակի երրորդ դիվիզիայի փոխհրամանատար, գնդապետ Սեյֆիին և Ազգային մեծ ժողովի պատգամա-

¹³ М. Кемаль. Նշվ. աշխ., էջ 374–375, 383, 418–420:

¹⁴ Բողոքագրերը ներկայացվել է Կարինի թուրքական իրավունքների պաշտպանության կոմիտեի անունից:

¹⁵ K. Karabekir. İstiklâl Harbimiz, İstanbul, 1969, s. 44.

¹⁶ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անգամ, Ազգային մեծ ժողովի պատգամավոր, Մուստաֆա Քեմալի խորհրդական:

¹⁷ K. Karabekir. Նշվ. աշխ., էջ 904–906:

վոր, արևելյան ռազմաճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրին, ուր, մասնավորապես, ասվում էր. «ժամանակին Ռուսաստանից փախած և մեզ մոտ բռնկի (ինքնությունն անհայտ է. – Ս. Պ.) պաշտոն ունեցածին ուղարկում են, իբր, Անիի ավերակներում պատմական ուսումնասիրություններ կատարելու: Այդ մարդը նշանավոր լրտես և բոլշևիզմի քարոզիչ է: Դրա մասին դեռևս Թիֆլիսում եմ մեր պաշտոնյաներին ասել: Անիի ավերակների քարերից յուրաքանչյուրը պետք է մի կողմ չպրտել և այդ հուշարձանները երկրի երեսից վերացնել: Դուք մեծ ծառայություն կմատուցեք Թուրքիային՝ դրա իրագործումով»¹⁸:

Իր տեսակի մեջ հենց միայն այս բացառիկ վավերագիրը լիովին բացահայտում և հիմք է տալիս պնդելու, որ քեմալականների, ապա նաև վերջիններիս հիմնած Հանրապետական Թուրքիայի կողմից հայկական մշակութային ժառանգության կանգուն մնացած հատվածը ոչնչացվել է դիտավորյալ, հետևողականորեն իրագործված պետական քաղաքականության մակարդակով:

Անիի հուշարձանները երկրի երեսից վերացնելու անհրաժեշտություն և այստեղ գիտական աշխատանքներ իրականացնելու թուրքական կառավարության արգելքի մասին վերոնշյալ վավերագիրն առավել ուշագրավ է դառնում, երբ այն դիտարկում ենք պատմական իրադարձությունների համատեքստում: Մեր կարծիքով, պատահական չէ վավերագրի թվագրումից (1921 թ. մայիսի 25) ամիսներ անց տեղի ունեցած պատմական այն իրողությունը, որն առնչվում է Կարսի պայմանագրում¹⁹ Բազրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները Հայաստանին վերադարձնելու մասին կետներ առելու պահանջի մերժումը թուրքական կողմից: Հատկանշական է, որ պայմանագրի կնքմանը նախորդած Կարսի կոնֆերանսի քննարկումներում Անդրկովկասի միացյալ պատվիրակության ղեկավար Յա. Գանեցկին պարբերաբար նշել է, որ Անին Հայաստանի և հայերի համար ունի ազգային ու պատմամշակութային նշանակություն²⁰: Սակայն իննօրյա բռնության քննարկումներից հետո՝ հոկտեմբերի 5-ին, Ք. Կարաբեքիրի գլխավորած պատվիրակությունը կտրուկ մերժել է Անիի ավերակները որևէ ձևակերպմամբ Հայաստանին վերադարձնելու պահանջը՝ հայտարարելով, որ «Անգորան համաձայն

¹⁸ Նույն տեղում, էջ 905:

¹⁹ Կարսի պայմանագիրը կնքվել է 1921 թ. հոկտեմբերի 13-ին մի կողմից՝ Հայկական, Ադրբեջանական, Վրացական և ՍՄՀ-ների, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև, ՌԽՖՍՀ մասնակցությամբ: Ներածությունից, 20 հոդվածներից և 3 հավելվածներից կազմված այս փաստաթուղթը վերահաստատեց 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի գավթողական դրույթները, որոնք կոպտորեն ոտնահարում էին Հայաստանի կենսական շահերը:

²⁰ Քննարկումների մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Մ. Հակոբյան. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 265–280:

չէ Անին զիջել Հայաստանին»²¹: Ուշագրավ է այն փաստը, որ մերժմանը հետևել է մեկ այլ, առավել համեստ պահանջի մերժումը, այն է՝ Անիում գիտական աշխատանքներ կատարելու հարցը՝ պատճառաբանութեամբ, որ «դրա համար Թուրքիայում ստեղծված են լայն հնարավորություններ»²²: Հոկտեմբերի 10-ին Կարսի կոնֆերանսի եզրափակիչ լիազուստար նիստում Յա. Գանեցկին, վերջին անգամ պնդելով Անիի վերաբերյալ, հայտարարել է, որ «Անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակություններն ամենախոր ցավով արձանագրում են Անիի մասին իրենց արած առաջարկի մերժումը, որը ներկայացնում էր հայերի համար ազգային-պատմական և գեղարվեստական արժեք»: Սակայն թուրքական կողմը դարձյալ մերժողական պատասխան է տվել՝ նշելով, որ Անին գտնվում է Ախուրյանի արևմտյան ափին, ուստի նրա զիջումը կնշանակի Մոսկվայի պայմանագրի սկզբունքի խախտում²³:

Այսպիսով, եթե Անին վերադարձնելու թուրքական կողմի մերժումը կարելի է բացատրել վերջինիս կողմից սահմանային զիջումների գնալու ցանկության բացակայությամբ, ապա միանգամայն ակնհայտ է, որ Անիում գիտական աշխատանքներ իրականացնելու թույլտվության մերժումն ունի հետևյալ միակ բացատրությունը. ենթադրաբար, Անիում հայկական հետքերի մաքրման գործընթացն արդեն սկսված էր, և Թուրքիայի համար ցանկալի չէր որևէ հայի կամ գիտական խմբի ներկայությունն այդ տարածքներում:

Քեմալականների կողմից հայկական մշակութային հուշարձանների հետևողական ոչնչացման մասին է փաստում Կ. Պոլսում Իտալիայի դեսպան Կամիլլո Գարրոնիի 1922 թ. հուլիսի 6-ի թիվ 7302/551 հեռագիրն՝ ուղղված արտաքին գործերի նախարար Կարլո Սկանցերին, ուր, մասնավորապես, ասվում է. «Ի պատասխան հունիսի 12-ի Ձեր թիվ 33602/238 հեռագրի, տեղեկացնում եմ Ձերը Գերագանցությանը, որ ամենայն լրջությամբ հաշվի եմ առել քեմալականների կողմից հայկական արվեստի գործերի ու հուշարձանների ոչնչացման դեմ «Պրոհայկական միջազգային լիգայի»²⁴ կողմից հղած բողոքը: Ամեն դեպքում այս պահին նպատակահարմար չեմ գտնում իմ անգլիացի և ֆրանսիացի գործընկերների հետ միասին

²¹ Նույն տեղում, էջ 277:

²² Այս մասին տեղեկանում ենք հոկտեմբերի 5-ի երեկոյան Յա. Գանեցկու Մոսկվա՝ ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Գ. Ջիչերինին ուղղված հեռագրից (տե՛ս նույն տեղում, էջ 278):

²³ Մոսկվայի պայմանագրով հայ-թուրքական սահմանը սկզբունքորեն համարվում էր Ախուրյան գետը, իսկ Կարսում թուրքական կողմը պնդում էր, որ սահմանները վերջնականորեն ընդունված են Մոսկվայի խորհրդաժողովում և անհնար է դրանց փոփոխումը կամ վերանայումը: Մանրամասը տե՛ս նույն տեղում, էջ 280, ինչպես նաև՝ Ա. Հակոբյան. Թե ինչպես Անին չմիացվեց Հայաստանին (1921 թ.)․- ՊԲՀ, 2003, № 2, էջ 73–83:

²⁴ Խոսքը 1920 թ. ժնևում գործող Հայաստանի միջազգային լիգայի մասին է, որը զբաղվել է հայ գաղթականների և ցեղասպանության հետևանքով առաջացած բազմաթիվ խնդիրներով:

Անգորայի (Անկարայի) կառավարությունն այդ հարցով դիմել, քանի դեռ Դաշնակից երկրները հստակորեն չեն որոշել այդ խնդրի առնչությամբ մի հանձնաժողով ուղարկել Փոքր Ասիա ...»²⁵:

Այսպիսով, թուրքական նոր ինքնությունն ձևավորելու քեմալական-ազգայնականների վճռականությունը հանգեցրեց Հայոց ցեղասպանության ավարտական փուլին, այն է՝ Հայկականություն հիշեցնող հետքերի լիակատար և վերջնական մաքրման գործընթացին: Այս փուլում առավելապես թիրախավորվեցին պատմամշակութային հուշարձանները՝ որպես տարածքային, էթնիկ, դավանական պատկանելություն խորհրդանշող յուրօրինակ ցուցիչներ²⁶:

ВОКРУГ ПОЗИЦИИ КЕМАЛИСТОВ В ОТНОШЕНИИ
АРМЯНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ
(1919 – 1922 гг.)

СЕДА ПАРСАМЯН

Резюме

Кемалисты стали непосредственными наследниками политики младотурок по нейтрализации армянских исторических и культурных ценностей. Одним из препятствий на пути к формированию новой национальной идентичности для кемалистско-республиканского режима были остатки армянского населения, выжившего после Геноцида, и огромное наследие, оставленное армянами. Исторические и культурные памятники или фрагментарные памятники являлись уникальными ориентирами, символизирующими территориальную, этническую, религиозную принадлежность. Кемалисты разработали и задействовали государственную программу по уничтожению армянской идентичности, культуры и вообще любого факта, связанного с памятью армян. Осуществлением этой программы был завершён младотурецкий проект Геноцида армян.

Сопоставление нескольких важных документов и исторических фактов показывает государственный уровень и преднаме-

²⁵ Տե՛ս Ա. Բալոյան. Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913–1923 թթ., հ. Բ, 1918–1923, Երևան, 2010, էջ 209:

²⁶ Քեմալական-հանրապետական վարչակարգի կողմից Հայկական հետքերը հետևողականորեն ոչնչացնելու հետագա քաղաքականության լիարժեք պատկերը տե՛ս Եղեռն եղեռնից հետո, Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2015, ինչպես նաև «Վարձք» Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2010, № 1, հունվար–հունիս, № 2, հուլիս–նոյեմբեր:

ренность политики уничтожения кемалистскими республиканцами армянских исторических и культурных ценностей.

ON THE ATTITUDE OF THE KEMALISTS TOWARDS THE ARMENIAN
HISTORICAL-CULTURAL HERITAGE
(1919–1922)

SEDA PARSAMYAN

S u m m a r y

The policy of destruction adopted by the Young Turks regarding the Armenian historical and cultural heritage was continued also by the Turkish Nationalists. On the way to forming a new national identity, one of the obstacles for the Kemalist – Republican regime was the survived remnants of the Armenian population living in Turkey and the huge Armenian heritage left there. The remaining Armenian historical and cultural monuments became targets as unique symbols of territorial, ethnic and religious belonging. The Kemalists developed and carried out a state program of destroying the identity, culture and memory of any Armenian existence in Turkey, by which they completed the Young Turks' policy of the Armenian Genocide.

Through the analysis of several unique documents and historical facts, the state orchestrated nature and intentionality of the Kemalist Republicans' policy of destruction against the Armenian historical and cultural values is outlined.

ԳԵՎՈՐԳ ԶԱՐՈՒԿՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

XX դարում լեզվաբանության պատմության մեջ էական շատ բացահայտումներ եղան, ասպարեզ եկան լեզվաբաններ, որոնք փոխեցին լեզվի մասին գիտության ընդհանուր պատկերը: Իր հոգվածներին մեկուսացնելով ակադեմիկոս Վ. Վինոգրադովը նշում է, որ կան երկու տիպի լեզվաբաններ: Առաջինների համար հետազոտության էությունն առանձին լեզվաբանական կառույցների կերտումն է: Լեզվաբանության ընդհանուր խնդիրներն այսպիսի լեզվաբանների համար ծառայում են լուրջ որպես փայտամած իրենց շինությունը կառուցելու համար: Երկրորդ տիպի լեզվաբանների համար լեզվաբանության ընդհանուր խնդիրները միշտ առաջնային են: Որքան էլ նրանք խոր ուսումնասիրեն այս կամ այն լեզուն կամ առանձին լեզվական փաստ, այդ ամենը նրանք դիտարկում են լեզվի ընդհանուր տեսության դիտակետից¹: Լեզվաբանների երկրորդ խմբի ներկայացուցիչ պետք է համարել Գ. Զահուկյանին:

ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Բեգլարի Զահուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին Կալինինոյի շրջանի Շահնազար (ներկայիս Լոռու մարզի Մեծավան) գյուղում: 1937 թ. ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1941 թ. Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) բանասիրական ֆակուլտետը: Բանակում ծառայելուց հետո՝ 1944 թ., ուսումը շարունակում է ասպիրանտուրայում՝ մեծ հայագետ Հ. Աճառյանի ղեկավարությամբ: 1947 թ. Գ. Զահուկյանը հաջողությամբ պաշտպանում է «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» թեկնածուական ատենախոսությունը ու ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1955 թ. «18–19-րդ դդ. հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը» դոկտորական ատենախոսության համար նրան շնորհվում է բանա-

* Զեկուցումը կարդացվել է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակի կապակցությամբ կազմակերպված միջոցառման ընթացքում (29. X. 2018 թ.), որը նվիրված էր մեծանուն լեզվաբան Գևորգ Զահուկյանին:

¹ Сте́в В. Виногра́дов. Общелингвистические и грамматические взгляды акад. Л. В. Щербы. — Памяти академика Льва Владимировича Щербы (1880–1944). Сборник статей. Л., 1951, с. 31–62.

սիրական գիտությունների դոկտորի աստիճան: 1949 թ. ստանում է դոցենտի, իսկ 1958 թ.՝ պրոֆեսորի կոչում:

Գ. Զահուկյանի գիտամանկավարժական գործունեությունը սկսվում է 1945 թ. ԵՊՀ-ում և շարունակվում մինչև կյանքի վերջ: Այդ ընթացքում նա դասավանդում է ժամանակակից հայոց լեզու, գրաբար, լատիներեն, հին հունարեն, գերմաներեն, լեզվաբանության պատմություն, համեմատական քերականություն, ընդհանուր լեզվաբանություն և այլ առարկաներ: 1948–1956 թթ. Զահուկյանը ղեկավարել է ԵՊՀ-ի օտար լեզուների, իսկ 1957–1970 թթ.՝ ուսման-գերմանական բանասիրության ամբիոնը:

Գ. Զահուկյանի գիտական գործունեության մեջ շրջադարձային է լինում հատկապես 1962 թ., երբ նա նշանակվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն: Նա կարողանում է իր գիտելիքներն ու փորձը ծառայեցնել լեզվաբանության տարբեր բնագավառների զարգացմանը: Նրա ղեկավարությունում մշակվում են ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունները, պատրաստվում են բարձրորակ գիտական կադրեր:

Գիտական և մանկավարժական աշխատանքը Գ. Զահուկյանը զուգակցել է հասարակական ակտիվ գործունեությանը: Երկար տարիներ նա ղեկավարել է Լեզվի ինստիտուտին կից գիտական աստիճաններ շնորհող խորհուրդը, կատարել ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի փոխնախագահի պարտականությունները, գործուն մասնակցություն է ունեցել բարձրագույն կրթության և լուսավորության նախարարությունների մեթոդական խորհուրդների աշխատանքներին: Պետք է նշել, որ Գ. Զահուկյանի գիտամանկավարժական բուռն գործունեությունն ըստ արժանավուն է գնահատվում. 1956 թ. նրան շնորհվում է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում, 1968 թ. ընտրվում է Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1974 թ.՝ ակադեմիկոս: Նա արժանացել է կառավարական մի շարք պարգևների ու մրցանակների [ՀԽՍՀ պետական (1988 թ.) և ՀԽՍՀ ԳԱ (1996 թ.) մրցանակների դափնեկիր է, պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, Պատվո նշան, ՀՀ Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանով, Մովսես Խորենացի մեդալով և այլն]:

Եթե Գ. Զահուկյանի կյանքը և գործունեությունը փորձենք ներկայացնել թվերով, կստացվի հետևյալ պատկերը. կյանքի տևողությունը՝ 85, գիտահետազոտական գործունեության տևողությունը՝ 63, գիտամանկավարժական գործունեության տևողությունը՝ 60, գիտակազմակերպչական գործունեության տևողությունը՝ 57, մասնագիտական անդամակցությունը՝ 7, գիտական աստիճաններ, կոչումներ՝ 5, պարգևներ, մրցանակներ՝ 14, մենագրություններ՝ 37, բառարան՝ 1, ձեռնարկներ, ժողովածուներ՝ 13, գիտական հոդվածներ՝ 141, բանաստեղծություններ՝ 265, կյանքի և գործունեության մասին աշխատանքներ՝ 67:

Գ. Ջահուկյանը թողել է գիտական հարուստ ժառանգություն, որ թեև մասամբ ուսումնասիրված է, բայց և լիովին չբացահայտված դեռ շատ հարցեր կան: Նկատելի է, որ վերջին ժամանակներում լեզվաբանական զանազան հարցերի Ջահուկյանական մեկնաբանություններն ու ըմբռնումները նոր հետևորդներ են գտնում: Վստահաբար կարելի է ասել, որ Ջահուկյանի աշխատությունները մեծ ազդեցություն են ունեցել ժամանակակիցների և հետագա սերունդների վրա: Այդ են վկայում որոշ ըմբռնումների արտացոլումները ժամանակակից լեզվաբանների ուսումնասիրություններում, բազմաթիվ գրախոսությունները՝ նվիրված նրա զանազան աշխատություններին ու հոդվածներին², ինչպես նաև նրա գիտական ժառանգությանը նվիրված ուսումնասիրությունը³:

Նոր գաղափարներով ու մտքերով հարուստ են ականավոր լեզվաբանի գրեթե բոլոր աշխատությունները: Ամենուր նա հանդես է գալիս նորամուծություններով՝ թե՛ նոր հարցեր առաջ քաշելիս, թե՛ տարբեր խնդիրներ նորովի ներկայացնելիս, թե՛ տերմինաստեղծման առումով: Ինքնատիպ մտածողության շնորհիվ Գ. Ջահուկյանը միշտ հանգել է նոր մտքերի ու լեզվաբանական խնդիրների նոր լուծումների, երբեմն էլ լեզվական երևույթները ներկայացնելու և մեկնաբանելու նոր միջոցների ու տարբերակների:

Գ. Ջահուկյանը ժամանակի լավագույն լեզվաբաններից էր, տիրապետում էր շատ լեզուների, հրաշալի տեղյակ էր թե՛ նախորդող, թե՛ ժամանակակից լեզվաբանների և հետազոտողների ձեռքբերումներին, նոր ուսմունքներին: Պետք է նշել, որ նա կարողանում էր ճշգրիտ օգտվել նախորդների ձեռքբերումներից, գտնել այն էականը, որը կարող էր մշակման արդյունքում նոր պտուղներ տալ: Գ. Ջահուկյանի հետազոտության շրջանակները շատ լայն էին՝ հայերենի համեմատական քերականություն, հայ քերականական մտքի պատմություն, հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզվի նկարագրություն, հնդեվրոպական և նոստրատիկ լեզվաբանություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, լեզվաբանության տեսություն...

² Տե՛ս Մ. Хамоян. Новое в армянском и общем языкознании. — ИФЖ, 1979, № 4, с. 278—281; Ю. Степанов, Э. Туманян. Джаукян Г. Б. Общее и армянское языкознание. — «Серия литературы и языка» (М.), 1980, т. 39, № 2, с. 174—177; Հ. Պետրոսյան. Գ. Բ. Ջահուկյան. Լեզվաբանության պատմություն, հ. I, Երևան, 1960, 635 էջ, հ. II, Երևան, 1962, 603 էջ.— ՊՐՀ, 1964, № 4, էջ 239—242, А. Мовсесян. Джаукян Г. История языкознания, т. 1. Ереван, 1960, 635 с.; т. 2. Ереван, 1962, 602 с.— «Вопросы языкознания» (М.), 1965, № 5, с. 133—137.

³ Մ. Սարգսյան. Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները, Երևան, 2017, 276 էջ:

Գ. Զահուկյանի առաջին մենագրությունը՝ «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում», տպագրվեց 1954 թ., որով էլ հիմք դրվեց նրա՝ Հայ քերականական մտքի և Հայոց լեզվի պատմությունը նվիրված ուսումնասիրություններին: Հայ լեզվաբանական մտքի զարգացմանն են նվիրված նաև Գ. Զահուկյանի դոկտորական ատենախոսությունը՝ «18–19-րդ դդ. լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը», ինչպես նաև «Գրաբարի քերականության պատմություն» (1974 թ.) մենագրությունը: Գ. Զահուկյանը հատկապես ներկայացնում է գրաբարի քերականական համակարգի ազդեցությունից զերծ աշխարհաբարի նկարագրությունն ստեղծելու խնդիրը, լեզվի նորմավորման սկզբունքների մշակման և լեզվի զարգացման հարցերը: Պետք է նշել, որ այս հետազոտություններով նա Հայ քերականական մտքի պատմությունը մի նոր աստիճանի բարձրացրեց Ն. Ա. Ղոնցից հետո:

Գ. Զահուկյանի ուշագրություն կենտրոնում մշտապես եղել են նաև Հայոց լեզվի պատմական զարգացման հարցերը: «Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը» (1969 թ.) աշխատության առաջին բաժնում Գ. Զահուկյանը ոչ միայն ներկայացնում է Հայոց լեզվի զարգացման ընթացքը, այլև կատարում գրավոր հայերենի շրջանաբաժանում: Հետագայում իր հայացքները զարգացնում է մեծածավալ ուսումնասիրություններից մեկում՝ «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան» (1987 թ.) աշխատության մեջ: Այս աշխատության մեջ, փաստորեն, Գ. Զահուկյանը ստեղծում է Հայոց լեզվի պատմության ամբողջական ուսումնասիրություն: Նա ներկայացնում է հայերենի նախագրային շրջանի լիակատար պատմությունը, հայերենի պատմական զարգացման հետագա փուլերի ամբողջական բնութագիրը, առաջին անգամ հայերենի նկատմամբ կիրառում է լեզվաժամանակագրության մեթոդը, մանրամասն քննում ու գնահատում աշխարհաբարի զարգացմանը վերաբերող տեսությունները: Այս աշխատությունը կարևոր է ոչ միայն առաջադրած խնդիրների խորությամբ և արդիականությամբ, այլև՝ Հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման առումով: Ներկայումս այն լայնորեն կիրառում են հայագետները: Նշենք նաև, որ 1989 թ. այս հսկայածավալ աշխատանքի համար (748 էջ) Գ. Զահուկյանն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի:

1959 թ. լույս է տեսնում Գ. Զահուկյանի «Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը» մենագրությունը, որով էլ տրվում է մեծանուն գիտնականի ուսումնասիրությունների մեկնարկը՝ հայերենի համեմատական քերականության բնագավառում: Հետագայում հայացքները զարգացնում է «Сравнительная грамматика армянского языка» վերնագրով (1982 թ.) մենագրության մեջ: Մանրամասն ներկայացնում է հայերենի առնչությունները հնդեվրոպական ու այլ ընտանիքների պատկանող բազմաթիվ հին և հնագույն լեզուներին, ճշգրտում հայերենի տարածքային դիրքը հնդեվրոպա-

կան լեզուների շարքում, հայերենի հնդեվրոպական և խուռա-ու-
րարտական ենթաշերտերը, անդրադառնում հայերենից ուրարտերե-
նին, խեթերենին և այլ լեզուներին անցած փոխառություններին,
ուսումնասիրում հայերենի անհայտ ծագման բառաչերտը, ներկա-
յացնում նոր ստուգաբանություններ⁴: Թեև, ցավոք, նա այդպես էլ
չտեսավ իր «Ստուգաբանական բառարանի» (2010 թ.) հրատարա-
կումը:

Ուշագրավ է Գ. Ջահուկյանի վարկածը հայասերենի մասին՝ որ-
պես հայերենի հնդեվրոպական երկրորդ շերտ: Այս տեսակետը ձև-
վորվում է հայերենում հնդեվրոպական ծագման այնպիսի բառերի
առկայություն շնորհիվ, որոնցում առկա են շեղումներ հնչյունա-
կան հայտնի օրենքներից: Հիշատակելի է «The Hayasa language and
its relation to the indo-european languages» հոդվածը (1961 թ.): Գ.
Ջահուկյանի տեսակետը Գ. Ղափանցյանից հետո նորույթ էր այս
բնագավառում: Գ. Ջահուկյանը փաստերով փորձում է ապացուցել,
որ հայասերենը հնդեվրոպական լեզու է և պատկանում է անատո-
լիական (խեթա-լուվական) ճյուղին: Հետագայում ևս նա տարբեր
առիթմերով անդրադարձել է այս հարցին՝ կատարելագործելով և
հիմնավորելով իր վարկածը:

Գ. Ջահուկյանը կարևորել է հայերենի համեմատական հնչյունա-
բանություն ու ձևաբանություն փաստերը: Հայերենի բաղաձայնա-
կան տեղաշարժին, քմայնացմանը և շփականների փոփոխությունը
զուգընթաց առանձնացնում է բաղաձայնախմբերի փոփոխությունը՝
սահմանելով ուժի և լարման ածման օրենքը:

Գ. Ջահուկյանի հետաքրքրության շրջանակներում են եղել նաև
հնդեվրոպական լեզուների պատմահամեմատական ուսումնասիրու-
թյան հարցերը: Նա առաջինն է, որ քննել է հնդեվրոպական, խուռա-
ուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերությունը՝ բա-
ցահայտելով հնդեվրոպական և խուռա-ուրարտական զուգաբա-
նություններ, որոնք վկայում են այդ լեզվաընտանիքների միջև գո-
յություն ունեցած հեռավոր ցեղակցությունը: Առաջինն է, որ զբաղ-
վել է նոստրատիկ լեզվաբանության հարցերով: Նաև առաջինն է
դիտարկել հնդեվրոպական ձայնեղների համապատասխանությունը
կովկասյան լեզուների կատկախիններին, սակայն հետագայում չի
անդրադարձել այդ հարցին⁵:

⁴ Г. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982.

⁵ Г. Джаукян. Новые урартско-индоевропейские параллели. — «Известия» АН АрмССР. Общественные науки, 1965, № 3, с. 45—55; он же. Взаимоотношение индоевропейских, хуритско-урартских и кавказских языков. Ереван, 1967; он же. О так называемой «гло-
тальной» теории в индоевропейстике. — «Вестник древней исто-
рии», 1986, № 3, с. 160—166.

Այս բնագավառում հիշատակելի է Գ. Զահուկյանի վարկածը՝ հնդեվրոպական նախալեզվի տարբերակայնություն (վարիանտիվություն) մասին: Ըստ այդմ՝ հնդեվրոպական նախալեզուն չպետք է վերականգնել որպես մեկ միասնական «ստանդարտ» լեզու, այլ՝ տարածական, հասարակական և ոճական տարբերակների ամբողջություն:

Գ. Զահուկյանը զբաղվել է նաև Կիպրոսի հին լեզվի՝ էտեոկիպրերենի վերծանություն, առաջ է քաշել էտեոկիպրերենի⁶ խոսուսուրարտական լեզվաբանության պատկանելու վարկածը: Անդրադարձել է նաև կիմերերենի խնդրին, որոշել կիմերերենի դիրքը ցեղակից լեզուների շարքում: Նա ժխտում է Գ. Շրամի՝ կիմերենի՝ հայերի նախնիներ լինելու վարկածը⁷:

Ինչ վերաբերում է Գ. Զահուկյանի՝ հայ բարբառագիտությունը նվիրված ուսումնասիրություններին, ապա պետք է նշել, որ նա ստեղծում է նոր գիտակարգ՝ վիճակագրական բարբառագիտություն: Գ. Զահուկյանի՝ «Հայ բարբառագիտության ներածությունը» (1972 թ.) աշխատությունը հայ բարբառագիտության ուսումնասիրության մեջ նոր փուլ է սկսվում: Մեծանուն լեզվաբանն առաջ է քաշում և՛ համաժամանակյա, և՛ պատմական բարբառագիտության կարևոր հարցեր: Առաջադրում է հայ բարբառների դասակարգման բազմահատկանիշ սկզբունքը և վիճակագրական բարբառագիտության մեթոդը: Ըստ այդմ՝ դասակարգումը կատարվում է հատկանիշների մի ամբողջ խմբի հիման վրա՝ ի տարբերություն մինչ այդ ընդունված դասակարգումների, որոնք հաշվի էին առնում միայն մեկ՝ ձևաբանական կամ հնչյունական հատկանիշ: Գ. Զահուկյանն ընտրում է 100 հատկանիշ, որոնք համամասնորեն արտացոլում են լեզվական համակարգի տարբեր կողմեր: Այդ հատկանիշները տեղայնացված են ըստ պատմական Հայաստանի և հայկական գաղթօջախների 120 բարբառախոս վայրերի: Հատկանիշների որոշակի քանակական տվյալներով տարրորոշվում են խոսվածքներն ու բարբառները, բարբառախմբերն ու ենթաբարբառները:

Ընդհանուր լեզվաբանական և տեսական զանազան հարցերը Գ. Զահուկյանի ուշադրություն կենտրոնում եղել են՝ սկսած իր գիտական գործունեության սկզբնական շրջանից: Այդ են վկայում նրա առաջին հոդվածները, վաղ շրջանի հետաքրքրությունների և դասախոսությունների թեմատիկան: Լեզվաբանական բոլոր նախաձեռնություններում հեղինակը ձգտել է լեզվական նյութի ինքնուրույն, խոր և համակողմանի ուսումնասիրություն: Հետևաբար, Զահուկյանը չի սահմանափակվել ներկայացրած նախնական գաղափարներով, այլ գիտական ողջ գործունեության ընթացքում զարգացրել, հարստացրել և կատարելագործել է իր գաղափարները,

⁶ Г. Дж а у к я н. К интерпретации этеокипрско-греческой билингвы. — «Серия литературы и языка», 1976, т. 35, № 2, с. 155 — 163.

⁷ Գ. Զահուկյան. Կիմերենի և կիմերերենի պոբլեմը արդի գիտության մեջ. — ՊԲՀ, 1977, № 4, էջ 73—82:

սկզբունքներն ու հայացքները: Հատկապես հիշատակության են արժանի լեզվաբանության պատմության շրջանաբաժանման, լեզվական մակարդակների, նրա կաղապարման մեթոդի, լեզվի տեսության հարցերը, որոնք աշխատություններում ներկայանում են աստիճանական զարգացմամբ:

Գ. Ջահուկյանը մշակում է լեզվաբանության պատմության շրջանաբաժանման ուրույն և բավական միասնական սկզբունքներ, հստակեցնում նյութի համակարգման եղանակները և դրանով իսկ որոշակի դարձնում իր հայեցակետը լեզվաբանության պատմության երեք շրջանների նկատմամբ: Կոթողային աշխատություններից մեկի՝ «Լեզվաբանության պատմության» առաջին հատորի (1960 թ.) ներածության մեջ նախ և առաջ անդրադարձել է հենց այս հարցերի քննությանը: Հետագայում, վերանայելով այս աշխատության մեջ ներկայացվող որոշ սկզբունքներ, Ջահուկյանը շրջանաբաժանման խնդրին անդրադառնում է նաև մեկ այլ, ոչ պակաս արժեքավոր «Общее и армянское языкознание» (1978 թ.) աշխատության մեջ: Անշուշտ, գիտության զարգացման այժմյան մակարդակից դիտարկելիս Ջահուկյանի շրջանաբաժանումը՝ որոշակի հավելումների կարիք է զգացվում, սակայն անժխտելի է նրա մնայուն տեղը ընդհանուր լեզվաբանության պատմության մեջ: Բավական է նշել միայն, որ մինչ օրս այն մնացել է չգերազանցված: Պետք է նշել, որ «Լեզվաբանության պատմություն» աշխատությունն արժեքավոր դեր ունի լեզվաբանության պատմության և տեսության բնագավառում նախ ներկայացվող նյութի լայն ընդգրկմամբ, ապա վերլուծության նոր եղանակներով, առաջադրվող նոր մեթոդներով ու հարցերով:

Գ. Ջահուկյանն ուսումնասիրել է լեզվաբանական տեսության այնպիսի հարցեր, ինչպիսիք են լեզվի և մտածողության, տրամաբանական և լեզվաբանական կարգերի (կատեգորիաների), լեզվական և արտալեզվական իրակությունների փոխհարաբերությունները, լեզվական մակարդակների դասակարգումը, լեզվական միավորների ու դրանց տարբերակիչ հատկանիշների առանձնահատկությունները, լեզվի ուսումնասիրության մեթոդներն ու հայեցակարգերը և այլն: Նա նորամուծություններով է հանդես եկել նաև տեսության բնագավառում վերոնշյալ հարցերին անդրադառնալով և լեզվաբանության կառուցվածքի մեկնաբանությունը, ինչպես նաև լեզվաբանական գիտակարգերի իր դասակարգումը (աստիճանական զարգացմամբ) ներկայացնելով մի շարք աշխատություններում [«Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974 թ.), «Общее и армянское языкознание» (1978 թ.), «Универсальная теория языка» (1999 թ.)]:

Տարբեր գիտությունների և լեզվաբանության հարաբերությունները պարզելու և ներկայացնելու համար Ջահուկյանն օգտվում է հարաբերությունների նշանակման իր առաջարկած համակարգից, որը կիրառվում է համընդհանուր լեզվաբանական կաղապարի մեջ, և առանձնացնում է մակրոլեզվաբանության հինգ գիտակարգ: Նկա-

տի ունենալով «լեզու» հասկացությունների հիմնական կիրառությունները՝ ընդհանուր, առանձնակի և անհատական, համապատասխանաբար տարբերակում է լեզվաբանության երեք խումբ՝ պանլեզվաբանություն, մոնոլեզվաբանություն, իդիոլեզվաբանություն: Ամեն մեկի համար էլ առանձնացնելով փոփոխակային և անփոփոխակային հատկանիշներ, ի վերջո, գիտակարգերի թիվը հասցնում է վեցի:

Լեզվի կառուցվածքի և լեզվական միավորների առանձնացման բնագավառում Ջահուկյանն առաջարկում է լեզվական կառուցվածքին անդրադառնալիս նկատի ունենալ ոչ միայն մակարդակներն ու միավորները, այլև տարբերակիչ հատկանիշները: Նա հստակեցնում է շարույթի իր ըմբռնումը, ինչպես նաև շարույթի և հնչաշարույթի առանձնացման սահմանները: Ներմուծում է գերշարույթի գաղափարը՝ մեկից ավելի շարույթների միացումը մեկ շարույթի մեջ: Ներկայացնում է հնչույթի նոր ըմբռնում՝ հնչույթի գաղափարը քննելով համընդհանուր լեզվաբանական կաղապարի ընձեռած հնարավորություններով:

Ինքնատիպ է Ջահուկյանի խոսքի մասերի կաղապարային դասակարգումը՝ ըստ կաղապարման մեթոդի: Այն լեզվաբանության մեջ որպես այդպիսին ձևակերպվում է առաջին անգամ: Այդ սկզբունքը հնարավորություն է տալիս խոսափելու մյուս սկզբունքների միակողմանիությունից և բառերը քննելու դրանց իմաստաբերականական բոլոր հատկանիշների ամբողջությամբ: Այստեղ բացառվում են կաղապարային դասակարգումից կատարվող շեղումները, և նկատի էի առնվում ձևաբանական չափանիշներից ելնող դասակարգումը⁸:

Ջահուկյանը առաջ է քաշում նաև քերականական կարգերը մեկ միասնական համակարգով ներկայացնելու հարցը⁹: Պետք է նշել, որ լեզվաբանության մեջ մինչև նրա հարցադրումը նմանատիպ փորձ էի արվել: Անդրադառնալով բայական կարգերի քերականական առանձնահատկություններին՝ Ջահուկյանը փորձում է որոշել բայասեռի տեղը բայական կարգերի շարքում: Քերականական կարգերի համակարգում որոշակիորեն առանձնանում է նաև տիպարի քերականական կարգի ջահուկյանական ըմբռնումը: Այն հենվում է բայի ձևաբանական կառուցվածքի վերլուծության և անվան քերականական դասի հետ անցկացված զուգահեռի վրա: Տիպարի կարգը մասամբ համապատասխանում է արժույթի (արժեքականություն, ВАЛЕНТНОСТЬ) ըմբռնմանը:

Գ. Ջահուկյանի հետազոտական բեղուն գործունեության ընթացքում նրա ուղադրության կենտրոնում միշտ էլ եղել է համընդհանուր լեզվաբանական տեսություն ստեղծելու գաղափարը, որ առնչվում է կաղապարման մեթոդին: Եվ այդ ժամանակաշրջանից էլ Ջա-

⁸ Գ. Ջահուկյան. Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը. – «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, հ. 1, էջ 16–30:

⁹ Г. Джаукян. Общее и армянское языкознание. Ереван, 1978, с. 107–113.

Հուկյանն աշխատում էր լեզվաբանական նկարագրություն ընդհանուր և միասնական սկզբունքների մշակման ուղղությամբ: Նրա նպատակն էր միևնույն սկզբունքներից ելնելով, մի քանի պարզ գործողություններ ընդգրկել լեզվի ամբողջ համակարգը՝ և՛ արտահայտության պլանը, և՛ բովանդակության պլանը, և՛ դրանց փոխհարաբերությունը: Ընդհանրական տեսությունն ստեղծելու, լեզվի բոլոր մակարդակները մեկ ընդհանուր սկզբունքով դիտարկելու ցանկությունն ունեցել են շատ լեզվաբաններ (Ն. Խոմսկի, Լ. Ելմսլե), սակայն նրանցից ոչ մեկը չկարողացավ հասնել լիարժեք ընդհանրության կամ այդ տեսությունը մնաց տեսական մակարդակում: Թերևս միայն Ջահուկյանն էր, որ ոչ միայն մշակեց տեսության սկզբունքները, այլև հանդես եկավ դրա գործնական կիրառումով (մասնակիրներն)¹⁰: Իր համընդհանուր լեզվաբանական կաղապարի ուսմունքը կիրառեց հնչույթաբանության նկատմամբ, քանի որ, ինչպես նշում է, լիարժեք ընդհանրացման կարելի է հասնել հենց այս ոլորտում: Հետագայում նա այդ տեսությունը կիրառեց ժամանակակից հայերենի բառակազմության և իմաստաբանության նկատմամբ: Անշուշտ, տեսության կիրառման ոլորտն այսքանով չի սահմանափակվել. Ջահուկյանն ընդհանուր լեզվաբանական հայացքները մշակել, ըմբռնումները ներկայացրել է հենց համընդհանուր լեզվաբանական կաղապարի ուսմունքի ազդեցությամբ: Այսինքն՝ ցանկացած լեզվական և լեզվաբանական խնդիր լուծել է ըստ համընդհանուր լեզվաբանական կաղապարի ընձեռած հնարավորությունների: «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969 թ.) աշխատության մեջ հիմնական գծերով տրված է լեզվական կաղապարի Ջահուկյանական ըմբռնումը: Կաղապարի Ջահուկյանական ըմբռնումը զարգացվում է հեղինակի բազմաթիվ գիտական հոդվածներում և «Общее и армянское языкознание» աշխատության մեջ, որոնք էլ հաջորդ` «Универсальная теория языка» աշխատության հիմքն են: Ընդհանուր ուղղությունը բնորոշվում է որպես սուբստանցիոնալ (նյութահարաբերակցական), որն էությունը կառուցվածքային մոտեցման զարգացումն է, քանի որ ձգտում է ներկայացնելու լեզվի ոչ միայն նկարագրությունը (description), այլև բացատրությունը: Ջահուկյանի կաղապարման մեթոդները կիրառել են այլ լեզվաբաններ լեզվական զանազան երևույթներ ուսումնասիրելու համար: Դրանք կարող են հիմք լինել նաև տեքստերի իմաստային թարգմանությունների համար:

Գ. Ջահուկյանը հանդես է եկել մի շարք նորամուծություններով ոչ միայն լեզվաբանական տեսության մշակման, տեսական նշանակություն ու կարևորություն ունեցող շատ խնդիրների և հարցերի սպառիչ ձևակերպումով, այլև այս բնագավառում նոր տերմիններ ստեղծելու առումով: Նրա հայացքների զարգացմանը զուգահեռ` ո`

¹⁰ Գ. Ջահուկյան. Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989:

րոշակի զարգացում է ապրել նաև տերմինակերտումը: Գ. Ջահուկյանի որոշ աշխատանքներ շարադրված են միայն ուղևորներ, և ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, նա նաև ուղևորներ տերմիններ է կերտել: Բացի այդ՝ Գ. Ջահուկյանին պետք է վերագրել նաև «Универсальная теория языка» (1999 թ.) աշխատության անգլերեն թարգմանության տարբերակում տեղ գտած տերմինները, քանի որ, ըստ մեր ուսումնասիրությունների, թարգմանիչը դրանք պատճենել է ուղևորներին՝ Գ. Ջահուկյանի կերտած տերմիններից: Ականավոր լեզվաբանի աշխատություններում լեզվաբանական նորաստեղծ տերմինների առկայությունը գերազանցապես պայմանավորված է նոր ըմբռնումներով ու հայեցակետով, նոր մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև նոր տեսություն առաջ քաշելով: Նման տերմինները կարելի է բնորոշել որպես տվյալ տեսության հասկացությունների համակարգի միավորներ: Այսինքն՝ Գ. Ջահուկյանի տերմինաբանությունն ընդհանուր առմամբ կարելի է համարել համընդհանուր լեզվաբանական տեսության տերմինաբանություն: Առանձնանում են այնպիսի տերմիններ, որոնք փոխառված են գիտության այլ բնագավառներից՝ որևէ կոնկրետ իմաստով կամ ընդհանուր գիտական նշանակությամբ: Դրանք սովորաբար փոխառված են մաթեմատիկայից, տրամաբանությունից, փիլիսոփայությունից, ինֆորմատիկայից և այլ բնագավառներից: Պետք է նշել, որ Գ. Ջահուկյանի կերտած լեզվաբանական տերմինները բազմազան են. դրանց մեծ մասը լեզվաբանական գրականության մեջ դեռևս լայն կիրառություն չի գտել ու դրանց կիրառման ոլորտը հիմնականում սահմանափակվում է նրա աշխատություններով: Սակայն ժամանակակից ուսմունքների, ուղղությունների, մեթոդների տերմինաբանության մշակման առումով անգնահատելի է Ջահուկյանի դերը, քանի որ լեզվաբանական զանազան տերմիններ առաջարկել և կիրառել է հենց նա:

Գ. Ջահուկյանի մասին պատկերացումը, սակայն, փոքր-ինչ թերի կլինի, եթե չանդրադառնանք նաև մեկ այլ բնագավառի, որը ևս տարիներ շարունակ եղել է նրա ուշադրության կենտրոնում: Ինչպես նշում է անձամբ Գ. Ջահուկյանը, «Ոչ ոք, բացի ամենամոտ մի քանի մարդուց, չէր կասկածում, որ կա մի տարեթիվ ևս՝ ... 1935 թվականը, երբ սկսվել է իմ բանաստեղծական կյանքը» (ընդգծումը մերն է – Մ. Ս.)¹¹: Պարզվում է՝ մեծանուն գիտնականը գիտահետազոտական բեղուն գործունեությունը զուգընթաց նաև ստեղծագործել է: Քաջածանոթ լինելով արևելյան և արևմտյան պոեզիային՝ Գ. Ջահուկյանի բանաստեղծությունները, բնականաբար, կրել են դրանց ազդեցությունը: Բայց և այնպես գիտահետազոտական աշխատանքներում միշտ ինքնատիպ ու յուրօրինակ դիրքորոշումներ ունեցող մարդը չէր կարող այդպես չվարվել այլ գործունեության մեջ, ուստի անվերապահորեն կարելի է ասել, որ մեծանուն լեզվա-

¹¹ Գ. Ջահուկյան. Բանաստեղծական գիրք, Երևան, 2001, էջ 3:

բանի բանաստեղծական աշխարհը ևս լեցուն է ջահուկյանական մտեցումներով:

Հարստացնելով լեզվաբանության ոլորտները նոր դրույթներով, որոնք դիտարկվում են որպես ամբողջական համակարգեր, փորձելով նպաստել հայ և համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացմանը՝ Գ. Ջահուկյանն աշխատություններում առաջ է քաշել լեզվաբանական զանազան խնդիրների լուծման ճշգրիտ ուղիներ: Կարելի է անվերապահորեն ասել, որ նրա շնորհիվ մի նոր բարձունք է հասել հայ և համաշխարհային լեզվաբանական միտքը:

ЖИЗНЬ И НАУЧНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГЕВОРКА ДЖАУКЯНА

МЕРИ САРГСЯН

Резюме

Академик Национальной академии наук Республики Армения, заслуженный деятель науки, лауреат государственной премии Республики Армения, доктор филологических наук, профессор Геворк Джаукян родился в 1920 году в селе Шахназар (ныне село Мецаван Лорийской области). Г. Джаукян был одним из лучших лингвистов своего времени. Его исследования охватывают очень широкий диапазон: армянская сравнительная грамматика, история армянской грамматики, история армянского языка, армянская диалектология, описание современного армянского языка, индоевропейская и ностратическая сравнительная лингвистика, общая лингвистика, история лингвистики, теория лингвистики.

Труды Г. Джаукяна оказали значительное влияние на его современников и лингвистов последующих поколений. Лингвистические взгляды автора важны не только с точки зрения разработки чисто теоретических вопросов, но также в плане исторического развития лингвистической науки в целом. Роль Г. Джаукяна велика в разработке и применении новой лингвистической теории и принципов описания языка, внедрении новых методов исследования, разъяснении и упорядочении некоторых лингвистических понятий, новой интерпретации языковых фактов. Идеи ученого могут способствовать дальнейшему развитию не только армянского языкознания, но и лингвистической науки в целом. Объективная оценка вклада ученого важна также с точки зрения определения задач, стоящих перед современной лингвистикой.

THE LIFE AND SCIENTIFIC ACTIVITY OF GEVORG JAHUKYAN

MERI SARGSYAN

S u m m a r y

Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia, honored scientist, laureate of the state prize of the Republic of Armenia, Doctor of Philological Sciences, Professor Gevorg Jahukyan was born in the village Shahnazar in 1920 (now the village Metsavan of Lori Province). G. Jahukyan was one of the best linguists of the time. His research occupied broad circles: Armenian comparative grammar, history of Armenian grammar, history of Armenian language, Armenian dialectology, Modern Armenian language description, Indo-European and nostratic comparative linguistics, general linguistics, history of linguistics, theory of linguistics.

The works of G. Jahukyan have had a significant influence on his contemporaries and subsequent generations. The author's linguistic views are important not only in terms of touching upon theoretical issues but also in the historical development of linguistics. The role of G. Jahukyan is great in the field of regulation and specification of some linguistic issues, origination, and application of linguistic theory and new principles, processing of linguistic methods and demonstrating a series of other questions in a new way. The ideas of the scientist will promote the development of not only the Armenology but also general linguistic conception. The objective evaluation of the scientist's input is also important from the perspective of defining issues facing modern Linguistics.

ՄԻՐՁԱ ԶԱՄԱԼ ԶԵՎԱՆՇԻՐԻ
«ՂԱՐԱՔԱՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-Ը ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ XVIII դԱՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿՋԲԵԱԴՐՅՈՒՐ

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

Միրզա Զամալ Զևանշիրի «Ղարաբաղի պատմություն» աշխատությունը գրվել է 1847 թ. Գյուլիստանի մելիքական տան անդամ, գնդապետ Շամիրխան Մելիք-Բեգլարյանի պատվերով և ներկայացվել Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին¹, քանի որ վերջինս «մեծ ձգտում ուներ տեղեկանալու իր ենթակայության ներքո գտնվող յուրաքանչյուր վիլայեթում (երկրամաս, նահանգ – Ա. Մ.) տեղի ունեցած անցյալի իրադարձությունների, ինչպես նաև նախկին խաների երբեմնի իշխանություն, հզորություն և իրավունքների մասին»²: Հարկ է նկատել, որ Կովկասի հռչակավոր փոխարքայի ցանկությունը պայմանավորված էր ոչ թե ակադեմիական հետաքրքրասիրությունով, այլ նախ և առաջ ուներ գործնական նշանակություն՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցած տարածքներում կառավարման առավել արդյունավետ և ընդունելի ձևեր գտնելու ու ներդնելու առումով:

Միրզա Զամալը ծնվել է Ղևանշիր ցեղի ցեղապետերից մեկի ընտանիքում: 1797 թ.՝ Մուլա Փանահ Վազիֆի սպանությունից հետո, զբաղեցրել է Ղարաբաղի խանությունից վեզիրի պաշտոնը և պաշտոնավարել մինչև Մեհտի Ղուլի խանի փախուստը Իրան (1822 թ.): Խանական իշխանությունից հետո ծառայություն է անցել Ղարաբաղի գավառական դատարանում, որտեղ պաշտոնավարել է մինչև 1840 թ.: Վախճանվել է 1853 թ.³: Նա տիրապետել է արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, լեզգիերեն և ավարերեն լեզուներին:

Միրզա Զամալն իր «Ղարաբաղի պատմություն» («Թարիխ-ե Ղարաբաղ») պատմագրական երկը շարադրել է պարսկերենով: Այն առաջին անգամ լույս է տեսել 1855 թ., նշանավոր արևելագետ Ա. Բերթեի ռուսերեն հակիրճ թարգմանությամբ, թիֆլիսում հրատարակվող «Кавказ» լրագրում⁴:

Աշխատության աղբյուրներն թարգմանությունը հրատարակվել է գրանից ավելի քան հարյուր տարի անց՝ 1959 թ., Բաքվում, Ադր-

¹ Мирза Джамал Джеваншир Карабагский. История Карабага. Баку, 1959, с. 61–62.

² Նույն տեղում, էջ 62:

³ Նույն տեղում, էջ 59:

⁴ «Кавказ» (Тифлис), 1855, № 61, 62, 65, 67–69.

բեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից, ռուսերեն նոր թարգմանություն և պարսկերեն բնագրի ֆաքսիմիլի հետ⁵: Երկն ազրբեջաներենով երկրորդ անգամ լույս է տեսել 1989 թ. «Qarabağnamələr» երկհատոր ժողովածուի առաջին հատորում⁶: Այդ գիրքը հրատարակվել է Ղարաբաղյան հիմնահարցի սրման շրջանում և կրում է ակնհայտ քարոզչական բնույթ:

2004 թ. Կալիֆոռնիայի “Mazda” հրատարակչությունը մեկ գրքով լույս է ընծայել սույն երկի և մեկ այլ հայտնի մահմեդական պատմագրի՝ Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատության անգլերեն թարգմանությունները, որոնք իրականացրել է ամերիկահայ վաստակաշատ թարգմանիչ և պատմաբան, Այոնա քոլեջի դասախոս Ջորջ Բոուդուլյանը⁷: Հրատարակչությանը կցված են առաջաբան և հարուստ ծանոթագրություններ, որոնք մեծապես կարող են օգտակար լինել օտարալեզու ընթերցողներին:

Միրզա Ջամալի աշխատությունը բաղկացած է ներածությունից, յոթ գլուխներից, վերջաբանից և տասնչորս փոքրածավալ հատվածներից: Ներածությունում հեղինակը նշում է, որ սույն երկը շարադրել է «իր ընթերցած պատմական հին գրքերի, իրագեկ ծերունիներից լսածների և հիսնամյա ծառայություն ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների հիման վրա»⁸: Թեև նա նշում է, որ օգտվել է պատմական հին գրքերից, սակայն հանվանե չի հիշատակում իր երկի սկզբնաղբյուրներից որևէ մեկը: Սակայն Միրզա Ջամալի և Միրզա Ադիգյոզալ-բեկի երկերի համեմատությունը թույլ է տալիս ենթադրելու, որ առանձին դեպքերում Միրզա Ջամալն օգտվել է Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատությունից, որը գրվել է 1845 թ.⁹: Հետագայում հենց այս երկու աշխատություններն են ընկել Ղարաբաղի խանություն պատմությանը նվիրված մնացած պատմագրական երկերի հիմքում:

Առաջին գլխում, որն ունի պատմաաշխարհագրական ներածություն բնույթ, հեղինակը խոսում է Ղարաբաղի սահմանների, հին քաղաքների, ոռոգման ջրանցքների և մշակաբույսերի մասին: Այստեղ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հնագույն Բարդա (Պարտավ) քաղաքի մասին Միրզա Ջամալի հաղորդումը: «Առաջին քաղաքը, որը կառուցվել է Ղարաբաղի վիլայեթում, դա Բարդա

⁵ Мирза Джамал Джеваншир Карабагский. *Նշվ. աշխ.*, էջ 59–60:

⁶ Mirzə Camal Cavanşir Qarabaği. *Qarabağ tarixi. «Qarabağnamələr»*, I kitab. Bakı, 1989, s. 104–148.

⁷ Two Chronicles on the History of Karabagh. Mirza Jamal Javanshir's Tarikh-e Karabagh and Mirza Adigözal Beg's Karabagh-name. Introduction and Annotated Translation by George Bournoutian, Costa Mesa, California, 2004.

⁸ Мирза Джамал Джеваншир Карабагский. *Նշվ. աշխ.*, էջ 62:

⁹ Мирза Адигезаль-бек. *Карабаг-Наме*. Баку, 1950, с. 44.

բերդաբաղաքն է, – գրում է նա, – որը գտնվում է Թարթառ գետի մոտ, Քուռից երեք փարսախ հեռավորության վրա: Այդ քաղաքի բնակիչները հնում կամ հայեր են եղել, կամ էլ ինչ-որ մի այլ ժողովուրդ»¹⁰, որոնք, ըստ հեղինակի, հետագայում ընդունել են մահմեդականություն:

Հաջորդ գլխում Միրզա Ջամալը հակիրճ շարադրում է Սեֆյան պետությունում Ղարաբաղի կարգավիճակի մասին: Այստեղ մեզ համար առանձնահատուկ կարևորություն ունի այն հանգամանքը, որ աղբյուրների կողմից իրենցը համարվող հեղինակը հստակ մատնանշում է Արցախի մելիքությունների հայկականությունը: Նա, մասնավորապես, գրում է. «Իրանի [այժմ] դրախտաբնակ Սեֆյան թագավորների օրոք Ղարաբաղի վիլայեթը, իլաթները (քոչվոր ցեղերը – Ա. Մ.), Խամսայի հայկական մահալները, որը բաղկացած էր Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջիլաբերդ (Ջրաբերդ – Ա. Մ.) և Թալիշ մահալներից, ենթարկվում էին Գյանջայի (Գանձակի – Ա. Մ.) բեկլարբեկին»¹¹: Հետագայում, ինչպես հաղորդում է մահմեդական պատմագիր Միրզա Աբիգյոզալ-բեկը, 1736 թ. Մուղանի դաշտում գումարված «կուռուլթայի» (ավագանու ժողով) ժամանակ իր գահակալմանը դեմ արտահայտված Գանձակի խանի իշխանությունը թուլացնելու նպատակով՝ Նադիր շահը Խամսայի մելիքներին հանում է տեղի Ջիադոլլի խաների ենթակայությունից և վերցնում է իր ենթակայության տակ: «Եւ Խամսայ մէլիքաց ևս ետ հրաման, – կարդում ենք նրա «Ղարաբաղ-նամէ» երկում, – զի ամենեւին չհնազանդելով խանացն Գանձակայ՝ զինքեանս ազատ գիտացին և զհարկաւորեալ խնդիրս, առանց հաղորդութեան ուրուք, ինքեանք առաջի արացեն շահին»¹²: Փաստորեն, մահմեդական պատմագիրը վկայում է Նադիր շահի կողմից Գանձակի բեկլարբեկությունից անկախ հայկական ինքնավար իշխանության կազմավորման մասին: Այս իրավիճակը շարունակվում է մինչև 1747 թ., երբ Խորասանում դավադրության զոհ է դառնում Նադիր շահը:

Խորասանի դավադրությունը գործունեություն լայն ասպարեզ է բացում թյուրքական քոչվոր ջեհանշիր ցեղի սարջալու ճյուղի ցեղապետ Փանահի համար, որի ծագմանը և Ղարաբաղի խանության հիմնադրմանն են նվիրված Միրզա Ջամալի աշխատության III և IV գլուխները:

Ո՞վ էր այդ քոչվոր ցեղապետը, որին հաջողվում է, օգտվելով Խամսայի մելիքների երկպառակություններից, հաստատվել Արցա-

¹⁰ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 64:

¹¹ Նույն տեղում, էջ 65. ուսերեն թարգմանության մեջ՝ «армянские магалы Хамсе» (էջ 65), աղբյուրներեն թարգմանության մեջ՝ «ермәни Хәмсә магаллары» (էջ 13):

¹² Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 4463, էջ 3ա: Հրատ. տե՛ս Միրզա Աբիգյոզալ-բեկ. Ղարաբաղ-նամէ, աշխատասիրությունը Ա. Մաղալյանի, Երևան, 2016, էջ 37–38:

խի սրտում՝ Շուշիում: Ըստ Միրզա Ջամալ Ջևանշիրի՝ «Փանահ խանի տոհմը հին ժամանակներում Թուրքեստանից եկած բահմանլի ցեղի սարձալու ճյուղից է»¹³: Համաձայն Միրզա Ադիգեզալ-բեկի՝ «Փանահ խանի նախապապը՝ Փանահ-Ալի բեկը, ծագումով սարձալու ցեղից է»¹⁴: Իսկ մահմեդական մեկ այլ պատմագիր՝ Ահմեդ-բեկ Ջևանշիրը գրում է, որ Փանահը սերվել է Ղարաբաղյան քոչվոր ցեղերից¹⁵: Այսպիսով, Ղարաբաղի խանության երեք պատմագիրներն էլ միանշանակ Փանահ խանին քոչվորական ծագում են վերագրում¹⁶:

Միրզա Ջամալ Ջևանշիրը գրում է, որ Փանահը սկզբնապես ծառայություն է անցել Նադիր շահի մոտ: Սակայն, հետագայում, երբ որոշ թշնամիներ նրան ամբաստանում են շահի առջև, Փանահին հաջողվում է փախչել արքունիքից և անցնել Ղարաբաղ: Միրզա Ջամալը նրա փախուստը թվագրում է հիշրայի 1150 (1737/38) թվականով¹⁷: Իսկ հեղինակի այն պնդումը, թե՛ «հատկապես մեծ սխրանքներ նա գործեց Նադիր շահի՝ Ռումի (Թուրքիայի – Ա. Մ.) գորքերի դեմ մղած կռիվներում»¹⁸, գուրկ են պատմական հիմքից, քանի որ շահի մոտ Փանահի ծառայության ընթացքում Թուրք-պարսկական 1730–1736 թթ. պատերազմն արդեն ավարտվել էր, իսկ 1743–1746 թթ. պատերազմը դեռևս չէր սկսվել:

Նադիր շահի սպանությունից հետո, օգտվելով Իրանում ստեղծված քաոսային իրավիճակից, Փանահի ցեղակիցները Խորասանից վերադառնում են Ջևանշիրի գավառը: Փանահը երիտասարդ ցեղակիցներից մի ավազակախումբ է կազմում և «զբաղվում ավազակությունամբ Շիրվանի, Շաքիի, Գանձակի ու Ղարաբաղի վիլայեթներում: Այդ բոլոր երիտասարդներին նա դարձնում է հարուստ և առանց որևէ մեկից կախման: Մնացած ժողովրդի սերը նա գրավում է անասուններ, ձիեր և նվերներ բաժանելով, իսկ որոշ անհնազանդների իրեն է ենթարկում պատիժների և սպանությունների ճանապարհով»¹⁹: Այսպիսով, որոշ ժամանակ անց մեծ ճանապարհների այս ավազակը դառնում է ցեղապետ:

Այդ շրջանում Իրանում գահ է բարձրանում Նադիր շահի եղբորորդի Ադիլ շահը, որն իշխել է 1747–1748 թթ.: Նա Ամիր Ասլան խա-

¹³ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 66:

¹⁴ Мирза Адигезаль-бек. Նշվ. աշխ., էջ 49:

¹⁵ Ахмед-бек Джаваншир. О политическом существовании Карабахского ханства (с 1747 по 1805 год). Баку, 1961, с. 69.

¹⁶ Ղարաբաղի խաների տոհմաձառը տե՛ս ԱКТЫ, собранные Кавказской археографической комиссией (այսուհետև՝ АКАК), т. II. Тифлис, 1868, д. 1415, с. 695.

¹⁷ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 66:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 67:

ներն նշանակում է Ատրպատականի կառավարիչ: Վերջինս, լսելով Փանահի մասին, հանդիպում է նրան և պահանջում հպատակվել Ադիլ շահին: Փանահը, այլ ելք չունենալով, նպատակահարմար է գտնում հնազանդվել, և Ամիր Ասլան խանի միջնորդությամբ, 1748 թ. կարողանում է Ադիլ շահից խանություն ռազամ (շահական հրովարտակ) կորզել²⁰: Ահա այսպես քոչվոր ցեղապետը Նադիր շահի եղբորորդի Ադիլ շահի կողմից բարձրացվեց խանի աստիճանի: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ Ղարաբաղի խանության հիմնադիր հորջորջվող Փանահը խանի տիտղոս ստանալու պահին ղեռնս խամսայում չէր գտնվում, այնտեղ ոչ մի իշխանություն չուներ: Այդ պահին Փանահի խանի տիտղոսը ձև էր առանց բովանդակության:

Իր նորահաստատ իշխանությունն ամրապնդելու նպատակով Փանահը որոշում է անցնել նստակեցության և 1748 թ. Քյաբիրլուի մահալում կառուցում է Բայաթ բերդը²¹, որի տեղի ընտրության գործում կարևոր դեր էր խաղացել քյաբիրլուի ցեղապետի դստեր հետ Փանահի ամուսնությունը: «Քյաբիրլուն մեծ աջակցություն էր ցույց տալիս նրան, – գրում է Լեոն, – և նա արագ կերպով ավագապետի դիրքից անցնում է տիրապետողի դիրքի՝ իրեն հպատակեցնելով Ղարաբաղի տափարակներում թափառող ցեղերը: Ինքն էլ մի թափառական՝ իշխանություն ձեռք բերելուց հետո նա հասկանում է նստակեցության անհրաժեշտությունը»²²: Նստակյաց կյանքի անցնելու անհրաժեշտության գիտակցումը հեղաբեկում էր քոչվորական աշխարհընկալման մեջ:

Խամսայի մելիքները, զգալով իրենց մերձակայքում այս նոր ուժի երևան գալը, միանում են Շաքիի կառավարիչ Հաջի Չելեբիի հետ, որը, ի դեպ, սերում էր տեղի մահմեդականացած հայկական ընտանիքից²³, և արշավում Բայաթի վրա: Փանահ խանն իր ցեղակիցներով ամրանում է Բայաթում ու սկսում պաշտպանվել: Ամրոցի պաշարումը որևէ արդյունքի չի հանգեցնում և դաշնակիցները վերադառնում են իրենց տեղերը, անշուշտ, հաջորդ տարի արշավանքը կրկնելու պայմանով: Նահանջի ճանապարհին Հաջի Չելեբին ասում է. «Փանահն [ընդամենը] խան էր: Մենք եկանք, պատերազմեցինք նրա դեմ և, չհասնելով հաջողության, վերադառնում ենք հետ՝ դարձնելով նրան շահ»²⁴: Այդ արտահայտությունը ժողովրդի մեջ վերածվում է առածի:

²⁰ Նույն տեղում, էջ 71, Միրզա Ադիգեոգալ-բեկ. նշվ. աշխ., էջ 40–41, Միրզա Յուսուֆ Ներսեսով. Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 48:

²¹ Բայաթ ավերակ ամրոցը գտնվում է Կարկառ գետի ձախ կողմում Աղջաբեդիից 26 կմ դեպի արևմուտք:

²² Լեո. Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 265:

²³ Абдул-Латиф-эфенди. История Шекинских ханов. Баку, 1926, с. 5.

²⁴ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 68:

Այս դրվագը մեկ այլ տարբերակով գրի է առել նաև Միրզա Ադիգյոզալ-բեկը, որի երկում Հաջի Չելեբին ասում է. «Փանահ խանն մինչ ցայդ էր որպէս դրամ ինչ անգիր (առանց սիքքայի), մեք եկաք և տուաք նմա գքանդակ»²⁵: Միևնույն դրվագի տարբերակների առկայութիւնը խոսում է այն մասին, որ այս հեղինակներն օգտվել են միևնույն եղելութիւնի տարբեր բանավոր պատումներից:

Փանահ խանը, իր հերթին, գալիս է այն եզրակացութեան, որ հարթավայրում գտնվող Բայաթ ամրոցը չի կարող հուսալի ապաստարան լինել թշնամիների հետագա արշավանքների դեպքում: Նման պայմաններում անգործութիւնը հավասարազոր էր կործանման: Եվ նա, առանց ժամանակ կորցնելու, «իրեն հակառակ ցեղերի և հայ մելիքների դեմ հաջողութեամբ կռվելու համար մի նոր բերդ հիմնեց Թարնակյուտ անունով տեղում, Շահբուլաղ մեծ աղբյուրի վրա, որ համարյա իսախանի սահմանագլուխն էր կազմում: Այդ նոր բերդի մեջ էլ նա շուկա ու մզկիթ կառուցեց և 1749 թվին հաստատվելով այնտեղ՝ սկսեց ընդհարումներ Զրաբերդի և Գյուլիստանի մելիքների հետ, աշխատելով քանդել մելիքների միութիւնը»²⁶: Բերդի տեղի ընտրութեան գործում կարևոր դեր է խաղացել նաև հորդաուս աղբյուրի առկայութիւնը, որի շնորհիվ լուծվել է ամրոցի ջրամատակարարման խնդիրը: Այդ աղբյուրի անունով էլ բերդը կոչվել է Շահբուլաղ: Միրզա Զամալն ամրոցի հիմնումը թվագրում է հիջրայի 1165 թ., որը համապատասխանում է Փրկչական 1751/52-ին²⁷, սակայն, կարծում ենք, առավել ճշգրիտ է Լեոյի նշած 1749 թ.:

Այնուհետև, ինչպես գրում է Միրզա Զամալը, «նա (Փանահ խանը – Ա. Մ.) որոշեց իրեն հպատակեցնել իսամայի հայկական մահալները: Առաջինը Վարանդա մահալի ծեր մելիքը՝ Մելիք-Շահնազարն էր, որը թշնամացած լինելով Չիլաբերդի, Թալիշի (Գյուլիստան – Ա. Մ.) և Դիզակի մելիքների հետ, նպատակահարմար գտավ հպատակվելը»²⁸: Պետք է նկատել, որ այդ ժամանակ Վարանդայի մելիքն ամենևին էլ ծեր չէր: Ըստ Մելիք-Շահնազարյանների տոհմական ավանդութիւնների՝ նրա հայր Մելիք-Հուսեինը մորը՝ Զոհրախանումին, փախցրել է Արցախի սղնախների զորքի՝ դեպի Սյունիք 1724-ին կատարած օգնական ռազմերթի ընթացքում, երբ վերջինս ընդամենը 15 տարեկան էր²⁹: Այստեղից կարող ենք ենթադրել, որ Մելիք-Շահնազարը, ամենայն հավանականութեամբ, ծնված պետք է լինի այդ դեպքից մեկ-երկու տարի անց՝ 1725 կամ 1726 թվականին³⁰: Ըստ երևույթին, Միրզա Զամալը Մելիք-Շահնազարին ներ-

²⁵ Միրզա Ադիգեոզալ-բեկ. նշվ. աշխ., էջ 42, տե՛ս նաև Միրզա Յուսուֆ Ներսեսոփ. նշվ. աշխ., էջ 49:

²⁶ Լեո. նշվ. աշխ., էջ 265:

²⁷ Мирза Джамал Джеваншир Карабагский. նշվ. աշխ., էջ 70:

²⁸ Նույն տեղում, էջ 68:

²⁹ ՄՄ, ձեռ. № 7429, էջ 31բ:

³⁰ Ա. Մաղալյան. Արցախի մելիքութիւնները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007, էջ 173:

կայացրել է այնպես, ինչպես հետագայում ինքն է տեսել կամ նրա մասին լսել տարեց շուշեցիներից:

Այնուհետև Միրզա Ջամալը ներկայացնում է Փանահ խանի արշավանքը խաչեն գավառի տիրակալ Մելիք-Ալլահվերդի Հասան-Ջալալյանի դեմ: «Քանի որ Շահբուլաղի մոտ գտնվող խաչենի մահալի բնակիչները մշտապես գնում էին Փանահ խանի դեմ ատելություն և թշնամություն ճանապարհով, – գրում է հեղինակը, – ուստի նա իր առջև խնդիր դրեց սկզբում ճնշել նրանց ըմբոստությունը և իր հեծյալ ու հետևակ զորքով գնաց նրանց դեմ կովի: խաչենի մահալի բնակիչները, շուրջ երկու հազար հրաձիգներով, իրենց ընտանիքներով ամրանալով դժվարամատչելի վայրում՝ Բալլուղայայում, սկսեցին դիմադրել: Փանահ խանը գրոհեց նրանց ամրությունը: Երեք օր շարունակ բոցավառվեց ճակատամարտի և ընդհարումների հրդեհը: Երրորդ օրը Փանահ խանը գրավեց նրանց ամրությունը...»³¹: Այս տեղեկությունները հաստատում է նաև հայ պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը (Հովսեփ Ներսիսյանց), որն այդ արշավանքի մասին գրում է. «խաչենի մահալում Ուլուբաբի թուր (Մելիք-Ալլահվերդին – Ա. Մ.) ըմբոստանալով՝ տարբեր գյուղերից մարդ է հավաքում ու ամրանալով Բալլուղայա բերդում՝ սկսում կովել Փանահ խանի դեմ: Փանահ խանը մեծ բազմությամբ շարժվում է դեպի նրա ամրությունը: Ուժգին կովից հետո նրանց ամրոցը գրավում է, շատերին կոտորում և սպանվածների գլուխներից աչտարակ (պարսկերեն բնագրում՝ մինարեթ – Ա. Մ.) է կառուցում»³²: Մելիք-Ալլահվերդու սպանությունից հետո Փանահ խանը խաչենի մելիք է նշանակում ինձրիստան գյուղի տանուտեր Միրզախան Մելիք-Միրզախանյանին: Այսպիսով, Արցախի հինգ մելիքություններից երկուսը՝ Վարանդան և խաչենը, այլևս անվնաս էին Փանահի համար, իսկ Գյուլիստանի, Ջրաբերդի ու Դիզակի մելիքությունների վրա նրա իշխանությունը չէր տարածվում:

Հետագա շարադրանքում Միրզա Ջամալը ներկայացնում է Փանահ խանի կռիվները Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքների դեմ: «Մի քանի անգամ տեղի ունեցան ընդհարումներ Ջրաբերդի մահալի Մելիք-Հաթամի և Թալիշի մահալի Մելիք-Յուսուբի (Մելիք-Հովսեփ – Ա. Մ.) հետ, – գրում է նա: – Նրանք երկուսն էլ հարուստ ծեր մելիքներ էին և իրենց տրամադրության տակ ունեին բազմաթիվ մարդիկ»³³:

Այդ մարտերի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Միրզա Ադիգյոզալ-բեկը: Նա, մասնավորապես, գրում է, որ մելիքները «միաբանեալ թշնամանօք ընդդէմ խանին և ի բերդն

³¹ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 69:

³² Միրզա Յուսուֆ Ներսեսով. նշվ. աշխ., էջ 50–51, պարսկ. բնագիր, էջ 83ա:

³³ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 69:

Ջերմկայ (Ջրաբերդի – Ա. Մ.) ամրացեալ՝ ընդ երկար ժամանակ յաճախակի պատերազմեցան: Փանահ խանն ևս ո՛չ սակաւ եցոյց ընդդէմ նոցա զբազմապիսի յարձակմունս, բայց ի պատճառս ամրութեան բերդի նոցա թէև դարձաւ առանց հասանելոյ ի նպատակ իւր, սակայն զարտորայս նոցա, որ ի ստորոտ լերինն, ոտնկոխ արարեալ հեծելագօրաց իւրոց՝ բոլորովմբ ապականեաց զայնս: Եւ զանցս ճանապարհաց ի չորից կողմանց խափանեաց, և այսպէս զամս չորս նեղութեամբ և դառն վշտօք ընդդէմ նորա մնացին ի բերդի անդ յանշարժութեան: Եւ յայնմ ընդ երկար միջոցի բազումք թշնամացան ընդ խանին և յամենայն ժամ, ըստ օրինակի օտար թշնամեաց, հասուցանէին յիշեալ խանին ի պատերազմի վնասս բազումս»³⁴:

Հետագայում այդ մելիքները նահանջում և ամրանում են Գյուլիստանի բերդում: Այնտեղ Փանահ խանի դեմ նրանց մղած հաղթական կռիվներից մեկի վերաբերյալ հետևյալ ուշագրավ տեղեկություններն է հաղորդում կապիտան Օթար Թումանովը՝ 1754 թ. դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային հղած զեկուցագրում. «Հայերը գտնվում էին Սղնախում՝ Գյուլիստանի բերդում: Նրանց գլխավորները մելիք Յուսուֆ և մելիք Աթամ են կոչվում: Սրանք մինչ 1500 [զինված] մարդ ունին: Այս հայերի վրա հարձակվել է Փանախանը, հայերը հաղթել են, Փանախանի մարդկանցից 300-ի չափ սպանել են: Այս պատերազմը եղավ 1754 թ. օգոստոսի 26-ին»³⁵:

Իմադրությունը շարունակվել է նաև հաջորդ տարի, ինչպես տեղեկանում ենք Օ. Թումանովի՝ 1755 թ. մարտի 21-ի զեկուցագրից. «Սղնախի հայերը մեկուսացած են իրենց տեղում, ներկայումս Փանախանին և թուրքերին չեն ծառայում»³⁶: Իսկ նույն թվականի նոյեմբերի 20-ի զեկուցագրով Օ. Թումանովը հաղորդում է Ղզլարի պարետ Իվան Փոն Ֆրանկենգորֆին. «Սղնախի հայոց մելիք Յուսուֆը այստեղ (Վրաստան – Ա. Մ.) թագավորների մոտ եկավ իր ընտանիքով՝ 60-ի չափ մարդկանց ուղեկցությամբ: Սղնախը դատարկվել է: Իրոք հացի թանկություն է եղել այնտեղ... Գյուղացի-ուսույթը Փանախանին է մնացել: Մելիք Ադամն իր ընտանիքը Գյանջա է ուղարկել, ինքը դեռևս իր բերդումն է գտնվում, սակայն ներկայումս ոչ մի տեղից օգնություն չի երևում»³⁷:

Այս տեղեկության իսկությունը հաստատվում է նաև վրաց տարեգիր Պապունա Օրբելիանիի «Քարթլիի անցքերը» պատմագրական

³⁴ Միրզա Ադիգեոզալ-բեկ. նշվ. աշխ., էջ 51:

³⁵ Լ. Մելիքսեթ-բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 107, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в. Документы подобрал, подготовил к печати и предпослал им исследование В. Гамрекели. Тбилиси, 1968, с. 140.

³⁶ Լ. Մելիքսեթ-բեկ. նշվ. աշխ., էջ 108:

³⁷ Նույն տեղում, էջ 109, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., с. 296.

աշխատությունների հաղորդած տվյալներով, որտեղ, մասնավորապես, կարդում ենք. 1755 թ. «Ղարաբաղի Փանա խանն ուժ էր գործադրել Սղնախի [մելիքների] նկատմամբ. հայերն այլևս չէին կարողացել դիմանալ. մի ձորի մելիք [Յ]ուսուֆ-բեկը հարյուր ծուխից բաղկացած խիզաններով տեղահան էր եղել ու, գալով Վրաստան, [տեղ] խնդրել [Վրաց] թագավորներից»³⁸: Այսպիսով, չգիմանալով Փանահ խանի հարածուն ճնշմանը՝ մելիքներն իրենց զորքի և ժողովրդի մի մասի հետ հեռանում են իրենց տիրույթներից ու ապաստանում Գանձակի գավառում, սպասելով հարմար առիթի՝ Փանահի դեմ իրենց արյունոտ գոտեմարտը շարունակելու համար: Ըստ Միրզա Ջամալի՝ յոթ տարի մելիքները մնում են Շամխորում³⁹:

Լսելով Փանահ խանի հզորացման մասին՝ 1757 թ. մեծաքանակ զորքով Շուշիի վրա է արշավում Մազանդարանի կառավարիչ Մուհամմադ Հասան խան Ղաջարը՝ Իրանի ապագա շահ Աղա Մուհամմադ խանի հայրը: Նրա բանակը կանգ է առնում Շուշիի մերձակայքում գտնվող Խաթուն-Արխ վայրում: Սակայն շուրջ մեկ ամիս տևած պաշարումը որևէ արդյունքի չի հանգեցնում, և Մուհամմադ Հասան խանը՝ լսելով Քերիմ խան Զենդի ուժեղացման ու դեպի Արաղ շարժվելու մասին, հապշտապ հետ է վերադառնում⁴⁰: Այս իրողությունն իր արտացոլումն է գտել նաև վրացական սկզբնաղբյուրներում, մասնավորապես՝ արքայազն Դավիթ Բագրատիոնի «Նոր պատմություն» երկում, որտեղ այդ արշավանքի մասին կարդում ենք. «1757 թ. Մահմադ-Հասան Ղաջարը... գրավեց Պարսկաստանի ավելի քան կեսը ու մոտեցավ Շուշուն... Իսկ երբ Շիրազում երևաց Քարիմ-խան Զանդը, այս Մահմադ-Հասան Ղաջարը [Շուշիից] գնաց նրա դեմ»⁴¹:

Մուհամմադ Հասան խանի ձեռնունայն վերադարձից հետո 1761 թ. մեծաքանակ բանակով Ղարաբաղ է արշավում Ուրմիայի կառավարիչ Ֆաթալի խան Աֆշարը, որը Նադիր շահի առաջապահ գործադիր հրամանատարն էր եղել: Նա, ինչպես կարդում ենք Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում, «ի ՌՄԺ (1761) ամի թուականութեանս մերում, ժողովեալ զբազում զօրս ի վերայ իւր, չոգաւ ի վերայ մեծ և անուանի դղեկին Շօշ կոչեցեալ ամրագունեղ բերդին՝ ածել զնա ի ձեռն, և զիշխօղն նորին զՓանահ խանն, որ ի Զիւանշիր յազգէ»⁴²: Ֆաթալի խանի բանակը կանգ է առնում Ասկերանի մոտ գտնվող մի գաղտնավայրում, որտեղ ամրություն է կառուցում և ձմեռում: «Ի սմին ժամանակի, — գրում է Միրզա Ադիբյոզալ-բեկը, — մելիքք

³⁸ Նույն տեղում, էջ 144:

³⁹ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 70:

⁴⁰ Նույն տեղում, էջ 73, Միրզա Ադիբյոզալ-բեկ. նշվ. աշխ., էջ 54–55:

⁴¹ Լ. Մելիքսեթ-բեկ. նշվ. աշխ., էջ 200:

⁴² Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 57:

Ջրաբերդ և Թալիշ գաւառակաց՝ հայազգի Մելիք-Աղամն և Մելիք-Ուսուբն, ևս կառուցին ի միոյ կողմանէ բանակի խանին զամրոցս ընդդէմ Փանահ խանին»⁴³: Վեց ամիս այնտեղ մնալուց հետո կողմերը հաշտութեան բանակցութիւններ են սկսում, և «Փանահ խանն արտաքուստ հնազանդութիւնն է հայտնում նրան ու պատանդ է տալիս իր որդի Իբրահիմ-Խալիլ աղային»⁴⁴: Այդպիսով, Փանահ խանն ընդունում է իր կախովածութիւնը Ֆաթալի խանից:

Որդուն ազատելու նպատակով Փանահը դաշնակցում է հետզհետեւ հզորացող Քերիմ խան Ջենդի հետ, որը Ֆաթալի խանի ռեսերիմ թշնամին էր: Նրանց բանակը 1763 թ. Ուրմիայում պարտութեան է մատնում Ֆաթալի խանին⁴⁵: Ազատելով պատանդի կարգավիճակով Ուրմիայում գտնվող Իբրահիմ-Խալիլ աղային՝ Քերիմ խան Ջենդը 1763 թ. խանի տիտղոս է շնորհում նրան և ուղարկում Ղարաբաղ⁴⁶, իսկ Փանահ խանին իր հետ վերցնելով տանում է Շիրազ: Այնտեղ էլ 1763 թ. Փանահը մահանում է: Թեև, ըստ Ղարաբաղի խանութեան պատմագիրների, Քերիմ խանը նրան Շիրազ էր տարել պատվելու նպատակով, սակայն ակնհայտորեն Փանահը նրա մոտ էր գտնվում պատանդի կարգավիճակով: Այս տեսակետի օգտին է վկայում այն փաստը, որ այդ ժամանակ Քերիմ խանը որպէս պատանդ իր հետ Շիրազ է տանում նաև Ղարաբաղի Քյազիմ խանին և Խոյի Շահբազ խան Դումբուլիին⁴⁷:

Այդ է պատճառը, որ ինչպէս Միրզա Ջամալ Ջևանշիրը, այնպէս էլ Միրզա Ադիգյոզալ-բեկը քար լռութիւն են պահպանում Փանահի մահվան հանգամանքների վերաբերյալ: Սակայն, այդ բացը լրացնում են հայ հեղինակները, մասնավորապէս՝ Ներսեսովն այդ մասին գրում է. «Փանահ խանը դիտմամբ մեռած է ձկանի, մերձավորներին նախօրոք պատվիրելով, որ իր «դին» Ղարաբաղ տանեն, որպէսզի այդպէս Շիրազից դուրս գար, ճանապարհին ձի հեծներ և գնար Ղարաբաղ՝ ստանձնելու այնտեղի իշխանութիւնը: Քերիմ խանը այս հասկանալով ասում է. «Նա իմ լավ բարեկամն էր, պետք է նրա դիակը պատվով ու հարգանքով Ղարաբաղ ուղարկեմ»: Հրամայում է նրա որովայնը պատուել, դեղերով լցնել, որից հետո միայն ճանապարհ է դնում Ղարաբաղ»⁴⁸: Հիրավի, ճակատագիրը իրեն արժանի մահ էր նախապատրաստել ողջ կյանքը խարդավանքների մեջ

⁴³ Միրզա Ադիգյոզալ-բեկ. նշվ. աշխ., էջ 59:

⁴⁴ А. Бакиханов. Гюлистан-Ирам. Баку, 1926, с. 130.

⁴⁵ Л. Строева. Керим-хан Зенд и ханы.– Иран. История и современность. Сборник статей. М., 1983, с. 93.

⁴⁶ Мирза Джамал Джеваншир Карабагский. Нշվ. աշխ., էջ 76, Միրզա Ադիգյոզալ-բեկ. նշվ. աշխ., էջ 62:

⁴⁷ Բ. Կոստիկյան. Ղարաբաղի XVIII դարի պատմութիւնն ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ի.– ՊԲՀ, 1999, № 2–3, էջ 355:

⁴⁸ Միրզա Յուսուֆ Ներսեսով. նշվ. աշխ., էջ 62, տե՛ս նաև Րաֆֆի. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 467:

անցկացրած այս մարդու համար. ավազակապետ դարձած երբեմնի մուսուլմաններ, որին կյանքի արիքները բարձրացրին խանի աստիճանի՝ այնտեղից որպես հասարակ մի խաբեբայի ցած գլորելու համար:

Կարևոր է նշել նաև այն փաստը, որ Փանահն անգամ մի կտոր հող չունենալով իր անասանի մեղքով թյուրումների տարածքում, որը որպես գերեզմանատեղ ծառայեր նրա համար: Այդ է պատճառը, որ հարազատները նրա դիակը տարան և թաղեցին Աղզամի մոտ գտնվող համարեթ վայրում⁴⁹:

Միրզա Ջամալ Ջևանշիրի աշխատության հաջորդ գլուխները նվիրված են Ղարաբաղի Իբրահիմ խանի (1763–1806) իշխանության ժամանակ տեղի ունեցած հիշարժան իրադարձությունների նկարագրությանը: Ներկայացնելով վերջինիս ազդեցության ոլորտները՝ հեղինակը գրում է. «Նրա հրամանները և կարգադրությունները իրականացվում էին Շիրվանի, Շաքիի, Գանձակի, Երևանի, Նախիջևանի, Խոյի, Ղարաբաղի, Թավրիզի, Արդեբեյլի վիլայեթներում և նույնիսկ Մարաղայում և Ղափլանքուհում⁵⁰, որը հանդիսանում էր Իրաքի (Արաղ – Ա. Մ.) և Ադրբեջանի (Ատրպատականի – Ա. Մ.) սահմանագլուխը: [Այդ] վիլայեթների խաների նշանակումն ու հեռացումը կատարվում էր Իբրահիմ խանի հրամանով ու երաշխավորությամբ»⁵¹:

Այս տեղեկությունները կարիք ունեն լրացուցիչ մեկնաբանություն: Բանն այն է, որ այստեղ Միրզա Ջամալն այնքան է գերազանահատել Իբրահիմ խանին, որ անգամ նրա երկի Բաքվի հրատարակիչներն են հարկադրված արձանագրել. «Այստեղ ակնհայտ չափազանցություն է: Ունենալով ուժեղ ազդեցություն չընկալված վիլայեթների կառավարիչների վրա, Իբրահիմ խանը, սակայն, այնքան ուժեղ չէր, որ, չընդունելով Իրանի կառավարությանը, նշանակեր կամ հեռացներ խաների: Առավել ևս, որ Թավրիզի, Խոյի, Մարաղայի և Երևանի խաները երբեք կախված չեն եղել նրանից (ընդգծումը մերն է – Ա. Մ.): Այս չափազանցությունն առկա է նաև Միրզա Ադիբյոզալ-բեկի մոտ, որը, ամենայն հավանականությամբ, իր գիրքը շարադրելիս ձեռքի տակ ունեցել է Միրզա Ջամալի աշխատությունը»⁵²:

⁴⁹ Ա. Մ աղ ալ յ ա ն. Արցախի մեղքով թյուրումները և Ղարաբաղի խանության ծագումը. – «Հայոց պատմության հարցեր», № 10, Երևան, 2009, էջ 110:

⁵⁰ Ղափլանքուհ լեռը գտնվում է Ատրպատականի Միանեի շրջանի հարավ-արևելյան մասում (տես Միրզա Յուսուֆ Ներսեսով. նշվ. աշխ., էջ 63):

⁵¹ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 77–78:

⁵² Նույն տեղում, էջ 78: Պետք է նկատել, սակայն, որ վերջին հարցում ծանոթագրության հեղինակը վրիպել է: Բանն այն է, որ Ադիբյոզալ-բեկն իր պատմագրական աշխատությունը շարադրել է 1845 թ., իսկ Միրզա Ջամալը նրանից երկու տարի անց՝ 1847 թ., հետևաբար՝ այս տեղեկությունը Ադիբյոզալ-բեկի երկից է անցել Միրզա Ջամալի աշխատությանը: Որպես ասվածի ապացույց կարող ենք բերել նաև այն փաստը, որ այս հատվածն առկա է նաև Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Ճամարտացի պատմություն»

Միրզա Ջամալն իր աշխատության վեցերորդ գլխում ներկայացնում է Իրանի Ղաջարական արքայատոհմի հիմնադիր Ադա Մուհամմադ խանի⁵³ դեպի Անդրկովկաս կատարած ավերիչ արշավանքները: Վերջինս 1795 թ. պարսկական զերիշխանությունն Անդրկովկասում վերականգնելու նպատակով իր եղբայր Ալի Ղուլի խանին ուղարկում է Երևանի վրա, իսկ ինքը մեծաքանակ բանակով արշավում է Ղարաբաղ ու պաշարում Շուշի բերդաքաղաքը⁵⁴:

Ադա Մուհամմադ խանի կողմից Ալի Ղուլի խանին Երևանի վրա ուղարկելու մասին հեղինակի հաղորդումը հաստատվում է հայկական սկզբնաղբյուրներով: Այսպես, այդ դեպքերի ժամանակակից Աբրահամ Աստապատցին 1796 թ. հունվարին գրած իր հիշատակարանում վկայում է, որ Ադա Մուհամմադ խանը «զեղբայրն իւր զԱլիղուլի խանն առաքեաց երկոտասան հազարօք առ Նախըռանաւ ի վերայ Երևանայ, որոյ եկեալ բանակեցաւ հանդէպ բերդին, ուր եկն ընդ առաջ նորա աստուածապատիւ Հայրապետն ամենայն Հայոց տէր Ղուկաս երջանիկ կաթողիկոսն Սբ. Աթոռոյն էջմիածնի, իբրեւ քաջ հովիւ եւ փեսայ՝ դնելով զանձն իւր ի վերայ հօտին եւ հարսին հոգեւորի: Եւ մատոյց նմա բազում ընծայս՝ ըստ արժանւոյն՝ ջանահնար լինելով յամենայնի գերծ պահել զՍուրբ Աթոռն ի գլխաւոր վնասուց. եւ առ այս՝ ծախեաց անդէն առ դրան նորա չափազանց դրամս, ոմանց բազում, եւ ոմանց սակաւ տալով»⁵⁵:

Ուշագրավ է Ադա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքի նախօրյակին տեղի որոշ կառավարիչների միջև դաշնակցության մասին Միրզա Ջամալի հաղորդումը, ըստ որի՝ «Թիֆլիսի վալի բարձրաստիճան Հերակլ խանը, Երևանի կառավարիչ Մուհամմեդ խանը և Թալիշի կառավարիչ Միր Մուսթաֆա խանը Իբրահիմ խանի հետ միասին երգվեցին չհնազանդվել Ադա Մուհամմադ շահին, այլ լինել դաշնակիցներ և օգնել միմյանց»⁵⁶: Այս տեղեկության իսկությունը հաստատում է այդ դեպքերի ժամանակակից իրանցի պալատական պատմագիր Մուհամմադ Թաղի Սարավին իր «Թարիխ-ե Մուհամմադի» («Մուհամմադի պատմությունը») աշխատության մեջ, որտեղ, մասնավորապես, գրում է. «Ելք փնտրելով Իբրահիմ խանը նենգաբար միանում է Թիֆլիսի վալիին: Հաղթական հերոսի (Ադա Մուհամմադ խանի – Ա. Մ.) ահեղ գորքի ահից Իբրահիմ խանը անհրաժեշտ է համարում օգնություն խնդրել Շիրվանի

երկում, որի համար ևս որպես սկզբնաղբյուր է ծառայել Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատությունը (տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով. նշվ. աշխ., էջ 63):

⁵³ Նրա մասին տե՛ս Жизнеописание Ага-Магомет-хана Каджара. СПб., 1835.

⁵⁴ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 79:

⁵⁵ Յ. Թումանյանց. Մի պատմական յիշատակութիւն Ադա-Մահմադ-խանի մասին. – «Բանասէր» (Պարիս), 1903, թիւ 6–7, էջ 211:

⁵⁶ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 79, Միրզա Ադիգեոզալ-բեկ. նշվ. աշխ., էջ 66–67:

ու Շամախու, Ղուբայի, Դերբենդի կառավարիչներից և, ապավինելով անօգուտ դաշինքին ու գինակցությանը, գոռոզաբար համառում է»⁵⁷:

Հետագա շարադրանքում Միրզա Ջամալը գրում է, որ Շուշիի պաշարումը տևում է երեսուներեք օր⁵⁸, սակայն, չկարողանալով գրավել այդ անառիկ բերդը, Աղա Մուհամմադ խանի հորդաներն արչավում են Վրաստան և 1795 թ. սեպտեմբերի 12-ին գրավում ու ավերում են մայրաքաղաք Թիֆլիսը: Աղա Մուհամմադ խանի զորքերը Թիֆլիսից հեռանում են սեպտեմբերի 20-ին⁵⁹ և ձմեռում Մուղանի դաշտում:

1796 թ. գարնանը Վրաստանին օգնություն հասնելու նպատակով Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա II-ի հրամանով Անդրկովկաս է շարժվում գեներալ Վ. Ջուբովի գլխավորած ռուսական մի զորախումբ: Սակայն կայսրուհու մահից հետո նրան հաջորդած Պավել I-ը դադարեցնում է ռուսական զորքերի արչավանքը և նրանց հետ կանչում Անդրկովկասից:

Լսելով գեներալ Վ. Ջուբովի զորաբանակի վերադարձի լուրը՝ Աղա Մուհամմադ խանը 1797 թ. երկրորդ անգամ է արչավում Անդրկովկաս: Իբրահիմ խանը, երկյուղելով նրա դատաստանից, ընտանիքով փախչում է Դաղստան իր աներ Ումմա (Օմար) խանի մոտ: «Աղայ Մուհամմադ շահն, մտեալ ի Շուշի քաղաք, — գրում է Ադիգյուզալ-բեկը, — տարածեաց զնեղութեան գձեռն իւր ի չարչարել զքնակիչսն և որպէս զքարբ խածանէր գմեղաւորս և գանմեղս, և զբազումս ի մեծամեծաց, ի ծանօթից, ի բէկաց և յաղալարաց կալեալ եղ ի բանտի»⁶⁰: Ի վերջո, Աղա Մուհամմադ խանի անմարդկային դաժանությունները նրա դեմ են հանում նույնիսկ իր սպասավորներին, որոնց ձեռքով էլ 1797 թ. հունիսի 6-ին շահը սպանվում է իր ննջարանում⁶¹, իսկ պարսկական զորքը խուճապահար փախուստի է դիմում: Միրզա Ջամալ Ջևանշիրի աշխատությունը ուղադրավ տեղեկություններ է հաղորդում Աղա Մուհամմադ խանի՝ 1795–1797 թթ. Անդրկովկաս կատարած արչավանքների մասին և, անտարակույս, ունի սկզբնաղբյուրի նշանակություն:

⁵⁷ Ք. Կոստիկյան. Իրանի պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ խանի 1795 թ. Ղարաբաղյան արչավանքի մասին. — Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVIII, Երևան, 2011, էջ 342–343:

⁵⁸ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 80:

⁵⁹ Ա. Արասխանեանց. Կովկասը հարիւր տարի առաջ: Շահ Աղա Մուհամմադ-խանը Թիֆլիսում. — «Մուրճ» (Թիֆլիս), 1895, № 9–10, էջ 1290:

⁶⁰ Միրզա Ադիգյուզալ-բեկ. Նշվ. աշխ., էջ 78:

⁶¹ Гр. Стенбок. Ага-Мухаммед-шах в Шуше. — «Зурна» (Тифлис), 1855, с. 266; «Տարագ» (Թիֆլիս), 1890, թիվ 10, էջ 142, Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արչավանքների մասին, աշխատասիրությունը Ռ. Տիտանյանի, Երևան, 1981, էջ 204:

Գրքի յոթերորդ գլուխը նվիրված է Անդրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատման պատմությանը: Այս գլխում հեղինակը հակիրճ ներկայացնում է Կովկասի կառավարչապետ իշխան Պավել Յիցիանովի (1802–1806) ղեկավարման շրջանում տեղի ունեցած հիշարժան իրադարձությունները: Միրզա Ջամալն անդրադառնում է իշխան Յիցիանովի գլխավորությամբ 1804 թ. ամռանը տեղի ունեցած Երևանյան արշավանքին, որն ավարտվել է անհաջողությամբ: Պարենի և ռազմամթերքի պահասի պատճառով Պ. Յիցիանովը 1804 թ. սեպտեմբերի 2-ին դադարեցրել է պաշարումը և վերադարձել Թիֆլիս⁶²:

Հետագա շարադրանքում հեղինակը ներկայացնում է իշխան Յիցիանովի և Իբրահիմ խանի միջև Քյուրակ-չայի պայմանագրի կնքումը 1805 թ. մայիսի 14-ին⁶³, որով Արցախն անցնում էր Ռուսաստանի տիրապետության տակ:

1805 թ. Լարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունները հպատակեցնելուց հետո Պ. Յիցիանովը մեկնել է Բաքու, ուր տեղի Հուսեյն-Ղուլի խանի կազմակերպած դավադրության հետևանքով էլ սպանվել է 1806 թ. փետրվարի 8-ին⁶⁴: Սակայն նրա սպանությունը Անդրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատման գործընթացը չդադարեց: Հնի և նորի այդ պայքարի ելքը կանխորոշված էր, որքան էլ նենգ ու դավադիր լինեին խաները:

Այնուհետև Միրզա Ջամալը հակիրճ անդրադառնում է Իբրահիմ խանի սպանությանը: Նա, մասնավորապես, գրում է, որ պարսկական զորքերի մոտենալուն պես «Իբրահիմ խանը Խանբաղիում գտնվող իր ընտանիքը տեղափոխեց ամրոցի (Շուշիի – Ա. Մ.) մոտ գտնվող մի տեղ: Որոշ չարամիտ անձինք այնպես զրպարտեցին նրան մայրի (Դ. Տ. Լիսանեիչ – Ա. Մ.) մոտ, որ վերջինս գիշերով մի գորաջոկատով գնաց նրա կացարանը, որտեղ էլ ճակատագրի չար կամքով սպանվեց Իբրահիմ խանն իր ընտանիքի որոշ անդամների և մերձավորների հետ»⁶⁵: Դժվար չէ նկատել, որ Միրզա Ջամալն ամեն կերպ ցանկացել է սքողել կամ մեղմել Իբրահիմ խանի քայլի ծանր հետևանքները:

Մինչդեռ, իրականում, Իբրահիմ խանի արարքը բացարձակ դավաճանություն էր ռուսական պետության հանդեպ: Այդ մասին հայ պատմագիր Ներսեսովը հանգամանորեն գրում է. «Քանի որ Իբրահիմ խանը շատ ծեր էր, հաճախ նրա գլխում խելահեղ մտքեր էին ծագում: Այս ընթացքում իր մի քանի մերձավորների հետ գաղտնի

⁶² Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 90:

⁶³ АКАК, т. II, д. 1436, с. 705.

⁶⁴ Н. Дубровин. Закавказье от 1803–1806 года. СПб., 1866, с. 478–479; В. Потто. Кавказская война, т. 1. От древнейших времен до Ермолова. М., 2007, с. 257.

⁶⁵ Мирза Джамал Джеваншир Карабагский. Նշվ. աշխ., էջ 96:

որոշում է ղզլբաշների պետությունը հպատակություն հայտնել: Շուշի բերդից դուրս գալով՝ նրա ստորոտում գտնվող Սանգյար-խան կոչված վայրում խփում է իր վրանը, որպեսզի ղզլբաշների բանակի ժամանելուն պես նրանց միանա, ռուսական պետությունը դավաճանի (ընդգծումը մերն է – Ա. Մ.) և այդ կերպ դառնա շահի օրինավոր հպատակը... Այս պատճառով մայրը Լիսանեիչը, որը հայտնի էր «գելու-մայր» («խենթ մայր» – Ա. Մ.) անվամբ, 1806/1221 թ. մայիսի 8-ի գիշերը 100 զինվորներով բերդից դուրս գալով՝ Իբրահիմ խանի վրանը չորս կողմից շրջապատում են ու նրան՝ իր մերձավորների հետ, տեղում կոտորելով՝ ամրոց վերադառնում»⁶⁶: Այսպիսով, ողջ կյանքի ընթացքում այլոց համար խարդավանքի սարգոստայններ հյուսած Իբրահիմ խանը, ի վերջո, կործանվեց սեփական խարդավանքների սարգոստայնում:

Իբրահիմ խանի փոխարեն ռուսական իշխանությունների կողմից Ղարաբաղի խան է նշանակվում նրա որդի Մեհտի-Ղուլին: Սակայն, հարկ է նկատել, որ հեղինակը բնավ չի անդրադառնում Մեհտի-Ղուլի խանի իշխանության շրջանին՝ լուրջ բավարարվելով նշելով, որ «Մեհտի-Ղուլի խանի իշխանության պատմությունը նշված (նշանակման – Ա. Մ.) թվականից մինչև 1822 թ. հոկտեմբերը հայտնի է Ձերդ պայծառափայլությանը (Մ. Ս. Վորոնցով – Ա. Մ.)՝ մատյաններում բարձր պետության աստիճանավորների գրառումներից, ուստի կարիք չկա, որ շարադրվի իմ կողմից»⁶⁷:

Իր աշխատության վերջին փոքրածավալ գլուխներում Միրզա Ջամալն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ղարաբաղի խաների իշխանության ժամկետների, նրանց կողմից հավաքվող հարկերի, Իբրահիմ խանի եկամուտների և ունեցվածքի, նրա խառնվածքի ու բնավորության գծերի, հայտնի զավակների և ծառայողների մասին: Այս տեղեկությունները կարող են օգտակար լինել Ղարաբաղի խանության սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար:

Միրզա Ջամալ Ջևանշիրը հենց այն միջավայրի ծնունդն է, որի մասին գրում է իր երկում: Չնայած հեղինակի աշխարհայացքի որոշակի սահմանափակությանը՝ նրա «Ղարաբաղի պատմություն» աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է Արցախի XVIII դարի պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանման համար:

⁶⁶ Միրզա Յուսուֆ Ներսեսով. *Նշվ. աշխ.*, էջ 92–93:

⁶⁷ Мирза Джамал Джеваншир Карабагский. *Նշվ. աշխ.*, էջ 98:

«ИСТОРИЯ КАРАБАХА» МИРЗЫ ДЖАМАЛА ДЖЕВАНШИРА
КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ АРЦАХА XVIII ВЕКА

АРТАК МАГАЛЯН

Резюме

«История Карабаха» Мирзы Джамала Джеваншира была написана в 1847 году по заказу представителя Гюлистанского меликского дома, полковника Шамирхана Мелик-Бегларяна и представлена наместнику Кавказа М. С. Воронцову. Мирза Джамал написал свое историографическое сочинение на персидском языке.

Книга состоит из введения, семи глав, заключения и четырнадцати мелких глав. В первой главе, которая имеет историко-географический характер, автор говорит о границах Карабаха, древних городах, оросительных каналах и обрабатываемых культурах. В следующей главе Мирза Джамал вкратце пишет о статусе Карабаха в составе государства Сефевидов. Здесь особое значение имеет то обстоятельство, что автор, считающийся со стороны азербайджанцев своим, четко указывает на то, что меликства Арцаха были армянскими образованиями. Третья и четвертая главы работы посвящены происхождению вождя сарыджаллуийской ветви тюркского кочевого джеванширского племени Панах хана и возникновению Карабахского ханства. А в пятой—седьмой главах автор говорит о времени правления Ибрагим хана, о закавказских походах шаха Ирана Ага Мухаммед хана и о переходе Арцаха под власть Российской империи. В последних небольших главах работы Мирза Джамал передает примечательные сведения о сроках правления карабахских ханов, налогах, взимаемых с их стороны, доходах и имуществе Ибрагим хана, его характерных чертах, о знатных потомках хана и служащих. Эти сведения могут быть полезны для изучения социально-экономической жизни Карабахского ханства.

Мирза Джамал Джеваншир вышел из той среды, о которой он пишет в своем труде. Несмотря на некоторую ограниченность мировоззрения автора, его «История Карабаха» является важным источником для освещения многочисленных вопросов, связанных с историей Арцаха XVIII века.

THE “HISTORY OF KARABAKH” BY MIRZA JAMAL JEVANSHIR
AS A PRIMARY SOURCE FOR THE 18TH CENTURY HISTORY OF
ARTSAKH

ARTAK MAGHALYAN

S u m m a r y

The “History of Karabakh” (“Tarikh-e Qarabagh”) by Mirza Jamal Jevanshir was written in 1847, by order of a member of a Gyulistan melik family, Colonel Shamirkhan Melik-Beglaryan, and was presented to the Viceroy of the Caucasus M. S. Vorontsov. Mirza Jamal wrote his historiographical composition in Persian.

The work consists of an introduction, seven chapters, an epilogue and fourteen short passages. In the first chapter, which deals with historical geography, the author speaks about the borders, old towns, irrigation channels and cultivated plants of Karabakh. In the next chapter, Mirza Jamal briefly tells about the status of Karabakh in Safavid Iran. Of special importance is the fact that the author, whom the Azerbaijanians consider as their own, clearly states that the melikdoms of Artsakh were Armenian entities. The third and fourth chapters are dedicated to the origin of Panah Khan, the chieftain of the Sarjallu branch of the Turkic nomadic tribe Jevanshir, and to the foundation of the Karabakh Khanate. In the fifth-seventh chapters, the author speaks about the period of Ibrahim Khan’s rule, the Transcaucasian campaigns of the Shah of Iran Agha Mohammad Khan and the establishment of Russian rule in Artsakh. In the last short chapters of his work, Mirza Jamal provides interesting information about the periods of the rule of Karabakh’s khans, the taxes collected by them, the income and possessions of Ibrahim Khan, his character and habits, his famous children and officials. This evidence can be useful for the study of the social and economic life of the Karabakh Khanate.

Mirza Jamal Jevanshir belongs to the same milieu which he describes in his work. Notwithstanding some narrow-mindedness of the author’s worldview, his “History of Karabakh” is an important primary source for elucidating numerous questions linked to the history of Artsakh of the 18th century.

ԱՆՏԻԿ ՄԻՅՈՍՆԵՐԸ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԷՅԹՈՍԻ ՄԱՍԻՆ
ՈՒՍԱՌՒՆՔԸ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ
ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Վաղնջական ժամանակներից մարդկության առասպելական-բանաստեղծական գիտակցությունը կապում էր երաժշտության և ձայնեղանակների ծագումը երկնային լուսատուների, բնական տարերքների, կենդանական աշխարհի, արհեստների, մարգարեների և առասպելական երաժիշտների ու գիտնականների անուններին: «Առասպելական կերպարներում ամրացվում և դարերի ընթացքում մշակվում էին երաժշտության, նրա ծագման, նշանակության, մարդու վրա ներազդեցության մասին ժողովրդական պատկերացումները»¹: Դրանում էր զրսևորվում Հին աշխարհին բնորոշ առասպելաբանաստեղծական աշխարհընկալումը և հայեցակարգը:

Ըստ Հին Կտակարանի՝ երաժշտության գյուտարարն էր Հովբաղը, Կայենի ցեղից. «Նա էր հայր որ եցոյց զերգս եւ զքնարս» (Ծն. Դ, 21—22): Տարբեր տիպի ավանդություններում կենտրոնական տեղ է գրավում սաղմոսերգու Դավիթ մարգարեի կերպարը: Առասպելներ են հյուսվում Մովսեսի, Սամուելի և այլոց մասին, որտեղ շեշտվում են երաժշտության աստվածային բնույթի, աստվածատուր էություն ու զգայական-էթիկական մեծ ազդեցության գաղափարները²:

Անտիկ աշխարհում չափազանց տարածված էին Պյութագորասի մասին պատմող առասպելները, ըստ որոնց՝ նա հայտնաբերել էր երաժշտական արվեստի հիմունքները, ելնելով տարբեր հնչյունային բարձրությունն ունեցող դարբնոցում լսած մուրճերի հարվածների կամ ջուլհակների հաստոցներին ձգված թելերին հպվելու հնչողությունից: Բազմաթիվ առասպելներ են կապված Ապոլոնի և մուսաների, Օրփեոսի, Լինոսի, Օլիմպոսի, Ամֆիոնի ու Ջեթոսի հետ: Այս-

¹ В. П. Шестаков. От этоса к аффекту. М., 1975, с. 15.

² Մասնավորապես, երաժշտության աստվածային բնույթի և աստվածատուր էության գաղափարները զարգացվում են տարբեր մտածողների կողմից անտիկ, հելլենիզմի շրջանների և ողջ միջնադարի ընթացքում, հասնելով մինչև Նոր ժամանակը: «Երաժշտությունը գեղեցկագույն, սքանչելի աստվածային պարգև է, և այն հոգեհարազատ է աստվածաբանությանը», – գրել է Մարտին Լյութերը իր «Զրույցներում սեղանի շուրջ» աշխատության մեջ [տե՛ս Музыкальная эстетика западноевропейского Средневековья и Возрождения (այսուհետ՝ МЭЗСИВ)]. Составление и общая статья В. В. Шестакова. М., 1966, с. 379].

պես, հայտնի առասպելական ավանդույթյան համաձայն, Օրփեոսի երգեցողության ազդեցությունը շրջապատի վրա այնքան հզոր էր, որ անգամ գազաններն էին հավաքվում նրա ոտքերի մոտ, չնկատելով անպաշտպան կենդանիներին, դանդաղում էր գետերի հոսքը³, շարժման մեջ էին դրվում ծառերն ու քարերը: Իր երգեցողության շնորհիվ, Օրփեոսը կարողացավ հմայել անգամ անդրշիրիմյան աշխարհի տիրակալ՝ Հագեսին և դուրս բերել այնտեղից իր մահացած կնոջը՝ Էվրիդիկին⁴:

Մեկ այլ առասպել պատմում է Թերե քաղաքը կառուցած եղբայրների՝ Ամֆիոնի և Զեթոսի (Ζήθος, Ζήτας, Ζήτης) մասին: Զեթոսը կամ Զետեսը հսկայական քարեր էր կրում և կիտում, իսկ Ամֆիոնը՝ քնար նվագելով, շարժման մեջ էր դնում դրանք և երաժշտության ուժով ստիպում շարվել որոշակի կարգով: Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններում հանդիպում է Զեդեսոս անունը, որը, մեր կարծիքով, առնչվում է հունարեն Ζήθος, Ζήτας կամ Ζήτης ձևերով հայտնի հույն դիցաբանության հյուսիսային քամու աստված՝ Բորեասի և Օրփիայի թևավոր որդիներից մեկի հետ: Զետեսը և նրա եղբայրը պատկանում էին արգոնավտ հերոսների սերնդին: Ըստ ուշ դիցաբանական ավանդույթյան՝ նրանք սպանվել են Հերակլեսի կողմից, որը նրանց գերեզմանի վրա երկու դամբանաքար է կանգնեցրել: Երբ փչում էր հյուսիսային քամին, այդ քարերը շարժվում և երաժշտական ձայներ էին հանում: Զետեսը հիշատակվում է երաժշտության մեջ առկա բնության խորհրդավոր ուժերի իմաստավորման փորձեր պարունակող միջնադարյան առասպելական մեկնություններում⁵:

Ժամանակի ընթացքում այդ առասպելները երաժշտության ծագման և ազդեցության հատկությունների ընդհանուր բնույթի վարկածներից բացի ընդգրկեցին նաև ձայնեղանակների գյուտը, երբեմն բավական հետաքրքրական բացատրություններ պարունակելով ձայնեղանակների կամ նույնիսկ դրանց հնչյունաչարն ընդլայնող-հարստացնող այլևայլ աստիճանների ներմուծման վերաբերյալ: Նման տեղեկություններ կարելի է հանդիպել Պլուտարքոսի, Պլինիոսի

³ «Известно ли вам, что лира этого греческого героя-полубога была далеко не первою, которая обладала способностью очаровывать и людей, и зверей, и даже самые реки? Некий китайский «музыкальный артист» Куи, живший за тысячу лет до предполагаемой учеными эры Орфея, выражается так: «когда я играю на моем кинге, то все дикие звери сбегаются и, очарованные моей мелодией, строятся в ряды предо мной...» (տե՛ս Ե. Ս. Բլատսկայա. Из пещер и дебрей Индостана. М., 2001, с. 264).

⁴ Տե՛ս Միֆы народов мира, т. II. М., 1992, с. 262—264.

⁵ Հմմտ., օրինակ, МЭЗСИВ. Исидор из Севильи. Этимология, кн. III, гл. XVI. О творцах музыки, с. 172.

սի, Դիոդորոս Սիկիլիացու, Արիստիդես Կվինտիլիանոսի և այլոց երկերում⁶:

Այդ առասպելների արձագանքները թափանցել են նաև հելլենիզմի շրջանի հայ հեթանոսական միջավայրի մեջ և, միախառնվելով տեղական պատկերացումներին, ծնել յուրահատուկ մեկնաբանություններ, որոնց մնացուկները հարատևել են անգամ քրիստոնեությունից ընդունումից հետո ողջ միջնադարի ընթացքում:

Պատոնի գեղագիտությունից սերող երաժշտական էթոսի մասին ուսմունքը (կատարասի և միմեզիսի ուսմունքների հետ մեկտեղ) դարձավ անտիկ աշխարհի ամենատարածված ուսմունքներից մեկը, համապատասխանելով հին հույների՝ երաժշտության ճանաչողական, դաստիարակչական և զգայական մեծ ազդեցություն վերաբերող պատկերացումներին: Նորպլատոնականության շնորհիվ այն ներթափանցեց միջնադարյան երաժշտագիտական տեսությունների մեջ, ծառայելով արդեն նորաստեղծ քրիստոնյա եկեղեցու գեղագիտական խնդիրներին: Ողջ միջնադարի ընթացքում Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի ժէ գլխի հայտնի հատվածը երաժշտական էթոսի մասին անտիկ ուսմունքը ցուցանող դասական օրինակ է. «Եւ պարտ է գիտել, թէ մեծ է զօրութիւն երաժշտականին, պէսպէս կրիւք ըմբռնելով զՏօգին եւ տրամադրելով, որպէս յայտ առնեն մրմունջք եւ ողբք, ըստ ինքեանց տրամադրելով զՏօգին: Որպէս վիպասանեալ է ոմանց վասն Աղեքսանդրի, թէ ի խրախութեան ելով, երաժիշտն զպատերազմականն նուազէր զմատն, եւ նա իսկոյն զինեալ արտաքս դիմեաց: Իսկ դարձեալ երաժիշտին զուրախականն բախեալ զնուազս, նա անդրէն դարձեալ ի բազմականսն ճեմէր»⁷:

Իսկ ահա ինչպես է ներկայացնում նույն պատումը Հակոբ Ղրիմեցին իր «Մեկնութիւն տումարի» աշխատության մեջ, որտեղ Ալեքսանդր Մակեդոնացու՝ ձայնեղանակների հանդեպ ունեցած զգայունությունը շարժած անանուն երաժիշտը հանդես է գալիս Օրփեոսի տեսքով կամ որպէս Օրփեոսի անվանակիցը, այսպիսով իրար միահյուսելով երկու տարբեր անտիկ առասպելներ. «Եւ ո՛չ կամի բնաւ մեկնիլ ի քաղցրորակ ձայնադրութենէ նուազարանացն. զոմանս ի ցանկութիւն շարժել, զոմանս ի հեշտութիւն, զոմանս՝ լաց, զոմանս՝ խնդալ <...>, զոմանս՝ քաղցրութիւն, ոմանց՝ ազգ եւ ազինս դարձուցանէ զմիտս, զոմանս՝ անշարժութիւն ի տեղիս իւրեանց, ոմանց՝ ախ, ոմանց՝ վայ, ոմանց՝ կանչ, ոմանց՝ ճիչ, <...> ոմանց՝ սգալ, ոմանք նայեն այս կոյս եւ այն կոյս, ոմանք համբուրեն զմիմեանս, իբր թէ ուրախ են այսօր, ոմանք պարս ոմանց բերեն, այլ ոմանք ազգի-ազգի եւ պէս-պէս ձայնս ածեն ի հնչմանէ նուա-

⁶ Տե՛ս Է. Բ. Герцман. Античное музыкальное мышление. Л., 1986, с. 55, 128, 133.

⁷ Դավիթ Անհաղթ. Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Մ. Ս. Արեւշատյանի, Երևան, 1980, էջ 93:

գարանացն: Եւ տե՛ս զայս ի հռչակաւոր երաժշտապետն Աղեքսանդրի յՕրփեւս, զի ո՛չ միայն բանականք, այլ եւ անբան գազանքն խայտային եւ խնդային, եւ ի խաղս ելանէին յառաջի արքային, յորժամ նուագէր յՕրփեւս: Եւ յաւուր միում, յորժամ արքայ ի խրախուժեան ելով, յՕրփեւս պատերազմականն խաղացոյց զմատն, եւ նա իսկոյն զինեալ արտաքս վազեաց: Իսկ դարձեալ զուրախականն շարժեալ զնուագս, եւ նա անդէն ի բազմականն ճեմէր խրախուժեամբ»⁸:

Հայ միջնադարյան մատենագրության մեջ ձայնեղանակների գյուտին ու մեկնությունը նվիրված գրվածքների թվում առկա են հնագույն բնապաշտական պատկերացումների, անտիկ դիցաբանություն և երաժշտական գեղագիտության ազդեցությունը կրող բնագրեր: Այդ բնագրերի ուսումնասիրությունն էր նվիրված մեր «Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ» մենագրությունը, որի մեջ փորձել ենք հնարավորինս ընդգրկուն լուսաբանել այդ մեկնությունների հետ կապված մի շարք հարցեր⁹:

Հնագույն շերտը ներկայացնող մեկնությունների շարքում է Բարսեղ Կեսարացուն վերագրվող մեկնությունը: Տվյալ բնագիրը պահպանվել է մի քանի խմբագրություններով՝ համառոտ, միջին և ընդարձակ¹⁰, որոնք լայնորեն շրջանառվում էին հայ միջնադարյան ուսումնական նպատակներ հետապնդող ձեռնարկներում ընդհուպ մինչև Գրիգոր Տաթևացի: Իսկ իբրև միջնադարյան ավանդույթի ամփոփում՝ այդ առումով նշելի են Գրիգոր Գապասաքայլանի երաժշտատեսական աշխատությունները: Ստորև կանգ կառնենք այդ մեկնության ընդարձակ խմբագրության վրա, որն աչքի է ընկնում մի շարք ուշագրավ առանձնահատկություններով: Նշենք, որ տվյալ բնագիրը ժամանակին հրատարակել է Հարություն Քյուրտյանը Փարիզում լույս տեսնող «Անահիտ» հանդեսում¹¹: Հրատարակումը իրագործվել է Քյուրտյանի սեփական հավաքածուի մաս կազմող մի ձեռագրի հիման վրա, որը, ըստ նկարագրության, ամենայն հավանականությունով, ժողովածու տիպի մատյան է: Այն գրվել է Հովհաննես Դ Անթեպցի Կիլիկիո կաթողիկոսի համար 1605 թ. Ադանայի Ս. Աստվածածին եկեղեցում՝ գրիչ Գրիգոր երեցի կողմից:

Պետք է նշել, որ սույն բնագիրը բաժանվում է երեք ինքնուրույն հատվածների, որոնք ներկայացնում են ձայնեղանակների գյուտի երեք տարբեր վարկած: Առաջին հատվածում ձայնեղանակների գյու-

⁸ Յակոբ Ղրիմեցի. Տոմարագիտական աշխատություններ. Մեկնություններն տուժարի եւ զինչ ի տուժար, աշխ. Զ. էյնաթյանի, Երևան, 1987, էջ 199:

⁹ Տե՛ս Ա. Արևշատյան. Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Երևան, 2003, տե՛ս նաև նույնի՝ Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, 2013:

¹⁰ Այդ մասին մանրամասն տե՛ս մեր մենագրությունը՝ «Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ», էջ 34—44:

¹¹ Տե՛ս Յ. Քիւրտեան. Երաժշտութեան մասին երկու հատուածներ նախնեաց մատենագրութենէն. — «Անահիտ» (Փարիզ), 1935, էջ 30—34:

տը կապվում է կենդանիների և թռչունների ձայներին, երկրորդը՝ հույն առասպելական երաժիշտների հետ, այսինքն՝ այս հատվածում երաժշտությունը հանդես է գալիս որպես մարդկային գործունեության արգասիք: Ըստ երրորդ, եզրափակիչ հատվածի՝ ձայնեղանակների գյուտը սկիզբ է առնում Հին Կտակարանի մարգարեներից:

Քննվող բնագրի ընդարձակ խմբագրությունը որոշակիորեն տարբերվում է համառոտ ու միջին խմբագրություններից, թեպետև ունի դրանց հետ ընդհանուր հիմք: Ակներև է տվյալ բնագրի հունական հիմքը: Դա արտահայտվում է մի շարք հունական անձնանունների առկայությամբ, օրինակ, Փոկեղիդէս, Սոֆոկլիդէս, Արիստարքոս, Ջեդեոս, Քիւնոսփենէս և այլն, ինչպես նաև՝ ձայնեղանակների հունական աղավաղված անվանումների մեջ, որոնք բերված են հայկականների կողքին: Ուշագրավ է, որ «Քիւնոսփենէս հմուտ ձայնից գազանաց եւ թռչնոց» կամ «Ստեփանոս փիլիսոփա, եղեալ երաժիշտ եւ խելամուտ ամենայն ձայնից կենդանեաց» և այլ տարբեր երաժիշտներին վերագրվող՝ թռչունների ու կենդանիների ձայները վերարտադրելու ունակությունը Օրփեոսի հիմնական արժանիքներից էր: Ըստ հայկական մի ձեռագրի՝ «Որփեւս գուսան, որ զամենայն ազգի հաւի եւ կենդանոյ ձայն անէր, որ ամենայն ի նորա քաղցր ձայնն գային, որ այլ զիրար սպանէին ոչ, եւ ոչ այլ կռուէին, գետն երեկ եբեր»¹²: Այս փաստը վկայում է նման մեկնաբանությունների օրգանական կապի մասին: Օրփեոսյան առասպելի հետքեր կարելի է նշմարել նաև, մեր կարծիքով, քննվող բնագրում առկա հետևյալ բնորոշումներում. «<...> ի մի աղի եւ զմի ձայնի բաժանեաց մինչ ի քարանց անգամ զգալ զխրախտաղմուտնս ձայնից»: Այս արտահայտության վրա ուշագրություն է դարձրել դեռևս Կոմիտասը¹³: Բացառված չէ, որ տվյալ մեկնությունն ամփոփել է իր մեջ հատվածներ ինչ-որ հունական տրակտատից, որը ստեղծվել է ուշ հելլենիզմի ու վաղ միջնադարի սահմանագծին և, որը պատկանում է եթե ոչ Բարսեղ Կեսարացուն, ապա իրեն ժամանակակից որևէ այլ հունագիր հեղինակի, ամենայն հավանականությամբ, Գրիգոր Նյուսացուն, ինչն ապացուցվում է բնագրի մանրամասն վերլուծությամբ ու վերջինիս «Յաղագս կազմութեան մարդոյ» ու «Մեկնութիւն գրեանց սաղմոսի» երկերի հայտնի հատվածների ներգրավմամբ կամ վերաշարադրմամբ նույն բնագրի շարադրանքում¹⁴:

¹² Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 55, 1489 թ., էջ 403ա:

¹³ Տե՛ս Կոմիտաս. Հայոց եկեղեցական եղանակները. Հոգևածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 138: Ն ու յ ն ը տ ե՛ս ն աև՝ Կ ո մի տ ա ս վ ա ը դ ա պ ե տ. Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ երկու գրքով, գիրք Ա, էջ 55—75, տե՛ս նաև՝ Komitas. Armenian Ecclesiastical Melodies, in Komitas, Essays and Articles, English translation by Vatsche Barsoumian. Drazark Press, Pasadena, 2001, pp. 135—152.

¹⁴ Այդ կապակցությամբ տե՛ս մեր հոդվածը՝ «Գրիգոր Նյուսացին և միջնադարյան Հայաստանի երաժշտական գեղագիտական միտքը», «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական տարեգիրք, հ. Դ, Երևան, 2013,

Բնագիրն ունի հետևյալ խորագիրը և մուտքը. «Առաջաբան կցորդարանի. Խաւսք տեառն Բարսեղի յաղագս ձայնից երգոց թէ ուստի կամ յուժմէ գտաւ զոր թարգմանեաց Ստեփանոս փիլիսոփոս ելեալ երաժիշտ եւ խելամուտ ամենայն ձայնից կենդանեաց:

Ստեփանոս երգիչ եւ փիլիսոփա բաժանեաց [զձայնս] ի մասունս ԻԶ, որք են այսոքիկ. բառաչել, պոռոչել, պապչել, բչել, մնչել, կոռոչել ... և այլն: Արդ՝ ետ սորա Թիմզիանոս Թեսբացի, լեալ երաժիշտ, առ մի գործարան զամենայն հաւաքեալ զձայնսն ի միադի զմիադի, ձայնն բաժանեաց մինչեւ քարանց անգամ զգալ զխտղտիւն ձայնիցն եւ ամենայն կենդանեաց: Յետ սորա եւ Թեովսէ, երաժիշտ լեալ՝ այլակերպ ի նոցանէ, յարմարէր նուագարան եւ հարկանէր նովաւ զամենայն կենդանեաց: Ապա Սիներգէս, երգիչ լեալ եւ ուսեալ զնոցայն եւ ի հիւսնականէ գտեալ զԱռաջին ձայն: Ապա Փոկեղիգէս եղբայր նորին երաժիշտ, եգիտ զգիտրիատոնն ի դարբնէ, որ է Երկրորդ ձայն: Ապա Սոֆեկղիգէս, եղբայր սոցին երաժիշտ՝ գտրիպովն, որ է Երրորդ ձայն ի յորձանաց գետոցին, գտեալ ի հոսանաց: Ապա Պիպանոս, քեռորդի սոցին, գտեալ ի ծովային ալեաց դեմարտոնն, որ է Չորրորդ ձայն»¹⁵: Այնուհետև նմանատիպ ձևով շարադրվում է կողմ (օժանդակ կամ պլագալ) ձայնեղանակների գյուտի առասպելը հույն երաժիշտներ Քիւնոսփենէսի, Արքեղէսի, Արիստարքոսի, Պինդաուի, Եւնոմոսի և Արքեղոսի կողմից: Վերջինիս կապակցութեամբ ասվում է հետևյալը. «Բայց Արքեղոս երաժիշտ եգիտ զամենայն ձայնից մաքրութիւնս որոշաբար ըստ աշտիճանաց ինքեանց, քանզի ասէն զնմանէ, եթէ ոչ միայն ի Քերովնէն վարժ է զարուեստն, այլ եւ [ի] ծովայնոցն ուսեալ: Վասն որոյ կողպատեմք զլսելիս, զի մի՛ լուիցէ զայլ քաղցրութիւն ձայնից»¹⁶:

Բնագրի մի շարք հատվածներ դժվարութեամբ են ենթարկվում վերծանութեան և թարգմանութեան, նրանց իմաստը միմյան է մնում, ըստ երևույթին, հունարենին և ձայնեղանակների տեսութեան հիմունքներին անծանոթ հետազոյի գրիչների կողմից թույլ տված աղավաղումների պատճառով: Այդուհանդերձ, բնագիրն ուշագրավ է դրանում առկա մի շարք տերմիններով և բառակապակցություններով, որոնք այլևս երբևէ չեն հանդիպում մեր մատենագրութեան մեջ: Նախևառաջ դա «Առաջաբան կցորդարանի» խորագիրն է: Այն վկայում է, որ տվյալ բնագիրը ժամանակին նախաբան է հանդիսացել կցուրդներ ամփոփող մի հնագույն ժողովածուի համար: Այնուհետև, կողմ ձայնեղանակների համար այստեղ կիրառված է կողմանակ (հոգնակի - կողմանականք) տերմինը, որը ևս այլուր երբևէ չի

էջ 5–12: Տե՛ս նաև՝ А. Аревшатян. Григорий Нисский и музыкально-эстетическая мысль средневековой Армении. — “Opera musicologica”, научный журнал Санкт-Петербургской консерватории, 2013, № 3, с. 4–12.

¹⁵ Տե՛ս Ա. Արևշատյան. Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, «Բնագրեր» բաժին, էջ 98:

¹⁶ Նույն տեղում, էջ 100:

Հանդիպում¹⁷: Ավելին, դիտարկվող բնագրում հիշատակվում են «դարձվածք» եղանակները, մի բան, ինչը սովորաբար չի նշվում նման մեկնություններում: Հետաքրքրական է, որ «դարձվածքների» նշման համար օգտագործվել է «ապականություն» տերմինը, որը նույնպես ուրիշ մեկնություններում չի հանդիպում: Այն, ըստ երևույթին, պետք է հասկանալ որպես բուն ձայնեղանակից շեղվող, այն այլասերող երևույթ, որը, մեր կարծիքով, համապատասխանում է բյուզանդական ֆթորային = φθορά¹⁸: Մեզ համար կարևոր է Կ. Ֆլորոսի նշումն այն մասին, որ պալեոբյուզանդական նեվմագրություն մեջ ֆթորաները գերազանցապես կիրառվել են Երկրորդ և Չորրորդ օժանդակ ձայնեղանակներում և մեղիոբյուզանդական նեվմագրություն մեջ ձայնագրված երգասացությունների հետ համեմատելիս տալիս են կվարտա վեր բարձրացող ելևէջային քայլ¹⁹: Ուստի, պատկերը հիշեցնում է մեր Բկ և Դկ ստեղիների կարգավիճակը: Սակայն բացառված է, որ այդ նշանը կիրառվել է նաև այլ ձայնեղանակներում: Օրինակ, Մանրուսման եղանակների ցուցակներում Գկ կամ Վառ ձայնի մանրեղանակների թվում ուշագրավ են «Յեղմուկ, Յեղմն» անվանումները: Ելնելով դրանց ստուգաբանությունից²⁰, այդ անվանումները կարող են նշել մի մանրեղանակ կամ որոշակի ցուցմունք, որն ազդարարում է ձայնեղանակի փոփոխումը, այլայլությունը, այսինքն՝ ձայնեղանակից ձայնեղանակ մոդուլյացիոն շեղումը կամ անցումը²¹: Նշված գուգահեռը ևս մի անգամ հաստատում է բնագրի հունական հիմքը և բացատրում այն հանգամանքը, թե ինչու «ապականություն» տերմինը՝ որպես օտարածին պատճե-

¹⁷ Բացառություն է կազմում արդեն նոր ժամանակներում Գր. Գապասաքալյանի «Գիրք երաժշտական»-ում հանդիպող նույն եզրը, ինչը բացատրվում է նրանով, որ նա օգտվել է իր տեսադաշտում եղած մի շարք միջնադարյան ձեռագրերից, որոնց կազմում, ըստ երևույթին, եղել է նաև տվյալ «ձայնից» մեկնությունը: Գապասաքալյանն այն մեջբերում է գրեթե բառացիորեն [տե՛ս մեր մենագրությունը «Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը», Երևան, 2013, էջ 48, նաև՝ Գ. Гапасакалян. Книга о музыке. Перевод с габара и введение А. С. Аревшатян, примечания А. С. Аревшатян и Л. О. Акопяна. Ереван, 2017.

¹⁸ φθορά – փչացում, քայքայում – իխոսի՝ ձայնեղանակի փոփոխման ցուցիչ:

¹⁹ Տե՛ս К. Floros. Das universal Neumenkunde, teil III, Kassel, Bärenreiter-Antiquariat, 1968, S. 99.

²⁰ «Յեղումն» բառը «Նոր Հայկազյան բառարանը» բացատրում է հետևյալ կերպ. «1. Հուն. Τροπή, παρατροπή, լատ. Versio, conversio. Այլ ալլուիթիւն, փոփոխումն, յեղափոխութիւն, պէսպէսութիւն, շրջաշրջումն, 2. Յեղումն. եղանակ տարւոյ. արևադարձ. շրջան լուսնի և քառորդք նորա» (տե՛ս Հ. Բ, Երևան, 1981, էջ 355): Երկու դեպքում էլ իմաստը հստակ է՝ փոփոխում, շրջում, պեսպէսություն և այլն:

²¹ Այդ մասին տե՛ս նաև մեր հոդվածը «Մանրուսման եղանակների անվանումների նշանակության մասին», «Մանրուսում», հ. Ա, Երևան, 2002, էջ 196—197:

նահանված բառ, այլևս չի հանդիպում մյուս բնագրերում: Չորրորդ կողմեղանակից հետո հիշատակվում է նաև հինգերորդ ձայնը (« ... եւ միւս եւս այլ ձայն գտեալ որ ասի հինգերորդ»), որը ներկայումս դժվար է նույնացնել որևէ ձայնեղանակի հետ: Գուցե բնագրի կազմողը նկատի է ունեցել ստեղծներից որևէ մեկը, սակայն շարադրանքն այստեղ ակնհայտորեն թերի է մնացել:

Բնագրում, համառոտ և միջին խմբագրությունների համեմատությամբ, ընդլայնված է նաև հունական անձնանունների ու երաժշտական տերմինների ցանկը: Անձնանուններից հատկապես ուշագրավ են Փոկեղիդէս, Արիստարխոս, Պինդառ անունները, որոնք ցանկության դեպքում հնարավոր է անգամ նույնացնել երաժշտական արվեստի հետ անմիջականորեն առնչվող հին հունական հայտնի իրական դեմքերի հետ:

Երաժշտական տերմիններից նշելի են. ա) մելիտովն – հուն. μελικός, μελικτάς, μελωδός (երգիչ, երգեցող, բանաստեղծ) և ինչպես թարգմանիչն է փորձում տեղնուտեղը բացատրել՝ «այսինքն՝ ձայնագրողն (այդ դեպքում պետք է լիներ μελογράφος) վարժեալ գերաժշտականութեան ամենայնի գեղեցկապէս», բ) մեղիտէս – μελίτος (մեղրից պատրաստված, մեղրի պես քաղցր), «գի դարդարեսցէ զմեղիտէսն եւ զամենայն ձայնագրեալսն», գ) մեղետիկովն – հավանաբար նույն նշանակությամբ, «զարդարեսցէ զմեղետիկովն ձայնագրելով», դ) տրոպով – հուն. τρόπος (եղանակ, ձայնեղանակ) «տրոպով եւ եղանակովք, քաղցրութեամբ երգողին գեղմամբ»: Ուշագրավ է նաև «կքղեւտո» ակնհայտորեն հունական հնչողությունն ունեցող աղավաղված բառը, որը բնագրում բացատրվում է որպես «կողմանակ երկրորդ ձայնի»: Առայժմ մեր պրպտումները թույլ չեն տալիս ստույգ նույնացնելու այս բառը որոշակի հունական տերմինի հետ, այնուհանդերձ կարելի է ենթադրել, որ տվյալ աղավաղումը աղերսներ ունի հետևյալ բառերի հետ. – 1) κλειτός - փառավոր, փառաբանված, ճոխ և 2) κλήξω, κληίξω - փառաբանել, գովերգել, գովաբանել, ինչն այստեղ կարող է մեկնաբանվել իբրև երկրորդ կողմեղանակի երաժշտական էթոսի հատկանիշ²²:

Հատկանշական են հին հունական դիցաբանության մի քանի հերոսների դաստիարակ և երաժշտության ուսուցիչ՝ կենտավրոս Քերոնի կամ Քիրոնի (Χηρών), ծովանուշների և Ուրիսականից հայտնի՝ նրանց ձայների սպանիչ քաղցրության դեմ արգոնավտների մոմով խցանված ականջների մասին պատմող դրվագից եկող արձագանքները: Հնարավոր է, որ վերջինս այստեղ հանդես է գալիս որպես հին աշխարհիկ հեթանոսական երաժշտության և նրա դեմ պայքարելու այլաբանություն:

²² Древнегреческо-русский словарь, сост. И. Х. Дворецкий, т. I. М., 1958, с. 951, 953.

Բնագրի վերջին երկու հատվածներում ուշագրավ է մի շարք երաժշտական գործիքների (տավիղ, քնար, ծնծղա, փող, սրինգ, թմբուկ, սաղմոսարան) հիշատակությունը: Թեև դրանք ակնհայտորեն փոխառնված են Հին կտակարանից, սակայն այդ անվանումների մեջբերումն ու տեղայնացումը վկայում է հելլենիստական և վաղ քրիստոնեական Հայաստանում հիշատակված գործիքների կենցաղավարման օգտին:

Բնագրի վերջին պարբերությունը ուղղակիորեն կրում է Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» և «Մեկնութիւն գրեանց Սաղմոսի» երկասիրությունների որոշ հատվածների ազդեցությունը, ինչին ավելի հանգամանալից կանդառառնանք ստորև:

Եզրափակիչ պարբերության առաջին հատվածը բոլորից շատ է աղճատվել հետամուտ աղավաղումներից, նրա որոշ հատվածների նախնական իմաստը գրեթե անհնար է վերականգնել: Այդուհանդերձ, դժվար չէ կռահել, որ նշված պարբերության մեջ արտացոլվել են կապադոկիացի հայրերի ապրած ժամանակի վոկալ և գործիքային երաժշտության եկեղեցում կիրառելու հետ կապված թե՛ բանավեճերի արձագանքները: Մեկնության հեղինակը, ով էլ որ լինի, ձգտում է հիմնավորել զուտ վոկալ նորաստեղծ հոգևոր երգարվեստի (սաղմոսերգություն, օրհներգություն) առավելությունը հնի՝ հեթանոսական տաճարներում հնչող վոկալ-գործիքայինի հանդեպ: Այդ նպատակով նա համառոտ վերաշարադրում է Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» և «Մեկնութիւն գրեանց Սաղմոսի» երկերի համապատասխան հատվածները, որոնք դիտարկված բնագրում վերարտադրված են հետևյալ կերպ. «Արդ՝ մարդկանց առաջատարն ոչ վայել է գործարան երգոց, որպէս ի հնումն, այլ եղիցի կոկորդն փոխանակ փողոյն, ունչս՝ փոխանակ սրնկի, կզակն՝ ծնծղայից, լեզուն՝ տնկընկոցի, բոլոր մարմինն՝ թմբուկ, միտքն՝ տավիղ, հոգին՝ քնար, զգայարանքն՝ սաղմոսարան. Զի գրեալ է, թէ մարդն է գործի աւրհնութեան»²³:

Հարկ է նշել, որ հատկապես տվյալ պարբերությունը Գրիգոր Նյուսացու հիշատակված երկերի առավել հաճախ մեջբերվող հատվածն է եղել ոչ միայն հայ միջնադարյան երաժշտագեղագիտական գրվածքներում: Դրանում արծարծված կարևոր գաղափարներն իրենց մեծ ազդեցությունն են թողել նաև հետագա դարերի բյուզանդական, լատինալեզու, արաբական և սլավոնական նմանատիպ երկասիրությունների վրա: Այստեղ շարադրված գաղափարները առնչվում են Գրիգոր Նյուսացու՝ մարդու մարմինը որպես յուրահատուկ ինքնակառավարվող համակարգի՝ միկրոկոսմոսի տեսությունը: Այս գաղափարները սերում են դեռևս անտիկ երաժշտական տեսություն

²³ Ա. Արևշատյան. Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 100: Հմմտ. Գրիգորի Նիսացու Տեսություն ի մարդոյն կազմութիւն.— ՄՄ, ձեռ. 468, ԺԲ—ԺԳ դդ., էջ 23ա—23բ: Տե՛ս նաև՝ J.-P. Migne, կամ. Patrologia graeca cursus completus, t. 44, Paris, 1858. p. 149, 442; МЭЗСНВ, с. 109, 111.

մեջ երաժշտական էթոսի, այսինքն՝ երաժշտության ճանաչողական, դաստիարակչական և զգայական ազդեցություններից ու իմաստավորումից, ինչն իր արտահայտությունն է ստացել հին հունական ճայնեղանակներին վերագրվող ինքնահատուկ զգայական արտահայտչական ներգործությունը վերաբերող ուսմունքի մեջ: Դրա հետ սերտորեն փոխկապակցված է նաև երաժշտության թերապևտիկ բարերար ազդեցության գիտակցումը, ինչը նույնպես իր արտացոլումն է ստացել Գրիգոր Նյուսացու աշխատություններում: Օրինակ, «Մեկնութիւն գրեանց Սաղմոսի» աշխատության մեջ հիշատակելի է այն հատվածը, որտեղ Գրիգոր Նյուսացին անդրադարձել է երաժշտության բուժիչ հատկություններին որոշակի հիվանդագին վիճակների դեպքերում: Սույն հատվածը, նկատի ունենալով նրա այժմեականությունը, բերում ենք աշխարհաբար թարգմանությունամբ: Ահա, թե ինչ է գրել Գրիգոր Նյուսացին. «Այսպես պետք է բացատրել աստվածային երաժշտության և այն մեծ գործերը, որ պատմության վկայությունը վերագրում է Դավթին. ամեն անգամ, երբ Դավիթը գտնում էր Սավուղին հոգեկան մռայլվածության վիճակում, նա այնպես էր բուժում նրա հիվանդությունը իր երգերով, որ վերադարձնում էր նրան սթափ գիտակցությունը: Այստեղից պարզ է, թե ինչ է ակնարկում մեղեղու մեջ թաքնված առեղծվածը. այն սովորեցնում է, թե ինչպես հանգստացնել բազմատեսակ կենցաղային իրադարձությունների ազդեցության տակ մեր մեջ գոյացող հիվանդագին գրգռվածությունները»²⁴: Փաստորեն, Գրիգոր Նյուսացին մատնանշել է երաժշտության (հատկապես, հոգևոր երաժշտության, որը նա անվանում է աստվածային երաժշտություն) թերապևտիկ ազդեցության դերը սթրեսներից առաջացած դեպրեսիաների հաղթահարման գործում, ինչը հրատապ է նաև մեր օրերում ու լայնորեն կիրառվում է միջազգային հոգեթերապիայի և հոգեվերլուծության բնագավառներում: Այստեղ ցայտունորեն արտահայտվել է նաև երաժշտական էթոսի անտիկ ուսմունքի բազմատեսակ դրսևորումներից՝ հայրաբանության մեջ հատկապես շեշտվող նրա մաքրագործող, կատարսիկ կողմը: «Երաժշտության հիմնական առաքելությունը, համաձայն եկեղեցու հայրերի ուսմունքի, կրքերից ձերբազատվելն է, ինչի օգնությամբ ձեռք է բերվում ոգու ապաքինումը և հոգու պարկեշտությունը»²⁵:

Ինչպես տեսանք, բնագրում խոսվում է ոչ միայն ճայնեղանակների, այլ նաև երաժշտական գործիքների ու գործիքաշինության մասին, ինչին անդրադարձել է երաժշտագետ Ա. Քոչարյանը իր հայկական ժողովրդական գործիքներին նվիրված ուսումնասիրությունների մեջ²⁶: Մեկնության մեջ ուշադրավ է այն հանգամանքը, որ առասպելական երաժիշտներից մեկը՝ ոմն Թիմգիանոս Թեզքացին,

²⁴ In inscriptiones psalmodum, MPG, 44, p. 442; МЭЗСНВ, с. 110.

²⁵ Տե՛ս В. П. III естаков. От этого к аффекуту, с. 78—79.

²⁶ Տե՛ս Ա. Քոչարյան. Փշողական և հարկանային գործիքները Հայաստանում, Երևան, 2005, էջ 9:

գործիք է շինում. «... առ մի գործարան զամենայն հաւաքեալ զձայնս ի միադի զմիադի»²⁷: Այսինքն, այստեղ հիշատակվում է Պյոլթագորասի գյուղը հանդիսացող միադին, այն է՝ մոնոխորդ գործիքը, որի միակ ձգված կամ թուլացած լարին բախելով, Պյոլթագորասը, ըստ ավանդույթյան, հայտնաբերել է օբերտոնային շարքը և նրա հիմնական հնչյունների միջև ընկած ձայնամիջոցների թվային հարաբերակցությունները:

Հետաքրքրական է հետևել, թե ինչպես, ժամանակի ընթացքում միջնադարյան մատենագիրների և գրիչների շնորհիվ, տարբեր բնագրերը միանում են, բանաքաղվում, մեկը մյուսին ազուցվելով: Երբեմն դրանք գուցե գործում են մի մեկնույթյան շրջանակներում իրարից բոլորովին անկախ գեղագիտական հիմնադրույթներ պարունակող հատվածներ:

Վերոհիշյալ աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ հայ միջնադարյան երաժշտական տեսագեղագիտական միտքը, սկիզբ առնելով հնագույն բնապաշտական պատկերացումներից, օրգանապես յուրացրել է անտիկ գեղագիտության մեջ մշակված երաժշտական էթոսի մասին ուսմունքը, որտեղ միթոսն ուներ իր կայուն տեղը, հետագայում տեղը զիջելով աստվածաշնչական ըմբռնումներին և հայեցակարգին:

АНТИЧНЫЕ МИФЫ И УЧЕНИЕ О МУЗЫКАЛЬНОМ ЭТОСЕ В ТОЛКОВАНИИ, ПРИПИСЫВАЕМОМ ВАСИЛИЮ КЕСАРИЙСКОМУ

АННА АРЕВШАТЯН

Резюме

В средневековой армянской литературе, в числе толкований, посвященных изобретению гласов, заслуживает внимания толкование, приписываемое Василию Кесарийскому, которое озаглавлено «О гласах». Пространная редакция анализируемого текста определенно отличается от краткой и средней редакций, хотя и имеет с ними общую основу. Очевидна греческая основа данного текста. Это проявляется в наличии ряда греческих собственных имен, а также в искаженных греческих названиях ладов, которые приводятся наряду с их армянскими аналогами. В последних двух фрагментах текста примечательно упоминание ряда музыкальных инструментов (арфа, лира, кимвалы, рог, свирель, барабан, псалтерион). Хотя все они явно заимствованы из Ветхого Завета, однако упоминание и локализация их названий свиде-

²⁷ Տե՛ս մեր «Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ», էջ 98:

тельствуют о бытовании этих инструментов в эллинистической и раннехристианской Армении. Последний фрагмент текста носит прямое влияние некоторых частей трудов Григория Нисского «Об устройении человека» и «Толкование к надписанию псалмов».

Анализ вышеупомянутых источников показывает, что армянская средневековая музыкальная эстетико-теоретическая мысль, берущая начало с древнейших мифопоэтических представлений, органично впитала выработанное в античной эстетике учение о музыкальном этосе, в котором миф имел свою устойчивую роль, уступив в дальнейшем место библейской концепции.

THE ANTIQUE MYTHS AND THE DOCTRINE OF MUSICAL ETHOS IN THE INTERPRETATION ATTRIBUTED TO BASIL OF CAESAREA

ANNA AREVSHATYAN

Summary

Among works devoted to the invention and interpretation of musical modes in the Armenian medieval literature there is an interpretation under the title "On the modes" attributed to Basil of Caesarea. The prolix redaction of the examined text is definitely different from the brief and middle redactions, even if it has a common basis with them. The Greek origin of that text is evident. This is manifested by the presence of a number of Greek personal names as well as altered Greek mode names which are cited with their Armenian analogues. The last two fragments of the text are interesting for mentioning a number of musical instruments (harp, lyre, cymbals, trumpet, pipe, drum and psaltery). Even if they are obviously borrowed from the Old Testament, their quoting and localization give evidence about the existence of the abovementioned instruments in Armenia at the Hellenistic and early Christian periods. The last part of the text is bearing the direct influence of some parts of the works "On the Man's Organization" and "Interpretation of the Writings of the Psalter" by Gregory of Nyssa.

The analysis of the abovementioned sources shows that, originating from the most ancient naturalistic notions, the Armenian musical theoretical-esthetical thought has organically mastered the doctrine on the musical ethos elaborated in the Antic esthetics in which the mythos had its stable place, later letting it to Biblical conceptions and mentality.

ՄԵՏԱՂԵ ԶԵՆՔԵՐԸ, ԳՈՐԾԻՔՆԵՐՆ ՈՒ ՍԱՐՔԵՐԸ
ՀՄԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՍՏՂԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Տարբեր առարկաների մոգական գորութիւնը ժողովրդական պատկերացումներում պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից մեկը նյութն է՝ տվյալ դեպքում մետաղները: Մետաղե առարկաները ոչ միայն նյութին տրվող գերբնական գորութեամբ են գործում, այլև նրանց իրական ու մոգական գործառույթներով և տարբեր գաղափարական իմաստներով, որոնք կնշվեն գուգահեռաբար:

Երկնաքարային, սովորական երկաթի և պղնձի մասին ուշագրավ վկայութիւններ կան հնագույն ժամանակներից. օրինակ՝ Եգիպտոսում գտնված մ. թ. ա. IV հազարամյակի այն առարկաները, որոնցում երկնաքարային երկաթը և ոսկին հավասարաբեք թանկագին նյութեր էին¹, Անատոլիայում՝ այն զարդերը, կուռքերը, կրոնական արարողութիւններում օգտագործվող մյուս իրերը, որոնց ամրութեան, հավերժութեան, մաքրութեան խորհրդանշական իմաստներ էին վերագրվում խեթական սեպագիր տեքստերում և այլն: Երկաթե աշխատանքային գործիքներն ու մարտական զենքերը, գործնականից բացի, ծիսական նշանակութիւն ունեին (երկաթե լախտը, գուրզը, մեխը կամ բրիկը, մուրճը, կացինը և այլն), քանի որ ծիսական տեքստերում են հիշատակվում²: Ինչպես նշում է արևելագետ Վ. Արձինբան, ծեսի համար պատրաստվող տիեզերական տարրերից էին մետաղե երկինքն ու երկիրը: Թագավորի և թագուհու համար կատարվող հին խեթական ծեսում, որը սերտորեն կապված է տեղական անատոլիա-հայթիական ավանդույթի հետ, ասվում է, որ ծեսը գլխավորողի ձեռքին այն դալն է, որի մեջ գտնվում են «մեկ երկաթե երկինք և մեկ (երկինք) պղնձից, ինչպես նաև 9 մեխ... Մեկ այլ, հավանաբար նորխեթական ծեսում, «ամպրոպի աստծու մարդն» օգտագործում է երկինքը, գետինը և պղնձե ու բրոնզե իննական մեխ», մի ուրիշ ծիսական տեքստում «երկինքը հանգչում է երկաթե սյուների

¹ Г. Арешян. Первые железные изделия Ближнего Востока и Балканского полуострова. — «Вестник общественных наук» АН АрмССР, 1975, № 12, с. 86 — 99.

² Г. Г. Гиоргадзе. Производство и применение железа в Центральной Анатолии по данным хеттских клинописных текстов. — Древний Восток. Этнокультурные связи. М., 1988, с. 238, 248 — 249.

վրա»³: Հաճախ նույնանում են կայծակը, երկաթն ու պողպատը. սրա վկայություններից է, որ շանթ բառը նշանակում է ոչ միայն կայծակ, այլև երկնքից թափվող կրակ ու երկաթ, ապա շիկացած երկաթ ու խաչերկաթ⁴: Նշենք՝ վրացերենում շանթի նշանակում է ատրաշեկ՝ շիկացած երկաթ⁵: Իսկ պողպատը հայկական ավանդույթյան մեջ ծագում է կայծակից՝ ամպրոպի ժամանակ երկնքից է ընկնում և խորը խրվում գետնի մեջ: Նախքան կայծակի հարվածելը պետք է թաղիքե յոթ գորգ թրջել և փռել: Կայծակը գորգերը ծակում է, բայց մնում է երկրի մակերեսին որպես պողպատ: Նրանից կարելի է այնպիսի դաշույններ և սրեր սարքել, որոնց հարվածներից առաջացած վերքերը չեն բուժվում⁶: Երբեմն թուրը երկնքում, ամպերի մեջ հրեղեն կայծակներով են կռում, երբեմն էլ այն ծագում է երկնային ծովից: Առասպելներում ամպրոպային աստվածներն ու դյուցազուհիներն են այն բանեցնում. այդ թուրը կտրում է ամեն ինչ՝ երկաթ, ժայռ, մի հարվածով հազարավոր մարդիկ է սպանում: Թրի տերը կարող է և՛ հաղթել բոլոր դեերին՝ ստրուկ դարձնել, և՛ կարող է բուժել մահամերձ հիվանդին, եթե նրա մոտ դնեն այն⁷:

Չարի դեմ պայքարում էական է, որ մետաղե առարկաներից շատերը սուր են՝ ծակող, խոցող, փորող, կտրող, սպանող: Սրանցից են ասեղը, քորոցը, սանդերքը, դանակը, դաշույնը, թուրը, սուրը, կացինը, սակրը և այլն: Չարքերից պաշտպանվելու ժամանակ շամփուրի ծակելու, խոցելու հնարավորությունն է դառնում առաջնայինը: Գյուղատնտեսական առարկաներից էլ մանգաղն այնքան էր կարևորվում, որ թուրը որոշակի մոգական արարողություններում մանգաղի նմանությունամբ էր գործի դրվում (սրան կանդրադառնանք քիչ ուշ): Զենքերի ու գործիքների հետ մեկտեղ հմայության մեջ օգտագործվում են տարբեր սարքեր, ինչպես օրինակ խաչերկաթը և, հատկապես, բացվող-փակվող իրերը՝ ծալովի դանակը, կողպեքը, բանալին և այլն: Օրինակ՝ «Սատանայի հարսնքի» - օդապտոյտի մեջ պետք է մի գմելին ձգել, որ չար քամին բարձրացնող սատանայի մատը կտրուի ու օդապտոյտը հանգստանա»⁸:

³ В. Г. Ардзимба. К истории культа железа и кузнечного ремесла (почитание кузницы у абхазов). — Древний Восток. Этнокультурные связи, с. 296 — 297.

⁴ Մ. Աբեղյան. Երկեր, Հ. է, Երևան, 1975, էջ 74:

⁵ Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, Հ. 3, Երևան, 1977, էջ 494:

⁶ Г. Бунатов. Из поверий, предрассудков и народных примет армян Эчмиадзинского уезда. — Сборник материалов для описания местностей и племен Кавказа (далее — СМОМПК), вып. XVII. Тифлис, 1893, с. 179.

⁷ Մ. Աբեղյան. Երկեր, էջ 72, նույնի՝ Հայ ժողովրդական վէպը. — «Ազգագրական հանդէս» (այնուհետև՝ ԱՀ), XVII գիրք, №1, Թիֆլիս, 1908, էջ 8—9, Ե. Լալաեան. Զառարք. — ԱՀ, Ա գիրք, Շուշի, 1896, էջ 350:

⁸ Ե. Շահագիրյան. Նոր-Նախիջևանը եւ նոր նախիջևանցիք. — ԱՀ, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 46:

Երկաթն ու պողպատը, նրանցից պատրաստված տարբեր առարկաները և նույնիսկ նրանց հիշատակումը խոսքի մեջ հզոր դեր են խաղում չարխափան հմայուլթյունում, քանի որ չար ոգիները սարսափում են այս մետաղներից⁹: Այսպես՝ տան դուռը փակելիս արտասանվող պահպանիչ աղոթքում երկաթե պատերը, պողպատե սյուներն ու դանակները, իհարկե, սրբերի հետ մեկտեղ, երաշխավորում են տան ապահովությունը.

Մեր տուն տիրոջ տուն է,
Պատերն հրմեն էրկաթ է,
Մներ հրմեն պողպատ է,
Քրիստոս դռան պահպան է,
Թուր դռան գոց է,
Սուրբ Օհան էրթիկն է,
Խալխան էրթիկն ամրոց է,
Դռան գալող ետ դառնա,
Երթիկ գալող՝ քար դառնա:
-Աքա Մարիա՛մ, հոտ ի՞նչ կէնես...
«Իրեք պուռ դանակմ ունիմ.
Մեկը՝ սուտ սատանին.
Մեկը՝ գեյ գազանին.
Մեկն ա՛ չար խափանին»¹⁰:

XIX–XX դդ. բնակարանը չարքերից, չար աչքից պաշտպանող և հաջողություն բերող հմայական միջոցներից էր ասեղը. «Շեմքի վրա երեք ասեղ պետք է խրել, որպեսզի սրտի նենգությունը ներս չմտնի» (գյուղ Սարուխան)¹¹:

Չար աչքից տունը պաշտպանելու համար «մի քոռ մեխ կախում են շեմքի ներքևը և մի նալ կախում են դռան վերևը՝ դրսից»¹²: Գյումրիում «նալը տանում են ժամը, յոթ անգամ աղոթել են տալիս տերտերին, հետո կախում են դռան հետևը, որ չերևա և ոչ ոք նազար չի առնում»¹³: Նախիջևանիկում (Ասկերանի շրջան) տունը չար աչքից պաշտպանելու համար շեմքի մոտ փոսիկ են փորում, ձուղնում, վրան՝ նալ, նրա վրայից էլ՝ մեխ և ծածկում են հողով. «չար աչքը դուրսն է մնում», այլևս տուն չի մտնում¹⁴: Երեխաներին չար աչքից պաշտպանելու համար Մարտունու Զոլաքար գյուղում սրբի

⁹ Г. Ф. Чурсин. Тальши.— Известия Кавказского историко-археологического института в Тифлисе, т. IV. Тифлис, 1926, с. 25.

¹⁰ Մ. Աբեղյան. Երկեր, էջ 34:

¹¹ Ա. Իսրայելյան. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Կամո, Մարտունի, 1982, էջ 15:

¹² Նույն տեղում, էջ 25:

¹³ ԴԱՆ, Լենինական, 1973, էջ 5:

¹⁴ ԴԱՆ, Արցախ, 1974, էջ 8:

դուան շեմքին մեխ են խփում¹⁵: Քաջարանում երեխա ծնվելիս տան շեմքին մեխ են խփում ու նաև երկաթե շղթա գցում, իսկ օրորոցի մեջ և բարձի տակ խարտոց, մկրատ, ասեղ, քորոց են դնում, որպեսզի նորածնին աչքով չտան: Ընդհանրապես մեխը պետք է խփել այն տեղում, որտեղ աչքով են տվել¹⁶: Սա տարածված էր նաև Արագածոտնում, Արարատյան դաշտավայրում և այլուր¹⁷: Իսկ ասեղը խրում են չար աչքից տուժածի գլխաշորի և հագուստի մեջ, որպեսզի աչքով տվողի աչքը ծակվի և համապատասխան աղոթք են ասում¹⁸: Երեխային աչքով տալու դեպքում աղի մեջ ասեղ են խրում, հետո աղոթում, որպեսզի «ասեղը մտնի աչքով տվողի աչքը»¹⁹, շամփուրը շիկացնում են, մտցնում կաթի մեջ, որը բլթբլթում է և «աչքը չի բռնում, աչքը փչանում է»²⁰: Դանակը ևս պաշտպանում է չար աչքից. օրինակ՝ Մարգվանում (Ամասիայի գավառ), որտեղ «ծեր պառավներն» իրավունք ունեին տուժածին աղոթելու, չար աչքի եկողի գլխից մինչև ոտքերը և ոտքերից մինչև գլուխը դանակով խաչակնքում էին մի քանի անգամ, ողջ ընթացքում աղոթքներ էին մրմնջում և հորանջում: Աղոթքն ավարտելով՝ աղոթողը մի կտոր հաց շանն էր տալիս՝ նրան փոխանցելով հիվանդությունը, իսկ եթե որոշակիորեն իմանում էին, թե ով էր աչքով տվել, նրա տան շեմից մի տաշեղ էին այրում²¹: Համաչենցիները խոփի օգնություն էին չար աչք դիպածին՝ ակնըռածին բժշկում. «Նոփի հետ մի քանի ուրիշ երկաթեղեն կրակն են գցում, տաքացնում, վերջը հանում, վրաները ջուր լցնում և ակնըռածին դրանց գոլորշու վրա կանգնեցնում, որ կուլ տա: Դրան համաչենցիք ասում են «խոփխաչ»²²: Անգամ ցանկացած երկաթի կտոր՝ կախված տան ներսում, պաշտպանում է չար աչքից²³:

Կովերին, եզներին, ձիերին չար աչքից պաշտպանելու համար էջմիածնում կողպեքով շղթա էին գցում նրանց վիզը և կողպում²⁴, Ախալցխայում՝ երկաթյա երկտակ թիթեղից եռանկյուն՝ վերևի մասում անցքով համայիլ²⁵, Աչնակում պայտը գանգակների հետ կապում են եզների ու կովերի եղջյուրներին, Կաթնաղբյուր գյուղում մշեցիները

¹⁵ ԴԱՆ, Զոլաքար, Մարտունու շրջան, 1973, էջ 1:

¹⁶ ԴԱՆ, Ղափան, 1985, էջ 22–23:

¹⁷ ԴԱՆ, Մաստարա, 1981, էջ 8, Հոկտեմբերյան, էջմիածին, Աշտարակ, 1973, էջ 12:

¹⁸ ԴԱՆ, Լոռի, 1972, էջ 53, Կամո, Մարտունի, էջ 12:

¹⁹ ԴԱՆ, Թալին, 1977, էջ 37:

²⁰ ԴԱՆ, Հոկտեմբերյան, էջմիածին, Աշտարակ, էջ 29:

²¹ Յ. Կ. Սի ն ա ն ե ա ն. Նախապաշարումներ, սովորութիւններ, եւ այլն Մարգուանի եւ շրջականերու մէջ. – «Բիւրակն» (Կ. Պոլիս), թիւ 42, 20 Հոկտեմբեր, 1899, էջ 667:

²² Յ. Մ ու Ր ա դ ե ա ն ց. Համաչենցի հայեր. – ԱՀ, Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 117:

²³ ԴԱՆ, Լոռի, էջ 26:

²⁴ ԴԱՆ, Հոկտեմբերյան, էջմիածին, Աշտարակ, էջ 33:

²⁵ ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա, 1978, էջ 11:

գոմի դռան վրա կովի կամ եզի գանգ են ամրացնում, վրան՝ պայտ²⁶: Քեթիում (Ախուրյան) յոթ աղոթողներ նալն աղոթում են, հետո այն կպցնում են գոմի ճակատին կամ կրկին զանգակների հետ զցում եզի վիզը՝ պաշտպանելու համար ակնահարվելուց²⁷:

Պտղնի գյուղում՝ պայտը կախում են ծառի ճյուղից կամ փայտի կտորի վրա ամրացնում ու տնկում են հողում, որպեսզի այգին աչքով չտան²⁸: Պայտի դեպքում կարևոր է նրա նախկին կիրառությունը: Ինչպես նկատում է Լևոն Աբրահամյանը, հավատում են, որ պատահաբար գտնված պայտն է երջանկություն բերողը: Եթե այն ընկած է ճանապարհին, նշանակում է, որ ինչ-որ մեկն արգեն անցել է այդ տեղով և, ճանապարհը շարունակելով, մարդ կհասնի նպատակին կամ եթե պայտն ամրացվի տան շեմին, տունն «իր ճանապարհով կգնա»: Բացի այդ, երբ ամրացված է եղել ձիու սմբակին, անընդհատ հարվածել է գետնին՝ խփելով ու կարծես կնքելով, կոխելով չար ոգիներին²⁹: Ինչ վերաբերում է զանգակներին, բացի մետաղից, մոգական չարխափան ուժ է վերագրվում նրանց ձայներին:

Չար ոգիների դեմ պայքարում ևս գործածվում են մետաղե առարկաները: Փետրվարի վերջին Կարինում շվոտներին քչելուց հետո դռան ետևը երկաթե տարբեր առարկաներ էին լցնում, որպեսզի նրանք չկարողանային ետ գալ ու ներս մտնել³⁰: Իսկ Համբարձման տոնին տան ապահովության համար երգիկի շուրջը շամփուրով շրջան էին գծում³¹: Սասունցիները և բայազետցիները պայտը դռան տակ էին գետեղում՝ չարքերին հեռացնելու համար³², Սարուխան գյուղի տներից մեկի պատշգամբից սենյակ տանող դռան շեմքի տակի ձախ անկյունում էր ամրացված պայտը³³: Խնուսի գավառակի Ղարաչոբան և Մուշի Յոթաղբյուրներ գյուղերից Մարտունու Թագապուղում վերաբնակվածները սատանաներին վախեցնելու ու վանելու համար երկաթե խոփ, լծի երկաթե սամի, մետաղադրամ են դնում տան հիմքում³⁴: Դրամը նաև երջանկություն, հարստություն ու բազմացում բերող ուժ ուներ հավատալիքներում: Կողպեքը, բացի գործնական նշանակությունից, տունն ամուր պահող, ոգիներից պաշտպանող, երջանկություն ապահովող միջոց է և բնակարան կառուցելիս այն ևս դնում են հիմքում³⁵:

Հմայությունում մեխը ոչ միայն աչքը ծակելու համար է օգտագործվում, այլև՝ չարը գամելու: Մեխերն այնքան տարածված են

²⁶ ԴԱՆ, Թալին, էջ 54, 48

²⁷ ԴԱՆ, Քեթի, 1974, էջ 4:

²⁸ ԴԱՆ, Պտղնի, 1976, էջ 3-4:

²⁹ Ա. Абрамян. Беседы у дерева. М., 2005, с. 93, 108.

³⁰ Պ. Յ. Մուրատեան. «Շուտն ի դուրս, մարտն ի ներս».- «Բիւրակն», Թիւ 1, 11 յունուար, 1900, էջ 5:

³¹ ԴԱՆ, Թալին, էջ 24:

³² Նույն տեղում, էջ 20:

³³ ԴԱՆ, Կամո, Մարտունի, էջ 14:

³⁴ Նույն տեղում, էջ 36, 40:

³⁵ ԴԱՆ, Մաստարա, էջ 10:

չարխափան և բարեբեր հմայությունում, որ նույնիսկ կանանց գլխի հարդարանքի մեջ էին դրվում (այնպես, որ չերևան): Այսպիսի օրինակ է պահվում Հայաստանի պատմության թանգարանում Սաթեհնիկ և Ներսես Փիլիկյանների (ԱՄՆ) 1969 թ. նվիրած, Սեբաստիայում 1880-ական թվականներին պատրաստված առարկաների ժողովածուում (№ 8490-1-16): Սա կարմիր բամբակե կտորից գլխաշոր է, ներսից կարված նույնպիսի կտորով պատված անկանոն եռանկյունաձև հմայիլով, որի կենտրոնի ուռուցիկ մասում կոր գլխիկներով, արույրե բարակ երկու մեխ է դրված (մեխերը հայտնաբերվել են 2017 թ. առարկան վերականգնելու ժամանակ):

Երեխա ունենալու նպատակով կանայք կրկին մեխերին են ապավինում՝ ամուլթյունից ազատվելու համար Պորտաքարին ուխտ գնալիս, քարի վրա պտտվում, հետո մեխ էին խփում, որպեսզի իրենց ցավն ամուր գամվեր ժայռին³⁶: Ինչպես նշում է Աղասի Թադևոսյանը. «...գեանի մեջ մխվող մեխը հիվանդության կամ ծնունդի ժամանակ նմանողական մոգության հնարք էր, որով հողի մեջ բնակվող չար ոգուն սպանելու միջոցով ոչնչացնում էին նաև հիվանդության պատճառ դարձած կամ նորածնի համար պոտենցիալ վտանգ ներկայացնող չար ուժերին... երկաթը, կայծակը կամ երկնային շիկացած երկաթ-հուրը և մեխը որպես չարխափան նույնանում են... մեխի խորհրդանշային իմաստը մոտենում է կայծակին կամ երկաթին և կարող է մեկնաբանվել որպես գենք, որով վերին ուժը կովում է ստորին քառասային սկիզբը ներկայացնող ուժի դեմ: Ծեսի համատեքստում դա արտահայտվում է այսպես: Մեխը խորհրդանշում է այն գենքը, որն ուղղվում է Քրիստոնեական բարու (Քրիստոսի) հակառակորդ ուժի՝ սատանայի ժամանակավոր կրողի դեմ: Այդ մեխը պատրաստողը դարբինն էր: Փաստորեն դարբինը ծեսի համատեքստում ստանում է չարի ու բարու պայքարում բարու համար գենքեր պատրաստողի դերը»³⁷: Չուր չէ, որ Քրիստոսի հետ առնչվող մեխը վերակենդանացնող է: Այս մասին մի ավանդություն է պահպանվել. «Պատմում են, թե Ս. Աղբրիկը մի ոգի է, որ առաջացել է խաչված Քրիստոսի ձեռքի մեխից և շատ զորավոր է. մի անգամ, երբ մի երեխա ընկել է թոնիրը, վառվել ու ածուխ դառել, օգնության են կանչել Ս. Աղբրիկին, և սա եկել խաչակնքել է ածուխը, որ անմիջապես վերակենդանացել, դարձել է նախկին երեխան»³⁸:

Չար ոգիներին ոչնչացնելու համար հարսանիքի ժամանակ քավորը երեք անգամ թրով խփում էր նախ աղջկա տան դռանը, հետո՝ տղայի³⁹: Ընդհանրապես, բոլոր դռների գլխներին, որտեղով անցնում էին նորապսակները, թրեր էին բռնում:

³⁶ Ստ. Լիսիցյան. Չանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 285:

³⁷ Ա. Թադևոսյան. Դարբինը հայոց ծիսակարգում.— Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 23, Երևան, 2007, էջ 152:

³⁸ Ե. Լալայեան. Մուշ-Տարօն.— ԱՀ, XXXVI գիրք, Թիֆլիս, 1916, էջ 176:

³⁹ ԴԱՆ, Լոռի, էջ 166:

Ծննդաբերություն ժամանակ մանգաղի և թրի մոգական հատկանիշների մասին Քաղբերունին նշում է. «Անդրանիկ ծննդի ժամանակ կնոջ փորի ցավը կտրելու համար՝ տատմայրը թուրը աջ ձեռքով յոթն անգամ մանգաղի նման անց է կացնում իր ձախ ձեռքի տակով՝ կնոջ փորի վրա և ամեն անցկացնելու ժամանակ հարց ու պատասխանով ասում է.

– Ահան, ես կքաղեմ.

– Ի՞նչ կքաղես:

– Հեղինեի (ազատվածի անունը) սանջուն կքաղեմ»⁴⁰:

Երբ ծննդկանը վեր է կենում և անկողինը հավաքում են, երեխային չարքերից պաշտպանելու համար անկողնու տեղում մեխ են խփում⁴¹:

Չարքերից պաշտպանող երկաթե ու պողպատե տարբեր առարկաներ երբեմն հանդես են գալիս իրենց նախկին գործառույթներով հանդերձ, ինչպես պայտի դեպքում: Օրինակ՝ ծննդկանին պաշտպանող և ծննդաբերությունն օգնող սուրն ու թուրը շատ ավելի զորեղ են համարվում, եթե օգտագործված են եղել պատերազմում՝ թշնամուն հաղթած զենքը չար ոգիներին հեշտություն է հաղթում: Ե. Շահազիզը գրում է. «Տղոցկանի վերայ պէտք է «ջէնկի թուր»-պատերազմի սուր դնել, որ թեթև բերէ, կամ նոյն նպատակով նոյն սրի վերայ ջուր ածել ու ջուրը խմեցնել տղոցկանին»:

«Ալբաստի» կամ «ծովի մար» տեսնող մարդկանց թուրը կամ գոտին պետք է դնել տղոցկանի վերայ, որ երեխան շուտ ու թեթև աշխարհ գա»⁴²: Հարսը ծննդաբերելիս պետք է պողպատյա վզնոց, ապարանջան կամ մատանի ունենա և հետո քառասուն օր պահի, որպեսզի ինքը և երեխան «չարոցի չգան կամ չարոց չառնեն, չայսահարվեն»⁴³: Շամփուրն անհրաժեշտ էր երկունքը սկսվելու պահից՝ մորն ու երեխային չարքերից պաշտպանելու համար տատմայրը շամփուրով խաչեր էր գծում սենյակի չորս պատերին, «հալածում էր չար ոգիներին» և թույլ չէր տալիս մոտենալ: Հետո շամփուրը տալիս էր ծննդկանի ձեռքը և ինքը սկսում աղոթել: Աղոթքում կարևորվում են շղթան ու բանալին. «Բալնիս թալեմ բուլոր (շուրջ) պարճին, /Ջրնճիլ թալեմ բուլոր պատին. / Որ չվախի սիրտն ի փորին, /Չում Քրիստոս գեայ դատաստանին»⁴⁴: Քառասնօրյա շրջանում ծննդկանն արևը մայր մտնելուց հետո կամ դեռ չծագած կարող էր տնից դուրս գալ, եթե միայն ձեռքին շամփուր լիներ⁴⁵: Այս ժամանակահատվածում երեխային ամեն օր լողացնելիս մկրատ,

⁴⁰ Քաղբերունի. Հայկական սովորություններ. – ԱՀ, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 114:

⁴¹ Ե. Լալայեան. Ջալալք, Ա գիրք, էջ 272:

⁴² Ե. Շահազիզ. նշվ. աշխ., էջ 47:

⁴³ ԴԱՆ, Սիսիան, 1974, էջ 26, Ա. Թագևոսյան. նշվ. աշխ., էջ 117–125:

⁴⁴ Ե. Լալայեան. Վասպուրական. – ԱՀ, XX գիրք, Թիֆլիս, 1910, № 2, էջ 166, 166:

⁴⁵ Նույն տեղում, էջ 177:

չամփուր, դանակ, մեխ էին դնում տաշտի մեջ, որպեսզի «չարքերը չխփեին»⁴⁶: Ծննդաբերության ժամանակ բանալին կարևորվում էր նաև հրեաների հավատալիքներում⁴⁷: Բենսեն նշում է, որ երեխայի պորտը կտրելուց հետո ծննդկանի ձեռքը երկաթե շիշ էին տալիս. նա սենյակների դռներով անցնելիս «Հիսուս Քրիստոս» էր մրմնջում ու երրորդության անունով խաչակնքում մինչև իր հիմնական տեղում պառկելը, հետո նրա գլխի տակ էին դնում «մի համայիլ, մի դանակ և ուրիշ երկաթի կտորներ, որ չարքեր չմոտենան»⁴⁸:

Ծննդաբերող կանանց ու մանուկներին սպառնացող սարսափելի ալիք փրկվում են մախաթով: Ըստ ավանդության մի ծերունի ալին է հանդիպում, երբ նա ծննդկանի թոքը տանում է ջրի մեջ լվանալու: Մարդն ալին հրամայում է թոքը վերադարձնել, բայց նա շարունակում է իր ճամփան: Այն ժամանակ ծերունին մի մախաթ հանելով՝ մտցնում է ալի վիզը: Ալն անմիջապես ջրի է դառնում: Ծերունին այդ ջրին յոթ տարի գործածում է, հետո ջրին աղաչում է, որ իրեն արձակի՝ խոստանալով, որ մինչև յոթ սերնդի այլևս «չպիտի կոխէ»:⁴⁹ Ծերունին նրան հավատալով՝ մախաթը հանում է վզից և ալն անմիջապես աներևութանում է⁴⁹: Մախաթով հնազանդեցնում էին նաև Գաբոսա ոգուն՝ այն քիթը խրելով, նրան մարմնեղեն դարձնելով ու տան գործերը կատարել տալով⁵⁰: Բաբերդում ակիշ և մկրատ էին դնում ծննդկանի կողքին, որպեսզի ալքը չմոտենար⁵¹: Բորչալուի գավառում ծննդաբերությունը հեշտացնելու համար «գութանը բարձրացնում են կտուրը և մի շրջան գծում ծննդկանի գտնուած տեղի վերև, որպեսզի չարերը չկարողանային այդ շրջանից անցնել»⁵²: Մուշում «արորը բերում են ծննդկանի տան կտրի վրա, մասերն իրարից արձակում, որ ծննդկանն էլ յուր մասից՝ երեխայից արձակվի... Եթե ծննդկանն ուշագնաց է լինում՝ հրացան են արձակում, բղավում, ծննդկանին ապտակում, նրա յագմի մեջ ասեղ շուլալում, բարձի տակ մանգաղ, թուր, խաչերկաթ, դաշույն, դանակ դնում, գութանի շղթա բերում, նրա շուրջը տարածում, որպեսզի ալքերը չկարողանան մոտենալ և ծննդկանի ջիգյարը հանեն տանեն,

⁴⁶ Նույն տեղում, էջ 180:

⁴⁷ Հրեաները ծննդաբերելու ժամանակ կնոջ ձեռքն էին տալիս սինագոգի բանալին, իսկ եթե այնպիսի վայր էր, ուր սինագոգ չկար, եկեղեցու բանալի էին տալիս (տե՛ս J. Trachtenberg. Jewish Magic and Superstition. A Study in Folk Religion, New York, 1982, p. 169):

⁴⁸ Բենսէ. Բուլանըխ կամ Հարք գաւառ.— ԱՀ, Ե գիրք, Թիֆլիս, 1899, № 1, էջ 125:

⁴⁹ Յ. Կ. Սիւնանեան. նշվ. աշխ., էջ 667–668:

⁵⁰ Ա. Էօքսիւղեան. Գաւառային կեանքէն.— «Բիւրակն», թիւ 44, 28 նոյեմբեր, 1900, էջ 695:

⁵¹ Յ. Պալեան. Պառաւաշունչ Բաբերդի.— «Բիւրակն», թիւ 33, 25 օգոստոս, 1899, էջ 523:

⁵² Ե. Լալայեան. Բորչալուի գաւառ.— ԱՀ, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 251:

իրենց գավակներին տան ուտելու»⁵³։ Գուլթանի շղթան և՛ որպես չարխափան շղթա է, և՛ որպես գուլթանը փոխարինող առարկա։ Գուլթանն ընկալվում էր որպես հողի բեղմնավորող և հանդես էր գալիս արգասավորությունն ու պտղաբերությունն ապահովող խորհրդանիշի դերում⁵⁴։ Այն նաև չարխափան հուռութ է, ինչպես Սասունում դարբնի սարքած գուլթանի փոքրիկ խոփերը⁵⁵։ Հերկող գործիքների առնչությունը հարկ է նշել, որ տարբեր ժողովուրդների ավանդույթներում դրանք ընկալվել են որպես աստվածատուր առարկաներ և երկնային պարգև։ Հայկական ավանդություններում դրանք պարգևել է աստված կամ աստծո հրեշտակը⁵⁶։ Հին Հունաստանում հողագործության և բերքատվության աստվածուհի Դեմետրան էր Տրիպտոլեմոսին սովորեցրել գուլթանով վարելը, նա էլ սովորեցրեց մարդկանց⁵⁷։ Հույներն աստվածացնում էին գուլթանը⁵⁸, սկյուլթները՝ արորը։ Հերոդոտոսը գրում է. «Սկյուլթների պատմածի համաձայն... երկնքից սկյուլթական երկրի վրա ընկել են ոսկե շինվածքներ՝ արոր, լուծ, սակուր և գավաթ»⁵⁹։ Ըստ որում ոչ միայն արորն ու գուլթանն էին հրաշագործ, այլև վարելու գործողությունը, որն ինքնին չարխափան է, ինչպես ծննդկանի կտուրում շրջան գծելը կամ ապահովության սահման գծելը. «Երկրագործական տնտեսության աշխատանքային գործընթացները հնադարյան երկրագործի գիտակցություն մեջ կախարդական խորհրդավորություններ էին պարուրված, որի դյուլթիչ ուժով ծնունդ էր առնում մարդու հանապազօրյա հացը։ Այդ գործընթացների վերարտադրությունը հեռացնում է հիվանդությունները, ոչնչացնում է դեերի դավերը։ Դրա համար են համաճարակների ժամանակ ապավինում «վարելուն», այդ հրաշագործ միջոցին են դիմում նաև երաշտի ու երկարատև անձրևների ժամանակ»⁶⁰, — գրում է Գ. Չուրսինը։ Ինչ վերաբերում է շրջանին, բազմաթիվ ժողովուրդների հավատալիքներում է այն ապահով միջոց համարվում չարից պաշտպանվելու համար։ Հրեաները, օրինակ, ծննդաբերող կնոջ անկողնի շուրջն էին գծում շրջանը։ Նրանք շր-

⁵³ Ե. Լալայեան. Մուշ-Տարօն, էջ 177–178:

⁵⁴ Գուլթանների մասերն ունեն սեռական մագիայի հետ աղերսվող անուններ։ Դրանք գուլթանը ներկայացնում են տղամարդու դերով, որի իմաստը պտղաբերության մագիան է (տե՛ս Վ. Բդոյան. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 464–465):

⁵⁵ Վ. Պետոյան. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 114:

⁵⁶ Վ. Բդոյան. նշվ. աշխ., էջ 456–457:

⁵⁷ Дж. Томсон. Исследования по истории древнегреческого общества. М., 1958, с. 253.

⁵⁸ Г. Ф. Чурсин. Очерки по этнологии Кавказа. Тифлис, 1913, с. 47–48.

⁵⁹ Հերոդոտոս. Պատմություն ինը գրքից, Թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, IV, էջ 223:

⁶⁰ Г. Ф. Чурсин. Очерки по этнологии Кавказа, с. 47–48.

Ղանները գծում էին թրով կամ դանակով⁶¹, ինչպես ընդունված էր նաև հայերի սովորույթներում, որոնք նաև շամփուրով էին գծում:

Մկրատը, որպես նվերք, «տղացկանը» քառասուն օր շարունակ կրում էր գոտու մեջ⁶²: Բացի այդ, ամենուրեք ընդունված էր քառասուն օրերի ընթացքում երեխային լողացնելիս տաշտի մեջ մկրատ, շամփուր, դանակ, մեխ, երկաթե այլ առարկաներ դնելը, որպեսզի չարքերը չխփեին և նրանք քաշքակոխ չլինեին⁶³: Անգամ Տեառնընդառաջի խարույկի շուրջը մանկան հետ պտտվելիս, ծննդկանը ձեռքին շամփուր պետք է բռներ⁶⁴: Երեխայի անկողնի տակ անպայման երկաթ պետք է դրվի մինչև մկրտությունը (7 օր): Մանկան բարձի տակ նույնիսկ դանակ ու պատառաքաղ են դնում⁶⁵: Օրորոցագող քաղքերից պաշտպանվելու վերաբերյալ Լալայանը գրում է. «... որպեսզի արգելեն նրանց երեխաներին մոտենալու, սրանց սնարի տակ նշխարք, պողպատ, համայիլ են դնում, քնեցնելիս խաչակնքում, և երեխայի վրա ասեղ շուլալում»⁶⁶: «Քառասունքակոխ երեխային բժշկելու համար «կայծակի հետ երկնքից իջած երկաթից» սարքած «քավկիրը» չորեքշաբթիամտի, ուրբաթի և կիրակիամտի երեկոներին բռնում են երեխայի գլխին և շուր ածում»⁶⁷: Չարքերի կոխից երեխային փրկելու համար նրա գլխի տակ խարտոց են դնում⁶⁸, օրորոցագողից փրկելու համար՝ օրորոցի եզրին կտորի մեջ կարված շամփուրներ և ծհան⁶⁹: Եթե նորածինը չէր անում (առաջ չեկող երեխան) համարվում էր, որ մինչև մկրտությունը նրան խանձարուրով սանդերքի վրա պետք էր պառկեցնել, որպեսզի մնացական լիներ և ալքը չմոտենար «սանդերքի փուշերու երեսին»⁷⁰: Սանդերքը, որի սրածայր ատամները պողպատից են, դնում էին մոր և մանկան անկողնու մոտ՝ չարքերից պաշտպանելու համար: Փշերն, իրենց հերթին, անկախ նյութից չարխափան են՝ «գեղեցիկ տղա մը չար նազար է պահելու համար, անոր օձիքը փուշ մը կը խոթեն»⁷¹: Քառասուն օր շարունակ ոչ միայն երկաթի կտոր էին դնում ծննդկանի գլխի

⁶¹ J. Trachtenberg. Նշվ. աշխ., էջ 121:

⁶² «Նուէրք՝ 1. Ակն. չար աչքէ, ալքէ, հիւանդութենէ ազատելու համար եղած բոլոր կախարդական միջոցները, 2. մկրատ որ երեխան լողցնելու ժամանակ շուրին մէջ կը ձգեն կամ տղացկանը կը կրէ իր գօտիին մէջ՝ 40 օր» (տես նաև Ա. ճ ա ու ե ա ն. Էմիլեանի ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 816):

⁶³ ԴԱՆ, Սիսիան, էջ 14, Մաստարա, 8:

⁶⁴ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Զաւարթ, Ա գիրք, էջ 272:

⁶⁵ ԴԱՆ, Թալին, էջ 5, 29:

⁶⁶ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վարանդա.— ԱՀ, Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 225:

⁶⁷ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Նոր-Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք.— ԱՀ, XVI, Թիֆլիս, 1907, էջ 41:

⁶⁸ ԴԱՆ, Ղափան, էջ 5:

⁶⁹ ԴԱՆ, Արցախ, էջ 6:

⁷⁰ Յ. Պ ա լ ե ա ն. Պառաւաշունչ Բաբերդի.— «Բիւրակն», թիւ 38—39, 29 սեպտեմբեր, 1899, էջ 612:

⁷¹ Հ. Կ. Տ է մ ի Ր ճ ե ա ն. Նախապաշարումներ Կիւրինի.— «Բիւրակն», թիւ 50—51—52, 8—22 դեկտեմբեր, 1899, էջ 820:

տակ, այլև ջուր խմելիս թասի մեջ ասեղ էին գցում, որպեսզի այլ ջրի հետ «արգանդը չմտներ և չմեռցներ նրան», երեխայի վրա էլ ասեղ էին պահում, որպեսզի «դեերը նրան չփոխերին»⁷²: Ջավախքում ասեղը դնում էին ծննդկանի բարձի տակ⁷³, Վանում՝ ծննդկանի բարձի վրա՝ Նարեկի հետ մեկտեղ, որպեսզի չար ոգին ծննդկանի լյարդը չփախցներ⁷⁴, Մուշում ասեղն ամրացնում էին երեխայի խանձարուրի վրա⁷⁵: Վասպուրականում երբ մանուկը ծնվում էր, մայրը յոթ տնից մի-մի ասեղ էր հավաքում, անցկացնում էր նորածնի ընկերքին և այն թաղում էր թաղից (թաղը կամ թաղան մահաբեր չար ոգի է) ազատելու համար կամ ընկերքի վրա ասեղ էին ցցում, սև սունիճ ցանում, փաթաթում կտորի մեջ և չոր տեղ էին թաղում⁷⁶, երբեմն էլ ընկերքի վրա ասեղը շուլալում, գցում էին գետը⁷⁷: «Չարը չխփելու» համար կանխարգելող ասեղներ են անցկացնում ոչ միայն երեխաների, այլև տղամարդկանց ու կանանց, հագուստներին⁷⁸: Ասեղի կարևորությունն ընդգծվում է, երբ այն մատուցվում է որպես նվիրաբերություն. «Շատախի թաղ գյուղի արևելյան կողմը, Տիգրիսի ձախ ափին, Շինու-մագրա գյուղի մոտ կա մի սառն աղբյուր, որ կոչվում է «Կաթն աղբյուր»: Սակավակաթ կանայք վերցնում են եփած երկու ձու, մի ասեղ, երկու հաց, մի քիչ հատիկ (խաշած ցորեն) և գնում այս աղբյուրի մոտ ուխտ: Երկու ձուն և ասեղը դնում են աղբյուրի մեջ, հացը՝ աղբյուրի գլխին, հատիկը ուտում են և աղբրի ջրով ստինքները լվանում, ջրից կուշտ խմում և վերադառնում լի հույսով, որ իրենց ստինքի կաթը շատանալու է»⁷⁹:

Միջինասիացիները նույնպես կարևորում էին ասեղը. Կուլյաբի տաջիկները տան հատակում էին թաղում ընկերքը՝ նախ դնում էին ծակած դրամի վրա, այնուհետև անցքի մեջ էին խրում այն ասեղը, որով ծակել էին երեխայի ականջի բլթակը: Այսպիսով դեռ չէր կարողանում բաց անել և ուտել ընկերքը, այլապես մայրն ու երեխան կկործանվեին: Նրանց հավատալիքների համաձայն, հենց որ երեխան ծնվում էր, դեռ նետվում էր այնտեղ, ուր ընկերքն էր՝ կարծելով, թե նորածինը նույնպես այնտեղ էր: Դրա համար, որտեղ թաղում էին ընկերքը, անմիջապես օջախում շիկացրած երկարավուն քար էին դնում: Դեռ, կարծելով, թե քարը երեխան է, կուրծք էր տալիս նրան, և վառվելով, վնգստոցով փախչում էր: Ինչպես նշում է հնագետ Բորիս Լիտվինսկին, ընկերքը նախ նույնացվում էր նո-

⁷² Ս. Ն.. Նախապաշարումներ, սովորություններ, եւ այլն Աղերգի մէջ եւ շրջակայքը. – «Բիւրակն», թիւ 21, 23 մայիս, 1900, էջ 315:

⁷³ ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա, էջ 10:

⁷⁴ Ե. Տեր-Մկրտչյան. Վանեցոց հարսանիքը. – Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 1, Երևան, 1970, էջ 195:

⁷⁵ Ե. Լալայեան. Մուշ-Տարօն, էջ 178:

⁷⁶ Ե. Լալայեան. Վասպուրական, XX դիրք, էջ 168, 183:

⁷⁷ Ե. Լալայեան. Վասպուրական. Հաւատք. – ԱՀ, XXV դիրք, Թիֆլիս, 1914, էջ 33:

⁷⁸ ԴԱՆ, Թալին, էջ 17:

⁷⁹ Ե. Լալայեան. Վասպուրական. Հավատք, XXV դիրք, էջ 35–36:

րածնի հետ, և անհրաժեշտ էր նրա ապահովության համար միջոցառումներ ձեռնարկել: Երկրորդը՝ ընկերքը թաղելը նորածնի կյանքն ու բարօրությունն ապահովող միջոց էր: Երրորդը՝ ընկերքի այդ գործառույթն ու ժեղացնելու համար, նրա հետ միասին՝ որպես մոգական միջոց, թաղում էին հացահատիկ և ճան: Այդպիսով ի հայտ է գալիս պողաբերության, ապրողի բախտավորության գաղափարը, ինչպես նաև բնակարանում հուղարկավորելու և, հատկապես, կրակարանի հետ առկա կապը, որ հնագույն ժամանակներից են գալիս⁸⁰:

Ըստ համաշխարհային հավատալիքների ջաղուն երեխաներին խեղդում է, «Ջիգյարն ուտում» և ազատվելու համար հարկավոր է նրան «երկաթով դաղել»⁸¹ կամ ասեղի օգնությամբ նրանից ազատվել: Եթե տնեցիներից մեկը նրան տեսնի, չպետք է բարձրաձայն «իմաց տա ամենքին», թե չէ ջաղուն իսկույն կչքանա: Պետք է մի ասեղ վերցնել և ծածուկ գլխի շուրջը երեք անգամ պտտեցնել և ետևի կողմից գետնին խրել: Դրանից հետո այլևս չի կարողանա գալ: Իսկ խորթլաղից կարելի է ազատվել՝ մորթելով նրան երկաթի կոթ ունեցող դանակով, մակույկի թիով կամ մանգաղով⁸²: Չարքերից խուսափելու համար, ի դեպ, «մկրատը բերանը բաց վայր չեն դնում և ոչ էլ օգի մեջ խաղալով բաց անում-խփում, որովհետև կարող է աներևույթ չարքերին դիպչել և սրանց վրեժխնդրությունը առաջ բերել»⁸³:

Խոսել և քայլել սկսելիս երեխաներին կրկին օգնության էին գալիս մետաղե առարկաները: Երբ երեխայի խոսելն ուշանում էր, եկեղեցու բանալին երեք անգամ քսում էին բերանին: Վասպուրականում, օրինակ, գերադասում էին ս. Նշանի բանալին⁸⁴, իսկ Լոռիում յոթ եկեղեցիների բանալիներ էին քսում, որպեսզի երեխան ճարտարախոս դառնար⁸⁵: Ռոդոսթոյում խոսել չկարողացող 2–3 տարեկան երեխաների բերանը Ս. Թագավոր եկեղեցու Ս. Բևեռի սնդուկի բանալին էին դնում ու մի քանի անգամ պտտում⁸⁶:

Երեխայի քայլելն ուշանալիս Չանգեզուրում փոքրիկին տանում էին Ծիծեռնավանք, Ագռավի քարի առաջ մոմ էին վառում, մի մեխ կամ մի ձուղ դնում քարի տակ, և երեխայի ոտներին «ջուր ածում»՝ հավատալով, որ շուտով կքայլեր⁸⁷:

⁸⁰ Б. А. Литвинский. О древности одного среднеазиатского обычая. — Институт этнографии: краткие сообщения, XXX. М., 1958, с. 31–33.

⁸¹ ԴԱՆ, Սուխումի, տետր 2, 1976, էջ 19:

⁸² Յ. Մ ո լ Ր ա դ ե ա ն ց. Նշվ. աշխ., էջ 140–141:

⁸³ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վասպուրական. Հաւատք.— ԱՀ, XXVI գիրք, Թիֆլիս, 1916, էջ 203:

⁸⁴ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վասպուրական, XX գիրք, էջ 183–184:

⁸⁵ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Բորչալուի գաւառ, էջ 262:

⁸⁶ Ս. Յ ճ ա ն ն է ս ե ա ն. Ռոտոսթոյի կիներու կրօնական սովորութիւններն եւ նախապաշարումները.— «Բիւրակն», թիւ 22, 26 մայիս, 1899, էջ 348:

⁸⁷ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Չանգեզուր.— ԱՀ, Դ գիրք, Թիֆլիս, 1898, էջ 48, 90:

Դրական ու բացասական նպատակներով կատարվող կապի՝ կապելու և կապը քանդելու ժամանակ կրկին մեծ կարևորություն էր տրվում մետաղե առարկաներին: Կապի մոգական գործողություններում էական են ասեղը, բանալին, կողպեքը, մեխը, կացինը, սանդեքը, դանակը, որոնք ոչ միայն կիրառվում են կախարդանքի ժամանակ, այլև աղոթքներում են հիշատակվում. օրինակ՝ գելկապի աղոթքում, որտեղ կապվում են նաև սատանան ու գողը.

Եւ ի ծովուն խաչ մի կայր,
 Եւ ի սուրբ լերինն այն խաչին
 Եօթը թիւ երկաթի,
 Ամէն թուր եօթ խորան.
 Եւ ամէն խորանի եօթ նարդէոս.
 Ծածքն պղնձեղէն,
 Եւ բանալին երկաթի.
 Կապեալ եմ զգայլի բերանն
 Եւ զգողի շարժումն.
 Եւ գայլ գազանի բերանն,
 Որ շրջի ի մէջ գիշերի.
 Երեք բեւեռ Քրիստոսի,
 Մէկն ի սիրտ սև սատանի,
 Մէկն ի բերան գէլ գազանի,
 Մէկն ի շարժումն ակազակի⁸⁸:

Նորապսակներին կապ գցելն ու բացասական կապը բացելը հաճախ կատարվում է կողպեքով: Երբ թշնամիներն են կողպեքը կողպում-փակում, փեսացուն կապ է ընկնում և չի կարողանում զավակ ունենալ, որովհետև այն այլևս չեն բացում: Իսկ երբ բարեկամներն են կողպում, ճիշտ ժամանակին բաց են անում՝ փեսացուին չարքերից ազատում ու պտղաբերություն են ապահովում: Դրա համար եզր մորթելու արարողության ժամանակ փեսացուի մայրը կողպեքն արյունոտում է, բանալիով կողպում և հետո, երբ բացելու ժամանակը գալիս է, անձամբ ինքն է կողպեքը բաց անում, որպեսզի կապից գերծ պահի որդուն⁸⁹: Հառիճում գրանցած տեղեկությունների համաձայն, եթե նորապսակներին կախարդում են, նրանք գնում են գրբացի մոտ, որը պահանջում է երկու հավիթ և մի կողպեք բերել ու առավոտյան ժամը վեցին գալ իր մոտ: Նա ձվի վրա գիր է անում, ձուն ուտեցնում է երիտասարդներին, այնուհետև կողպեքի վրա է գիր անում և պատվիրում կողպեքը բաց արած մտնել անկողին⁹⁰: «Նոր պսակվածները դյուրություն մը կը կապեն, որ տարիներով չկրնան հարսն ու փեսան մերձավորվին, զոր «Կապս» կ'ըսեն. և ասոր համար փակված կողպեք մը, կամ գոցված չախու մը, կամ հան-

⁸⁸ Ե. Լալայեան. Ջալախք. — ԱՀ, Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 238:

⁸⁹ ԴԱՆ, Կամո, Մարտունի, էջ 21, 31, 39:

⁹⁰ ԴԱՆ, Հառիճ, 1986, էջ 5:

գույց եղած բան մը կը կրեն իրենց վրա նշանածները, որպեսզի կախարդութիւնը չբանի իրենց վրա և որպեսզի պսակի հալալ հագած ժամանակ՝ «Մի՛ իշխեսցէ՛ ՚ի սոսա չար ազանդ դիւաց կամ կախարդաց»։ Վասնզի դէեր մարդկային ազգի որդեծնութեան թշնամի են և կ'ուզեն մեր ճետն սպառի»⁹¹։ Սեանի ավագանում փեսայի ծոցագրպանում բաց արած ծալովի դանակ են դնում, որպեսզի զերծ մնա չար կախարդանքից և «ոչ մի չար բան չկպչի նրան»⁹²։

Գուշակութիւնները կատարվում էին քորոցով, բանալիով, կողպեքով, դանակով, մկրատով և այլն. օրինակ եթե հղի կնոջ ամուսինը քորոց գտներ, կինը տղա կունենար⁹³։ Բանալիով գուշակութիւնը «բանալի դնել» է կոչվում. «Ով կամենում է գուշակել հիվանդի վիճակը, կորուսած իրի տեղը, յուր մտադրութեան հաջող կամ անհաջող ելքի մասին՝ մի բանալի է դնում ոտի տակ և կանգնում չորս փողոցների կտրված տեղում և անխոս լսում անց ու դարձ անողների խոսակցութիւնները և դրանցից մի եզրակացութիւն հանում»⁹⁴։ Բանալիով էր որոշվում նաև պանդուխտի վիճակը. եթե երկար ժամանակ յուր չէին ունենում, պանդուխտի մայրը կամ կինը որևէ աղոթատան ճանապարհին բանալի էր թաղում և, անցորդների խոսակցութիւնները լսելով, հետևութիւններ էր անում⁹⁵։ Բանալին բանալու համար է՝ թե՛ իրեղեն և թե՛ վերացական երևութիւնները, կողպեքը՝ կողպելու, թեև կողպեքի բացվելը բարի նշան էր համարվում։ Համբարձման տոնի նախօրեին կանայք քակորի մեջ կողպած կողպեք էին դնում. եթե հաջորդ օրն այն բացված էր լինում, տարին հաջող էր լինելու, իսկ եթե ոչ՝ անհաջողութիւն և հիվանդութիւն⁹⁶։

Հիվանդութեան պատճառը գուշակում էին դանակով։ Երբ որևէ սուրբ իր դեմ մեղանչելու պատճառով մարդուն պատժում էր անբուժելի հիվանդութեամբ և անհրաժեշտ էր լինում պարզել, թե որ սուրբն էր դա անողը (որովհետև մի սուրբը մյուսի փոխարեն չէր բուժում), յոթ տնից մեկական դանակ էին խնդրում, բոլորը լավ մաքրում, դնում էին ջրով ամանի մեջ և յուրաքանչյուրին մի անուն դնում։ Ամանի շուրջը մոմեր էին ամրացնում, վառում, ծնկի իջնում և աղոթում էին, որպեսզի ժանգոտվեր այն դանակը, որն անվանված էր հիվանդութիւնը տվող սրբի անունով։ Ամանը թողնում էին հիվանդի սնարի մոտ և առավոտյան նայում, թե որ դանակն էր ժանգոտվել։ Հետո հիվանդին սրբի մոտ էին տանում կամ բարձի

⁹¹ Գ. Սրվան ձ տյան ց. Երկեր, Երևան, 1978, էջ 164:

⁹² ԴԱՆ, Կամո, Մարտունի, էջ 14:

⁹³ Г. БУНАТОВ. Նշվ. աշխ., էջ 190:

⁹⁴ Ե. Լալայեան. Նոր-Բայազետի դաւառ.— ԱՀ, XVII դիրք, Թիֆլիս, 1908, էջ 114:

⁹⁵ Ս. Ն.. Նշվ. աշխ., էջ 316:

⁹⁶ Ե. Լալայեան. Զաւախք, Բ դիրք, էջ 276–277:

տակ էին դնում այն գուժարը, որով պետք է մատաղ անեին նրա համար, երբ առողջանար⁹⁷:

Հիվանդութունն բուժելիս, հատկապես եթե այն չար ոգուց էր, կրկին մետաղե առարկաներն էին օգնում: Ըստ Ախալցխայում գրի առնված վկայության՝ մոլլան, հոգեկան հիվանդի ձեռքից բռնած, աղոթքներով պտտեցնում էր խարուկի շուրջը և մյուս ձեռքի երկաթե շղթայով պարբերաբար հարվածում էր գետնին, որպեսզի չարքերը փախչեն⁹⁸:

Շնչարգելութունն ու կողացավը բուժելիս տվածուրիկ շնորհ⁹⁹ ունեցող վարպետը հարց ու պատասխանից հետո մեխը կտրուկ նետում էր հիվանդի կողքին դրված պղնձե թասի մեջ կամ դանակն էր կողին քսում¹⁰⁰: Հիվանդին բուժելու համար բարձի տակ դանակ ու մկրատ էին դնում: Մանիսայում երբ մեկը տկարանում էր, ախորժակը փակվում էր, «փակոց եղեր է» ասելով, տվյալ հիվանդության աղոթքը իմացողի մոտ էին տանում, որի բժժանքներն էին սրճամանով ջուրը և կարի ասեղը: Եթե ասեղն աղոթելիս կաշուում էր մատին, հաստատվում էր, որ «փակոց» էր եղել: Ջուրը խմեցնում էին հիվանդին և ասեղը որոշակի տեղ գետեղում: Երեք անգամ կրկնում էին, և ախորժակը բացվում էր¹⁰¹: Ասեղով բուժում են գրի հետևանքով հիվանդացածին. այսպես՝ Հառիճում երեխա չունեցող մի հարս հիվանդացել է և տարօրինակ է իրեն պահել: Նրան տարել են գրբացի մոտ, որն ասել է, թե հարկավոր է 40 չբանեցրած ասեղ խրել նրանց տան շուրջը: Խրելուց հետո գրբացը շեմքի տակ գտել է հանդուցված գունավոր թելեր, կտորի մեջ փաթաթված թղթե հմայիլ՝ կապված կրկին գույնզգույն թելերով: Դա թոնրի մեջ վառել են, հետո հարսն ապաքինվել է և երեխաներ է ունեցել¹⁰²: Ասեղի մասին նշենք, որ բացի մետաղե իր լինելուց, ծակող էր և ամրացնող, իրար կապող և երջանկութունն բերող. օրինակ՝ Պարսկաստանում հարսնացուի գլխին կտոր են գցում և կանացից մեկն ասեղով կար է տալիս՝ կրկնելով՝ «երջանկութունն եմ կարում»¹⁰³: Լոռիում, գրի առնված նյութերի համաձայն, երբ մեկն ուշաթափվում է, շուրջը դաշույնով կամ մեխով շրջան են գծում, և մեխը խրում կենտրոնում, որպեսզի չար ոգին ոչնչանա¹⁰⁴: Քղիում ասամնացավը հմա-

⁹⁷ Ե. Լալայեան. Վարանդա, էջ 232–233:

⁹⁸ ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա, էջ 11–12:

⁹⁹ Աստծուց կամ սրբերից տրված՝ իբրև յատուկ շնորհ (տե՛ս Ստ. Մալ-խասեանց. Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երեւան, 1945, էջ 435):

¹⁰⁰ Բենսէ. Բուլանըխ կամ Հարք գաւառ.— ԱՀ, 2 դիրք, Թիֆլիս, 1900, էջ 46–47:

¹⁰¹ Ե. Սաղաթիել. Կախարդութիւնն ու թովչութիւն Մանիսայի մէջ.— «Բիւրակն», թիւ 28, 7 յուլիս, 1899, էջ 439:

¹⁰² ԴԱՆ, Հառիճ, 1986, էջ 16–17:

¹⁰³ P. A. Galunov. Средняя персидская свадьба.— Сборник Музея антропологии и этнографии, т. IX. Л., 1930, с. 190.

¹⁰⁴ ԴԱՆ, Լոռի, էջ 161:

յուրթյամբ հետևյալ կերպ էին բուժում՝ «հրաշեկ երկաթե շիշով» դադում էին ատամը, հետո կանչում էին վարպետին: Նա քառակուսի թղթի վրա գրում էր տրլըսումը¹⁰⁵ և այն մեջտեղից բեռով ամրացնում էր պատին: Որոշակի խոսքեր էր շնչում, հետո հիվանդին հարցնում էր, թե «ցավն անցա՞վ»: Եթե ժխտական պատասխան էր ստանում, կրկին մուրճով հարված էր հասցնում բեռին և նորից հարցնում: Ենթադրվում էր, որ յուրաքանչյուր հարվածի հետ ատամը պետք է ամրանար¹⁰⁶:

Գիշերները չվախենալու համար պողպատե որևէ առարկա պետք է դնել գլխի տակ¹⁰⁷: Վարանդայում վախը բժշկելու համար բամբակի մեջ մեխ էին ցցում և թաղում շեմքում կամ այն հանգուցյալի գերեզմանում, որից վախեցել էր հիվանդը¹⁰⁸:

Երկաթն ու պողպատը պաշտպանում էին հանգուցյալին վերագրվող վտանգներից: Շնող գյուղում, օրինակ, մի կաղ մարդ է եղել Պետո անունով: Նա գիշերներն էր գնում մարդկանց տուն. այդ պատճառով կարծում էին, թե նա էր մարդկանց «հոգիներն առնում»: Երբ նա մահացել էր, նրա գերեզմանի վրա կրակ էին վառել: Մի քանի օր հետո գերեզմանի հողը ճաքել էր, դա, իբր, նշանակել է, որ նա մի «օքմին էլ ա ուզել» (որ մի մարդ էլ մահանա): Այդ ժամանակ մարդիկ նրա գերեզմանի երկու կողմում չորս շամփուր են խրել, սրտի տեղում՝ սուր երկաթներ, «որ բոլորովին հանգչի, արմատները չորանան և ժած չգա»: Այստեղ համարվում էր, որ երբ երազում հանգուցյալը սպառնում էր որևէ մեկին տանել, նրա գերեզմանին շամփուր էին խրում՝ երկուսը գլխի մոտ, երկուսը՝ ոտքերի, կամ հանգուցյալի հարազատներից գաղտնի դաշույն էին խրում սրտի տեղում¹⁰⁹:

Բարիք բերող ամենատարածված միջոցներից էր պայտը: Պայտն ամրացվում էր տան դռանը, մայր սյանը, շեմին, մուտքի գլխին: Եթե կոր մասը ներքևում է, բարիքը բաց կողմից է ներս լցվում: Աչոցքում «ձիու նալը ձիու մեխով, յոթը տեղով խփում են դռանը»¹¹⁰, Ախալքալաքում և Ախալցխայում՝ «որպեսզի տանը վտանգ չգա, չարիք չպատահի, միշտ հաջողութուն լինի, երջանկութունը կոփվի, պայտը թաղում են շեմքի տակ, ամրացնում ներսից կամ դրսից, վերևից կամ ներքևից: Այն բախտ է բերում և հեռու պահում չար աչքից»: Ախալքալաքում ոսկերչական արհեստանոցի շեմին, հատակի կենտրոնում ներսի կողմից պայտ էր մեխված¹¹¹: Ծառերի և բանջարանոցի բերքատվութունն ապահովելու համար պայտ են կա-

¹⁰⁵ Նույնն է՝ թլըսիմ, յուռութք, կախարհութիւն (տե՛ս Ստ. Մ ալ խ ա ս ե ա ն ց. Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Երեւան, 1945, էջ 109):

¹⁰⁶ Լ. Սրապեան. Ժողովրդային բժշկութիւն Քղիի մէջ. «Բիւրակն», թիւ 1–2, 7 յունուար, 1899, էջ 5:

¹⁰⁷ ԴԱՆ, Պտղնի, էջ 1:

¹⁰⁸ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վարանդա, էջ 235:

¹⁰⁹ ԴԱՆ, Լոռի, էջ 114–115, 117–118, 154:

¹¹⁰ ԴԱՆ, Ղուկասյան, 1980, էջ 3–4:

¹¹¹ ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա, էջ 5, 13:

պում ծառին¹¹²: Համբարձման գիշերը տանտիկիները մեխ և փուշ էին կապում խնոցուն և «հեծնում», որպեսզի կարագն առատ լիներ¹¹³:

Ժողովրդական հավատալիքներում բարեբեր խորհրդանիշներից է բանալին (հմմտ. «հաջողության բանալի», «հաղթանակի բանալի», «սրտի բանալի» և այլն): Բարիք, զավակներ ու, առհասարակ, երջանկությունն ապահովելու համար բանալիներ են պատկերվել նույնիսկ գորգերի վրա, ինչպես Շատին գյուղում (Եղեգնաձորի շրջան) գործված XIX դ. գորգի նախշերում (Հայաստանի պատմության թանգարան, Փոնդաշին № 8433): Բանալին Նոր Կտակարանում երկնքի արքայության դռներն է բացում. Հիսուսը Սիմոնին ասում է. «Եւ քեզ պիտի տամ երկնքի արքայութեան բանալիները, եւ ինչ որ մի անգամ կապես երկրի վրա կապուած պիտի լինի երկնքում: Եւ ինչ որ արձակես երկրի վրայ, արձակուած պիտի լինի երկնքում»¹¹⁴: Դրախտի դռան բանալին հիշատակվում է նաև Զատիկի երգում՝

Ճրագ, ճրագ, ճշմարիտ,
Ճշմարիտ է Մարգարիտ,
Անմահական բանալիք,
Տար դրախտի դուռը բաց,
Քաղի անթառամ ծաղիկ,
Բեր դիր գլխիս տակ,
Քնեմ քունս տանի,
Վեր կենամ երազս բարի,
Ինչ խնդրեմ՝ Տերը կատարի¹¹⁵:

Բնության տարերքը կարգավորելիս կրկին դիմում էին մետաղե առարկաներին: Կայծակից տունը պաշտպանելու համար պողպատի կտորները դնում էին չորս անկյուններում¹¹⁶: Սարուխան գյուղում անձրևը դադարեցնելու համար խաչերկաթը տաքացնում, դուրս են դնում և վրան աղ լցնում: Կարկուտը դադարեցնելու համար Ծաղկաչեն գյուղում (Կամոյի շրջան) շամփուր կամ խաչերկաթ են դուրս գցում¹¹⁷: Կարկուտն ամենուրեք խաչերկաթով են դադարեցնում՝ գցում են դռան շեմքի առաջ կամ որևէ տեղ՝ կարկուտի տակ¹¹⁸:

¹¹² ԴԱՆ, Անգեղակոթ, 1983, էջ 1:

¹¹³ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Նոր-Բայազետի գաւառ, XVII գիրք, էջ 111:

¹¹⁴ Մ ա տ թ ե ո ս. ԺԶ, 19:

¹¹⁵ Ք ա ջ բ եր ու ն ի. Հայկական սովորութիւններ.— ԱՂ, VII–VIII գիրք, Թիֆլիս, 1901, էջ 129:

¹¹⁶ Փ. Ի. Դ յ է յ ր ա ն ո Վ. Селение Чайкенд Елисаветпольского уезда, той же губернии.— СМОМПК, отд. II. Тифлис, 1898, с. 91.

¹¹⁷ ԴԱՆ, Կամո, Մարտունի, էջ 16, 27:

¹¹⁸ Տ. Վ. Պ ա լ ե ա ն. Նախապաշարմունք, գուշակութիւնք, հմայք Կեսարիա եւ շրջակաները.— «Բիւրակն», թիւ 18, 28 ապրիլ, 1899, էջ 280, Ս. Մ ո վ ս ի ս յ ա ն. Հարք.— Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Երևան, 1972, էջ 65:

Անձրեն ու կարկուտը կտրելու նպատակով Անգեղակոթում դանակն աղոթում են՝ «Սուրբ Քամու խաչ, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Մարիամ Աստվածածին» ասելով՝ խաչակնքվում են և դուրս են գցում¹¹⁹: Անձրե բերելու համար խաչերկաթը դուրսն են դնում, իսկ երբ չափազանց շատ է գալիս, այն «դադում են», որպեսզի անձրևը կտրվի¹²⁰: Երբեմն այլ միջոցների էին դիմում՝ Վարանդայում վառում էին Տեառնդառաջի մոմերը, շամփուրները խաչաձև դնում, քսկարենքը (եռոտանին) հակառակ դարձնում, Զատիկի ձվի կճեպները և նույն օրվա մատաղի ոսկորները դնում էին դռան մոտ՝ կարկուտը կտրվում էր¹²¹:

Լուսնի խավարման ժամանակ պղինձն ու երկաթը հարվածում են իրար, որպեսզի «լուսնին օգնեն ազատվել իրեն փակող հրեշտակներից»¹²², քանի որ անցանկալի երևույթներից, իբր, կարելի էր ձայնի ուժով ազատվել: Հրացանով և ատրճանակով կրակելիս նույնպես թե՛ նյութն է կարևորվում, թե՛՝ ձայնը:

Զենքերի, գործիքների ու սարքերի փոքրիկ օրինակները հմայական պահպանակներ են, ինչպես Վարդան Պետոյանի հիշատակած Սասունում սարքվող խոփերը: Վառ օրինակներից են Հայաստանի պատմության թանգարանում պահվող, 1900 թ. Վանում պատրաստված մանկական հմայական պահպանակ-պարանջանի¹²³ կախիկները, որոնցից են ատրճանակը, դաշույնը, թուրը, սակրը, կացինը, ուրազը, սանդեքը, մկրատը, բանալին և կողպեքը: Կարևոր է նշել, որ մետաղե առարկաները բրոնզի դարաշրջանից մինչև այժմ պահպանում են իրենց գերբնական բազմաբովանդակ և, հատկապես, չարխափան ու բարեբեր հատկանիշները, որոնք գալիս են նյութի՝ մետաղների պաշտամունքից: Բացի այդ, նրանց գորուծյունն անմիջականորեն կապվում է նաև այդ առարկաները ստեղծողի՝ դարբնի հետ, որն, ինչպես նշվեց, բարու համար զենք պատրաստողն է, ամպրոպամարտիկ է և արարիչ¹²⁴:

¹¹⁹ ԴԱՆ, Անգեղակոթ, էջ 3:

¹²⁰ ԴԱՆ, Կամո, Մարտունի, էջ 36:

¹²¹ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Վարանդա, էջ 244:

¹²² ԴԱՆ, Ղափան, 1981, էջ 4-5:

¹²³ Ա. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Մանկական եզակի ապարանջան.— Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, Երևան, 2013, էջ 256-265:

¹²⁴ Ա. Թ ա դ և ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 180:

МЕТАЛЛИЧЕСКИЕ ИНСТРУМЕНТЫ, ОРУЖИЕ И
УСТРОЙСТВА В МАГИИ

АСТХИК ИСРАЕЛЯН

Резюме

В народных верованиях сверхъестественные свойства определенных предметов зависят от ряда факторов, в частности, от материалов — металлов, которые имеют небесное происхождение и символизируют космическую энергию. Железо, сталь, медь упоминаются в заклинаниях, употребляются в различных церемониях и ритуалах: например, бездетные женщины забивали железные гвозди в священный камень, символизирующий пуп во время паломничества. В свадебном обряде меч, перочинный нож и замок с ключом были необходимыми предметами. Во время родов цепь, плуг, мотыга, вертел, серп, ключ, нож, ножницы, выстрелы из пистолета и ружья защищали мать и новорожденного от злых духов. Детей в течение 40 дней после рождения защищали от злых сил чесалкой для шерсти, напильником (который клали под подушку), вертелом, кочергой, ножом, ножницами, иголками. Гвоздь, иголка, цепь, подкова, замок и монеты (которые закапывали в фундамент жилища) приносили счастье, удачу, благосостояние и охраняли дом от глаза и злых духов. От града, дождей и засухи защищались кочергой и ножом. Причины болезней угадывали и лечили гвоздями, мечом, молотом, иголками, ножами, булавками, ножницами. Опахивание земли металлическими орудиями или вычерчивание круга вертелом ограждало от болезней и злых духов. Вертелы и кинжалы защищали от козней души покойника. В народных верованиях особо почитался кузнец — создатель металлических орудий, оружия, амулетов, в которых нуждались люди. Ему приписывались мифологические черты демиурга, громовержца или помощника громовержца.

METAL WEAPONS, TOOLS AND DEVICES IN MAGIC

ASTGHİK ISRAELYAN

Summary

In popular beliefs the supernatural properties of certain objects depend on a number of factors, in particular on the metals, which have celestial origin and symbolize cosmic energy. Iron, copper and steel are mentioned in

incantations, they are applied in different religious rites, e.g. during the pilgrimage childless women hammered iron nails into the sacred stone symbolizing navel. In wedding ceremony swords, penknives and key locks were necessary objects. At childbirth chain, plough, sickle, hoe, sword, key, shotgun and pistol shot protected the newborn child and its mother from the evil spirits. During 40 days after the child's birth swords, keys, skewers, wool scratchers, poker, scissors, files were necessary to defend children from the evil. Nails, horseshoes, chains, needles, locks and coins (which were buried in the foundation of the house) brought happiness, success, welfare and protected the house from evil eye and evil spirits. Poker and knife defended from rain, hail and drought. While healing and in divination practices nails, swords, hammers, needles, pins, knives, scissors were used. Plowing the land with metal tools or drawing a circle with a spit shields from diseases and evil spirits. Poker and dagger defended from the intrigues of the deceased's soul. In folk beliefs the blacksmith who made the weapons and amulets protecting people, was especially regarded as the mythological features of the Demiurge – the God of Thunder or the assistant of the Thunderer, were ascribed to him.

«ՂԱՐԱԲԱՂ» ՏԵՂԱՆՎԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՄԱՆ
ՆՈՐ ՎԱՐԿԱԾ

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Մեծ Հայքի Արցախ նահանգի «Ղարաբաղ» օտարակազմ անվանումը հանդիպում է սկսած XIV դարից¹: Անվան «Սև այգի» բառացի թարգմանությունը նույնպես հին է, հիշատակվում է XVI դարում²: Հենց բառացի այս թարգմանությունն էլ լայն տարածում է ստացել:

Հատկապես Ղարաբաղյան շարժման տարիներին հաճախացան «Ղարաբաղ» անունը ստուգաբանելու փորձերը: Ըստ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից ռուսերեն լեզվով տպագրված «Լեռնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք» աշխատության՝ այն կազմվել է պարսկական աշխարհագրական անվանակարգի հիմքի վրա. աշխարհագրական նույն տարածքի դաշտային մասի «Բաղ-ի սաղիֆ»-ին («Սպիտակ այգի») ի հակադրություն՝ դրա լեռնային մասը կոչվել է «Բաղ-ի սիախ», որը և թուրքալեզու ցեղերի կողմից իմաստավորվել է որպես «Սև այգի»³:

Լեզվաբան գիտնականների կարծիքով՝ լեզվական աղավաղման իմաստավորման հիմքում հայկական արմատ է դրված՝ «բալք» – «բաղք» ցեղանունը⁴:

Չենք անդրադառնա «Ղարաբաղ» անվան ծագման այլ վարկածների, քանզի մեր նպատակը ոչ թե դրանց հերքումն է և վերջնական լուծում առաջարկելը, այլ մեզ ավելի հավանական թվացող մի նոր վարկածի առաջադրումը:

Հայտնի են օտար տեղանունների առաջացման ուղիներ, տարբերակներ, որոնք և ինչ-որ կերպ իմաստավորվում, բացատրվում են: Դրանք կարող էին առաջանալ, օրինակ, տվյալ տեղանքի կամ տարածքի ինչ-որ յուրահատկության հիմքի վրա՝ օտարի կողմից իր լեզվով տրված որակում-բնորոշումից, և այս դեպքում կարևոր է, թե ինչպիսին է եղել դրա նախնական հայկական անվանումը, դրա հետ նոր տրված անունը կարող է ընդհանրապես որևէ կապ չունենալ: Արցախն իր պտղատու ծառերով հարուստ անտառներով կարող էր եկվորների կողմից «բաղ» (այգի) համարվել և կոչվել: Այդ «բաղն»

¹ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 521:

² Նույն տեղում:

³ Нагорный Карабах: историческая справка. Ереван, 1988, с. 8.

⁴ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 521:

էլ կարող էր ունենալ «ինչպիսի՞» հարցին պատասխանող իր բնորոշումը՝ լծորդվելով հիմնական իմաստն արտահայտող մյուս բաղադրիչի՝ «բաղի» հետ: Այս դեպքում որպես բնորոշիչ բառ կարող էր լինել, օրինակ՝ «գեղեցիկ», «զարմանալի» «լեռնային», «կանաչ», «փարթամ», անգամ՝ «գեղին», «կարմիր» (աշնանային գույներով) և այլն, բայց ինչո՞ւ «սև»՝ մնում է անբացատրելի:

Հայտնի է հայկական տեղանունների օտար կազմությունների առաջացման ավելի տարածված մի այլ տարբերակ. հայկական անվանման հիմքի վրա կատարվում է դրա հնչողութայնը մոտ այնպիսի մի աղավաղում, որը եկվորների լեզվում իմաստավորված ինչ-որ բան է նշանակում: Այս դեպքում արդեն կարևոր չէ, թե ինչ է նշանակում դրա բառացի թարգմանությունը և որքանով է այն բնորոշում տվյալ տեղանքը: Այսինքն՝ եթե «Ղարաբաղ» բառ-անվանումն առաջացել է այս ճանապարհով, ապա «ինչո՞ւ սև» հարցը դուրս է գալիս: «Ղարաբաղ» բառը պետք է որ առաջացած լինի այս երկրորդ, ավելի տարածված հայկական հիմքի վրա աղավաղման ճանապարհով: Ստորև ներկայացնենք այդ ուղղությամբ մի քանի փաստ ու դիտարկում:

XIII դ. հայերեն ձեռագրերից մեկի հիշատակարանը⁵ նույն երկրամասի համար օգտագործում է «Առանի Պաղին» անվանումը. «Գրեցաւ տառս ... ի գաւառս Առանի Պաղին, ի սրբափայլ լերինս Հայր Մակար կոչելոյ...»⁶:

Բերված նախադասության մեջ «Պաղին»-ը («ի գաւառս Առանի Պաղին») քերականորեն կարող է լինել ներգոյական հոլով, այդ դեպքում նրա ուղղականը կլինի «Առանի Պաղ»՝ նշանակելով Առանի գով, հովասուն մասը: Այսինքն՝ հիմնականում կիսաանապատային շոգ կլիմայով հայտնի Առան աշխարհի (որ նույն Աղվանքն է) մեջ մտնող, անտառներով հարուստ ու գով Արցախն ինչ-որ ժամանակ բնորոշվել է որպես «Առանի Պաղ», և այդ բնորոշումն օգտագործվել է որպես հատուկ անուն:

Սակայն «Պաղին» տեղանունը հենց այս ձևով՝ որպես ուղիղ ձև, չատ հին է և տարածված՝ մոտ մեկ տասնյակ կիրառություններով⁷: Այսինքն՝ չի բացառվում նաև, որ այդ անվանումը հայտնվեր այստեղ, և տարբերակելու համար արդեն այլ տեղում գոյություն ունեցողներից՝ կոչվեր «Առանի Պաղին»:

Այսինքն՝ «Ղարաբաղ»-ի առաջին՝ «Ղարա» բաղադրիչի տակ կարող էր լինել «Առան» անվանումը, իսկ երկրորդ՝ «բաղ» բաղադրիչի

⁵ Հիշատակարանի վրա, այս առիթով, մեր ուշադրությունը հրավիրեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

⁶ Ա. Մ ա թ Լ ո ս յ ա ն. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 77:

⁷ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 294:

հիմքում՝ կա՛մ հայերեն «պաղ» (զով, սառը) բառն է, կա՛մ «Պաղին» հայկական տարածված տեղանունը⁸:

Եկվորների լեզվում «պաղ»-ը կամ «Պաղին»-ը հեշտությամբ կարող էր վերաիմաստավորվել «բաղ»-ով՝ նկատի ունենալով արդեն ասված՝ Արցախի անտառների հիմնականում պտղատու լինելու վերը նշված հանգամանքը, իսկ «Առան» բառից ստանալ հնչողությամբ մոտ «ղառա»-«ղարա»-ն, և այս դեպքում ոչ մի նշանակություն չպիտի ունենար, թե այն բառացի թարգմանությամբ ինչ կարող էր նշանակել:

Բայց կա ևս մի հանգամանք: Պարտադիր չէ, որ վերաիմաստավորողները «ղարա»-ի տակ հենց «սև» հասկանային: Որոշ հայկական բարբառներում օգտագործվող օտար կազմությամբ բառերում «ղարա»-ն կցվում է բույսերի անունների՝ նշելու համար դրանց ոչ մշակովի, «վայրի», «բնական» լինելը՝ ի տարբերություն մարդու կողմից մշակվող՝ նրանց նույնանուն տեսակների: «Առվույտ» բառի օտար «յոնջա»-ն ունի «ղարայոնջա» տարբերակը. առաջինն օգտագործվում է ցանովի, մշակովի բույսի համար, երկրորդը՝ դրա վայրի տարատեսակի: Աճառյանն ունի «Ղարասէ», որի դիմաց նշում է «վայրի սալոր»⁹: Այսինքն՝ չի բացառվում, որ այս բառը տվյալ (եկվորների) լեզվում բազմիմաստ է եղել և ունեցել է նաև այս երկրորդ՝ «վայրի», «բնական» նշանակությունը: Այս դեպքում՝ «Առանի Պաղ» կամ «Առանի Պաղին» անվան «Ղարաբաղ» օտարակազմությունը կարող է նաև իմաստավորված լինել՝ որպես վայրի, բնական, ավելի գեղեցիկ բառով անձեռակերտ (ղարա) այգի (բաղ): Արևելքից եկած ցեղերին ծանոթ անտառը պետք է որ լիներ ոչ պտղատու և բնական աճած, այգին (բաղը)՝ պտղատու և մարդու կողմից հիմնված: Նրանց հանդիպած նոր ու անսովոր երևույթը՝ բնական անտառ, բայց հարուստ պտղատու ծառերով, կարող էր հայկական տեղանվան հիմքի վրա առաջացնել հենց այսպիսի վերաիմաստավորում՝ «վայրի, բնական այգի»:

Այսինքն, մեր վարկածը հետևյալն է.

ա) «Ղարաբաղ» օտարակազմ բառի հիմքում հայերեն բաղադրիչներ են՝ «Առան» և «Պաղին» (կամ՝ պաղ),

բ) Դրանք միմյանց միացնելով՝ թուրքալեզու եկվորներն այն իմաստավորել են ոչ թե որպես «Սև այգի», այլ «վայրի (բնական) այգի» նշանակությամբ:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 166:

НОВАЯ ВЕРСИЯ ПРОИСХОЖДЕНИЯ И ЭТИМОЛОГИИ
ТОПОНИМА «КАРАБАХ»

АШОТ САРГСЯН

Резюме

Иностранное название «Карабах» Арцахской области Великой Армении встречается начиная с XIV века. Буквальный перевод названия — «Черный сад» — также древний и встречается уже в XVI веке. Тем не менее, этот буквальный перевод, нашедший широкое распространение, непонятен с точки зрения известных канонов формирования топонимов на иностранных языках. При помощи применения этих канонов и используя некоторые рукописные, топонимические и диалектальные материалы предлагается новая версия возникновения и этимологии названия «Карабах»:

а) в основе чуждого названия «Карабах» лежат армянские топонимы «Аран» и «Пагин» (или слово «паг», что означает «прохлада»),

б) тюркоязычные пришельцы, соединив эти два названия, осмыслили их не как «Черный сад», а в значении «дикий, естественный» (нерукотворный) сад.

A NEW THEORY OF THE ORIGIN AND ETYMOLOGY OF THE
TOPONYM “KARABAKH”

ASHOT SARGSYAN

Summary

The foreign name “Karabakh” of the Artsakh province of Great Armenia occurs beginning from the 14th century. The literary translation of the name “Black garden” is also old and is mentioned in the 16th century. Nevertheless, the widespread application of this literal translation does not correspond to the known rules defining the emergence of foreign toponyms. By the application of the mentioned rules and on the basis of some manuscript, toponymic and dialectal materials, a new hypothesis of the emergence and etymology of the name “Karabakh” is hereby suggested:

a) The word “Karabakh” of foreign origin is based on the Armenian toponyms “Aran” and “Paġin” (or “Paġ”- cool).

b) The turkic-speaking new-comers have combined and distorted the Armenian toponyms, and have interpreted them not as “black garden”, as is widely accepted, but as “wild”, “natural” (not of human making) orchards.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐՁՐՈՒՄԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղաշրջումը ցավալի հետևանքներ ունեցավ թե՛ արևելահայության և թե՛ արևմտահայության համար, թեպետ նույն թվականի դեկտեմբերի 29-ին խորհրդային կառավարությունն ընդունեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը, ըստ որի՝ Ռուսաստանը ճանաչեց գրավյալ Թուրքահայաստանի ազատ ինքնորոշման իրավունքը, այն է՝ սեփական պետություն ստեղծելու արևմտահայերի իրավունքը:

Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի վաղաժամ դուրս բերման բոլշևիկյան իշխանությունների քաղաքականության, իսկ ավելի ճիշտ՝ արդեն դեկտեմբերի սկզբից տարերայնորեն սկսված համատարած դասալքություն արդյունքում հայ ժողովուրդը կրկին հայտնվեց թուրքական ներխուժման վտանգի առջև: 1917 թ. դեկտեմբերի 5-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև երզնկայում կնքված զինադադարի ընձեռած հնարավորությունից օգտվելով՝ թուրքերը վերադասավորեցին իրենց ուժերն ու փետրվարի 12-ին անցան լայնածավալ հարձակման և կարճ ժամանակահատվածում վերագրավեցին Արևմտյան Հայաստանի տարածքը:

Թուրքերի առաջխաղացման առաջին օրերին, հենց այդ անելանելի իրավիճակում 1918 թ. փետրվարի 13-ին էրզրումում (Կարին) հռչակվեց Հայաստանի անկախությունը: Հայկական պետականության վերականգնման մասին գրավոր հռչակագիրն ազդարարեց էրզրումի կայսզորի պարես գնդապետ Արսեն Թորգոմը¹. «Եվ ահա 1918 թ. Յունուար 30-ին (հ.տ.) պայծառ ու ցուրտ առավոտ մը կը հռչակուէր «Թորգոմեան Անկախութիւն»ը, գրաւոր յայտարարութեամբ մը: Անկախ եւ Ազատ Հայաստան, Կարինը հայոց մայրաքաղաք»²:

1919 թ. աշնանն ԱՄՆ սենատում քննարկվում է հայության համար չափազանց կարևոր խնդիր՝ Հայաստանում խաղաղության պահպանման հարցը: Դրա շուրջ լսումներն անցկացվել են սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 10-ը սենատի Արտաքին Հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում³: Լսումների հիմքում

¹ Արսեն Թորգոմը (Արշակ Երվանդյան) 1918 թ. սկզբին Անդրանիկի ու Հ. Զավրիեի կողմից նշանակվել է Երկրապահ զորամասի Ա գնդի հրամանատար և ուղարկվել էրզրում:

² Ղ. Չարբղ. Հուլանատյան Բարձր Հայքի, Կարինապատում, Բեյրութ, 1957, էջ 502–503:

³ St' u Maintenance of Peace in Armenia. Hearings before a Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate. 66th Congress.

սենատոր Ջ. Շ. Ուիլյամսի կողմից սեպտեմբերի սկզբին սենատին ներկայացրած Հայաստանին զորքով, զենքով ու զինամթերքով օգնելու բանաձևն էր⁴: Լսումներին հանդես է եկել 13 վկա՝ ամերիկացիներ ու հայեր, ովքեր պաշտպանում էին բանաձևը և պնդում՝ Հայաստանին օգնություն տրամադրելն անհրաժեշտ էր ու անհետաձգելի:

Որպես վկա հանդես է եկել նաև էրզրումի կայազորի պարես զնդապետ Արսեն Թորգոմը, ով ենթահանձնաժողովին ներկայացել է որպես գեներալ⁵ Արսեն Թորգոմ: Պաշտպանելով Հայաստանին ռազմական օգնություն հատկացնելու Ուիլյամսի բանաձևը՝ նա անդրադարձել է 1918 թ. փետրվարի 13-ին էրզրումում Հայաստանի անկախության հռչակմանը և ենթահանձնաժողովին հանձնել հռչակագրի տեքստն անգլերեն թարգմանությամբ: Վերջինս ամբողջությամբ ներառվել էր ենթահանձնաժողովի լսումների արձանագրության մեջ: 1919 թ. վերջերին լսումների նյութերը լույս են տեսել առանձին գրքուկով:

Հրապարակվող հռչակագիրն առաջին հերթին կարևորվում է նրանով, որ մեկ անգամ ևս հաստատում է՝ 1918 թ. մայիսին Հայաստանի անկախության հռչակումն ու Առաջին հանրապետության ի հայտ գալը պատահականություն կամ հանգամանքների բերումով չէր: Դա հասունացած անհրաժեշտություն էր ու պիտի իրականանար՝ ելնելով հայերի սեփական պետություն ունենալու իրավունքից ու մեծ ձգտումից, որը կապված էր և անմիջականորեն բխում էր, պատմական Հայաստանում նախորդիվ տեղի ունեցած մեկը մյուսին հաջորդող իրադարձություններից, ինչպիսիք էին՝ ժամանակավոր կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում մտցրած հատուկ վարչաձև գեներալ-կոմիսարությունը, «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը, «Թորգոմյան հռչակագիրը»:

First Session on S. J. R. 106, A Joint Resolution for the Maintenance of Peace in Armenia. Printed for the use of Committee on Foreign Relations, Washington, Government Printing Office, 1919, pp. 60–62 (*այսուհետ՝ Maintenance of Peace in Armenia*), pp. 1–125.

⁴ Congressional Record, vol. LVIII, pt. 5, pp. 5067; Maintenance of Peace in Armenia, p. 3; Ջ. Կիրակոսյան. Հայաստանը միջազգային ղեկանազրությունից և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), Երևան, 1972, էջ 566:

⁵ Հռչակագրի տեքստի տակ գրված է Արսեն Թորգոմի անունը որպես զնդապետ: Վերջինս հաջորդում է կարճ բացատրական հետգրություն, ուր Թորգոմը հայտնում է, որ հռչակագրի ազդարարումից անմիջապես հետո նրա կորպուսի զինվորներն ողջունեցին իրեն որպես «Հայաստանի առաջին գեներալ»: Շարունակելով հետգրությունը՝ Թորգոմը նշում է, որ ուրախությամբ և հպարտությամբ է ընդունել այդ կոչումը: Հետևաբար, հետգրությունից հետո, հռչակագրում երկրորդ անգամ տեղ է գտել Թորգոմի անունը՝ այժմ արդեն որպես գեներալ Թորգոմ:

1918 թ. փետրվարի 13-ին էրզրումում ազդարարված Հայաստանի անկախության հրապարակվող հռչակագրի տեքստն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ⁶: Հռչակագրի հայերեն տեքստը թարգմանություն է անգլերեն աղբյուրից, այն է՝ ԱՄՆ սենատի 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների փաստաթղթերի հրապարակված նյութերից⁷:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ
ԿԱՐԻՆ (ԵՐԶՐՈՒԲ) 31 ՀՈՒՆՎԱՐԻ (13 ՓԵՏՐՎԱՐԻ), 1918 Թ.,
ՁՈՐՔԻ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայկական ժողովրդական առասպելը, որն այնքան թանկ է մեր սրտերին, ներկայացնում է Բաբելոնյան աշտարակաշինության ժամանակաշրջանը՝ որպես մեր ազգի առաջացման և առաջին անկախության ժամանակաշրջան:

Հայկը, ում անունը մենք կրում ենք, չկամեցավ ենթարկվել գոռոզ Բելին և հեռացավ Բաբելոնից: Ու երբ այս բռնակալ տիրակալը

⁶ Հռչակագրի մասին տե՛ս՝ Վ. Թոթովենց (Ա. Մարմարեան). *Զօր. Անդրանիկ եւ Իւր Պատերազմները*, Կ. Պոլիս, 1920, էջ 311–312, 315–316, Ա. Թէրզիպաշեան. *Անդրանիկ, Փարիզ, 1942*, էջ 332–333, Գ. Կարինյան. *Ազգային հերոս Զօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Փարիզ, 1953*, էջ 71, Վ. Փափազյան. *Իմ Յուզերը*, հ. Բ, Պեյրոթ, 1953, էջ 467, Ղ. Չարըզ. *նշվ. աշխ.*, էջ 502–503, “Armenian Review”, Watertown, Massachusetts, 1980, vol. 33, № 4, pp. 441–443; Հայկական Հարց, Հանրագիտարան, Երևան, 1996, էջ 136, Հ. Այվազյան. *Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան*, Երևան, 2004, էջ 133, Ռ. Գ. Հովհաննիսյան. *Հայաստանի Հանրապետություն, Վերսալից-Լոնդոն 1919–1920*, հ. II, Երևան, 2014, էջ 455, R. G. Hovannisian. *From Versailles to London, 1919–1920*, vol. II, Berkley-Los Angeles-London, 1982, p. 381; Р. Г. О в а н и с я н. *Международные отношения Республики Армения 1918–1920*. Ереван, 2007, с. 277; Գ. Մախմուրյան. *Նախիջևանն ըստ Մ. Նահանգների Պետքարտուղարության եւ Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերի (1918–1920)*.— «Հայկազեան Հայագիտական հանդես» (Բեյրոթ), 2017, հ. 37, էջ 210–211, տե՛ս նաև <https://sci.academia.edu/GayaneMakhmourian>; Г. Ма х м у р я н. *Армения в политике США 1917–1923 гг.* Ереван, 2018, с. 251–252.

⁷ Maintenance of Peace in Armenia, p. 60–62. *Հստմների նյութերը հրատարակվել են՝ “Armenian Review”, 1980, vol. 33, № 4, pp. 441–443; 1981, vol. 34, № 1, pp. 46–79; № 2, pp. 199–217; № 4, pp. 412–427. “Maintenance of Peace in Armenia” գրքույկի համակարգչային շարվածքը տե՛ս նաև՝ <https://ia700408.us.archive.org/19/items/maintenancepeac00rela-goog.pdf>.*

հետապնդեց «Նահապետին», Հայկը խիզախորեն նրան ընդառաջ գնաց և սպանեց նրան Վանա լճի մերձակայքում՝ Հայերի հովիտ (Հայոց Ձոր) կոչվող շրջանում:

Այսպիսով, ազատության և արդարության գաղափարն է ուղղորդել մեր ժողովրդի ծագումը, և այս գաղափարը հաղթանակեց:

Բայց պայքարի միջոցով էր, որ հին Հայերը ձեռք բերեցին իրենց անկախությունը: Եվ կրկին պայքարի միջոցով է, որ ավելի քան քսան դարերի ընթացքում Մեծ Հայքը և Փոքր Հայքը, իսկ ավելի ուշ Կիլիկյան Հայաստանը, որն այնքան փառահեղ էջեր է պարգևել խաչակիրների պատմությանը, ինքնակազմակերպվել և զարգացել են:

Հայ ազգի գոյությունն ամփոփված է մեկ բառում՝ Գոյամարտ: Մշտական չդադարող պայքար, հաճախ հաղթական, ավելի հաճախ անհավասար և վշտալի, քանի որ թշնամիները Հայաստանի շուրջը լորը բազմաթիվ են: Սակայն հաջողության փուլերի ընթացքում, ինչպես նաև ամենասարսափելի անհաջողությունների շրջաններում, երբ ամեն ինչ թվում է կորած, հավատը չի լքում Հայերին, և Հայերը չեն հրաժարվում պայքարից:

Այսպես է դարերի վայրիվերումները ճեղքելով աշխարհի ամենահնագույն ազգերից մեկը վերապրել շատ այլ հզոր ազգերի, որոնք պայքարել էին նրա դեմ:

1375 թ. ապրիլի 16-ին Կիլիկիան՝ Հայկական տիրապետությունների զարգը և մեր անկախության ապաստանը, ընկավ թշնամու հարվածներից:

Ենթարկվելով կոպիտ ուժին, բայց երբեք չհնազանդվելով Հայ ժողովուրդը երբեք չպատվազրկեց իրեն:

Հպարտ իրենց բարոյական անկախությամբ և վստահ իրենց ապագայի հանդեպ՝ Հայերը հինգուկես դարերի ընթացքում շարունակել են իրենց պայքարը հանուն ազատության:

Այս պայքարի վերջին փուլն ստիպեց ողջ աշխարհը ցնցվել սարսափից և հուզվել հիացմունքից:

Ոչ մի գրիչ, ոչ մի բառ չէր կարող նկարագրել Հայերի սահմուկեցնող նահատակությունն այս վերջին քառասուն տարիների ընթացքում: Որպես անմեղ զոհ, Հայ ժողովուրդը հառաչել և տառապել է կառավարման այդ ամենաբարբարոս ձևի՝ թուրքական ռեժիմի տակ:

Մի հրեշավոր կառավարություն, որը ստանձնել էր պարբերական կոտորածների և զանգվածային տեղահանությունների միջոցով մեր ազգի ոչնչացումը:

Բոսֆորի ափերից մինչև Կովկասի սահմանագիծ և Սև ծովից մինչև Միջերկրական՝ Հայ արյունը թափվել է հեղեղի պես:

Չորս տարի է, ինչ Գերմանիան հրահրեց համընդհանուր պատերազմն աշխարհի գերիշխանությունը որոշելու համար, և ինչպես Բելգիան, Լեհաստանը, Սերբիան, Մոնտենեգրոն իրենց կամքից անկախ նետվել էին արյունալից ասպարեզ, նույն կերպ Հայաստանն արժանացավ դաժան վերաբերմունքի:

Մեր եղբայրներից և քույրերից հարյուր հազարավորներն ստորաբար կոտորվել են, մյուսները դանդաղ մահ են գտել Սիրիայի ու Միջագետքի անապատներում:

Հայաստան երկիրը՝ ժամանակին այնպես ծաղկուն, այժմ վերածվել է ավերակների ու ավերածուծությունների երկրի:

Ինչպես ծաղկուն անտառ, որը վանդալներն երազում էին հատել, հայ ազգն անխղճորեն ոչնչացվել է:

Այս ազգը տեսել է իր շուրջն ընկնող զավակների սարսափելի քանակը: Բայց անտառի կոծղերից նոր շիվեր են ծլել, որոնք արդեն բարձրացրել են դեպի երկինք իրենց դալար ճյուղերը՝ լի կյանքով:

Հայ ազգը, չնայած իր կրած ողջ անարդարությունը, չնայած բոլոր կոտորածներին, բոլոր դավաճանություններին, կատարյալ լքվածությունը, չէր ցանկանում մահանալ:

Այդ ազգը կապրի:

Չնայած մեր սրտերը կծկվեցին Ռուսաստանի հսկայական ողբերգությունից, ինչը կաթվածահար արեց մեր ուժը, մենք՝ հայերս, այնուամենայնիվ, նետվեցինք առաջ, թեկուզ և քիչ՝ բոլոր կողմերից, դեպի մեր հին հայրենիքը՝ պաշտպանելու մեր ժողովրդի խղճահար մնացորդները, այն ժողովրդի, որը չի հուսահատվի, և որը սպասել է հինգուկես դարերի ընթացքում՝ տառապելով և արյան մեջ լողալով, իր վերջնական ազատագրման ժամին:

Այսօր այդ ժամը, ի վերջո, եկել է:

Հայ ժողովրդի անունից, բոլոր նահատակների անունից, ովքեր տառապել են մեր երկրում, արդարություն, իրավունքի և ազատության ամենասուրբ սկզբունքների անունից ես՝ գնդապետ Թորգոմս, հայկական կորպուսի հրամանատարս և Կարինի (Էրզրումի) կայազորի պետս, այսօր Ձեր առաջնորդը, վաղը՝ Ձեզ հավասարը, հռչակում եմ Հայաստանի անկախությունը:

Կեցցե՛, ազատ Հայաստանը:

Կեցցե՛, հայկական բանակը:

Կեցցե՛, հայ ազգը:

Կեցցե՛ն մեր մեծ և ազնիվ դաշնակիցները:

Կեցցե՛, նրանց փառավոր զինուժը:

Վա՛յ նրանց, ովքեր կհամարձակվեն ձեռք բարձրացնել մեր ծնվող ազատություն վրա:

Կարին (Էրզրում), 31 հունվարի (13 փետրվարի), 1918 թ.

Գնդապետ Թորգոմ

Այս փաստաթղթի ընթերցման արարողությունից հետո իմ հայկական կորպուսի սիրելի զինվորներն ինձ ողջունեցին որպես «Հայաստանի առաջին գեներալ»:

Ես ընդունեցի այս կոչումն ուրախությամբ և հպարտությամբ:

Գեներալ Թորգոմ

Այստեղ հաջորդում են ստորագրութիւնները.

Ա. Արշագունի

Կարնո համայնքի հայ քահանա

Ս. Անանյան

Կարինում Հայաստանի պաշտպանութիւն խորհրդի նախագահ

Օ. Արիսդազեսյան

Ս. Քեքելիկյան

Կ. Թուրիգյան

Ս. Աբղայան

Բ. Ախիկյան

Ն. Մելիքյան

Հայաստանի պաշտպանութիւն խորհրդի և նահանգային պատվիրակութիւնների անդամներ

Ն. Բուլուդյան

Ռ. Նիքաիլյան

Դ. Աղասի

Ն. Փիրումյան

Հայկական տարբեր կոմիտեների և նահանգային պատվիրակութիւնների անդամներ

Հաքքի Փաշա

Քաղաքային խորհրդի փոխնախագահ

Համդի Էֆենդի

Քաղաքային խորհրդի անդամ

Թուրք բնակչութիւն ամենավեհ անդամներ

Հայերեն օրիգինալի վավերացված իսկական պատճեն

Փոխգնդապետ Դ. Դավիդյան

Հայկական ռազմական առաքելութիւն գրասենյակի պետ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ. Ֆրանսիացի հայագետներ (XIX–XX դարեր), խմբագիր բան. գիտ. դոկտոր Անուշավան Զաքարյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 703 էջ:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի շուրջ 20-ամյա ջանադիր աշխատանքի արդյունք «Ֆրանսիացի հայագետներ (XIX–XX դարեր)» մենագրությունն իր բովանդակությամբ և հարցերի ընդգրկուն շրջանակով նախադեպը չունեցող աշխատանք է: Այս մեծածավալ ուսումնասիրությունը տպագրվել է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի օժանդակությամբ՝ Ֆրանկոֆոնիայի 17-րդ միջազգային գագաթաժողովի շրջանակներում: Խմբագիրը «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանն է:

Հիմնելով «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը՝ Ա. Դոլուխանյանը մենագրություններով, հոդվածներով, ռադիո և հեռուստահաղորդումներում գիտական հանգամանալի մեկնաբանություններով ներկայացրել է եվրոպական հայագիտության, թերևս, ամենածանրակշիռ մասին՝ Ֆրանսիացի հայագետների գործունեությունը¹: Լույս են տեսել Ա. Դոլուխանյանի ուսումնասիրությունների գիտական նորոլյթն ու արժեքն ընդգծող հաղորդումներ և գրախոսություններ²: Այս առումով Ֆրանսիացի հայագետների գիտական վաստակն ամփոփող այս մենագրությունն սպասված էր:

¹ «Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ» (Երևան, 2002), «Վիկտոր Լանգլուան հայագետ» (Երևան, 2003), «Էդուարդ Դյուլորիեն հայագետ» (Երևան, 2004), «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» (Երևան, 2008), «Ֆրեդերիկ Մակլերը հայագետ» (Երևան, 2011), «Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր» (Երևան, 2014):

² Տես Ա. Զաքարյան. Աելիտա Դոլուխանյան. Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, «Եվրոպացի հայագետներ» մատենաշար, VI, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2011, 222 էջ. – ՊԲՀ, 2011, № 3, էջ 241–246: Ս. Մխիթարյան. Աելիտա Դոլուխանյան. Ֆելիքս Ներ և հայ քրիստոնեական մատենագրությունը. Երևան, «Արտագերս» հրատ., 2001, 92 էջ, Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ. Երևան, «Հայինֆո-Արտագերս» հրատ., 2002, 115

Գրքում յոթ առանձին ծավալուն բաժիններով և բազմաճյուղ ենթաբաժիններով դիտարկված են անցյալի և արդի անվանի հայագետներ Սեն-Մարտենի (1791–1832), Վիկտոր Լանգլուայի (1829–1869), Մարի Ֆելիսիտե Բրոսսեի (1802–1880), Էդուարդ Դյուլորիեի (1807–1881), Ֆրեդերիկ Մակլերի (1869–1938), Ֆրեդերիկ Ֆեյդիի (1908–1991), Ժան-Պիեռ Մահեի (ծն. 1944 թ.) կյանքն ու գործը: Ամեն առանձին բաժին ունի օտարալեզու՝ ռուսերեն, ֆրանսերեն կամ անգլերեն, առաջաբան ու ամփոփում և գրականության հարուստ ցանկեր: Նորութուն է Ա. Դյուլուխանյանի անդրադարձը Ժան-Պիեռ Մահեի գիտական դիմանկարին, որը ներկայացված է «Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» գիտական նոր մեկնաբանում» և «Հայաստանի պատմական ճշմարտությունը ըստ Աննի և Ժան-Պիեռ Մահեների» (ֆրանսերեն) խորագրերը կրող մասերում:

Օտարալեզու հայագետների երկերը հայերեն թարգմանելը և դրանք հայագիտության տարբեր ճյուղերում ընդգրկելը ռազմավարական նշանակության խնդիրներ է լուծում և խիստ հրատապ է: Ֆրանսիացի հայագետների աշխատությունները հիմնականում հայերեն թարգմանված չեն. ներկայացվող մենագրությունը բնագրային զուգադիր թարգմանություններով, առանձին հայագետների ժառանգության կարևոր տեղիների հայերեն փոխադրություններով սկզբնաղբյուրի արժեք ունի և կարող է նոր պրպտումների ու թարգմանությունների սկիզբ դառնալ: Հայագիտության նվիրյալների կյանքի և գործունեության նկարագրություն-քննությունը հնարավորություն է տվել ներկայացնելու նաև հայ ժողովրդի կյանքի պատմաքաղաքական, մշակութային դրսևորումները որպես համաշխարհային քաղաքակրթության կարևոր մաս. սա՛ է բազմիցս ակնարկում Ա. Դյուլուխանյանն իր մենագրության մեջ, և սա՛ է նրան հատկապես հիացնում ֆրանսիական հայագիտության մեջ:

Ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենի ջանքերով քննության նյութ են դարձել հայագիտության համար կենսական կարևորություն ունեցող գրեթե բոլոր ճյուղերը՝ աղբյուրագիտություն, բնագրագիտություն, պատմագրություն, բանահյուսություն, գրականություն, դրամագիտություն, տոմարագիտություն, վիմագրություն, տեղագրություն և այլն:

Ա. Դյուլուխանյանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆրանսիական հայագիտությունը ինքնանպատակ չէր, այլ համակարգված մի դպրոց՝ աստիճանաբար ձևավորվող ավանդույթներով, խնդիրներով, ծրագրերով, որի սկզբնավորողը Սեն-Մարտենն է: Այս դպրոցի հաջողությունները պատմաքաղաքական գործոններից զատ (ֆրանսերենը որպես գրոց լեզու մեծապես նպաստեց դրան) պայմանավորված էին նաև մի ներքին խթանով. դա սաների կողմից ուսուցչի աշխատանքն ամեն կերպ ավարտին հասցնելու մղումն էր, որն ընդգծում է Ա. Դյուլուխանյանը: «Ֆրանսիացի հայագետներ

էջ, Վիկտոր Լանգլուան հայագետ. Երևան, «Լուսակն» հրատ., 2003, 118 էջ. – ՊԲՀ, 2004, № 2, էջ 303–306:

(XIX–XX դարեր)» աշխատությունը հնարավորություն է տալիս ֆրանսիական հայագիտական դպրոցը գնահատել իր զարգացման օրինաչափությունների մեջ:

Հայագիտության ակունքներում կանգնած ֆրանսիացի գիտնականները կարևորել են հայ ժողովրդի կյանքը, պատմությունը և մշակույթն ընդհանուր գծերով ներկայացնելը: Մենագրության մեջ ընդգրկված գրեթե բոլոր երախտավորներն ունեն հայ ժողովրդի պատմական դիմանկարն արտացոլող ուսումնասիրություններ. Սեն-Մարտենի «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» երկհատորյակը (Փարիզ, 1818–1819) բաց է անում Հայաստանի պատմական անցյալի դռները ողջ Եվրոպայի առաջ: Այս աշխատությամբ Սեն-Մարտենը հիմնավորում է հայագիտության կարևորությունը Ֆրանսիայում: Վ. Լանգլուայի՝ Միլիթարյան միաբանությանը նվիրված աշխատությունը և գրքի երկրորդ մասը «Ակնարկ Հայաստանի պատմության և գրականության» (Վենետիկ, 1869), Էդ. Դյուլորիեի «Հայերը» ուսումնասիրությունը ռուսերենով (Թիֆլիս, 1854), Ֆր. Մակլերի «Հայաստանի շուրջը» հոդվածների ժողովածուն (Փարիզ, 1917), «Կիլիկիայի շուրջը. Զեյթուն (Համառոտ պատմություն հայկական ազգագրության» հետազոտությունը, նոր ժամանակների հայագետներից Ժան-Պիեռ Մահեի «Հայաստանը դարերի ապացույց» (2001), «Հայաստանի պատմություն» (2012) աշխատությունները եվրոպացի ընթերցողի համար գիտականորեն հիմնավորում են ո՞վ է հայը, ի՞նչ արժեքներ է կերտել այս ժողովուրդը, ի՞նչ միջավայրում է նա ստեղծագործել:

Հայ ժողովրդի մշակութային գանձերն աշխարհին ներկայացնելու և համաշխարհային պատմության ու մշակույթի մեջ հայ ժողովրդի դերն ընդգծելու լավագույն ուղին ֆրանսիացի հայագետները համարել են պատմական ստույգ աղբյուրների գիտական թարգմանությունները: Հայ պատմագրական ժառանգությունը մեծ մասամբ թարգմանված ու ծանոթագրված է ֆրանսիական հայագետների կողմից, և նրանցից յուրաքանչյուրն իր մասն ունի այս շնորհակալ գործում: Սեն-Մարտենի անկատար մնացած երազանքը՝ ունենալ հայ պատմիչների գրադարան, հետևողականորեն իրականացրին իր սաները՝ թարգմանելով և հրատարակելով թե՛ ուսուցչի անավարտ գործերը (Ստեփանոս Օրբելյանի Պատմության ֆրանսերեն ոչ ամբողջական թարգմանությունը լրացրեց Մ. Բրոսսեն)³, թե՛ նոր թարգմանություններ կատարելով: Վ. Լանգլուան հրատարակում է Գրիգոր Մագիստրոսի 83 թղթերը, V դ. հայ պատմիչներին երկու հատորով, Սմբատ Գունդստաբլի և Միքայել Ասորու երկերը: Բրոսսեն ամենաբեղունն ու հաջողակն էր. նա հրատարակում է 13

³ Այս գործն առ այսօր արդիական է, քանի որ Ստեփանոս Օրբելյանի Պատմության քննական բնագիր չունենք: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աբրահամյանի աշխարհաբար փայլուն թարգմանության համար (Սյունիքի պատմություն, Երևան 1986) Մարի Ֆելիսիտե Բրոսսեի թարգմանությունը ելակետային է եղել:

անուն պատմիչների երկեր՝ համապատասխան ծանոթագրություններով: Էդ. Դյուլորիեի երազանքը՝ հրատարակել հայ պատմիչներին 8 հատորով, ևս անկատար է մնում: Ժան-Պիեռ Մահեն թարգմանում է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը:

Ա. Դոլուխանյանը վերհանում է նաև Ֆրանսիացի հայագետների ուսումնասիրությունների մասնավոր, սակայն շատ կարևոր շրջանակները: Սեն-Մարտենի գիտական հետաքրքրություններն ընդգրկում էին հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը: Նա Արշակունի արքայական տոհմի պատմությունը քննելով ցույց է տալիս, որ ամենաներկարակյացը հայ Արշակունիներն էին: Վ. Լանգլուան հայկական դրամների ուսումնասիրությամբ հիմնավորում է դրամագիտությունը Ֆրանսիայում: Այս գործը շարունակում է Բրոսսեն՝ ուսումնասիրության շրջանակ ընդգրկելով նաև վրացական դրամները: Վ. Լանգլուան իր ուշադրությունն ուղղում է դեպի Կիլիկյան Հայաստանի պատմությունն ու մշակույթը: Բոլորովին նոր խոսք էր հեղինակի՝ XIII–XIV դդ. հայ դիվանագիտության պատմության ուրվագիծը, որն իր արդիականությունը չի կորցրել առ այսօր: Պատմամշակութային կապերի քննության առումով խիստ արդիական է նաև հայ ժողովրդի կյանքում խաչակիրների ունեցած դերի ճշգրտումը: Այդ հարցերին անդրադարձել է Էդ. Դյուլորիեն իր «Հավաքումն խաչակիրների պատմիչների, հայկական վավերագրեր» (Փարիզ, 1869) աշխատության մեջ: Յր. Մակլերը պատմամշակութային կապերի քննության համար կարևորում և ուսումնասիրության դաշտ է բերում հայ գաղթօջախների պատմությունը՝ հեղինակելով «Հայաստանը և Ղրիմը» (Փարիզ, 1930) աշխատությունը: Յր. Ֆեյդին գործում է իսկական գիտական սխրանք՝ թարգմանելով «Սասունցի Դավիթ» էպոսը (Փարիզ, 1964), որին կցված գիտական ծանոթագրություններն ունեն առանձին մենագրության արժեք և ցույց են տալիս Ֆեյդի-բանագետի խորթափանցությունն ու գիտական պաշարը: Ժան-Պիեռ Մահեն նորովի է թարգմանում Գրիգոր Նարեկացու հանճարեղ «Մատյան ողբերգության» երկը և գրողի աշխարհայացքը քննում բոլորովին նոր մոտեցմամբ:

Ֆրանսիական հայագիտական դպրոցն իր գործունեության հենց սկզբից խիստ կարևորել է միջնադարյան հայ մշակույթի, թերևս, ամենակարևոր հուշարձանը՝ հայ դրձագիր մատյանները, որոնց հետ աշխատանքը պահանջում էր ձեռագրագիտական և աղբյուրագիտական հմտություններ: Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն մեծապես նպաստում էր այդ գործին: Հայագետներն անընդհատ կապի մեջ էին նաև հայագիտական բոլոր հայտնի կենտրոնների հետ: Նրանք ստանում էին ձեռագրերի պատճեններ, կազմում ցանկեր, ընդօրինակում հիշատակարաններ՝ շրջանառության մեջ էին դնում ձեռագիր աղբյուրներից քաղած կարևոր տեղեկությունները՝ անմասն չմնալով նաև ձեռագրացուցակների կազմման աշխատանքներից: Մարի Ֆելիսիտե Բրոսսեն կազմեց էջմիածնի գրատան ուսերեն-ֆրանսերեն երկլեզվյան ցուցակը (Ս.

Պետերբուրգ, 1840), 1908 թ. Ֆ. Մակլերը՝ Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը՝ առաջաբանով և ծանոթագրություններով⁴: Իսկ Ֆր. Ֆեյդին հմայիլների իր ուսումնասիրությունը զուգահեռ կազմեց նաև հմայիլների ձեռագրերի ցուցակ ու դասակարգեց դրանք:

Ֆրանսիացի հայագետները ճամփորդել են. նրանցից շատերը տեսել էին ճարտարապետական այն կառույցները՝ հատկապես վանքերն ու գրադարանները, եկեղեցիները, պատմական վայրերն ու անձանց, որոնց մասին խոսում էին: Ա. Դոլուխանյանի աշխատությունն այս առումով ևս շահեկան նյութ է երևան հանում՝ ուղևորությունների արդյունք հանդիսացող ամեն զեկուլյցի, հաղորդման կամ հրապարակման բնագիրը գրեթե հարազատորեն ներկայացնելով: Դրանք պարունակում են գիտական արժեք ունեցող տեղեկություններ և լրացնում այլ աղբյուրներից ունեցած մեր գիտելիքները: Ուշագրավ են հատկապես Բրոսսեի Հաղպատ ու Սանահին վանքերին նվիրված և Ֆր. Մակլերի «Բաղեշի Աստվածամոր տաճարը» ուսումնասիրությունները: Այս աշխատությունները չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը և կարող են օգտակար լինել գրչության կենտրոնների, միջնադարյան հայ մատենադարանների ուսումնասիրության գործում:

Կրթության գործն ու նրա գիտական հիմնավորման անհրաժեշտությունը չեն վրիպել Ֆր. Մակլերի, Ֆր. Ֆեյդիի ուշագրությունից: Եվ դա պարզ է, քանի որ հայագիտական նոր սերնդին անհրաժեշտ էին հայերենին տիրապետող սաներ, ֆրանսիական հայագիտական դպրոցը պետք է լուծեր սերնդափոխության խնդիր ևս: Ֆր. Մակլերը հեղինակում է «Հայ գրականության քրեստոմատիան» (Փարիզ, 1932), Ֆր. Ֆեյդին՝ «Հայոց լեզվի դասագիրքը» (Փարիզ, 1969): 1912 թ. Փարիզում լույս է տեսնում Ֆր. Մակլերի դասախոսությունը՝ նվիրված Արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայոց լեզվի ամբիոնի պատմությանը. սա միաժամանակ նաև ֆրանսիական հայագիտության ընթացքը ներկայացնող դասախոսություն էր: Նոր շրջանի հայագետները անմասն չէին նաև ժամանակակից հայոց պատմության և գրականության իրողությունները գնահատելիս. Ֆր. Մակլերը, Ֆր. Ֆեյդին և Ժան-Պիեռ Մահեն իրենց աշխատություններում դատապարտել են թուրքական հայաջինջ քաղաքականությունը Առաջին համաշխարհայինի և հետագա տարիներին, ա-

⁴ «Ֆրանսիան Արևմուտքում եղաւ այն երկիրը, որը ամենից վաղ ներգրավվեց այդ փնտրտուքի (իմա՛ հայերեն ձեռագրերի) մէջ». տե՛ս Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Catalogue, Raymond H. Kévorkian et Armèn Ter-Stépanian, Avec la collaboration de Bernard Outtier et Guévorg Ter-Vardanian, Paris, 1998, p. XXIV. Նկատենք՝ Փարիզի Ազգային գրադարանի նոր՝ 1998 թ. լույս տեսած ցուցակն սկսվում է Ֆր. Մակլերի ցուցակի մասին նշումով. տե՛ս նույն տեղում, էջ XXI:

ուանձին ուսումնասիրություններ նվիրել Խ. Աբովյանի կյանքին ու գործին, Երվանդ Օտյանին, Հակոբ Պարոնյանին:

Ա. Դոլուխանյանի աշխատությունը վկայում է՝ Ֆրանսիական հայագիտությունը հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը գնահատում է որպես համաշխարհային լուսավոր և հարուստ, սակայն Եվրոպային տակավին անհայտ մաս: Այդ մշակույթը դեռ ասելիք ունի և կարևոր է «մարդկության ընդհանուր պատմությունը» ճիշտ պատկերացնելու համար: Ներկայացվող մենագրությունը նաև Ա. Դոլուխանյանի մտորումների արդյունքն ու ամփոփումն է համաշխարհային պատմության մեջ հայ ժողովրդի ունեցած դերի վերաբերյալ: Այն ունի թե՛ գիտական և ճանաչողական, թե՛ ազգային ու քաղաքական արժեք:

Մարի Ֆելիսիտե Բրոսսերին տված Ա. Դոլուխանյանի գնահատականը բնութագրում է հե՛նց Ֆրանսիական հայագիտությունը. այն «չնչում է բարությունը, անցյալի նշանավոր գործիչների լավագույն գործերի գնահատմամբ, մարդկային դարավոր իմաստությունը պահպանելու մտահոգությամբ» (էջ 318):

«Ֆրանսիացի հայագետներ (XIX–XX դարեր)» աշխատությունը Ա. Դոլուխանյանի երախտագիտության տուրքն է հայ ժողովրդի մշակույթն ըստ արժանվուն և իրական փայլով ներկայացնող Ֆրանսիացի հայագետների պայծառ սերնդին:

Ուստի, ցանկալի է առաջիկայում մենագրությունը հրատարակված տեսնել նաև Ֆրանսերեն լեզվով: Վստահորեն կարելի է ասել, որ Ա. Դոլուխանյանի կոթողային այս ուսումնասիրությունն արժանի է պետական պարգևի:

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը, կազմել և հրատարակության է պատրաստել Ա. Ջաքարյանը, *Երևան, Ազգային ժողով, 2018, 144 էջ + 4 էջ ներդիր:*

2018 թվականին հայ ժողովուրդը տոնում է Հայաստանի անկախության վերականգնման մեկդարյա հոբելյանը: Չնայած երկուսու-

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ**



կեսամյա կարճատև գոյությունը՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը նկատելի հետք թողեց հայության ճակատագրում: Հայաստանի Հանրապետության 100-ամյակին նվիրված հրատարակությունների շարքում յուրօրինակ տեղ կարող է գրավել ՀՀ Ազգային ժողովի կողմից հրատարակված «Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը» խորագրով արժեքավոր ժողովածուն (խմբագրական խորհրդի նախագահ՝ Թաթուլ Սողոմոնյան, անդամներ՝ Գրիգոր Թանանյան, Անուշավան Զաքարյան): Այն կազմել և հրատարակության է պատրաստել բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը:

Ժողովածուն բացվում է կազմողի գրած «Երկու խոսք»-ով (էջ 5–6), ուր սեղմ տողերում արժևորվում է Առաջին Հանրապետության ստեղծումը, ներկայացվում գրքի նպատակը, կառուցվածքն ու ընդգրկող հարցադրումների շրջանակը:

Այնուհետև Գ. Թանանյանը «Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը (համառոտ ակնարկ)» խորագրով համեմատաբար ընդարձակ շարադրանքում (էջ 7–45) քննության նյութ է դարձրել հետևյալ հարցերը՝ Հայաստանի անկախացման գործընթացին անքակտելիորեն առնչվող իրադարձությունները (1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի արևելահայության համագումար, Անդրկովկասյան կոմիտարիատի և սեյմի գործունեություն և այլն), Անդրկովկասյան սեյմի լուծարմանը, Հայաստանի անկախացմանը, օրենսդիր ու գործադիր իշխանության մարմինների ձևավորմանը, Հայաստանի խորհրդի կազմակերպմանը, առաջին նիստերում քննարկված հարցերին, կանոնակարգին, պառլամենտական ընտրությունների մասին օրենքին, 1919 թ. հունիսյան ընտրություններին, նորընտիր պառլամենտի բացմանն ու գործունեությանը, կառավարությունների կազմերին, պետական օրենսդրության ստեղծման բնագավառում պառլամենտի ու կառավարության՝ երբեմն իրար հատվող լիազո-

րություններին, խորհրդարանական կուսակցություններին ու մշտական հանձնաժողովներին, ընդունված հիմնական օրենքներին, վարչապետների և խորհրդարանի նախագահների, տեղակալների ու քարտուղարների պաշտոնավարության ամսաթիվերին: Ընդգծենք, որ հեղինակը բացահայտում և հավուր պատշաճի արժևորում է ՀՀ կյանքում Հայաստանի խորհրդի ու պառլամենտի ունեցած տեղն ու դերը՝ եզրակացնելով, որ Առաջին հանրապետության խորհրդարանն «իր ձևով ու բովանդակությամբ՝ կազմավորման սկզբունքներով, կառուցվածքով, հիմնական գործառույթներով, լիովին համապատասխանում էր պառլամենտարիզմի ժամանակի բոլոր չափանիշներին»:

Ժողովածուում ներառված են 1918 թ. օգոստոսի 1-ին երևանում գումարված Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի մասին ՀՅԴ «Զանգ», «Հորիզոն» պարբերականների լուսաբանող հոդվածը (նիստի սղագրության արխիվային տարբերակը հայտնի է) (էջ 46–54), խորհրդի անդամների անվանացանկը (էջ 55–57), գործունեություն կանոնակարգը (էջ 58–97), 1919 թ. մարտի 31-ին ընդունված պառլամենտի ընտրությունների մասին օրենքը (էջ 98–126), 1919 թ. օգոստոսի 1-ին նորընտիր պառլամենտի անդրանիկ նիստի բացմանը ավագագույն պատգամավոր Ավետիք Սահակյանի ելույթը՝ «Հայաստանի աշխատավոր» և «Աշխատանք» թերթերի լուսաբանմամբ (էջ 127–130), ընտրված 80 պատգամավորների անվանացանկը (էջ 130–134): Ցանկանում ենք հատուկ նշել, որ սույն ժողովածուում առաջին անգամ ուսերենից հայերեն թարգմանություններ հրատարակված է Հայաստանի խորհրդի կանոնակարգը (թարգմանիչներ՝ Ռուզաննա Պեպանյան, Գեորգի Հլղաթյան):

Ժողովածուի վերջին մասում ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում Հայաստանի խորհրդի և պառլամենտի նախագահներ Ավետիք Սահակյանի, Ավետիս Ահարոնյանի և Հովհաննես Քաջագնունու, ինչպես նաև պառլամենտի երեք կին անդամների՝ Պերճուհի Պարտիզպանյան-Բարսեղյանի, Կատարինե Զալյան-Մանուկյանի և Վարվառա Ռոտինյան-Սահակյանի համառոտ կենսագրություններն ու լուսանկարները (էջ 135–139): Բացի այդ՝ գրքում տեղադրված են հանրապետության պետական խորհրդանիշների (դրոշ, դինանշան), թղթազրամների, խորհրդարանի շենքի, մուտքի անցաթղթի լուսանկարները:

Սույն արժեքավոր ժողովածուի վերաբերյալ ունենք որոշ նկատառումներ և դիտարկումներ: Ինչպես յուրաքանչյուր կատարված աշխատանք, ներկայացվածը ևս գերծ է սխալներից ու վրիպումներից: Դրանց հիմնական մասը վերաբերում է խորհրդարանի կազմակերպմանն ու գործունեությանը վերաբերող տեքստին: Այսպես՝ կարդում ենք. «Կարևոր էին հատկապես Հայոց ազգային ժողովի հրավիրած Թիֆլիսի (1918 թ. ապրիլի 15–18), Հայոց ազգային խորհրդի (ապրիլի 6–8), Ալեքսանդրապոլի և Թիֆլիսի (մայիսի 25–26) նիստերը» (էջ 9): Գ. Թանանյանն այս տեքստի համար հղել է «Հայոց պատ-

մուլթյան» նոր ակադեմիական հրատարակությունը (հ. 4, գիրք I, Երևան, 2010, էջ 14), այնինչ հիշյալ գրքի տվյալ էջում նման բան գրված չէ: Բացի այդ՝ առկա կոպիտ վրիպակն անփորձ ընթերցողին կարող է թյուրիմացություն մեջ գցել՝ տպավորություն ստեղծելով, թե 1918 թ. մայիսի 15-ին թուրքերի կողմից գրավվելուց 10 օր անց Հայոց ազգային խորհուրդն Ալեքսանդրապոլում նիստեր է գումարել: Այնինչ խոսքն Ալեքսանդրապոլում ապրիլի 6–8-ը գումարված Հայ դեկավար գործիչների արտակարգ խորհրդակցության և ոչ թե Ազգային խորհրդի նիստի մասին է: Հայտնի է, որ խորհրդակցություն մասնակիցները կոչով դիմեցին Անդրկովկասի ժողովուրդներին՝ գենքի ուժով պաշտպանելու սեփական իրավունքները: Բացի այդ՝ միևնույն նախադասություն մեջ իրադարձությունից մեկը ներկայացված է հին, մյուսը՝ նոր տոմարով:

Մեկ այլ էջում կարդում ենք. «Մայիսի 30-ին Հայոց ազգային խորհուրդը կատարեց վճռական քայլը. որոշեց հայտարարություն անել Հայաստանի անկախության մասին: Հանձնարարվեց Նիկոլ Աղբալյանին մշակել Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարագիրը (հուշակագիրը)» [էջ 11, կրկին հղված է «Հայոց պատմության» նոր ակադեմիական հրատարակությունը (հ. 4, գիրք I, էջ 14, պետք է լինի՝ էջ 16)]: Ճիշտ չէ Հայոց ազգային խորհրդի մայիսի 30-ի հայտնի հայտարարությունը «անկախության հուշակագիր» անվանել: Մայիսի 30-ին հաջորդող շաբաթներին ևս Ազգային խորհուրդը Հայաստանի անկախության մասին հատուկ որոշում չի ընդունել՝ չնայած հունիսի 1-ին Սիրական Տիգրանյանի նախագահությամբ անկախության հուշակագրի տեքստը պատրաստող Հանձնախումբ էր ստեղծել:

Կան նաև այլ սխալներ («Օսմանյան Թուրքիա»-ի փոխարեն գրված է «Քեմալական Թուրքիա» (էջ 10), Սամսոն Հարությունյանի փոխարեն իրավարարության (արդարագատություն) նախարար է նշվում Մարտիրոս Հարությունյանը (էջ 17), 1919 թ. օգոստոսի 1-ին Հայաստանի պառլամենտի անդրանիկ նիստը Ավետիք Սահակյանը բացել է ոչ թե իբրև «ավագ պատգամավոր», ինչպես գրում է համառոտ ակնարկի հեղինակը (էջ 19, 44), այլ իբրև ավագագույն պատգամավոր):

Ցանկալի էր ժողովածուում ներկայացնել նաև պառլամենտի փոխնախագահների համառոտ կենսագրականները, քանի որ մանավանդ երկրորդ գումարման խորհրդարանի դեպքում նրանք են եղել փաստացի ղեկավարները: Հայտնի փաստ է, որ Ավետիս Ահարոնյանը ոչ մի նիստ չի ղեկավարել. նրան նախագահ էին ընտրել միմիայն Փարիզի հաշտության վեհաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավարի կշիռը բարձրացնելու և առավել ներկայանալի դարձնելու նպատակով:

Հավելենք, որ ժողովածուն մեծապես կշահեր, եթե խորհրդարանին վերաբերող շարադրանքում օգտագործվեին պրոֆ. Ա. Մ. Հակոբյանի «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները»

յունները (1918–1920 թթ.)» արժեքավոր մենագրությունը (Երևան, 2005), մեր կազմած «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը» փաստաթղթերի ժողովածուն (Երևան, 2009):

Վերոգրյալ նկատառումները, դիտարկումներն ու ցանկությունները բնավ չեն ստվերում սույն ժողովածուն հրատարակության պատրաստողների կատարած խկապես գնահատելի ու շնորհակալ աշխատանքը: Առաջին հերթին ուղղված լինելով ընթերցասեր և հայրենի պետության ոչ վաղ անցյալի մասին տեղեկություններ փնտրող հանրությանը՝ վստահ ենք, որ սույն ժողովածուն կկատարի այդ առաքելությունը՝ Հայաստանի առաջին Հանրապետության և նրա խորհրդարանի մասին արժանահավատ տեղեկություններ մատուցելով ընթերցողին: Ըստ այդմ՝ խիստ ցանկալի է առաջիկայում հրատարակել նաև գրքի ուսեսերեն ու անգլերեն տարբերակները:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Ն. ԵՐԱՆՈՍՅԱՆ. Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը 1920-ական թվականներին («Շեշտ», «Զուռնա», «Կարմիր մոծակ»), Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2018, 136 էջ + 8 էջ ներդիր:

Հայաստանի խորհրդայնացումից հետո նոր իշխանությունները մեծ կարևորություն տվեցին մամուլին, որը դիտվում էր որպես հասարակության լայն զանգվածների վրա



ներազդող կազմակերպչական և գաղափարախոսական հզոր միջոց: Խորհրդային մամուլը ձևավորվեց գաղափարա-կազմակերպչական միասնական սխեմայով, որի հիմքում դրված էր 1917 թ. նոյեմբերի 10-ին ՌՍԴԽՀ ժողկոմխորհի կողմից հրապարակված «Մամուլի մասին» դեկրետը: Մամուլը պետք է իր ակտիվ մասնակցությունը բերեր նոր համա-կարգի կայացմանը և կոմունիստական կուսակցության որոշումների կենսա-գործմանը: Այն պետք է բավարարեր աշխատավորության պահանջները, լիներ օ-

պերատիվ և բազմատեսակ: Աստիճանաբար ձևավորվում էր մամուլի մի ամբողջական համակարգ՝ իր տարատեսակներով. ըստ հրատարակման տեղի՝ կենտրոնական ու գավառային, ըստ բնույթի՝ կուսակցական, կառավարական, արհմիութենական, գրական-գեղարվեստական, գիտական և այլն, ըստ նշանակության՝ ճյուղային ու մասնագիտական, ըստ ընթերցողների՝ բանվորական, գինվորական, գյուղացիական, կանանց, մանկապատանեկան և երիտասարդական: Այլ էր վերաբերմունքը երգիծական մամուլի նկատմամբ, որը սկզբնա-կան շրջանում դիտվում էր որպես անօգուտ շռայլություն:

Խորհրդային Հայաստանի երգիծական առաջին պարբերականները՝ «Շեշտ»-ը (1923 թ.), «Զուռնա»-ն (1924 թ.), «Կարմիր մոծակ»-ը (1926–1927 թթ.) լույս տեսան խիստ գրաքննության պայմաններում: Հենց այս պարբերականներին էլ նվիրված է պատմական գիտությունների թեկնածուներ Համո Սուքիասյանի և Նարինե Երանոսյանի հետազոտությունը (խմբագիր՝ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյան, հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ): Գրքում վեր են հանված իշխանությունների կողմից երգիծական մամուլի առջև դրված խնդիրները՝ նպաստել նոր կարգերի ամրապնդմանը, քննադատել բացթո-

ղումները, պայքարել համակարգի թշնամիների դեմ՝ օգտագործելով երգիծանքի արտահայտչամիջոցները:

Առաջաբանում հեղինակները ներկայացրել են աշխատության նպատակը և խնդիրները՝ «ցույց տալ երգիծական մամուլի սկզբնավորման նախադրյալներն ու կայացման խոչընդոտները, վերհանել և արժևորել հասարակական մտքի հիմնական պահանջմունքները ...» (էջ 5), անդրադարձել հետազոտության աղբյուրագիտական հենքին:

Առջին գլխում ներկայացված են խորհրդահայ երգիծական մամուլի սկզբնավորման նախադրյալներն ու կայացման խոչընդոտները, խորհրդային իշխանությունների վերաբերմունքը և սպասելիքները: Հստակ երևում են գաղափարաքաղաքական այն սահմանափակումները, որոնց պայմաններում պետք է աշխատեին երգիծական մամուլի խմբագիրները: Պարբերականները հրատարակվեցին այնպիսի պայմաններում, երբ շատ հեշտ էր վաստակել «ժողովրդի թշնամու» պիտակը, երբ ընդհանրապես քննարկման էր դրված երգիծանքի՝ որպես բուրժուական ժանրի գոյության հարցը, «ծիծաղը հանուն ծիծաղի» սկզբունքը հայտարարվում էր գաղափարազուրկ և նույնիսկ վտանգավոր: Սկզբնական շրջանում երգիծական մամուլի թերություններից էր ընթերցողների հետ թույլ հետադարձ կապը: Ճիանասական դժվարությունների պատճառով խախտվում էր դրանց պարբերականությունը, ինչի հետևանքով տուժում էր մամուլի կարևորագույն արժանիքներից մեկը՝ հրատապությունը: Վիճակը մի փոքր բարելավվեց ՆԷՊ-ի շրջանում:

Ցանկացած պարբերականի հրատարակության ողջ ընթացքի ու հաջողության գրավականներից է նրան կյանք տվող ու գոյություն մտահոգ անձի՝ խմբագրի վերաբերմունքը: Ըստ այդմ՝ հեղինակների կողմից մեծապես կարևորվել են ու գրքի երկրորդ գլխում ներկայացվել երգիծաբան-խմբագիրներ Վահան Թոթովենցի և Էդուարդ Խոճիկի կենսագրության՝ ոչ այնքան հայտնի էջերը, դժվարությունները, որոնք ստիպված էին վերջինները հաղթահարել, տողատակերի միջոցով առաջադեմ գաղափարներ ընթերցողին հասցնելու նրանց մղումը:

Գրքի հաջորդ 3 գլուխներից յուրաքանչյուրը նվիրված է մեկ երգիծական պարբերականի, որոնք թեպետ և շատ կարճ կյանք ունեցան, սակայն կարևոր էին ժամանակաշրջանն ավելի լավ հասկանալու ու պատկերացնելու համար:

«Շեշտ» ամսագիրը, որը լույս էր տեսնում Վ. Թոթովենցի խմբագրությունում, ընդամենը 3 համար ունեցավ, դադարեց, ինչպես կարծում են գրքի հեղինակները, իշխանությունների արգելքի պատճառով: Չփրկեց նույնիսկ այն ժամանակվա համար մոդայիկ հակադաշնակցական կեցվածքը, կարծեցյալ չեզոք թեմաների շուրջ ծավալվելը: 4 էջանոց պարբերականն իր 3 համարում արտահայտեց մի ամբողջ ժամանակաշրջանի «սարսափները», թերությունները, գավեշտալի և ծիծաղաշարժ երևույթները: Այդպիսինն է երգիծանքը, եթե հայտնվում է վարպետների ձեռքում: Ամսագրում բերված որոշ

թեմաներ շատ արդիական են նաև այսօր: Գրքի հեղինակների ներկայացմամբ՝ «Շեշտ»-ը, իրոք, ընթերցողին երևում է որպես մարդկանց ու ժամանակը ծաղրուծանակի արժանացնող պարբերական:

«Զուռնա»-ն ավելի կարճ կյանք ունեցավ՝ ընթերցողին ներկայանալով միայն մեկ համարով, այն էլ 16 էջով: Խմբագիրն է. Խոճիկն էր: Ամսագրում, բացի է. Խոճիկի նյութերից, հրապարակվեցին նաև Լեո Կամսարի, Դերենիկ Դեմիրճյանի և այլոց հոդվածները: Եվ դարձյալ, խորհրդային պայմաններում իր գոյությունն արդարացնելու համար, պարբերականն անհաշտ դիրք է գրավում ՀՅԴ-ի քաղաքականության, նրա առաջնորդների, եկեղեցու և հոգևորականների հանդեպ: Սակայն տողատակերում կարգում ենք այլ բան՝ խորհրդային իշխանությունների կողմից ազգայինը, ավանդական կրոնական ժառանգությունը ժխտելու, ազգային նկարագիր ունեցող գրողներին արգելելու խորհրդային քաղաքականության քննադատությունը: Գրքի հեղինակները մանրամասն ներկայացրել են ոչ միայն պարբերականի բաժինները, այլև բաժինների ամենաարժեքավոր նյութերը՝ դրանց միջոցով վեր հանել ժամանակի առանձնահատկությունները, երգիծանքի միջոցով կյանքը իրական գույներով ներկայացնելու արվեստը:

Աշխատության վերջին գլուխը նվիրված է է. Խոճիկի խմբագրությանը լույս տեսած «Կարմիր մոծակ» պարբերականին, որը, արդարացնելու համար իր գոյությունը, խոստանում էր անհաշտ պայքար մղել արտասահմանում ծվարած հայկական «հակահեղափոխական ուժերի» դեմ: Լույս տեսավ թերթի ընդամենը հինգ համար՝ անկանոն պարբերականությամբ: Պատճառը ֆինանսական սղությունն ու, հատկապես, գրաքննական մարմինների կոշտ միջամտությունն էին: Ծաղրի հիմնական թեմաները դարձան խորհրդահայ կյանքի արատավոր երևույթները և, հավանաբար, հենց այդ պատճառով էլ թերթը երկար կյանք չունեցավ:

Նշենք նաև, որ վերոնշյալ գլուխների նյութը գրելու համար հեղինակները բազմաթիվ արխիվային փաստաթղթեր են ուսումնասիրել, որոնց հիմնական մասն առաջին անգամ է դրվել գիտական շրջանառության մեջ: Դրանցից երեքը (խմբագիրների կենսագրությունները) ներկայացված է գրքի հավելվածում: Աշխատությունը գիտական տեսանկյունից արժեքավոր են դարձնում նաև անձնանունների, տեղանունների ու պարբերական մամուլի ցանկերը, որոնք ընթերցողին հնարավորություն են տալիս հեշտությամբ գտնել իրեն հետաքրքրող տեղեկատվությունը: Գրքում գետեղված են պարբերականների շապիկները, որոնք ամբողջացնում են պատկերացումը դրանց մասին:

Աշխատությունը հասցեագրված է պատմաբաններին, բանասերներին, լրագրողներին, հայկական մամուլի և Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի պատմությամբ հետաքրքրվողներին: Ցանկալի էր գրքում ունենալ ուղևորներ և անգլերեն ամփոփումներ, որոնք կարևոր են աշխատության վերաբերյալ օտար ընթերցողին տեղեկատվություն հաղորդելու առումով:

ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ

ВЫДАЮЩИЙСЯ ИСТОРИК И ПАТРИОТ

(К 90-летию со дня рождения академика Грачика Симоняна)

Грачик Симонян родился 8 декабря 1928 года в селе Шинуайр Горисского района. После завершения средней школы в Горисе



поступил на исторический факультет ЕГУ и окончил его с отличием в 1952 г. Вернулся в Горис, работал в районной газете, позже — в райкоме партии, где был избран секретарем по идеологическим вопросам. Далее (с 1959 по 1962 гг.) последовали учеба в Академии общественных наук при ЦК КПСС, защита кандидатской диссертации. По возвращении Симонян приступил к работе в Армянском филиале Института марксизма-ленинизма, который он возглавил в 1977—1990 гг. В 1991—1994

гг. руководил Комитетом по культурным связям со Спюрком.

За годы плодотворной и неустанной научной и общественной деятельности Грачик Рубенович занимал различные должности в научных и редакционных советах, избирался депутатом Верховного Совета АрмССР и Национального Собрания Республики Армении, НС РА, членом ЦК КП Армении.

Благодаря своему таланту вдумчивого исследователя, аналитическим способностям и трудолюбию Г. Симонян сыграл неоценимую роль в изучении периодов новой и новейшей истории армянского народа. Достаточно отметить, что он был автором более 40 монографий и около 400 научных статей.

В 1960-е годы ученый уделил много внимания истории армянской диаспоры, деятельности национальных партий, их отношению к Советской Армении. В 1970-е выходят его монографии «Критические эскизы современной буржуазной идеологии» (2 тома), «Теории индустриального общества» и др.

Большую научную ценность представляет труд «Идеология и политика турецкой национальной буржуазии» (1980 г.), в котором вскрываются основные компоненты указанной идеологии — османизм, исламизм, панисламизм, тюркизм, пантюркизм. Одновременно автор публикует ряд статей об истории коммунистического движения в Армении и Закавказье, по праву считается одним из лучших исследователей данной тематики в Закавказье.

С конца 1970-х г. Симонян сосредоточивает свое внимание на арменоведении. В 1991 году выходит монография «История турецко-армянских отношений». Затем автор выпускает обширное, в двух книгах, исследование «Время Андраника» (1996 г.). Оно стало однозначно новым словом о жизни и боевом пути народного героя.

Продолжая работу по изучению и представлению истории освободительного движения армянского народа, Г. Симонян создает пятитомник (!) под названием «На дорогах освободительной борьбы». Объем каждого из изданных в 2003–2013 гг. томов превышает тысячу страниц. Чтобы подготовить этот колоссальный труд, историк использовал огромное количество материалов из Матенадарана, Национального архива Армении, иных источников. Многие сведения и факты впервые введены им в научный оборот. Эта работа была удостоена Государственной премии Армении.

В 2009 году к 100-летию армянских погромов в Киликии вышла монография Симоняна на эту тему, вызвавшая большой интерес историков и широкого круга читателя. Она была переведена на английский и издана в Великобритании. В 2014 году историк подготовил книгу «Балканская война 1912–1913 гг. и армяне», в которой отражена роль армянских воинов в этот период.

Докторскую диссертацию Г. Симонян защитил еще в 1970 году, в 1986-м стал членом-корреспондентом Академии наук Армении, а в 1996-м – действительным членом.

... С началом нового этапа Карабахского движения в феврале 1988 года Симонян становится его активным участником. Его многочисленные статьи и выступления вскрывают правду о событиях первой четверти XX века. Став депутатом первого созыва в годы обретения независимости, он внес в республиканский парламент ряд важных законопроектов. Многие факты активной деятельности ученого и патриота сохранились в его фонде, хранящемся ныне в НАА.

С 1964 г. Г. Симонян преподавал историю в ЕГУ и других вузах Армении, выступал с докладами в Москве, Ленинграде, США, Франции, Германии и других странах, достойно представляя достижения армянской науки. Его работы издавались в США, Чехословакии, Великобритании, Иране, Ливане. Он подготовил большое количество специалистов, прививая им кроме научных качеств категории национального и государственного мышления.

После провозглашения независимости возникла необходимость перехода к новым подходам в исследовании новой и новейшей истории, издания новых учебников. В этот период под руководством Г. Симоняна кафедра истории ЕГУ подготовила

новую программу и издала в 2000 году учебник армянской истории для студентов иных факультетов, а в 2012-м под редакцией академика Г. Симоняна вышел переработанный и дополненный вариант для студентов исторических факультетов. Он был переведен на русский язык в 2014 г.

Г. Симонян ушел из жизни в январе 2016 года. До последних дней он продолжал свою миссию ученого и патриота, последней изданной книгой стал сборник «Как было», составленный из интересных материалов разных жанров — легенда, быль, рассказ. Здесь и детские воспоминания, и исторические зарисовки, и встречи с известными людьми. К сожалению, остались незавершенными работы Грачика Рубеновича о наместнике Кавказа Воронцове-Дашкове и великом персидском поэте Низами.

Академик Грачик Рубенович Симонян был человеком поистине исключительных способностей. Интеллигент высшей пробы, скромнейший, добрый, отзывчивый человек, выдающийся ученый и патриот, Г. Симонян навсегда останется в истории Армении, изучению которой он посвятил всю свою сознательную жизнь.

ЭДИК МИНАСЯН

ԳՐԱԲԱՐՅԱՆ ԳԱՆՁԵՐԻ ԵԶԱԿԻ ՄԵԿՆԻՉԸ
(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Աբրահամյանի ծննդյան
100-ամյակի առթիվ)

Ամեն տաղանդավոր մարդ ծնվում է կյանքում իրականություն
դարձնելու այն պարզևր, որ նրան տրված է ի վերուստ: Աշոտ Աբսե-



նի Աբրահամյանին ճակատագի-
րը կանխորոշել էր նվիրվել լեզ-
վաբանությանը և հատկապես
մեր «արքայական» գրաբարին
ու դառնալ ուսուցիչ նաև բարձ-
րագույն դպրոցում՝ նոր կադրեր
պատրաստող գիտնականի վար-
պետությունը:

Ա. Աբրահամյանի աշխատան-
քային գործունեությունը կարե-
լի է բաժանել երկու մասի՝ ա) մանկավարժ, բ) գիտնական: Նա 1944
թվականից արդեն դասավանդել է Խ. Աբովյանի անվան մանկավար-
ժական մայր բուհի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամ-
բիոնում: Մինչ այդ աշխատել էր Հրազդանի շրջանի դպրոցներում,
ուր բացի հայոց լեզվից ու հայ գրականությունից, դասավանդել էր
նաև հանրահաշիվ: Մանկավարժ էր ողջ էությունը, որովհետև իր
աշխատանքում առաջնորդվում էր ազգապահպանման ու մարդասի-
րության գաղափարներով:

Հիշում եմ, թե ինչպես առաջին կուրսում մտավ լսարան և իր առ-
ինքնող տեսքով, հիանալի ձայնով, անսպառ գիտելիքներով դասա-
վանդեց «Լեզվաբանության ներածություն» առարկան: Առաջին
պահից ուսանողները զգացին, որ իրենց դասավանդում է դասական
մակարդակի գիտնական-մանկավարժը, և մենք խիստ զարմացանք,
որ նա 1963-ին պաշտպանեց դոկտորական ատենախոսություն: Ա.
Աբրահամյանն ինձ դասավանդել է նաև գրաբար ոչ միայն ուսանո-
ղական տարիներին, այլև ասպիրանտուրայում: Խստապահանջ դա-
սախոս էր, տանել չէր կարողանում, երբ որևէ ուսանող թերանում
էր: Ինքն ուսման մեջ եղել էր ջանասեր ու նվիրյալ, կամենում էր
նույն եռանդուն ոգին փոխանցել իր սաներին:

1978 թ. դեկտեմբերին մանկավարժական ինստիտուտի մեծ դահ-
լիճում մեծ շուքով նշվեց Ա. Աբրահամյանի ծննդյան 60 և մանկա-
վարժական գործունեության 40-ամյակը: Դահլիճը լեփ-լեցուն էր,
չատերը կանգնած էին դռների արանքում և շարքերի բաժանման
մասում: Եկել էին գիտնականներ, հասարակական գործիչներ, նախ-
կին սաներ ողջ Հայաստանից: Նրան շնորհավորեցին ՀՀ ԳԱԱ ակա-

դեմիկոսներ Լևոն Խաչիկյանը, Մկրտիչ Ներսիսյանը, գրողներ Մկրտիչ Սարգսյանը, Բոգդան Վերդյանը, շատերը:

Վերջում հանդես եկավ հոբելյարը և հետևյալ ձևով բնութագրեց իր սիրելի ուսուցիչներին. «Ձեռն կարող մեծ երախտագիրտություն է հիշել հայագիրտության մեծագույն երախտավորները՝ աշխատանքային հանճար Հրաչյա Աճառյանին, անդնդախոր մտքի տեր Գրիգոր Ղափանցյանին, փոթորկահույզ Արարատ Ղարիբջանին, իմ կենդանի ուսուցիչներ Գուրգեն Սևակին, Արամ Ղանալանյանին»¹:

Ա. Աբրահամյանին շատ բարձր էին գնահատում ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիրտությունների բաժանմունքի նշանավոր դեմքերը՝ Սուրեն Երեմյանը, Գևորգ Զահուկյանը, էդվարդ Աղայանն ու էդվարդ Զրբաշյանը:

Շնորհակալական խոսքի ընթացքում Ա. Աբրահամյանը հատուկ ջերմությամբ հիշեց իր արժանավոր աշակերտներին՝ մանկավարժներին, գիտնականներին և գրողների մի պատկառելի ցանկ: Նրա աշակերտները իրականում շատ բազմաքանակ են հատկապես գրաբարի գծով: Բավական է հիշել, որ Գրիգոր Նարեկացու հանճարեղ «Մատեան ողբերգութեան» երկի աշխարհաբար թարգմանիչներ Պողոս Խաչատրյանն ու Արշալույս Ղազինյանը, ինչպես նաև գրաբարից ռուսերեն թարգմանած նույն երկի հեղինակներ Մարգո Դարբինյան-Մելիքյանը և Լենա Խանլարյանը եղել են Ա. Աբրահամյանի գրաբարի դասընթացի ուսանողները:

Ա. Աբրահամյանն այնքան հմուտ էր գրաբարում, որ թվում էր, թե այն սովորել էր գուցե XVII դարում Սյունյաց Մեծ անապատում կամ Մխիթար Սեբաստացու մոտ՝ Վենետիկում: Իր շնորհակալական խոսքում մեծ լեզվաբանը վկայակոչեց անմահ Թումանյանի հետևյալ խոսքերը.

Գանձեր ունեմ անտակ, անծիր,
Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ...²

Գիտնականը, իրոք, հարուստ էր իր հիանալի դուստրերով, իր եւրանդուն սաներով, իր ազգօգուտ գործունեություններով, որը ծավալում էր միաժամանակ թե՛ մանկավարժական բուհում և թե՛ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում, ուր երկար տարիներ (1978–1985) մինչև իր անժամանակ ու հանկարծահաս մահը, դեկավարում էր ժամանակակից հայոց լեզվի և Համաբարբառների բաժինները: Չնայած իր անձնական կյանքի երկու ողբերգություններին՝ երիտասարդ կնոջ և գեղեցիկուհի ավագ դստեր վաղաժամ մահը, նա փորձում էր պահպանել գիրտության ու մանկավարժական պարտքի

¹ «Հայագիրտական հանդես», գիրք II, «Հայ ակադեմիկոսներ» շարք, Ա. Աբրահամյան. Հետազոտություններ, մտորումներ, խոհեր, Երևան, 2001, էջ 37:

² Նույն տեղում, էջ 39:

նվիրվածությունն ու կենսահաստատ վարքագիծը՝ մնալով բարի, առաքինի, օբյեկտիվորեն աջակցող:

1980 թ. սեպտեմբերի 17-ի օրագրային գրառման մեջ կարդում ենք. «Իհարկե, մարդը կատարում է այն, ինչին ի վիճակի է: Ես ընտրեցի իմ ժողովրդի հոգևոր գանձերից ամենաթանկագինը՝ չքնաղ մայրենիի ուսումնասիրությունն ու ուսուցումը: ... Հավատարիմ եմ մնում իմ սկզբունքներին ու դավանանքին: Առաջնորդվում եմ հույսով ու լավատեսությամբ: Դրանք միշտ էլ ինձ ապավեն են եղել»³:

Ա. Աբրահամյանին բարձր են գնահատել թե՛ մանկավարժական ինստիտուտում և թե՛ ակադեմիայում: 1977-ին նա ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1965-ից արդեն ՀԽՍՀ գիտություն վաստակավոր գործիչ էր, 1960-ից մինչև մահը մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչն էր: Նրա խոսքը ծանրակշիռ էր, ազդեցությունը մեծ թե՛ ֆակուլտետի և թե՛ ողջ բուհի աշխատանքային գործընթացում:

Գիտության մեջ Ա. Աբրահամյանի առաջին կարևոր գործը Հայաստանի բուհերի համար հրատարակած «Գրաբարի ձեռնարկն» է, որը 1976-ին լույս տեսավ չորրորդ անգամ՝ 10.000 տպաքանակով (558 էջ): Այս ձեռնարկը, որի առաջին հրատարակությունը եղել է 1952 թվականին, լեզվաբանների կարծիքով ցարդ մնում է լավագույնը⁴: Այդ ձեռնարկով գրաբարյան գանձերի մեջ են խորացել Մաշտոցի անվան Մատենադարանում աշխատած և աշխատող միջնադարի շատ նվիրյալներ: Դրա մասին շատերն ինձ խոստովանել են անձամբ:

Ա. Աբրահամյանի երկու հիմնարար տեսական աշխատությունները հրատարակվել են Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Առաջին մենագրությունը կոչվում է «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Երևան, 1953): Այս գրքի օգտագործված գրականության ցանկը խիստ տպավորիչ է: Նրանում չի անտեսված ոչինչ՝ սկսած միջնադարյան հայ մատենագիրների երկերից, Մխիթարյան հայերի հետազոտություններից, XIX–XX դարերի հայ դասականների երկերից, ուսական լեզվաբանական անհրաժեշտ հետազոտություններից, գերմանական լեզվաբանների աշխատություններից մինչև իր ժամանակի նշանավոր հայ լեզվաբանների երկերը:

1962 թ. լույս է տեսնում «Բայը ժամանակակից հայերենում» աշխատությունը: Գիրքն ընդգրկում է ժամանակակից արևելահայ գրական հայերենում բայի խոսքի մասային գրեթե բոլոր կարևոր բնութագրումները: Ուսումնասիրության մեջ հաշվի է առնված ոչ միայն գրական երկերում տեղ գտած բայի հետ կապվող քերականական իրողությունները, այլև բանավոր խոսքում եղած ուղադրավ տվյալները:

³ Նույն տեղում, էջ 103:

⁴ Նույն տեղում, էջ 19:

Ա. Աբրահամյանի գիտական նվաճումներն են այն դասական թարգմանությունները, որոնք նա կատարել է աշխարհաբարի վերածելով Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկը և Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը»:

Այս երկու աշխատությունները տարբեր են և՛ իրենց բնույթով, և՛ իրենց լեզվական իրողություններով: Երկու երկերն էլ միջազգային հայագիտության մեջ խիստ տարածված են և արժանացել են բարձր գնահատականի: Ա. Աբրահամյանը գրում է. «Եղծ աղանդոց»-ը գրավոր մեծարժեք հուշարձան է նաև լեզվաոճական առումով: Շատ ու շատ ուսումնասիրողներ են հիացել նրա լեզվով ու ոճով»⁵: Թարգմանիչը ծանոթ է եղել Եզնիկի երկի ֆրանսերեն երեք, գերմաներեն մեկ և վ. Չալոյանի ռուսերեն ամբողջական թարգմանությանը: Նրա առաջաբանից ու ծանոթագրություններից պարզ է դառնում, որ քաջատեղյակ է գրադաշտական կրոնի սրբազան մատյանին՝ Ավեստային, նաև Եզնիկի օգտագործած աղբյուրների հիմնական մասին: Այս հանգամանքն էլ նպաստել է գիտնականի գերազանց թարգմանությանը, որն ամբողջովին պահպանել է գրաբարյան բնագրի պատկերավորությունը, դիպուկությունն ու հմայքը:

Որպես իր առաջաբանի եզրահանգում՝ Ա. Աբրահամյանը գրում է. «Անշուշտ, Եզնիկի նման մեծատաղանդ մատենագիրը չէր կարող սահմանափակվել միայն մեկ ինքնուրույն երկով: Սակայն, բացի «Եղծ աղանդոց»-ից, մեզ ուրիշ ինքնուրույն երկ չի հասել: Առայժմ ստիպված ենք բավարարվելու «Եղծ աղանդոց»-ի հմայքով»⁶:

Գիտնականի օրագրության 1980 թ. սեպտեմբերի 3-ի գրառումից տեղեկանում ենք հետևյալը. «Ուրախությամբ նշում եմ, որ այսօր ավարտեցի Ստ. Օրբելյանի փարիզյան հրատարակության 1-ին հատորի աշխարհաբար թարգմանությունն ու ծանոթագրումը: Աշխատանքը ծանր է, բայց հաճույքով եմ կատարում: Երազում եմ տեսնել հրատարակությունը»⁷:

Ավա՛ղ, նա չտեսավ 1986-ին լույս տեսած Օրբելյանի երկի աշխարհաբար թարգմանությունը, որն իսկական նվեր է արդի հայագիտությանն ու պատմագրությանը:

Փրանսիացի նշանավոր հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն առաջինն է, որ ֆրանսերենով գիտական աշխարհին ներկայացրել է Ստ. Օրբելյանի երկի ամբողջական հրատարակությունը՝ այն իրականացնելով երկու ստվար հատորներով, որոնցից մեկը բնագիրն է, երկրորդը՝ խիստ մանրամասն ու մեծարժեք ծանոթագրությունները⁸: Բրոսսեից հետո նման հանգամանալի ու հետազոտական ստու-

⁵ Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 18:

⁶ Նույն տեղում, էջ 31:

⁷ «Հայագիտական հանդես», գիրք II, էջ 103:

⁸ Stéphanos Orbélian, Histoire de la Siounie par Stéphanos Orbélian, traduit de l'Arménien par M. Brosset, Première livraison, Histoire de la Siounie, SPb, 1864; Second livraison, Introduction, SPb., 1866.

գուլթյուն պարունակող աշխատութիւնը պատկանում է Ա. Աբրահամյանին, որն իր թարգմանութիւնը կցել է պատմական, գրական, լեզվաբանական բարձրարժեք ծավալուն առաջաբան, իսկ գրքի վերջում գետեղել հիացմունք առաջացնող հարուստ ծանոթագրութիւններ՝ թվով 1778: Նման աշխատանքն արժանի էր բարձր մրցանակի, սակայն հեղինակն արդէն կենդանի չէր: Քանի որ Սյունիքը ներկայիս Հայաստանի տարածքում է, իսկ մի մասն էլ Արցախում, ապա թարգմանիչն իր պարտքն է համարել անձամբ այցելել այն հնավայրերը, որոնք նկարագրված են «Սյունիքի պատմութիւն» մեջ:

Ինձ համար արժանահիշատակ է մի դեպք, որ կապվում է «Սյունիքի պատմութիւն» արդէն լույս աշխարհ գալու հետ: Բնականաբար, ես անմիջապես գնեցի Ստեփանոս Օրբելյանի գիրքը և խորացա նրա առաջաբանի, բնագրի ու ծանոթագրութիւնների մեջ և որոշեցի գրախոսել այն ու տպագրել «Սովետական Հայաստան» պաշտոնաթերթում: Թերթի գլխավոր խմբագիրն էր էմանուել Մանուկյանը, որն ինձ չէր ճանաչում: Նա բարեկիրթ ձևով ընդունեց ինձ և ոչ հաճույքով ասաց, թե մի տեսակ մոդա է դարձել, որ ասպիրանտներն իրենց գիտական ղեկավարին հաճոյանալու համար գրախոսում են նրանց գրքերը, նաև հարցրեց, թե արդյոք գիրքն արժանի է ջերմ գրախոսութիւն: Ես խոսեցի գրքի արժանիքների մասին և վերջում ասացի, որ Ա. Աբրահամյանը չի եղել իմ գիտական ղեկավարը, առավել ևս նա չի կարող կարգալ այս գրախոսութիւնը, որովհետև նա, ցավոք, կենդանի չէ: Գլխավոր խմբագրի վերաբերմունքը միանգամից փոխվեց, և նա ջերմորեն ասաց. «—Դուք գրախոսե՞լ եք մեռած մարդու գիրքը, ուրեմն այն լույս կտեսնի սեպտեմբերի 1-ի համարում»:

Խորհրդային տարիներին մտավորական ընտանիքները տանը բաժանորդագրութիւնով ստանում էին մեծաքանակ տարալեզու պարբերական մամուլ: Նույնը վերաբերում էր նաև մեր ընտանիքին: Երբ սեպտեմբերի 1-ին աշխատանքից տուն եկա, մայրս ասաց, որ թերթում տպագրված է իմ հոդվածը: Ես այդ լուրն ընդունեցի որպէս մրցանակ, որ էմ. Մանուկյանը շնորհել էր հայ դպրոցին ու Հայաստանին նվիրված մանկավարժին ու գիտնականին:

Աշոտ Արսենի Աբրահամյանն իր ոչ երկար կյանքն ապրեց քաղաքացիական պարտքի խոր զգացմունքով: Բավական է կարգալ նրա օրագրութիւն էջերը և տեսնել, թե նրան որքան մեծ ուրախութիւն է պատճառում Հայաստանի տնտեսական, գիտական ու մշակութային զարգացումը: Նա Արփա-Սևան ջրատարի մասին գրում է. «Դա մի հոգեզմայլ պահ էր: Արփայի ջրերից (Ջրանցքը.— Ա. Դ.) դուրս գալով նետի նման սուրում էր ու խառնվում լճի կապույտին: Երա՞զ էր, թե՞ իրականութիւն: Աքանչելի՛ իրականութիւն: Ժողովրդիս նվիրական երազանքներից մեկի իրականացումն էր»⁹: Նույն կերպ

⁹ «Հայագիտական հանդես», գիրք II, էջ 113:

նրան հոգեկան բերկրանք է պատճառում Երևանի մետրոպոլիտենի բացումը, Ծիծեռնակաբերդի մարզահամալիրի երևան գալը մայրաքաղաքի ճարտարապետության մեջ:

Հիանալի իմանալով հայ անցյալի մատենագրությունը՝ նրան մեծապես հետաքրքրում էր նաև իրեն ժամանակակից հայ և օտար գրականությունը: Նրա օրագրության մեջ հիշատակվում են հայրենասեր գրողներ Սերո Խանզադյանը, Պարույր Սևակը:

Մարտիրոս Սարյանի 90-ամյակի առթիվ «Երեկոյան Երևան» թերթում գիտնականն իր ողջունի ջերմ խոսքն է ուղղում աշխարհահռչակ նկարչին՝ շեշտելով. «Սարյան-նկարչի արժատները մխրճվում են խոր միջնադարի մեջ, դրանք հասնում են մինչև մեր երբեմնի ծաղկուն ոստան Անին»¹⁰:

Ա. Աբրահամյանը հարյուրավոր հոդվածների հեղինակ էր: Դրանք տպագրվել են «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», «Սովետական Հայաստան», «Գրքերի աշխարհ», «Հայրենիքի ձայն», «Սովետական դպրոց», «Երեկոյան Երևան» պարբերականներում:

Ա. Աբրահամյանը ծնվել է Սևանի մոտ գտնվող Գեղամավան գյուղում, սակայն նրան ճանաչողների համար նա ազնվական տեսքով մտավորական էր, որը երբեք չէր թաքցնում իր ծագումը, առավել ևս հպարտությամբ իր կոթողային թարգմանությունը ընծայում է հորը. «Կատարածս նվիրում եմ հորս՝ տոհմիկ երկրագործ Արսեն Աբրահամի Պետրոսյանի հիշատակին»¹¹:

Այս հոդվածն էլ թող խնկելի տուրք լինի մեծ լեզվաբանի ու իսկական մանկավարժի պայծառ հիշատակին:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

¹⁰ Նույն տեղում, էջ 48:

¹¹ Ս. Օրբելյան. Սյունիքի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 3:

ԱՆՎԱՆԻ ՀԱՅԱԳԵՏՈ

(Հռիփսիմեն Ջանփոլադյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի հայագետ-վիմագրագետ Հռիփսիմեն Ջանփոլադյանի ծննդյան 100-ամյակը: Նա ծնվել է Նախիջևանից Երևան բռնագաղթի ճանապարհին՝ Սևանա լճի առափնյա գյուղական խարխուլ տներից մեկում: Ջանփոլադյան տոհմիկ ընտանիքի չորրորդ զավակն էր: Ջանփոլադյանների գերդաստանը սերում էր Պարսկաստանի Սալմաստ գավառի Դիլման քաղաքում ապրող Մանուկյաններից: Գերդաստանի Ջամփոլադյան ազգանունը ծագում է ընտանիքի այրերից մեկի՝ Հովհաննեսին Դիլմանի խանի կողմից տրված Ջանփոլադ՝ «պողպատե մարմին» մականունից:

Երևանում բարձր առաջադիմություններ ղարդացն ավարտելով՝ Հո. Ջանփոլադյանը 1935 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմա-լեզվագրական ֆակուլտետը, որն ավարտում է 1940 թվականին: Նույն տարում աշխատանքի է ընդունվում Հայաստանի պետական պատմության թանգարանում (ՀՊՊԹ): Հնագիտության նկատմամբ նրա հետաքրքրությունները ձևավորվել են Կարմիր Բլուրի հնագիտական աշխատանքներին մասնակցելու տարիներին, որը դարձավ հայագիտությանը զբաղվելու հիմնական նախապայմանը:

1939 թ., դեռևս ուսանող, նա ակտիվ մասնակցություն է ունենում հանրապետությունում իրականացվող «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակին նվիրված տոնակատարությունների կազմակերպչական աշխատանքներին՝ արժանանալով միջոցառումների դեկավար, ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի նախագահ, ակադեմիկոս Հ. Օրբելու ուշադրությունը: Ականավոր գիտնականը նկատելով երիտասարդ գիտաշխատողի նվիրվածությունն ու գիտական հակումները՝ նրան է տրամադրում դեռևս 1917 թ. Նոր Գետիկ վանքում իր հավաքած վիմագիր արձանագրությունների հավաքածուի մի մասը¹: Հ. Օրբելին Հո. Ջամփոլադյանին հանձնարարում է դրանք ստուգել և վերստին վերծանել՝ համադրելով հին վերծանությունների հետ: Հանձնարարությունը Հո. Ջանփոլադյանը կատարում է վիմագրագետ-հետազոտողին բնորոշ բժախնդրություններով, մանրակրկիտ վերծանումներով ու ճշգրտումներով: Արդյունքում՝ 1948 թ. Հո. Ջանփոլադյանը պաշտպանում է «Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը» թեկնածուականատենախոսությունը (թեզը հրա-

¹ Գետիկի վանքը գտնվել է Իջևանի տարածաշրջանում՝ Աղստև գետի աջ ափին, Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Զորոփոր գավառում:

տարակվել է. տե՛ս «Աշխատուժյուններ ՀՊՊ թանգարանի», հ. առաջին, Երևան, 1948 թ.):

Երիտասարդ գիտնականը շարունակում է վիճաբանական հավաքչական գործունեությունը՝ արդեն ընդգրկելով ներկայիս Իջևանի տարածաշրջանը՝ իր մեծ ու փոքր արձանագրություններով կազմելով առանձին վիճաբանական ժողովածու: 1977 թ. Հո. Ջանփոլադյանի և Սուրեն Ավագյանի համատեղ աշխատանքի արդյունքում լույս է տեսնում «Դիվան հայ վիճաբանության» վեցերորդ պրակը՝ «Իջևանի շրջան»: Այստեղ գետեղված են տարածաշրջանի բոլոր վիճագիր արձանագրությունները, դրանց գրչագրերը, ապա վերծանությունները: Արձանագրական նյութերը համալրված են բնագրերի մատենագրական տվյալներով՝ հատուկ նշաններով տարանջատելով անձնական վերականգումները կամ հավելումները, ընձեռելով տարբերակները հնարավոր մեկնաբանությունները:

Միջնադարյան հնագիտությունը Հո. Ջանփոլադյանի տարերքն էր: Նա կորստից փրկեց և հայ գիտական հանրությանը ներկայացրեց Բուլգար (Վուլգայի ափին) քաղաքում՝ Սերիբի պեղավայրում հայտնաբերված նյութական մշակութային արժեքները, որոնք մեկ անգամ ևս հավաստում են Միջնադարյան Հայաստանի առևտրատեսակական, մշակութային կապերի իրողությունը հեռավոր ու մերձավոր հարևան երկրների հետ:

1951 թ. մշտապես մասնակցելով Դվինի հնագիտական արշավախմբի աշխատանքներին՝ Հո. Ջանփոլադյանը ուշադրությունը կենտրոնացնում է Դվինի ապակեգործական գտածոների վրա՝ խնդիր ունենալով գիտական շրջանակներին ներկայացնել միջնադարյան Դվինը՝ իբրև ապակեգործական խոշոր կենտրոն:

Դվինը, դառնալով Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ ապակեգործական կենտրոնների ավանդույթների արժանավոր ժառանգորդն ու գործնական շարունակողը, կարճ ժամանակամիջոցում կարողացավ կազմակերպել ապակու տեղական, բարձր մակարդակի արտադրություն: Դվինի ապակե գտածոներն իրենց մեծաքանակությամբ և բազմազանությամբ մշտապես գտնվել են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում՝ մասնավորապես, Հո. Ջանփոլադյանի: 1974 թ. նա գիտական հանրության դատին հանձնեց «Դվինի միջնադարյան ապակին IX–XIII դդ.» աշխատությունը, որը նոր խոսք էր Դվին մայրաքաղաքի, արհեստագործական-ապակեգործական միջավայրի, առևտրամշակութային կապերի վերլուծության տեսանկյունից: Այն մեկ անգամ ևս փաստագրում է քաղաքի ապակեգործական կենտրոնի ուրույն տեղը մերձավորարևելյան համայնական կենտրոնների շարքում:

1985 թ. Հո. Ջանփոլադյանը և Արամ Քալանթարյանը հրատարակեցին «Միջնադարյան Հայաստանի առևտրական կապերը VI–XIII դդ. (ըստ ապակեգործության տվյալների)» աշխատությունը: Հեղինակները, հատուկ ուսումնասիրության առարկա դարձնելով ներմուծված ապակին, արձանագրում են՝ մերձավորարևելյան երկրների

Հետ ունեցած տարանցիկ առևտրական կապերի շնորհիվ Դվինի ապակեգործական արհեստանոցներում մշակվեցին նոր բաղադրատոմսեր, ինչի շնորհիվ ստացվել է մերձավորարևելյան օրինակներից տարբերվող դվինյան նկարազարդ ապակին (IX դ.), որն իր գեղարվեստական բացառիկ արժանիքներով եզակի է ողջ տարածաշրջանում:



Առաջին շարք. ձախից աջ՝ Խանգաղյան Էմմա, Առաքելյան Բաբկեն, Ջանփոլադյան Գոհիսիմեն, Գարուբյունյան Վարազդատ, Գևորգյան Էմմա, Մուշեղյան Խաչիկ, Գովհաննիսյան Ողիսես,
 Երկրորդ շարք. ձախից աջ՝ Կարապետյան Մարգո, Մախաթյան Սոնա, Մուշեղյան Եվգինե, Գևորգյան Նյուրա, Ղաֆաղարյան Կորյուն, Քոչարյան Գայանե, Բաբայան Ֆրինա, Ժամկոչյան Աղավնի, Քալանթարյան Արամ, Խաչատրյան Վարդան, Նազարյան Պապին (Երևան, 1987 թ.):

Անշուշտ, վերը նշած աշխատություններով չեն սահմանափակվում Հո. Ջանփոլադյանի հետազոտություններն ապակեգործական արհեստաճյուղի ուսումնասիրության բնագավառում: Նա ապակե գտածոների այս կամ այն տեսակին նվիրված բազում հոդվածների հեղինակ է: Բազմավաստակ գիտնականի վերոհիշյալ աշխատանքները նկատի ունենալով՝ հայտնի միջնադարագետ-հնագետներ՝ Բորիս Մարշակը և Վալենտինա Ռասպոպովան գրում են. «Հո. Ջանփոլադյանի ներդրումը Արևելքի ապակու ուսումնասիրության գործում կարելի է համեմատել Կ. Լամի ունեցած ծառայությունների հետ: Ինչպես Կ. Լամի աշխատությունները, այնպես էլ Հո. Ջանփոլադյանինը երբեք չեն հնանա» (Б. И. Маршак, В. И. Распопова. Памяти Р. М. Джанполадян. — «Археологические вести», 2005, № 12. СПб., с. 332):

Վաստակաշատ գիտնականի հետաքրքրությունները չեն սահմանափակվում միայն միջնադարյան ապակու ուսումնասիրությունում: Նրա ուշադրությունը բևեռվում է նաև խեցեգործության բացառիկ և ինքնատիպ արտահայտություններից մեկի՝ սնդկամանների կամ ձվաձև անոթների վրա:

XIX դ. երկրորդ կեսին Եգիպտոսում, Սիրիայում, Պաղեստինում և մերձվոլգյան Բուլգար քաղաքում մեծաքանակ ձվաձև անոթների հայտնագործումը գիտական աշխարհում առաջ բերեց մեծ հետաքրքրություն: Հրատարակվեցին մի շարք հոդվածներ՝ հիմքում ունենալով դրանց կենցաղային-գործնական կիրառության հարցերը: Առաջադրվեցին տարբեր կարծիքներ՝ վերոնշյալների գործածության կերպի՝ սկսած ճրագ կանթեղներից, մոմակալներից մինչև սնդիկ պահելու տարաներ, պատերազմական հրձիգ նռնակներ, անուշահոտ յուղեր, վարդաջրեր պահելու և փոխադրելու հարմար միջոցներ, ճարտարապետական հարդարանքի տարր, ալքիմիական փորձանոթներ և այլն: Նույն տեսակետն է պաշտպանում, հարկավ, որոշ վերապահումներով, Հո. Ջանփոլադյանը: Տարիների ընթացքում հավաքած և հետազոտած նյութերը հրատարակում է «Դվինից և Անիից հայտնաբերված ձվաձև անոթները» վերնագրով (Երևան, 1982, Հայաստանի հնագիտական հուշարձաններ, պր. 12) արժեքավոր և պահանջված աշխատության մեջ: Դվին և Անի մայրաքաղաքների պեղումներով հայտնաբերված ձվաձև անոթները ոչ միայն բազմաքանակ են, այլև բազմատեսակ, զարդարուն ու անզարդ, դրոշմազարդ, հարդարված հետաքրքիր և ուրույն հարդարապատկերներով, հաճախ արձանագիր (հայերեն և արաբերեն) կամ վարպետների նշաններով:

Հո. Ջանփոլադյանի երկրային կյանքի մեծագույն նվաճումը, անշուշտ, նրա ստեղծած կայուն ու արժանապատիվ ընտանիքն էր: Ամուսինը՝ ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկին, իր լայնամասշտաբ հնագիտական գիտելիքներով համաշխարհային գիտության ասպարեզում ճանաչված գիտնական էր, երկար տարիներ ղեկավարել է Կարմիր Բլուրի հնագիտական արշավախումբը: Գիտական գործունեությունը զուգահեռ՝ ղեկավարել է նաև Լենինգրադի Պետական էրմիտաժը: Ավագ որդին ճանաչված արևելագետ, ակադեմիկոս Միխայիլ Պիոտրովսկին է, ով այսօր էրմիտաժի անփոխարինելի տնօրենն է, իսկ մյուս որդին՝ Լևոն Պիոտրովսկին, կենսաբանական գիտությունների դոկտոր է, միջազգային բազմաթիվ կազմակերպությունների պատվավոր անդամ:

Պիոտրովսկի-Ջանփոլադյան ընտանեկան հարկը Լենինգրադում պատմաբանների և մեզ՝ հնագետներիս համար «Հայոց տուն» էր, ինքնատիպ մի «Վերնատուն»: Գտնվելով հյուսիսային մայրաքաղաքում, ցանկություն կամ գործի բերումով՝ ամեն ոք կարող էր հանգիստ թակել Պիոտրովսկիների բնակարանի դուռը՝ համոզված, որ այն կբացվի և իրեն կգիմավորի հիասքանչ ժպիտը դեմքին Հռիփսիմե Միքայելովնան՝ իբրև սպասված ու ցանկալի հյուրի: Իսկ

Բորիս Բորիսովիչն իր սովորության համաձայն՝ կսկսի հարցուփորձը Երևանից, իր մտերիմներից ու բարեկամներից, ապա ամուսինները կհետաքրքրվեն Լենինգրադում գտնվելու հանգամանքներով՝ պատրաստ ամեն կերպ աջակցելու, օգնելու բարի ցանկությամբ. «Билет у них куплен не до аэропорта или вокзала, а до дома Пиотровских» կատակում էին հայ հնագետները: Հո. Ջանփոլադյանը պատմաբանների ու հնագետների պատվամեծար դեսպանն էր Լենինգրադում: Բավական էր զանգահարել Լենինգրադ՝ գործուղվելու հետ կապված, նա անմիջապես կազմակերպում էր տեղավորման խնդիրը «ДОМ УЧЕНЫХ»-ում:

Երկար տարիներ ապրելով Լենինգրադում՝ Հռիփսիմե Միքայելովնան մնացել էր Երևանն անմոռաց սիրող հայուհի: Չափազանց րած չենք լինի վկայելու, որ օտար ափերում բնակվող մեր հայրենակիցներից շատերը Երևանը չեն սիրել այնպես, ինչպես նա. երևանցի էր հոգու ողջ խորությամբ: Մայրաքաղաքը նրա համար հարազատ տուն էր, որտեղ ազատ ու անկաշկանդ էր իր բոլոր կարգի շփումներում: Դե իսկ ՀՊՊ թանգարանում նրան դիմավորում էին իբրև հեռուներից եկող սիրասուն զավակի՝ կարոտալի ջերմությամբ և անհագ սիրով: Կյանքի վերջին տարիներին չկարողանալով այցելել Երևան՝ նա մի երազանք ուներ. մեկ անգամ ևս այցելել, քայլել Ամիրյան փողոցով, հատել Լենինի (Հանրապետության) հրապարակը և կենտրոնական մուտքով մտնել ՀՊՊԹ, որտեղ ստացել էր հնագետ-վիճագագետի իր մկրտությունը:

Պիտտրովսկի ամուսինները մարդկային այն տեսակն էին, որոնց պայծառ հիշատակը ժամանակն իր վայրիվերումներով ի գորու չէ խամբեցնելու, քանզի նմաններն են կյանքը դարձնում առավել բարի, գեղեցիկ ու ներդաշնակ:

Մեզ՝ դվինցիներին համար Հռիփսիմե Միքայելովնան սոսկ արչավախմբի անդամ չէր, այլ բարի խորհրդատու, մտերիմ բարեկամ ու ավագ գործընկեր: Նրա ամեն այցը Դվին յուրահատուկ էր՝ հագեցած գիտական աշխարհի նորություններով, իմաստալից զրույցներով: Մահից տարիներ անց էլ նա մնում է Դվինի հնագիտական արչավախմբի պատվավոր անդամ, հիշելի դվինյան ներկա սերնդի կողմից:

Խոնարհումով՝ դվինցիներ:

Ա.ՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ,
ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՍ ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Օրերս լրացավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գիտությունների վաստակավոր գործիչ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանի ծննդյան 90-ամյակը:



Ս. Հարությունյանը ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 22-ին ներկայիս Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: 1940 թ. ընտանիքով տեղափոխվել է Թբիլիսի և ուսումը շարունակել տեղի թիվ 83-րդ, 89-րդ և 26-րդ արական միջնակարգ դպրոցներում: Վերջինիս 11-ամյա դասընթացն ավարտելով՝ 1947 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի Արևելյան լեզուների և գրականության բաժինը: Համալսարանում ուսանելու տարիներին արժանացել է Ավետիք Իսահակյանի և Ստեփանոս Մալխասյանցի անվան կրթաթոշակների:

1952 թ., ավարտելով համալսարանը, աշխատել է գրքի առևտրի և հրատարակչության տարբեր բնագավառներում: 1956 թ. ընդունվել է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Հայ բանահյուսություն» մասնագիտությամբ: 1959 թ., ավարտելով ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուականատենախոսությունը՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով: Նախ աշխատել է Գրականության ինստիտուտում, ապա՝ 1960 թ. տեղափոխվել է ԳԱ Հնագիտության և ազգագրության նորաստեղծ ինստիտուտ, որտեղ և աշխատում է մինչև օրս:

1971 թ. պաշտպանել է դոկտորականատենախոսությունը՝ «Մանուկ Աբեղյանի կյանքը և գործը» թեմայով: Պաշտոնական ընդգրկմախոս, մեծ բանաստեղծ և բանասեր Պարույր Սևակը նրան հետևյալ կերպ է բնութագրել. «Սարգիս Հարությունյանը գիտություն մարդ է. ինչ նյութական ու բարոյական վիճակում էլ լինի այդ գիտությունը, Ս. Հարությունյանը իր ուժերի բոլորանվիրությամբ զբաղվելու է գիտությամբ, որովհետև դա նրա կոչումն է և ոչ թե ապրուստի աղբյուրը: Ավելին, չափազանցում չի լինի, եթե նշենք, որ այսօր նա մեր բանագիտության այն սակավաթիվ կարող ուժերից է, որոնք շարունակում են Մեծն Մանուկ Աբեղյանի գործը՝ կատարելով այն, ինչ թերի է մնացել...»:

1971 թ. պաշտպանել է դոկտորականատենախոսությունը՝ «Մանուկ Աբեղյանի կյանքը և գործը» թեմայով: Պաշտոնական ընդգրկմախոս, մեծ բանաստեղծ և բանասեր Պարույր Սևակը նրան հետևյալ կերպ է բնութագրել. «Սարգիս Հարությունյանը գիտություն մարդ է. ինչ նյութական ու բարոյական վիճակում էլ լինի այդ գիտությունը, Ս. Հարությունյանը իր ուժերի բոլորանվիրությամբ զբաղվելու է գիտությամբ, որովհետև դա նրա կոչումն է և ոչ թե ապրուստի աղբյուրը: Ավելին, չափազանցում չի լինի, եթե նշենք, որ այսօր նա մեր բանագիտության այն սակավաթիվ կարող ուժերից է, որոնք շարունակում են Մեծն Մանուկ Աբեղյանի գործը՝ կատարելով այն, ինչ թերի է մնացել...»:

1972 թ. Ս. Հարությունյանը ղեկավարել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանաստեղծական սկզբնաղբյուրների վավերագրման նորաստեղծ բաժինը, որը հետագայում վերանվանվել է Բանաստեղծության տեսության և պատմության բաժին: Արդեն 45 տարի է, ինչ նա ղեկավարում է այդ բաժնի աշխատանքները:

1992 թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն՝ մեծապես նպաստելով ինստիտուտի գիտակազմակերպչական աշխատանքներին:

Ս. Հարությունյանը հիմնարար գիտնական է: Նրա գիտական ողջ գործունեությունն ընթացել է մի շարք ուղղություններով, որոնք իրենց հետքերն են թողել Հայագիտության պատմության մեջ:

Նախ՝ դա Հայ ժողովրդական հանելուկների գիտական ոլորտն է՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» մենագրությամբ (1960) և հանելուկների գիտական համահավաք բնագրերով (1965), որոնք ամբողջական պատկերացում են տալիս գաղտնագրված այդ ժանրի մասին:

Հաջորդը Հայ հմայական բանաստեղծության ոլորտն է՝ ստեղծված հեղինակի «Անեծքի և օրհնանքի ժանրը Հայ բանաստեղծության մեջ» մենագրությամբ (1975), ինչպես նաև՝ «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» (2006) հնագույն բնագրերի քննախույզ վերլուծական ուսումնասիրությամբ:

Իր բնույթով նորույթ է Հայ առասպելաբանության և ժողովրդական հավատալիքների ոլորտը՝ ստեղծված հեղինակի «Հայ առասպելաբանություն» (2000), «Հայ հին հավատալիքները, պաշտամունքը և կրոնն ու դիցարանը» (2001) բազմաբովանդակ մենագրություններով, ինչպես նաև՝ «Мифы народов мира» (1980–1982) երկհատոր և «Мифологический словарь» (1990) հանրագիտարաններում գետեղված հոդվածներով: Ծանրակշիռ այդ հրատարակությունները գիտական նոր մոտեցումներով վերլուծության են ենթարկում դիցաբանական մի շարք արժեքավոր հարցադրումներ՝ լայն ճանաչում բերելով հեղինակին:

Ուշագրավ է նաև «Սասնա ծռեր» հերոսավեպի այն նոր տարբերակները, որոնք 1971–1973 թթ. ընթացքում Հայաստանի 205 բնակավայրերից գրառել է (81 նոր տարբերակ) Ս. Հարությունյանի գլխավորած գիտական արշավախումբը, որոնց մի մասը նա Ա. Սահակյանի աշխատակցությամբ հրատարակել է «Սասնա ծռեր» հատորներով (հ. Գ, 1974, հ. Դ, 1999)՝ շարունակելով Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի հրատարակած բազմահատորյակը:

Բացի «Սասնա ծռերի» նոր տարբերակների հայտնաբերումից և հրատարակումից, Ս. Հարությունյանը մի շարք ուսումնասիրություններ է նվիրել Հայ ժողովրդական վեպի ծագման, ձևավորման, զարգացման խնդիրներին, կազմել ու խմբագրել է Հայ ժողովրդական էպոսի համահավաք բնագրերը, տարբերակների գիտական հատրմտիրը (1977): Վաստակաշատ գիտնականը Գրականության ինստիտուտի համագործակցությամբ 10 տարիների ընթացքում

Երևանում գումարել է միջազգային երեք գիտաժողով՝ նվիրված «Սասնա ծռեր» հայ ժողովրդական էպոսին: Նա, իրավամբ, վայելում է մերօրյա հայ էպոսագիտության նահապետի հեղինակություն:

Իր գիտահետազոտական արգասավոր գործունեությունը զուգընթաց՝ Ս. Հարությունյանը զբաղվել է նաև հայագիտական գիտելիքները ժողովրդական լայն զանգվածներին հասու դարձնելու պատվավոր գործով: 1970–80-ական թվականներին նա հաջողությամբ ղեկավարել է հայկական հեռուստատեսությունում պարբերաբար հեռարձակվող և ժողովրդականություն վայելող «Հայագիտական հանդես» հաղորդաշարը: Բացի այդ, բանագետը ընթերցող լայն զանգվածների համար կազմել և հրատարակել է մի շարք հանրամատչելի գրքեր՝ նվիրված հայ հին վեպերին ու առասպելներին («Հայ հին վիպաշխարհը», 1987, 2004, ռուսերեն տարբերակը՝ «Мифы и легенды древних армян», 2007), ինչպես նաև՝ հայ ասուլթաբանության ժանրերին՝ առած-ասացվածքներին, հանելուկներին նվիրված հրատարակություններ (2006, 2008):

Ս. Հարությունյանը հայ բանագիտության անցյալի երախտավորներին ևս իր հարգանքի տուրքն է մատուցել. մենագրական մի շարք ակնարկներ է նվիրել անվանի հայագետներ Գ. Սրվանձտյանցի, Գ. Հովսեփյանցի, Գ. Լևոնյանի, Ստ. Մալխասյանցի, Մ. Աբեղյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի, Ա. Ղանալանյանի կյանքի և հայագիտական գործունեության հետազոտմանը:

Հաջորդ բնագավառը, որտեղ դրսևորվել են Ս. Հարությունյանի գիտակազմակերպչական եռանդն ու կարողությունները, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի տեխնոլոգիական նորագույն մեթոդներով մշակումն է և, մանավանդ, հայ ժողովրդական 16.000 խաղիկների համահավաք բնագրի ստեղծումը, որն իրականացվել է նրա ղեկավարությամբ ու բաժնի գիտաշխատողների Երկարամյա ջանքերով, սակայն, ցավոք, այն մնացել է անտիպ:

Վերջին երկու ոլորտները, որտեղ Ս. Հարությունյանն իր կարևոր ավանդն ունի, նոր հայագիտության պատմության խնդիրներն ու հայ-իրանական գրական, մշակութային կապերի և փոխառնչությունների հարցերն են: Առաջինն ամբողջությամբ նոր հայագիտության պատմությունը նվիրված Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան» ստվարածավալ մենագրությունն է (1970) և «Հայագիտության զարգացումը 1870–1917 թթ.» աշխատությունը՝ հայագիտության տարբեր բնագավառների զարգացման հեռանկարների քննությամբ: Իսկ երկրորդը՝ հայ-իրանական գրական-մշակութային կապերն են, որոնք հանգամանորեն քննված են «Իրան-Նամե» հանդեսում տպագրված նրա ծավալուն հոդվածներում՝ ուշագրավ մեկնաբանություններով:

Իր գիտական վաստակի համար Ս. Հարությունյանը 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ «Գրականագիտություն» մասնագիտությամբ, 2009 թ. արժանացել է Գիտության վաստակա-

վոր գործչի պատվավոր կոչման, 1987 թ. ընտրվել է Միջազգային գրուցաբանության ընկերակցության անդամ (Ֆինլանդիա):

Ս. Հարությունյանի «Հայ առասպելաբանություն» աշխատությունն արժանացել է Համազգային կրթամշակութային հաստատության մրցանակին (1999) և հրատարակվել Բեյրութում (2000), իսկ «Հայ հմայական և ժողովրդական աղոթքները»՝ Թեքեյան մշակութային միության մրցանակին (2008):

Իր գիտահետազոտական աշխատանքներից բացի, Ս. Հարությունյանը տասնամյակներ շարունակ նաև զբաղվել է արդյունավետ գիտամանկավարժական գործունեությամբ: Ավելի քան 30 տարի նա երևանի ու Գավառի պետական, ինչպես նաև Հր. Աճառյանի անվան համալսարաններում դասավանդել է Հայ հին գրականություն, ժողովրդական բանահյուսություն, Հայ առասպելաբանություն առարկաները: 2010 թ. Ս. Հարությունյանը հրատարակել է «Բանագիտական ակնարկներ» խորագրով գիտամանկավարժական ուսանելի ձեռնարկը:

Անվանի բանագետը հեղինակ է 30-ից ավելի գրքերի ու մենագրությունների և շուրջ 300 գիտական ու գիտահանրամատչելի հոդվածների: Ս. Հարությունյանի գիտական ղեկավարությամբ դաստիարակվել են հանրապետության բազմաթիվ ասպիրանտներ ու դիսերտանտներ, որոնցից շատերն այսօր գիտության դոկտորներ և թեկնածուներ են: Նրա խմբագրությամբ լույս են տեսել բազմաթիվ գիտական արժեքավոր աշխատություններ:

Ս. Հարությունյանը ՀՀ ԳԱԱ գրականության, նաև հնագիտության և ազգագրության ինստիտուտների գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների անդամ է:

Միաժամանակ նա վարել է ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի պաշտոնը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի հովանավորությամբ, Ս. Հարությունյանի ղեկավարությամբ ու բաժնի գիտաշխատողների միասնական ջանքերով «Գիտություն» հրատարակչությամբ լույս է տեսել «Կարսի հայոց բանահյուսական մշակույթը» (2013) ստվար ժողովածուն, որտեղ ամփոփված են տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր բանահավաքների կողմից գրառված ժողովրդագիտական տարաբնույթ նյութեր, որին լրացնելու եկավ «Մոկսի հայոց բանահյուսական մշակույթը» (2015) ժողովածուն:

Ի սրտե շնորհավորելով Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանի բազմաթիվ արժեքավոր աշխատություններով ծանրաբեռն 90-ամյա կյանքի արգասավոր ուղին՝ մաղթում ենք առողջություն և ամենայն բարիք:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ. ԱՆՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԳԵՏԸ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

Լրացան շ՛հ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, երաժշտությունից բաժնի վարիչ, շ՛հ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի ծննդյան 50-ամյա և գիտաստեղծագործական գործունեության 20-ամյա հոբելյանները:



Ա. Ասատրյանը ծնվել է 1968 թ. սեպտեմբերի 1-ին Երևանում, Խորհրդային Հայաստանի քաղաքական ու պետական գործիչ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պրոպագանդայի (հետագայում՝ գաղափարախոսական) բաժնի վարիչ, շ՛հ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար, հետագայում՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ Գրիգոր Եգորի Ասատրյանի և Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի դոցենտ, քիմիական գիտությունների թեկնածու Ջուլետա Հայկի Ճշմարիտյանի ընտանիքում:

1983 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Ն. Կ. Կրուպսկայայի անվան № 19 հայկական միջնակարգ դպրոցի ութամյա դասընթացը և Երևանի մանկական ձայնի պահպանման երաժշտական դպրոցը: 1987 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի տեսական բաժինը, եղել է Լենինյան կրթաթոշակառու: 1992 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի երաժշտագիտության բաժինը (էդ. Փաշինյանի դասարանը), արժանացել է Կոմիտասի անվան կրթաթոշակի, ընտրվել Կոնսերվատորիայի գիտական խորհրդի անդամ:

1991–2003 թթ. Ա. Ասատրյանը դասավանդել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, 2000–2002 թթ. աշխատել Հայկական բաց համալսարանի երաժշտագիտության ֆակուլտետի դեկան, ընտրվել համալսարանի գիտական խորհրդի անդամ:

2001 թ. ավարտել է շ՛հ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան (արտագրությունից չկտրված), պաշտպանել ատենախոսություն «Տիգրան Չոխաճյանի օպերաները» թեմայով (գիտական ղեկավար՝ Գ. Գյոզալյան), ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան և 2002 թ. աշխատանքի անցել Արվեստի ինս-

տիտուտում՝ որպես Երաժշտության բաժնի գիտաշխատող: 2002 թ. ընթացքում հումանիտար գիտությունների բնագավառում ձեռքբերումների համար Ա. Ասատրյանը 2003-ին պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ Գովեստագրով, իսկ հունիսին նշանակվել Արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար, ընտրվել գիտական խորհրդի անդամ: 2005-ի ապրիլի 6-ից նա Արվեստի ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալն է:

2008 թ. պաշտպանել է ատենախոսություն «Հայ երաժշտական թատրոնը ժԹ դարի երկրորդ կեսին. սկզբնավորումը և զարգացումը» թեմայով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: 2012 թ. ստացել է արվեստագիտություն մասնագիտությունում պրոֆեսորի գիտական կոչում:

2009–2016 թթ. ղեկավարել է Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի նորաստեղծ (ներկայումս՝ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի) բաժինը: 2016-ին Ա. Ասատրյանն ընտրվել է Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչ:

Ինստիտուտի տնօրենի՝ գիտության գծով տեղակալի, ինչպես նաև երաժշտության բաժնի վարիչի պաշտոններում Ա. Ասատրյանի գործունեությունն առանձնանում է բարձր կազմակերպվածությամբ ու պրոֆեսիոնալիզմով, սկզբունքայնությամբ ու պահանջկոտությամբ՝ զուգակցված ինստիտուտի գիտական աշխատողների նկատմամբ բացառիկ ուշադիր ու հոգատար վերաբերմունքի հետ:

Արվեստի ինստիտուտի Հիմնադրման կեսդարյա հոբելյանի առիթով 2010-ին պետական պատվերի շրջանակներում լույս տեսավ Ա. Ասատրյանի «ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50» մենագրությունը, որտեղ արխիվային վավերագրերի հիման վրա առաջին անգամ քննական վերլուծության է ենթարկվում Արվեստի ինստիտուտի անցած ուղին, ի մի բերվում նրա պատմությունը: Գրքի կարևոր արժանիքներից է ինստիտուտի աշխատակիցների հեղինակած գրքերի, մենագրությունների, այլումների, ժողովածուների մատենագիտությունը (այբբենական և ժամանակագրական կարգով):

Ա. Ասատրյանի նախաձեռնությամբ և առաջաբանով են հրատարակվել ինստիտուտի վաստակաշատ գիտնականներ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Արարատ Աղասյանի, Մուրադ Հասրաթյանի և Վիգեն Ղազարյանի, ճարտարագետության դոկտոր Լույս Դոլուխանյանի, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանի կենսամատենագիտությունները: Նա է առաջին անգամ ակադեմիական գիտական պարբերականներում («Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների») ներկայացրել իր վաստակաշատ գործընկերների՝ արվեստագիտության դոկտորներ Իրինա Դրամբյանի, Լիլիթ Երնջակյանի և Աննա Արևշատյանի գիտաստեղծագործական գիմանկարները:

Գիտակազմակերպական գործունեությունն Ա. Ասատրյանը համատեղում է գիտաստեղծագործական բեղուն աշխատանքի հետ: Նա հեղինակ է 11 մենագրության և ավելի քան 140 գիտական հոդված-

ների, որոնք տպագրվել են Հայաստանում, Ռուսաստանում, Իտալիայում, Լիբանանում, Իսրայելում լույս տեսած գիտական ժողովածուներում և հանդեսներում: Նա, մասնավորապես, 36 հոդված է տպագրել ՀՀ ԳԱԱ հեղինակավոր հանդեսներում՝ «Պատմաբանասիրական հանդեսում» և «Լրաբերում»: ակադեմիական գիտական պարբերականներում տպագրված հոդվածների այս ցուցանիշով Ա. Ասատրյանն առաջատարն է հայ երաժշտագետների շրջանում: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում: Նրա գիտական խմբագրությունները լույս են տեսել 42 գիրք և գիտական հոդվածների ժողովածու:

Երաժշտագետի գիտական հետաքրքրությունների կենտրոնում է նոր և նորագույն շրջանների հայ երաժշտության ուսումնասիրությունը: Նա անդրադարձել է հայ կոմպոզիտորական արվեստի (Տիգրան Չուխաճյան, Կոմիտաս, Քրիստափոր ԿարաՄուրզա, Արմեն Տիգրանյան, Դանիել Ղազարյան, Արամ Խաչատրյան, Արամ Սաթուկ, Առնո Բաբաջանյան, Արամ Սաթյան, Կոնստանտին Պետրոսյան, Աշոտ Բաբայան և ուրիշներ) և կատարողական արվեստի (Արմենակ Շահմուրադյան, Հովհաննես Աճեմյան, Ավագ Պետրոսյան, Հովհաննես Չեքիջյան և ուրիշներ) ներկայացուցիչներին, ձեռնամուխ եղել սիյուռնաբանության մի շարք գործիչների (Նիկոլ Գալանդեբյան, Գրիգոր Սյունի, Աշոտ Պատմաբայան, Անջելո էֆրիկյան, Շառլ Ազնավուր և ուրիշներ) ստեղծագործության ուսումնասիրությունը, մոռացությունից փրկել լիբանանահայ կոմպոզիտոր, դաշնակահար և մանկավարժ Արուսյակ Այնթապյանին: Նրա գիտական ուսումնասիրությունները վերաբերում են նաև հայ արվեստի կարևոր օջախներին՝ մենագրությունների ձևով առաջին անգամ շարադրել է Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի պատմությունը, Հայաստանի կոմպոզիտորների միություն անցած ուղին, հոդվածի ձևաչափով անդրադարձել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պատմությունը:

Ա. Ասատրյանի գիտական հետազոտությունների առանցքը Տիգրան Չուխաճյանի ստեղծագործության համալիր ուսումնասիրությունն է: 2002 թ. մայիսին Ա. Ասատրյանի ջանքերով Երևանում ստեղծվում է Տիգրան Չուխաճյան հիմնադրամը, որի անփոփոխ ղեկավարն է: 2005–2007 թթ. նա ղեկավարել է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը», իսկ 2008–2010 թթ.՝ «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործական ժառանգությունը» թեմաները:

2006-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց «Արշակ Բ». հայոց անդրանիկ օպերան» աշխատությունը, որը հեղինակը նվիրել է ծնողներին՝ Գրիգոր Ասատրյանին և Զուլետա Ճյմարիտյանին: Ա. Ասատրյանն ընթերցողին է ներկայացնում Տ. Չուխաճյանի և Թովմաս Թերզյանի հեղինակած «Արշակ Բ» (1868) պատմաուսումնասիրական օպերայի թատե-

րատետրը, բացահայտում երաժշտական լեզվի առանձնահատկությունները, ներկայացնում օպերայի բեմական ճակատագիրը: Հավելվածում տեղ են գտել «Արչակ Բ»-ի թերզյանական և գուլակյանական լիբրետոները:

Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2009 թ. լույս է տեսնում Ա. Ասատրյանի ««Զեմիրե»». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը» մենագրությունը, որը նվիրված է Տ. Չուխաճյանի և Տիգրան Գալեմճյանի հեղինակած հայոց անդրանիկ հեքիաթ-օպերայի՝ «Զեմիրեի» գիտական ուսումնասիրությանը: Նոտային օրինակներով հագեցած մենագրության մեջ Ա. Ասատրյանը, չուխաճյանագիտության մեջ առաջին անգամ ներկայացնում է «Զեմիրեի» ստեղծման պատմությունն ու համառոտ ուրվագծում օպերայի բեմական ճակատագիրը, լուսաբանում օպերայի թատերատետրի հեղինակ Տ. Գալեմճյանի կյանքն ու գործունեությունը: «Զեմիրեի» հեղինակային ձեռագրերի մանրախոյզ ուսումնասիրության հիման վրա նա բացահայտում է օպերայի դրամատուրգիական և երաժշտական-ոճական առանձնահատկությունները, գիտական շրջանառության մեջ դնում օպերայի լիբրետոյի ուսուներեն տեքստը:

Չուխաճյանի ստեղծագործության ուսումնասիրության հանրագումարը դարձավ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պետական պատվերի շրջանակներում 2011-ին՝ Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյա հոբելյանին ընդառաջ հրատարակված Ա. Ասատրյանի «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը» մենագրությունը, որը «հիմնարար և ուղենիշ ուսումնասիրություն է չուխաճյանագիտության ասպարեզում»¹, կարևոր հանգրվան հայ երաժշտական թատրոնի համընդհանուր պատմության ստեղծման ճանապարհին: Աշխատության մեջ համալիր ուսումնասիրվել և արժեքավորվել է Տ. Չուխաճյանի երաժշտական թատրոնը: Ինչպես նկատում է Լիլիթ Երնջակյանը, «Աշխատությունը շարադրված է արխիվային ձեռագրական հարուստ նյութի, հայագիտական ուսումնասիրությունների և տարաբնույթ սկզբնաղբյուրների հիման վրա, որի արդյունքում արվել են կարևոր լրացումներ, ճշգրտումներ, առաջ քաշվել գիտական նոր վարկածներ: Գիրքն աչքի է ընկնում իր հստակ և շահեկան կառուցվածքով. մեծանուն կոմպոզիտորի ամեն մի օպերային երկի քննությունն իրականացվել է տվյալ ժամանակափուլի մշակութային կյանքի համատեքստում՝ գրաքննադատական, հրապարակախոսական ու թատերագիտական միջավայրերում շրկացած բանավեճերի լուսաբանման հետևողական միտումով»²:

Գիտական արժեքից բացի՝ Ա. Ասատրյանի մենագրությունն ունի

¹ Լ. Երնջակյան. Հիմնարար և ուղենիշ ուսումնասիրությունն չուխաճյանագիտության ասպարեզում. — ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթ, 2011, սեպտեմբեր, № 9, էջ 6:

² Լ. Երնջակյան. Աննա Ասատրյան. Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 480 էջ. — ՊԲՀ, 2011, № 3, էջ 247:

կիրառական նշանակություն. հեղինակն առաջ է քաշում Տ. Չուխաճյանի օպերաների կլավիրների և պարտիտուրաների ակադեմիական հրատարակության անհրաժեշտության հարցը, կարևորում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում «Արիֆի խորամանկությունը», «Քյոսե Քեհյա», «Ինդիանա», «Ձեմիրե», հեղինակային «Արչակ Բ» և «Լեբլեբիջի Հոր-Հոր աղա» օպերաների բեմադրության հրատապության խնդիրը: Մարգարիտա Ռուխկյանի խոսքերով՝ «Աննա Ասատրյանի՝ Չուխաճյանի ստեղծագործությունը նվիրված հիանալի և զարմանալիորեն աշխատատար գրքերը անսահմանորեն ընդլայնեցին հայ առաջին պրոֆեսիոնալ կոմպոզիտորի՝ հայ նոր պրոֆեսիոնալ արվեստի ծաղկման նախակարապետի, նրա ժամանակաշրջանի և նրա միջավայրի մասին մեր գիտելիքները»³:

Հավելենք նաև, որ մենագրությունների կողքին Ա. Ասատրյանը հեղինակել է Տ. Չուխաճյանին նվիրված մի շարք գիտական հոդվածներ, որոնցից երեքը հրատարակվել են «Բազմավեպ» հանդեսում՝ կապելով դեռևս 1899-ին սկզբնավորված բազմավեպյան չուխաճյանապատումի կտրված թելը...

Ա. Ասատրյանի ջանքերով չուխաճյանագիտությունը թեև կոխեց զարգացման նոր փուլ: Մի կողմից՝ Տ. Չուխաճյանի դաշնամուրային և սիմֆոնիկ երաժշտության ուսումնասիրությամբ են զբաղվել Ա. Ասատրյանի դիսերտանտները՝ Աննա Ադամյանը և Մարտուն Կոստանդյանը, մյուս կողմից՝ նրա նախաձեռնությամբ Արվեստի ինստիտուտը 2014 թ. դեկտեմբերի 12-ին գումարեց «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը» գիտական նստաշրջանը, որի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել կոմպոզիտորի ստեղծագործությունը, որոշարկել նրա տեղն ու դերը ինչպես հայկական և թուրքական, այնպես էլ համաարևելյան երաժշտական մշակույթի անդամստանում: 2015-ին ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով հայ չուխաճյանագիտության մեջ առաջին անգամ հրատարակվեց կոմպոզիտորին նվիրված հոդվածների՝ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն՝ Ա. Ասատրյանի խմբագրությամբ:

Գիտական գործունեությանը գուգահեռ՝ Ա. Ասատրյանը նպաստում է Տ. Չուխաճյանի երաժշտության պրոպագանդմանը: Այս առումով հիշատակության է արժանի հատկապես նրա նախաձեռնությամբ 2012 թ. դեկտեմբերի 12-ին ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցած «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը» համերգը, որի ընթացքում Հայաստանում առաջին անգամ գիտական աշխատանքով զբաղվող երիտասարդ երգիչների ու դաշնակահարների կատարմամբ ներկայացվեցին էջեր Տ. Չուխաճյանի կամերային ստեղծագործությունից՝ մեներգեր ու դաշնամուրային

³ М. Рухкян. Тигран Чухаджян в свете новых исследований. — «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը» գիտական նստաշրջանի (12 դեկտեմբերի, 2014) նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 33.

պիեսներ: Համերգի վերջում Ա. Ասատրյանի կատարմամբ հնչեց «Արիֆի խորամանկությունը» օպերայից կոմպոզիտորի կատարած տրանսկրիպցիաներից մեկը:

Համերգից օրեր առաջ՝ 2012-ի նոյեմբերի 21-ին, Տ. Չուխաճյանի ծննդյան 175-ամյա հոբելյանի շրջանակներում Արամ Խաչատրյան Համերգասրահում տեղի ունեցած Համերգի ընթացքում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախումբը Կարեն Դուրգարյանի ղեկավարությամբ, կրկին Ա. Ասատրյանի նախաձեռնությամբ, կատարեց «Արչակ Բ» օպերայի Նախերգանքի հայաստանյան պրեմիերան՝ ունկնդիրներին ներկայացնելով մինչ այդ անծանոթ Չուխաճյան-սիմֆոնիստին:

Այլ խոսքով՝ «Ա. Ասատրյանի չուխաճյանագիտական գործունեությունը, որ ներառում է թե՛ գիտական, թե՛ գիտալուսավորչական և թե՛ կազմակերպչական-պրոպագանդիստական ոլորտները, բնագավառի ուսումնասիրությունը թարմ լիցք ու կենարար ազդակներ է հաղորդել, իսկ առաջադրված գործնական քայլերի իրականացմամբ «Արևելքի հայազգի Վերդիրին» միջազգային ճանաչման փայլուն հեռանկարներ են սպասում»⁴:

Երաժշտագետն իր խոսքն է ասել նաև կոմիտասագիտության ասպարեզում: Հենց նա է առաջին անգամ, Կոմիտասի ծննդյան 140-ամյակի առթիվ գրված «Կոմիտասը և հայ երաժշտական արվեստի զարգացման ուղիները» հոդվածում հանդես եկել Երևանում Կոմիտասի թանգարան բացելու առաջարկությամբ: Ա. Ասատրյանը գրում է. «Կոմիտասն այսօր Երևանում չունի թանգարան. նրա իրերը, ձեռագրերը, նաև ոռոյալն այսօր ծվարած են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, մինչդեռ վաղուց է հասունացել Կոմիտասի առանձին թանգարան ունենալու անհրաժեշտությունը, թանգարան, որը կդառնա կոմիտասագիտության զարգացման խոշորագույն կենտրոնը և կծավալի կոմիտասյան ավանդույթներին ու պատգամներին արժանի բազմակողմանի գործունեություն»⁵: Անցավ մի քանի տարի, և 2015-ի հունվարի 29-ին, Երևանում իր դռները բացեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, որի գիտական խորհրդի անդամ է նաև Ա. Ասատրյանը:

Կարևոր է հետազոտողի ներդրումը սփյուռքահայ երաժշտության ուսումնասիրության ասպարեզում: ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2012-ին լույս տեսավ Ա. Ասատրյանի «Լիբանանահայ երաժշտություն. Արուսյակ Այնթապյան» մենագրությունը, որտեղ հեղինակն առաջին անգամ արխիվային նյութերի հիման վրա ներկայացրեց լիբանանահայ դաշնակահարուհի, մանկավարժ, կոմպոզիտոր և երաժշտական-հասարակական գործիչ Արուսյակ Այնթապյանի գործունեությունն ու ստեղծագործությունը, որը մինչ օրս ան-

⁴ Լ. Եր ն ջ ա կ յ ա ն. նշվ. գրախոս., էջ 250:

⁵ Ա. Ա ս ա տր յ ա ն. Կոմիտասը և հայ երաժշտական արվեստի զարգացման ուղիները (ծննդյան 140-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 2010, № 1, էջ 40:

ծանոթ է հայ ունկնդրին: Ուսումնասիրության հավելվածում Ա. Ասատրյանը գետեղեց Ա. Այնթապյանի ցայտոր մեզ անհայտ, մինչդեռ ժամանակին մեծ ժողովրդականություն վայելած դաշնամուրային ստեղծագործություններից երկուսի՝ №3 “Bonheur Retrouve” («Վերագտած երջանկություն») ռապսոդիայի և արաբական ժողովրդական դաբկեի մշակում՝ “Chatti ya dinyi” պիեսի, ինչպես նաև ձայնի ու դաշնամուրի համար գրված “Pour toi seul” («Միայն քեզ համար») տանգոյի նոտաները, որոնք գիտական շրջանառության մեջ դրվեցին առաջին անգամ: Ի դեպ, “Chatti ya dinyi” պիեսի հայաստանյան պրեմիերան տեղի ունեցավ հենց Ա. Ասատրյանի կատարմամբ՝ 2015 թ. հոկտեմբերի 15-ին, «Հայոց ցեղասպանություն–100. ճանաչումից՝ հատուցում» միջազգային երկօրյա գիտաժողովի շրջանակում Կոմիտասի թանգարան-ինստիտուտում Արվեստի ինստիտուտի կազմակերպած համերգի ժամանակ:

2015 թ. ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Արարատ Աղասյանի և Աննա Ասատրյանի «Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար – XX դարի սկիզբ)» աշխատությունը: Գրքի երկրորդ՝ «Պետերբուրգի կոնսերվատորիայի հայ սանը և պրոֆեսորը. Հովհաննես Նալբանդյան» ակնարկում Ա. Ասատրյանը Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող՝ Հովհաննես Նալբանդյանի արխիվում գտնվող վավերագրերի, նամականու և հուշագրությունների, ինչպես նաև ժամանակի մամուլի արձագանքների հիման վրա ներկայացրել է համաշխարհային բեմահարթակ բարձրացած հայ առաջին խոշոր ջութակահար Հովհաննես Նալբանդյանի ստեղծագործական կենսագրությունը:

Նշելի է Ա. Ասատրյանի վաստակը ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի գործունեության ուսումնասիրության ասպարեզում: Հայկական կապելլայի հիմնադրման 70-ամյա հոբելյանի կապակցությամբ, Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պետական պատվերով 2007 թ. լույս տեսած «Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ» գրքում հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ հեղինակը լուսաբանում է կապելլայի ստեղծման նախադրյալները, կայացումն ու անցած ստեղծագործական ուղին, բացահայտում Կապելլայի համերգային գործունեության վառ էջերը:

2009-ի վերջին Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ պետական պատվերով լույս տեսավ «Ամենայն հայոց մասետրոն. Հովհաննես Չեքիջյան» մենագրությունը, որտեղ արխիվային վավերագրերի, համապատասխան գրականության, Հայաստանի, սփյուռքահայ, խորհրդային և արտասահմանյան մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա հայրենական երաժշտագի-

տուլթյան մեջ առաջին անգամ համակողմանիորեն լուսաբանվեց Հ. Չեքիջյանի ստեղծագործական ուղին: Հավելվածներում հեղինակն առաջին անգամ ներկայացրել է Հայաստանի սահմաններից դուրս՝ աշխարհի տարբեր քաղաքներում Հ. Չեքիջյանի ղեկավարութամբ կապելլայի համերգների ցանկը՝ այբբենական և ժամանակագրական կարգով, ի մի է բերել դիրիժորի մասին առկա բազմալեզու գրականությունը՝ 1961 թ. նոյեմբերից՝ հայրենիքում անդրանիկ համերգից, մինչև 2008 թ. ներառյալ (ավելի քան 1100 հոդված հայաստանյան և արտերկրի մամուլում, գիտական և գիտահանրամատչելի հանդեսներում ու ժողովածուներում):

Ամիսներ անց՝ 2010 թ. հունիսի 17-ին, Ա. Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ «Ամենայն հայոց մաստրոն. Հովհաննես Չեքիջյան» գրքի շնորհանդեսը, որն ուղեկցվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի համերգով՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Իսկ վերջինիս ծննդյան 85-ամյակի շրջանակներում 2014 թ. սեպտեմբերի 26–27-ին, Ա. Ասատրյանի գործուն մասնակցությամբ, գումարվեց «Հովհաննես Չեքիջյան–85» երկօրյա գիտական նստաշրջանը, որի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել Հ. Չեքիջյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը: Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2014-ին հրատարակվեց գիտական նստաշրջանի զեկուլոցումների ժողովածուն՝ Ա. Ասատրյանի խմբագրությամբ:

2017-ին Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և Հումանիդ-մի պրոբլեմների ակադեմիայի նախագահության որոշմամբ լույս տեսավ Ա. Ասատրյանի «Հայաստանի կոմպոզիտորների միություն–85» մենագրությունը, որտեղ հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ ի մի է բերվել Հայաստանի կոմպոզիտորների միության պատմությունը: Մենագրությունն արժանացավ 2017 թ. Հայաստանի կոմպոզիտորների միության «Լավագույն ստեղծագործություն (երաժշտագիտություն)» մրցանակին:

Ա. Ասատրյանը մասնակցել է ՀՀ ԿԳՆ գիտություն պետական կոմիտեի կողմից հայտարարված «Արդյունավետ աշխատող 2014», «Արդյունավետ աշխատող 2016» և «Արդյունավետ աշխատող 2018» մրցույթներին և հաղթող ճանաչվել «Հայագիտության և հումանիտար գիտություններ» անվանակարգում:

Հիշատակության է արժանի Ա. Ասատրյանի եռանդուն գործունեությունը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: 2004-ից նա Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարն է: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 ատենախոսություն: Ա. Ասատրյանը ժ. 00. 02 – «Երաժշտական արվեստ» մասնագիտության որակավորման մասնագիտական քննական հանձնաժողովի նախագահն է:

2014-ից նա «Կանթեղ» գիտական պարբերականի գլխավոր խմբագիրն է:

Գիտաստեղծագործական և գիտակազմակերպական վաստակի համար Ա. Ասատրյանը 2013-ին, ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանի կապակցությամբ արժանացել է Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման, պարգևատրվել ՀՀ ԿԳՆ «Ոսկե հուշամեդալով», Ֆրիտյոֆ Նանսենի մեդալով (2014) և ՀՀ ԳԱԱ Պատվոգրով (2005):

Վերջին տարիներին Ա. Ասատրյանը գիտաստեղծագործական և գիտակազմակերպական աշխատանքը հաջողությամբ զուգակցում է հասարակական ակտիվ գործունեության հետ: 2009–2018 թթ. եղել է Հանրային խորհրդի անդամ:

Ա. Ասատրյանն ընտրվել է Երևան քաղաքի առաջին (2009), երկրորդ (2013) և երրորդ (2017) գումարումների ավագանու անդամ, հանդես եկել բազմաթիվ երևանանպաստ նախաձեռնություններով: Երևան քաղաքի ավագանու աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու և արդյունավետ գործունեության համար նա պարգևատրվել է Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալով (2016) և Երևանի 2800-ամյակի հուշամեդալով (2018):

Ա. Ասատրյանը Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահի տեղակալն է, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, Հայաստանի թատերական գործիչների միության անդամ:

2014 թ. և 2017 թ. ընտրվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Եկեղեցական ներկայացուցչական ժողովների պատգամավոր՝ Արարատյան Հայրապետական թեմից:

Շնորհավորելով մեր գործընկերոջը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի և Արվեստի ինստիտուտի ողջ անձնակազմի անունից սրտանց մաղթում ենք կենսական անսպառ կորով և գիտաստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ,
ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

АНУШАВАН ЗАКАРЯН
(К 65-летию со дня рождения)

Видному армянскому литературоведу, доктору филологических наук, главному редактору «Историко-филологического журнала» Национальной академии наук Республики Армения Анушавану Азарпетовичу Закаряну исполнилось 65 лет.



Путь, пройденный литературоведом, редактором, издателем, в основном связан с системой НАН Армении: здесь он получил свое крещение в области редакционно-издательской, научной деятельности и плодотворно работает около 40 лет.

А. Закарян родился 1 января 1954 г. в селе Парага Ордубадского района Нахичеванской АССР, в семье служащего. В 1961–1971 гг. учился в Ереванской средней школе № 19 им. Н. Крупской (ныне – Н. Агбаляна). Окончил филологический факультет Армянского государственного педагогического института им. Х. Абовяна. Наряду с учебой в вузе преподавал в школе села Нор Артагерс Октемберянского района Армении.

В 1975 – 1976 гг. А. Закарян служил в Советской Армии на Дальнем Востоке (г. Облучье, Хабаровский край).

В 1977–1980 гг. работал редактором в издательстве Академии наук АрмССР. В 1980–1993 гг. – ответственный секретарь журнала «Вестник общественных наук» АН Армении. В 1989–1990 гг. – ответственный секретарь еженедельника «Гоямарт» общественной организации «Айастан».

С октября 1993 г. А. Закарян – заведующий издательским отделом Секретариата Верховного Совета РА. С октября 1995 г. возглавлял различные структурные подразделения Аппарата Национального собрания: заместитель заведующего протоколно-издательским отделом, заведующий издательско-переводческим сектором, руководитель канцелярии, заместитель начальника Секретариата, курировавшего общий отдел, отделы кадров и писем. С февраля 1998 г. – исполнительный директор нового ГЗАО «Официальные ведомости» Аппарата Правительства РА. С марта 2000 г. – заведующий издательским отделом Аппарата НС.

С 1999 г. А. Закарян — ответственный секретарь, с 2003 г. — заместитель главного редактора — ответственный секретарь «Историко-филологического журнала» НАН РА. 13 июня 2018 г. Президиум НАН назначил его главным редактором этого авторитетного арменоведческого журнала.

В 1989—2003, 2009—2012 гг. А. Закарян вел преподавательскую деятельность в ряде вузов (Ереванский зооветеринарный институт, университеты «Галик» и «Гладзор», Ванадзорский педагогический университет им. Ов. Туманяна). В этих вузах он неоднократно назначался председателем государственной экзаменационной комиссии.

Долгие годы А. Закарян являлся членом специализированного совета «Русская литература» при Институте литературы им. М. Абегяна НАН РА, ныне действующего в ЕГУ (был также членом специализированного совета «Зарубежная литература»). Был оппонентом многочисленных кандидатских и докторских диссертаций, выступал с докладами на международных и республиканских научных конференциях.

За весомые заслуги в системе НАН РА А. Закарян в 2013 г. награжден грамотой президента НАН «За заслуги».

В 2014 г. юбиляр принял участие в выборах на место члена-корреспондента НАН РА по специальности «Литературоведение», не добрав лишь один голос из необходимых проходных 17 голосов.

Неоспоримые научно-исследовательский и аналитический дар, глубокие источниковедческие знания, умелое владение архивным материалом обеспечили широкое поле научных интересов А. Закаряна. Его исследования обобщены в 18 монографиях и составленных сборниках, около 220 статьях, публикациях и рецензиях. Они включают освещение малоизученных, нередко впервые рассматриваемых проблем армянской действительности начала XX в., Армянского вопроса, Геноцида армян, широкий спектр армяно-русских историко-культурных взаимоотношений.

Первый период научной деятельности А. Закаряна относится к изучению неизвестных или малоисследованных до этого вопросов армяно-русских историко-культурных связей, в частности, истории судьбоносного для армянского народа начала XX века. В этом плане неопределимы заслуги ученого в исследовании и анализе с новой точки зрения армяно-русских литературно-исторических реалий. В 1985 г. он защитил кандидатскую диссертацию «Русские писатели в Закавказье и армянская литературная жизнь», а в 2005 г. — докторскую — «Русские писатели и армянская действительность (10-е годы XX в.)». Изучив, выявив и выведя из забвения, А. Закарян ввел в научный оборот новые архивные документы и данные печати, ознакомил научную и ши-

рокую читательскую общественность с подробностями бурной проармянской деятельности в Западной Армении и в Закавказье целого созвездия русских литературно-культурных, общественно-политических, государственных и военных деятелей — Антуана Березовского-Ольгинского, Вячеслава Полонского, Василия Водовозова, Владимира Плетнева, Александра Кулебякина, Ариадны Тырковой, Сергея Городецкого, Константина Бальмонта, Валерия Брюсова, Василия Каменского, Бориса Лазаревского, Сергея Рафаловича, Петра Сибирцева и др. Интересующие ученого проблемы многосторонне освещены не только в выше-названных кандидатской и докторской диссертациях, но и в других его работах разных лет: «Русские писатели в Закавказье и армянская литературная жизнь (1914–1920)» (1984, на арм. яз.), «Русские литераторы и армянская действительность» (10-е гг. XX в.) (1994), «Александр Кулебякин и Армения» (2003), «Трагедия армянского народа в оценке русских литераторов» (2003), «Борис Лазаревский об Армении и армянских женщинах» (2004, на арм. яз.), «Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье» (2010, на арм. яз.), «Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акме» (2011), «Тифлисские дни Ильи Эренбурга» (2012, на арм. и рус. яз.), «Западноармянская действительность в оценке русского публициста Т. Ольгенина» (2014, на арм. яз.), «Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье» (1916–1921 гг.) (2015), «Армения в литературно-общественной деятельности В. Брюсова» (2016) и др.

Эти работы А. Закаряна — серьезный вклад во всестороннее исследование армяно-русских литературно-историко-культурных связей судьбоносного трагического периода истории армянского народа. Сегодня он по праву считается одним из авторитетных специалистов в указанных сферах. Прделанная им работа важна в следующем аспекте: разносторонние знания, широта мышления, трезвая аналитическая мысль, способность делать меткие заключения позволили ему подходить к рассматриваемым проблемам с новыми подходами и свежими рассуждениями. Выше-названные труды изложены в русле дружбы с Россией, на базе богатых фактов истории, логически верно представлены основы существующих традиционных армяно-русских связей, отношений с русской государственностью и народом. В то же время, будучи поборником исторической правды и национальных интересов родного народа, А. Закарян на неоспоримых фактах разоблачает проводимую царизмом политику в отношении армянского народа в годы Первой мировой войны. Исследователь, справедливо отмечая двуличный характер этой политики, в частности опасения к проявлениям национально-освободительной борьбы, в основу своих исследований ставит оценку исторических, об-

щественно-политических, литературно-культурных реалий с учетом «конкретной ситуации». В целом главное «оружие» А. Закаряна — новые факты и документы. Широко распространено несколько не критическое отношение к нововыявленным документам, воспоминаниям, заметкам. Констатируя как весомое достоинство выполненной А. Закаряном работы выявление и использование многочисленных новых и малоизвестных архивных документов, следует отметить научный характер подхода автора к использованию материалов подобного рода: он пытается все проверить сопоставлением с реальностью и другими свидетельствами — обстоятельство, существенно повышающее достоверность проделанных им исследований. Безусловно, прав был член-корреспондент НАН РА Г. Ананян, метко оценивший научные заслуги юбиляра, когда в своем отзыве на докторскую диссертацию ученого констатировал: «А. Закарян не избегает работы, не столь необходимой, казалось бы, для человека науки. Он любит выискивать, выявлять новые лица, события, факты и документы. Можно представить, сколько он наглотался архивной пыли, сколько перелистал периодики для обобщения темы исследования, представления панорамы литературно-общественной жизни. Пожалуй, вызывающее усмешку «чистых» ученых это преимущество характеризует исследователя, дает представление о его облике и различных сторонах работы».

В то же время, А. Закарян углубился в изучение различных сторон армянской действительности, расширил сферу своих научных интересов, занялся исследованием еще не изученных вопросов. Так, только в итоге его изысканий армянская общественность ознакомилась с деятельностью возглавляемой великим армянским поэтом Ованесом Туманяном комиссии по изучению потерь армянского народа в годы Первой мировой войны. В исследованиях, касающихся этого периода, были лишь разрозненные упоминания о деятельности комиссии — этот жизненно важный для нашего народа вопрос по Геноциду армян не стал предметом изучения. Восполнила это «белое пятно» истории изданная А. Закаряном в 2005 г. (на арм. яз.) книга «Потери армянского народа в годы Первой мировой войны (сборник документов и материалов «Бюро по установлению потерь армян от Всемирной войны»)». Опубликованные документы как первоисточники имеют не только познавательное, но и, безусловно, важное историческое, политическое и практическое значение.

А. Закарян — знаток истории армянской печати, легко ориентирующийся, в частности, в опубликованных в прессе начала XX века разнообразных материалах. Именно это способствовало его обращению к публицистическому наследию выдающегося армянского писателя Александра Ширванзаде десятих годов прош-

лого столетия, незнакомому армянской общественности, не нашедшему место в собрании сочинений писателя, и подвигло опубликовать в 2006 г. сборник «Из публицистического наследия Ширванзаде (1914–1919 гг.)» (на арм. яз.). Рассеянные на страницах закавказской печати эти статьи – фактические свидетельства, отражающие многочисленные и разнообразные вопросы национальной, политической жизни армянского народа, и, помимо представления литературно-исторического интереса, сохраняют также современное звучание.

Следующей подобной работой А. Закаряна было составление и подготовка издания ряда статей литературного и общественно-политического деятеля Тиграна Иоаннисяна, опубликованных в нескольких номерах тифлисской газеты «Арач» в 1919 г. и незнакомых научной общественности, – книга «Тигран Иоаннисян. Османское правительство и иттихат перед судом человечества» (2007, на арм. яз.). Издание важно тем, что это если не самая первая, то одна из первых работ против турецких фальсификаторов, отрицающих Геноцид армян. Исследование написано на основе фактов, с профессиональным мастерством, и сегодня может внести вклад в борьбу с отрицанием исторической реальности – Геноцида армян.

К этому ряду можно отнести также составленный и изданный А. Закаряном в 2009 г. сборник «Поручик Алексей Колмаков. Историческая армянская рота». Осенью 1914 г., в первые месяцы мировой войны, служившие в турецкой армии западные армяне, добровольно сдались русским и были отправлены в Сибирь. Большая часть этих солдат в середине марта 1918 г. из Иркутска прибыла в Тифлис. Поручик А. Колмаков в составе Сибирской армянской роты был участником всех тех боев, которые вел против турецких войск и мусаватистских банд Первый армянский ударный полк под командованием легендарного героя национально-освободительного движения Андраника весной и летом 1918 г. В книге подробно освещен боевой путь этой роты.

К 70-летию юбилею НАН РА по решению редакционно-издательского совета академии в 2013 г. в издательстве «Гитутюн» вышел в свет (на арм. яз.) сборник «Страницы из историко-публицистического наследия Манука Абебяна» (составление, предисловие и комментарии А. Закаряна). Определенная часть научного наследия выдающегося арменоведа, академика М. Абебяна не вошла в издание его сочинений, и работа А. Закаряна была призвана восполнить существовавший пробел.

Последней работой А. Закаряна является сборник «Парламент Первой Республики Армения» (2018, на арм. яз.). В издании представлена краткая история парламента Первой Республики, сообщения прессы о первых заседаниях законодательного орга-

на, регламент парламента, закон о выборах, список имен членов парламентов двух созывов, биографические справки о спикерах и депутатах-женщинах. Несомненно, сборник о деятельности парламента Первой Республики Армения займет свое место среди аналогичных изданий и удостоится внимания широких кругов читателей.

Вышеперечисленные книги и сборники свидетельствуют: А. Закарян фактически с 2003 г. ежегодно (за исключением 2008 и 2017 годов) издавал все новые исследования, которые показывают, что автор — последовательный, целеустремленный и продуктивный ученый, достигающий поставленных перед собой целей.

Названные работы ученого имеют бесспорное научное значение, являются существенным вкладом в изучение армянской литературно-культурной и общественно-политической действительности. Они неоднократно рецензировались в печати, научной периодике Армении и за рубежом (Москва, Бейрут).

Одной из важных сторон научно-исследовательской деятельности А. Закаряна является также публикация нововыявленных архивных материалов (переписка, воспоминания, статьи и др.), с предисловиями и научными комментариями, о ряде известных армянских и русских литературно-культурных, общественно-политических деятелях — Г. Овсепяне, Ст. Малхасянце, С. Тер-Акопяне, Е. Отяне, П. Макинцяне, З. Есяян, А. Лисициане, Д. Анануне, М. Бабаян, М. Лермонтове, К. Бальмонте и многих других.

А. Закарян — также редактор, составитель и издатель более тридцати книг и сборников, имеющих актуальное научно-политическое звучание и содержание.

Юбиляр является членом редколлегии сборников научных трудов «Кантех».

Отметим, что А. Закарян, как уже было сказано, долгие годы работающий и в Национальном Собрании Армении, имеет чин советника первого класса государственной службы РА.

С 1986 г. — член Союза журналистов СССР/Армении.

А. Закарян был в истоках создания земляческого союза «Нахичеван» (1988), являлся членом правления, заместителем председателя.

Анушаван Азарпетович — преданный семье муж, отец и дед.

Неполным был бы образ А. Закаряна — подвижника науки, если бы хотя бы вскользь не была упомянута его гражданская позиция, проявленная в последние годы в участии в общественно-политической жизни страны (был кандидатом в депутаты парламента РА). Он как личность и гражданин сумел подняться над интересами повседневного бытия. Вызывает восхищение его

трудолюбие. Принципиальность, широта мышления, требовательность к собственной личности и окружению – вот характерные качества А. Закаряна – человека и гражданина. Всем этим он снискал уважение и авторитет в научном сообществе, общественно-политических кругах и в своей среде.

В достойный юбилей хотелось бы пожелать А. Закаряну отменного здоровья, кипучей энергии, новых успехов и достижений в научной и общественной деятельности на долгие годы.

РОБЕРТ БАГДАСАРЯН

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԲԱԼԹԻԿԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՎ ԾՈՎ.
ՐԱՅԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյա հոբելյանական միջոցառումների շարքը նշանավորվեց նաև «Բալթիկայից մինչև Սև ծով. հայերը մշակութային, տնտեսական և քաղաքական գործընթացներում» թեմայով հայագիտական միջազգային գիտաժողովով, որը տեղի ունեցավ 2018 թ. հոկտեմբերի 15–18-ին Երևանում:

Միջազգային գիտաժողովի կազմակերպիչը Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամն էր (գլխավոր տնօրեն Արմեն Խեչոյան՝ Կազմակերպիչ հանձնաժողովի նախագահ): Արդեն մի քանի տասնամյակ է ինչ «ԱՆԻՎ» հիմնադրամը ֆինանսավորում է հայագիտական որոշակի ուսումնասիրություններ, հրատարակում գրքեր, իսկ վերջերս նաև երկու տարին մեկ կազմակերպում է գիտաժողովներ՝ նպատակ ունենալով հայագետներին ծանոթացնել ոլորտում տեղի ունեցող գործընթացներին:

Սույն գիտաժողովը Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի կազմակերպած միջազգային ընդգրկման չորրորդ խոշոր հավաքն էր (առաջինը «Հայկական համայնքների գեղարվեստական մշակույթը Ռեչ Պոսպոլիտայի հողի վրա», 2012 թ., 9–11 հոկտեմբերի, Մինսկ, Բելառուսի Հանրապետության Ազգային գեղարվեստի թանգարան, երկրորդը «Հայբելառուսական պատմամշակութային կապերը. ավանդույթներ և արդիականություն», 2015 թ., 21–22 մայիսի, Մինսկ, Բելառուսի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պատմությունից ինստիտուտ, երրորդը՝ «Հայ սփյուռքը և հայ-ռուսական հարաբերությունները. պատմություն և արդիականություն», 2016 թ., 13–17 սեպտեմբերի, Մոսկվա, Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան):

Գիտաժողովի համակազմակերպիչներից էին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, Բելառուսի Հանրապետության ԳԱԱ պատմության ինստիտուտը, Գիտելիքների լեհական ակադեմիան, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը, Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը՝ Մատենադարանը, Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության արվեստագիտության պետական ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, Բելառուսի Հանրապետության պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

Պատմաաշխարհագրական լայն ընդգրկում ունեցող սույն գիտաժողովը հնարավորություն ընձեռեց ոչ միայն Հայաստանի գիտնականներին, այլ նաև աշխարհի շուրջ երկու տասնյակ երկրներից

(ԱՄՆ, Ավստրիա, Արգենտինա, Բելառուս, Բուլղարիա, Գերմանիա, Լեհաստան, Լիտվա, Հունգարիա, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա, Ուկրաինա, Ֆրանսիա) մասնակցության հայտ ներկայացրած և ժամանած ավելի քան 60 հետազոտողներին լուսաբանել Բալթիկայից մինչև Սև ծով հայերի և այլ ժողովուրդների միջև փոխհարաբերությունները, ինչպես նաև զնահատել հայկական համայնքների և Հայաստանի ներգրուծմը հիշյալ տարածաշրջանի երկրների անցյալի ու ներկայի պատմությանը, մշակույթին և գիտությանը: Օտար մասնակիցների թիվը զգալի էր (ընդհանուրի շուրջ 70 %-ը), ինչը վկայում է միջոցառման նկատմամբ գիտական հանրության հետաքրքրության մասին:

Արտերկրի երբեմնի անհետացած գաղթօջախներում հայության թողած ժառանգության, ինչպես նաև արդեն իսկ ձևավորված կամ նորերս ձևավորվող համայնքներում հայկական էթնիկ խմբի ներկայացուցիչների կողմից իրենց երկրներում ունեցած ներգրուծման բազմակողմանի ուսումնասիրումը հույժ կարևոր խնդիր է: Ահա թե ինչու, սույն միջազգային գիտաժողովում ըստ ամենայնի ներառված էին հումանիտար ոլորտի տարբեր մասնագետներ (պատմաբան, արխիվագետ, ազգագրագետ, թանգարանագետ, աղբյուրագետ, բանագետ, փրիսոփա, սոցիոլոգ, արվեստագետ, մշակութաբան, քարտեզագետ, միջազգայնագետ, տնտեսագետ և այլն), ինչը թույլ տվեց Հայ համայնքների պատմությունը դիտարկել նաև միջառարկայական տեսանկյունից: Ելույթ ունեցողները, հանդես գալով երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն), ներկայացրին Հայ և օտար ժողովուրդների միջև պատմական, էթնոգրավանաբանական, գիտամշակութային, ռազմական, միջազգային և այլ առնչությունների, փոխհարաբերությունների ու համագործակցության վերաբերյալ պատմագիտական, աղբյուրագիտական, սիյուռքագիտական և հարակից այլ թեմաներ՝ ներառելով ժամանակագրական տարբեր շրջափուլեր (անցյալից մինչև ներկա, այդ թվում՝ խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններ):

Գիտաժողովի հանդիսավոր բացումը տեղի ունցավ Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ կրթության և գիտության փոխնախարար Հովհաննես Հովհաննիսյանը: Կարևորելով նմանատիպ գիտական միջոցառումների անցկացման կենսական նշանակությունը Հայաստանի և, հատկապես, Հայագիտության համար՝ նա մասնավորապես նշեց. «Հայագիտության բնագավառը գիտական դիսցիպլինների համակարգում իր կարևոր տեղն ունի: Չնայած տարիներ շարունակ պետության կողմից այն եղել է ուշադրության կենտրոնում, ֆինանսավորման առումով այդ ուշադրությունը բավարար մակարդակի վրա չի եղել: Հայագիտությունը տարբերվում է այլ դիսցիպլիններից նրանով, որ այն ոչ միայն գիտատեսական, այլ նաև պրակտիկ բնագավառ է՝ հայ ինքնության, հայապահպանության, անցյալն արժևորելու ու այս նոր ժամանակաշրջանում նորովի վերաիմաստավորելու տեսանկյունից: Հայագիտությունը և, մասնավորապես, հայերի դերը տարբեր երկրների քաղաքական, մշակութային, սոցիալական կյանքում արժևորելը մի

անհատակ անդունդ է, որի ուսումնասիրումը ոչ միայն կարևոր գիտական առաքելություն է, այլ նաև գիտական հաճույք»:

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Մատենադարանի տնօրեն, պ. գ. դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, տնտ. գ. թ. Արտյոմ Կոնստանդյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը, Լեհաստանի Յագելոնյան համալսարանի Մշակույթի պատմության և պատմական կրթության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կշիշտոֆ Յան Ստոպկան, Բելառուսի Հանրապետության պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կրթական նորարարությունների և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալ, պ. գ. թ., դոցենտ Անդրեյ Պրոխորովը, ՌԴ մշակույթի նախարարության արվեստագիտության պետական ինստիտուտի գիտակազմակերպչական հարցերի գծով փոխտնօրեն, արվ. գ. դ. Արմեն Ղազարյանը: Նրանք անդրադարձան հայագիտության, հայոց և տարածաշրջանի պատմագիտության և աղբյուրագիտության, պատմամշակութային ժառանգության առջև ծառայած խնդիրներին և հարակից այլ հարցերի:

Լիագումար նիստի սկզբում ներկաները լուծյամբ հարգեցին կյանքից անժամանակ հեռացած գիտաժողովի կազմակերպչական կոմիտեի անդամ, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, արվ. դոկտոր, պրոֆեսոր, հայագետների լավ բարեկամ և պայծառ գիտնական Իվան Տուչկովի հիշատակը:

Այնուհետև, զեկուցումներով հանդես եկան ճանաչված գիտնականներ Ֆրանսիայից, Լեհաստանից, Ռուսաստանից, Արգենտինայից ու Հայաստանից: «Արարատից մինչև Կարպատներ» թեմայով զեկույց կարդաց «Փարիզ 1» համալսարանի պրոֆեսոր, պ. գ. դ. Կլոդ Մուլթաֆյանը: «Հայերի ծառայությունների սկիզբը Լեհական դիվանագիտության մեջ. Լյաշեկի և Սրոկի ասպետ Գրիգորը» նյութին էր նվիրված պրոֆեսոր Կշիշտոֆ Յան Ստոպկայի ելույթը: Արվ. գ. դ. Արմեն Ղազարյանի զեկուցման թեման էր «Ղրիմի հայկական եկեղեցիները որպես մշակութային ավանդույթների փոխազդեցության դրսևորում», Տրես դե Ֆեբրերոյի համալսարանի պրոֆեսոր, փիլ. դոկտոր Նելիդա Ելենա Բուլդուրջյանինը՝ «Հայկական սփյուռքը և «Հայրենիքը» մերձեցումը և տարակարծությունները՝ հաշվի առնելով դինամիկան և բարդ կապերը. Հայացք Արգենտինայից», մինչդեռ Հայաստան (Սլավոնական) համալսարանի քաղաքագիտության բաժնի վարիչ, փիլ. գ. թ. Հովհաննես Սարգսյանը ելույթ ունեցավ «Հայկական Սփյուռքը Հայաստանի Հանրապետության ինքնության քաղաքականության համատեքստում» թեմայով:

Հոկտեմբերի 15-ին և 16-ին գիտաժողովի նիստերի աշխատանքները շարունակվեցին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ չորս բաժանմունքներում:

«Հայերը կենտրոնական, հարավային և հարավարևելյան եվրոպայի երկրներում» թեմատիկ բաժանմունքի առաջին նիստում (նիստավարներ՝ Կլոդ Մուլթաֆյան, Քնարիկ Ավագյան) լսվեցին հետևյալ բանախոսների զեկուցումները. Լիոնի կաթոլիկ համալսարանի դո-

ցենտ, փրկ. դոկտոր Մաքսիմ Եվադյանի (Ֆրանսիա) «Հայերի բժշկական գիտելիքների տարածումը միջին դարերում Արևմտյան և Արևելյան Եվրոպայում», «ԱՅԱՍ» ծովային հետազոտությունների ակումբի նախագահ Կարեն Բալայանի (Հայաստան) «Հայ վաճառականների առևտրային երթուղիները», Հայաստանի պատմության պետական թանգարանի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Լիլյա Ավանեսյանի՝ «Տեղեկություններ XIII–XVIII դարերում Արևելյան Եվրոպայի և Ռուսաստանի շուկաներ հայկական տեքստիլ և գորգեր արտահանելու մասին», ԵՊՀ ասպիրանտ Սարգիս Բալդարյանի՝ «Գաբրիել Թոխաթեցու օրագիրը (1682–1697)», Պրովզիվի «Պախի Խիլենդարսկի» համալսարանի դասախոս, պ. գ. դ. Հակոբ Կարապետյանի (Բուլղարիա) «Հայերի և բուլղարների համատեղ պայքարը թուրքական տիրապետության դեմ XIX դ. վերջին – XX դ. սկզբին», ԵՊՀ դասախոս, Մատենադարանի ավագ գիտաշխատող, արվ. գ. թ. Իվետ Թաղարյանի՝ «Աբդուլլա եղբայրների յուրահատուկ դերը Օսմանյան կայսրությունում լուսանկարչական արվեստի զարգացման գործում», Լիտվայի ազգային համալսարանի խորհրդի անդամ Ռուսլան Հարությունյանի (Լիտվա) «Հայ-լիտվական հարաբերությունների ակնարկ ժամանակակից պատմության մեջ (19-րդ դարի վերջին տասնամյակում)», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Համո Սուքիասյանի՝ «Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Հովսեփ Կարախանյանի նամակ-գեկուցագրերը Խարկովում Ուկրաինայի հայերի դրություն մասին (1921–1922 թթ.)»:

Հոկտեմբերի 16-ին թեմատիկ բաժանմունքի երկրորդ նիստում (նիստավարներ՝ Հակոբ Կարապետյան, Լիլյա Ավանեսյան) իրենց գեկուցումները ներկայացրեցին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը՝ «ԱՄՆ-ի հայերը հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների համատեքստում Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում», Նովի Սադ քաղաքային թանգարանի թանգարանային խորհրդատու Լիլիանա Լազիչը (Սերբիա)՝ «Անհետացած համայնքը. հայերը Նովի Սադում, Սերբիա», Էտվեշ Լորանդի անվան համալսարանի ասպիրանտ Կինգա Կալին (Հունգարիա)՝ «Հունգարահայերի մշակութային ռազմավարությունը՝ հայագիտություն և նոր հայագիտություն», Ռումինիայում Հայկական միություն հասարակայնության հետ կապերի պատասխանատու, փրկ. գ. դ. Արսեն Արզումանյանը՝ «Ռումինիայի հայ համայնքի ժառանգությունն ու դերը երկրի ներքաղաքական կյանքում», ԵՊՀ դասախոս Մարիամ Վարդանյանը՝ «Մասունքներ Ռումինիայի Հայկական թեմի հավաքածուներում», Պրովզիվի «Պախի Խիլենդարսկի» համալսարանի դոցենտ, պ. գ. դ. Ռումյանա Յորգովա Կոմսալովան (Բուլղարիա)՝ «Բուլղարահայերի տոնական ու ծիսական համակարգը», ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատող Հասմիկ Մատիկյանը՝ «Բալկանները և հայ ժողովրդի բանահյուսական ժառանգությունը»:

«Բելառուսի, Լեհաստանի և Ուկրաինայի հայ համայնքները. պատմություն և արդիականություն» թեմատիկ երկրորդ բաժանմունքի առաջին օրվա նիստում (նիստավարներ՝ Կշիշտոֆ Յան Ստոպկա, Ալեքսեյ Լիտվին) իրենց ուսումնասիրություններով հան-

դեռ եկան հետևյալ բանախոսները՝ Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի գլխավոր տնօրեն Արմեն Խեչոյանը (Ռուսաստան)՝ «Հայերը Բելառուսիայում», Բելառուսի պատմության ազգային արխիվի փոխտնօրեն, պ. գ. թ. Դենիս Լիսեյչիկովը՝ «Զամոստիե քաղաքի հայ ուրյադներին կտակները 17-րդ դարի կեսերին (Բելառուսի Ազգային պատմական արխիվի նյութերի հիման վրա)», «ԱՅԱՍ» ծովային հետազոտությունների ակումբի գիտնականների գիլդիայի ղեկավար Գաբրիլ Պողոսյանը (Խաղբակյան) (Հայաստան)՝ «Ռեչ-Պոսպոլիտայի հայ թարգմանիչները Պարսկաստանում», Արևելյան Եվրոպայի պատմության և մշակույթի Հայերիցի ինստիտուտի միջազգային գիտաշխատող, պ. գ. դ. Ալեքսանդր Օսիպյանը (Գերմանիա)՝ «Լեհաստանի թագավորությունում հայ առևտրականների նկատմամբ վերաբերմունքը վաղ նոր ժամանակներում», Վրոցլավի համալսարանի դասախոս, պրոֆեսոր Պավել Կլինտը (Լեհաստան)՝ «Ոսկի, թանկարժեք զարդեր և հագուստներ. Լվովի հայերի հարստությունը՝ ըստ 17-րդ դարի շարժական գույքի գրանցումների տվյալների», Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի ծրագրերի համակարգող Եվգենի Գուրինովը (Ռուսաստան)՝ «Հայերը Բելառուսիայում՝ ըստ Ռուսական կայսրության 1897 թ. բնակչության մարդահամարի տվյալների»:

Թեմատիկ բաժանմունքի երկրորդ նիստում (նիստավարներ՝ Դենիս Լիսեյչիկով, Ալեքսանդր Օսիպյան)՝ հոկտեմբերի 16-ին, իրենց ուսումնասիրությունները ներկայացրեցին Լեհաստանի Յագելոնյան համալսարանի աշխատակից, պ. գ. դ. Յակուբ Օսեցկին՝ «Հայերը Լեհաստանում 20-րդ դարում. արխիվում պահված հարցազրույցների հիման վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքները», Լեհաստանի համաշխարհային արվեստի ուսումնասիրության ինստիտուտի գիտաշխատող, դոկտոր Դոմինիկա Մարիա Մասիոսը՝ «Լեհերի պատկերացումները Հայկական ԽՍՀ-ի մասին 1920–1939 թթ.՝ ըստ Վարչավայի կենտրոնական ժամանակակից և Վարչավայի կենտրոնական ռազմական արխիվների գրառումների», Բելառուսի ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Դմիտրի Կրիվոշեյը՝ «Բելառուս-հայկական գրական կապերը», Յանկա Կուպալայի Պետական գրական թանգարանի գիտական քարտուղար Գալինա Վարյոնովան (Բելառուս)՝ ««Դեպի լեռների և սրբնթաց գետերի երկիր...»։ Յանկա Կուպալայի և Հայաստանը», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Կլիմենտ Հարությունյանը և Բելառուսի ԳԱԱ պատմության ինստիտուտի ռազմական պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր Ալեքսեյ Լիտվինը՝ «Հայ ժողովրդի զավակները Բելառուսի ազատագրման պայքարում (1943 թ. սեպտեմբեր – 1944 թ. ապրիլ)», Ե. Ֆ. Կարսկու անվան Գրողների տարածաշրջանային գիտական գրադարանի գրադարանավար, մշակութային հետազոտությունների մագիստրոս Անդրեյ Տիխոմիրովը (Բելառուս)՝ «Հայը Գրողնոյում. Գուրգեն Մարտիրոսովի մտավոր ղեմանկարի բնորոշ գիծը»:

«Հայ-ռուսական հարաբերությունները պատմական հեռանկարում և արդի փուլում» թեմատիկ երրորդ բաժանմունքի առաջին օրվա նիստում (նիստավարներ՝ Վաչագան Չոլախյան, Սերգեյ Լյուբիչան-

կովսկի) լավեցին հետևյալ բանախոսների գեկուցումները՝ ՀՀ ԳԱԱ փրկիսոփայություն, սոցիոլոգիայի և իրավունքի առաջատար գիտաշխատող, փիլ. գ. դ. Ռիմա Միրումյանը՝ «Պավլիկյանները Ռուսիայում (XI–XVI դդ.)», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Վալերի Թունյանը՝ «Մանուկ-բեյի և Լազարենների տոհմերի առնչությունները», Ռուսաստանի ԳԱ Հարավային գիտական կենտրոնի սոցիոլոգիայի և իրավագիտության լաբորատորիայի վարիչ, ի. գ. թ. Լևոն Բատիևը՝ «Դոն քաղաքի հայերի ինքնակառավարման պատմությունից. ոստիկանության ծառայությունը Նախիջևանում (XVIII դ. վերջ – XIX դ.)», անկախ հետազոտող, պ. գ. թ. Էդուարդ Ալխազովը (Մոլդովա)՝ «Հայկական ծագման ազնվականները Բեսարաբիայում (XIX դ. – XX դ. սկիզբ)», Հարավային դաշնային համալսարանի պրոֆեսոր, պ. գ. դ. Սարգիս Կազարովը (Ռուսաստան)՝ «Նախիջևանի էլիտան XIX–XX դարի սկզբին», Օրենբուրգի պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, պ. գ. դ. Ստեփան Զունջուզովը (Ռուսաստան)՝ «Շարասյան առաջնորդից մինչև գեներալ. աստրախանահայ Նիկիտա Մակարովիչ Կալուստովը ռուսական զինվորական ծառայության մեջ», Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, պ. գ. թ. Կարեն Փաշլեանյանը՝ «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Դոլուխանովների ընտանիքի ներդրումը ռուսական զորքերի հաղթանակի գործում»:

Թեմատիկ բաժանմունքի հոկտեմբերի 16-ի նիստում (նիստավարներ՝ Վալերի Թունյան, Էդուարդ Ալխազով) իրենց գեկուցումները ներկայացրեցին Աշտարակի Ս. Շահազիզի անվան № 2 միջնակարգ դպրոցի ուսուցիչ, պ. գ. թ. Սաթենիկ Ավոյանը՝ «Ընտրական մեկնարկը Հայ Առաքելական եկեղեցում», Օրենբուրգի պետական մանկավարժական համալսարանի Ռուսաստանի պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր Սերգեյ Լյուբիչանկովսկին (Ռուսաստան)՝ «Վահան Տերյանը և Օրենբուրգը», Սարատովի Ն. Գ. Չերնիշևսկու անվան Ազգային պետական հետազոտական համալսարանի պրոֆեսոր, պ. գ. դ. Վաչագան Զոլախյանը (Ռուսաստան)՝ «Հայերը Նիժնի Պոլովոսիեի էթնիկական տարածքում», Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ավագ դասախոս, պ. գ. թ. Վահագն Քրեկյանը՝ «Հայերը Նևայի ափերին», Ռուսաստանի ԳԱ Հարավային գիտական կենտրոնի գլխավոր գիտաշխատող, փիլ. գ. դ. Սերգեյ Սուլչին՝ «Հայերը Ռուսաստանի հարավի մասնագիտական ընկերակցություններում XXI դարի սկզբին», Մորդովայի Ն. Պ. Օգարյովի անվան պետական համալսարանի Ազգային հետազոտությունների կենտրոնի «Տարածքային համակարգերի քաղաքական վերլուծություն» գիտակրթական կենտրոնի գիտաշխատող, քաղաքագիտության մագիստրոս Դմիտրի Դեսյակը (Ռուսաստան)՝ «Ռուս-հայկական հարաբերությունները հետխորհրդային տարածքում. էվոլյուցիա, դինամիկա և հեռանկար»:

«Հայկական մշակույթը, արվեստը, ճարտարապետությունը, քարտեզագրությունը Սև ծովից մինչև Բալթիկ ծով ընկած տարածաշրջանում» թեմատիկ չորրորդ բաժանմունքի առաջին օրվա նիստում (նիստավարներ՝ Արմեն Ղազարյան, Ռուբեն Աթոյան) իրենց ուսումնասիրությունների մասին գեկուցեցին հետևյալ բանախոսները՝

Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, Հայագիտության ամբիոնի վարիչ, Զալցբուրգի Համալսարանի դոցենտ, Բ. Գ. Դ. Ժասմին Դուստ-Թրագուտը (Ավստրիա) «Հայերի ներդրումը միջնադարյան ճիարուստության մեջ», պ. Գ. Թ., դոցենտ Անդրեյ Պրոխորովը (Բելառուս) «Տավրիայի հայերը Պրոկոպիոս Կեսարացու մոտ և սյուլթեի առասպելաբանական գուգահեռները», «Կիևյան Սոփիա» ազգային արգելոցի գլխավոր տնօրենի գիտական գծով տեղակալ, պ. Գ. Դ. Վլադեսլավ Կորնիենկոն (Ուկրաինա) «Կիևի Սոփիայի տաճարի XVI–XVII դարերի հայկական արձանագրությունների նոր ուսումնասիրություններ», Ղրիմի Հանրապետության Մշակութային ժառանգության պահպանության պետական կոմիտեի Ղրիմագիտության և մշակութային ժառանգության պահպանության գիտահետազոտական կենտրոնի ավագ գիտաշխատող, պ. Գ. Թ. Տաթևիկ Սարգսյանը (Ղրիմի Հանրապետություն) «Ղրիմի հայության որմնանկարչությունը», Ուկրաինայի հայերի միությունից պատմամշակութային ժառանգության հարցերով կոմիտեի ղեկավար, պ. Գ. Թ. Դավիթ Դավիթյանը «Աքքերմանի (Բելգորոդ-Դնեստրովսկ) հայկական եկեղեցու թվագրման խնդիրը», Ղրիմի Հանրապետության Մշակութային ժառանգության պահպանության պետական կոմիտեի Մշակութային ժառանգության օբյեկտների պետական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ, պատմության մագիստրոս Վանեսի Պետրոսյանը (Ղրիմի Հանրապետություն) «Հովհաննես Տեր-Աբրահամյանը և նրա «Ղրիմի պատմություն» գիրքը»:

Թեմատիկ բաժանմունքի հոկտեմբերի 16-ի երկրորդ նիստում (նիստավարներ՝ Անդրեյ Պրոխորով, Տաթևիկ Սարգսյան) գեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. Գ. Թ. Հասմիկ Ամիրջանյանը՝ «Աքքեպոլիսից Լուսինեի Արդուստյանի ներդրումը Ղրիմի Սուրբ Խաչ վանքի պահպանման և վերականգնման գործում», Ռուսական ազգագրության թանգարանի (Սանկտ Պետերբուրգ) ավագ գիտաշխատող Լուսինե Ղուչչյանը՝ «Սանկտ Պետերբուրգի կայսերական թանգարանի հայկական ֆոնդերի հիմնադիրները ըստ ՌԱԹ-ի հավաքածուի նյութերի (Ալեքսանդր III կայսեր Ռուսական թանգարանի բաժին)», Շարլ դը Գոլ 3 Համալսարանի Պարելի հավաքածուի հսկիչ, վաստակավոր դասախոս, արվ. Գ. Թ. Սառա Լապորտ-Էֆտեխարյանը (Ֆրանսիա)՝ «Մի ծովային բնապատկեր ֆրանսիական հավաքածուում», Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «Անիվ» հիմնադրամի գիտական աշխատող, տեխ. Գ. Թ. Ռուբեն Աթոյանը (Ռուսաստան)՝ «Գեղարվեստական քարտեզագրության հայկական դպրոցի ավանդույթների զարգացումը հետխորհրդային տարածքում և Արևելյան Եվրոպայի երկրներում», Հայ-ռուսական (Սլավոնական) Համալսարանի դոցենտ, պ. Գ. Թ. Բենիամին Մայիլյանը՝ «Կովկասի սեծովյան ավազանի հայ սփյուռքը տարածաշրջանի էթնոքաղաքական պատմության համատեքստում (1917–1920)», ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Բ. Գ. Դ. Վերժինե Սվալյանը՝ «Պատիգորսկ գաղթած արցախահայերի բանահյուսական նշխարները», Հայ-ռուսական (Սլավոնական) Համալսարանի Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանային ուսումնասիրությունների

ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր Երվանդ Մարգարյանը՝ «Հայերը և Թիֆլիսը. դավանական հատում»:

Հագեցած էր նաև միջազգային գիտաժողովի մասնակիցների համար նախատեսված մշակութային-ճանաչողական ծրագիրը: Այն ներառել է այցելություն Մատենադարանի ցուցասրահ, Գառնիի, Գեղարդի, Զվարթնոցի, Էջմիածնի, Խոր Վիրապի հնավայրեր, Ս. Փարաջանովի տուն-թանգարան, ինչպես նաև հատուկ հայագետների համար հայկական ժողովրդական գործիքների անսամբլի և մենակատարների կողմից ազգային երգարվեստի գոհարների շնորհալի ներկայացում դասական ոճի նորակառույց հաստատություններում:

Նախատեսվում է գիտաժողովում կարգացված զեկուցումները հրատարակել:

Հայագիտական սույն միջազգային գիտաժողովը ոչ միայն հանրագումարի բերեց տարվա միջոցառումների հումանիտար շարքը, այլ նաև նոր հորիզոններ ուրվագծեց Հայաստանի ու տարբեր երկրների հայագետների համագործակցության ասպարեզում:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Յ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՏՈՆՈՒՄ Է
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԸ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, ի նշանավորումն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75-ամյակի, նախաձեռնել է միջոցառումների շարք՝ նվիրված ակադեմիայի և լեզվի ինստիտուտի հիմնադրման ու զարգացման ակունքներում կանգնած մեծանուն լեզվաբաններին:

Շարքի առաջին միջոցառումը տեղի ունեցավ հոկտեմբերի 5-ին և նվիրված էր մեծանուն հայագետ, լեզվաբան, պրոֆեսոր, ԳԱ ակադեմիկոս, ՀՍՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ Հրաչյա Աճառյանին:

Բացման խոսքով հանդես եկավ Լեզվի ինստիտուտի տնօրեն, ք. գ. դ. Վիկտոր Կատվալյանը, ներկայացրեց ինստիտուտի անցած ուղին: Մասնավորապես նշեց, որ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտն իր հիմնադրման օրվանից շարունակում է հայ լեզվաբանական մտքի զարգացման նախորդ փուլերի ավանդները, գիտական գործակցություն է ծավալում ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրյա հայերենագիտական կենտրոնների հետ՝ առաջ մղելով գիտական միտքը և դառնալով նոր շրջանի հայերենագիտության կարևորագույն կենտրոնը:

Բարձր գնահատելով հաստատության ավանդը հայերենագիտության զարգացման գործում և ողջունելով ու շնորհավորելով Լեզվի ինստիտուտի աշխատակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը նշեց. «Հպարտությամբ պետք է փաստել, որ ինստիտուտում իրենց կոթողային աշխատանքներն են ստեղծել այնպիսի հզոր հայագետներ, ինչպիսիք են Հրաչյա Աճառյանը, Արարատ Ղարիբյանը, Գրիգոր Ղափանցյանը, Գևորգ Զահուկյանը և ուրիշներ, իսկ լեզվաբանների հետագա սերունդները նրանց ժառանգության արժանի շարունակողներն են եղել»: ՀՀ ԿԳՆ Լեզվի կոմիտեի նախագահ, ք. գ. թ. Դավիթ Գյուրջինյանն ընդգծեց հայերենագիտության զարգացման, լեզվի անադատության պահպանման, արևմտահայերենի ուսումնասիրության գործում ինստիտուտի աշխատակիցների դերը և հետագա գիտական ձեռքբերումներ մաղթեց ինստիտուտի գիտական անձնակազմին: Ողջունելի խոսք ասաց նաև Հայկական հանրագիտարանի տնօրեն Հովհաննես Այվազյանը: Նա անդրադարձավ Հ. Աճառյանի և Հ. Թումանյանի նամակագրությանը՝ ներկայացնելով երկու մեծերի մտահոգության առարկա դարձած խնդիրները կրթության, գրական լեզվի ու բարբառների գործառույթյան վերաբերյալ:

Հ. Աճառյանի կյանքը և գիտական գործունեությունը ներկայացրեց ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ, բ. գ. թ. Գայանե Մխիթարյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ Հ. Աճառյանի հիմնարար աշխատություններին՝ նշելով, որ հայագիտության ու լեզուների համեմատական քննության բազմազան ու լորտներում դրանք ելակետ և ուղենիշ են եղել հայ լեզվաբանների ու բանասերների մի քանի սերունդների համար և դեռ երկար պահանջու են գիտական մեծ արժեքը:

Հաջորդիվ տեղի ունեցավ Հ. Աճառյանի կնոջ՝ Սոֆյա Աճառյանի «Իմ հուշերը Աճառյանի մասին» գրքի շնորհանդեսը: Գիրքը ներկայացրեց Հ. Աճառյանի գարմուհին՝ բ. գ. դ. Ամալյա Խաչատրյանը:

Հոկտեմբերի 29-ին տեղի ունեցավ շարքի երկրորդ միջոցառումը՝ նվիրված ՀՀ ԳԱ ակադեմիկոս, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, բ. գ. դ., պրոֆեսոր Գևորգ Բեգլարի Ջահուկյանին: Միջոցառմանը ներկա էին ԳԱԱ տարբեր հաստատությունների, բուհերի ներկայացուցիչներ, մտավորականներ, ուսանողներ:

Ողջունելով ներկաներին՝ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս Յու. Սուվարյանը նշեց, որ նմանատիպ միջոցառումները շատ կարևոր են. նա լիահույս է, որ հայ լեզվաբաններին նվիրված միջոցառումները շարունակական կլինեն: «Այսօր մեր խնդիրն է ոչ միայն գնահատել նրանց վաստակը, այլև փորձել շարունակել նրանց մեծ գործը: Ես երջանկություն եմ ունեցել աշխատելու ակադեմիկոս Ջահուկյանի հետ Հայերենի բարձրագույն խորհրդում, մեծ է նրա ներդրումը ընդհանուր և համեմատական լեզվաբանության ոլորտում, նրա դիտարկումներն արժանի են համաշխարհային ճանաչման»: Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը պատմեց Գ. Ջահուկյանի հետ ծանոթության մասին. դեռևս ուսանողական տարիներից Գ. Ջահուկյանը անվիճելի հեղինակություն էր, հայագիտության հսկան: Շնորհավորելով Լեզվի ինստիտուտի հոբելյանական 75 - ամյակը՝ Դ. Գյուրջինյանը մաղթեց, որ Ջահուկյանի սահմանած նշաձողը երբեք չխարխլվի: Սփյուռքի նախարարի և նախարարության աշխատակիցների անունից ողջունի խոսքով հանդես եկավ Հայկ Ենգիբարյանը, հավաստիացրեց, որ նախարարության և Լեզվի ինստիտուտի փոխգործակցությունը կշարունակվի՝ ի նպաստ հայերենի տարածման և հայապահպանության: ՀՀ գրողների միության նախագահի, նախագահության վարչության անունից շնորհավորական խոսքով հանդես եկավ գրողների միության քարտուղար, բ. գ. դ. Պետրոս Դեմիրճյանը: Որպես Գ. Ջահուկյանի նախկին ուսանող՝ մի քանի դրվագ պատմեց ուսանողական տարիներից: Ողջունի խոսքով հանդես եկավ նաև բ. գ. դ., պրոֆեսոր Լավրի Խաչատրյանը:

Միջոցառման բանախոսն էր ինստիտուտի գիտաշխատող, բ. գ. թ. Մերի Սարգսյանը*։ Նա հանգամանալից ներկայացրեց Գ. Զահուկյանի կյանքը և գիտական գործունեությունը, անդրադարձավ ակադեմիայի լեզվաբանի հետազոտությունների ոլորտներին՝ հայերենի համեմատական քերականություն, հայ քերականական մտքի պատմություն, հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզվի նկարագրություն, հնդեվրոպական և նոստրատիկ լեզվաբանություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, լեզվաբանության տեսություն... «Հարստացնելով լեզվաբանության բնագավառը նոր մտքերով, որոնք հանդես են գալիս որպես ամբողջական համակարգեր, փորձելով նպաստել հայ և համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացմանը, – ասաց բանախոսը, – Գ. Զահուկյանն իր աշխատություններում առաջ է քաշել լեզվաբանական գանազան խնդիրների լուծման ճշգրիտ ուղիներ: Կարելի է անվերապահորեն ասել, որ Գ. Զահուկյանի շնորհիվ մի նոր բարձունքի է հասել հայ և համաշխարհային լեզվաբանական միտքը»: Մ. Սարգսյանն ելույթը եզրափակեց Գ. Զահուկյանի բանաստեղծություններից մեկով:

Միջոցառման երկրորդ հատվածում ելույթ ունենալով ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ. Լավրենտի Հովհաննիսյանն ասաց. «Ուլքեր ծանոթ են Զահուկյանին, կփաստեն, որ նա, ինչ մասնագիտություն էլ ընտրեր, լինելու էր առաջինն այդ ասպարեզում, երջանիկ ենք, որ առիթ ենք ունեցել մոտիկից ծանոթ լինելու նրան, շփվել նրա հետ, լսել նրա խորհուրդները: Նա համաշխարհային մեծ ճանաչում ունեցող գիտնական էր, մեծերի շարքում էր»: Երևանի պետական համալսարանի Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բ. գ. դ. Արծրուն Ավագյանը նշեց, որ համալսարանում ևս վառ է պահվում Գ. Զահուկյանի հիշատակը, նրա անունով է անվանակոչվել լսարաններից մեկը: Լեզվի ինստիտուտի Ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բ. գ. դ. Վազգեն Համբարձումյանը հուշեր և դրվագներ պատմեց Գ. Զահուկյանի աշխատանքային առօրյայից: Բ. գ. դ. Ռոբերտ Թոխմախյանը խոսեց Գ. Զահուկյանի գիտակազմակերպչական գործունեության մասին:

Միջոցառումը եզրափակվեց «Զահուկյանական ընթերցումներ» մատենաշարի 13-րդ պրակի շնորհանդեսով: Մատենաշարի ստեղծման պատմությունը ներկայացրեց ինստիտուտի գիտական քարտուղար, բ. գ. թ. Անահիտ Աբրահամյանը: Նա ասաց, որ ԳԱԱ լեզվի ինստիտուտի 75-ամյա բազմաթիվ հրատարակությունների շարքում առանձնանում է «Զահուկյանական ընթերցումները». այն հարգանքի ու գնահատանքի յուրատեսակ դրսևորում է վաստակաշատ գիտնականի, դեկավարի, ավագ գործընկերոջ և մեծ ուսուցչի հանդեպ: Գ. Զահուկյանի մահից մեկ տարի անց ինստիտուտի տնօրեն Լ. Հով-

* Մ. Սարգսյանի «Գևորգ Զահուկյանի կյանքը և գիտական գործունեությունը» վերնագրով զեկուցումը տե՛ս ՊԲՀ-ի սույն համարում (էջ 193–204):

Հաննիսյանն առաջարկեց հրավիրել գիտաժողով նվիրված Ջահուկյանի հիշատակին: 2006–2018 թթ. ընթացքում մատենաշարի պրակներում հրատարակվել է 380 հոդված, դրանց մի մասը նվիրված է Ջահուկյանի կյանքին և գործունեությանը: Մատենաշարը թեմատիկ լայն ընդգրկում ունի՝ արդի հայերեն, հայոց լեզվի պատմություն, բարբառագիտություն, ընդհանուր և կիրառական լեզվաբանություն, համեմատական լեզվաբանություն, բառարանագրություն... Ա. Աբրահամյանը նշեց, որ երախտագիտության խոսք պետք է ասել մատենաշարի խմբագրական խորհրդին, հատկապես ընդգծեց ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն, Բ. Գ. Թ. Նազիկ Հովհաննիսյանի աշխատանքը՝ մատենաշարի ամեն մի պրակի խմբագրման, սրբագրման և հրատարակության պատրաստելու գործում: Ամփոփելով խոսքը՝ բանախոսն ասաց. «Լեզվաբան-հետազոտողները յուրաքանչյուր միտք թղթին հանձնելիս նորից ու նորից պետք է մտածեն. տեսնես՝ Ջահուկյանն ի՞նչ կասեր...»:

Հավելենք, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հոբելյանական միջոցառումները շարունակվելու են, հաջորդ երկուսը նվիրված կլինեն հայերենագիտության երախտավորներ Գ. Ղափանցյանին և Ա. Ղարիբյանին:

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
75-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ

Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) կազմում 1943 թ. ստեղծված Գրականության ինստիտուտը, որը 1944 թ. կրում է ականավոր հայագետ Մ. Աբեղյանի անունը, բոլորեց իր հիմնադրման 75-ամյակը: Հոբելյանը հանդիսավորությամբ նշվեց նոյեմբերի 30-ին ինստիտուտում, ուր շարունակում է թեևս Աբեղյանի շունչը, և ուր մեծ գիտնականի բազմահատոր գրքերը շարունակում են նորանոր հետազոտությունների ճանապարհներ մատնանշել:

Իր շնորհավորական խոսքում ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դևրիկյանը ներկայացրեց ինստիտուտի անցած ճանապարհը, կատարվող աշխատանքները հայ գրականության պատմության ուսումնասիրության, հայ դասականների ստեղծագործությունների գիտական հրատարակությունների, գրականության տեսական խնդիրների լուսաբանման, արտասահմանյան գրականության և գրական կապերի հետազոտությունների բնագավառում: Կարևորվեց Հովհ. Թումանյանի թանգարանի հետ համագործակցությամբ Թումանյանի երկերի 10 հատորյակի վերախմբագրված վերահրատարակության լույսընծայումը: Արդեն տպագրվել են առաջին երկու հատորները: Ինստիտուտը շարունակում է հրատարակել Ավ. Իսահակյանի երկերը, սկսվել են Ն. Աղբալյանի երկերի հատորների և «Հայ գրականության միջազգային կապերը» խորագրով եռահատոր հանրագիտարանի կազմման աշխատանքները: Մխիթարյան միաբանության հետ 2019 թ. ընթացքում կիրականացվի Ղևոնդ Ալիշանի նամակների համատեղ հրատարակությունը, բնականաբար, մի շարք միջոցառումներ կնվիրվեն Հովհ. Թումանյանի հոբելյանին:

Հանդիսությունը սկսվեց Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի օրհնության խոսքով: Սրբազան հայրը ներկայացրեց Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության և շնորհավորանքի խոսքը, որում ի մասնավորի ասվում է. «Այսօր գնահատանքով ենք անդրադառնում, որ Ազգային Ակադեմիայի հաստատման օրից Գրականության ինստիտուտը համախմբել է գրական աշխարհի նվիրյալներին, ովքեր իրենց անխոնջ աշխատանքով, գիտական նախանձախնդրությամբ մեծ ավանդ են բերել հայագիտության զարգացմանը: Այս տարիներին, որոնք մեր մշակույթի նոր զարթոնքի շրջանն են եղել, Գրականության ինստիտուտն անցել է գործունեության բազմակողմ ու արգասավոր ուղի: Ինստիտուտի աշխատակիցների ջանադիր ու ներշնչված աշխատանքով հրատարակվել են հայ գրականության նշանավոր գործեր, գրականության պատմությանը և զարգացմանը նվիրված գրքեր»:

Ինստիտուտի հոբելյանական 75-ամյակի առիթով շնորհավորական ուղերձ էր հղել ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար Ա. Հարությունյանը: Ուղերձում նշվում է. «Գործունեության տարիներին Գրականության ինստիտուտը կարողացել է իրականացնել իր առաքելությունը՝ հաղթահարելով գաղափարախոսական արգելքները և իրականացնելով հասարակությանը ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից դարձնելու կարևոր գործառույթը»:

Հայրենիքին և Սփյուռքին մատուցած ծառայությունների, Հայաստան–Սփյուռք գործակցության զարգացման, հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար ինստիտուտը պարգևատրվեց Սփյուռքի նախարարության Ոսկե հուշամեդալով, որը հանդիսավորությանը հանձնեց փոխնախարար Դավիթ Սարգսյանը: Սփյուռքի նախարարի պաշտոնակատար Մ. Հայրապետյանի հղած ուղերձում կարևորվում էր այն հանգամանքը, որ ինստիտուտում գործում է Սփյուռքի բաժին, և աշխատանքներ են տարվում ոլորտային ամենատարբեր հարցերի ուսումնասիրության ուղղությամբ: Որպես ազգային մշակույթի արտահայտիչ՝ այն իրականացնում է նաև հայապահպանությանն ուղղված կարևորագույն գործառույթ, որի դերակատարությունը մեծ է հատկապես Հայրենիք–Սփյուռք մշակութային գործակցության համատեքստում:

Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ պարգևատրվեցին ՀՀ ԳԱԱ նախագահության, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից: Բ. գ. դ., պրոֆ. Վլադիմիր Կիրակոսյանին շնորհվեց Գիտության պետական կոմիտեի Ոսկե մեդալ, որը հանձնեց և ինստիտուտին ուղղված ողջունի խոսք ասաց կոմիտեի նախագահի տեղակալ Վարդան Սահակյանը, նշելով, որ պետությունը խիստ կարևորում է հայագիտության ոլորտում իրականացվող աշխատանքները, և այս առումով մեծ է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դերն ու նշանակությունը:

Բ. գ. դ., պրոֆ. Ավետիք Իսահակյանը պարգևատրվեց Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալով: Այն հանձնեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը: Բ. գ. դ., պրոֆ. Զավեն Ավետիսյանը և Բ. գ. դ., պրոֆ. Հենրիկ Էդոյանը պարգևատրվեցին Գրականության ինստիտուտի Մ. Աբեղյանի անվան հուշամեդալով:

Հուզիչ էր Մ. Աբեղյանի թոռնուհու, ինստիտուտի ավագագույն աշխատակիցներից, Բ. գ. թ. Հասմիկ Աբեղյանի հղած ողջունի խոսքը, ով այս հաստատությունում աշխատում է 1960 թվականից: Ինստիտուտի աշխատակիցների համար որպես պատգամ հնչեցին նրա հետևյալ խոսքերը. «Ողջունելով Ձեզ, որպես Աբեղյանի տոհմի ժառանգ, ուզում եմ բոլորիդ դիմել մի խնդրանքով, հավատարիմ մնացեք Մ. Աբեղյանի թողած ավանդույթներին, պահեք ինստիտուտը ամուր, շատ ամուր և լիարժեք, որպեսզի այն լինի այնպիսին, ինչպիսին կուզենար տեսնել իմ պապը՝ Մ. Աբեղյանը»:

Հայաստանի գրողների միության կողմից շնորհավորական խոսք ասաց միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը՝ նշելով, որ Հայ-

րենական մեծ պատերազմի դժվարին տարիներին հիմնադրված ինստիտուտի բարձր անունն ու վարկը տասնամյակներ շարունակ ձեռք է բերվել հայրենի գիտություն բազմաթիվ նշանավոր դեմքերի ջանադիր գործունեության շնորհիվ: Նա գիտական հետազոտական նոր նվաճումներ մաղթեց Գրողների միության հետ մշտապես համագործակցող ինստիտուտին՝ ի փառս հայ գրականագիտական մտքի հետագա առաջընթացի:

Տասնամյակներ շարունակ սերտ համագործակցություն է ծավալվել նաև Երևանի պետական համալսարանի հետ: Համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանի ողջույնի խոսքում, որը ներկայացրեց Բ. Գ. Դ., պրոֆ., հայ գրականության ամբիոնի վարիչ Սամվել Մուրադյանը, արժևորվում են հայագիտությանն ու մեր ժողովրդի մտավոր զարգացմանն ու միջազգային հեղինակության վերընթացին նպաստած ձեռքբերումները: Ուղերձում նշվում է, որ իր ճանաչված գիտնականների աշխատություններով, գրողների երկերի լիակատար ժողովածուների գիտական հրատարակություններով ինստիտուտը գիտական մեծ հեղինակություն ունի միջազգային ասպարեզում:

Էդ. Զրբաշյանից հետո ինստիտուտի տնօրենի պաշտոնը ստանձնած Բ. Գ. Դ., պրոֆ. Ազատ Եղիազարյանը ետագարձ հայացք նետեց ինստիտուտի 75-ամյա պատմությանը, անվանապես հիշեց նախորդ տնօրեններին և վաստակաշատ գիտնականներին՝ բնորոշելով ու արժևորելով նրանց կատարած աշխատանքը, ասելով, որ այսօրվա աշխատակիցները միշտ պետք է հիշեն նրանց, ովքեր գիտական չափանիշ են նոր սերնդի գիտնականների համար:

Ինստիտուտի նախորդ տնօրեն, այժմ տեքստաբանության բաժնի վարիչ, Բ. Գ. Դ., պրոֆ. Ավետիք Իսահակյանը նույնպես անդրադարձավ ինստիտուտի անցած ճանապարհին և իր տնօրինության տարիներին, այնուհետև գրականության պատմության ուսումնասիրման ու գրականության տեսության հարցերի կողքին կարևորեց հայ դասականների երկերի հրատարակությունը՝ ընդգծելով, որ այսօր մեր ժողովուրդը և գիտական հասարակայնությունը սպասում է հայ գրականության մեծերի առավել գիտական ու լիակատար երկերի ամբողջական հրատարակություններին:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից ողջունի խոսք ասաց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աելիտա Դուրխանյանը. «ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի 75-ամյա հոբելյանը, հիրավի, իրագործություն է Հայաստանի կյանքում: Ինստիտուտը հիմնվել է որպես գիտության տաճար, ազգապահպանման կարևոր հաստատություն: Չմոռանանք, որ 1943-ին Հայաստանի նորաստեղծ Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահ Հովսեփ Օրբելին միջազգային համբավի գիտնական էր, ով արևելագետ էր, հայագետ, բանասեր, բնագետ, գրականագետ: Նրա գիտական առաջնակարգ մակարդակը պարտավորեցնում է: Երբ ասպիրանտ էի, ամեն օր Մաշտոցի անվան Մատենադարանում կողքիս

Չանադիր պարապում էին հայ հին գրականության բաժնի գրեթե բոլոր աշխատողները՝ Արմենուհի Սրապյանը, Մայիս Ավդալբեկյանը, Քնարիկ Տեր-Դավթյանը, Ալբերտ Մուշեղյանը, Պողոս Խաչատրյանը, Արշալույս Ղազինյանը, Հասմիկ Սիմոնյանը և էլի շատերը: Ես ցանկանում եմ, որ այդ ավանդույթը շարունակվի նաև այսօր: Հիմա էլ գրեթե միշտ Մատենադարանում տեսնում եմ ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանին»:

Արցախի մտավորականության և իր անունից շնորհավորական խոսք էր ուղղել Արցախի Գրողների միության նախագահ, բ. գ. դ. Վարդան Հակոբյանը՝ ինստիտուտը համեմատելով սրբազան տաճարի հետ:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, բ. գ. թ. Կարո Վարդանյանը, ով եղել է նաև ինստիտուտի աշխատակից, իր խոսքում նշեց, որ գրականագիտական այս օջախում ստեղծվել է գիտական մեծ ժառանգություն: Նրա բնորոշմամբ, ինստիտուտն այսօր ևս կենսունակ ու խրոխտ կանգնած է գրականության, գրականագիտության զարգացումների առանցքում:

Ե. Չարենցի տուն-թանգարանի տնօրեն, բ. գ. թ. Անահիտ Ասատրյանը կարևորեց ինստիտուտի և տուն-թանգարանի գործակցությունը համատեղ գիտական նստաշրջանների կազմակերպմամբ և հոլյա հայտնեց, որ առաջիկայում կսկսվի Ե. Չարենցի երկերի ակադեմիական հրատարակությունը՝ երկու հաստատությունների համատեղ ուժերով:

Գրականության ինստիտուտի աշխատակիցներին ջերմորեն շնորհավորեց նաև Հովհ. Թումանյանի թանգարանի փոխտնօրեն Անի Եղիազարյանը՝ ներկայացնելով տնօրեն Ն. Թուխիկյան-Խաչատուրյանի ողջունի ուղերձը:


Իր շնորհավորական խոսքում «Հայկական հանրագիտարան հրատարակչության» գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանն ասաց. «Մենք այն կարծիքին ենք, որ ՀՀ անկախացումից հետո ավելի են մեծացել Գրականության ինստիտուտի անելիքները, և այն ունի բավարար ուժեր՝ նոր ու կարևոր ձեռքբերումներ արձանագրելու համար»: Նա շնորհակալություն արտահայտեց նաև, որ ինստիտուտն իր կարևոր մասնակցությունն է բերում թեմատիկ հանրագիտարանների ստեղծմանը, հատկապես՝ Հովհաննես Թումանյանի հանրագիտարանի կազմմանը:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հիմնադրման 75-ամյակին նվիրված հանդիսությունը եզրափակվեց ինստիտուտի փոխտնօրեն, բ. գ. թ. Հերիքնազ Որսկանյանի բարեմաղթանքներով և շնորհակալական խոսքով՝ ուղղված հարազատ գիտական օջախի գիտաշխատողներին, որոնց տքնանքով ու նվիրումով ստեղծված աշխատությունները 75-ամյա ինստիտուտի հսկայածավալ գիտական ժառանգության արժեքավոր համալրումն են:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ

82 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Հայկական հանրագիտարանի ավագ գիտական խմբագիր, ճարտարապետաշինարարական համալսարանի վաստակաշատ դասախոս Գառնիկ Սմբատի Շախկյանը:



Գ. Շախկյանը հայ մտավորականի տիպիկ ներկայացուցիչ էր, հմուտ մանկավարժ, ճարտարապետության պատմության մերօրյա լավագույն մասնագետներից: Նա իր աշխատասիրությամբ, բազմազբաղ առօրյայով, մարդկանց օգտակար լինելու պատրաստակամությամբ բացառիկ անձնավորություն էր:

1961-ին գերազանցությամբ ավարտել է ԵրՊԻ-ն, ապա ասպիրանտուրան, վերապատրաստման կուրսեր է անցել Մոսկվայի ճարտարապետության ինստիտուտում (1987), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում (1992):

Աշխատանքային գործունեությունն սկսել է պրակտիկ ճարտարապետությամբ. 1961–67-ին եղել է Ալավերդի քաղաքի գլխավոր ճարտարապետ, 1967–78-ին՝ Հայկոմուննախագծի գլխավոր մասնագետ, 1978-ից ցայսօր՝ ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի դասախոս՝ ճարտարապետության տեսության, ճարտարապետական ժառանգության վերականգնման և հուշարձանների վերականգնման ամբիոնի պրոֆեսոր:

Գ. Շախկյանը նախագծել է «Գրողների ստեղծագործական տունը» Ծաղկաձորում, հյուրանոցներ՝ Ալավերդի, Մարտունի քաղաքներում, Ալավերդու քաղաքապետարանի շենքը, մանկական ճամբար՝ Ծաղկաձորում, մատուռ՝ Նեղոց գյուղում, հուշակառույցներ՝ Ալավերդի քաղաքում, Շնող, Լճկաձոր գյուղերում, բնակելի տներ, կոմունալ օբյեկտներ՝ Հայաստանի տարբեր շրջաններում:

Գ. Շախկյանը 250-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է, լույս է ընծայել 15 գիրք: Նրա ուսումնասիրությունների ընդգրկումը շատ լայն է. դրանք արդի և միջնադարյան ճարտարապետության մինչ օրս չուսումնասիրված կամ սակավ ուսումնասիրված հարցեր են:

Լոռու ճարտարապետական դպրոցի փաստական նյութի ուսումնասիրությամբ անվանի գիտնականը շրջանառության մեջ է դրել Վրաստանի տարածքում գտնվող ճարտարապետական այնպիսի գլուխգործոցներ՝ Ախքյորփի, Բրդաձոր, Խորակերտ, Խոժոռնի և այլ

վայրերում, որոնց պատկանելիության խնդիրը դեռևս վիճարկվում է:

Հակառակ մեզանում տարածված այն կարծիքի, թե VIII–IX դարերում, արաբական դաժան ճնշման պայմաններում, Հայաստանում քարը քարի վրա չի դրվել, այսինքն՝ դադարել են շինարարությունն ու եկեղեցաշինությունն ընդհանրապես, Շախկյանը պարզել է, որ կան այդ ժամանակներում կառուցված մի շարք եկեղեցիներ, ինչպես, օրինակ, Արամուսի եկեղեցին. փաստ, որ վկայում է Հայաստանում շինարվեստի շարունակական զարգացման մասին: Հակառակ դեպքում անհասկանալի կլիներ դրան հաջորդած ժամանակաշրջանում եկեղեցաշինության և շինարվեստի աննախադեպ վերելքը:

Գ. Շախկյանը ճարտարապետության պատմության ոլորտում ուսումնասիրությունների, ժամանակակից ճարտարապետության հարցերում արժեքավոր հրապարակումների համար արժանացել է ՀՀ ԳԱԱ «Թորոս Թորամանյան» մրցանակին:

Նա քաղաքացիական ակտիվ խառնվածքի տեր մտավորական էր. նրան հետաքրքրում էին ժամանակակից քաղաքաշինության խնդիրները, հատկապես՝ մայրաքաղաք Երևանի կառուցապատման և զարգացման հարցերը:

Գ. Շախկյանի ուշադրության կենտրոնում էին նաև բնապահպանության, հատկապես՝ Ալավերդու, Շամլուղի, Թեղուտի և այլ հուշարձանների պահպանության խնդիրները, համոզված էր, որ զբոսաշրջային նպատակներով Լոռու ճարտարապետական հուշարձանների խելամիտ օգտագործումը կարող է հսկայական եկամուտ բերել տարածաշրջանին:

Իր բուն ճարտարապետական հետաքրքրություններից բացի՝ Գ. Շախկյանը եռանդ չխնայեց իր մեծ հայրենակցի՝ Հովհաննես Թումանյանի տոհմի ու ընտանիքի, բնաշխարհի հետ կապված առանձին հարցերի ուսումնասիրության գործում և շատ օգտակար բացահայտումներ արեց: Հրատարակել է «Հովհաննես Թումանյան: Հայրենագիտական համանվագներ» (2005), «Թումանյանի ընտանեկան աշխարհը» (2011), «Թումանյանական աշխարհ. մշակութային գիտաբանը» (2016), «Ժպտադեմ, զվարճախոս ու զարմանահրաշ մեր Թումանյանը» (2016) երկերը: Նա նաև «Հովհաննես Թումանյան» գրական հանրագիտարանի նախաձեռնողներից ու ակտիվ աշխատակիցներից էր, հեղինակ՝ «Պատկերազարդ կենսագրական» (2004), «Կայծոռ-Շնող» (2005) հանրագիտական բնույթի հայրենագիտարանների, «Ոգի, գույն, կերպար» (2009) շատ ուշագրավ գրքի և բազմաթիվ այլ աշխատությունների:

Թումանյանագիտության բնագավառում ունեցած ակնառու հաջողությունների համար 2017-ին արժանացել է ՀԳՄ «Հովհաննես Թումանյան» մրցանակի:

Շախկյանն իր հայրենի Շնողի արժանավոր զավակներից էր, գյուղի պատվավոր քաղաքացի: Նա առավելագույնն է արել գյուղի կրթամշակութային զարգացման համար:

Հիշատակն արդարոց օրհնություն մը եղիցի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները3

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

I

ՀՀ ԳԱԱ 75-ԱՄՅԱ ԵՎ ԱՐԱՄ ԽԱԶՍՏՐՅԱՆԻ
115-ԱՄՅԱ ՀՈՔԵԼՅԱՆՆԵՐԸ

Աննա Ասատրյան – Արամ Խաչատրյանը և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան17

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԳՐՄԱՆ
2800-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Երվանդ Գրեկյան – Էրեբունի ամրոցը38

Նինա Ստեփանյան-Ղանդիլյան – Էրեբունի պետական արգելոցի ստեղծման պատմությունից69

«ԲԱԶՄԱՎԵՊ» ՀԱՆՂԵՍԻ
175-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Արարատ Աղասյան – Հովհաննես Այվազովսկին «Բազմավեպ» հանդեսի էջերում78

«ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ»-Ի
60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Լիլիթ Հովհաննիսյան – Կոչմանը հավատարիմ95

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Գայանե Մախճուրյան – Հայաստանն ու նրա տարածքային խնդիրը Փարիզի հաշտության կոնֆերանսում (1919 թ. հունվարի 18 – հունիսի 28) (ռուս.)104

ՀՈՎՀ. ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒ
150-ԱՄՅԱ ՀՈՔԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Սուսաննա Հովհաննիսյան – Դրվագներ Հովհաննես Քաջազնունու և Հովհաննես Թումանյանի բարեկամությունից125

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆԵՂՅԱՆ
150-ԱՄՅԱԿԻ ԸՆԴԱՌԱՋ

Աելիտա Դոլուխանյան – Քրիստոնեական վարդապետությունը Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մեջ136

ԿՈՄԻՏՅԱՆԻ ԾՆԵՂՅԱՆ
150-ԱՄՅԱԿԻ ԸՆԴԱՌԱՋ

Լիլիթ Երնջակյան – Ազգային երաժշտական ինքնության կոմիտայան հարացույցը և գուսանաաշուղական ավանդույթը148

II

Անուշավան Ջաքարյան – Վ. Բրյուսովի «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը» (տպագրության 100-ամյակի առթիվ) (ռուս.)	160
Վահե Սարգսյան – Ջավախքում հայերենին իրավական կարգավիճակ շնորհելու խնդիրը վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ (2001–2009 թթ.)	171
Սեդա Պարսամյան – Հայկական պատմամշակութային արժեքների հանդեպ քեմալականների դիրքորոշման շուրջ (1919–1922 թթ.)	184
Մերի Սարգսյան – Գևորգ Ջահուկյանի կյանքը և գիտական գործունեությունը	193
Արտակ Մաղալյան – Սիրզա Ջամալ Ջևանշիրի «Ղարաբաղի պատմությունը»-ը որպես Արցախի XVIII դարի պատմության սկզբնաղբյուր	205
Աննա Արևատյան – Անտիկ միթոսները և երաժշտական էթոսի մասին ուսմունքը Բարսեղ Կեսարացուն վերագրվող մեկնության մեջ	222
Աստղիկ Իսրայելյան – Մետաղե զենքերը, գործիքներն ու սարքերը հմայությունում	234

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Աշոտ Սարգսյան – «Ղարաբաղ» տեղանվան առաջացման և ստուգաբանման նոր վարկած	254
---	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Արմենուհի Ղամբարյան – Հայաստանի անկախության Էրզրումի հռչակագիրը	258
--	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լիլիթ Հովսեփյան – Աելիտա Ղուլխանյան. Ֆրանսիացի հայագետներ (XIX–XX դարեր)	264
Համո Սուքիասյան – Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը	270
Լիլիթ Ջաքարյան – Հ. Սուքիասյան, Ն. Երանոսյան. Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը 1920-ական թվականներին («Շեշտ», «Ձուռնա», «Կարմիր մոծակ»)	274

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ

Էդիկ Մինասյան – Նշանավոր պատմաբանը և հայրենասերը (ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի ծննդյան 90-ամյակի առթիվ) (ռուս.)	277
Աելիտա Ղուլխանյան – Գրաբարյան գանձերի եզակի մեկնիչը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)	280
Աղավնի Ժամկոչյան, Նյուրա Հակոբյան – Անվանի հայագետը (Հռիփսիմե Ջանփոլադյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)	286

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Վերժինե Սվազյան – ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյան (ծննդյան 90-ամյակի առթիվ)	291
Յուրի Սուվարյան, Արարատ Աղասյան – Աննա Ասատրյան. անվանի երաժշտագետը և գիտության կազմակերպիչը	295
Ռոբերտ Բաղդասարյան – Անուշավան Ջաքարյան (ծննդյան 65-ամյակի առթիվ) (ռուս.)	304

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Քննարկի Ավագյան – Միջազգային գիտաժողով՝ «Բալթիկայից մինչև Սև ծով. հայերը մշակութային, տնտեսական և քաղաքական գործընթացներում» թեմայով ...311

Մերի Սարգսյան – ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը տոնում է իր մնադրման 75-ամյակը319

Հերիքնազ Որսկանյան – Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի 75-ամյա հոբելյանը323

ԼՐԱՏՈՒ

Հովհաննես Այվազյան – **Գառնիկ Շախսկյան**327

СОДЕРЖАНИЕ

Юбилейные мероприятия, посвященные 75-летию Национальной академии наук РА3

СТАТЬИ, СООБЩЕНИЯ

I

75-ЛЕТИЕ НАН РА И
115-ЛЕТИЕ АРАМА ХАЧАТУРЯНА

Анна Асатрян – Арам Хачатурян и Национальная академия наук Республики Армения17

К 2800-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ
ГОРОДА ЕРЕВАНА

Ерванд Грекян – Крепость Эребуни38

Нина Степанян-Гандилян – Из истории создания Эребунийского государственного заповедника69

К 175-ЛЕТИЮ ЖУРНАЛА
«БАЗМАВЕП»

Арарат Агасян – Иван (Ованнес) Айвазовский на страницах журнала «Базмавеп»78

К 60-ЛЕТИЮ «ИСТОРИКО-
ФИЛОЛОГИЧЕСКОГО ЖУРНАЛА»

Лилит Оганисян – Преданный призванию95

К 100-ЛЕТИЮ ПЕРВОЙ
МИРОВОЙ ВОЙНЫ

Гаянэ Махмурян – Армения и ее территориальный вопрос на Парижской мирной конференции (18 января – 28 июня 1919 г.) (на русск. яз.)104

Сусанна Ованесян – Фрагменты дружбы Ованеса Каджазнуни и Ованеса Туманяна	125
--	-----

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ
РОЖДЕНИЯ ОВ. ТУМАНЯНА

Ազլիտա Դոլուխանյան – Христианское учение в творчестве Ованеса Туманяна	136
---	-----

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ
РОЖДЕНИЯ КОМИТАСА

Լիլիտ Երնձաքյան – Комитасовская парадигма национальной музыкальной идентичности и гусано-ашугская традиция	148
---	-----

II

Անուշավան Զաքարյան – «Летопись исторических судеб армянского народа» В. Брюсова (к 100-летию издания) (на русск. яз.)	160
Վազ Տարկիսյան – Проблема предоставления правового статуса армянскому языку в Джавахке в понимании грузинской общественно-политической мысли (2001 – 2009 гг.)	171
Տեա Բարսամյան – Вокруг позиции кемалистов в отношении армянских историко-культурных ценностей (1919 – 1922 гг.)	184
Մերի Տարցյան – Жизнь и научная деятельность Геворка Джаукяна	193
Արտակ Մաղալյան – «История Карабаха» Мирзы Джамала Джеваншира как первоисточник по истории Арцаха XVIII века	205
Աննա Արեւշատյան – Античные мифы и учение о музыкальном этосе в толковании, приписываемом Василию Кесарийскому	222
Աստիկ Իսրայելյան – Металлические инструменты, оружие и устройства в магии	234

ОБСУЖДЕНИЯ

Աշոտ Տարցիսյան – Новая версия происхождения и этимологии топонима «Карабах»	254
--	-----

ПУБЛИКАЦИИ

Արմենուի Գամբարյան – Эрзрумская декларация о независимости Армении	258
---	-----

РЕЦЕНЗИИ

Լիլիտ Օվսեպյան – Ազլիտա Դոլուխանյան. Ֆրանսուզկիե արմենոբեմբ (XIX – XX դար)	264
Ամո Տուկիասյան – Փարլամենտ Քրեւոյ Դեպուբլիկի Արմենիա	270
Լիլիտ Զաքարյան – Ա. Տուկիասյան, Ն. Երանոսյան. Տատիրիկեսկա թեմբ Տեւոթեկոյ Արմենիա Վ 1920-ե դար («Տեմտ», «Զուրնա», «Կարմիր մոցակ»)	274

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

Эдик Минасян – Выдающийся историк и патриот (к 90-летию со дня рождения академика Грачика Симоняна) (на русск. яз.)277

Аэлита Долуханян – Исключительный толкователь сокровищ грабара (к 100-летию со дня рождения члена-корреспондента НАН РА Ашота Абрамяна)280

Агавни Жамкочян, Нюра Акопян – Признанный арменовед (к 100-летию со дня рождения Рипсима Джанполадян)286

НАШИ ЮБИЛЯРЫ

Вержине Свазлян – Член-корреспондент НАН РА Саргис Арутюнян (к 90-летию со дня рождения)291

Юрий Суварян, Арарат Агасян – Анна Асатрян: известный музыковед и организатор науки295

Роберт Багдасарян – Анушаван Закарян (к 65-летию со дня рождения) (на русск. яз.)304

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Кнарлик Авакян – Международная научная конференция на тему «От Балтики до Черного моря: армяне в культурных, экономических и политических процессах»311

Мери Саргсян – Институт языка им. Р. Ачаряна НАН РА празднует 75-летие основания319

Ерикназ Ворсканян – 75-летний юбилей Института литературы им. М. Абегяна НАН РА323

ХРОНИКА

Ованес Айвазян – Գարնիկ Տախչյան327

CONTENTS

Jubilee events dedicated to the 75th anniversary of the RA National Academy of Sciences3

ARTICLES, REPORTS

I

THE 75TH AND THE 115TH JUBILEES OF THE
NAS RA AND ARAM KHACHATRYAN

Anna Asatryan – Aram Khachaturian and the National Academy of Sciences of the Republic of Armenia17

TO THE 2800TH ANNIVERSARY OF THE
FOUNDATION OF YEREVAN CITY

Yervand Grekyan – The Fortress of Erebuni38

Nina Stepanyan-Gandilyan – From the history of the establishment of Erebuni State Reserve	69
	TO THE 175TH ANNIVERSARY OF “BAZMAVEP” JOURNAL
Ararat Aghasyan – Ivan (Hovhannes) Aivazovsky on the pages of “Bazmavep” journal	78
	TO THE 60TH ANNIVERSARY OF THE “HISTORICAL-PHILOLOGICAL JOURNAL”
Lilit Hovhannisyan – Faithful to its vocation	95
	TO THE 100TH ANNIVERSARY OF THE FIRST WORLD WAR
Gayane Makhmourian – Armenia and its territorial issue at the Paris Peace Conference (1919 January 18 – June 28)	104
	TO THE 150TH BIRTH ANNIVERSARY OF HOVH. KAJAZNUNI
Susanna Hovhannisyan – Fragments from the history of the friendship between Hovhannes Kajaznuni and Hovhannes Tumanyan	125
	TOWARDS THE 150TH BIRTH ANNIVERSARY OF HOVH. TUMANYAN
Aelita Dolukhanyan – The Christian doctrine in the works of Hovhannes Tumanyan	136
	TOWARDS THE 150TH BIRTH ANNIVERSARY OF KOMITAS
Lilit Yernjakyan – Komitas’s national musical identity paradigm and Armenian gusan-ashugh tradition	148

II

Anushavan Zakaryan – V. Brusov’s “Chronicle of the historical fate of the Armenian people” (to the Centennial of the publication)	160
Vahe Sarkisyan – The issue of delivering legal status to the Armenian language in Javakhk according to the perception of the Georgian social-political thought (2001–2009)	171
Seda Parsamyan – On the attitude of the Kemalists towards the Armenian historical-cultural heritage (1919–1922)	184
Meri Sargsyan – The life and scientific activity of Gevorg Jahukyan	193
Artak Maghalyan – The “History of Karabakh” by Mirza Jamal Jevanshir as a primary source for the 18th century history of Artsakh	205
Anna Arevshatyan – The Antique myths and the doctrine of musical ethos in the interpretation attributed to Basil of Caesarea	222
Astghik Israelyan – Metal weapons, tools and devices in magic	234

DISCUSSIONS

Ashot Sargsyan – A new theory on the origin and etymology of the toponym “Karabakh”	254
--	-----

PUBLICATIONS

Armenuhi Ghambaryan – The Erzurum declaration of the independence of Armenia	258
---	-----

BOOK REVIEWS

Lilit Hovsepyan – Aelita Dolukhanyan: French Armenologists (XIX–XX centuries)	264
Hamo Sukiasyan – The Parliament of the First Republic of Armenia	270
Lilit Zakaryan – H. Sukiasyan, N. Yerosyan: The satirical press of Soviet Armenia in the 1920's (“Shesht”, “Zurna”, “Karmir motsak”)	274

OUR HONOURED SCHOLARS

Edik Minasyan – Prominent historian and patriot (to the 90th birth anniversary of Academician Hrachik Simonyan) (in Russ.)	277
Aelita Dolukhanyan – The unique interpreter of Grabar treasures (to the 100th birth anniversary of the NAS RA corresponding member Ashot Abrahamyan)	280
Aghavni Zhamkochyan, Nyura Hakobyan – Prominent Armenologist (to the 100th birth anniversary of Hripsime Janpoladyan)	286

OUR JUBILEES

Verzhine Svazlyan – The NAS RA corresponding member Sargis Harutyunyan (to the 90th birth anniversary)	291
Yuri Suvaryan, Ararat Aghasyan – Anna Asatryan: Prominent musicologist and scientific organizer	295
Robert Baghdasaryan – Anushavan Zakaryan (to the 65th birth anniversary) (in Russ.)	304

SCIENTIFIC LIFE

Knarik Avagyan – International Scientific Conference “From the Baltic to the Black Sea”: Armenians in Cultural, Economic and Political Processes”	311
Meri Sargsyan – The Institute of Language after H. Acharyan celebrates the 75th anniversary of its foundation	319
Heriknaz Vorskanyan – The 75th jubilee of Institute of Literature after M. Abeghyan	323

NEWS

Hovhannes Aivazyan – Garnik Shakhkyan	327
--	-----

ՀԱՆԴԵՍԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՔ ՀԱՄԱՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ՝ 100 ԱՄՆ ԴՈԼԱՐ
(ՆԵՐԱՌՅԱԼ ԵՐԵՔ ՀԱՄԱՐԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔՄԱՆ ԾԱԽՍԸ)

«Պատմաբանասիրական հանդեսը» վաճառվում է
Երևանի գրախանութներում

Համակարգչային շարվածքը և էջադրուժը՝ Շուշան Բասենցյանի

Խմբագրության հասցեն՝ 375019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. 581872
Адрес редакции: 375019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. 581872
Address: 24G Marshal Baghramian av., 375019, Yerevan, Armenia, tel. 581872

E-MAIL: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

*Հրատ. պատվեր № 911
Ստորագրված է տպագրության 24.12.2018 թ.:
Տպագրական 21 մամուլ: Թուղթ № 1, 70x100:*

ՀՀ ԳԱԱ տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 911
Подписано к печати 24.12..2018 г.
Печ. 21 л. Бумага № 1, 70x100.

Типография НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.